This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

B 1,170,739

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
1817

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՏՆ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ

ՊՍԱԿԵԱԼ ՍԱՀԱԿ ՃԵՄԱՐՕՂԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՒ

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

1894

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Ա. Ռ.

ՎՍԵՄԱՇՆՈՐՀ ԵՒ ԱԶՆՈՒԱԶԱՐՄ

ՀԱՐԱԶԱՏ

ՄԱԹՈՒՍ ԵՒ ԱԲԻԿ ՈՒՆՃԵԱՆ

ԶՕՆ

ՄԵԾԻ ՀԱՄԱԿՐԱՆԱՑ ԵՒ ԱՆԿԵՂԾ ՅԱՐԳԱՆԱՑ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԲԱՐԵՊԱՇՏԻԿ ԵՒ ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ԻՒՐԵԱՆՑ

ԿԱՐԱՊԵՏԻ ԵՒ ԹԱԳՈՒՀԻՈՅ ՈՒՆՃԵԱՆ

Երանաշնորհ մեր նախնեաց զոյգ աւանդները պանծալի, Հայ Եկեղեցին եւ Լեզուն հայաբարբառ, ժամանակին մրրկածուփ կոհակներէն ազատած, ցարդ կացին եւ մնացին հաստատուն, առնլով տակաւ նոր զօրութիւն: Այդ զօրութիւն կուգար բարեպաշտ եւ ուսումնասէր ոգիներէ, որք ամէն ժամանակի մէջ սիրայօժար սատար եղան մեր Կրօնին եւ Դպրութեան: Ուստի, վսեմաշուք Տեարք, քաջ գիտնալով որ միալուծ կը կցորդէք ի Ձեզ բարեպաշտութեան եւ ուսումնասիրութեան ոգիները, կը համարձակիմ ներկայ աշխատասիրութիւնս, արդիւնք երեսնամեայ տքնութեանց, ձօնել Ձեզ եւ Ձեօք խնկելի յիշատակաց Ձեր բարեպաշտ եւ քաջատոհմիկ ծնողաց, որ կրցած են վառել ի Ձեզ այն երկնասլաց նուրբ որով յաւէտ երկրպագու էք սրբազան խորաններու եւ կանգնիչ՝ սրբազան կամարներու:

Ընդունեցէք, հոյակապ Տեարք, իմ ջերմ մաղթանքներս եւ ծերունական օրհնութիւններս Ձեր բարեբաստիկ երկարակեցութեան համար ի պարծանս հայ Եկեղեցւոյ եւ ի զարգացումն հայ Դպրութեան:

Տ. ՅՈՎ. ՔՀՆՅ. ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ

ՊԱՏՃԷՆ

ԱՌ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՀԱՅՐ

ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ

Տէր,

Ընկալայ Ձեր նամակն, որով կը խնդրէք յինէն զիմ կարծիս մեր պատուական ծերունի Քահանային եւ բարեկամին Տ. Յովհաննու Հիւնքեարպէյէնտեան համբաւեալ աշխատութեան վրայ, այն է Հայերէն Ստուգաբանական Բառարանին։

Գործն է, ինչպէս գիտէք, Բանասիրական, կամ մանաւանդ Լեզուագիտական (linguistique), *արդիւնք բազմամեայ աշխատութեան, ոչ առանց հմտութեան Հայերէնի, եւ մերոյն հետ յարաբերութիւն ունեցող լեզուաց ինչ, որպիսիք են հին Յունարէն եւ Պարսկերէն։*

Գործն ըստ կարեւորութեան իւր չինար ըստ իս քան զգործն հանգուցեալ Հայ լեզուագիտին Հ. Սերովբէի Տէրվիշեան, ծանօթ՝ Հնդեւրոպական մայր լեզու անուամբ։ Հիւնքեարպէյէնտեան Տէր Հօր ստուգաբանութեանց շատերն են յայտնապէս ծնունդ Պարսիկ եւ Յոյն բառերու, զորս կորով մտաց խորատես հեղինակին գիտած է զարմանալի ճշդութեամբ։ Կան արդարեւ ստուգաբանութիւններ որ կը թուին բռնի, ինչպէս ստուգաբանութիւն պատարագ *բառին, սակայն եւ այնք չեն առանց հաւանականութեան, կուտան առիթ նոր քննութեանց, եւ կրնան ընդունուիլ իբրեւ մօտ ի ճշմարտութիւն, մինչեւ որ նոր գիտողութիւնք ցուցնեն ճշդագոյնը։*

Գիտեմ թէ Տէր Հօրը ստուգաբանութիւններէն ոչ սակաւք պիտի կրեն հակառակութիւն լեզուագէտներէ, եւ թերեւս յիրաւի, բայց այս չնուազեցուներ գործին կարեւորութիւնը։ Ես փորձով կը վկայեմ թէ շատ լոյս առած եմ Հիւնքեարպէյէնտեանի Բառարանէն։ Այն Բառարանէն գիտեմ թէ մեր Հայերէն բառն պաճար, *է չորքոտանի, Պրս.*

թայ, տան եւ չար, չորս բառերէն, եւ թէ՝ նոյն բառն է ուրիշ ձեւով մեր պախրէն, այսինքն՝ արջառ կամ ոչխար, զոր նախնիք մեր կը գործածեն փոխանակ դրամոց եւս (Ոսկ. Մատթ.) եւ պատճառ այն է որ ի հնումն դրամք, այսինքն բեկորք արծաթոյ կամ պղնձոյ, ունէին դրոշմ արջառոց կամ ոչխարի (Գլուխ Ծննդ. ԼԳ. 19)։ Կը թողում ուրիշ բազում դիտողութիւններ ի նպաստ, բաւական լիցի միայն ասել թէ Ստուգաբանական Բառարանն Հիւնքեարպէյէնտեան Քահանային մեր լեզուէն շատ բառեր կը լուսաւորէ ըստ ծագման եւ կազմութեան համեմատութեամբ քոյր լեզուաց Պարսկին եւ Յոյնին։ Այսպիսի դժուարին գործի ձեռնարկութիւնը խծբծել, եթէ գտնուին խծբծողներ, չընուազեցուներ գործին յարգը։ Ուստի ես կը հաւատամ թէ Պատուական Մանանաժողովն Իզմիրեանց կտակի, այս բազմավաստակ գործին ի լոյս ընծայման նպաստելով կարեւոր ծառայութիւն կը մատուցանէ մեր չքնաղ լեզուին ուսման եւ հայ լեզուագիտաց կ՚ընծայէ առիթ նոր նոր դիտողութեանց եւ գիտնաբար քննութեանց։

Մատուցանելով խորին յարգութիւնս միանգամայն շնորհակալութիւն վասն բարերար դիտաւորութեան Պատուական Մանանաժողովին, կը մնամ

ԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ

Կ. Պօլիս Բերա, 18/6 Յունիս 1893 — Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ստուգաբանական բառարանս որ կ'ընծայուի ի լոյս՝ արդիւնք է բազմամեայ երկար եւ մանր քննութեան։ Ստուգաբանութեան, Յունարէն բանիւ *էդիմոլոժիա*, նպատակն է ցուցնել բառերու ծագումը։ Ճիշդ այս նպատակաւ պատրաստուած է այս գործը։ Ինչպէս յայտնի է մատենէն, հեղինակն կը ջանայ այս աշխատութեան մէջ ցուցնել Հայերէն բառերէն շատերուն եւ կարեւորներուն բուներն զորս կը գտնէ ընդհանրապէս Պարսկերէնի եւ Յունարէնի մէջ. եւ այսպէս լինել հարկ էր նայելով այս երկու լեզուաց ամբաւ հնութեան եւ կանուխ կազմութեան, եւ այն դարաւոր յարաբերութեան զոր ունեցած է Արարատեան ազգն ի վաղուց այս երկու դրացի ազգաց հետ։ Փոխառութիւններն զորս կը ցուցնէ հեղինակն այս երկու լեզուներէն, ոչ միայն այն բառերու մասին է որ իբրեւ արուեստական անուններ առնուած են ի հարկի, եւ են շատ սակաւ թուով եւ յայտնի, ինչպէս՝ եթեր, եկեղեցի, պուետ, դրամ, դլփին, ադամանդ, անդրի, Յունարէնէ. դեւ, հրեշտակ, դժոխք, դեն, Պարսկերէնէ, այլեւ այնպիսի բառերու որոց նըմանութիւնն հազիւ թէ կը նշմարուի առանց մասնաւոր ուշադրութեան, եւ սոնք բազում են թուով։

Հեղինակին կարգը կամ դրութիւնն այս է այս գործին մէջ։ Իւրաքանչիւր արմատ կամ բուն կը բաժնէ յաջորդէն երեք աստղով .*., եւ ի ներքոյ իւրաքանչիւրին կը դնէ բառեր զորս կը համարի նոյն բունին վերաբերեալ ճիւղեր։ Արդարեւ այս բառք շատ անգամ հնչման կամ գիրերու տարբերութեամբ, երբեմն եւս յաւելմամբ կամ նուազմամբ եւ տեղափոխութեամբ կը հեռանան բունին հետ նմանութենէ, ուստի եւ կրնան թուիլ բունի եւ բոլորովին անյարիր, սակայն գիտել պարտ է զի, ըստ մտաց հեղինակին, եւ է արդարեւ զարմանալի եւ ճիշդ, հայերէնի հարստութեան եւ զանազանութեան գլխաւոր աղբիւրն է գիրերու զանազանութիւնն, այնպէս որ միեւնոյն բունը կամ արմատը կը բազմանայ գրի յաւելուածով կամ փոփոխմամբ, արմատին նշանակութեան աւելի կամ նուազ մօտ, եւ կամ հակառակ իսկ նշանակութիւն ունեցող գաղափար յայտնելու։ Այս կէտը որ Հայերէնի ծննդականութեան

կամ բեղմնաւորութեան պատճառն է, գիւտ է մեր հեղինակին: Ասացեղոցս իբրեւ օրինակ կը յիշենք *զազան* բառն իւրաւորքն: Թող կը տեսնեն անաչառ դիտողք թէ յիշեալ արմատն ինչ զարմանալի գոյներ կ'առնու գիրերու այս խաղով, եւ ի՛նչ մեծ լոյս կը սփռէ այս գիւտն մեր լեզուին բառերուն զօրութիւնն զգալու:

Կրնայինք շատ բան ըսել այս զարմանալի աշխատութեան վրայ, սակայն բաւական կը համարինք այսչափ: Հեղինակն անշուշտ կարող էր շատ բան ըսել, եթէ չէր արգելեալ իւր մարմնոյն տկարութեան պատճառաւ:

Թէեւս ոմանք հեղինակին մերձեցումներէն զոմանս գտնեն բռնի, կը խնդրենք սակայն զգօն եւ հանդարտ ընթերցողներէն լաւ ուշ դնել եւ խորհիլ յառաջ բերուած մերձեցմանց ներքին կապակցութեան:

Մենք չենք վարանիր ըսելու թէ Հիւնքեարպէյէնտեան Ստուգաբանական Բառարանն կարեւորագոյն գրուածներէն է մեր լեզուին համար, եւ նոր առաջնորդ այս կարգի աշխատութեանց:

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՊԱՏԱՐԱԳ(*), *Լտ.* missa, *Ծագեալ 'ի բայէն* mittere, *որ նշանակէ արձակել, առաքել, հանել արտաքս։*

Քրիստոնէութեան նախնի դարուց մէջ հրապարակաւ ապաշխարողներն եւ երախայք կը հանուէին եկեղեցւոյ դուրսի դաւիթը՝ νάρθηξ, *պատարագի ժամանակ, երբ սարկաւագը կը գոչէր. «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք 'ի թերահաւատից, եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս». եւ, «Որք ոչ էք կարողք հաղորդել աստուածային խորհրդոյս՝ առ դուրս ելէք եւ աղօթեցէք»։ Եւ դռնապաններուն դառնալով կը պատուիրէր. «Զդրունս, զդրունս, ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ». ապա ներսը մնացողներուն. «'Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ»։*

—*«Զլսիցե՞ս զինչ աղաղակէ քարոզն, եթէ՝ ապաշխարողք յաղօթս կացէք, որ ոչն հաղորդի, ընդ ապաշխարողան է. զի՞ կայցես ի ներքս որ ընդ ապաշխարողան իցես. ընդէ՞ր ասիցէ, եթէ՝ Որ ոչ էք կարողք, երթա՛յք»* (Ոսկ. Եփես.)։

—*«Վասն այնորիկ որ 'ի մեղսն են յառաջագոյն արտաքսեմք 'ի բաց, եւ՝ ապա զխորհուրդն կատարեմք»* (Անդ)։

—*«Զերախայս արտաքոյ պահեմք . . . զի բազումք չեւ եւս են հասեալ 'ի կատարեալն»* (Ոսկ. Մտթ.)։

—*«Յետ այսորիկ արտաքս ելանեն 'ի սրբազանէն խմբէ երախայքն, եւ ընդ նոքօք աշխատեցեալքն, (այլ օրինակ՝ ախտացեալքն), եւ որք ընդ ապաշխարութեամբ են. եւ մնան 'ի ներքս որք աստուածայնոյն հայեցողութեան եւ կցորդութեան են արժանիք»* (Դիոն. Եկեղ. Դ)։

— Ὅσοι κατηχούμενοι προέλθετε, οἱ κατηχούμενοι προέλθετε, ὅσοι κατηχούμενοι, προέλθετε, μή τις τῶν κατηχουμένων, ὅσοι πιστοί. (**Յն. Պատարագ**)։

—*'Ի կատարած քարոզութեանն արտաքս հանէին սարկաւագունք զամենեսին որոց ոչ էր օրէն առաջիկայ գտանել 'ի ժամ պատարագի. նախ 'ի բաց հանէին զկոչեցեալսն ունկնդիրս ընդ անհաւատսն, յետ այնորիկ աղօթս արարեալ վասն երախայից՝ զնոսա եւս արձակէին. զկնի ապա աղօթեալ եւ վասն այսակրաց կամ դիւահարաց, զնոսա եւս արտաքսէին. նոյնպէս եւ զուսանողսն կամ զարժանաւորս, եւս եւ զապաշխարողս։ Եւ յելանել ամենեցուն նոցա արտաքս, իբրեւ մնային միայն հաւատացեալք, սկսանէին աղօթել . . . . Յետ աղօթիցն . . . սարկաւագն բարձրաձայն քարոզէր. Մի՛ ոք խեթիւ, մի՛ ոք խաբէութեամբ կացցէ առաջի սրբոյ սեղանոյս. ող-*

(*) Բառիս վերջին երկու գիրը -ագ, մասնիկ ցուցուած է 'ի Քեր. Զարգ. 1496.

Չոյն տուք միմեանց 'ի համբոյր սըր-բութեան» ։ Եւ ամենեքին համբու-րէին ընդ միմեանս սիրով ։ (Ցեկոր. կենցաղ Լուր. եւ Քրէնդ. Հտ. Բ. Մասն Գ. Ցոյ. է. էջ 482—483, Տպեալ Վիեննայի 1843) ։

Messe : du Latin *Missa*, sur l'origine du quel on a quelques doutes. Les uns le font venir de l'Hébreu *Missah*, qui veut dire *Offrande*, mais l'opinion la plus probable est qu'il vient de *Missus*, envoyé, renvoyé, soit qu'il s'agisse du renvoi des Catéchumènes qu'on faisait sortir avant de commencer la célébration de la Messe, soit qu'il s'agisse du renvoi de l'assistance quand la messe était finie. — *Ite, missa est: (Diction. français E. Littré.)*

Quelques auteurs ont voulu tirer ce mot de l'Hébreu *Missah*, offrande volontaire, il est plus probable qu'il vient du latin *Missio*, renvoi, parce qu'après les prières et les instructions qui précèdent l'oblation des dons sacrés, on renvoyait les catéchumènes et les pénitents; les fidèles seuls que l'on supposait dignes de participer au saint sacrifice, avaient droit d'être témoins de la célébration. C'est l'étymologie que St. Augustin, St. Avit de Vienne et St. Isidore de Séville ont donnée de ce terme.

Bingham, entêté de ses préjugés anglicans a voulu prouver, par cette observation, que la messe n'a jamais été le nom spécialement attaché à la consécration de l'Eucharistie, et n'a jamais signifié un sacrifice expiatoire pour les vivants et pour les morts, comme on l'entend aujourd'hui. Mais il fournit lui même de quoi le réfuter. Il convient que le mot de *Messe* vient du latin *Missio*, renvoi : or, dans quelle partie de l'office renvoyait-on quelques-uns des assistants ? Il l'a reconnu; c'est immédiatement avant l'oblation et la consécration de l'Eucharistie : voilà pourquoi ce qui précédait était appelé la messe des catéchumènes: parcequ'alors on les renvoyait: le reste était appelé la messe des Fidèles.

Donc, dans l'origine *la Messe* ou *le renvoi* n'a eu lieu qu'à l'égard de la consécration de l'Eucharistie; donc, c'est relativement à cette consécration que le nom de *Messe* a été introduit : conséquemment il n'a été donné que par analogie et abusivement aux autres parties de l'office divain. (*Dict. théol. Abbé Bergier*).

Ce ne fut que vers la fin du IV siècle que le mot de *Messe* commença à cignifier la célébration de l'Eucharistie. Le savant Béatus Rhénanus, dans ses notes sur Tertullien, odserve que St. Ambroise consacra cette expression du peuple, parcequ'on mettait dehors les catéchumènes après la lecture de l'Evangile. (*Voltaire dict. philos.*)

Պարսկերէն Գեդերմեդեն, նշանակէ՝ հանել ըստ դուռն, հանել արտաքս, եւ Գէտէրայ (*) որ է հրամայական դեդերամեդեն բային, նշանակէ՝ գալ կամ ելանել արտաքս ։ Եւ այս վերջինը կը թուի լինել արմատ՝ մեր Գադարել բառին, Պարսիկ ձայնը՝ Լատին (*) իմաստին պատշաճեցընելով ընդունուած ։ Տես եւ լումայ ։ Բաղդ. զանդիկ եւ մնդիկ ։

Իսկ Եսայ. ԺԸ. 2 — «Որ առաքէր պատարագս ընդ ծով» . Ցոյնն ունի, ὅμηρα (պատանդս) ։ Եւ Բ. Մկ. ԺԲ. 35 . — «Կամէր զանօրէնն ձերբակալեալ կալեալ առաջի Մակարայեցւոց գնդին պատարագ մատուցանել», ընթերցիր՝ Ունել կենդանի կամ ըմբռնել կենդանւոյն. Ցն. λαβεῖν ζωγρείαν, զոր թարգմանիչն թուի ընթերցեալ — թերեւս ըստ իւրում օրինակին, ζωάγριαν (զոհ, պատարագ) ։

Ցուցէ (պատարագ)

ԱՌԱՔՈՒՄՆ,

Թելադրեալ 'ի լատինականէն, զի

(*) յ գիրը ճնշեալ է որպէս ի Թուրք. բառից ալայ, քէլայ, գալայ, տարայ ։

missa (պատարագ) ծագի յանուանէս missio (առաքումն)։

Այլ է

ՑԱՐԱԳԵՄ (*), Իբր –բէֆէւ. յ–բէֆէ –ՙՆէւ. ՙՆէւյ–բէ–––. — Յն. ἡλιάζω ։

Իսկ

ՋՈՀ, ՋՈՀԵՄ, Յն. ζωάγρια,

Յորմէ 'ի հակառակէն

ՑԱՋԵՄ, ի յոսի մխալ, այսինքն, զոհել զանասուն կենդանիս, կամ ըստ հեթանոսական պաշտամանց։

Բաղդ. Հաշտ առնել, եւ, Ցաշտ առնել։

⁂

ԼՈՅՍ, Նոյն է ընդ Լտ. lux, (սեռ.) luc-is, լուս-ոյ. իսկ սա 'ի Յն. λίκη (այգ)։ Յունական ձայնդ ἥλιος (արեւ) մերձաւոր է ձայնիս ււյ–, եւ Լտ. sol, (արեւ)։)

ԼՈՅՍ ԱՌՆԵՄ, Թրգ. Տճ. ււււֆ էՐ–ձէ+։

— Լոյս արա ինձ 'ի խաւարի։ (Սաղմ. ԺԷ. 29). Յն. φωτίζω։

Յորմէ (լոյս)

ԼՈՒՑԱՆԵՄ, ՃՐԱԳԱԼՈՅՑ, ԼՈՒՑԿԻ,

Որպէս մասանել եւ մուծանել։

ԼՈՒՍԱՒՈՐԵՄ, Լտ. luceo։

ԼՈՒՍԱԲԵՐ, Լտ. lucifer։

Եւ

ԼՈՒՍԻՆ, Լտ. lucina, դիցուհի երկանց եւ ծննդոց, լուսին։

ԼՈՒՍՆԱԿ, Պրս. ʃ–ՙՆ–+, նշանակէ լոյս լուսնի։

ԼՈՒՍՆԱԿԱՑ, Ի ԼՈՒՍՆԱԿԻ, Յն. πρός τό σελήνιον։

Ի հակառակէն ււ––յ է

ԼՈՒՍՆ, Յն. λεῖχομα.

— Եթէ ոք ունի զլուսն յաչս իւր (Տոբ. Զ. 9)։

— Անկան լուսունքն յաչաց նորա (Տոբ. ԺԱ. 14)։

(*) Ն. Հյկ. Բռ. համարի զբայդ՝ արմատ բայիս ––––ւ–ֆէւ։

ԼՄՆԱՆԱՄ, — Եղիցի ապխտակ փայլուն լմնացեալ (Ղեւտ. ԺԳ. 9)։

ԼՄՆԵՑՈՒՑԱՆԵՄ, — Արար զործ իմ յապականութիւն . . . եւ լմնեցոյց զուռս նորա (Յովել Ա. 7)։ Յն. ἐλεύκανε (սպիտակացոյց)։

Այլ է

ՀԱՒԱԼՈՒՄՆ(*), (սեռ.) հաւալսմն։

⁂

ՀԻՒՂԷ,

ՀԻՒՂ, Բառ Յն. ὕλη (փայտ, նիւթ, մարմին)։

— Հիւղէ որ թարգմանի նիւթ (Եզնիկ)։

Յորմէ

ՀՈՂ,

Յորմէ

ՑՂԻ, Տես Ֆէլէը·

ՑՂԱՆԱՄ, Յորմէ,

ՑՂՓԱՆԱՄ, որպէս –բբէՆ–ʃ եւ յ–ֆ–բ–Ն–ʃ. իսկ (Ղուկ. Բ. 21)։

— Կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն մինչչեւ յղացեալ էր զնա յորովայնի։ Իմն ըստ յունին, նա (այսինքն Յիսուս), քանզի յղանալ՝ հասարակ բայ է։

Դարձեալ ասէ

ԼԻ, Յորմէ ոչ միայն

ԼՆՈՒՄ, այլ եւ

ԼԻՆԻՄ, Անցեալ դերբայն է՝ լեալ, այսինքն, լի-եալ, ինչպէս եւ կը գրուի շատ անգամ, իբր՝ լի եղեալ, լցեալ զմայր կամ զղատարկութիւն։

— Եպիկուրոս երկուս սկզբունս

(*) «Իբր՝ հաւ անլոյս, կամ լուսն ունող յաչս, որպէս ռմկ. հաւկուրն։ (Ն. Հյկ. Բռ.)։ Արար. հ––––լէ (եզ.), հ––––էւ (յբ.) նշանակէ խածի, կամ Թռչնոց տեսակքն։ Իսկ Յն. πελεκάν, (հաւալուսն Թռչուն), կ'ըսուի նաեւ Κήλας, 'ի ձայնէս Κήλη, իւր կոցին ներքեւ պարկ մը կախուած ունենալուն համար, որ իրեն ստամոքսն է։

համագոյից զնէր, զդատարկութիւն եւ զլիութիւն. զի որ ինչ էն՝ կամ բովանդակի, եւ է լիութիւն, եւ կամ բովանդակէ, եւ է դատարկութիւն:

Դատարկութիւն կոչէր զվայրն համատարած ունայն 'ի նիւթոց, եւ լիութիւն՝ զհիւղեսյս կամ զնիւթն մանրամաղ, որ լնու համօրէն զվայրն զայն դատարկ (Վէրք. Ծղկ. Զ. Ծն. 34):

Այսպէս լինել եւ ծնուլ ոչ ըստ նշանակութեան միայն, այլ եւ ըստ կազմութեան եւ ըստ ձայնի եւս ունին մեծ նմանութիւն. եւ այս կըրկին մերձաւորութիւնէն է որ ծնուլ առնուած է 'ի մեզ առէալ՝ ցուցընելու լուսնին աճումը, իբր լինել, գալ 'ի գոյ 'ի նմա լուսոյ: Թրք. այըն դօղմագը:

— «Լուսին 'ի մաշելն եւ 'ի լընուլն». — «Ոչ լուսին կայ 'ի մաշել եւ 'ի լնուլ» (Ագաթ.):

— «Լուսին աճմամբն, լնլով եւ նուազելով»: — «Ջուրն (ծովուց ինչ) ըստ աճելն լուսնի աճէ, եւ ըստ լնուլն լնու (*)» (Եզնիկ):

Լինելութեան եւ լիութեան մերձաւորութիւնն է յայլ լեզուս ըստ իմաստին միայն, առ մեզ է նաեւ ըստ ձայնին եւ ըստ արմատոյ:

Դիտողութեան արժանի են նաեւ Թուրք բառքն՝ օլմագ (լինել), տօլմագ (լնուլ), դօղմագ (ծնանել, ելանել, ծագել): Որպէս ի յունին γίγνομαι եւ γεννάω, լինել եւ ծնանել, γένημαι եւ γένεσις, լինելութիւն եւ ծնունդ, եւ մեք միապէս առեմք գիրք ծննդոց եւ գիրք լինելութեան նաեւ գիրք արարածոց: Փոխանակ լէ, լէբէն, ունիմք նաեւ

ԼԻՐ. — Տեառն է երկիր լրիւ իւրով (Սղմ.):

ԼԻՐ ԱՐԿԱՆԵՄ, ԼՐՈՒԹԻՒՆ,

(*) Հոս, Թէպէտ չվերաբերիր տեղւոյս, կը յիշեցընենք սակայն որ յԵզնիկն, (Տպ. Վենետ. 1826. էջ 216—218) կայ մասն մի որոյ տեղը խախտած է յանզգուշութենէ ընդօրինակողին, եւ ըստ այնմ տպագրուած:

«Եւ զաճելն եւ նուազել լուսնի իբրեւ ընդ պատճառս ինչ մտանել եւ ելանել առեն իմաստունք: Եւ նշանս անտի տան, զի է երբէք յորժամ յաճմունսն իցէ եւ լնլոյն, շուրջ զանօթովն ծովուն, որպէս թէ ընդ սակաւ ինչ փեռեկումն ծերպից՝ նշոյլք երեւեցին ...: Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել ... եւ քանզի անթիւ բիւրուց կախարդաց են յերկրի. եթէ իւրաքանչիւր որ 'ի նոցանէ իջուցանել կարէր զնա, ոչ երբէք տային նմա ելանել յերկինս: Այլ զի ոչ երբեք իջանէ, յայտ անտի է զի ոչ երբեք զիջանելն որ տեսանէ զնորա, եւ ոչ զամբառնալն: Եւ եթէ կացեալ միտ դնիցեն, անդէն մթացեալ անօթն լուսաւորի առ սակաւ սակաւ, մինչեւ ամենեւին յարդարի: Զի թէ իջանելոյ ինչ հնար գոյր, թէպէտեւ զիջանելն որ ոչ տեսանէր, սակայն զհամբառնալն ամենեքեան տեսանէին»:

Ուղղելի է

«Եւ զաճելն եւ նուազել լուսնի իբրեւ ընդ պատճառս ինչ մտանել եւ ելանել առեն իմաստունք. եւ նշանս անտի տան, զի է երբեք յորժամ յաճմունսն իցէ եւ լնլոյն, շուրջ զանօթովն ծովուն (1), որպէս թէ ընդ սակաւ ինչ փեռեկումն ծերպից նշոյլք երեւեցին. եւ եթէ կացեալ միտ դնիցեն, անդէն անդէն մթացեալ անօթն լուսաւորի առ սակաւ սակաւ, մինչեւ ամենեւին յարդարի .... Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել .... Եւ քանզի անթիւ բիւրուց կախարդաց են յերկրի. եթէ իւրաքանչիւր որ 'ի նոցանէ իջուցանել կարէր զնա, ոչ երբէք տային նմա ելանել յերկինս: Այլ զի ոչ երբեք իջանէ, յայտ անտի է զի ոչ երբեք զիջանելն որ տեսանէ զնորա, եւ ոչ զամբառնալն: Զի թէ իջանելոյ ինչ հնար գոյր, թէպէտ եւ զիջանելն որ ոչ տեսանէր, սակայն զհամբառնալն ամենեքեան տեսանէին»:

(1) Տպ. Ծանրանայ. Բաղդ. — «Մերձեալ խոնաւութեանն, եւ 'ի նա ('ի լուսինն) չհասեալ բնաւ առեալ ծովու շուրջ զնովաւ»: (Եզնիկ էջ 186):

Լէզլ բաղդատէ ընէմ բային հրամա-յականին հետ, ըէր, իրր պէսպիսութիւն, եւ խուսելու համար չփոթութենէ ։

Տես եւ ըւան ։

ԼԻՑ (*), ԼՑԻ, Լնում բային հրամայականն եւ կոր. յորմէ

ԼՑՈՒՑԱՆԵՄ, որ Ց ին բարձմամբ՝ լինի՝ լօցանէմ ։

Լոյս՝ կը պարունակէ ըմուն, ճէյ ֆուլուֆուր ։ Յն. σελήνη է՝ լուսին, մանաւանդ՝ լրացեալ ։

Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ (Երր. Բէհօմ, դատարկ) ... Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս (օլսուն ըի էվէլ դադարըն) ։

Այս չէ արմատին կը վերաբերի նաեւ

ՑՈՒԼ, Ցեսադրութեամբ Լ տառին, իրր լցեալ, այսինքն, պարարտ, պարարակ ։ Պրսկ. բէրվէրէ ։ — Ցուլք գէրք պաշարեցին զիս (Սաղմ.) ։

Եւ 'ի հակառակէն

ՈՒԼ, Բարձմամբ Ց տառին, իրր փոքրիկ 'ի զենլի անասունս ։

Ուլ մի երբեք ոչ ետուր ինձ ... զեներ զմա զեղն պարարակ (Ղուկ. ԺԵ. 29—30) ։

Եւ եւս փոքրագոյն

ՁՈՒ, Ապա եւ

ԼՈՒ, Տեղափոխութեամբ Լ տառին ։

— Չքատուածն զկծեցուցանէ զմեղ, որպէս լուածն եւ ճանճիւ (Եղնիկ) ։

ՀՈԼՈՎ, Սակս նմանաձայնութեան յունին ἴλη, նիւթ, հող, եւ εἰλέω (հալածել, շրջել, դարձուցանել) ։

ՀՈԼՈՎԵՄ, Հէօլէ բառէն է նաեւ

ՀԱՂԱՄԱՂՔ, իբր՝ հիւղէք ։

— Ծոցն յարմամ ընդ երդ մառանիցէ, եւ հողամաղք երեւին 'ի չողն (Եղնիկ) ։

(*) Ա՛յլ է՝ ԼԻՑՔ (գոյ.) Պարսկ. լէ-ֆ, որ նշնկէ. կոճ ստից, Տճկ. Խօֆօ, Յն. χίδος, Թրք. տըէֆ ։

Ցորմէ 'ի հակառակէն

ՀՈՂԱՄԱՂ, Հօշ ֆուլ, օր նէօտէ էօր ձէծ ֆուլ.

Բաղդ. կէտ եւ կէտ, ցեծ եւ ցեց, ցուլ եւ ուլ, տինգերք եւ տղրուկ ։

Հողամաղ բառէն են նաեւ

Ցորմէ

ՄՂԵՂ, ՄԱՂԵՄ, ՄԱՂ,

Իսկ

ՆՔՈՅՐ, (սեռ.) Նքուրի, Յն. λεῖχνον, λίχνον, Թրք. ֆալըօր ։

— Ջերկիր կէսք նքուրի կերպարանաց նմանեցուցին, եւ ոմանք խորամիջոց անուանեցին (Վէցօր.) ։

ԱՂԱՄՈՂԵՄ, ԱՂԱՄՈՂ,

Ցորմէ թերեւս եւ

ԱՂԱԽԱՂ, ԱՂԱԽԱՂԵՄ, Այս բառերուն նշանակութիւնը կայ՝ հէ-ըէ բառին վարդապետութեան մէջ ։

— Ի կերպարանս եւեթ կարաց ածել զհիւղն, որ խառն ի խուռն վարէր (Եղնիկ) ։

— Հիւղն որ է նիւթ ... անիրան եւ անկերպարան էր, եւ խառնիխուռն օցելով երթեւեկէր (Եղնիկ) ։

Հող նկատի իբր Խանէր, ծանր ։

— Որպէս թանձրութիւն հողոյ զի ափսեալ է 'ի վերայ երկրի (Սղմ.) ։

— Ջիա՞րդ թոյլ եւ ցիր բնութիւնն (օդոյ) կարող իցէ հանդարտել այսչափ ծանրութեան երկրի, որ հաստատեալ կայ 'ի վերայ նորա (օդոյ) ... Ջուրք կան 'ի ներքոյ երկրի, որ ունին 'ի վեր զատարիկ ծանրութիւն նորա ... զիա՞րդ ոչ ընկղմեցի 'ի ջուրան ծանր եւ թանձր բնութիւնն (երկրի կամ հողոյ) (Վէցօր Ա.) ։

— Ամենայն ինչ որ ունի ծանրութիւն ... եթէ քար եւ եթէ փայտ, եւ ամենայն ինչ որ նմանութիւն երկրի ունի, առ երկիր ձգի իջանել. այսպիսի ծանրութիւն ունի երկիր, եւ ազքիմքք հաստատեալ կայ (Անդ, էջ 19) ։

Ցորմէ 'ի հակառակէն

[illegible]

[illegible] — Ու՞ր սէր է ձեր թըշ-նամի . ՚ի ձեր կողմն է Ղուկ. Թ. 50) Ցն. [illegible] — Եւ դարձեալ ՚ի կիսն կողմն, ասէ զՄիհաճն . Ղուկ. Է. 44) . Ցն. [illegible] — Զա-մենայն անձն քո փոխեա ՚ի Տէր կողմ Սեբեբ. մ . — Եւ ոչ միայն այս ձգնէ զմեր կողմնա Գործ. ԺԹ. [illegible] . Ցն. [illegible] — Եթէ Աստուած ՚ի մեր կոյս է . ո՞վ իցէ մեզ հակառակ Հռովմ. Ը. 31) , Ցն. [illegible] — Իւրեւ գիտաց Պաւղոս եթէ մի կողմն սադուկեց-ւոց է (Գործ. ԻԳ. 6) , Ցն. [illegible] — Վարչամակն . . . ոչ ընդ այլ կը-տաւսն կայր , այլ ուրոյն ծալեալ ՚ի մի կողմն (Յովհ. Ի. 7) , Ցն. [illegible] — Տեսին զերիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ (Մարկ. ԺԶ. 5) , Ցն. [illegible]

Դարձեալ՝ հոլով բառով բարդու-թիւններ կան ՚ի մեզ , որոց ուրիշ լեզուաց մէջ օրինակը չկայ . արե-ւելակողմն , ծովակողմն , ծովակողմ[illegible]

ղմն , ծովակողմն կոյս , դաշտա-
ղմն , տեառնակողմն կոյս , սատ-
ածակողմն, աստուածակոյս կողմն։
— Եւ նմա վիճակն ընդ կողմն
սիոյ , եւ Արդեգովմայ՝ 'ի հարա-
կողմն կոյս (Ա. Մնաց. ԻԶ. 14—
) , Յն. 'ի հիւսիս . . . 'ի հարաւ ։
Ընդ հիւսիսակողմ յերկայնու-
ւն քառն եւ հինգ հազար . Յն.
հիւսիս ։ — Յիջանել արեգական
հարաւակողմ կոյս . . . ։ Ի հարա-
կողմն կողմանց գալ հատանել ,
ցօր. Զ. 1) ։ — Հեստեալ կայիք
առնակողմանն (Օրէն. Թ. 24) , Յն.
πρός Κύριον ։ — Խնտութեամբ
ռէիք 'ի տեառնակողմն կոյս (Օ-
. Թ. 7) , τά πρός Κύριον ։ — Դու
ցես նմա յաստուածակոյս կող-
ւէ (Ել. Դ. 16) , Յն. τά πρός τόν
։ — Հաւատարիմ քահանայա-
ա յաստուածակոյս կողմանէ ան-
(Եբր. Բ. 17) , Յն. τά πρός τόν
։ — Ամենայն քահանայապետ
ւն մարդկան կայ յաստուածակոյս
ղմն անդր (Եբր. Ե. 1) , Յն. τά
ς τόν θεόν ։

ակ յամենայն կողմանց թշուա-
ցեալն Նիկանովր (Բ. Մկ. Ը. 34) ,
ὁ δὲ τρίς ἀλιτήριος νικανῶρ ։ —
յրէր անցանել 'ի ճամբար այլազ-
ացն , եւ քարաժայռք յայսմ կող-
նէ , եւ քարաժայռք յայնմ կող-
նէ (Ա. Թագ. ԺԴ. 4) , Յն. καὶ
πέτρας ἐκ τούτου καὶ ὀδοὺς πέτρας
τούτου ։

— Գնաց ընդ իւր կողմն (Թ...
. 25) , Յն. ἀπῆλθε πρός ἑαυτόν ։ —
Մերու հարեալ նետիւ ընդ լերդա-
մն (Առակ. Է. 23) , Յն. εἰς τὸ ἧπαρ ։
Ընթացարուք յայս կոյս յայն կոյս
ճանապարհս Երուսաղեմի (Ե-
Ե. 1) , Յն. ἐν ταῖς ὁδοῖς Ἱερουσα-
։ Յորմէ (կողմ) ։

ՈՂ , — Ա՛ռ մի 'ի կողից նորա եւ
յ ընդ այնր մարմին (Ծննդ.) ։
πλευρά նշանակէ՝ եւ կող եւ
կողմն , յորմէ եւ 'ի մեզ սափ , —
Երթայր ընդ կողաց լերինն (Բ Թագ. ԺԶ. 13) , Յն. ἐκ πλευρᾶς τοῦ ὄρους .
— Եղ զկողիւք փանգակին (Ա. Մկ. ԺԳ. 29) ։

Դիտելի է նմանութիւն բառիս

ՑՈԼՔ , (ցոլացումն)

Ընդ Լատին անուանս sol , որ նշանակէ արեւ , եւ յունականիս φῶς , որ նշանակէ լոյս , նմանութիւն կամ նոյնութիւն ընդ մերս

ՑՈՑ , — Ընդ եղեգան փող բոց ելանէր (Խոր.) ։

Դարձեալ նոյն Լատին sol բառն է որ կ'ըլլայ մեզի

ՇՈՂ , (Լոյս կամ ճառագայթ արեգական) .

— Ահաւասիկ ես դարձուցանեմ զստուերս աստիճանացդ ընդ որ իջեալ է շողք (Յն. ἥλιος) . . . եւ դարձուցից շողոյն (Յն. ἥλιος) զտասնեքումբք աստիճանօք , եւ ել շողն (Յն. ἥλιος) զտասնեքումբք աստիճանօք ընդ որ իջեալ էր ստուերին (Եսայ. ԼԸ. 8) ։

ՇՈՂԱՄ , (փայլել կամ երեւել) ։

— Մի՛ մթարքն որ զբքօքն շողացեն , արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն լեցին (Եղիշէ) ։

ՇՈՂՇՈՂԵՄ եւ ՆՇՈՂ , իրր՝ նշմարանք շողոյ , սկիզբն կամ ծագ շողոյ։

Գրեալ եւ

ՆՇՈՅԼ , (Կազմութիւնք բաղդ. թողում եւ թոյլ) ։

— Յորժամ զջուրն ժքթիցես , նշոյլք լուսոյ հատանին (Եղիշէ) ։

Յորոց 'ի հակառակէն

ՇԼԱՆԱՄ , (Մթագնել , խաւարել) ։

— Շլացան 'ի բարկութենէ աչք իմ (Յոբ. ԺԷ. 7) ։ — Զիա՞րդ շլացաւ ոսկին (Ողբ. Դ. 1) ։

ՇԼԱՑՈՒԹԻՒՆ , — Հարցէ զքեզ շլացութեամբ (Յն. ἀορασία) ։ — Հարզազդ զայդ շլացութեամբ. եւ եհար զնոսա շլացութեամբ ըստ բանին Եղիսէի (Դ. Թագ. Զ. 18) ։

ՀՈՂՄ (*), Որ նկատի իբրեւ անօսր եւ թեթեւ։

Բաղդ. կարապ եւ կապար, օդ եւ յօդ։

— Հոգիս կոչէ զնոսա (զհրեշտակս եւ զդեւս) վասն արագութեանն, որպէս զի ասասցէ, թէ քան զհողմս թեթեւք են, քանզի ոգւոյ եւ հողմոյ անուն Եբրայեցւոցն եւ Յունարէն եւ Ասորերէն նոյն է. նա թէ եւ հայերէն ոք մանր մտր զնիցէ, նոյնպէս գտանի (կամ գտանէ), յորժամ տագնապեալ ոք յումեքէ իցէ, ասէ, Զհտ ոգի առնուլ, եւ այնու զօդոյս զոր միշտ ծծեմք, յայտ առնէ (Եզնիկ)։

Յարմէ

ԿՈՂՄ, ԿՈՂՄՆ, շատ անգամ հողմ կը գործածուի իբրեւ կողմ, ինչպէս նաեւ Յունարէն։

— Ի չորից հողմոց երկնից ժողովեցից զձեզ ասէ Տէր (Զաքար. Բ. 6)։

— Թագաւորութիւն նորա փշրեսցի, եւ բաժանեսցի ընդ չորս հողմս երկնից (Դան. ԺԱ. 4)։

— Ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց, 'ի ծագաց երկնից մինչեւ 'ի ծագս նոցա (Մատթ. ԻԴ. 31)։

— Ժողովեսցէ զընտրեալ, իւր 'ի չորից հողմոց, եւն. (Մարկ. ԺԳ. 21)։

Շատ մը գրուցուածներ 'ի մեզ հողմ բառով կը բացատրուին. Յունարէնի մէջ այդ առանձնութիւնը չգտնուիր. զորօրինակ «Տագնապ է ինձ յամենայն կողմանց» (Դան. ԺԳ. 22)։ — «Վտանգ է ինձ յամենայն կողմանց» (Բ. Թագ. ԻԴ. 14)։ — «Անձուկ է ինձ յամենայն կողմանց» (Մեքեր.). Յն. στενά μοι πάντοθεν։ Տես (Ա. Մնաց. ԻԱ. 13) — Նեղութիւն է ինձ յոյժ երեքեան այդոքիկ. Յն. στενά μοι καὶ τὰ τρία σφόδρα։ (Բաժանեցան ջուրքն) յայս կոյս եւ յայն կոյս (Դ. Թագ. Բ. 14), Յն. ἔνθα καὶ ἔνθα։ — Եղիցի յինէն կողմանէ այսր այր եւ ոչն ոչ (Բ. Կորնթ. Ա. 17)։ Յն. παρ' ἐμοὶ։ — Յոր կողմ եւ դարձցի ամպարիշտն կործանի (Առակ. ԺԲ. 7), Յն. οὗ ἐὰν στραφῇ։ — Շրջէր 'ի կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց (Գործ. ԺԵ. 4), Յն. διήρχετο τὴν συρίαν καὶ κιλικίαν։ — Ոչինչ հոգայ 'ի տանէ կողմանէ այր նորա (Առակ. ԼԱ. 21), Յն. οὐ φροντίζει τῶν ἐν οἴκῳ ὁ ἀνὴρ αὐτῆς։ — Որ ոչն է ձեր թշնամի, 'ի ձեր կողմն է (Ղուկ. Թ. 50), Յն. ὃς οὐκ ἔστι καθ' ὑμῶν, ὑπὲρ ὑμῶν ἐστιν։ — Եւ դարձեալ 'ի կինն կողմն, ասէ ցՍիմոն (Ղուկ. Է. 44). Յն. καὶ στραφεὶς πρὸς τὴν γυναῖκα։ — Զամենայն անձն քո փոխեա 'ի Տէր կողմ (Մեքեր. Ժ)։ — Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմնս (Գործ. ԺԹ. 27), Յն. οὐ μόνον δὲ τοῦτο κινδυνεύει ἡμῖν τὸ μέρος։ — Եթէ Աստուած 'ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակառակ (Հռով. Ը. 31), Յն. εἰ ὁ θεὸς ὑπὲρ ἡμῶν, τίς καθ' ἡμῶν։ — Իբրեւ գիտաց Պաւղոս եթէ մի կողմն սադուկեցւոց է (Գործ. ԻԳ. 6), Յն. τὸ ἓν μέρος։ — Վարշամակն . . . ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն (Յովհ. Ի. 7), Յն. εἰς ἕνα τόπον։ — Տեսին զերիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ (Մարկ. ԺԶ. 5), Յն. ἐν τοῖς δεξιοῖς։

Դարձեալ՝ հողմ բառով բարդութիւններ կան 'ի մեզ, որոց ուրիշ լեզուաց մէջ օրինակը չկայ. արեւելակողմն, ծովակողմն, ծովակոյս

(*) Հողմ. որուն ստուգաբանութիւնը տակաւին ծանօթ չէ մեզի, չենք կրնար հաստատել թէ հողին հետ արմատին կողմանէ յարաբերութիւն ունենայ։ Բայց կրնանք հաստատութեամբ որոշել թէ յիշեալ բառից մէջ նախնի Հայք ներհակութեան ազերս չեն ըմբռնած, ոչ հող իբր թանձր, ծանր, եւ ոչ հողմ իբր թոյլ նկատուած է. վասն զի այսպիսի նկատողութիւնք բոլորովին օտար են նախնի ազգաց խորհրդութեան եղանակէն, եւ իրական հիմ մըն ալ արդեանցք չունին։ (Հ. Սեր. Տէրվիշեան, Մասիսի Թիւերէն մէկուն մէջ)։

կողմն, ծովակողմն կոյս, դաշտակողմն, տեառնակողմն կոյս, աստուածակողմն, աստուածակոյս կողմն։

— Եւ նմա վիճակն ընդ կողմն հիւսիսոյ, և Արքեղովմայ՝ 'ի հարաւակողմն կոյս (Ա. Մնաց. ԻԶ. 14—15), Յն. 'ի հիւսիս . . . 'ի հարաւ։ — Ընդ հիւսիսակողմ յերկայնութիւն քառն և հինգ հազար. Յն. ընդ հիւսիս։ — Ցիջանել արեգական 'ի հարաւակողմ կոյս . . . ։ Ի հարաւակողմն կողմանց գալ հասանել, (Վեցօր. Զ. 1)։ — Հեռանալ կայիք տեառնակողմանն (Օրէն. Թ. 24), Յն. τὰ πρὸς Κύριον։ — Խեռութեամբ վարէիք 'ի տեառնակողմն կոյս (Օրէն. Թ. 7), τὰ πρὸς Κύριον։ — Դու եղիցես նմա յաստուածակոյս կողմանէ (Ել. Դ. 16), Յն. τὰ πρὸς τὸν θεόν։ — Հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի (Եբր. Բ. 17), Յն. τὰ πρὸς τὸν θεόν։ — Ամենայն քահանայապետ վասն մարդկան կայ յաստուածակոյս կողմն անդր (Եբր. Ե. 1), Յն. τὰ πρὸς τὸν θεόν։

Իսկ յամենայն կողմանց թշուառացեալն Նիկանովր (Բ. Մկ. Ը. 34), Յն. ὁ δὲ τρὶς ἀλιτήριος Νικάνωρ։ — Խնդրէր անցանել 'ի ճամբար այլազգեացն, և քարաժայռք յայսմ կողմանէ, և քարաժայռք յայնմ կողմանէ (Ա. Թագ. ԺԴ. 4), Յն. καὶ ὀδοὺς πέτρας ἐκ τούτου καὶ ὀδοὺς πέτρας ἐκ τούτου։

— Գնաց ընդ իւր կողմն (Թուոց ԻԴ. 25), Յն. ἀπῆλθε πρὸς ἑαυτόν։ — Եղջերու հարեալ նետիւ ընդ լերդակողմն (Առակ. Է. 23), Յն. εἰς τὸ ἧπαρ։ — Ընթացարուք յայս կոյս յայն կոյս ընդ ճանապարհս Երուսաղեմի (Երեմ. Ե. 1), Յն. ἐν ταῖς ὁδοῖς Ἰερουσαλήμ։ Յորմէ (կողմ)։

ԿՈՂ, — Առ մի 'ի կողից նորա և ելից ընդ այնր մարմին (Ծննդ.)։ Յն. πλευρά նշանակէ՝ և կող և կողմն, յորմէ և 'ի մեզ սար, — Երթայր ընդ կողաց լերինն (Բ Թագ. ԺԶ. 13), Յն. ἐκ πλευρᾶς τοῦ ὄρους. — Եգ զկողիւք վանդակին (Ա. Մկ. ԺԳ. 29)։

Դիտելի է նմանութիւն բառիս

ՑՈՂՔ, (ցոլացումն)

Ընդ Լատին անուանս sol, որ նշանակէ արեւ, և յունականիս φῶς, որ նշանակէ լոյս, նմանութիւն կամ նոյնութիւն ընդ մերս

ԲՈՑ, — Ընդ եղեգան փող բոց ելանէր (Խոր.)։

Դարձեալ նոյն Լատին sol բառն է որ կ'ըլլայ մեզի

ՇՈՂ, (Լոյս կամ ճառագայթ արեգական).

— Ահաւասիկ ես դարձուցանեմ զստուեր աստիճանացդ ընդ որ իջեալ է շող (Յն. ἥλιος) . . . և դարձուցից զշող (Յն. ἥλιος) զտասնեքումբք աստիճանօք, և ել շողն (Յն. ἥλιος) զտասնեքումբք աստիճանօք ընդ որ իջեալ էր ստուերին (Եսայ. ԼԸ. 8)։

ՇՈՂԱՄ, (փայլել կամ երեւել)։

— Մի՛ մթարքն որ զբրօքն շողային, արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն լիցին (Եղիշէ)։

ՇՈՂՇՈՂԵՄ և ՆՇՈՂ, իբր՝ նշմարանք շողոյ, սկիզբն կամ ծագ շողոյ։

Գրեալ և

ՆՇՈՅԼ, (Կազմութիւնը բաղդ. թողում և թոյլ)։

— Յորժամ զջուրն ժքթիցես, նշոյլք լուսոյ հատանին (Եղիշէ)։

Յորոց 'ի հակառակէն

ՇԼԱՆԱՄ, (Մթագնել, խաւարել)։

— Շլացան 'ի բարկութենէ աչք իմ (Յոբ. ԺԷ. 7)։ — Զիա՞րդ շլացաւ ոսկին (Ողբ. Դ. 1)։

ՇԼԱՑՈՒԹԻՒՆ, — Հարցէ զքեզ շլացութեամբ (Յն. ἀορασία)։ — Հար զազգդ զայդ շլացութեամբ. և եհար զնոսա շլացութեամբ բստ բանին Եղիսէի (Դ. Թագ. Զ. 18)։

ՇԻՂ, — Այր սապատողն կամ շիլ կամ պաղակն (Ղեւտ. ԻԱ. 2)։

ՇՂԱԳՈՅՆ, (Նախամագոյն)։

— Եւ ահա շլագոյն իցէ արածն... եւ ինքն շլագոյն իցէ... շլագոյն իցէ հարածն յետ լուանալոյն զնա (Ղեւտ. ԺԳ. 6—56)։

Ուրիշ է

ՇԱՂ, Պրսկ. ժ—լ, նոյն նշանակութեամբ է։

Դարձեալ ուրիշ է

ՇԱՂԻՄ, եւ ՇԱՂ (ի բարդութեան) յաճախեալ առ յետինս.

Շաղկապ, շաղապատել, որ թուի թէ Յունական է՝ συγ, որ գրի նաեւ συμ, συν, συλ, συ, (ընդ, կամ կից), — σύγκρισις, συμμετρία, συνάγω, συλλογισμός, σύζυγος։

Մեր

ՑՕՂ եւ ԵՂԵԱՄՆ բառերուն համար կը կարծուի որ առաջինը նոյն Լատին sol, արեւ բառն է որ մերը ցուցու, իսկ երկրորդը, Յն. ἥλιος, արեւ, բառէն ձեւացած է, իբր զի թէ ցող եւ թէ եղեամն արեւու պէս կը փայլին։ Յն. ἡλιαυγής նշանակէ արեգակնափայլ։

— Ո՞վ է որ ծնաւ զշաղս ցօղոյ... զեղեամն ո՞ ծնաւ յերկնից (Յոբ. ԼԸ. 28)։ — Ցամենայն երկրի ընդ արեւածայրս ցօղք անկանին։ — Դնէ զձիւն որպէս զասր, եւ [illegible] որպէս փոշի ցանեալ (Սաղմ.)։ Եբր. [illegible], նոյնպէս եւ Եգիպտ։

Եղեամն բառին կազմութիւնը բաղդ. սկիւռն, քամին, այծեամն, ջայլամն բառերուն կազմութեան հետ։

Անցնինք յայլ տեսութիւն.

ԼԵԱՌՆ, Այս բառին հոլովները կազմուած են [illegible] բային հրամայականէն. լեռ-ին, լեռ-ամբ, լեռ-ինք, լեռ-անց, եւն։ Եւ այս կ'երեւի եղած սա խորհրդով՝ որ [illegible] իրենց լայնատարր նստիւ՝ նկատուած են իբրեւ երկիրը լեցընող մարմիններ, եւ անոր զարդ եւ վայելչութիւն, ինչպէս որ աստեղք կը կոչուին «Զարդք երկնից», վասն զի անոնք անհուն դատարկութիւնը կը լեցընեն։

Ասոր ապացոյց

ԱՊԱԼԵՐ, Լ[illegible] բային հրամայականէն, եւ է մակդիր ծովու, իբր՝ [illegible], որպիսի է ծովը, որ բարձրութիւն կամ ցածութիւն չունի, այլ միահարթ, միակերպ՝ անզարդ տարածութիւն է, ջրեղէն անապատ մը, ինչպէս ցամաքայինն եւս ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ աւազի ովկիանոս մը։

Յարմէ եւ

ԼԵՐԿ, Այսպէս եղած է՝ չըլլալու համար լեռ. (այ. լինիմ)։

Իսկ ուղղականը՝ [illegible], [illegible] բառին սեռականն է, [illegible]. (Տես՝ լեզմ)։ (Եւ ասոնց կազմութիւնը գիտէ՛ 'ի բառն՝ [illegible] եւ [illegible]։) Ասոնց կազմութեան նման ուրիշ բառ չունինք մեր լեզուին մէջ։

Ի՞նչ բան սակայն առիթ տուած է [illegible] բառէն՝ [illegible] բառին դիմելու. — Այս առիթը տուած է (ներուի մեզ մեր առանձին կարծիքը) այն նշանաւոր տեսիլնէն զոր Նաբուգոդոնոսոր տեսաւ, եւ զոր մեկնեց Դանիէլ։

«Դու, արքայ, տեսանէիր, եւ ահա պատկեր մի մեծ կայր առաջի քո, եւ ահաւոր էր յոյժ, որոյ գլուխն յոսկւոյ սրբոյ, ձեռքն եւ լանջքն եւ բազուկք իւր արծաթիք, մէջք նորա եւ բարձք պղնձիք եւ սրունքն երկաթիք, եւ ոտքն՝ կէսն երկաթեայ եւ կէսն 'ի խեցւոյ։ Հայէիր մինչեւ հատաւ վէմ առանց ձեռին, եւ եհար զպատկերն 'ի վերայ երկաթեղէն եւ խեցեղէն ոտիցն, եւ մանրեաց զնոսա 'ի սպառ, եւ եղեն իբրեւ փոշի կալոյ ամառայնոյ, եւ առ զնա սաստկութիւն հողմոյ։ Եւ վէմն որ եհար զպատկերն,

եղեւ լեառն մեծ եւ ելից զամենայն երկիր» (Դան. Բ. 31)։

Այս խորհրդաւոր երազին մէջ տեսնուած այն վէմը որ մեծ լեռ մը եղաւ, եւ բոլոր երկիրը լեցուց, է ինքն Քրիստոս եւ թագաւորութիւն նորա։

— «Կատարեցաւ զոր Դանիէլն ասաց, եթէ վէմն որ հատաւ 'ի լեռնէն առանց ձեռին, եղեւ լեառն մեծ, եւ լցաւ 'ի նմանէ ամենայն երկիր ... եղեւ վէմն որ հատաւ առանց ձեռին՝ լեառն մեծ, այն իսկ է զի ծնաւ Քրիստոս առանց առն։ Հատաւ վէմն առանց ձեռին, քանզի ծնաւ Քրիստոս առանց ամուսնութեան հաղորդութեան, եւ եղեւ վէմն 'ի լեառն մեծ, եւ ելից զներքոյս երկնից» (Սեբէր. Ը.)։

— (Դաւիթ) իբրեւ կոչեաց զկենարարն՝ երկնաւոր, դուշակէ ապա զմարմնաւոր տեսչութենէն, այնու զի լեառն կոչէ զնա, լեառն Աստուծոյ, լեառն պարարտ։ Զերկրաւոր ոնանն 'ի լերին տնուն ժողովոց ... կոչի կենարարն մեր՝ Աստուած եւ Տէր, եւ արարիչ, եւ ամենակալ, եւ երկնաւոր, եւ թագաւոր, եւ լեառն։ Զայս լինել ասէ Եսայի, Եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն Տեառն 'ի վերայ գլխոց լերանց, եւ ասասցեն, Եկայք, երթիցուք 'ի լեառն Տեառն։ Զայս լեառն եւ Դանիէլ յառաջագոյն փառաւորէ, մինչ զպատկերն բազմախառն յազգի ազգի նիւթոց մեկնէր ... եւ 'ի վախճանին ասէ, թէ Հատաւ վէմ առանց ձեռին, հար զպատկերն եւ մանրեաց, եւ վէմն եղեւ լեառն մեծ, եւ ելից զամենայն տիեզերս» (Սեբէր. Գ. էջ 31)։

«...Լեառն պարարտ զկենարարն կոչէ ... զի ես կենարարն՝ լեառն. որպէս լեառն յերկրէ է եւ անցանէ բարձրութեամբ ըստ երկիր. 'ի նմանէ է, եւ 'ի վեր քան զնա, նոյնպէս եւ կենարարն ասի լեառն, քանզի անցանէ ըստ ամենայն մարմին, եւ ըստ բնաւ միոյ մարդկան աստուածութեամբն ...։ Եւ միտ դիր կարգին, զիա՞րդ ցուցանէ զիրն, զնոյն՝ երկնաւոր, զնոյն՝ լեառն, զայն եւ Աստուած, զնոյն եւ Փրկիչ տիեզերաց, զնոյն զմին՝ որ երեւեցաւ յաշխարհի. քանզի եւ Տէր, ասէ, բնակեսցէ 'ի նմա 'ի սպառ. եւ ապա, թէ կառք Աստուծոյ բիւրապատիկ են։ Նախ կոչեաց զնա՝ երկնաւոր, ապա լեառն, ապա եւ Աստուած» (Սեբէր. Գ. էջ 33—34)։

Այս է մեր տեսութիւն՝ եթէ սխալ ենք կամ ոչ, լեառն եւ տէր բառերուն իրարու հետ առընչութեան մասին, անցնինք ուրիշ տեսութեան մը, որ ոչինչ նուազ հետաքրքրական է։

Աղուէր բառը զորմէ ըսինք վերը թէ լեառն բառէն ձեւացած է, իր հակառակ կամ բացասութիւն լերին՝ որ ունի խորհրդական նշանակութիւն, քանզի կը ցուցընէ զՏէր կամ զՔրիստոս, արդ եթէ այս այսպէս է, ապա օտար չէ խորհիլ թէ նորին հակառակէն ձեւացած Աղուէրն՝ իւր մէջ ծածկած ունի՝ Քրիստոսի հետ չմիաբանողին անունը զոր Պաւղոս կը ցուցնէ, «Զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան, կամ զի՞նչ հաւատութիւն է լուսոյ ընդ խաւարի, եւ կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ(*)» (Բ. Կորնթ. Զ. 15)։

(*) Եբր. Բելիալ. Յն. Βελιάλ, ըստ մեզ Բելիար, որ վերջին լ գիրը ր ի փոխուած է անշուշտ Աղուէր բառին զուգաձայն հանդիպելու համար։ Բելիար նոյն է ըստ մեզ Բահաղ դիք Փիւնիկեցւոց, զոր մանաւորապէս կը պաշտէին Սիդոնացիք։ Այս անունը կը նշանակէ զՍատանայ։

Բովանդակ Սուրբ Գրոց մէջ (Հայերէն) եր-

Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ ԲԼՈՒՐ, Իւրիւ ներհական քեօն բառին, քէլէ-ր բառէն ծագումն առած է, մանաւանդ թէ նոյն է ընդ քէլէ-ր՝ ձայնաւորներէն թօթափուելով։ Քլր ոյ։

*
* *

ԱՍԵՄ, Յն. ἄσομαι (ապռ.), ἆσαι (աներեւ.), ᾄσω (ներ. ներկ.) նշանակէ երգել։ Սորբոն. Գէրք Ա. Գլ. Բ. Ց։ Նախնիք, կ'ըսէ, փոխանակ ասէլ բային՝ երգել բայը կը գործածէին. — Καὶ τό ἀείδειν δὲ ἀντὶ τοῦ φράζειν τεθέμενον παρὰ τοῖς πάλαι αὐτο τοῦτο ἐκμαρτυρεῖ։

Գրկ. Կէ-ռլէրէն նշա. առել, խօսել, երգել։ Բաղդ. Քօ-էմ։

Մինչ եւս տեսութիւն -ռէմ բային վրայ,

Յն. φημί, նշան. ասեմ, վկայեմ, ճշմարտեմ, հաստատեմ, — φημί ἐγώ, այսինքն, φημί ἐγώ, բառ ձայնին նշանակէ՝ -ռէմ էռ, այլ իբր 'ի պատասխանի հարցման՝ նշանակէ, այո, զոր օրինակ, εἰ ἄρα ταῦτα οὕτως ἔχει, թէ արդարեւ այդ այդպէս էյէ, — φημί, -ռէմ, այսինքն, այո։ Σωκράτης φῆς ἤ οὔ Καλλικλῆς, նոյնպէս եւ Լատիններէն՝ ajo, որ նշանակէ՝ -ռէմ 'ի պատասխանի հարցման նշանակէ՝ -յո՛, (մկ.)։

HORATIUS
Ne faciam, inquis
Omnino versus.
TREBATIUS
Ajo.

Ասեն զի մի եւս բնութիւն յօրինեցից աստղս։ — Ասեմ, այսինքն՝ Այո՛ (Ոմր. Երգէջ. Գէրք Բ. Ա. 8)։

Ուրեմն մերս

ԱՅՈ՛, է բառ Լատին։ Այս մօքով կայ բռուած եւ առ մեզ.

— (Սոկր.) Ասե՞ս եթէ ոչ. (Մէլէտ.) Ասեմ իսկ. (Պղատ.)։ — Ո՞չ կարեր արդեօք բանիւ զատիւրն ընել, այլ ասէր. լցէք ջրով. ընդէ՞ր. — Եռէմ. զի եթէ ուրանայցեն, ձեռք իւրեանց որ լցին զջուրն, յանդիմանեսցեն զնոսա (Ոսկ. 'ի Կոչ. Յէս. 'ի Հոռմ. Հտ. Բ. 680)։ — Եւ ուստի՞ է յայտ եթէ կին ունէր (Պետրոս)։ — Եռ -ռէմ. Եմուտ, ասէ, Յիսուս առ զոքանչն Պետրոսի (Անդ. 178)։

Այո՛ եւ -ռէմ 'ի միասին գործածուած ունինք Նոր Կտակարանին մէջ հինգ տեղ։

Տե՛ս Լ-ռէմ. ('ի ծանօթութեանն)։

Ցարմէ (-ռէմ)

ԱՍՈՒՆ, ԱՆԱՍՈՒՆ, որպէս եւ 'ի հակառակէն

ԱՆՍԱՄ (*), իբր՝ -ռէմ, այսինքն հնազանդիմ։ Բաղդ. լսեմ եւ լսեմ։

Ցարմէ

ՍԱՆՁ, ձիերու նկատմամբ.

— Ձիոց -ռէն 'ի բերան դնեմք առ -ռէմ նոցա մեզ (Յակ. Գ. 3)։

— Երիվար արմուղ աներասանակ էր Պաւղոս . . . -ռէն աստուածեղէն -ռէս (Սեբեր.)։

Անշուշտ իրաց նկատմամբ

ՍՈՍԻՆՁ, ՍԻՆՁ. բաղդ. բեւեռ եւ սեւեռել։

Եւ ձկանց նկատմամբ

կու տեղ այս անունը յիշուած է, մին՝ վերը ցուցուածը, իսկ միւսը Դաւ. Ի. 13, «Տեսէք (Յն. տե՛ս) զորան զամպարիշտս զԳարատցիս՝ գործեան Բելիարայ (Յն. զորդիան անօրինաց), եւ ապանցուք զնոսա»։

«Որդիք Բելիարայ» փոխանակ ըսելու որդիք անօրինաց։ Այս բացատրութիւնը Թարգմանութեանց մէջ՝ միայն Լատիններէն Աստուածաշունչին մէջ կը գտնուի (Տես՝ Դատ. ԺԹ. 22։ Բ. Մնաց. ԺԳ. 7)։

(*) Սակայն այս օրէնքով եղած են՝ -ռէմ պատ(ա)ապարեմ, նաեւ (ա)զդար, եւ ապ(ա)ապարել, այժմ, իբր այ(ն)մ(ամ) = յայսմ ժամու, այսպէս իւ...մր, նզով, նկուղ, նկուն, կաղանք, ասոխ բաւերուն = գիրը Թողուած է, ինչպէս պիտի տեսնուի իւրաքանչիւր յիւրում տեղւոջ։

ՑԱՆՑ ,

ՑԱՆԿ , գրեալ և Ցանգ , մարդոյ նկատմամբ

— Որ քաղէ զցանգ հայրենի ։

— Վասն քո խրամատեցաւ ցանգ ։

ՑԱՆԿԵՄ , արգելուլ կամ փակել ցանկով ։ — Այն որ ցանկեաց 'ի մէնջ զճանապարհն (Սեբեր. Ժ.) ։

Եւ

ՑԱՆՁ (*), ըստ միջնադարեան Պարսից ձայնիցս՝ [illegible] (սանձ) , և [illegible] (սանձ) , յորմէ 'ի մեզ

ԼԿԱՄ , (ն. նշ.) ։

Յորմէ 'ի հակառակէն

ԼՔՈՒՄՆ , ԼՔԱՆԵՄ , բաղդ. լծել և լուծանել , լուծ և լոյծ ։

Յորմէ 'ի հակառակէն

ԼԼԿՈՒՄՆ , ԼԼԿԵՄ , ունել , կալնուլ բռնութեամբ , նեղել , բռնաբարել , տեւանգել ։

ԼԼՈՒԿ , ('ի բարդութեան) ։

ԳԻՒԱԼԼՈՒԿ , (կալեալ 'ի գիւէ) , որ ուրիշ կերպով ըսուած է , Ջոր ունէր այս պիղծ ։

Յորմէ 'ի հակառակէն

ԼԽԿԻՄ , (աշխ.) և 'ի բառէս [illegible] , [illegible] , 'ի հակառակէն

ՑՆԾԱՄ . (չարժամ մի տանուլ ուրախութենէն , և.

ՑՆՑԵԼ , (յետին) ։

Յորմէ

ԾՆԾՂԱՑ , ԽՆԾՂԱՄ , ԽՆԾԻՂ և ՑՆՑՈՏԻ , (անհաստատ , այսինքն , կոտր բրդուճ լաթ) . բաղդ. հաղբ , աղբ . կարկուտ և կրկուտ ։

Եւ

ՑՆՑՈՒՂ , (խաղալակ) ։ — Ծնցուղք հողմարերք տան և առնուն զօդն իբրև ցնցղով (Սեբեր.) ։

— Փորուածք երկրի և ցնցղաձև (կամ ցնցղակաձև) երակք (Վեցօր.) ։

Դարձեալ [illegible] բայէն , 'ի հակառակէն

(*) Բաղդ. խնձոր , ներկեւիլ , ծիրան , փարունգ , ձմերուկ , սեխ , Թուզ պտղոց անուններուն հետ ։

ԱՆՑԱՆԵՄ(*) (կազմութիւնք բաղդ. [illegible] և [illegible] ։

ԱՆՑՔ , ՋԱՆՑԱՆԵՄ , — Ջանցեաւ գիս այս բանք Սաղմոսին ։ Յն. παρέρχομαι

ՋԱՆՑ ԱՌՆԵՄ և ՋԱՌԱՆՑԱՆՔ , — Թէ բարուք թուի յաչս ձեր , տուք զվարձս իմ , ապա թէ ոչ՝ [illegible] (Զաք. ԺԱ. 12) . Յն. ἀπείπασθε (որ է հրամ. ἀπαγορεύω բային) ։ Ամէն. ապ. [illegible] ։

ԱՌԱՆՑ , միջա սեռ. խնդրով , և իբր Թարգմ. Յն. ἄνευ οἴνου . առանց գինւոյ ։ — Յորժամ առաքեցի զձեզ [illegible] , Յն. ἄτερ βαλαντίου καὶ πήρας καὶ ὑποδημάτων (Ղուկ. ԻԲ. 35)

ԹԱՆՑ . բաղդ. [illegible] ։ Տես և [illegible] ։

Անցանել՝ նշանակէ նաև՝ [illegible] ։

— Երկինք և երկիր անցցեն , և բանք իմ մի անցցեն ։

— Անցք ստուերի են կեանք մեր ։

Յորմէ

ՑԱՆԿՈՒԹԻՒՆ , իբր զի ցանկութիւն փաղանցուկ է , և ոչ տեւական ։ — Աշխարհս անցանէ և ցանկութիւն նորա (Ա. Յովհ. Բ. 17) ։

Յորմէ առեալ

— Ցանկութիւնն անցանէ , և որդն

(*) Ի գիրս Ծննդ. ԼԵ. 31 ։ «Ծագեաց նմա արեւ իբրեւ անց [illegible] Ա[illegible]» ։ [illegible] է յատուկ անուն տեղւոյ (Երբ. [illegible]) , և գիտելի է զի [illegible] , Յն. τὸ εἶδος (ուղղ.) անփոփոխ մնայ 'ի հայցականն . և զի բայն [illegible] , որ վարի 'ի մեզ [illegible] նախդրիւ , 'ի Յոյնն վարի հայցականաւ , և τὸ εἶδος , որ Թէպէտ և հայցական է 'ի բանին , սակայն՝ որպէս ասացաք , նոյն է ընդ ուղղականին ըստ կազմութեան ։ Արդ Թուի Թէ Թարգմանիչն մեր յուղղական հոլով առեալ է զբանդ իբրեւ անուն [illegible] բային , սակայն խմաստ բանին Թուի լինել , Իբրեւ անց ընդ Տեսիլն Աստուծոյ , այսինքն , ընդ տեղին ընդ այն որ կոչի տեսիլ Աստուծոյ ։

ոչ մնասնի (ժամաֆէր) ։

Յարմէ 'ի հակառակէն

ԱՆՁՆ, իբրեւ հաստատութիւն ունեցող բան մը՝ մարմին մը ։

— Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է ։

ԱՆՑՆԱՏՈՒՐ ԼԻՆԻՄ, է իբր Թարգմ. Պրակ. Բէնադրէն,

Անցանել՝ մանաւոր խնդրով մը նշանակէ նաեւ չանսալ, արհամարհել. — Անցանել զօրինօք — ըզպատուիրանաւ — զբանիւ. իբր Յն. παρέρχομαι ։

Յարմէ

ՅԱՆՑՈՒԱԾ, ՅԱՆՑԱՆԵՄ, ՅԱՆՑԱՆՔ, ՅԱՆՑՈՒԹԻՒՆ, ՅԱՆՑՈՒՑԱՆԵՄ, ԱՆՅԱՆՑ ։

Առջի բառէն, ինչպէս յայտնի է, կը շինուին

ՅԱՆՁՆ ԱՌՆԵՄ, (ումեք)

Յարմէ 'ի հակառակէն՝

ՅԱՆՁԱՆՁԵՄ, իբր՝ խնամ ունել իմիք անձամբ անձին ։

ՍՏԱՆՁՆԵՄ, իբր՝ յանձն իւր առնուլ՝ ոչ այլում ումեք յանձն արարեալ ։ Բաղդ. յուրիւրեմ եւ առ-իւրիւրեմ, եղծանեմ եւ առ-եղծանեմ, գտանեմ եւ առ-գտանեմ, համբակ եւ առ-ամբակ ։

Յարմէ (յանձն առնեմ)

ՀՈՒՆՁՔ, ՀՆՁԵՄ եւ ՀՆՁԱՆ, բառ օրինակի Պարսկերէնին, զի [illegible] է յանձն առնել, եւ [illegible], հնձել, ժողովել, քաղել, [illegible] նշանակէ՝ հնձան, (հ'ն ձ ա ն, յ' ա ն ձ ն) ։

Դարձեալ 'ի բայէս [illegible]

ՀՆԱԶԱՆԴ, կազմեալ Հ գրով, որ պատասխանէ Յունականին ευ εὐ. եւ [illegible] բայով. Յն. εὔεικτος, այսպէս նաեւ [illegible], εὐήκοος. [illegible], εὐδύνατος. այս կարգէն է նաեւ՝ [illegible], (տես՝ մասանեմ). այսպէս կազմուած է նաեւ՝ [illegible], ἑβραῖος. եւ կամ Հ փոխանակ Հ ի, [illegible], εὔζυμος. եւ [illegible], οὐρανός ։

* * *

ԴԱՆԴԱՂ.

ԴԱՆԴԱՂԻՄ, ԴԱՆԴԱՂԱՆՔ,

Յարմէ 'ի հակառակէն՝

ԴՆԴՂԱՆՔ, (յուզմունք, շարժմունք, վրդովմունք) ։ — Մինչդեռ յամենայն կողմանց դնդղանք էին (Ոսկ. Տիմ.) ։

Որպէս եւ

ԴԱՆԴԱՉԵՄ, — Ո՛չ որպէս Մարկիոնն դանդաչէ (Եզնիկ) ։

ԴՆԴՉԵՄ, — Մարգարէն... դնդչէ բանիւք (Փիլ. Լին.) ։

Ծագին յառասպելէն Տանտաղոսի որ անմիջէրն ծարաւահիւծ, պարանոցաթաղ կացեալ 'ի լճակի, 'ի տարտարոսն ։

Առ Ղուկիանոսի (Ջրոց. Մեռ.), Մենիպպոս հարցանէ զՏանտաղոս եթէ վասն է՞ր ողբայ եւ հեծէ կացեալ 'ի լճակին. — Քանզի պապակի 'ի ծարաւոյ. — Եւ ընդէ՞ր դանդաղի ըմպել. — Քանզի ոչ կարէ ։

— τί κλάεις, ὦ Τάνταλε; ἢ τί σεαυτὸν ὀδύρῃ, ἐπὶ τῇ λίμνῃ (ծանծաղ) ἑστώς. . . οὕτως ἀργὸς (դանդաղ) εἶ ὡς μὴ ἐπικύψας πιεῖν.

Յայտնի է Յոհ. Ե. գլխոյն մէջ պատմութիւնն անդամալուծին, որ երեսուն եւ ութ տարուընէ հետէ կը սպասէր Պրոբատիկէ աւազանին քով, փափաքելով անոր մէջ նետուիլ՝ բժշկուելու համար, երբ ատեն ատեն Աստուծոյ հրեշտակը կու գար, շարժել ջուրերը, բայց չէր կրնար ողորմելին, վասն զի մինչեւ որ ինք դանդաղանօք պատրաստուէր, այլ ոք վրայ համնելով կը նետուէր ջուրը, (քանզի յառաջագոյն նետուողն էր որ կը բժըշկուէր) ։

Արդ Պրոբատիկէի անդամալուծին, եւ տարտարոսի ծարաւահիւծ տանտաղոսի մէջ Թարգմանչին Թափանցող միտքը գիպած մերձաւորութիւն մը նշմարած է, — ինչպէս որ իրօք եւս կայ, — քանզի

երկուքն ալ կը տանջուին՝ ջուրի հասնելու համար, երկուքն ալ ջուրի մօտ գտնուելով հանդերձ։

Հոս Յիսուս անդամալուծին կը հարցունէ, «Կամի՞ս ողջ լինել. եւ եթէ կամիս, ընդէ՞ր աւազանը չես իջներ ժամանակին՝ երբ հրեշտակը ջուրերը կը յուզէ»։

Հոն Մենիպպոս Տանտաղոսին կը հարցունէ թէ ընդէ՞ր կուլաս կ'ողբաս անդադար՝ այդ ամբաւ ջուրերուն մէջ։ Երկուքն ալ պատճառներ մէջ կը բերեն, անդամալոյծը կ'ըսէ, «Տէր, ոչ զոք ունիմ՝ թէ յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն, եւ մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ»։

Իսկ Տանտաղոս կը պատասխանէ, Քանզի պապակիմ 'ի ծարաւոյ, Մենիպպէ։ Մենիպպոս կը յանդիմանէ զՏանտաղոս իբր դանդաղ, — Ուշադրութեան արժանի կէտ մ'ալ այս է որ զՏանտաղոս դանդաղ անուանողը Մենիպպոս է (առ. Լուկիանոսի)։ Հայը տեսած է կամ կարդացած է Մենիպպոսին այս խօսքը, Լուկիանոսի գրուցատրութեան մէջ, եւ Տանտաղոսի անուան վրայ այս խաղը խաղացած է։ Յն. οὗτος ἀργός εἶ; «այդքան դանդա՞ղ ես», որ գլուխդ քիչ մը ծռել չես ուզեր, ջուրին հասցնելու համար։

Տանտաղոս յուսահատաբար կը պատասխանէ. «Իմ բաժինս հառաչանք է», ամէն ելք փակուած է ինձ համար, եւ ամէն փորձ սպառած, յոյսը տարագիր է այս խուարին վայրէն, Մենիպպէ, Տարտարոսն անողորմ է։ Գլուխս դէպ 'ի ջուրը ծռեմ. ջուրն 'ի շրթանցս կը խուսափէ։ Ձեռքերս իրարու քով բերելով գոգաւոր սկաւառակի մը ձեւ տամ՝ որով կարող լինիմ ջուրը բերանս հասցունել. սակայն, անկո՞ւր բան. ջուրը բերնիս հասցընելու պահուս՝ ինչպէս կ'ըլլայ չգիտեմ, մատուըներուս մէջտեղերէն ջուրը կը քամուի, տեղի կու տայ, եւ ձեռքս անգամ թաց չմնար, որ շրթունքս քիչ մը թրջել կարենամ։

Արդ Հայ թարգմանիչն անդամալուծի պատմութեան եւ Յունական տառապելին մէջ նշմարուած վերաբերութիւնը լաւ ըմբռնելով՝ Մենիպպոսի մեղադրած յամրաշարժին անունը կ'առնու, եւ անոր հայկական դրոշմ կու տայ, եւ ահա յայնմ օրէ առասպելեալն Տանտաղ՝ իբրեւ դանդաղ նշանակելու կնիքը կառնու. թերեւս այսու՝ նաեւ ցուցնել ուզելով թէ դանդաղութիւնը իսկապէս դժոխային պատուհաս է։

Ընթերցողին ուշադրութիւնը մասնաւորապէս սա կէտին վրայ կը հրաւիրենք որ բնագիր Աւետարանին խօսքը ἐν ᾧ δὲ ἔρχομαι ἐγώ, (եւ մինչ ես գամ), 'ի մեզ թարգմանուած է «Եւ մինչ ես դանդաղիմ», բառ մը որ բնագիրը չունի, եւ մերն ունեցած է յոյժ վայելչապէս, եւ կարծես թէ թարգմանիչն իբր զգածուելով պաքեալ Տանտաղոսի անվախճան դատապարտութեան աղետէն, ախորժած է ածել զնա 'ի Տարտարոսէ 'ի զաւազանն Պրոբատիկէ, նորա հրաշալի ջուրերով բուժելու։ Չէ մոռցած նաեւ այն լճակը, (λίμνη) յորում կայր Տանտաղ, փոխել 'ի

ԾԱՆԾԱՂ։

ԾԱՆԾԱՂԵՄ (աշխ. ծամծմել) բայն եւս այս խումբին կը վերաբերի։

—Կեր որպէս մարդ, եւ մի՛ ծանծաղեր (Սիրաք. ԼԳ. 19), Յն. διαμασᾶσθαι։ Յունարէն լեզուն եւս այդ տառապեալ Տանտաղոսի յատուկ անունէն ձուլուած՝ հասարակ բառեր ունի, ինչպէս նաեւ մենք, (Տես 'ի վեր անդր), ταντάλεια, ταντάλειος, ταντάλιζω, ταντάλόω։

Յունարէն լեզուի մէջ կան յա-

տուկ անուններ որ կը թուին թէ հասարակ անունէ մը ձեւացած են, ուղղագրութեան փոքրիկ տարբերութեամբ). զոր օրինակ, κρόνος, (կռոնոս, գիք ժամանակի), ձեւացեալ է 'ի բառէս χρόνος (ժամանակ)։

Գորդիմեան անուանի հանգոյցը ձեւացած է 'ի բառէս χορδή, որ նշանակէ լար, չուան, κροῖσος, (Կրեսոս Լիւդացւոց թագաւորն, որոյ մեծագանձ հարստութիւնն առակի կարգ անցած էր), եւ Յն. χρυσός, (ոսկի, ճոխութիւն, ընչաւէտութիւն). ζωΐλος, (Զոյիլ, նախանձընդդէմ Հոմերի). եւ Յն. ζῆλος, (նախանձ), Յն. πλούτων, (Պղուտոն, գիք ճոխութեան) եւ πλοῦτος, (ճոխութիւն, ընչաւէտութիւն, առատութիւն), այսպէս թուի նաեւ τάνταλος, որ ըստ մեր տեսութեան տանտալ մըն է, ըստ այլոց՝ անձնասիրութիւն է ընչաքաղց ագահութեան, եւ այս կ'ըլլայ թերեւս փոփոխութեամբ մը, τάλαντος, տաղանդ, ուրիշ բառով քանքար։

— Առասպելաւս (Տանտալոսի) օրինակին մեղապարտ արծաթասէրք, որոց ունելով զլիութիւն ամենայնի, չեն ձեռնհաս վայելել զնոսին (Կենսագր. Երեւելի արանց, Տպ. Վենետիկ 1839, 'ի բանն Տանտալոսի)։

*
* *

ԱՐՈՒԳ, — Այսուհետեւ երթեալ նստիցիս ընդ արուգ հովանւովք (Ող. Ես.)։ Թրք. արըք նշանակէ վտակ, աղաղուն։

Յորմէ 'ի հակառակէն

ԱՌՈՑԳ. բաղդ. կարկուտ եւ կըրկուտ, ատին եւ ոստին։

Յորմէ

ՈՒՐԱԳ, գործի հիւսան, Տճ. քէսէր, ծագեալ 'ի բայէս՝ քէսմէք, որ նշանակէ հատանել, եւ քէսկին, նշ. հատու, սուր, բարկ, զի մինչպէս ասի, քէսքին պըչաք եւ քէսքին սիրքէ, (սուսեր հատու եւ բարկ քացախ)։ Տես եւ՝ սուր (գյ. եւ ած.)։

— Թեքեաց հիւսն զգործի իւր, ուրագ սրեաց (Ես. ԽԴ. 12)։

Յորմէ

ԵՐԱԳ, գրեալ եւ

ԱՐԱԳ, ԵՐԱԳԵՄ եւ ԱՐԱԳԵՄ. եւ այս՝ թելադրութեամբ Յունականին, զի Յն. ὀξύς, նշանակէ բարկ, հատու, սուր։

ԵՐԱԳԸՆԹԱՑ նաեւ՝ ԵՐԱԳ, յորմէ բարդեալք ὀξύδρομος, ὀξύπορος, ՍՐԸՆԹԱՑ, ԵՐԱԳԸՆԹԱՑ, ὀξύπους ԵՐԱԳՈՏՆ, ὀξυμαθής ԱՐԱԳԱՄԻՏ, ὀξύγραφος ԱՐԱԳԱԳԻՐ, Թրք. կըտուի, չապուք գիտէն, չապուք գէչէր, խելքս չկտրեր, խելքս կը կտրէ։

ՍՐԸՆԹԱՑ, ՍՐԱՄԻՏ։

Մերս

ԶԱՑՐԱՆԱԼ, թուի ստուգաբանելի աճըլանալ, այսինքն, սուր եւ բարկ լինել. որով նոյնանայ իմն ընդ՝ Բարկանամ, (Տես զբառդ)։

— Սո՛ւր, սո՛ւր, սրեա՛ց եւ զայրացի՛ր (Եզեկ. ԻԱ. 9)։

Ըստ ամենայն հաւանականութեան մերս

ԱՌԱՔԻՆԻ, ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ, ծագի 'ի բառէս՝ առաջ (Տես 'ի վերոյ)։ Յն. ἀρετή նշանակէ առաքինութիւն, նաեւ՝ ոյժ, զօրութիւն, ինչպէս նաեւ Լտ. virtus, է զօրութիւն, եւ առաքինութիւն, եւ 'ի մեզ եւս,

— Ի մէջ պատերազմի՝ առաքինի (Իմաստ. Ը. 15), Յն. ἀνδρεῖος։

— Զի առաքինացան ընդդէմ նորա Յովաբ եւ Աբեսսա (Նխ. Բ. Թգ. 26)։ Գալով առաքինի բառիս կազմութեան, կ'երեւայ որ ներքինի բառին վերջաւորութիւնն առած է։

ՆԵՐՔԻՆԻ, յետեւառաջութեամբ գրոց յեղափոխուած. Կազմութիւնը բաղդ. տեսանգել, վիթխարի, կորով։

Ներքինի՝ կը թուի ձեւացեալ 'ի

Յն. բառէս՝ ἀνενεργής, որ նշանակէ անկարող, ապիկար, անզօր, եւ իբր՝ ~ննէրֆուրծուղ։

Յն. բուն Նէր+ֆՆէ՝ է εὐνοῦχος, որ նշանակէ նաեւ՝ ապիկար, անզօր։

Բաղդ. Մ~լ~ւ, +~ծ~~~ր~~։ Իսկ (Բ. Մն~ց. ԺԸ. 33), — Եւ արքայն Իսրայէլի . . . ասէ ցներքինին, Յն. ցկառավարն։ Թերեւս զի մերձաւորք են ձայնքն εὐνοῦχος, Նէր+ֆՆէ, եւ ἡνίοχος կառավար։

Ներքինի բառէն,

ՆԵՐԳԵՒ, ՆԵՐԳԵՒԻՄ, (տկարանալ, փտիլ)։ ՁՆէր+ֆՆէՆ մի՛ չփոթեր՝ ընդ Նէր+ֆՆ։

Իսկ

ԱՌՈԳԱՆԵՄ, ՈՌՈԳԱՆԵՄ, դիտողութեան արժանի է Լա. irrigare, եւ rigare, որ նշանակէ գնոյն։

Ըստ մեզ՝ մեր ~~~+ֆՆէ բառէն կը թուի ծագեալ

ԱՐԱԳԻԼ, թռչուն մը, Յն. πελαργὸς եւ այսմ պատճառ տուած է թերեւս հին ինչ աւանդութիւն արագլի վրայ։

Ըստ Յունաց եւ Եգիպտացւոց արագիլ համարեալ էր օրինակ եւ պատկեր առաքինութեան եւ վարուց որբութեան։ Եգիպտացիք աստուածային պաշտօն եւս կը մատուցանէին արագլի։ Նախնի Յոյնք օրէնք մը ունէին որ կը կոչուէր πελαργ. καὶ νόμοι, օրէնք արագլի, որ պարտական կ՚ընէր զորդիս՝ տածել զծնողս իւրեանց։

— Արագլաց որ ծերունիքն են՝ ձագք ամենայն ուստեք պաճարեն չահ ծնողացն 'ի պէտս։ Ի թռչունս բուն զվերին արդարութիւն արագիլ ցուցանէ՝ զծնողս փոխանակ կերակրելով (Փէլ. Տ~ն~.)։

— Իբրեւ տեսանեն, ասեն, Տ~յ+ (այլ անուն արագլի) թուլացեալ զթեւս հօրն իւրեանց 'ի ծերութենէ, աստի եւ անտի մատանեն եւ բառնան զնա 'ի վերայ թեւոց իւրեանց, եւ առնուն խաղան, եւ մեղմով ընդ նմա գնան, եւ ջամբեն կերակուր ինչ զոր գտանեն, եւ որպէս ախորժէ երթալ նա, այնպէս ընդ նմին երթան համգարտեկ, չուրջ պատեալ զնովաւ յաջմէ եւ յահեկէ։ Եւ այսմ զոր ասացաք, բազումք վկայեն թէ այս այսպէս է։ Եւ մարդք բարեգործք որ առնեն բարիս ընկերաց, այսպէս անուանեալ կոչին, ծայից պէս պատուագիրք (Վէ~որ. Ը. 68)։

Դարձեալ, աղջիկ, իբր՝ տրջէկ. Յն. ἄρκος. ἄρκτος, նշանակէ արջ. αἱ ἄρκτοι, (արջք) կոչէին յԱթէնս աղջրկունք մատաղք նուիրեալք 'ի պաշտօն մեհենին աստղկան, ուր կային մինչեւ յարբունս ժամանել։

Տես եւ Հեբրայական։

Եւ 'ի հակառակէն

ԱՂՃԿՈՐԴԻ, գրեալ եւ աղջկորդի։

— Աղճկորդի անձնամասն, եւ ո՞չ գիտեմ զի դաշնաւոր ես դու որդւոյն Յեսսեայ (Ա. Թագ. Ի. 30). այսինքն՝ տնյնտմտտն տղջկտնց որդէ. Յն. υἱὲ κορασίων αὐτομολούντων։

Իսկ

ԵՂԻՃ, գրեալ եւ

ԵՂԻՆՋ, եւ է Պրս. էնճէրէ, Տճ. ըտըրէտն օխտ։

— Փոխանակ ցորենոյ բուսցի եղիճ (Յոբ. ԼԱ. 40)։ — Դժնիկն եւ տատասկն եւ եղիճն (Աքաբ.) — Փոխանակ գժնկին նոճ ելցէ. Սիմաքոս, փոխանակ գժնկին եղիճ ասէ (Ոսկ. Եսայ.)։

Եղէնջ, էրէնջ, ընջտղ, այս երեք բառին մէջ՝ բառախաղ մը կայ։

Պարզենք՝

ԵՐԻՆՋ, նոյն է ըստ ձայնին ընդ Պրս. էնճէրէ, այլ ըստ նշանակութեան՝ նոյն է ընդ ընջուղ, եւ ըստ ձայնին նոյն է ընդ հայերէն՝ եղինջ, այլ ըստ նշանակութեանն՝ ինչ որ է էրէնջ, այսինքն, էֆ ջաֆ չաքտ։

— Եթէ ոչ էր ձեր արօրադիր լեալ խմով երինջուն, ոչ էր գտեալ ձեր զառակութիւն իմ (Փիլ. 'ի Սամփ.)։

Համաձայն եբրայականին, ըստ եօթանասնից։ — Եթէ ոչ ճնշեալ էր (ձեր) զերինջն իմ, ոչ գտանէիք զառասպելն իմ (Դատ. ԺԴ. 18)։

Իսկ

ԸՆՋՈՒՂ, յորմէ

ԸՆՋԻՒՂ, բաղդ. բարունակ։

Առաջինը կընշանէ երինջ, (մատաղ կով), եւ երկրորդը՝ մատաղ ուտ։ — Ոչ ուտոյ խորխ զընջուղ տրմուղ (Երէմ.)։ — Ընդէ՞ր երկնչիս 'ի լծոյ խորխ ընջուղ տրմուղ (Սեբ.)։

ԸՆՋԻՒՂԵՄ, — թղենի ընձիւղեաց զբողբոջ իւր (Երգ.)։

Եղէճ բառին հակառակէն կը թուի

ԵՂԻ, ցորեան գալար, կաթնահամ։

ԵՂԻ ԽԱՆՋԵԱԼ, իբր՝ խարուկեալ ցորեան։ — Մուրկն փխրեալ, որ է եղի խանձեալ (Նխ. Ղեւտ.)։

Այլ է

ԵՐՆՋԱԿ կամ ԵՐՆՋՆԱԿ, անուն բուսոյ, Յն. ἠρύγγιον, Լտ. ergugium։

*

* *

ՍԱՆԴՈՒՂՔ, Պրս. տէնտէնէ, նոյն նշանակութեամբ։

*

* *

ԱԳՈՒԳԱՑ , Յն. ἀγωγή , անցք ջրոյ , խողովակ ։ Ի բայէս ἄγω , յորմէ եւ 'ի մեզ ածեմ եւ ալ ։

*
* *

ՀԻԲԱՐ , (խափանեալ) մկ. նշանակէ՝ որպէս Յն. ὑπερ , նոյն նշ ։

Յարմէ

ԻԲՐ , ԻԲՐԵԻ , ԻԲՐՈՒ ,

ԻԲՐ , իբր=երբ ։ Ըսել կ'ուզենք եթէ" թէ՝ եւ՝ երբ մի եւ նոյն բառ է , միայն գրերու անզատիտութիւն եղած է ։ Յարմէ՝

ԻԲՐԵԻ , իբր-եւ ։ — Իբրեւ մերձեցաւ ։ (Երբ մօտեցաւ , մօտեննալուն պէս , Թրք. Եպիլըշըրըմ զէյն ։ Պատմական եղանակով խօսքի մը սկիզբ ։

ԻԲՐՈՒ , իբր-ու ։ Այս գրուցուածէն հետեւած է որ նշանակէ նաեւ սուկապէս պէս ։ — Իբրեւ զարեգակն ։ —Իբրեւ հրեշտակ ։ —Իբրեւ գնոսս ։ —Իբրեւ ժողովրդեան , որոյ զարդարութիւն գործեալ իցէ ։ — Իբրեւ 'ի միոջէ բերանոյ ։ — Սպասնացիս նոցա իբրեւ յինէն ։

ԵՐԲ , (մկ) , կը գործածուի բայէն յառաջ գրուելով ։ — Ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ , եւ կերակրեցաք , ե՞րբ տեսաք զքեզ մերկ , եւ զգեցուցաք ։ — Ե՞րբ լինիցի երեկոյ ․․․ ե՞րբ լինիցի առաւօտ (Յոբ.) ։ — Ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ ։ — Ե՞րբ իցէ զի մեռցի , եւ կորիցէ անուն նորա (Սաղմ.) ։ — Ա՛ռ ե՞րբ աւարից ․․․ Ա՛ռ վաղիւ (Ել. Ը. 9) ։

— Պիւթագորաս յանձն իւր երբ թուփ , երբ ծառ , երբ ձուկն , երբ աղջիկ լինէր (Ոսկ. Յոհ. Ա.) ։

Յարմէ

ԵՐԲԵՄՆ , իբր՝ երբ-էմն , աշխ. ժամանակ մը , ատեն մը ։ Բաղդ. ուր-եմն ։

— Երբեմն չժողովուրդք , բայց արդ ժողովուրդք Աստուծոյ ։ —Էաք եւ մեք երբեմն անմիտք ։ (Մենք ալատեն մը անխելք էինք) ։ — Էր երբեմն յորժամ ոչ էր որդի , կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ հոգի ։

Եւ (այս կերպ նշանակութեամբ միշտ բայէն ետքը կը գրուի) ․ բայց երբ նշանակէ Տաճկերէնի պէս պաքմագ , պաքմաք Տէմանէլ , այն ատեն՝ բայէն առաջ կը գրուի , — Երբեմն այսպէս ուտէ սուր , եւ երբեմն այնպէս ։

ԵՐԲԵՔ , կազմութիւնն է բառ որինակի ուր-եք ։

Յարմէ (երբ)

ԱՆԵՐԲ , անժամանակ

ԵՐՓՆ , երփն երփն , գունագոյն ։ Բաղդ. եղանակ եւ եղանակ , նուագ եւ նուագ , անգամ եւ հանգամանք ։

— Երփն երփն հարկանէր (Եզեկ. ԻԳ. 15) ։ — Հիր եւ կարմիր եւ կապուտակ եւ երփն երփն նարօտուց (Եզեկ. ԻԷ. 16 եւ 24) ։

*
* *

ՏԵՍԱՆԵՄ , Յն. θεάτομαι (ապռ.) , θεάομαι (ներկ.) , նշանակէ տեսանել , հայել , եւ θεσπίζω , նշանակէ մարգարէանալ ։

— Տեսանողք , ա՛ւր անդի ․․․ 'ի Բէթէլ մի՛ եւս յաւելուցուս մարգարէանալ (Ամովս Է. 12) . յն. ὁρῶν ։

— Գրեալ են 'ի բանս Սամուէլի տեսանողի եւ 'ի բանս Գադայ տեսանողի (Ա. Մնաց. ԻԹ. 12) . յն. βλέπων ։

— Եկա՛յք , երթիցո՛ւք առ տեսանողն . զի զմարգարէ յառաջ տեսանող կոչէր ժողովուրդն (Ա. Թագ. Թ. 9) . յն. βλέπων ։

Այսպէս Թրք. պաքմագ , նշանակէ զուշակ , կախարդ , բայց Թարգմանի՝ գեանել ։ Տեսանել՝ նշանակէ 'ի մեզ նաեւ իբր՝ խնամ ունել , պատրաստել , յարդարել , եւ զգուշանալ (ունիք կամ խմիք , եւ յուսիքէ կամ յիմնքէ) ։

— Աստուած տեսցէ իւր՝ ոչխար յողջակէզ (Ծննդ. ԻԲ. 8)։

— Տեսցէ Տէր Աստուած հոգւոց եւ ամենայն մարմնոյ այր 'ի վերայ ժողովրդեանս այսորիկ, որ ելանիցէ առաջի նոցա, եւ որ հանիցէ եւ մուծանիցէ զսոսա, եւ մի՛ լինիցի ժողովուրդս (Դէ-.)։

— Տեսջիր, զաղգն Դաւթայ ոչ խառնեսցես ընդ նոսա 'ի հանդէս։ Իբրեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ (Թա-. Իէ. 16)։ յն. ἐπισκέπτομαι։

— Տեսէք զանիծեալն զայն, եւ թաղեցէք, զի դուստր թագաւորի է (Դ. Թագ. Թ. 34)։ յն. ἐπισκέπτομαι։

Այս միտքն ունի նաեւ հայեւ,

— Արք Իսրայելացիք, հայեցարո՛ւք 'ի ձեզ վասն արանցդ այդոցիկ զինչ պարտ իցէ առնել (Գործ.)։ յն. προσέχω։

— Հայեա՛ց 'ի քեզ, եւ զգոյշ լեր անձին քում (Օրէն. Դ. 9)։ յն. πρόσεχε σεαυτῷ καὶ φύλαξον τὴν ψυχήν σου σφόδρα. 'ի բայէս προσέχω 'ի մեզ

ՊՐՈՍԽՈՒՄԷ։

Ի Թուրք լեզու սովորութիւն է ասել իշինէ դօքմօք, իշինի կէօրմէք։

Եւ ըստ այսմ 'ի մեզ

ՏՆՏԵՍ Յն. οἰκονόμος։

ՏԵՍՈՒՉ, եւ յունական բառք։

ԵՊԻՍԿՈՊՈՍ, ἐπίσκοπος։

— Եպիսկոպոս տեսուչ լոյս (Ոսկ. Փիլիպ.)։ եւ

ՕՏԱՐԱՏԵՍՈՒՉ, ('ի յոյն միտս)։ Նշ. ἀλλοτριοεπίσκοπος։

Յն. σκοπεύω, նշանակէ դիտել, հայել, տեսանել։

Ի պարսիկ ձայնէդ դիյդէն՝ է 'ի մեզ

ԴԻՏԵՄ, յորմէ

ԴԻՏ, եւ

ԴԻԻԹ, տեսանող, կախարդ, Տճ. դօքըշը։

Պարսկերէն դէն, արմատն է դիյ-դէն, (դիտել) բային, եւ նոյնու բարդի՝ դուրդէն, (հեռադէտ) խուրդ-դէն, (մանրադէտ), Յն. τηλέσκοπος, μικρόσκοπος։

Յայտնի է որ 'ի մեզ

ՀԱԶԱՐԱՊԵՏ, բաց 'ի նշանակելոյ՝ գլուխ հազարաց (ըստ զինուորական կարգի), նշանակէ նաեւ տնտես, տեսուչ, վերակացու, գործակալ, Յն. οἰκονόμος։

— Ասէ Յովսէփ ցհազարապետ տան իւրոյ (Ծննդ. ԽԳ. 15)։

—Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի, եւ հազարապետս խորհրդոցն Աստուծոյ։ Արդ խնդիր է 'ի մէջ հազարապետաց եթէ ոք հաւատարիմ գտցի (Ա. Կորնթ. Դ. 1—2)։

Այս կրկին առման պատճառ այն է զի Թուրք ձայնդ դէհ (հազար) զուգաձայն համգիպեալ է Պրս. դէհ, (գէօ, տեսանող բառի)։

Բաղդ. հազ եւ հազար (բայս), հեծել եւ հեծանել։

ԴԵՍՊԱՆ, իբր՝ դեսդան, Պրս. դէյդեպան, Թրք. կէօզճի, եւ Յն. θεσμοφύλαξ։

ԼՐՏԵՍ, այս է՝ լսող եւ տեսանող, լսելիք եւ տեսանելիք, ականջք եւ աչք, Պրս. շէհդեյդե, զի շէհ նշ. ձայն, լուր։ «Աչք թագի», այսպէս կոչէին լրտեսք առաքեալք 'ի թագաւորէն պարսից 'ի կողմանս կողմանս յայնածաւալ պետութեանն առ 'ի տեղեկանալ ամենայնի, եւ զգուշացանել թագաւորին։ «Քանզի ոչ կարէր թագաւորն (Պարսից) անձամբ շրջել 'ի գաւառս, առաքէր փոխանակ իւր յուղարկս ի բաց զաստեղեալն իմաստութեամբ եւ առաքինութեամբ, որք աչք եւ ունկն թագաւորին համարէին, որովք լրտեսէր նա, եւ գիտէր զամենայն։ Եւ որով զուգանին արքայի եւ զպաշտօնեայս՝ աչք եւ ունկն նմա համարէին. նովին խրատէին զթագաւորն որպէս զգայութեամբ վարել նոքօք» (Ոսկ. Հռովմ. Հմ. Ա.)։

«Κατεμάθομεν δὲ ὡς καὶ τοὺς βασιλέως καλουμένους ὀφθαλμοὺς καὶ τὰ βασιλέως ὦτα οὐκ ἄλλως ἐκτήσατο ἤ . . . » — Ի միտ առնումք թէ զանուանեալ աչս եւ ականջս թագաւորի ոչ եթէ այլով ինչ իւիք ստացաւ, բայց . . . οὕτω δ. πολλὰ μὲν βασιλέως ὦτα, καὶ πολλοὶ ὀφθαλμοὶ νομίζονται, — Վասն այսորիկ բազում ականջք են թագաւորի, եւ բազում աչք համարին (Քսենոփ. Կիւր. Կրթ. Դպր. Ը. 7)։

«"Ηδη δὲ αὐτοῦ τεθνηκότος Ἀρτασύρας ὁ βασιλέως ὀφθαλμὸς ἔτυχεν ἵππῳ παρεξελαύνων. Γνωρίσας δὲ τοὺς εὐνούχους ὀλοφυρομένους ἠρώτησε τὸν πιστότατον αὐτῶν. «Τίνα τοῦτον, ὦ Παρίσκε, κλαίεις παρακαθήμενος; ὁ δὲ εἶπεν οὐχ ὁρᾷς ὦ Ἀρτασύρα, Κῦρον τεθνηκότα». — Իսկ յետ մահուն Կիւրոսի Արտասուրայ ակն (*) արքայի, ըստ դիպաց անցեալ երիվարաւն 'ի վայր անդր, եւ զկոծ եւ զաշխարանս լսեալ զներքինեացն, հարցանէր զայրն որ առաւել հաւատարիմ 'ի նոցա. «Ո՞վ ոք իցէ այդ, ո՛վ Պարիսկէ, զոր դու նստեալ արտասուես»։ Եւ պատասխանի այրն եւ ասէ. «Եւ ո՞չ տեսանես, ո՛ Արտասիւրէ (**), առաջի զիստապատ ըղԿիւրոս» (Պլուտ. յԱրտաշ.)։

Յաստցելոցս զայս վայր, եւ 'ի ցուցելոցս ըստ կարի մարթ է խելամուտ լինել համեմատել ընթերցողին, թէ անդստին յանուանեալ ականէն Պարսից արքային յԱրտասուրայ բխէ 'ի մեզ

ԱՐՏՕՍՐ, (արտասուր). եւ այս յայտնապէս Լատինականին թելադրութեամբ է որ [illegible] եւ [illegible]. (ploro եւ exploro) եւ զածանցացն՝ plorator եւ explorator ([illegible] եւ [illegible]) անդստին 'ի միջէ արմատոյ ունի։

Եւ ոստի իցէ

ԱՐՏԱՍՈՒՔ, (ձեռ.) արտասուաց. եթէ ոչ յականէն Արտասուրայ։

ԱՐՏԱՔՈՅ, Նաեւ

ԱՐՏԱՔՍ, 'ի նոյն արմատոյ. առ կայն յայսմ Թրքական ձայնին

ԱՐՏԱՔՈՒՍ, ԱՐՏԱՔԻՆ, պատշաճեցուցեալ, քանզի նոցայն [illegible], կարի մերձաւոր է արտաստուբ-այ կամ որ նոյնն է, Արտաշրի։

— Յաչսն արտաքս մղեալ յարձակի 'ի ձեռն կաթլոց գիջութիւնն, եւ կաթիլն արտօսր ասի (Նէր. Կալ.)։

Յորմէ

ԱՐՏ, (նախդիր խափանեալ), 'ի բարդութիւնս դուն ուրեք վայելչապէս, որպէս

ԱՐՏԱԽՈՒՐԱԿ, ԱՐՏԱՆՈՒԱԳ, իսկ «Ո՞չ իմանայք եթէ ամենայն որ մտանէ 'ի բերան, յորովայն երթայ, եւ արտաքս ելանէ» (Մատթ. ժե. 17, եւ Մարկ. է. 19), է իբր թարգմ. Թրք. [illegible] կամ [illegible]։ Յն. εἰς τὸν ἀφεδρῶνα։

* * *

ԴԵՍՊԱԿ, թուի ծագել 'ի բառէս՝ [illegible], (տես 'ի վերոյ). եւ ատ յանուանէս՝ [illegible], որ թարգմանի պատգամաբեր, դեսպան, մարգարէ։ [illegible] է 'ի Յունաց անուանի ողբերգակ քերթող, որ ասեն նորաձեւութեանցն զորս եմոյծ 'ի թատերական խաղս, որ ցայժմ անսովորք էին Աթենացւոց, եւ ստաբացուցիչք իմն, հալածեալ 'ի քաղաքէն. իսկ նա շրջեալ ընդ ամենայն Ատտիկէ դեսպակաւն որ անձին սահմանեալ էր, ամենայն ու-

(*) Այս է, «Լրտես արքայի»։

(**) Հարկ է ասել առ ինքեանս, զի [illegible] թագաւորի էին անուանեալքն այնորիկ Աչք, կարգեալք 'ի լրտեսել զերկիրն, առ կայն զանուանս նոցա ոչ ոք հասոյց մեզ պատմութիւն, եւ միայն եւեթ անուն ծանօթ է գրական աշխարհի շնորհիւ Պլուտարքեայ։

րեք ոչ դադարէր ուսուցանել զօգնելութիւնս, զորս ինքն իսկ հնարեալ էր, եւ բազմութիւն աշակերտելոց խառնեալ շուրջ զնովաւ, ապաստաւորէին նմա, ածեալ զնա զես պակասն յօ՛ եւ կամէր։

— Զանձանօթ զօգնելութիւնս նուագաց ազգ հնարաւորեալ։ Եւ այլեւք շուրջ զքերթուածս 'ի ճեմ ածել ասի թեսպիս (Արոտ Աբ. Քերթ.)։

— Նա (Թեսպիս) զայլակերպ խաղալից խումբ պարաւոր

Երարձ 'ի ասյս, եւ 'ի տեսիլն ածաւոր

Անցաւորացըն բազմութիւն զբօսնայր (Պօ...լոյ Աբր...եւոս Քերթ.)։

Ի Հռովմայեցւոց հռչակաւոր Թեատեալ է Յովնալ, անուանի քերթող երգիծաբան, եւ 'ի սորա անուանէն պարզեւի մեզ

ՅՈՎՆԱԿ (*). — *Զփայտ եւ զքար այնպէս կրեն սայլիւք եւ յափշակօք (Ոսկ. Մատթ.)։*

Բուն հնչումն Լատին անուանդ է՝ Juvenalis, *եւ այս Լատին անուանէն է ի մեզ*

ԺԱՆՈՒԱՐ (*), *որ նոյն է ընդ՝ յունուար։ Այս բառը Ռուսերէն ձեւէ օրինօք առնուած է Լտ.* januarius *(յունուար) բառին ձայնը, եւ փոխադարձաբար. այս առումը բաղդ. չապուհ եւ առփոր։*

— Կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուարու (Բուզ.)։ — Արձակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապհոյ՝ համդերձ ժանուարօք (Անդ)։

Այսպէս

ՊԱՏԳԱՐԱԿ, *Մինչեւ 'ի հրապարակս հանել զհիւանդս եւ դնել պատգարակօք եւ մահճօք իւրեանց (Գործ. Ե.* 15)։

Ծագի 'ի բառէս

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ, *եւ առ 'ի Պրս. փէյղամպէր, զի Պրս. փէյղամ, եւ հին Պրս. փատգամ, յորմէ մերս պատգամ (անս զբառդ). եւ պէր, է արմատ պէրդտէն բային, որ նշանակէ տանել կամ բերել, այսպէս եւ*

ԴԱԳԱՂՔ, *Ռուսկէյր։*

Ի բառէս Ռուսկէյրէ

ԹԱԳԱՒՈՐ, *եւ առ 'ի Պրս. Ռուսվէր, (թագակալ)։*

ԹԱԳ. *Պրս. Ռուկ, Ռութ, նոյն նշ. նկատի իբր աչաց երեւելի ինչ եւ բարձր, քանզի 'ի վերայ գլխոյ դնի։*

Յորմէ 'ի հակառակէն՝

ԹԱՔՈՒՆ, *բաղդ. ծածկեմ եւ ծածկեմ, ցուցանեմ եւ ստուգանեմ, ցանուամ եւ ցածնում, աթոռ եւ աստթուր։*

ԹԱՔՉԻՄ, ԹԱՔՈՒՑԱՆԵՄ։

ԹԱՔԹԱՔՈՒՆ, — *Պանդուխտք եղիցին, եւ թաքթաքուն շրջեսցին (Սաղմ. ԾԵ. 7)։*

(*) Յովնակ, բառ անյայտ, որպէս՝ այլբակ, ասլիկ, եւ կամ յափշակ իշոյ, (Ն. Հյկ. Բռ.)։

Յորնալ, եւ սար Լատին հնչումն ժանուար, երկուքն ալ նախնեաց գործն են, մէկուն համար կը փոխէ Խորենացին, միւսին համար Բիւզանդ, երկուքն ալ արդեօք ուսումնականք, իսկ զարմ յունուար բառին, այն ալ եւս Քրոնիկոնին հզօր փխյութիւնը ունի. որով իրաւ կը մերժուի այն ոչ գիտնարար վճիռը Թէ յունուարը յանուար պէտք է ըլլալ, վասն զի ուղիղ հնչումը այդ է. ուրեմն տառմնը տառմն պէտք է ըլլալ, վասն զի յունական բուն հնչումն է σταύνος, եւ տառմօքն է տաամօրս, բառ յունական հնչմանն։ Սակաւ ինչ մի եւ զինի խառնեաջիր վասն տառմօրսի, պէտք է ուղղել եւ կարդալ զվասն տառմօրսի, եւ ոչ այսչափ միայն, այլ նաեւ Յորնալը Յուբէնալ, Դուիթը Դուիդ, Լիբանանը Լիբան, Յորդանանը Յորդան, Բեյլիաըը Բեյլեալ, Բարսեղը Բասեղ, Պօղոսէոսը Պօղոսէոս, Մատաթիայն Մաթիաս, մեքենայն միքանէ, ապաթարցը (որ է Թարգմ յն. ձայնիս ἀπόστροφος), ապաղարձ, արարը էբար, ճեթանոսը եթնոս, Յոխանը Յոխան, բառ անդարձ վճռոյ . . . .

(*) Գ. Քերովբէ Պատկանեան զբառդ համարի պարսիկ, (Տես Բուզ. Տպ. Պետերբ. 1883, էջ 163 'ի ծանօթութեանն)։

ԹԱԹԱԽԵՄ, *Թրք. դաֆըլմաք*, և

ԹԱՂԵՄ, -- *Թաղեաց զնա ընդ աւազով* (*Ել. Բ.* 12). *յն.* ἔκρυψεν, (*թաքոյց*)։

Յորմէ

ԹԱԹԱՂՈՒՆ, — *Զափ բարուք, թաթաղուն, զեղուն, չարժուն*։

Յորմէ (*թաղ*) *'ի հակառակէն*

ՏԱԿ, *բաղդ. ունչք և ունջք, ստոր և առր, անթռ և առաթուր*։

ԱՏԱԿ, ՑԱՏԱԿ, *Պրս. դեփ նշանակէ յատակ, տակ*։

Ի մեզ՝ իբր արմատ կամ հուն։

ՑԱՏԱԿԵՄ, — *Դիմեաց ջուրն Յորդանանու 'ի տեղի իւր, և գնայր որպէս յերեկն և յեռանդ ընդ ամենայն առափս նորա* (*Յես. Դ.* 18)։

Ի ջրոյն ցամաքութենէ որ 'ի ներքոյ կայր, ամենայն յատակք երկրին երևէին (*Իմաստ. ԺԹ.* 7),

ԱՏԱԿ ԼԻՆԻՄ, ԱՏԱԿԵՄ, (*կարող լինել*), *աշխ. ադէկէլ*։

— *Զեմք ատակ այնպիսի ինչ ճգունս յանձին ունելոյ* (*Ոսկ. Եբր.*)։ — *Հոգայիքն իսկ, բայց չէիք ինչ ատակ* (*Ոսկ. Փիլիպ.*)։ — *Ոչ ընդ ամենայն յունականն անցանել ատակեալ ոսկս կարճութեան ժամանակին* (*Խորէն*)։

Բաղդ. հուն և հնար։

Յորմէ (*տակ*)

ՏԱԿԱՒ, *Պրս. էնդէվ*։

ՏԱԿԱՒԻՆ, — *Դու տակաւին թեւարկես զժողովրդեանդ իմով չարձակել զնոսա* (*Ել. Թ.* 17)։ (*Տպ. չարչարել, Յն. չարձակել*)։

Իսկ (*Դ. Թագ. Զ.* 23)․ «*Եւ արկ առաջի նոցա խոզա դակար մեծաւ, և կերան և արբին*»։

Ն. Հյկ. Բռ. (*Տես անդ 'ի բառն՝ դակ*) *առէ յայանապէս եթէ 'ի բանից «Կայ մրիպակ գրչի, զի բառ այլոց է սեղան մեծահաց, կամ կերակուր խորտիկս մեծաւ», այլ թէ գիտրդ պարտ իցէ ընթեռնուլ՝ զայն ոչ ցուցանէ, արդ ներելի իցէ ընթեռնուլ, — խո(ր)տ(իկ)ս տա(պա)կաւ*։ *Զայս բան բաղդատէ ընդ* (*Գ. Թագ. ԺԳ.* 8)․ «*Ա՛ռ հայս և թրեաց, արար առաջի նոցա բլիթս, և եփեաց զբլիթսն, և առ զտապակն, և թափեաց առաջի նոցա, և ոչ կամեցան ուտել*»։

Յորմէ (*տակ*) *և*

ՍԱԿ, *զի Պրս. դեփ, նշ. նաև*

ՍԱԿԱՒ, *իբր՝ չափու, չափով, չափաւոր, ոչ կարի, ոչ բազում*։

Տ *և* Ս *լծորդք են 'ի մեզ որպէս և առ այլս. տես, պատկ*։

*

* *

ՁԵՌՆ, *Ի բառէս՝ ձմեռն*, (*Տե՛ս զբառդ*), *ասկս նմանաձայնութեանցս* χεῖρ *և* χειμερία, (*ձեռն և ձմեռն*)։

Յորմէ նաև

ՄԵՐՁ, ՄԵՐՁԵՆԱՄ, *բաղդ. մատն և մօտ, և մատչիմ, ափ և հուպ, բուռն և ըմբռնեմ*։

Ի ՁԵՌՆ, (*նխդ.*), *զոր չէ պարտ չփոթել ընդ՝ 'ի ձեռն*։

— *Տուք զմատանին 'ի ձեռս նորա և կօշիկս յոտս նորա* (*Ղուկ.*)։ *Տպ. 'ի ձեռն*։

— *Որպէս աչք ծառայի 'ի ձեռս տեառն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռս տիկնոջ իւրոյ* (*Սղմ. ՃԻԲ.* 2)։

Իսկ (*Մատթ. ԺԱ.* 3)․ «*Յովհաննէս*․․․ *առաքեաց 'ի ձեռն աշակերտաց իւրոց*»․ *սովորական յոյնն ունի՝* διὰ (*երկու*), *զոր թարգմանիչն մեր ընթեռնու ըստ Աղեքսանդրեան անուանեալ օրինակին՝* διὰ, (*ի ձեռն*)։

Իսկ ի Պատարագ. «*Զփառակցի քո զխորհուրդ*․․․ *կատարես 'ի ձեռն մեր*», (*Տպ. 'ի ձեռն*)․ — «*Տեսեալ Սիմոնի եթէ ձեռս դնելով առաքելոցն, եւայլն* (*Գործ.*)․ *Տպ. ձեռն*։

Իսկ — «*Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ 'ի ձեռս աւազակաց*», *Յն.* λεστα῀ς περίεπεσεν, *է ըստ Թրք. Իւրիւղուզլար էլինէ դիւշ*-

տէս (Ղուկ. Ժ. 30)։ — «Ո՞ յերեցունց թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն 'ի ձեռս աւազակաց (Անդ. 36)։ Յն. τοῦ ἐμπεσόντος εἰς τοὺς λῃστάς, Թրք. Խըրսըզլարըն էլինէ տիւշէնին։

Մերձ բառին հակառակէն ունինք՝

ՄԵՐԺ, ՄԵՐԺԵՄ, — Գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ (Հռովմ. ԺԳ. 12)։

Եւ գերանուանքս (սեռ.)

ՄԵՐ, Յն. ἡμῶν։

ՁԵՐ, Յն. ὑμῶν։

Սակս նմանաձայնութեանցն ընդ Յն. χειμῶν, (ձմեռն)։

Բաղդ. սիւն, ձիւն, չուն։

Ի յունական արմատոյս χείρ (ձեռն), թուի 'ի մեզ լինել,

ՔԵՐԵՄ, ՔԵՐԹԵՄ, ի յունական բառէն κηρός, որ նշանակէ մոմ, եւ լայնաբար՝ տախտակ մոմագօծ. սոյ եւ՝ κήρωμα, κηρόω նշանակէ պատրաստել տախտակս մոմապատս. քանզի 'ի վաղ ժամանակս, մինչչեւ մագաղաթին գիւտ հնարեալ էր, մոմ հալեալ արկանէին 'ի տախտակս պղնձիս, եւ 'ի պաղելն եւ 'ի պնդանալ մոմոյն՝ ապա գրէին 'ի նոսա կամ գրոշմէին գրչաւ երկաթեաւ (στύλος), եւ միւսն ծայրիւ գրչին ջնջէին կամ քերէին զմիանգամ գրեալն, 'ի կոկել զանհարթութիւնս գրոյն կամ յուղղել զվրիպակս, եւ այս են միտք առակաւոր բանին, «Դարձուցանել կամ շրջել զգրիչն». իբր ուղղել, սրբագրել։ «. . . Եւ զգրիչն դարձուցեալ՝ անարգիցն արկցէ սեաւ նիշ, զպերճանացն հատցէ զզարդ» (Որատ. Ար. Քերթ. 444—445). վասն այսորիկ եւ 'ի մեզ քերթել ունի կրկին նշանակութիւն։

Դարձեալ՝ Յն. κεραία նշ. գրուած, կամ եղանակ գրչութեան։

Ա՛յլ է

ՔԵՐԵՄ, Յն. ἅπτω, մերձենամ։

— Անդ առ երկնիւք քերէր, եւ այսր յերկիր հասանէր (Իմաստ. ԺԸ. 16)։ — Մօտ քերէր առ դաշտիւն (Ա. Մկ. Ժ. 78)։ — Քերեալ առ սահմանօք Ասորւոց (Ագաթ.)։

Դարձեալ 'ի նոյն յունականէն՝ χείρ 'ի մեզ՝

ՀԵՌԻ, բաղդ. ձեռն եւ մերձ։

Արաբ. եդ՝ ձեռն, եւ Թրք. էտ՝ հեռի։ Թրք. ձայնդ էլ, նշանակէ եւ ձեռն, եւ օտար։

ՀԵՌԱՆԱՄ, յորմէ 'ի հակառակէն՝

ՅԵՌՈՒՄ, — Յե՛ռ զնոսա ընդ մատունս քո (Առակ)։ — Ոսկի խնձոր ընդ սարդիոն յեռեալ (Անդ)։ — Զեւ բարձից քոց նման է ուլանց յեռելոց (Երգ)։

Եւ

ՅԱՌՈՒՄ, պշնուլ հայել, անքթիթ.

ՅԱՌԻՄ, յորմէ 'ի հակառակէն՝

ԽԱՌԵՄ, — Խառեսցէ քահանայն զգլուխն յուլանէն, եւ մի՛ հատցէ (Ղեւտ. Ե. 8)։ — Որ յառուցու ընդ պատուհանս նորա (Սիրաք)։ — Որ յառեալ 'ի կատարեալ օրէնս ազատութեան հայիցի... ոչ եղեւ նա լսող մոռացութեան (Յակ. Ա. 25)։

Նոյնպէս

ՅԱՐԵՄ, — Յարեն տուն 'ի տուն, եւ ագարակ առ ագարակ մերձեցուցանեն (Եսայ.)։

Յորմէ

ՅԱՐ, (մկ.). բաղդ. կից եւ քեց. կցել եւ քեցել, մերձեցուցանել եւ մերժել։ Ի բառէս հեռի՝

ՀԵՐՈՒ, իբր՝ հեռաւոր, հեռացեալ, (անցեալ տարւոյ)։

Հերու՝ այսմ ամի սպասէիր, եւ այս ամ 'ի միւս ամ առնես (Սեբ.)։

Ի ՀԵՐՈՒՆ ՀԵՏԷ, (անցած տարուընէ 'ի վեր, հեռուընէ 'ի վեր)։

— Զկամելն յառաջագոյն սկսայք 'ի հերուն հետէ (Բ. Կորնթ. Ը. 10)։

— Աքայեցիքն 'ի հերուն հետէ պատրաստ են (Անդ. Թ. 2)։

Եւ

ԽՌԱՆԴ, Լտ. Heri, նշ. երէկ։

— Գիտէք զճանապարհն ընդ որ

երթայցէք. զի ոչ էք երթալոց ըզ-
ճանապարհ երեկին եւ եռանդի (Յես. Գ. 4)։ — Որ ոք հարկանիցէ զըն-կեր իւր ակամայ, եւ նա ոչ ատեայր զնա յերէկն եւ յեռանդ, նմա չէ պատասխանի մահու, զի ոչ ատեայր զնա յերէկն եւ յեռանդ (Օրէն. ԺԹ. 4—6)։ — Տէր, չեմ բաւական ու-ղեա Բե յեբեկե եւ յեւանդե, եւ ոչ յորմէ հետէ եւայլն. Յայնն ունի, յերեկէ եւ ոչ յեռանդէ եւ ոչ յորմէ հետէ (Ել. Դ. 10)։

Նոյնպէս

ՀԻՒՐ, իբր՝ հեռաւոր, օտար. «Օ-տար եղէ ես եղբարց իմոց, եւ հիւր որդւոց մօր իմոյ» (Սաղմ. ԿԸ. 9)։

ՀԱՒՐԱԴԱՒ, աւազակ զհողմայ, զծովէ, թարգմ. Յն. ξεναπάτης։

Հիւր բառին հակառակէն

ԻՒՐ, իբր՝ ոչ օտար, մերձաւոր, ազգական։

— Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան (Յովհ. Ա. 11)։

Արաբ. ֆարէք, (մերձաւոր) եւ Պրս. ղարէյդ՝ (օտար, պանդուխտ, հեռա-ւոր), յորմէ՝ -ը ծնկած՝

ԻՐԵՐԱՑ, պարզ. միմեանց Յն. ἀλλήλων, եւ

ԻՐԱՐ, զիրար,

ԻՐԵԱՐ, զիրեար,

Հետք 'ի հակառակէն՝

(ԱՌ)ԵՐԻ, կազմութիւնը պարզ. ա-թոռ եւ (առ)աթոռ։

ՅԵՐԻ, մերձ, առընթեր, 'ի կող-մանէ։

— Իսպառ է յարեւելից Գաղղիոյ, առ եզր Դաղմատիոյ։ — Բարեկա-ցիք յերի կողով Միջագետաց առ Դիկլաթաւ (Խոր. Աշխ.)։

ԱՐԻ, (գյ.) առաջակողմն չորքո-տանեաց՝ իբր ուսք, որ յայլ լեզուս ձեռն ասի կամ բազուկ, Արաբ. ե..., Յն. βραχίων, Լտ. armus։

Յորմէ

ԵՐԻԿԱՄՈՒՆՔ, իբր՝ յերի-կայ-իմն, յերի կամ երի իմն կացեալ, կող-մութիւնը պարզ. ակիզբն, ակիամն։

— Այսպէս զերկուս երիկամունս ճարպովքն, եւ զերբն աջոյ (Ել. ԻԹ. 22)։ — Մերձ ես դու, Տէր, 'ի շրթունս նոցա, եւ հեռի յերիկա-մանց նոցա։

Դարձեալ ձեռն կամ χείρ, իբր ձեռքի միջոցով գործելու բան։

ՁԵՌՔ, ՁՌԻ, եւ

ՑՐԵՄ, ՑԻՐ, ՑՐԻՒ, յորմէ

ՑՐՈՒԵՄ, եւ

ԸՆՁԵՌԵՄ, իբր Յն. ἐγχειρίζω, որ-պէս բուռն=ըմբռնել, բերան=ըմ-բերանել։

ԸՆՁԵՌԱՅ, գրեալ եւ

ԸՆՁԱՅ, ԸՆԾԱՅ, յորմէ համառօ-տեալ՝

ՁՕՆ, ՁՕՆԻ,

Յորմէ (ձեռն կամ ձօն)

ՑԱՆ, — Ոչ վար եւ ոչ ցան. — ցան եւ ցիր։

ՑԱՆԵՄ, պարզ. սփռել, սփիւռ, յորմէ՝ բուռն։

Յն. σπείρω, որ է արմատ բայիս՝ սփռել, նոյն է եւ մերս՝ սերմանել։

— Եկն թշնամին, եւ ցանեաց 'ի վերայ որոմն 'ի մէջ ցորենոյն (Մատ. ԺԳ. 25). յն. ἔπειρε, նշանակէ եւ իբր սրսկել, ցօղել, որ ընդհանրա-պէս ձեռքով կը կատարուի։

— Եւ ցանեցից 'ի վերայ ձեր ջուր սուրբ։ — Այսպէս յարենէն եւ ցա-նեսցես 'ի վերայ Ահարոնի եւ 'ի վե-րայ պատմուճանի նորա։ — Առեալ Մովսէսի զարիւնն՝ ցանեաց զժո-ղովրդեամբն։

ՑԱՆ, — Ոչ վար եւ ոչ ցան։

ՑԱՆ եւ ՑԻՐ, — Ցրուել զնոսա ընդ ազգս, եւ ցանել զնոսա ընդ գաւառս (Եզեկ. Ի. 23)։

ԱՓ, Յն. ἀφή, նոյն նշանակու-թեամբ։ Բարդ. թաթ։

— Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս (Եսայ.)։ — Եթէ գոյ 'ի քեզ իմաս-տութիւն, տուր պատասխանի մեր-ձաւորին, ապա թէ ոչ՝ ափ քո լիցի

'ի վերայ բերանոյ քո (Սէր. Է. 4)։

Յորմէ

ԱՓՆ, Յն. ἀφή, նշանակէ՝ շօշափելիք, ձեռն, մերձեցումն։

Բաղդ. ձեռն եւ մերձ, մատն եւ մօտ։ Եւ

ՀՈՒՊ, ՀՊԻՄ, — Դուք ինքնին գիտէք որպէս անմարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի (Գործ. Ժ. 28)։

Կայ 'ի մեզ եւ

ԱՓԵԹ, իրր՝ լուցկի, 'ի Յն. ἄπτρα, որ նշանակէ պատրոյգ ճրագի, ծագեալ 'ի բայէն ἄπτω. ἄπτομαι, որ է ըմբռնել, լուցանել, մերձենալ. Թրք. Թութմաք, նշանակէ՝ ըմբռնել, ունել. յորմէ՝ Թութուշմաք, վառել, բորբոքել. Եանաշմաք՝ մերձենալ, յորմէ՝ Եանմաք՝ այրել, Եաքլաշմաք՝ մերձենալ, յորմէ՝ Եաքմաք՝ այրել, եւ 'ի մեզ բռնել, (աշխ.), յորմէ՝ բռնկել, կպչիլ կամ կպչել, որ է պատուաստել հպել, եւ կ'ըսուի Չըրաղը եաքըշտըրըլ, եւ կը նշանակէ ճրագը վառել. Չըրաղը եաքմա, ճրագ վառէ։

Ի բառէս՝ եւ է

ԾԱՓ, ԾԱՓՍ ՀԱՐԿԱՆԵԼ, Թարգմ. Թրք. Էլ չալմաք, էլ չըրփմաք

ԾԱՓ ԶԾԱՓԻ ՀԱՐԿԱՆԵԼ, եւ

ԾԵՓ, — Նորոգեսցէ զմարմին նորա իբրեւ զծեփ որմոյ (Յոբ. ԼԳ. 25)։

ԾԵՓԵՄ, — Բրուտ զաւրտ իւր տացէ առ 'ի վճարել զծեփ (Սիր. ԼԸ. 34)։ — Ո՞ւր է ծեփն ձեր զոր ծեփեցէք (Եզեկ. ԺԳ. 12)։ — Քան զնոցայրն 'ի յայտն ծեփելոյ (Ոսկ. Մատթ.)։ — Ծեփեա զառն քո զի եկեալ զեղեցկացուցից զանազան նկարուք... յառաջ նկարեա՛, եւ ապա 'ի վերայ ծեփեսցիս (Խոսր.)։

Բաղդ. բուռն, (գյ.) եւ բռել։

ՀԱՓԱՓԵՄ, կրկնութեամբ —է բառի։ — Եւրոպէ 'ի Կրետացւոց հափափեցաւ (Եբրայ. Քր.)։

Յորմէ

ԱՓ ՅԱՓՈՅ, բաղդ. առեւանգեմ եւ հարեւանցի, հիմն եւ խմն, (խմնէ, հիմնէ) եւ խմնէ։

ՅԱՓՇՏԱԿԵՄ, Թուի բարդեալ՝ ափ, եւ 'ի Պրս. չէշմ..., որ նշանակէ՝ զող, աւազակ։

ՓԱԱՓԱՅՔ, Թուի 'ի հակառակէն բառիս —է։ Բաղդ. տատասկ եւ դատասկ, չփել եւ փուշ։

- ՇՕՇԱՓԵՄ, կաղմեալ որպէս Թօ-Թ—քէմ։

— Մօտ եկ եւ շօշափեցից զքեզ, որդեակ, եւ շօշափեաց զնա (Ծնն.)։

ՇՕՇԱՓԵԼԻՔ, Յն ἁφή։

Յորմէ (շօշափեմ) համառօտեալ

ՇՓԵՄ, (հպել ձեռամբ, հպել մեղմով)։ — Յորժամ փայտ ընդ փայտի շփի, հուր ծնանի (Եզնիկ)։ — Զի՞ շփէք զինեւ զանդադաշած կարծիսդ (Ոսկ. Մատթ.)։ — Զվճիռ բամբասանացն զծառոյն չփէք (Ամբ.)։ — Ընդ շուրջս կորստեան նորա շփեցան շուրջք իմ (Յոբ. Լ. 13)։

Յորմէ 'ի հակառակէն

ՓՇՐԵՄ, բաղդ. ծծել եւ ծեծել, հարթել եւ ջարդել։

Յորմէ (շփեմ) 'ի հակառակէն

ՓՈՒՇ, բաղդ. դատասկ եւ տատասկ, պարան եւ պարանոց, փետուր եւ փետել, ձեռ եւ ցռել։

— Փուշ եւ տատասկ բուսուսցէ քեզ (Ծնն. Գ. 18)։

Եւ

ՓՈՇԻ, ըստ յունականին, զի ψάω, նշանակէ՝ փշրել, շփել։

ՓՇՐԵՄ, — Զարձանս նոցա փշրեսջիք։ — Զկուռսն փշրեաց մանր։

ՓՇՐԱՆՔ, — Ծունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց։ Իսկ

ՓԽՐԵՄ, Յն. ψώχω, նոյն նչ։

— Մաւրկ փխրեալ եւ մանրեալ։ Տճ. Մաքրէ—լ։

Յորմէ

ՓՈՔՐԵՄ, ՓՈՔՐ։

ԳԱՀ, Պրս. կէ–հ, նոյն նշ ։

ԳԱՀՈՅՔ, եւ լայնաբար՝ ամէն բարձր տեղ ։ — Դիմեաց երամակն 'ի գահէ անտի 'ի ծով ։

Յորմէ գահաւանդ ։

Տե՛ս՝ դարաւանդ, դարեւանդ եւ սարաւանդ ։

Յորմէ 'ի հակառակէն

ԳԱՂԵՄ, թաքուցանել ։

Բաղդ. թագ եւ թաքչիմ, ծագեմ եւ ծածկեմ, ցուցանեմ եւ սուղանեմ ։

*

* *

ԲՈՒՍԱՆԻՄ ։ Յն. φύω, (ապռ.) φύσω, նշանակէ բուսանիմ ։

— Բուսցի 'ի նմա փուշ իբրեւ 'ի խոպանի (Ե––յ.) ։

ԲՈՒՍՈՒՑԱՆԵՄ, — Բուսուսցէ երկիր գրանջար խոտոյ (Ծննդ.) ։ Իսկ (Մէլք–), « Մի՛ բուսուցաներ 'ի վերայ քո խրատ չար », ընթերցի՛ր ըստ յունին, « Մի՛ ուսուցաներ » ։

Բոյս բառին հետ՝ հակառակ առամամբ վերաբերութիւն ունին թերեւս

ԲՈՒԹ, որ չերկարիր, որ սուր կամ սրածայր չէ, թանձր ։

ԲԹԵՄ, — Սուրք սպանողացն բըթեցան, եւ նոցա պարանոցք ոչ ձանձրացան (Եզեկ.) ։

Եւ

ԹՈՒՓ, տունկ փոքր եւ ցած 'ի բնէ, որ չբարձրանար ։

Յորմէ (բուսուցանեմ)

ԲՈՒԾԱՆԵՄ, յորմէ

ԲՈՒԾ, իբր ֆ––ն կամ ––լ ։

Բաղդ. պարարեմ եւ պարարակ (գյ.), սնուցանեմ եւ սան, սանական ։

— Խաբեցեր զիս 'ի վարձս տասն բծաց (Ծննդ. ԼԱ. 4) ։ — Բուծ մի անարատ տարեւոր արասցէ յողջակէզ տեառն (Եզեկ.) ։

Յորմէ (բուծանեմ) 'ի հակառակէն

ՈՒԾԱՆԱՄ, ցրտանալ անասնոց 'ի սիրոյ ծագուցն . եւ փախչելոյ 'ի նոցանէ առ 'ի չբուծանելոյ զնոսա ։

Յն. ἀποσκληρύνω, խստանալ, խիստ լինել, վարել խստութեամբ ։

— Ուծացաւ յորդւոց իւրոյ իբրեւ ոչ յիւրմէ . . . զի լռեցոյց Աստուած 'ի նմանէ զիմաստութիւն, եւ ոչ ետ նմա բաժին 'ի հանճարոյ (Յոբ. ԼԹ. 16) Եւ

ԲՈՒՏ, սնունդ՝ կերակուր անասնոց ։

ԲՏԵՄ, սնուցանել զանասունս ։

*

* *

ՁԱՏԻԿ(*), Պրս. ճ–էկէ, ճ–էչ. նշանակէ զենումն, հարուած, սատակումն ։

— Առէք ձեզ ոչխար, եւ զենջիք 'ի զատիկ ։ — Յառաջնում աւուր բաղարջակերացն յորժամ զզատիկն զենուին (Մարկ. ԺԴ. 12) ։ Զատիկ մեր զենաւ Քրիստոս ։

Եբր. ֆէ––խ, որ թարգմանի՝ անցք, քանզի գրեալ է՝ (Ել. ԺԲ. 11—12), « Փութանակի ուտիցէք, զի զատիկ Տեառն է ։ Եւ –նցից ընդ ամենայն երկիրս Եգիպտացւոց 'ի գիշերիս յայսմիկ, եւ հարից զամենայն անդրանիկ երկրիդ Եգիպտացւոց 'ի մարդոյ մինչեւ յանասուն » ։

Այս Եբրայեցի բառէն ունինք

ՊԱՍԵՔ, ՊԱՍՔԱ, — Զենին զպասեքն 'ի չորեքտասաներորդում աւուր ամսեանն առաջնոյ (Բ. Մնաց. ԼԵ. 1) ։ — Մերձեցաւ տօն բաղարջակերացն որ կոչէր պասքա (Ղուկ. ԻԲ. 1) ։ Յորմէ

ՍԱՏԱԿՈՒՄՆ, ՍԱՏԱԿԵՄ(**), — Հանից 'ի վերայ քո սատակիչս, զայր եւ զտապար իւր, եւ կոտորեսցեն զընտիր ընտիր մայրից ։

Դիտելի է զի Պարսիկ սնուանցդ ճ–էկէ, ճ–էչ՝ բայն լինի՝ ճ–էն,

(*) Զատիկ, զատումն Իսրայէլի յԵգիպտոսէ, (Ն. Հյկ. Բռ.) ։

(**) Սատակել, որպէս թէ՝ ցյատակ աւերել՝ եղծանել ։ (Նոյն) ։

և արմատն՝ ձէն, յորմէ մերս

ՁԵՆՈՒՄ, յորմէ

ՁԷՆ, — Սահմանք քաջաց, առէ, զձէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի (Խոր.)։ — Ի հին զէնն ընթացաւ, առ կինն (Ոսկ. Մտթ.)։

ՁԵՆԼԻ, ՁԻՆՈՒՈՐ, ՁԻՆԻՄ, — Տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ՝ զինեալ հակառակ մտաց իմոց (Հռովմ. Է. 23)։

Ցորմէ (զենում, զենլի)

ԵՁՆ։ Բառիդ կազմութիւնը բաղդ. տեղի և եսդ, տէր և արէ, արամ և մարմ, փող և ողբ։

Այլ է

ՁԵԱՆ, Պրս. [illegible], նոյն նշան.

— Անձանց ձեաս, և արքունի մեծապէս զեան (Եղիշէ)։

* * *

ԿԻԻՍ, Յն. γόης, (հաւահմայ կախարդ)։

— Մի՛ լսէք մարգարէից ձերոց, և ըղձութեանց ձերոց, և երազոց ձերոց, և կիւսից ձերոց (Երեմ. ԻԷ. 9)։ Ցորմէ

ԳՈՒՇԱԿ, իսկ

ԳՈՒՍԱՆ, Պրս. [illegible], է յատուկ անուն անուանի սրնգահարի ուրումն։

Ցորմէ 'ի հակառակէն՝

ԳՈՑԺԿԱՆ, բաղդ. փող և ողբ։

ԳՈՑԺ, ԳՈՒԺԵՄ։

Ցորմէ (գուսան) 'ի հակառակէն

ՔՍՈՒ, բաղդ. հեծեծել և հծծել, չանթել և չնթել։

— Ջանձն իւր պղծէ քսուն (Սիր. ԻԱ. 51)։

ՔՍԻՔ, — Քսիս մատուցանէր առ թագաւորն (Բուզ.)։

ՔՍԵՄ, գրի և՝ քսսեմ, — Ըստ քսսելոյ իշխանին Սիւնեաց (Փարպ.)։

ՔՍՈՒԹԻՒՆ, — Գրգռութիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք (Բ. Կորնթ. ԺԲ. 20)։

Իսկ

ՓԱՍՔՈՒՍ, — Փասքուսք և հետաքրքիրք (Ա. Տիմ. Ե. 12),

Թուի 'ի յունականէս՝ βάσκανος, (փասքուս), որոյ գոյականն լինի βασκοσύνη։

ՓԱՍՔՍԵՄ, — Իբրև զԹշնամի փասքսեցէ (Սեբեր.)։

* * *

ԿԱՂԱՄԱՐ, (նկատի իբր՝ Թացեալ), Յն. καλαμάριον։

Ցորմէ

ԿԱՂԱՄԱԽ, ծառ 'ի ջրարբի վայրս յաճախեալ։

Ցորոց

ՄԱԿԱՂԻՄ, հանդչել խաշանց 'ի զովագին վայրս և առ ջրով հանգրստեան։

ՄԱԿԱՂԵՑՈՒՑԱՆԵՄ, — Մակաղեցուցեր զժողովուրդ քո առ երկոտասան ակունս աղբերացն Ցաղիմայ (Ճառ.)։

Յն. καλαμίτης, ասի զբուսոց որք սիրեն զեղտիւրս և զծմակս, որպէս սօսի, կաղամախ, եղէգն և այլն։

Եւ 'ի հակառակէն բառիս՝ կաղամար՝ (καλαμάριον)։

ԿՂՄԻՆՏՐ, Յն. κεραμίς, նկատեալ իբր չոր, քանզի է Թրծեալ հրով, խեցի։

— Ցորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն իմ (Սաղմ.)։

Բաղդ. Թրծել և Թրջել, ջուր և չոր, կաւառ և գաւառ, նահանգ և նհանգ, զետին և գետ, ցամաք և ծմակ, խեցի և ցեխ, մկրտել և մակարդել։

Եւ

ԿՄԱԽՔ, ոսկերատի մեռելոց ցամաքեալք։ — Ոսկերք իմ որպէս խախւ չորացան (Սաղմ.)։

Այլ է

ՄԱԳԱՂԱԹ, բառ իբր, [illegible], մագաղաթ, [illegible])։

— Բերջիր ընդ քեզ զգիրսն, մանաւանդ զմեմբրանսն (Բ. Տիմ. Դ 13)· յն. զմագաղաթս τὰς μεμβράνας:

Այլ է նաեւ

ԿԱՂԱՄԲ, Պրս. կէլէմ, կէլէմնգա, Յն. κράμβη:

— Ի բժշկութիւն որովայնի զինքն քարոզէր կաղամբ, եթէ կերեալ ոք հում, զորովայնն լուծանէ, եւ եփեալ՝ պնդէ (Մխ. Առակ):

Այսպէս եւ

ԹԱՆԱՔ (*), Յն. δόναξ, (սեռ.) δόνακος, նշանակէ գրիչ եղեգնեայ, իսկ 'ի մեզ սահմանեալ 'ի նշանակել՝ մելան:

Յորմէ

ԹԱՆԱՄ, — Յարժամ անձրեւէ, հարկ է խմաստնոյն թանալ (Փիլ. Նխ. Բ.):

Յորմէ 'ի հակառակէն

ԹԱՆ, աշխ. չորթան:

Բաղդ. մակարդել եւ մածուն:

Այսպէս եւ

ՈՃ, յօդուն ցորենոյ, գարւոյ: Յարաբականէն՝ հօքքա, հոքքա, որ նշանակէ կաղամար, առեալ է 'ի մեզ իբրեւ եղէգն, գրիչ, եւ լայնաբար՝ գրչութիւն, կամ տարայ՝ եղանակ գրչութեան եւս եւ վարդապետութեան:

— Մանգաղ մի' արկանիցես յոճ ընկերի քո (Օրին. ԻԳ. 24): — Կտաւն եւ գարին հարաւ, զի գարին յոճ կայր, եւ կտաւն սերմանացեալ էր (Ել. Թ. 31): — Ելոյց հուր... եւ արձակեաց յոճ այլազգեացն, եւ այրեաց զօրանն (Դատ. ԺԵ. 5): — Ըստ ոճոյ մարգարէից ապառնոյր այլազգեաց (Նխ. Եզեկ.): — Ծանեաւ ցուք որ ինչ կարեւորագոյնն է ոճոյ բանիւ (Խոր.): — Յուստինեայ Փիլիսոփայի որ 'ի մերմէ ոճոյս էր (Եւս. Քր.): — Կղեմէս Աղեքսանդրեայ երէց եւ Պանդենոս Փիլիսոփաս առաջիկեան 'ի մերմէ ոճոյս պայծառանային (Անդ): — Խաղ ինչ եւ խաբէութիւն զմեր ոճս համարեցի (Ոսկ. Եփր.):

Յորմէ եւ —

ՈՉ, (մկ.), ըստ նոյնաձայնութեան Արաբ. եւ Յուն. բառից՝ հոքքա (ոճ) եւ οὐκ, οὐχί, οὐ (ոչ), եւ Թրք. եօք, (ոչ կամ չիք), եւ Պրս. էչ, հէչ, նշանակէ ոչ երբէք:

Յորմէ համառօտեալ

Չ, 'ի սկիզբն բառից եւ կցեալ 'ի նոյն, չեմ, չերթամ, չազգ, չժողովուրդ: — Զէրն չէին վասն չէին յաչս անէր (Եզնիկ):

Տես եւ կաթողիկէ:

Յորմէ (ոճ)

ՕՃՈՒՄՆ, թացումն, թացումն իւղով, նախրագործութիւն:

ՕՃԱՆԵՄ, — Եւ լեղիս, եթէ ոք ունի գլուսն յաչս իւր, օծանի սովաւ եւ բժշկի: — Իւղ մեղուորի մի' օծցէ զգլուխ իմ (Սաղ.): — Ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ տէր (Ղուկ.):

Յորմէ 'ի հակառակէն՝

ԱՆԻԾԱՆԵՄ, — Նզովեցէք զմարոզ... անիծանելով անիծէ'ք զբնակիչս նորա (Դատ. Ե. 23): Տպ. անիծեցէ'ք:

Իբր՝ անօծանել, ոչ օծանել, պղծել, համարել պիղծ, ոչ օծեալ, ոչ սուրբ:

ԱՆԷԾՔ, Քրիստոս (օծեալն) փրկեաց զմեզ յանիծից, եղեալ վասն մեր անէծք. զի գրեալ է, թէ անիծեալ ամենայն որ կախեալ կայցէ զփայտէ (Գաղ. Գ. 13): — Եւ անէծ զնոսա (Եղիսէէ) յանուն Տեառն. եւ ապա, որդիք յանցանաց եւ դատապարտեալք, եւ ելին երկու արջք յանտառէն (Դ. Թագ. Բ. 24): Զեւ ա-

(*) Առումն բառիս մերձաւոր է նշանակութեան յունականին, այլ ոչ նոյն. այսպէս՝ զեն, Արաբ. ջէն (ծաւաղը), նշանակէ 'ի մեզ ոչանդ ճենճանտակութ. դրախտ, Պրս. դէրէխթ, նշանակէ ծառ: Արաբ. հընթա, ցորեան, նշանակէ 'ի մեզ ունդ, եւ այլք ոչ սակաւք:

նիծից չիք յնոր. և ոչ 'ի սովորական օրինակս Յունաց, բայց 'ի միոջէ ևեթ օրինակէ որ ունի այսպէս, τέκνα παραβάσεως καὶ ἀργίας: — Անէծք այդպիսի կծծի բանից (Ոսկ.)։

Յորմէ

ՕԶ, — Եւ անէծ Տէր Աստուած զօձն... անիծեալ լիջիր դու (Ծննդ. Գ. 14)։

Ի բայէս օծ ու մն (ու ծ-ու մն)

ՕՃԱՌ, (ու ճառ)։

ԱՃԱՌ, իրր նիւթ օծութեան, մաքրութեան. նաև կակղացուցիչ և փափկացուցիչ մարմնոյ։

— Երթա՛յք բերէք ինձ իւղ և օճառ զի լուացայց (Դան. ԺԳ. 17)։
— Հրամայեաց արքայ տալ նոցա իւղ և օճառ (Եսթեր Բ. 3)։

Յորմէ 'ի հակառակէն՝

ԱՃԱՌ, իրր՝ զօրաւոր և տոկուն մասունք մարմնոյ, ներարդ, ջիղ։

— Միանգամայն կոտրին զոսկերօքն ջարդեցուլք միսքն և ջիղքն և աճառքն (Աճ-Բ.)։

Յորմէ

ԱՃԱՌԱԳԱՏ, — Խորտակեցից զբազուկս նորա հզօրս, զներգծապատս և զաճառապատս (Եզեկ. Լ. 22)։

Յորմէ (օճառ) 'ի հակառակէն

ՈՃԻՐ, նկատեալ իրր ապականութիւն՝ պղծութիւն։

Բաղդ. մեղան և մեղք։

Որպէս և յաճառոյ 'ի հակառակէն՝

ԱՃԻՒՆ, բաղդ. մաքուր և մոխիր. (մաքրութիւն մոխրոյ)։

* * *

ՆԱՅ, ըստ Պարսից Ըղէֆն, ըստ մեզ՝ կէճ, տամուկ, մեղմ, թոյլ, ակար (ըստ քերականաց)։ Բաղդ. կաղամար։

Երկրորդ մեկնութիւն մը. Արաբ.-ին՝ նշանակէ՝ աչք՝ (ա յ ն—ն ա յ)
2 3 1 3 1 2

Յորմէ

ՆԱՅԱՄԷՏ, իսկ Նամէա, Պրս. Նէմէր, Թրք՝ Նէմ, նշանակէ՝ կէճ, խոնաւ, Յն. ναμα-τώδης. իսկ νάμα, նշանակէ՝ վտակ, առու, աղբիւր, հոսանք։

Յորմէ (նայ)

ՆԱՅԻՄ, նայեցուած՝ նկատի իրր զօրաւոր միջոց ցանկութեան, գիճութեան։

— Ամենայն որ նայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա (Մատթ.)։
— Չնայիլ նայեցածն 'ի տանջանս հրաւիրէ (Ոսկ. Մատթ.)։
— Չնայել նայեցածն յառաջ քան զգործն հրամայէ խափանել, զի մի՛ երբէք և 'ի գործն եւս գայցէ (Անդ.)։

Յորմէ 'ի հակառակէն

ԽՆԱՅԵՄ, (նայ, տես 'ի վերոյ)։

— Ի բամբասանաց խնայել զլեզու։ — Պաշեա՛ զօրութեամբ, և մի՛ խնայեսցես (Եսայ. ԾԸ. 1)։

Դարձեալ՝ իրր՝ չխնայել, այսինքն, զգուշանալ, կամ պահել զանձն, զգուշանալ անձին կամ ուրուք, ոչ հայել, անտես առնել, լքանել։ Ասի և Անխայել

— Անխայեսցէ նա յաղքատն և 'ի տնանկն։ — Խոնարհեցեր, և ոչ անխայեցեր։ — Որ իմաստութիւն իմն համարէ ինքնակամ կրօնիւք, խոնարհութեամբ և անխայութեամբ մարմնոյ (Կող. Բ. 23)։

Եւ

ԽՆԱՄԵՄ, (նամ=նամէա, տես 'ի վերոյ)։ Նայել, հոգ ունել, զգուշանալ։ (Միայն մէկ նշանակութեամբ)

ԽՆԱՄ ՏԱՆԻՄ, — Մարմնոյ խնամ մի՛ առնիք 'ի ցանկութիւնս։ — Միտք մարդկան 'ի խնամս չարին հաստատեալ են 'ի մանկութենէ։

Յորմէ

ԽՆԱՄԻ, մերձաւոր 'ի պատճառս ամուսնութեան։

ԽՆԱՄՈՒԹԻՒՆ, — Զառնել խնամութիւն ընդ Քանանացին (Նէ. Օր. ԺԶ.)։ Սարին Յունարէնի մէջ

κιττάζω, նշանակէ՝ նայել. իսկ ըստ հին Հելլենականին՝ եւ տարբեր ուղղագրութեամբ κοιτάζω, նշ. ննջել, եւ ննջել ընդ., մտանել 'ի քուն եւ 'ի կին. ծագեալ 'ի բառէս κοίτη, անկողին, զուգաւորութիւն.

Այս Յունականէն 'ի մեզ՝

ԳԻՏԵՄ, ճանաչել, գիտակ լինել, մերձենալ կնոջ առ այր, կամ առն առ կին.

— Եւ իմ երկու դստերք որ զայր ոչ գիտեն (Ծննդ. ԺԹ. 8). — Զիա՞րդ լինիցի ինձ այդ քանզի զայր ոչ գիտեմ (Ղուկ. Ա. 34). — (Յովսէփ) ոչ գիտէր զնա (զՄարիամ) մինչեւ ծնաւ զորդին իւր (Մատթ. Ա. 25).

Յորմէ

ԱՐՈՒԱԳԷՏ, Յն. ἀρρενοκοίτης.

Իսկ

ՔՈՒՆ, յորմէ

ՔՈՒՆԵՄ, Յն. է κνώσσω, (ննջեմ).

— Քունեաց Յովաթամ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ 'ի քաղաքի Դաւթի (Ա. Մնաց.). — Ե՛կ, քունեա՛ ընդ իս (Ծննդ. ԼԹ. 7).

Ի ՔՈՒՆ ԵՐԹԱՄ, — Որպէս ոչ ննջէ եւ ոչ 'ի քուն երթայ պահապանն Իսրայէլի (Սաղմ. ՃԻ.).

Թրք. [illegible], Պրս. [illegible].

Ի ՔՈՒՆ ԼԻՆԵԼ, — Եւ '[illegible] մարդկանն, եկն թշնամի (Մատթ. ԺԳ. 25), այսինքն '[illegible]... '[illegible].

Յորոց (քուն, 'ի քուն երթամ) 'ի հակառակէն՝

ԳՈՒՆ ԳՈՐԾԵՄ, իբր՝ 'ի նմանաձայնութենէ Յն. զի ὥρος, (քուն), եւ ὁράω, (գուն գործել, ջանալ, փոյթ ունել).

— Վասն գործոյ տեառն մինչեւ 'ի մահ մերձեցաւ՝ գուն գործեալ ոգւովք չափ (Փիլիպ. Բ. 30). յն. παραβουλευσάμενος τῇ ψυχῇ, ([illegible]).

Եւ

ՔՆՆԵՄ, ԱՆՔՆՆԻՆ, քանզի յունականն ὁράω, նշանակէ նաեւ՝ քննել.

Ի ՔՆԻՆ, — Խօսքն որ արտաքս ելանեն, 'ի քնին գան (Ոսկ.).

Ի բառէս [illegible]՝

ՏՔՆՈՒԹԻՒՆ, — Դուստր հօր 'ի ծածուկ տքնութիւն է (Սիրաք.).

ՏՔՆԻՄ, — Նոքա տքնին վասն ոգւոց ձերոց.

Դիտելի է՝ [illegible] եւ [illegible] բառերուն մերձաւորութիւնը, կամ թէ ըսենք՝ նոյնութիւնը, [illegible]-ութիւն, [illegible]-ութիւն, 'ի քն-ին, տ'քն-իմ.

Յորմէ (տքնութիւն, տքնիմ)

ՃԳՆՈՒԹԻՒՆ, բաղդ. ննջեմ, նինջ եւ ջանամ, ջան, քուն եւ գուն գործեմ.

ՃԳՆԵՄ, ՃԻԳՆ, Կամիմ զի գիտիցէք դուք ո՛րպիսի ճգնութիւն ունիմ յանձին վասն ձեր (Կող. Բ. 1). յն. ἡλίκον ἀγῶνα ἔχω. — Զի ճգնիցիք 'ի վերայ հաւատոյն (Յուդ. Ա.). յն. ἐπαγωνίζεσθαι. — Եւ Եսթեր արկինն... հաստատեալ էր 'ի ճիգն մեծ (Եսթ. ԺԴ. 1). յն. ἐν ἀγῶνι θανάτου.

Եւ 'ի բառէս՝ [illegible]

ԳԻՏՈՒՆ, — Եթէ ո՞չ գիտէք, եղբարք, զի ընդ գիտունս օրինաց խօսիմ, զի օրէնք եւայլն (Հռովմ. Է. 1).

ԳԻՏՈՒՆ ԼԵՐՈՒՔ, Թրք. [illegible], (գիտացեալ լերուք).

ԳԷՏ, մասնաւոր առմամբ նշանակէ՝ քաղդեայ, գուշակ, Յն. γνώστης, Տճ. [illegible], Արաբ. [illegible], նշանակէ՝ գիտութիւն իրաւանց կրօնից, օրէնսգիտութիւն. եւ [illegible], (եզ.) [illegible] (յք.), նշանակէ՝ գիտուն, իմաստուն, տեղեակ աստուածային օրինաց, օրէնսգէտ, օրինաց վարդապետ.

Յորմէ 'ի մեզ՝

ՎՀՈՒԿ, ՎՈՀՈՒԿ, ('ի յոռի միտս առեալ). Բաղդ. գէն. (ըստ Արաբ.

ջէյն, հաւատք), ըստ մեզ՝ մոլար հաւատք, +էշ. Պրս. +էյշ՝ հաւատք, ըստ մեզ հեթանոսական կրօնք ։

— Ձեռն վճկաց մի՛ երթայցէք, եւ 'ի գէտս մի՛ յարեցիք (Ղեւտ. ԺԹ. 31)։ — Որ երթիցէ զհետ վհկաց կամ գիտաց (Անդ. Ի. 5)։ — Այր կամ կին, յորոց լինիցի վհուկ կամ գէտ, մահու մեռցի (Անդ Ի 27)։ — Եբարձ զվհուկս եւ զգէտս յերկրէ։ — Ցրուեցից զնշանս վհկաց (Ոսկ. Եսայ.)։

ՎՀԿՈՒԹԻՒՆ, — Ակն ունէր գիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ (Խոր.)։

Յորմէ

ՎՈՀՄԱԿ, — Բազում վոհմակք գայլոց շուրջ պատեցեն (Ոսկ. Մտթ.)։

Բաղդ. նախարար եւ նախիր, իշխան եւ խաշն։

Նաեւ

ԳԵՏ, բաղդ. չափ եւ եղէգն, կաղամար եւ կաղամախ։

ԳԷՃ, ԳԷՋ, ԳԻՃԻՆ, ԳԻՋՈՒԹԻՒՆ, ԳԻՃԱՆԱՄ, եւ 'ի հակառակէն

ԳԵՏԻՆ, բաղդ. նահանգ եւ նհանգ, կաւառ եւ գաւառ, ցամաք եւ ծմակ, ջուր եւ չոր, կաղամախ եւ կմախք, մկրտել եւ մակարդել։

ԶԳԵՏՆԻ ՀԱՐԿԱՆԵՄ, Թրք. [illegible], [illegible]։

Յն. γιγνώσκω, γνωρίζω, որ թարգմանի 'ի մեզ ճանաչել։

Թարգմանեալ է նաեւ՝

ՄՏԱՆԵՄ, (էրիկ մարդու վրայ խօսելով)։

— Եմուտ Ադամ առ Եւայ կին իւր (Ծննդ. Դ. 25). յն. ἔγνω, (ծանեաւ)։ — Ընդ արուի մի՛ մտանիցես զմուտ կանացի, զի պղծութիւն է (Ղեւտ. ԺԸ. 22)։ — Իբրեւ մտանէին որդիքն Աստուծոյ առ դստերս մարդկան (Ծննդ. Զ. 4)։

Մտանել բային այս նշանակութեան պատճառն այն է զի արմատն է՝

ՄԻՏ, միտք, Յն. μῆτις, μῆτος, Ձէնտ՝ [illegible], Սանս. [illegible], Լտ. meditatio, նշանակէ՝ մտածութիւն, meditor, խորհել, զմտաւ ածել, եւ Յն. γιγνώσκω, γνωρίζω բայից արմատն է νοός, որ նշանակէ՝ միտք, կարողութիւն գիտելոյ։

Յորմէ

ՀՄՈՒՏ։ Ձկազմութիւն բառից, բաղդ. հպարտ, հզօր, հլու, հնազանդ, հպատակ։

ՀՄՏՈՒԹԻՒՆ. ԱՆՀՄՏՈՒԹԻՒՆ, որ բարձմամբ Հ ին լինի

ԱՆՄՏՈՒԹԻՒՆ, 'ի խելամտութենէ՝ խելամուտ, եւ երկմտութենէ՝ երկմիտ, յայտնապէս ցուցանեն թէ 'ի միջէ ակամէ բնին միտ եւ

ՄՈՒՏ, — Տէր պահեսցէ զմուտ եւ զել քո (Սաղմ.)։ եւ երկոցունց եւս սեռականն է՝ [illegible]։

— Ոչ գիտացին եւ ոչ եղին 'ի մտի։ — Ո՞վ ժուժկալեսցէ աւուր մտի նորա (Եսայ.)։

Յորմէ

ՄՈՒԾԱՆԵՄ, իբր՝ [illegible], այսինքն, տալ մտանել։

Կազմութիւնը բաղդ. լոյս եւ լուցանեմ, եւ ճրագալոյց։

Իսկ

ՄՏԵՐԻՄ, է իբր՝ ներքին, թարգմ. Յն. ἐσώτατος, յոյժ ներքին։

Կազմութիւնը բաղդ. ո-խերիմ, հաւատ-արիմ։

ՄՈՒՏՔ, նշանակէ եւ արեւմուտք, եւ արեւմտեան կողմն։

— Արեւն 'ի մուտս էր (Ծննդ. ԺԵ. 17)։ — Արեգակն ծագելոյն եւ միջօրէին եւ 'ի մուտս դառնալոյն (Եզնիկ)։ — Բիւզանդիոն 'ի մտից կոյ Քաղկեդոնի։

Յորմէ

ՄՈՒԹ, — Կալաւ զխս մութ անձրեւին։ — Ընդ մութ շրջեցան։

ՄՈՒԹՆ, (սեռ.) մթան։

ՄԹԻՆ, — Եկին 'ի մթինն (Դ. Թագ. Է. 24)։

ՄԹԱՐ, — Երկաթն որպիսի՞ էնր էր մինչչեւ 'ի հուր մխեալ էր.մթաչ հրեղօք, յուրա 'ի չօչափել (Սեբ.)։ — Պարտի վպղտորութիւն աչացն, զաղանն եւ զքիմն 'ի բաց պարզել, զի մի՛ մթարքն՝ որ զբբօքն չողոյ-ցեն, արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն լիցին (Եղնկ)։

Այսպէս եւ

ԽԱԻԱՐ, եւ պարսկային հնչմամբ խավէր, որ ըստ նոցա նշանակէ բէ-խապէր, նշանակէ 'ի մեզ՝ լուր։

Յն. ζόφος, նշանակէ՝ խաւար, ե-րեկոյ, արեւմուտք։

ԽԱԻԱՐԻՆ, էն մանրիկ, որպէս մթ-ին, երեկոր-ին, (ըստ յետնոց՝ խաւարային)։

— Տաց քեզ զգանձս խաւարինս, եւ զգանձս աներեւոյթս բացից քեզ (Եսայ.)։ Յն. չիք զգանձս։ — Մար-մինն խաւարին եղիցի... եթէ չգու-ցէ մասն ինչ խաւարին (Ղուկ. ԺԱ.)։ — Իմ որդին անուշահոտ եւ լուսա-ւոր է, եւ դու խաւարին եւ ժան-գահոտ ես (Եղծ.)։

Ա՛յլ է

ԽԱԻ(*), յորմէ

ԽԱԻ Ի ԽԱԻ, — Ցորժամ յաճախ-եալ բազմասցի մեղքն խաւ 'ի խաւ, մթեր առ մթեր (Վեցօր.)։

ԽԱԻ Ի ԽԱԻՈՑ, — Կէսքն միակե-ղեւք են, եւ կէսքն խաւ 'ի խա-ւոյք (Անդ.)։

Պրս. խէֆ՝ նշանակէ՝ պատատանք, ծրար, ծալք հանդերձից։

Յորմէ (խաւար)

ԳԱԻԱՌ, քանզի 'ի Պարսից բար-բառ, խավէր, որ նշանակէ արեւ-մուտք, նշանակէ նաեւ արեւմտեան կողմն, եւ եւս լայնաբար՝ կողմն, մարզ, աշխարհ, գաւառ, եւ Պրս. խավէրէէ-զա՝ թարգմանի 'ի մեզ՝

(*) Ոչ 'ի դէպ թուեցաւ մեզ զխաւ դնել արմատ խաւարի, զորիշն եւ զանչատն 'ի նմանէ ըստ իմաստին սեմաւ խարգեցաւ, եւ

ԳԱԻԱՌԱԳԵՏ, յորմէ (գաւառ) 'ի հակառակէն՝

ԿԱԻԱՌ, Չըռնօգ. բաղդ. հահանգ եւ նհանգ, գետին եւ գէտ, ցամաք եւ ծմակ, չոր եւ ջուր, թրծեմ եւ թրջեմ, կմախք եւ կաղամախ, ոտ-տին եւ ոտինք, մակարդեմ եւ մը-կրտեմ։

Նաեւ

ԳՏԱՆԵՄ, նոյնանայ իմն ընդ՝ գէ-թէմ, եւ արմատք՝ գէտ եւ գիւտ, եւ միապէս ասի՝

ՀՆԱՐԱԳԷՏ եւ ՀՆԱՐԱԳԻՒՏ.

ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ, (հնարք գտանե-լը եւ հնարք գիտնալը)։

Պրս. Էաֆրէն, որ նշանակէ բուն՝ գտանել, նշանակէ նաեւ՝ գիտել ի-մանալ, եւ Թրք. նմանաձայնք են՝ պէլմէք եւ պուլմագ, (գիտել եւ գտա-նել)։ — Ոչ կարասցէ մարդ գտա-նել զարարածն արարեալ 'ի ներքոյ արեգական... քանզի որչափ աշխա-տեսցէ իմաստունն գիտել, ոչ կարասցէ գտանել (Ժող. Ը. 17)։ — Եթէ ոչ էր ճնչեալ զերինջն իմ, ոչ գտա-նէիք զառակս իմ (Դատ. ԺԴ. 18.. Յն. οὐκ ἂν ἔγνωτε, ոչ գիտէիք, աշխ. չէիք գիտնար։

Յորմէ

ձայնիցն մերձաւորութիւն անզօր է՝ ոչինչ օգ-նեալ 'ի հաստատութիւն կարծեացն։ Եւ մինչ-սոր, «Կնգուղն եղիցի առանց խաւու» (Վրք. Հրց.), տայ մեզ իմանալ զխաւն՝ լինել փա-թոյթ զկնգղաւ ածեալ։ Սակայն Ն. Հյկ. Բռ. զխաւ համարի լինել արմատ խաւարի, նաեւ Հ. Աւգէն Վ. Բագրատունի 'ի դիւցազնա-կանն վէպսն, յետ կոյս մասնենին, 'ի տե-ղեկութիւնս 'ի գրուածն ԺԶ. այսպէս ունի, «Խաւար 'ի վերայ անդնդոց կամ անդունդք խաւարին, Հելլենաբար χάος, խաւ, կամ ըստ լեզուիս մերոյ բնութեան առ 'ի յաւելել զձայնաւորն՝ խաւար, (տես զՔերականու-թիւն 'ի պէտս Զարգացելոց 1408) որ յայտ-նապէս 'ի խաւ արմատոյ է, յորմէ եւ առ մեզ խաւար, ոչ Հելլէն ածանցութեան մասնիկ առ-վորական, այլ՝ հայացի»։

ԳՏԱԿԱՒ, (մկ.) իբր՝ գիտնալով, ճշգիւ, ոչ յախուռն կամ ոչ ըստ դիպաց։ — Եղջերուաց գտակաւ զժամանակ խառնիցն խմանալոյ (Եզնիկ)։ — Ճշգիւ գտակաւ 'ի հանգիսի անցուցանել (Սեբեր)։

Ցորմէ (գտանեմ) 'ի հակառակէն՝

ՍՏԳՏԱՆԵՄ, իբր Թրք. ([illegible]), ըստ մեզ այսպէս կը մեկնուի, սակայն

ՍՏԳԻՒՏ, Յն. κατάγνωσις, կը բացատրուի՝ [illegible] բայով, զի καταγνώσκω, καταγιγνώσκω ըստ մեզ ստգտանել, ըստ ձայնին է՝ [illegible]։

— Եթէ ստգտանիցէն զմեզ սիրտք մեր, այլ Աստուած մեծ է քան զսիրտս, և գիտէ զամենայն։ Եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած (Ա. Յովհ. Գ. 20—21)։ յն. καταγινώσκω։ — Քանզի գո՛գ ստգտանեալ իսկ էր (Գաղատ. Բ. 11)։ յն. καταγινώσκω։

Այս օրինաց համեմատ եղած են՝ ստուգանեմ, ստեղծանեմ, ստանձնեմ, ստերիւրեմ, ստահակ, ստամբակ։ Տես զբաղդ։

ԱՆՍՏԳԻՒՏ, Յն. ἀκατάγνωστος, ան ըստ գէտ α κατὰ γνωστος։

Բաղդ. ունին զնեմ և ստուգանեմ, եղծանեմ և ստեղծանեմ, յանձն առնեմ (յանձնեմ) և ստանձնեմ, հակամէտ (հակեալ միտեալ) և ստահակ, համբակ և ստամբակ, լերիւրեմ և ստերիւրեմ։

— Դիոգինէս՝ համբակ անտանելով ստահակեալ, զմանկածուն մանչեաց (Պիտ.)։ — Տեսեալ զմանուկ ստամբակ, զմանկածուն գաւազանաւ եհար։

Ստ, է՝ (նխ.) որ բառի մը վերայ գալով՝ հակառակը նշանակել կուտայ, այսպէս և 'ի Յն. κατά (ըստ) եթէ սեռական խնդիր առնէ, կը նշանակէ՝ հակառակ, իսկ եթէ (հյց.) κατὰ τῶν λόγων σου, հակառակ բանից քոց. κατὰ τὸν λόγον σου, ըստ բանի քում։

ՕԳՈՒՏ, (սես) օգուտ. (աւ, գա=գիւտ։

ՕԳՏԻՄ, աս այ [illegible] բայն է յուն. ἐυ (բարի) խառնուրդով մը, ուստի [illegible] 'նշանակած կ'ըլլայ՝ [illegible] [illegible]. և [illegible] (բարիս գտանել)։

— Տեսանէ՞ք զի ոչինչ օգտիք։ — Ոչինչ օգտեցան որ այսպէսն ըրնացին։ — Եթէ զուէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։

Այսպէս և

ՕԳՆ, (աւգն)։

ՕԳՆԵՄ, ԱՒԳՆԵՄ, կազմի 'ի յունական ἐυ, (բարի) և γνωρίζω, (գիտել)։ և քանզի գիտելն և գտանել խակ է, որպէս ցուցաւ 'ի վերայ, վասն այնորիկ Յն. γνωρίζω առեալ է ըստ մասաց հայկականին. իբր՝ εὐγνωμοσύνη։

— Արք հինգ հարիւր եկին յօգն քրմին Դեմետրեայ (Զենոբ)։ Իսկ 'ի Սաղմ. ԾԺԳ. 7, — «Դա՛րձ, անձն իմ, 'ի հանգիստ քո, զի տէր օգնեաց քեզ»։ ա՛յլ թարգմանութիւն (Ոսկ. Եբր.)։ «Դարձ, հոգի իմ, 'ի հանգիստ քո, զի տէր բարի արար քեզ»։ յն. εὐεργετέω։ — Արք Իսրայելացիք, օգնեցէ՛ք (Գործ. ԻԱ. 28)։

Այսպէս և

ՕԺԱՆ, ԱՒԺԱՆ, յունականուս ἐυ, և [illegible] բայի։

Ցորմէ

ՕԺԱՆԴԱԿ, ԱՒԺԱՆԴԱԿ։

ՕԺԸՆԴԱԿ, ՕԺԱՆԴԱԿԵՄ, խակ

ՃԱԿԱՃԱՆ, — Ցայրատ, աղտեղի և ճակաճան (Եփր. Թուղ.)։ — Ցանկականին որ ըստ առողջմտութեան և ճակաճանութեան (Փիլ.)։

Բառս բարդ է, ճաք և ճան։ Ճակ՝ թուի լինել Թրք. [illegible], կամ [illegible] (մասնակ ձի), և ճան, 'ի ճանաչելոյ, որ նոյնանայ ինն ընդ [illegible], ըստ իմաստից որ ցուցաւ 'ի վե-

րոյ, եւ նշանակէ՝ իգամոլ. Յն. θ-η λυμανής. Բաղդ. մատակախաղ.

Եւ

ՃԱՆԱՉԵՄ, Պրս. դանիշթէն, Եբր. դան, Թրք. ... Զէնա՝ զէնա, ժէնա՝ է ճանաչել, գիտել.

Մերս թուի բարդեալ բառիւս՝ աչք, իբր՝ գիտել, ծանօթանալ աչօք, 'ի ձեռն աչաց.

Յորմէ

ՃԱՃԱՆՉ, լոյս. բաղդ. արեւ եւ երեւիմ, երեւելի, երեւոյթ եւ առաւօտ. քանզի 'ի ձեռն լուսոյ եւեթ մարթի ճանաչել ինչ.

— Ո՞չ ապաքէն խաւար է օր Տեառն, եւ ոչ լոյս. աղջամղջին, եւ ոչ գոյ 'ի նմա ճաճանչ (Ամովս Ե. 26). յն. φέγγος. — (Իմաստութիւն) ճաճանչ է Աստուծոյ զօրութեանն (Իմաստ. Է. 25). յն. ἀτμίς.

Եւ

ԾԱՆՕԹ,

ԾԱՆԱԿԵՄ, յայտ առնել ('ի յոտի միտս), նշաւակել, առակել.

ԾԱՆԱԿԱՆՔ.

ՈՐՋԱՆ, բարդեալ ո՛ր զան, իբր՝ որ պէս. բաղդ. որգոն.

ՀԻՋԱՆ, բաղդ. հիւար.

ՋԱՆԱՋԱՆԵՄ, ՋԱՆԱՋԱՆ, թարգմ. Պրսկ. ..., Թրք. ... Իբր՝ ազն ազն, որպէս ունիմք՝ ազգի ազգի.

զ ա ն   զ ա ն
2 1 3   5 4 6

Յորմէ

ԱԶՆ, բաղդ. ցեղում եւ ցեղ, եւ զկազմութիւնն բաղդ. տէր եւ տրէ.

Եւ

ԶՆՆԵՄ, Ի ԶՆԻՆ, յորմէ 'ի հակառակէն

ՆՆՋԵՄ, բաղդ. քննեմ եւ քունեմ, կազմութիւնը բաղդ. սրանում եւ սարջանամ, եւ զեղչեմ.

— Ես ննջեցի եւ 'ի քուն եղէ (Սաղմ.). — Ննջեցին զքունս իւրեանց, եւ ինչ ոչ գտին (Սաղմ.). — Նոցա այնպէս թուեցաւ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ (Յովհ. ԺԱ. 13).

ՆԻՆՋ, յորմէ 'ի հակառակէն

ՋԱՆ, բաղդ. քուն եւ գուն գործեմ, աքնիմ եւ ճգնիմ.

ՋԱՆԱՄ, — Ի մտի եղի թէ սակայն եւ այս ջան է առաջի իմ Սաղմ. ՀԲ. 16). Իսկ 'ի Սաղմ. ՂԴ. 10, «Ջանացայ ընդ ազգին ընդ այնմիկ», տարբեր թարգմանութեամբ ածեալ է 'ի վկայութիւն. Եբր. Գ. 10. «Տաղտկացայ ազգաւն այնուիկ». (յն. προσώχθισα)... Յումէ՞ տաղտկացաւ... ո՞չ ապաքէն 'ի յանցուցելոցն (Անդ. 17). — Իբրեւ օրհասականք ընդ ոգիս ջանայցեն, եւ իբրեւ զարջս, եւ իբրեւ զաղաւնիս առ հասարակ տռնչեսցեն». յն. στενάζουσιν (հառաչեսցեն).

Մերս իբր թարգմանութիւն Թրք. ... Յորմէ եւ Եղիշէ, «Արջք օրհասականք ընդ վախճանել չնչոյն հզօրագոյնք կռուին».

Միտք (տես 'ի վեր անդր) նկատի իբր՝ ուղղութիւն, եւ ըստ այսմ, բաղդ. ուղիղ, ուղեղ, ղեակ, խելք նաւու.

Յորմէ 'ի հակառակէն՝

ՄԷՏ, ՄԻՏՈՒՄՆ, իբր՝ խոտորումն.

ՄԻՏԻՄ, ԱՆՄԷՏ, բաղդ. բուփղ, չուփղ եւ չեղիմ.

ԽՄԱՆԱՄ, — Եւ խմացաւ Յովաբ ... եթէ է սիրտ արքայի 'ի վերայ Աբիսողոմայ (Բ. Թագ. ԺԴ. 1).

Արդէն ցուցուած է (տես 'ի վեր անդր), թէ ... եւ ... ծագած են 'ի բառէս միտք. եւ այս բայն ալ երրորդ է, որ կը միանայ անոնց հետ, սակայն կարի այլափոխեալ, եւ այս ալ՝ չշփոթելու համար է ընդ բային՝ միանամ.
Կազմութիւնը բղդ. հեծանիմ եւ ձի.

Յորմէ

ԱՊԻՄԱԿ, իբր՝ որոյ ոչինչ փոյթ

է իմանալոյ, ուսանելոյ, որ չախար-ժէ իմանալ, ուսանել ։

—Զորգիս կամ զծառայս՝ յապի-մակս (ապիմա՞կս) կամ ստահակս յօժարեցուցանիցէ հանել (Եզնիկ) ։

*

ԽԱՐՈՅԿ, — Կայծն անդ ծառայքն եւ սպասաւորք խարոյկ արկեալ, (քանզի ցուրտ էր) կայր ընդ նոսա եւ Պետրոս եւ ջեռնոյր (Յոհ. ԺԸ. 18). յն. ἀνθρακιά ։ — Լուցին խա-րոյկ, եւ ընկալան զմեզ զամենե-սին ... 'ի ժողովել Պօղոսի խռիւ ինչ բազում եւ դնել 'ի վերայ խարու-կին եւայլն (Գործ. ԻԸ. 2). յն πυρα ։

Արաբ. հօրէֆ, նշանակէ՝ խանձող եւ հրդեհ, եւ հարրաֆ, խանձ, լուց-կի, նիւթ վառելի ։

Իսկ

ՀՐԴԵՀ, Պրս. խիւրտէ, խիւրտէհա, Նշ. ցնցուղք հրոյ, Տճ. ֆըշկըրըմ ։

*

ՆԱԶԱՆՔ, Պրսկ. նազ, նազիշ, նոյն նշանակութեամբ ։

ՆԱԶԵՄ, Պրսկ. նազիտէն, նոյն նշանակութեամբ ։

*

ԳԻՇԵՐ, Թրք. կէճէ նոյն նշ ։

— Ել արտաքս վաղվաղակի, եւ էր գիշեր ։

*

ԱՐԴ, (մկ.) հիմայ, Յն. ἄρτι ։

— Արդ փառաւորեցայց, արդ յա-րեայց (Եսայ.) ։ — Բայց արդ եր-թամ ես առ առաքիչն իմ (Յոհ. ԺԶ. 5) ։ — Ահա արդ յայտնութեամբ խօսիս (Անդ 29) ։ — Որք երբեմն չժողովուրդք, բայց արդ ժողո-վուրդք ։ Յորմէ — Զեւ ես կարէիք, նաեւ արդ իսկ ոչ կարէք (Ա. Կորնթ. Գ. 2) ։

ՅԱՐԴ, ճիշտ հիմայ, եւ

ԱՐԴԻ, իբր՝ նոր, հիմակուան ։

Եւ

ԶԱՐԴԻՍ, (հիմայ) ։

— Եւ զարգիս սակս ձեզ, 'ի բաց կացէք յարանցդ յոյդցանէ (Գործ. Ե. 38). յն. τὰ νῦν ։ Իսկ Ա. Տիմ. Դ. 8), «Աստուածպաշտութիւն առ ա-մենայն ինչ օգտակար է, եւ զա-ւետիս կենաց ունի՝ զարդիս եւ ըդ-հանդերձելոցն». յն. εὐαγγελίαν ἔχουσα ζωῆς τῆς νῦν καὶ τῆς μελούσης. (Ներկայ եւ հանդերձեալ կենաց խոս-տումն) ։

Արդ, այս խօսքին մէջ «ղուրպէթ» սովորաբար այժմ ըսել չէ, հապա ղարիպլիքին ղ նախդիրը կրկնուած է, եւ թուրք բառն ալ՝ սեռական կեր-պարանքով — դիմորոշ առած է, ինչպէս կը հասկըցուի յաջորդ բա-ռէն հանդերձելոց, (սեռ.) որ նոյնպէս ղ նախդիր եւ դիմորոշ յօդ առած է, իբր թէ լինէր՝ զ-այժմ-ուս ։ Արդ կը թուի թէ այս բառը առաջին ան-գամ այս պարագայիս մէջ կազմուած եւ գործածուած է, եւ ապա լայ-նաբար 'ի կիր արկեալ՝ իբրեւ այժմ ։

Եւ

ԱՐԴ ԵԻՍ, — Դուստր իմ արդ եւս վախճանեցաւ ։ Եւ

ԱՐԴԻԾՆԵԱԼ, — Իբրեւ արդի ծնեալ մանկունս անխարդախ կաթինն փա-փաքիցէք (Ա. Պետր. Բ. 2) ։

Բոլոր տպագրութիւնք զատ կը գրեն՝ արդի ծնեալ, եւ ընդհանրա-պէս այսպէս ճանչցուած եւ ընդու-նուած է. սակայն բանաւոր կը թուի՝ բարդեալ ըմբռնել ափկայ, նման Յունականին որ կ'ըսէ, ἀρτιγέννητα (Նորածին, Նոր ծնեալ) ։

Կայ նաեւ

ԱՐԴԻ ՀԱՐՍՆ, իբր՝ նոր հարսն ։

ԱՐԴԷՆ (յառաջագոյն). — Յարու-թիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է (Բ. Տիմ. Բ. 18) ։ Բաղդ. վաղ եւ վաղիւ, երեկ եւ երէկ, յառաջ (ա-ռաջ) եւ յառաջ (եառքը) ։

Յորմէ (արդ) 'ի հակառակէն

ԱՐԴ, (գյ.), ձեւ կերպարան, փա-յելչութիւն ։

— Ոչ միայն արդուց եւ զարդուց արարիչ է, այլ յոչընչէ առնել բաւական (Եզնիկ)։

ԱՆԱՐԴԻՒ, իբր՝ առձեռ, անհնթեթ, անճառնի։ Բաղդ. անհեթեթ։ Տես եւ՝ առդաւարա։

Վերջին վանկը էւ մասնիկ է, որպէս եւ էւ, եւ, էւ, էւ, է-ւ, -ւ, 'ի բառս՝ շ-----էւ, ------եւ, էրէ-եւ, էրէ-է-ւ, ---------ւ։

ԶԻ՛ԱՐԴ, իբր՝ զի՞ արդ, այսինքն, է՞ինչ իչին, է՞ինչ չիւն, է՞ինչիւն։

Բաղդ. ո՛րգոն, հի՛բար, ո՛րպէս, ո՛րկէն։

Իսկ Յոբ. ԺԳ. 19, (*) «Ո՞վ է ոսոխն իմ, զի՞ արդ կարկեցայց եւ պակասեցայց», ընթերցի՛ր զէ -րդ, Յն. ὅτι νῦν. աշխ. -ր հիմա։

Եւ

ԱՐԴԱՐ (**), Յն. ἄρτιος, բաղդ. ճարտար։ Յորմէ

ԱՐԴԱՐԵ՛Ի, իբր -րդ-ր-ե-, (գրծ.) էր --, էր-օ+, հ------ե--։

ԱՐԴԵՕՔ, ըստ հին գրչութեան՝

ԱՐԴԵՒՔ, իբր հարցական կամ տարակուսական։

— Կերա՞ր արդեօք։ — Ո՞վ արդեօք իցէ սա։

Եւ 'ի հակառակէն՝ իբր հաստատական՝

— Եթէ թշնամւոյն նախատեալ էր, համբերէի արդեօք, կամ ատելւոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ, թաքչէի արդեօք 'ի նմանէ (Սաղմ.)։ — Եթէ գիտէիր թէ ով է ... դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ (Յովհ. Դ. 10)։ — Զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց 'ի խաչ հանէին (Ա. Կորնթ. Բ, 8)։

ՅԱՐԴԱՐԵՄ, Յն. ἀρτίζω, նոյն նշ. (պատրաստել)։ — Գտանէ զնոս մաքրեալ եւ յարդարեալ (Մտթ. ԺԲ. 44)։

Եւ

ԱՐԴԻՒՆՔ, յորմէ (արդ)։

ԱՌԻԹ, ԱՌԹԵՄ, եւ

ԶԱՐԴ, — Ոչ միայն արդուց եւ զարդուց արարիչ է (Եզնիկ)։

Տե՛ս եւ կազմութիւն։

— Աստեղք երկնից Հայկիւն համգերձ եւ ամենայն զարդուն երկնից լոյս մի՛ տացեն։

Եւ

ԱՐԹՈՒՆ, -ուն՝ մասնիկ է, որպէս եւ 'ի բառս թռչ-ուն, սող-ուն, զեռ-ուն, կանգ-ուն։

Յորմէ

ԶԱՐԹՆՈՒՄ, յորմէ

ԶՈՒԱՐԹՈՒՆ, ԶՈՒԱՐԹ, կամ Յն. νήφω, արթուն՝ զգօն՝ զգաստ լինել, չարբենալ, զգուշանալ 'ի գինւոյ։ Աշխ. ...

— Այլ դու զուարթ կաց յամենայնի (Բ. Տիմ. Դ. 5)։

Յորմէ 'ի հակառակէն՝

ԶՈՒԱՐԹԱՆԱՄ, — Իբրեւ զուարթացան սիրտք իւրեանց, ասեն, կոչեցէք զՍամփսոն 'ի տանէ բանտին, եւ խաղասցէ առաջի մեր (Դատ. ԺԶ. 25)։

Եւ կ'ըսուի՝ զուարթանալ 'ի գինւոյ, Տճ. ...։

— Տեսէ՛ք, յորժամ զուարթասցի սիրտն Ամնոնայ 'ի գինւոյ ... հարէք եւ սպանէ՛ք (Բ. Թագ. ԺԳ. 28)։

Յորմէ

ԶՈՒԱՐՃԱՆԱՄ, յորմէ իբր համառօտեալ

ՀՐՃՈՒԻՄ, յորմէ (արդ)

ՀԱՐԹ, ՀԱՐԹԵՄ, դիւրել, ուղղել, յարդարել։

— Հարթ արասցէ կամ փոխեսցէ զդժուարինն 'ի դիւրինս, եւ զառապարն 'ի հարթ ճանապարհս։

(*) Տես զայսմանէ 'ի բառն՝ ...։

(**) Պրսկ. ...՝ նշանակէ արդար, եւ մերս ձեւացեալ է առր վրայ, զի ...՝ նշանակէ՝ արդարութիւն, իսկ մասնիկդ ...՝ կը ծագի ... բառէն՝ որ նշանակէ՝ բերող, պատճառող, տուիչ, եւ է ներկայ ընդունելութիւն ... բային, որ նշանակէ՝ բերել, պատճառել, տալ։

Եւ

ՋԱՐԴԵՄ, առանց ամենևուն արմատն է Յն. ἄρω, պատրաստել, ճըշդել, յարմարել, լծորդել, յարմէ ἄρτιος, արդար, յարդարեալ, պատրաստ. կազմութիւնք՝ կատարեալ, համեալ, համուն։

Իսկ

ՀՈՐԴԵՄ, մի՛ շփոթեր ընդ յորդեմ։

ՀՈՐԴԱՆ ՏԱՄ, (հօտը) անդէն հանել՝ ուրիշ տեղ մը տանելու համար։ Յն. ὀρθός, ուղիղ, եւ ὀρθόω, ուղղել, առաջնորդել, տրամել, հովուել։ — Հորդան ետ որպէս խաշին ժողովրդեան իւրում (Սաղմ. Հէ. 52)։

Յն. κόσμος, նշանակէ՝ պատրաստութիւն, զարդ, աշխարհ։

Յարմէ 'ի մեզ՝

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ԿԱԶՄԵՄ, Յն. κοσμέω։

—Յարեան ամենայն կուսանքն, եւ կազմեցին զլապտերս իւրեանց (Մատթ. ԻԵ. 7). յն. ἐκόσμησαν։ — Կազմեցէք զէշն, եւ կազմեցին նմա էշ. եւ ել 'ի նա եւ գնաց (Գ. Թագ. ԺԳ. 13). ուր քիչ մը եարը կ'ըսէ, «Համդերձեալ էշ մարգարէին։ — Համդերձեցէ՛ք զէշն, եւ համդերձեցին»։ (Տե՛ս համդերձեմ, պատրաստեմ, համեմեմ)։

Ի գիրս Իմաստ. «Քանզի 'ի պճրոգնաւոր համդերձին էր ամենայն աշխարհ». Յն. κόσμος։ Եւ Յակ. Գ. 6, «Լեզու հուր՝ աշխարհ անիրաւութեան». Յն. κόσμος։

Ուրիշ է

ՅՈՐԴՈՐԵՄ, քաջալերել, Լտ. Hortor, նոյն նշանակութեամբ։

ՅՈՐԴՈՐ, եւ

ՅՈՐԴՈՐԻՉ, Լտ. Hortator, Hortatrix։

* * *

ՋԸՆԴԱՆ, Թրք. զընտան, բանտ։

- Տարան յայն զընդան (Եղիշէ)։

* * *

ՈՐԳՈՍՏԱՑ (*), բառ մը որ միայն հասկընալու համար պէտք է գիտնալ, եւ միայն մէկ տեղ մը գործածուած է։

— Ելին ընդ առաջ մեր մինչեւ յՈրգոստայն Ապփեայ, եւ Երեք Կրպակաց (Գործ. ԻԸ. 15). յն. ἀππίου φόρος τριῶν ταβερνῶν, եւ թուի լինել Յն. ἐργαστάσιον, որ թարգմանի՝ գործատնոց, վաճառատուն, կամ ἐργαστήριον, նոյն նշանակութեամբ։

* * *

ՓԲԻՆ, նետ, Պրս. բէյքէան, նոյն նշանակութեամբ։

— Ի քէն եւ այր է փքինդ... 'ի քէն եւ անդր է փքինդ։

* * *

ՈՐՐԱՆ, Պրս. խօրրան նշ. գագաղք։

Յարմէ

ՈՐՐՈՑ.

* * *

ՆԱՒԹՃԵՄ, ՆՕԹՃԵՄ, նշանակէ աւետել, Պրս. նէվէյտ, նշանակէ բարի լուր, աւետիք. 'ի մեզ ճ աւելացրութեամբ է առ 'ի չշփոթելոյ ընդ նաւթեմ (նաւթիւ օծանել)։

* * *

(*) Ապփիոսի վաճառանոցը էր գիւղ կամ քաղաք վաճառաշահ։ Ապպիոս Կլաւդիոս շինեց այս տեղ՝ Ապպիոս կոչուած մեծ ճամբուն վրայ, զոր շինեց Հռոմէէն մինչեւ Կապուա։ Համանախանապէս յիշեալ վաճառանոցն այժմու Բորղէտօ տէ Սանտա Մարիա կոչուած տեղն է, քառասուն մղոն հեռու 'ի Հռոմայ, Բանդին կոչուած ճահիճներուն եզերքը, ուր կան հին քաղաքի մը աւերակներն. Երեք կրպակք կամ երեք պանդոկներ կոչուած տեղը՝ գիւղ էր, իբրեւ տասն մղոն հեռու 'ի Հռոմայ։ (Բառարան Ս. Գրոց)։

ԼԱՑՆ, բազդ. երկայն եւ երկար, Նեղոս (գետ) եւ Նեղ։ Թուի ծագեալ 'ի Յն. λεκάνη, յորմէ 'ի մեզ

ԼԱԿԱՆ, գրեալ եւ ԼԿԱՆ, ՂԵԿԱՆ, Թրք. լէյէն։

— Բարձր են երկինք, եւ դու զի՞ գործիցես. երկայն է չափ երկրի, լայն է ծով (Յոբ. ԺԱ. 9)։

Իբր զի զմիջերկրեայ ծով շուրջ պատէ ցամաք, (առափ Եւրոպէ եւ Ասիա, եւ Ափրիկէ անտի, եւ ջուրն 'ի միջի իբրեւ 'ի լկանի կայ), յորմէ եւ Յն. μεσόγαιος, զանուանն կալաւ։

Երկիր, էր վերջաւորութիւնն է Թրք. Եէր, որ նշ. երկիր, եւ Յն. ὁ οὐρανὸς (երկին) արական է, իսկ ἡ γῆ (երկիր) իգական ։ Իսկ (Յուդիթ Բ. 7). «Պատրաստիրեցես նոցա, զի պատրաստեսցեն զերկիր եւ զջուր. յն. ἑτοιμάζειν γῆν καὶ ὕδωρ (հող եւ ջուր) ։ Այս՝ արեւելեան թագաւորաց զրուցուած մըն է, յաղթողը պարտեալէն հող եւ ջուր պահանջել, 'ի նշան բացարձակապէս հպատակութեան կամ նուաճման ։

Յունաց պատմութեան մէջ (Տես 'ի Հերոդոտոս գիրք Զ) կը կարդանք. — Դարեհ արձակեաց հրեշտակս ընդ ամենայն Յունաստան թէ «տուք ինձ զհող եւ զջուր» քանզի այսպէս կոչէին պարսք 'ի հնազանդութիւն զազգս ... այլազգ 'ի Սպարտա եւ յԱթէնս ընկալեալ եղեն հրեշտակքն Պարսից. քանզի բնակիչք քաղաքացն զմին 'ի նոցանէ 'ի ջրհոր, եւ զմիւսն 'ի վիհ խոր ընկեցին՝ որպէս տալով նոցա զհող եւ զջուր զոր խնդրէինն՝ եւ ոչ անդ զկայ առեալ արմատութեան Աթենացւոց, այլ եւ զթարգմանն 'ի մահ դատապարտեցին իբրեւ պղծիչ Հելլէն բարբառոյ՝ ըզ-խուժադուժ թագաւորի բացատրելով այնու զպատգամս (Անաս. Հտ. Ա. էջ 189 ։ Պլուտ. 'ի Թեմիստոկլ էջ 114 ։ Ռոլ. Հին. Հտ. Բ. էջ 70) ։

Ցորոց (երկին եւ երկիր)

ԵՐԿԱՅՆ եւ ԵՐԿԱՐ, բաղդ. լայն, նեղ ։ Իսկ

ԱՐԳԱՍԻՔ, Յն. ἐργασία, նոյն նշ. այսինքն՝ շահ, օրդէկան ։ — Տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ (Գործ. ԺԹ. 24). յն. ἐργασία ։ — Ցայամ գործոյ է շահ մեզ (Ագաթ 25) ։

Ցորմէ

ԶԱՐԳԱՆԱՄ, ԶԱՐԳՈՒՆ,

ԱՐԳՈՅ ՕՐ, իրր՝ օր էրգոյ՝ …, Յն. ἐνεργὸς ἡμέρα, աշխ. … օր. իրր՝ … օր, գիմարաժանեալ՝ … ։ — Դուռն ... որ հայի ընդ արեւելս, եղիցի փակեալ զվեց աւուրսն արգոյս (Եզեկ. ԽԶ. 1) ։

Որ կ'ըսուի նաեւ՝

ՕՐ ԳՈՐԾՈՅ, — Եկեսցես 'ի տեղին քո ուր թաքեային յաւուրն գործոյ (Ա. Թագ. Ի. 19). յն. ἐν τῇ ἡμέρᾳ τῇ ἐργασίμῃ ։ Ցորմէ եւ

ՅԱՐԳԵՄ, — Յարգեցէք զայգ (ըզ-մեսագ) մինչեւ եկից (Ղուկ. ԺԹ. 14). յն. πραγματεύω, … ։

(Տե՛ս հարկիք, հարկիմ) ։ Ցորմէ

ԱՐԳՈՅՍ եւ ՅԱՐԳՈՅ ։ Ուրիշ է

ՀԵՐԻՔ, Յն. ἄρχιος ἀρκετὸς ։ Տես եւ բաւական ։

ՀԵՐԻՔԱՆԱՄ, Յն. ἀρκέω, (հերիքանալ, եւ բաւական լինել, ըստ կրկին նշանակութեանն) ։

Ցորմէ (յարգել) 'ի հառակէն՝

(*) Սանսքրիթ՝ սուարկա ։ (Տես զայսմանէ Համա. Քեր. Բոպ. Հտ. Բ. էջ 413, Ծանօթ. 2) ։

ՀԵՐԿԵՄ ։

ԱՐԳԱԴԻՐ, Յն. ἐργατικῶς, (ճարտարութեամբ, ճարտար արուեստէ՝ եղանակաւ)։

ՊՂԵՐԳ, իբր՝ առեցող երկոյ՝ ճառտակոյ, ծոյլ, Յն. ἀργός։

Յորմէ (երկ) 'ի հակառակէն՝

ԵՐԳ, — Նա է հայր որ եցոյց զերգս և զքնարս (Ծննդ. Դ. 21)։ Յն. Նա է որ եցոյց սաղմոսարան և քնար։ Եբր. Նա է հայր երգեցողաց և քնարահարաց։ — ἦν δὲ ἆσμα ἐπιμύλιον οὕτω καλούμενον, (Եղիան. յոյն եւ այլոց. Փէր՝ Է. Գլ. 4)։ մանաւոր երգ մը կար, կ'ըսէ, որ երբ աղօրեայ, կամ երբ ... կը կոչուէր։ Այս երգը Պլուտարքոս մեզի հաւացած է 'ի գիրսն՝ Իմաստնոց եօթանց խնամանոց։ — ἄλει, μύλα, ἄλει· καὶ γὰρ Πιττακὸς ἀλεῖ, μεγάλας Μιτυλάνας βασιλεύων. աղա՛, աղօրեակդ իմ, աղա՛, քանզի և Պիտտակոս աղայ, մեծաց Միտիլինացւոց թագաւորն։

Յն. τὸ ἱμαῖον (երգ ջրհորոյ կամ երգ առ ջրհորովք)· զի ἱμάω, նշան. հանել զջուր, ... Այսպէս ամենայն տանին վատառակոց կանանց կցորդէին երգք, և երգոցն անուն կոչէր՝ ἔλινος։

— Անդ ամուսնոյն սփոփեալ զերկայն վաստակն յերգոց մրմնջնուքը 'ի բէճ 'ի սրահայն սահեալ յատայն երթևեկէ (Վէրգ. Մշակ. Ա.)։

Եւ

ԱՐԳԱՆԴ, յորմէ

ԱՐԳԱՒԱՆԴ, բաղդ. բեղմնաւոր կամ բեղնաւոր։ Զյաւելուածդ ...՝ տե՛ս և 'ի ծալեղն և 'ի ծաւալել, հասարակ և հաւասար։ Յորմէ

ԱՐԳԱՀԱՏԵՄ, որպէս՝ ..., յորմէ՝ ... այսպէս և Յն. κοιλία, ..., և κηλέω, ...։ Արար. ..., արգանդ և գթութիւն։

Իսկ

ԳՈՐԾ, համառօտեալ 'ի Յն. բառէս՝ γεοργία, ..., և γεοργός, նշանակէ մշակ, և իբր յատուկ անուն

ԳԷՈՐԳ (*)։

ԳՈՐԾԵՄ, — Գործել (Յն. ..., ...) ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ (Ղուկ. ԺԶ. 3)· յն. σκάπτω։

ԳՈՐԾՕՆ, — Երթ առ մեղուն և ուսիր զինչ գործօն է (Առակ. Զ. 8)· յն. ἐργάτης։ — Ոչ գործեցես անզգամնկան եղին քո, և մի՛ կլաբեցես զանզգամնիկս հօտից քոց (Օրէն. ԺԵ. 19)։ — Գործեա՛ զերկիր, զի այսուհետև ոչ եւս զան նաւք 'ի Կարքեդոնայ։ — Որ առ զհինգն, գործեաց նոքօք, և շահեցաւ այլ ևս հինգ (Մատթ. ԻԵ. 16)· Յն. ἐργάζω։ Յորմէ

ՆԵՐԳՈՐԾԵՄ, նիւթական թարգմանութիւն Յուն. ձայնիս ἐνεργῶ։

Յորմէ (գործ, գործեմ)

ՁՈՐՁ, ՁՈՐՁԻՄ, — Ոստայնք նոցա ոչ ձորձեսցին։ Եւ

ԳՈՐԳ, և

ԽՈՐԽ, և ԽՈՐԳ, յորոց 'ի հակառակէն՝

ՁՐՁԻՏ, ՁՐՁՏԵՄ,

ՑՐՑՏԵՄ, — Տանջեալ, և 'ի բազում պատանաց ցրցտեալ (Ոսկ. ...)։

Եւ (գորգ) 'ի հակառակէն՝

ԿՈՐԿ, բաղդ. հաղբ և ադբ, կըրկուտ, կրկտել, և կարկուտ, կարկտել, յորմէ (գործ)

ԳՈՐԾԻ, տե՛ս ...։ — Եցոյց ինձ տէր գործի հուրբաց, և ասէ· զի՞նչ տեսանես. և ասեմ. գործի հուրբաց (Ամով. Է. 1)· յն. ἄγγος։ — Բանզի զձեռին գործին քո մերձեցուցեր 'ի նա, և պղծեալ է (Ել. Ի. 25)· յն. ἐγχειρίδιον։ — Իւրաքանչիւր ոք զգործի սատակման 'ի ձեռին իւրում ունէր (Եզեկ. Թ. 1)· յն. σκεῦη։ — Եւ առ զգոյգս եզանցն

(*) Ընթերցիր իբր Գէ՛որգ (Kéork), և ոչ երբեք Գէորգ կամ Գէօրգ։

եւ եղեն, եւ ֆորճեօք ճըրընցը հառայց ըշառա (Գ. Թագ. ԺԹ. 21)։ Յն. ἔψησεν αὐτὰ ἐν τοῖς σκεύεσι τῶν βοῶν։ — Առէ ցիս Տէր․ տորյեալ առ դու քեզ ֆորճէ հովուութեան հովուի ագիտի, զի անհատակ եւ յարուցանեմ հովիւ տգէտ 'ի վերայ երկրի (Զաք. ԺԱ. 15—16)։ Տպ. տէր տորյեալ)։ Յն. σκεύη։ (Ի Յոյնն եւ Եբր. մի անգամ եւեթ 'ի համարն 15 գնեն՝ աղէտ, իսկ 'ի 16 զանց առնեն։ Բաղդ. Ովսէ Գ. 1. «Եւ ասէ ցիս տէր, դարձեալ երթ դու»։ Տպ. տէր տորյեալ)։

Յորմէ

ԳՈՐԾԻԱԿԱՆ. (հոլով)։ Այս հոլովը չունին՝ ոչ Յոյնը, ոչ Լատինը, ոչ նոր Պրս. եւ ոչ Թուրքը․ սակայն ունի հին Պարսկերէնն ու Սանսքրիթը, եւ երբ կը տեսնես որ գործիական հոլովով գոյականի մը քով գրուած ածականը՝ սեռական հոլովով գրուած է, այս է պատճառը որ Թարգմանիչը՝ միայն գոյականը գրած է՝ գործիական հոլովով, ըստ պահանջելոյ Հայերէնին, իսկ ածականը թողած է սեռական հոլովով Յունարէնին համեմատ, այսպէս է՝ խմոլ օրեամք վասն ձեր հեղլոյ. —զչարն եւ զանկարգ եւ դէ բոռնօք մահաբերէն. — Օծցին իւղով 'ի մրրոյ պղրշելոյ. Ասկէ առնելով ուրիշ հոլովները ալ եղած է այս խառնուրդը։

* * *

ՅԱՅՏ, Պրս. հէվէյտա նոյն նշ.։

ՅԱՅՏՆԻ, իսկ

ՅԵՏԻՆ, Թրք. էթնա, նոյն նշ.։

ՅԵՏՆԻՄ, Յն. αἴτνη. αἴτνα, Եթնէ, Եթնա, լեառն հրածորան 'ի Սիկիլիա։ Բաղդ. վիրապ եւ վիշապ։

Այս Յունական բառը թէպէտեւ յատուկ անուն, սակայն ծագի αἴθω բայէն, որ նշ. բորբոքել, այրել, տոչորել, եւ ածական՝ αἰτναῖος, նշ. իբր՝ էթնէական, այսինքն, մեծ իբրեւ զլեառն Եթնէ, բարձրաբերձ, երկնելի, հսկայական, αἴθων, սեւագոյն, թխատիպ, ծխագոյն, լի ծխով, այրիչ, կիզիչ, տոչորիչ։ Տճ. այդըն, նշ. լոյս։ — Նաւեաց (Պղատոն 'ի Սիկիլիա) զի պատմայրեսցէ զհուրն որ 'ի յԵտնէ ելանէ (Նոննոս)։ —Եւ եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն պատրաստեալ 'ի գլուխս լերանց (Միք. Դ. 1)։ — Եւ եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն 'ի վերայ գլխոց լերանց (Ես.)։

ՅԵՏ, ՅԵՏՈՅ, ՅԵՏՈՅՔ, ՅԵՏՈՒՍՏ, ՅԵՏՍ, ՅԵՏՍ ՅԵՏՍ, — Յետս յետս չոքան (Յովհ. ԺԸ. 6)։ Թարգմ. Թրք. կէրի կէրի կիթթիլէր, Յն. ἀπῆλθον εἰς τὰ ὀπίσω։

ԱՅՏՔ, նկատեալ իբր կարմիր։ — Իբրեւ զկեղեւ նռան այտք քո (Երգ.)։

ԱՅՏՈՒՑ, ուռեցք որ հրապուրիչ թէ՛ ձեւն ունի, թէ՛ կարմրութիւնը եւ թէ՛ տաքութիւնը։

ԱՅՏՆՈՒՄ, նաեւ հետեւեալ բոլոր բառերը այս արմատին կը վերաբերին, քանզի անոր պէսպիսութիւններն են,

ՀԵՏ, (յք.) հետք։

ԶՀԵՏ, — Հայեաց ընդ առաջ, եւ տես ո՞յր է հետդ այդ, եւ ասէ Թագաւորն, տեսանեմ հետ արանց, կանանց եւ մանկտւոյ (Դան. ԺԴ. 18)։

ՀԵՏԻ, ՀԵՏԵՒԻՄ, ՈՐՈՎՀԵՏԵՒ, ՅԱՅՍՄՀԵՏԷ, ԱՅՍՈՒՀԵՏԵՒ, ՀԵՏԵՒԱԿ, ԱՆՀԵՏ, ՀԵՏԱՄՈՒՏ, ՀԵՏԵՒԱԿ ԲԱՆ, Թարգմ. Յն. πεζὸς λόγος, իբր՝ արձակ բան, գիմաքամաննալ չափաւ բանի, ոտանաւոր։

ԵՏ ԸՆԴ ԵՏ, (մկ.) շարունակ, առաջօյ։ — Թող անզէն եւ ընդ ետ լինէր նմա որդի, եւ ոչ հազար ամ տառապել եւ յաչս առնել զի որդի ծնցի (Եզնիկ)։

ՀԵՏ ԸՆԴ ՀԵՏ, — Հետ ընդ հետ վաղվաղակի ··· դարձուցանէր (Բ. Մկ. Դ. 10)։ Եւ

ԱՆՀԵԹԵԹ, գրեալ եւ անհեղեղ, մեծ, ահեւ, անկարգ, անպատրաստ

նոյն Եանա անունէն է, եւ է իբր Թարգմ. Յն. αἰτναῖος, Էթնէական, Էթ-նեան, այսինքն՝ Անգէլեր, Անճառնէ, Վերեւըլէ. Անրըթէլ. Յորմէ

ՀԵԹԵԹԱՆՔ, ՀԵԹԵԹԵՄ, եւ

ՀԱՑԹԱՑԹԵՄ, իբր՝ կարգաւորել, պատրաստել, հանճարել, հնարաւորել։

ՀԱՑԹԱՑԹԱՆՔ.

*

* *

ԾՂԹԱՑ, Պրս. չէլթէ, Նչ. համ-գոյց կամ կապ գօտւոյ, կապ կցոր-դութեան. Իսկ

ԳՕՏԻ, գաւտի, Արաբ. փաշա, փա-գէա, Նչ. աղեղն, կամար, գօտի, (Ս եւ Տ լծ. ըստ Արաբ. եւ Յուն.)։

Ծղթայ եւ գօտի՝ կը գործածուին իբր գործի կապելու եւ պնդելու. — Եղիցին գօտիք ձեր պնդեալք ընդ մէջս. — Ազարաս առեալ զգօ-տին Պօղոսի՝ կապեաց զոտս եւ զձեռս իւր եւ ասէ. այսպէս ասէ Հո-գին Սուրբ, զայրն որոյ գօտիս այս է, այսպէս կապեսցեն յԵրուսաղէմ Հրեայք (Գործ. ԻԱ. 11)։ Յն. σειρά, Նչ. զաւակութիւն, կարգաւորու-թիւն, շարադասութիւն, շղթայ։ Սոյն միապէս, շղթայ լերանց եւ գօտի լերանց. Յորմէ

ԳԱՐԵԳՕՏ, Թարգմ. Յն περίζωμα։

Յորմէ (գօտի)

ԳԱԻԻԹ, (սեռ.) գաւթի, կամա-րակապ արտաքին մասն տաճարի՝ մեհենի՝ ապարանից. բակ ոչխա-րաց, գի Յն. αὐλή, Նչ. եւ գգաւիթ եւ զփարախ ոչխարաց. — Եմուտ ընդ Յիսուսի 'ի գաւիթ քահանայա-պետին (Յովհ. ԺԸ. 15). յն. ἡ αὐλή։ — Որ ոչ մտանէ ընդ դուռն 'ի գա-ւիթ ոչխարացն (Անդ Ժ. 1). յն. ἡ αὐλή. Իսկ

ԾԻԱԾԱՆ (*), որ ըստ մեզ Նչ. ա-ղեղն երկնից, աչխ. Ճէքանէ ֆօքէ, Թուի լինել Յն. διάδημα, Նչ. ծա-մակալ, Թագ, պսակ։ Համերոս յՈ-դիսականին զԱփրոդիտէ(*) անուանէ εὐστέφανος, (գեղապսակ)։

Ափրոդիտէ կամար կամ գօտի մը (κεστὸς) ունէր՝ յայժ սքանչելի, եւ կը կոչուէր՝ կամար գեղեցկութեան։

Հերա (Յն. ἥρα) դիցամայրը՝ Ա-րամազդայ աւելի սիրուն երեւալու համար Ափրոդիտէէն փոխ առաւ այդ կամարը։ Թէպէտ դիցաբանութիւնը քիչ մը տարբեր կերպով կաւանդէ մեզ այս առասպելը, այսինքն՝ Թէ՝ ուրիշ է ἶρις դիցուհին (անձնաւոր-եալ ծիածանը), եւ ուրիշ է Ափրո-դիտեայ կամարը (κεστὸς), սակայն կ'երեւի Թէ այս զարտուղութեան առիթ տուած է երկուց դիցուհեաց անուանց (ἥρα եւ ἶρος) նմանաձայ-նութիւնը, զծիածան նկատել իբրեւ զկամարն Ափրոդիտեայ (κεστὸς)։ Այս նմանաձայնութենէն օգտուած են միրանք. (Տես գործի եւ բուրաստան բառերը)։

Արդ ծիածանը իւր երկու ծայրե-րովը 'կը ծծէ ու կը խմէ Ովկիանո-սին ջուրը. — Արբեցաւ կարակնա-ձեւ երկնից աղեղն լայնալիճ (Վիրգ. Մշակ. Ա.)։ — Ոռամկաց կարծիք էին Թէ ծիածանն երկոքումբք ծայրիւքն ծծեալ խմիցէ զջուրս 'ի ժամանակի անձրեւեաց։

Բազում են առ քերթողս բանք որ 'ի սոյն միտս հային. առ Պղաւ-տեայ Լատին կատակերգակի տես-եալ ուրուք զպատառ մի կարկամ-եալ՝ զի ըմպէր, ասէ, «Ահաւասիկ աղեղն ըմպէ, կարծեմ այսօր անձ-րեւ գայ» (Անդ 'ի Ճանըթօքրեան)։

Համերոս յՈդիսականին զԱփրո-դիտէ զգեղեցկագոյնն դիցուհեաց՝ Հեփեստեայ (Վուլկանայ) պատշաճե-

(*) Իբր՝ ծիր ածեալ, ածող, եւ այն՝ որ-պէս ծիրանագործ։ (Նո Հյկ. Բռ.)։

(*) Վեներա ըստ Հռովմ. եւ ըստ մեզ՝ աստղիկ։

ցուցանէ 'ի կին, տգեղագոյնին քան զամենայն զիս։ Անձնաւորեալ Վուլկանոսը (vulcanus) կղզի մըն է, vulcania անուանեալ, այն է Լիպարեան կղզեաց հարաւային ծայրի վերջին կղզին, որ միշտ կը վառի, եւ անընդհատ ծծումբ դուրս կու տայ առատօրէն։ Այս կղզին նախապէս կը կոչուէր ἱερὰ (*), որ թարգմանի՝ նուիրական, սրբազան, վասնզի նուիրական էր Վուլկանոսի, եւ ինչպէս որ ըսուեցաւ, անդադար ծծումբ դուրս կու տայ, եւ յունարէն θεῖον. θέειον, նշ. ծծումբ, բայց թարգմանի՝ աստուածային, գերաբուն։ — Հեփեստոս ... 'ի բերանոյ ժայթքէր հուր (Վէրգ. Ենէ. Ը.)։

Արդ ինչպէս որ Ափրոդիտէ Հեփեստոսի կամ Վուլկանոսի կինը ունի կամար մը, եւ այն կամարն է՝ ըստ մեզ՝ ծիածան, եւ ծիածանը ջուրերը կը ծծէ ու կը խմէ, նոյնպէս ալ նորա այրը, Վուլկանոս, ունի զծծումբ, եւ

ԾԾՈՒՄԲ՝ է ծծող եւ ըմպող, (ծծ, ումբ) որ ծծէ եւ ըմպէ։

Հետեւեալ բառերն ալ՝ մինչեւ այս գլխուն վերջը, ծէ-ծուն բառէն ծագումն առած են, եւ նորա պէսպիսութիւնները կը նկատուին։

Ափրոդիտեայ նուիրական թռչունն էր՝

ԾԻԾԱՌՆ, ԾԻԾԵՌՆ, (գարնանաբեր)։ — Եհաս գարուն, եւ եկին նորեկ ծիծեռունք (Եղիշէ)։

Եւ անոր հաչակաւոր կամարին (κεστὸς) վրայ նկարուած էին շնորհք եւ

ԾԻԾԱՂ, (Հոմերոս Եղէ. ԺԴ. 22), Յն. φιλομειδὴς, ծիծաղասէր, ծիծաղկոտ կ'անուանէ զԱփրոդիտէ, եւ անոր նուիրուած են գարուն եւ

ԾԱՂԻԿ, յորմէ եւ

ԾԱՌ, յորմէ (ծիծաղ)

ԾԱՂ, Թրք. կիւլմէք (ծիծաղել), եւ կիւլ. (վարդ)։

ԾԱՂՐ, եւ

ԶԱՂ, — Զաղ եւ նախատ լինիցին (Ոսկ. Եսայ.)։ — Ոչ զի ձաղ ինչ առնիցէ (Ոսկ. Մատթ.)։

ԶԱՂԵՄ, — Նոյնպէս եւ քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն (Մատթ. ԻԷ. 41)։ յն. ἐμπαίζω։

Յորմէ (ծաղիկ)

ՑՕՂՈՒՆ, ծղօտ բուսոց, եւ նկատի իբր անզօր եւ դիւրաբեկ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ԶՈՂ, իբր՝ պինդ եւ հաստատուն ինչ, կամ կանգնեալ, 'ի բարձու ուրեք, կանգուն եւայլն։

— Իբրեւ զձող ցցեալ 'ի վերայ լերին, են իբրեւ զկոթող կանգնեալ 'ի վերայ բլրոյ (Եսայ. Լ. 17)։ — Ահա այր մի, եւ 'ի ձեռին նորա լար չափողաց, եւ ձող չափոյ... եւ 'ի ձեռին առնն ձող չափոյ... եւ չափեաց զլայնութիւն պարսպացն հաւասար ձողոյն, եւ զբարձրութիւն նորա հաւասար ձողոյն... եւ չափեաց զկողական... հաւասար ձողոյն, եւ զերկայնութիւն կողակին հաւասար ձողոյն... եւ կողակն երկրորդ հաւասար ձողոյն 'ի լայնութիւն, եւ հաւասար ձողոյն յերկայնութիւն... եւ կողակն երրորդ հաւասար ձողոյն յերկայնութիւն եւ հաւասար ձողոյն 'ի լայնութիւն... չափեաց հինգ հարիւր չափով ձողոյն... եւ չափեաց հանդէպ հիւսիսոյ հինգ հարիւր չա-

(*) Լիպարեան կղզիք ըսուածը՝ ('ի նախնումն Եւոլեան կղզիք) եօթն են, որոց իւրաքանչիւրը անուն ունի, եւ այս անուններն ալ նշանակութիւն ունին։

Ա. στρογγύλη, բոլորակ։

Բ. εὐώνυμος, ահեակ։

Գ. διδύμη, երկուորեակ։

Դ. φοινικώδης, կարմիր։

Ե. ἐρικώδης։ էռիկի ըսուած թուփերը անտեղ շատ գտնուելուն համար։

Զ. ἡφαίστου ἱερὰ, նուիրական Հեփեստոսի, (ἥφαιστος) Հեփեստոս Վուլկանոս)։

Է. λιπάρα, ապիտակ։

փով ջուղն . . . եւ չափեաց հանդէպ ծովուն հինգ հարիւր չափով ջուղն . . . եւ չափեաց հանդէպ հարաւոյ հինգ հարիւր չափով ջուղն (Եզեկ. Խ. ԽԲ.)։

Մեր ջուղ բառին դէմ Յունարէնն ունի κάλαμος, որ նշ. եղէգն, նաեւ մասնաւոր չափի մը անուն է, (ինչպէս առ մեզ Մեթրօ կամ Արշըն)։ Այս Յունական բառը κάλαμος, կայ թարգմանուած նաեւ՝ եղէգն (թէպէտ ոչ հին) իբրեւ չափու անուն։

— Ունէր եղէգն ոսկի 'ի ձեռին իւրում զի չափեսցէ զքաղաքն եւ զդրունս նորա եւ զպարիսպս նորա (Յայտ. ԻԱ. 15)։ Բաղդ. կանգնիմ, յորմէ՝ կանգուն, որ նշանակէ թէ՛ կանգնեալ, եւ թէ՛ չափ, (մէթրօ)։

Զօղ նկատի իբր հաստատուն ինչ եւ կանգնաւոր։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՍՈՂԱՄ,

ՍՈՂՈՒՆ, (որ գնայ քարշ ընդ գետին)։ Յորմէ

ՍՈՒՂ, ՍՂԵՄ, բաղդ. ձգեմ, ձիգ եւ ձուկն։ Յորմէ

ՄՂՈՑ (*), ոչ մասնիկ է, որպէս ճնոց, համբարանոց, Բոտոտոց։ Երկաթ (փայտ)ը կտրելու գործիք մը։

Յորմէ

ՄՂՈՑԻ (**), ծառի մը անուն։

Այսպէս եւ

ՀԵՐՁԻ, ծառի մը անուն, եւ ձեւացած է 'ի բառէս՝

ՀԵՐՁՈՒՄ, Յն. σχίζω։

ՀԵՐՁՈՒԱԾ, Յն. σχίζμα, Արաբ. եւ Եբր. ֆերց, ֆերղ, նշ. պատառուած,

— Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ (Ղուկ. ԻԳ. 46)։ — Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս (Մատթ. ԻԷ. 51)։ — Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս (Մարկ. ԺԵ. 38). երեքին ալ՝ Յուն. σχίζω։

— Ընդ որո՞վ ծառով հասեր առ գուսա . — ընդ հերձեւան . — բարւոք (Յն. ὀρθῶς, ուղղակի. Տես Ոսկ. 'ի Ծնունդ. Հտ. Բ. 653)։ — Սուտեցեր 'ի քոյին գլուխ . զի հրեշտակ Աստուծոյ առեալ հրաման հերձեսցէ զքեզ ընդ մէջ (Դան.)։ — Ընդ որո՞վ ծառով հասեր առ գուսա — ընդ ողոցեան . — բարւոք ստեցեր 'ի քոյին գլուխ, կայ աւասիկ հրեշտակ Աստուծոյ սուսեր մերկ 'ի ձեռին ողոցել զքեզ (Անդ)։ Նաեւ

ՃԵՐՊ, Յն. σχίζμα, ὀπή։ — Եղիցզքեզ 'ի ծերպ վիմին (Ել. ԼԳ. 22)։ յն. ὀπή։ — Թաքուցեն յայրս եւ 'ի ծերպս վիմաց (Եսայ. Բ. 19). յն. σχίζμα։

ՁԵՂՈՒՆ, նոյն է եւ Յն. στέγη։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՑԵԼՈՒՄ, յորմէ

ՑԵՂ, բաղդ. ազն եւ զանազան,

(*) Երկաթի իմն գործի բազմաժանի, որ ատամով իմն հատանէ զփայտ կամ զատախտակ։ (Ն. Հյ. Բռ.)։

(**) Յուն. πρίων եւ σχίζω (սղոց եւ հերձում)։ πρίνος եւ σχίνος (սղոցի եւ հերձի)։ Այս բառերը Յունարէնի մէջ 'ի բնէ նմանաձայն գտնուած են, որով այս բառախաղը կրցեր է ձեւանալ, եւ Հայերէն Թարգմանութեան առեն՝ սղոց եւ հերձ բառերէն սղոցել եւ հերձել ձեւացումը կը ցուցընէ: Թէ այս բառերը մասնաւորապէս այս տեղին համար ձուլուած, եւ առաջին անգամ գործածուած են իբրեւ ծառի անուն։

Հետեւեալ տողերուն հեղինակը մեր այս վարդապետութիւնն իբրեւ հերետիկոսութիւն կը նկատէ, եւ բացէ 'ի բաց կը մերժէ ուղղափառապէս, եւ իբրեւ 'ի պատասխանի՝ այս բանի մը խօսքը կ'ըսէ. սակայն իւր այս խօսքերը, որ ըրած է միամտաբար, մեր վարդապետութիւնը ոչ միայն չցրեր, այլ մանաւանդ կը հաստատէ, քանզի կը վկայէ թէ հերձի որ ծառի մը անուն է, հերձում բային հերձ արմատէն ձեւացած է. եւ հետեւաբար՝ ինչպէս մէկը, անանկ ալ միւսը. ուրեմն կ'ընդունի որ հերձի եւ սղոցի՝ ծառի անունն գոյութիւն չունէին 'ի սկզբան, եւ այս Թարգմանութեան առթիւ գոյացան։

պատեհ եւ պատատեհ ։ — Վարագոյր տաճարին ցելաւ յերկուս (Մատթ. ԻԷ. 51) ։ Եւ Արաբ. ջէլջէլէ , Նչ. ցեղ . (աս նկատի իբր՝ բաժանումն) ։
Եւ
ՃԵՂՔԵՄ , 'ի ձայնէս՝ ցեղ , (բաժանումն) ։ — Ճեղքեաց գնա իբրեւ զուլ մի այծեաց (Դատ. ԺԴ. 6) ։ — Դուցէ ճեղքիցէ զնոսա յեղբայրութենէ (Ոսկ.) ։ — Մի է ճշմարտութիւնն , եւ ոչ 'ի բազումս ճեղքեալ (Ոսկ. Մատթ.) ։
Ցորմէ (ծաղիկ , ծաղկիմ) 'ի հակառակէն՝
ՁԱՂԿ , Յն. κλάδος , ράβδος ։
ՁԱՂԿԵՄ , — Երիցս ձաղկեցայ (Բ. Կորնթ. ԺԱ. 25) . յն. ραβδίζομαι ։ Եւ
ԾԻՂ , ԾՂԻՄ , եւ
ԾՂՕՏ , յորմէ 'ի հակառակէն՝
ԾՆՕՏ , նկատեալ իբր պինդ , կարծըր ։ Բաղդ. երես եւ երեսք , քծուար եւ քածուարտ ։ Եւ , յորմէ (ծաղիկ) , 'ի հակառակէն՝
ԾԱԼՔ , ԾԱԼԵՄ , քանզի ծաղիկը բացուած կընկատուի Բաղդ. կոկոն ։
Ցորմէ 'ի հակառակէն՝
ԾԱԽԱԼԵՄ , յորմէ՝
ՃԱՊԱՂԵՄ , — Դահեկանս ճապաղել (Խոր.) ։ (ծ ա ւ ա լ)
(ճ ա պ ա ղ)
Բաղդ. ծարրել եւ ծրարել ։
Մերս
ԱԾՈՒԽ(*) , գրեալ եւ ԱԾՈՒՂ ,
ԱԾԽԱՆԱՄ , ԱԾՂԱՆԱՄ , — Մինչ ածխանալ (կամ ածղանալ) տեսանել զքաղաքն ակն ունէր , պակակիր տեսանէր (Փէլ. Ցոքոն) ։
Նոյն է ընդ բառիս՝ ծաղիկ . եւ էջ մասնիկ է , որպէս 'ի բառքս՝ սատակիկ , գեհն-իկ , ռամ-իկ ։
Արդ ծ ա ղ նոյն է ընդ՝ ա ծ ղ (անամ)
2 1 3 2 1 3

(*) «Ածուխ կամ ածուղ , իբր՝ անծուխ , զի ոչ եւս ծխի իբրեւ զփայտ» ։ (Բեբակեան. Ջարգ. 1470) ։ Տես նաեւ Հնդեւր. Նախ. էջ 60 ։

քանզի այսպէս է եւ 'ի Յն. ἄνθραξ , որ նչ. ածուխ , կայծ , ծաղի 'ի բառէս՝ ἄνθος , որ նշան. ծաղիկ . πυρὸς ἄνθος , նչ. «ցնցուղ հրոյ» , բառ առ բառ՝ հրոյ ծաղիկ , Յն. περιπατήσει τις ἐπ᾽ἀνθράκων πυρὸς ։ — Գնայցէ՞ ոք 'ի վերայ կայծականց հրոյ (Առակ. Զ. 28) . յն. ἄνθρακες πυρὸς ։ — Կայծակունք հրոյ (Սաղմ. ՃԼԹ. 11) .
ԾԽԵՄ , յորմէ
ԾՈՒԽ , ԾԽԱՆ , ԾԽԱՆԵԼԻ ,
ԾԱԽԵՄ , — Սպառեցան (ծախեցան) որպէս ծուխ աւուրք իմ (Սղմ.) ։
ԾԱԽՔ , յորոց 'ի հակառակէն՝
ԾԽՆԻ , եւ
ԾՂԻՔ , նկատեալք իբր՝ պինդ , հաստատուն , ամուր ։ Բաղդ. կարկուտ եւ կրկուտ , ծնօտ եւ ծղօտ ։
Եւ
ԾԱԳԵՄ , քանզի ծագել եւ ծաղկել նշանակեն սկիզբն առնուլ երեւելոյ ։ — Ցորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից (Ղուկ. ԺԲ. 54) ։ Իբր այսպ. ճայր տաւաճ , եբեւէլ ոէլոաճ , նոր ուէէղբն տուաճ եբեւտալու . Յն. ἀνατέλλουσα ։
ԾԱԳ , (ճայր , ուէէղբն) ։ — Թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր (Ղուկ. ԺԶ. 24) ։ — Ի ծագաց երկնից ենք ելք նորա (Սաղմ. ԺԸ. 7) ։ — Ծագաց 'ի ծայրս աշխարհի ։ — Մինչեւ 'ի ծագս երկրի ։
Յն. τέλος , նչ. վախճան , կատարած , եւ ծագ , ծայր , եւ τέλλω , ծագել . — ἡλίου τέλλοντος ('ի ծագել արեւու) , յորմէ 'ի հակառակէն՝
ՁԱԳ , իբր՝ ծագեալ կամ սկիզբն առեալ ։ Բաղդ. ծեր եւ ծայր , կատար եւ կատարած , հաւ եւ յաւ , սաղաւարտ եւ աւարտ , այգ եւ ագի ։
Իսկ
ՁԱԳՍ ՀԱՆԵԼ , Թրք. եավրու չըգարմագ , Յն. νοσσοποιέω ։
— Անդ թռչունք երկնից ձագս հանցեն (Սաղմ. ՃԳ. 17) ։ — Ոզնիք ձագս հանցեն (Եսայ. ԺԳ. 22) ։

ել

ԾԱԿԵՄ, ԾԱԿ, Իբր Թէ՝ ծագ կամ ծայր չինելու համար՝ որ եւ է մարմնոյ մը՝ մէջտեղը բանալ, որով բացուածքը՝ կ'ըլլայ՝ ծակ, իսկ ծայրերը կամ շրթունքը որ այն ծակին սահմանը կը գծեն, կ'ըսուին՝ ծագք, Յունարէնին մէջ ալ՝ ծակել եւ սահմանել նշանակող բայերը նմանաձայն են. ὀρύσσω, նշ. ծակել, եւ ὁρίζω, նշ. սահմանել. Նոր Հայերէնի

ՀՈՐԻԶՈՆ բառը (Յն. ὁρίζων), ներկայ ընդունել. ὁρίζω, սահմանել բային, կը նշանակէ այն շրջանակը կամ գիծը որ մեր աչքին տեսութիւնը կը սահմանէ.

Յորմէ (ծագեմ) 'ի հակառակէն

ԾԱԾԿԵՄ, ԾԱԾՈՒԿ,

ԾԱԾՔ, բաղդ. Թագ եւ Թաքուն, գարիմ եւ գարանիմ, ցուցանեմ եւ սուզանեմ. Յորմէ

ՑԱԾՈՒՆ, ՑԱԾՆՈՒՄ, ՑԱԾՈՒՑԱՆԵՄ, — Դադարեա՛ 'ի բարկութենէ սրտմտութեան քո, եւ ցածի՛ր 'ի չարեաց ժողովրդեան քո... եւ ցածեաւ Տէր 'ի չարեացն զոր ասաց առնել ժողովրդեան իւրում (Ել. ԼԲ. 12—14).

ՑԱԾ, — Պարտ է... լինել հեզ, ցած. — Զձայն ալեաց նորա (ծովու) ցածուցանէ (Սաղմ.).

Յորմէ 'ի հակառակէն՝

ՑԱՍՈՒՄՆ, ՑԱՍԿՈՏ,

ՑԱՍՆՈՒՄ, — Աղաչեալ Մովսէսի ցածեաւ տէր 'ի ցասմանէն (Նխ. Ել. ԾԼԳ.). — Զիա՞րդ զցասումն ցածուցէ (Սեբեր. Զ. 118).

* * *

ՀԻՒՂ, ԽՈՒՂ, Պրս. [illegible]՝ նոյն նշ. — Որչափ զխղի միոջ զտեղի ունել (Ոսկ. Մատթ.). — Իբրեւ ըղխուղ մի մրգապահաց (Կոչ. Ընծ.).

* * *

ՏԱԾԵՄ, Պ. [illegible] (ար.), [illegible] (իգ.), նշ. դայեակ, տածիչ, մանկատած, սնուցիչ, յորմէ

ՍՏԱԾԵՄ,

ԾԵՐԱՏԱԾԵՄ, — Յակոբ ծերատածի 'ի Յովսեփայ (Նխ. Ծննդ. ԾԴ.). յն. γηροτροφῶ, γηροκομῶ.

ԾԵՐԱՏԱԾՈՒԹԻՒՆ, Յն. γηροτροφία, γηροκομία, իսկ γηροκομεῖον γηροτροφεῖον, նշ. ծերանոց, պատսպարան ծերոց.

* * *

ՀԻՄՆ, Յն. ὁ ὑμέναιος, ὁ ὑμήν, եւ ὑμεν (կոչ.) (հիմէն, գիք հարսանեաց, հարսանիք, կամ ամուսնութիւն անձնաւորեալ).

Հարսանիք կամ ամուսնութիւն նկատի իբրեւ սկիզբն կամ հիմն աճման մարդկային ազգի. — Ամուսնութիւն զազգ մարդկան անմահ առնէ (Պղատոն). — Սկիզբն ընկերութեան ամուսնութիւն (Արիստոտէլ). — Առաջին աճումն մարդկան ազգաց յամուսնութենէ է, եւ արմատ մարդկեղէն բուսոյ հարսանիք (Սեբեր Ը.). — Առաջին 'ի կարեւորացն, եւ մանաւանդ հիմն կենցաղօգուտ պիտոյիցն մարդկան՝ ամուսնութեան մեծարգի ախորժակ (Պէտ. 552).

ՀԻՄՆ ԱՐԿԱՆԵՄ, իբր Թարգմ. Թրք. Թէմէլ դըրթմէք, — Ո՞ւր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի (Յոբ. ԼԸ. 4). յն. θεμελιόω, հիմնեմ. իսկ իբր չէզոք կամ կրաւորական՝ կ'ըսուի [illegible] բայով. — Յօրէ յայգմանէ յորում անկաւ հիմն տաճարին Տեառն (Անգէ. Բ. 19). — Անկան հիմունք տանն տեառն (Բ. Եզր. Գ. 11). իսկ

ՀԻՄՆ ԴՆԵՄ, իբր Թարգմ. Յն. θεμέλιον θεῖναι. — Իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն եդի... հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն, որ է Յիսուս Քրիստոս (Ա. Կորնթ. Գ. 10—11).

Ցորմէ 'ի հակառակէն՝

ԻՄՆ(*) , ԻՄՆԷ , 'ի ձայնէն Յն. ὑμὴν, *Բաղդ. ինչ* (οὐσία) *եւ* *ի մ է ն*
ինչ (*ած.*), *առեւանգել* 1 2 3 4
եւ հարեւանցիկ , յորմէ

ՀՈՄԱՆԻ , — *Ցայտնեսցի ամօթ պոռնկութեան քո առաջի հոմանեաց քոց* (*Եզեկ.* *ԺԶ.* 36) ։ — *Ժողովեցից զամենայն հոմանիս քո ընդ որս դու խառնակէիր* (*Անդ* 37) ։ *Այսպէս եւ* (*հ ո մ ա ն ի = հ ի մ ե ն է*) ։

Խօսէմ բայը (*հայցական խնդրով*) *ամուսնական վիճակ մը բացատրելու յատկութիւնն ունի ,* (*տե՛ս դրայդ*) *. ուստի այս տեսութեամբ ծնունդ կուտայ քանի մը այսպիսի բառերու որ սահմանուած են նշանակել ամուր եւ հաստատուն բաներ , այն օրինաց համեմատ որ տեսնուեցաւ 'ի վերոյ , այսինքն՝ թէ հէմ՝ ծագումն ունի հէմէն բառէ մը , որ է գիք հարսանեաց , կամ ամուսնութիւն անձնաւորեալ ։*

ԽԱՐԻՍԽ , *ըստ կրկին նշանակութեանն ։ — Ի վերայ սորա իբրեւ 'ի հաստատուն խարսխի չինել հնար է .* (*Պղատ. Օրէն.*) *. յն.* βάσις ։ — *Բուռն հարկանել զհանդերձեալ յուսոյն , զոր իբրեւ զխարիսխ հաստատուն եւ անշարժ ունիցիմք անձանց մերոց* (*Եբր. Զ.* 19) *. յն.* ἄγκυρα , (*խարիսխ նաւու*) ։ *Եւ*

ԽՈՐԻՍԽ , *քանզի ձեզ ,* (*տես ըզբառդ*) *նկատի լոյծ ։ —* (*Մեղուն*) *'ի սկիզբն սկսուածոյ գործոյն անգայտ մաղովք անօսր գործոյն զգործած գրոցն յօրինէ , վասն ջրի եւ լոյծ նորոգ զմեղրն ժողովելոյ* (*Վեցօր. Ը.*) ։ *Եւ*

ԽՐԱՑՔ , — *Ի չաղամամթէ միջէ մինչեւ 'ի խրացս մի կօշկաց* (*Ծննդ. ԺԴ.* 23) ։ —*Զեմ բաւական խոնարհել եւ լուծանել զխրացս կօշկաց նորա* (*Մարկ. Ա.* 7) ։

ԽՐԱՑԵՄ , — *Խրացեմ զատս Աւետարանական ուսմամբն Քրիստոսի* (*Նեղոս*) , *Եւ*

ԽՐԱԽՈՑՍ , ԽՐԱԽՈՒՍԵՄ . *եւ*

ԽԻՁԱԽ , ԽԻՁԱԽԵՄ , — *Ոչ իշխէ արքայից արքայ 'ի ծառայ 'ի կայսր խրախուսել , եւ ոչ կայսեր ող ծառայ 'ի սասանականն խիզախել* (*Եղիշէ* 252) ։

Նաեւ

ՑՈՑՍ , — *Զոր օրինակ խարխախն յորժամ 'ի նաւէն 'ի խոնարհ կախիցի , չտայ թոյլ նաւին այսր անդր սայթաքել , նոյնպէս եւ յոյսն* (*Ոսկ. Եբր.*) ։ *Թերեւս եւ*

ԽԱԽԱՑ , ԽԱԽԱՑՈՑ , *յորմէ* (*խրացք*) *'ի հակառակէն՝*

ԽԱՐՁ , *յորմէ 'ի հակառակէն՝*

ԽՈԻՐՁ , *բաղդ. օդ եւ յօդ եւ հօտ ։*

Ցորմէ 'ի հակառակէն՝

ՔՈԻՐՁ , —*Ես 'ի նեղել նոցա քուրձ զգենուս* (*Սաղմ.*) ։

*

* *

ՏԽՈԻՐ , *տ-(ա)խուր ։*

ՏԽՐԻՄ , *կազմեալ 'ի Պրս.* [illegible] , *ուրախ ։ Իսկ*

ՈԻՐԱԽ , Յն. χαρά , *Նշ. ուրախութիւն , Արաբ.* [illegible] , *յորմէ Թրք.* [illegible] , *Նշ. օղի , գքի , իբր զի գինի ուրախ առնէ* (*Սաղմ.*) ։

Այսպէս եղած է՝ չըլլալու համար [illegible] , *կամ արագ , երագ , երախ , երակ ։ — Տո՛ւք* [illegible] (*Եբր. օղի*) *տրտմեցելոց եւ գինի ըմպել ցաւագնոտաց , զի արբցեն եւ մոռասցին* ··· *զցաւս իւրեանց* (*Առակ. ԼԱ.* 6) ։ — *Աւէ ցնծա որթ . թողեալ զգինի իմ , եւ զուրախութիւն Աստուծոյ եւ մարդկան , եւ երթայցեմ իշխան լինել փայտից* (*Դատ. Թ.* 13) ։

ՈԻՐԱԽ ԼԻՆԻՄ , *Թրք. շաղ օլմաք ։*

Ցորմէ

ԽՐԱԽ , ԽՐԱԽՈԻՆՔ , ԽՐԱԽՃԱՆ ,

(*) *Այս բառը՝ իբրեւ մասնիկ՝ գալով Երբ եւ Ուր մակբայներուն վրայ՝ կը կազմէ երբեմն* (*իբր՝ երբ-իմն , ուրեմն , իբր՝ ուր-իմն*) ։

ԵՐԱԽԱՆՔ, — Հրամայեաց բազմել երախանս երախանս (Մարկ. Զ. 39), իբր՝ սեղանակից. (երի, խան), Յն. συμπόσια συμπόσια, ուտել խմելը ուրախանալ կ'ենթադրէ. եւ ուրախութիւնը՝ հաւաքարար կը մտածուի, անոր համար «[illegible]» որ ըստ Պրս. նշ. ուրախութիւն, ըստ մեզ է քաղաք, ուր է բազմութիւն ժողովրդեան, եւ Յն. ἔρημος, (անապատ) է մնացեալ (ըստ ձայնին).

ԲԱԶՄԻՄ, ԲԱԶՄԱԿԱՆ, ԲԱԶՄՈՒԹԻՒՆ, ԲԱԶՈՒՄ, բառից արմատը մէկ է, այսինքն՝ Պրս. «[illegible]», (կոչունք, երախունք). Բաղդ. խումբ, ակումբ, խնջոյք, քաղաք, չէն, վաղարշապատ, երուանդաշատ.

Ուրիշ է

ՀԻՄԷՆ, չափ ինչ հեղանիւթից, Յն. χύμη.

. . .

ԱԶՈԽ, ըստ մեզ՝ նչ. խակ՝ չեւ հասունացեալ խաղող. ըստ Պարսից «[illegible]», նչ. ընկոյզ՝ որ դեռ մէջը լեցուած չէ, խակ ընկոյզ Թրք. «[illegible]». — Հարքն ազոխ կերան, եւ որդւոց ատամունք առան (Եզեկ.).

Յորմէ

ՈԶՈԽ, (բառ գաւառական), կանաչ կեղեւ թարմ ընկուզի.

Յորմէ (ազոխ) 'ի հակառակէն

ԱՏՈՔ, լեցուն, հասած, (ցորենի վրայ խօսելով). — Նախ զխոտն, ապա զհասկն, ապա զցորեանն ատոք 'ի հասկին (Մարկ. Դ. 28). Յն. πλήρης, (լի, լցեալ). Իսկ

ԸՆԿՈՅԶ, գրի եւ

ԸՆԳՈՅԶ, եւ նկատի իբր պինդ, կարծր. ծագի 'ի Պրս. «[illegible]» կամ «[illegible]», որ նշ. գործի. առի եւ զատանացի անգամոյ, Տճ. «[illegible]».

Իսկ Յն. κάρυον, նշ. ընկոյզ, կաղին, եւ յանուպար զամենայն պտուղ փենճեկաւոր եւ կարծրապինդ, իսկ

ԸՆԿՈՅԶ, Պրս. «[illegible]», նշ. ատամացի անգամ.

ԿԱՂԻՆ, (սեռ.) կ ա ղ ն-ոյ, Լտ.
1 3 2 4
glans, (սեռ.) g l a n-is.
1 3 2 4

Յորմէ

ԿԱՂՆ-Ի, որպէս խնծոր-ի, աղոց-ի, հերձ-ի.
1324
glan

— Եղիցին... իբրեւ զկաղին թօթափեալ յիւրաքանչիւր պատենից (Եսայ. Զ. 13).

ԿԱՂՆԻ, բառ Լատին glans.

Յորմէ (թէ վայրի եւ թէ ընտանի)

ԿԱՂԻՆ, կայ եւ Յն. βάλανος, եւ Դորացի հնչմամբ՝ γάλανος.

ԿԱՂԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ, (Յն. κάρυον βασιλικόν), նշանակէ «[illegible]», կ'ըսուի նաեւ βάλανος διός, կաղին Արամազդայ, այսինքն՝ «[illegible]».

ԿԱՂԻՆ ՎԱՅՐԻ, Յն. ψωλή.

Այս Յունարէն բառը ստորին Յունարէնի մէջ նշանակէ՝ «[illegible]», ծագելով 'ի բառէս ψωλός, որ նշ. անկեղեւ, անպատեան, թլփատեալ, հատեալ չուրջ, ինչպէս է վայրի կաղնին ձեւը.

Յորմէ (ընկոյզ) 'ի հակառակէն՝

ՈՂԿՈՅԶ, նկատեալ իբր կակուղ.

Իսկ

ՆԺՈՅԳ (*), նոյն է ընդ բառիս՝
ը ն գ ո յ գ, (ն ժ ո յ գ, ը՛ ն գ ո յ գ),
2 6 4 5 3   1 5 3 4 2
այսպէս Պրս. «[illegible]», նշ. եւ ընկոյզ, եւ նժոյգ.

Բառից կազմութիւնը բաղդ. նզով, նժար, նշխար, նկան, նկուն, նպար.

Պարսիկ լեզուն ունի նաեւ ուրիշ բառ մը՝ «[illegible]», որ թէպէտ «[illegible]» կը նշանակէ, սակայն կը թարգմանի՝ «[illegible]», եւ կը պատասխանէ Տաճկերէնին՝ «[illegible]», եւ

(*) Նժոյգ եւ ընկոյզ գնի իբր նոյն. Եւ չանտանեմ գնոյնութիւնն. նոյնպէս «[illegible]» եւ «[illegible]».

ζώων ἐκζέοντων, եւ եղիցի ամենայն շունչ կենդանեաց զեռնոց ։

ԹՈՔՔ, — Զայս զմեր օդս ձգեն առ մեզ թոյլ թոքքն որ 'ի մեզ հաստատեալ են (Վեցօր. Է. 139) ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՏՈԿ, ՏՈԿՈՒՆ, ՏՈԿԱՄ ։

Յորմէ (տէգ)

ՏԻԳՐԻՍ, Յն. τίγρις, գետ անուանի յարեւելս ։

Կուրտիոս Հռուփոս Հռովմայեցի պատմագիրն կ'ըսէ թէ Տիգրիս գետին անունը Պարսկերէն է, եւ կը նշանակէ՝ տէգ. այսպէս ըսած են նաեւ Ստրաբոն եւ Պլինիոս. Իսիդոր եւ ուրիշներն ալ կ'ըսեն թէ Յունական τίγρης բառն է որ կը նշանակէ վագր ։ Կուրտիոս ըսած է. «Ոչ այլ գետ գոյ 'ի կողմանս արեւելից որ այնպէս սաստիկ խաղայցէ, որ եւ զբազում բուկ յորդաջուր հեղեղատաց ոչ միայն զջուրսն, այլ եւ զքարինս եւ զվէմս յինքն առնու. եւ վասն երագն խաղացից Տիգրիս անուն կոչի նորա. զի 'ի Պարսից լեզու Տիգրիս զտէգն կոչեն» ։

Յիշեալ գրքին Հայերէն թարգմանութեան (Հտ. Բ. էջ 427) «Ի Պարսից լեզու Տիգրիս զտէգն կոչեն» բառածքին վրայով՝ Հայ թարգմանիչը(*) կ'ըսէ 'ի ծանօթութեանն. «Ի Պարսից լեզու այժմ թէք ոչ ուրեք գտանեմք, եւ սոքա (վերը յիշուած մատենագիրներն ակնարկելով) որ Պարսից եւ Մարաց զանունն տան, զՀայս զսահմանակիցս նոցա իմանան՝ Պարսից կամ Մարաց անուամբ» ։

ԴԺՆԴԱԿ, Պրս. դէժէնդ, նոյն նչ. (ըստ օրին. օժընդակ) ։

ԴԱԺԱՆ, Պրս. դէժէմ, նոյն նչ.

ԴԱԺԱՆՈՒԹԻՒՆ, — Ի սկզբան եղբեւելոյ պտղոյն՝ թթուք, դաժանք եւ փոթոթահամք (Վեցօր.) ։ — Ոչ 'ի միոջէ ծառոյ երկու պտուղք, մին անոյշ եւ մին դաժան (Եղիշէ) ։ — Կէսն 'ի փառս եւ կէսն յանարգանս, մի թերն յանոյշս եւ միւս [illegible] 'ի [illegible] (Եղիշէ). Տպ. [illegible] 'ի [illegible] ։ — Կէսքն 'ի ծառոց զթթուութիւն եւ զդաժանութիւն ունիցին ... իսկ եւ իսկ դառնան 'ի քաղցրութիւն եւ յանուշութիւն (Վեցօր. Ե) ։ — Եթէ գտանիցի ոք որ ... իւրով դառն դաժանութեամբն տեսանիցէ 'ի մեզ զպարկեշտ կերպարանս (Վեցօր.). — Մի՛ ոք 'ի ձէնջ արմատ 'ի վեր բուսեալ դառնութեան եւ դաժանութեան (Օրին. ԻԹ. 18) ։ Յն. ἐν χολῇ καὶ πικρίᾳ ։ Յորմէ

ՏԱԺԱՆԻՄ, — Վատտակեցին, տաժանեցան հեծեալքն եւ [illegible] (Ա. Մկ. Ժ. 81). ա՛յլ օրինակ [illegible] ։

ՏԱԺԱՆԱՒՈՐ, եւ

ԺԱՆՏ, իբր համառօտութիւն վերնոյն, (դ ա ժ ա ն — ժ ա ն (ա) դ) ։
4 1 2 3

ԺԱՆԴ,

ԺԱՆՏԱԺՈՒՏ, ըստ օրին. [illegible], [illegible] ։ — Եւ ժանտաժուտն ասէ արհամարհանօք (Բ. Մկ. ԺԵ. 5) ։ — Որ զիւր որդին Որմիզդ անուշահոտ եւ լուսաւոր անդէն յորովայնին գիտէր, զմիւս որդին թէ ժանդահոտ եւ խաւարին իցէ, ի՞բր ոչ գիտաց (Եղիշէ) ։ — Իմ որդին լուսաւոր եւ անուշահոտ է, դու խաւարին եւ ժանդահոտ ես (Անդ) ։ — Կողովն մի էր յոյժ քաղցր թզոյ ... եւ կողովն երկրորդ ժանտահամ թզոյ, որ ոչ ուտիցի 'ի ժանտութենէ իւրմէ (Երեմ. ԻԴ. 2—3) ։

ԺԱՆՏԱԹԶԵՆԻ, Յ. συκομορέα ։

— Ել 'ի ժանտաթզենին տեսանել զՅիսուս (Ղուկ. ԺԹ. 4) ։ Սա եւ

ՄՈԼԱԹԶԵՆԻ, Յն. συκάμινος ։

ՄՈԼԱԹՈՒԶ, նաեւ

ԿԱՏԱՂԵՆԻ, — Գոյ 'ի թզենիս որ անուանեալ կոչի կատաղենի, այսինքն՝ վայրի մոլաթուզ (Վեցօր. Ե) ։

(*) Հ. Յովսէփ Գաթըրճեան ։

կ'ըսուի՝ ԷԷԹԷՔ ՄԸ ՉԷՔՄԷՔ, Արաբ. և Տճ. ԷԷԹ՝ նշ. ձեռն, ԷԷԹԷՔ՝ իբր 'ի ձեռն. ասով կարծեմ բաւական բացատրուած կ'ըլլայ թէ ի՛նչ ըսել կ'ուզէ 'ի մեզ

ՆԺՈՅԳ Ի ՁԵՌՆ, — Հինգ հազար հեծեալ վառեալ նժոյգ 'ի ձեռն (Ա. Մկ. Զ. 35)։ Յունարէնը չըւծեր այս կնճիռը։

∴

ՃԱՐԱԿ, Պրս. ՉԷՐԱՂ, ՉԷՐԱ, նշ. արօտ, ՉԷՐԷՆ, արածումն, ՉԷՐԷՄԷՆ, արածել, ՉԷՐԱՆԷՐ, ճարակաւոր, արօտական անասուն, ՉԷՐԱՆԷԱՀ, մակաղատեղի խաշանց կամ արօտական կենդանեաց։

Այս բառը՝ ինչպէս վերի օրինակները ցուցին՝ Պարսկերէնի մէջ ուրիշ նշանակութիւն չունի. իսկ 'ի մեզ կը նշանակէ նաև՝ ծաւալումն (հիւանդութեան, մոլորութեան, բոցոյ, հրդեհի վրայ խօսելով), նոյնպէս և բայը

ՃԱՐԱԿԵՄ, ՃԱՐԱԿԻՄ, ՃԱՐԱԿ ԳՏԱՆԵՄ, ՃԱՐԱԿԱԻՈՐ, արածել, ուտել, ծաւալիլ, զայրանալ, (ախտի, հրոյ եւայլն)։ — Մտցէ և կլցէ և ճարակ գտցէ (Յովհ.)։ — Սոքա աներկիւղ զանձինս ճարակեն (Յուդ. 12)։ — Ճարակեսցէ գայլ ընդ գառին... որթ և ցուլ և առիւծ 'ի միասին ճարակեսցին (Եսայ. ԺԱ. 6—7)։ — Զի մի՛ առաւել ճարակեսցի (մոլորութիւնն) 'ի ժողովրդեանն (Գործ. Դ. 17)։ — Բանք նոցա իբրև զքաղցկեղ ճարակ գտանեն (Բ. Տիմ. Բ. 17)։

Այսպէս է նաև 'ի Յն. ἡ νομή, նշ. արածելն արօտականաց, նշան. նաև ծաւալումն՝ զայրանալն ախտի, բոցոյ, հրոյ, և բայը νέμω, ճարակել, արածել անասնոց, և ծաւալել հիւանդութեան, եւայլն։

Տճ. ԷԱՅԸՐ՝ նշ. արձակավայր, արօտավայր, մարմանդ, ԷԱՅՄԱՔ ծաւալել, տարածել, և ԷԱՅԸՐՄԱՔ՝ ծաւալիլ, ճարակիլ։

∴

ԳԱԶՊԷՆ, Պրսկ. ԿԷԺԷՆԿԷԱՊԷՆ, Յն. ῥητίνη, այն է

ՌԵՏԻՆ։

∴

ՏԷԳ, (սեռ.) տիգի. Պրս. ԹԷՅՂ, նշ. սուր, սրածայր, տէգ. Տճ. ԹԸՂ, սրածայր, և ԹԷՔ, ուղղորդ, կանգուն, ԹԷՔ ԹՈՒՐՄԱՔ, կանգուն կալ։ — Հար զանակուչան 'ի տէգ նիզակի (Եփր.)։ Յորմէ և

ՏԻԳԻՔ, բազուկ, Տճ. ՊԷԼԷՔ, Յն. βραχίων։ — Մի՛ զտիգս մերկանալ, մի՛ զայտս ցոյել (Ոսկ. Փիլիպ.)։

Յորմէ (տէգ) 'ի հակառակէն՝

ՏԻԿ, բաղդ. արդն և արդու, գեղարդն և քաղիրթ, մկան և մկունդ, սուր և սրուակ, զատակ և տատասկ։

ԹԵՔԵՄ, ՏԷՔԷԼ, Յն. θήγω, նոյն նշ. — Իջանէին թեքել իւրաքանչիւր զգերանդի իւր և զգործի իւր, և իւրաքանչիւր զփայտատ իւր և ըզմանգաղ իւր (Ա. Թագ. ԺԳ. 20)։ — Զլեզու սրել և թեքել (Ոսկ. Մատթ.)։ Յորմէ

ԹՈՒՔ (*), Թրք. ԹԷԱՔԷԱՔ։

ԹՔԱՆԵՄ, Թրք. ԹԷԱՔՄԷՔ։

Ի ԲԱՑ ԹՔԱՆԵՄ, 'ի բաց հեղուլ, հանել արտաքս, չընդունել։ — Առաջին անկեալ սերմնն զայլսն իբրև զաւելորդս 'ի բաց թքանէ (Եղնիկ)։ Իսկ (Եզեկ. ԽԷ. 9). «Եւ եղիցի ամենայն շունչ անասնոց 'ի բաց թքելոց»։ զՅունականն ἐκζέοντων (զեռնոց)։ Թուի ընթերցեալ 'ի մեզ ἐκχεόντων ('ի բաց թքելոց)։ քանզի Յոյնն ունի, καί ἔσται πάσα ψυχή τῶν

(*) Տճ. ԹԷԱՔԷԱՔ, ԹԷԱՔՄԷՔ, մեր բառէն է։

ζώων ἐκζέοντων, եւ եղիցի ամենայն չունչ կենդանեաց զեռնոց ։

ԹՈՒՔՔ, — Ջայս զմեր օդս ձգեն առ մեզ Թոյլ Թօքքն որ 'ի մեզ հաստատեալ են (Վեցօր. Է. 139) ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՏՈԿ, ՏՈԿՈՒՆ, ՏՈԿԱՄ ։

Յորմէ (տէգ)

ՏԻԳՐԻՍ, Յն. τίγρις, գետ անուանի յայտնեալս ։

Կուրտիոս Հռուփոս Հռովմայեցի պատմագիրն կ'ըսէ Թէ Տիգրիս գետին անունը Պարսկերէն է, եւ կը նշանակէ՝ տէգ. այսպէս ըսած են նաեւ Ստրաբոն եւ Պլինիոս, Իսիդոր եւ ուրիշներն ալ կ'ըսեն Թէ Յունական τίγρης բառն է որ կը նըշանակէ վագր ։ Կուրտիոս ըսած է. «Ոչ այլ գետ գոյ 'ի կողմանս արեւելից որ այնպէս սաստիկ խաղայցէ, որ եւ զբազում իսկ յորդաջուր հեղեղատաց ոչ միայն զջուրսն, այլ եւ զքարինս եւ զվէմս յինքն առնու. եւ վասն երագն խաղացից Տիգրիս անուն կոչի նորա. զի 'ի Պարսից լեզու Տիգրիս զտէգն կոչեն» ։

Յիշեալ գրքին Հայերէն Թարգմանութեան (Հտ. Բ. էջ 427). «Ի Պարսից լեզու Տիգրիս զտէգն կոչեն» բառածքին վրայով՝ Հայ Թարգմանիչը(*) կ'ըսէ 'ի ծանօԹուԹեանն. «Ի Պարսից լեզու այժմ տէճ ոչ ուրեք գտանեմք, եւ ոչքա (վերը յիշուած մատենագիրներն ակնարկելով) որ Պարսից եւ Մարաց զանունն տան, զՀայս զսահմանակիցս նոցա իմանամ՝ Պարսից կամ Մարաց անուամբ» ։

ԴԺՆԴԱԿ, Պրս. տէճէնտ, նոյն նչ. (ըստ օրին. օժընդակ) ։

ԴԱԺԱՆ, Պրս. տէճէլ, նոյն նչ.

ԴԱԺԱՆՈՒԹԻՒՆ, — Ի սկզբան երեւելոյ պաղոցն՝ ԹԹուք, դաժանք եւ փոԹոԹահամք (Վեցօր.) ։ — Ոչ 'ի միջէ ծառոյ երկու պտուղք, մին անոյշ եւ մին դաժան (Եզնիկ) ։ — Կէսն 'ի փառս եւ կէսն յանարգանս, մի Թերին յանոյշս եւ միւս Բերբն 'ի տժուխու (Եզնիկ). Յալ. Բերբին 'ի տժուխու ։ — Կէսքն 'ի ծառոց զԹԹուուԹիւն եւ զդաժանուԹիւն ունիցին․․․ իսկ եւ իսկ դառնան 'ի քաղցրուԹիւն եւ յանուշուԹիւն (Վեցօր. Ե) ։ — ԵԹէ գտանիցի ոք որ․․․ իւրով դառն դաժանուԹեամբն տեսանիցէ 'ի մեզ զպարկեշտ կերպարանս (Վեցօր.). — Մի՛ ոք 'ի ձէնջ արմատ 'ի վեր բուսեալ դառնուԹեան եւ դաժանուԹեան (Օրէն. ԻԹ. 18) ։ Յն. ἐν χολῇ καὶ πικρίᾳ ։ Յորմէ

ՏԱԺԱՆԻՄ, —Վաստակեցին, տաժանեցան հեծեալքն եւ ճոտ (Ա. Մկ. Ժ. 81). ա՛յլ օրինակ ըստ ճոտն ։

ՏԱԺԱՆԱԻՈՐ, եւ

ԺԱՆՏ, իբր համառօտուԹիւն վերնոյն, (դ ա ժ ա ն — ժ ա ն (ա) դ) ։
4 1 2 3

ԺԱՆԴ,

ԺԱՆՏԱԺՈՒՏ, ըստ օրին. թուրճէրու պէրճ, կէրակոր ։ — Եւ ժանտամահուան առէ արհամարհանօք (Բ. Մկ. ԺԵ. 5) ։ — Որ զԻւր որդին Որմիզդ անուշահոտ եւ լուսաւոր անզէն յորովայնին գիտէր, զմիւս որդին Թէ ժանդահոտ եւ խաւարին իցէ, ի՞բր ոչ գիտաց (Եզնիկ) ։ — Իմ որդին լուսաւոր եւ անուշահոտ է, դու խաւարին եւ ժանդահոտ ես (Անդ) ։ — Կողոմն մի էր յոյժ քաղցր Թզոյ․․․ եւ կողոմն երկրորդ ժանտահամ Թզոյ, որ ոչ ուտիցի 'ի ժանտուԹենէ իւրմէ (Երեմ. ԻԴ. 2—3) ։

ԺԱՆՏԱԹԶԵՆԻ, Յ. συκο:κυρέα ։

— Եւ 'ի ժանտաԹզենին տեսանել զՅիսուս (Ղուկ. ԺԹ. 4) ։ Ասի եւ

ՄՈԼԱԹԶԵՆԻ, Յն. συκάμινος ։

ՄՈԼԱԹՈՒԶ, նաեւ

ԿԱՏԱՂԵՆԻ, — Գոյ 'ի Թզենիս որ անուանեալ կոչի կատաղենի, այսինքն՝ վայրի մոլաԹուզ (Վեցօր. Ե.) ։

(*) Հ. Յովսէփ ԳաԹըրճեան ։

Իսկ

ԴԺՆԻԿ, *Պրս.* տէժէյնէ, *նչ. հեւ-րիւն* (*Տճ.* պէշ. պօ-րըշօ), *եւ* տօ-ժ-նէ *նչ. խայթոց իշամեղուի*։ —*Փո-խանակ դժնկին նոճ ելցէ, Սխմա-քոս՝ փոխանակ գժնկին եղինձ ած է* (*Ոսկ. Եսայ.*)։ *Ցորմէ*

ԴԺՆԵԱՑ,

ԴԺԽԵՄ, *Պրս.* տէժխէյմ, *նոյն նչ.*

ԴԺԿԱՄ, *Պրս.* տէժկէամ, *նոյն նչ.*

ԴԺՈՒԱՐ, *Պրս.* տէ-շվ-ար, *նոյն նչ.*

ԴԺՈՒԱՐԱՒ, (*մկ.*), *Թարգմ. Թրք.* չէ-ն էլէ. (*գծ. հոլ.*) *որպէս եւ* հա-լ-է-։

ԴԺՈՒԱՐԻՆ, *Պրս.* տէ-շվ-արէն՝ (*յոյժ կարի դժուար, դժուարագոյն*)։

Ցորմէ

ԹՇՈՒԱՌ,

ԴԺՈՒԱՐԱԾԻՆ, *Յն.* δύστοχος, *Պրս.* տէ-շվ-արզադէ։

ԹՇՆԱՄԱՆՔ, *Պրս.* տէ-շն-ամ, *նչ. վատանունութիւն, եւ նշանակէ՝ նախատինք*։ *Ցորմէ*

ԹՇՆԱՄԻ, *Պրս.* տէ-շմէն (*Թրք.* տէ-շման, *թ շ մ ա ն* = *թշնամ*)։

3 2 1

ԴԺ, *մասնիկ է*, *Պրս.* տէժ, տէ-շ, *Յն.* δυς։

ՏԺ, *յորմէ համառօտեալ*

Տ, -- *տգէտ* — *տկար* — *Տքնու-թիւն*։

* * *

ՇՈՒԱՑՏՈՒԹԻՒՆ, *Արաբ.* շէհվէթ (*եզ.*), շէհէվ-թ (*յք.*)։

ՇՈՒԱՑՏՈՏ, ՇՈՒԱՑՏԻՄ, — *Զգոյշ լե-րուք անձանց, գուցէ ծանրանայ-ցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ եւ հոգովք աշխար-հականօք* (*Ղկ. ԻԱ. 34*)։ *յն.* κραιπάλη։

Ցորմէ 'ի հակառակէն՝

ՏՈՒԱՑՏԻՄ, *բաղդ. պարշտիմ եւ պժգամ, տարփամ եւ տառապիմ, տենչամ եւ տանջիմ, անձկամ եւ անձկանամ, ցանկամ եւ ցականիմ, ախտ եւ տաղտկութիւն*։ *Եւ*

ՎՇՏԱՆԱՄ, (*տ ո ւ ա յ տ, վ շ տ*)։

ՎԻՇՏ, *կաղմութիւնը բաղդ. քու-եայ եւ վէգ*։ — *Վշտակից լեր իբ-րեւ զքաջ զինուոր Քրիստոսի* (*Բ. Տիմ. Բ. 3*)։ *յն.* κακοπάθησον, (ֆէլա-կէթ չէք)։

* * *

՝ՆԿՐՏԻՄ, *Պրս.* նէկէտէյտէն՝ *նչ. հայել ուշ ունել*։ —*Զառ 'ի յետոյսն մոռացեալ է, եւ 'ի յառաջագէմսն նկրտեալ եմ* (*Փիլիպ. Գ. 13*)։ *յն.* ἐπεκτείνω. տ՛յլ նաքէմանտ-ինէն։

— *Որինչ զկնին, զայն մոռաց-եալ, եւ որ ինչ առաջին կայ, յայն ձգտեալ զխտեալ ստիպիմ* (*Ոսկ. Փի-լիպ. ԺԲ.*)։

* * *

ՄԵԼԱՆ, *Յն.* μέλας, *նչ. սեւ, եւ* μέλαν, *մելան, թանաք, սեւ (գյ) սեւադեղ*։ *Ցորմէ*

ՄԵՂՄԵԽ, —*Աղաչեմ զՏէր, թե-րեւս թողութիւն լիցի քեզ 'ի մեղ-մեխ խորհրդոց սրտի քո* (*Գծ. Ը. 22*)։

ՄԵՂՄԵԽԱՆՔ, *բաղդ, մոլութիւն, մոլի, ներքինի*։ *Եւ*

ՄԱՂՄԱՂ, *աշխ.* նոյն. տէ-ր. -ն-ջօժ, (*կրակի վրայ խօսելով*)։

Ցորոց 'ի հակառակէն՝

ՄԵՂԵԽ, — *Որ ոք մտանիցէ 'ի մայրի հարկանել փայտ, եւ . . . ան-կանիցի երկաթն 'ի ծեղենէ անտի* (*Օ-րէն. ԺԹ, 5*)։ *յն.* ξύλον։ —*Թէ անկ-ցի կացինն 'ի մեղեխէն*։ *Այլ է*

ՄԱԽԱՂ, *Արաբ.* ճախալ, *պարկ կերակրոյ գրաստու*։ — *Ընկէց 'ի մախաղ կերակրոյն իւրոյ* (*Ցաւագ. ԺԳ. 12*)։

ՀԵՂԳ, ՀԵՂԳԱՄ, — *Ընդէ՞ր հեղ-գայք. ահա լսեմ թէ գոյ ցորեան յեգիպտոս, իջէ՛ք անդր* (*Ծննդ. ԽԵ. 1—2*)։

ՀԵՂԳԱՍԻՐՏ, — *Հեղգասիրտք 'ի հաւատալ* (*Ղկ. ԻԴ. 25*)։ *յն.* βραδεῖς τῇ καρδίᾳ։ *Եւ*

ԵՂԿ. *Յն.* ἀλεεινὸς, ἀλεὸς, *Թրք.* ըլըք։

ԵՂԿԱՆԱՄ, էղէ՛ ֆազլէ ըլըուր՝
Ցորմէ

ԵՂԿԵԼԻ, Յն. ἐλεεινός:

ԵՂՈՒԿ, սակս նմանաձայնութեան Յունական բառիցս ἀλεεινος, ἀλεος, (էղէ), եւ ἐλεεινός, ἔλεος, (ողորմելի, ողորմութիւն): Իսկ

ԵՂԿՈՒԹԻՒՆ, թշուառութիւն, վայ, (ըստ հնոց): — Անդ երանութիւն մեծատանց տայ, եւ եղկութիւն աղքատաց (Եղնիկ):

Եւ գաղջ գոյն, գաղջութիւն (ըստ նորոց): Իսկ

ՀԷԹ, Արաբ. հաֆիֆ, նոյն նշ.:

*
* *

ՊԱՐԱԻԱՆԴ, Պրսկ. փէրվէնտէ, նոյն նշանակութեամբ:

ՊԱՐԱԻԱՆԴԵՄ, Պրս. բէրվէնտէյտէն, որ նոյն է ընդ

ՊԱՐԱՊՆԴԵՄ, Յն. περιδέω:

Բաղդ. դանդանուանդ: (Տես եւ բանտ, վանդեմ, վանդակ):

*
* *

ՎՐԱՆ, նոյն ընդ Յն. οὐρανός, (երկինք, քիմք), եւ Ռուսերէն՝ Նէբօ նշ. երկինք եւ քիմք: Պրս. խէմ, նշ. կամար շինուածոց, եւ աղեղն. տամա նշ. երկինք, առաստաղ, եւ կէամ նշանակէ

ՔԻՄՔ, — Որ կանգնեաց զերկինս իբրեւ զկամար, եւ ձգեաց իբրեւ զխորան (Եսայ. Խ. 22): — Ձգեցեր զերկինս որպէս խորան (Սաղմ.):

Տես եւ վեր, 'ի վերոյ:

*
* *

ԷՇ, (ռմկ.) իշոյ: Թրք. էշ, էշէք, նոյն նշանակութեամբ:

*
* *

ԵՐԱՆԳ, Պրս. րէնկ, նոյն նշ. այսինքն՝ տեսակնք, ամօթոյք մարդոյ, զոր մերկանալ ամօթ պատճառէ մեզ: — Դիր զձեռն քո ընդ երանօք իմովք (Ծննդ. ԻԴ. 2):
Ցորմէ 'ի հակառակէն

ԻՐԱՆ, երեւելի մասունք մարմնոյ մարդոյ, մարմին (մարդոյ), անդամք մարմնոյ: — Ոչ թէ ընդ զօրութիւն ձիոյ կամեցաւ տէր, եւ ոչ ընդ իրանս առն հաճեցաւ (Սաղմ. ՃԽԶ. 10): Այլ օրին. ընդ էրանս, եբր. քարջի, Յն. κνήμης, (ազդր, սրունք):

— Թէ տաց քուն աչաց իմոց... կամ հանգիստ իրանաց իմոց (Սաղմ. ՃԼԱ. 5): Յն. οἱ κροτάφοι: — Անիրան եւ անկերպարան (Եղնիկ):

ԻՐ, (մարմին որ ինչ է, նիւթ չօշափելի), ծագի 'ի բառէս՝ իրաւունք:

ԻՐԱՒ, իբր՝ ճշմարտիւ, արդարեւ, ստուգիւ, արդարեւ (որ է ռմկ՝ տօղրուսու). Յն. ὁ ὤν, (ընդ. ներկ. ածական εἰμί բային) իբր՝ ըլլող, գոյացող, այն որ է, նա որ է, որ էն. եւ τὸ ὄν (ընդ. ներկ. չէզոք), որ ինչ է, իրական, ստոյգ, իրաւ. τῷ ὄντι, իրաւ, յիրաւի. Արաբ. հաքիքաթ:

ԻՐԱՒ ԱՌՆԵՄ, — Իրաւ արարէք աղքատաց ժողովրդեան իւրոյ Սաղմ.):

ԻՐԱՒ ՏԱԼ, — Դուք ձեզէն տուք զիրաւ: Թրք. (հաքքը) հաք էթմէք:

— Դատ արա ինձ, եւ իրաւ արա ինձ Սաղմ.):

ԻՐԱԿԱՆ, եւ

ԻՐՕՔ, (մկ.), եւ

ԻՐԱՒՈՒՆՔ, որ ծագի բառէս օրէնք
ի ր ա ւ (ու) ն ք
4 3 1 2 5 6
ա ւ ր է ն ք, (ռմկ.) օրինաց:

Օրէնք եւ իրաւունք նոյն են ըստ ծագման եւ ըստ նշանակութեան:

Կազմութիւնը բաղդ. ֆրանսական եւ կրօն: — Ըստ իրաւանց քոց: — Իրաւունք քո խակք իմ էին (Սաղմ.):

ԱՆԻՐԱՒ, — Որ 'ի փոքուն անիրաւ է, եւ 'ի բազմին անիրաւ է (Ղուկ.):

ԱՆԻՐԱՒԵՄ:

ՅԻՐԱՒԻ , — Մեք յիրաւի , զի ար-ժանի որոց գործեցաքն , առնումք զհատուցումն (Ղուկ. ԻԳ. 4) ։

Ուրիշ բառ մ'ալ կայ Պարսկերէն , որ թուի նոյն լինել ընդ

ԽՐԱՍՏԱՆՔ (*) , ե ր ա ս տ ա նք — ի ս ք է ն ա է ր ։
3 4 8 6 7 5 1 2

— Եհար զնոսա յերաստանս իւր-եանց (Ա. Թագ. Ե. 3) ։ — Արարին Գեթացիքն իւրեանց՝ երաստանս (Անդ. 9) ։ — Կնդանիքն հարան յերաստանս իւրեանց (Անդ 12) ։ — Հինգ երաստանս ոսկիս արարէ՛ք , եւ հինգ մուկն ոսկի , եւ արդ արա-րէք զպատկերս երաստանաց ձերոց եւ զնմանութիւն մկանց ձերոց (Անդ Զ. 4) ։ — Եգին 'ի վերայ սայլին . . . զմկունսն ոսկիս , եւ զպատկերս ե-րաստանաց իւրեանց (Անդ 11) ։

Յորմէ համառօտեալ

ՆՍՏԻՄ , կամ 'ի Պրս. Նիշիմէն , նոյն նշ. , (հրմյ.) նիստ, Լտ, seden-tum ։ Իսկ (Նեէմ. ԺԳ. 23) · «Եւ յաւուրսն յայնոսիկ տեսի զՀրեայսն ; եւ զի Նստէին կանայք Ազովտացիք» · Յն. καθίζω , Նստուցանել, ուստի սկի-սի ըլլայ՝ Նստուցանել կամ բնակեցու-ցանել, եւ այս Յունական բառը ըստ ոճոյ Սուրբ Գրոց նշ. կին առնել, ա-մուսնանալ. — Εἶδον τοὺς ἰουδαίους οἳ ἐκάθησαν γυναῖκας ἀζωτίας , «Տեսի զհրեայս որք ածէին , կամ , զի ա-ծեալ էին կանայս Ազովտացիս» ։ Ա-զօտացի կիներ առած էին ։

Տես այս Յն. καθίζω , — Նստու-ցանել ընդ աջմէ իմմէ եւ ընդ ա-հեկէ , ոչ է իմ տալ , (Յն. Նստել) ։

Ուրիշ է

ԽՐԱՍՏ , Պրս. խարաբ , խարաբէ , (կարկ , չարք , դառն , դառնութիւն) ։

ՄԱՆԿ (**) , գրի եւ

ՄԱՆԳ , — Որ ընդ միամիտ ըն-կերին նենգաւ եւ մանկաւ գնայցէ (Վեցօր. Զ.) ։ Յորմէ

ԽՈՐԱՄԱՆԿ , գրեալ եւ

ԽՈՐԱՄԱՆԳ , ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ ,

ԽՈՐԱՄԱՆԿԵՄ , Յն. μάγγανον, նեն-գութիւն , խարդախութիւն , ծագ-եալ 'ի բառէս μηχανή , եւ սա 'ի բա-ռէս μῆχος , Հիլէ , Հիւնէր , Էլք , Ֆէնն ։

Յորոց

ՄԱՆԳՂԻՈՆ , — Բարձեալ բերէին մանգղիոնս եւ պէսպէս մեքենայս)Ա. Մկ. Է. 30) ։

ՄԵՆՔԵՆԱՅ , գրեալ եւ

ՄԵՔԵՆԱՅ , ՄԵՔԵՆԱՅԵՄ , Յն. μαγ-γανεύω , μηχανεύω , յորմէ (մանկ) , (խորա)մանկ , (խորա)մանկութիւն 'ի հակառակէն՝

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ , պըլըյուբիւն ։

ՄԱՆՈՒԿ , բաղդ. կողմնք եւ տը-ղայ , աղիճ եւ աղջիկ ։

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԴ , կամ

ՄԱՆԿԱՄԱՐԴ , էրիշքատըր , Նորա-հաս (կին) ։ — Կամիմ զմանկամար-դացդ ամուսնանալ ։

ՀՈՎԼԻ , (սեռ.) հովու-ի ։

ՀՈՎՈՒՈՒԹԻՒՆ ,

ՀՈՎՈՒԵՄ , առեալ 'ի ձայնէ սու-լելոյ հովուաց՝ իբր հէ-հէ- , հօ հէ- , այսպէս եւ Պրս. քէջ քէջ , նշ. զձայնն հովուական առ 'ի ժողովել զցրու-եալ հօտն ։ — (Հովիւն) առաջի նո-ցա (ոչխարաց) երթայ , եւ ոչխարքն զհետ նորա երթան , զի ճանաչեն զձայն նորա . . . զի ոչ ճանաչեն ըզ-ձայն օտարաց (Յովհ.) ։ Բաղդ. հայ-հոյել , հայ հու , հայ հուչ , յայ կար-դալ ։

* * *

ՊԱՂԱՏԻՏ , Յն. παλάθη , նշ. կո-ղով թզոյ ։ Պրս. ֆէլաքէ՝ նշ. պտուղ չորացուցեալ , Տճ. քուրու եէմիշ . եւս

(*) Երաստան , աստան նկատել է իբրեւ մասնիկ , որպէս 'ի բառս , դաստան , ծա-ռաստան , բուրաստան ։ (Բեր. Զարգ. 1495) ։

(**)Ն. Հյկ. Բռ, սահմանէ զբառդ , «Խար-դախութիւն , խորամանկութիւն , որպէս թէ ման գալով , կամ մանուկ անհաստատ գոլով» ։

եւ՝ քաղցու թանձրացեալ, որպէս բէքմէզ, բէստէլ եւայլն ։ — Կայծ մի չամիչ, եւ պաղատխոս երկիրխուր ։ — Առցեն պաղատխոս թզոյ եւ դի-ցեն 'ի վերայ վիրին ։

Պաստէղ՝ նկատի իբր՝ քաղցր ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՏՏԻՊ, իբր համառօտեալ 'ի նմա-նէ, բաղդ. ման եւ մաւն, մանա-նայ եւ մանանեխ, թուք եւ թթու, գեղձ եւ դաղձ, սեխ եւ սոխ, քաղ-ցու եւ քացախ ։

* * *

ԼԱՓԵՄ, Յն. λάπτω. նոյն նշ. — Ամենայն որ լափիցէ լեզուաւ իւրով իբրեւ զշուն . . . եւ եղեւ թիւ ամենեցուն որ լափեցին . . . երեք հարիւր արամբքդ որ լափեցին ըղ-ջուր փրկեցից զձեզ (Դտ. Է. 5—7) ։

* * *

ՆՈՒԱԳ, Պրս. նէվա, նոյն նշա-նակութեամբ, այսինքն՝ եղանակ եր-գոյ ։ — Զնուագս սրնգաց քոց ես ոչ լուայց (Ամովս. Ե. 23) ։ Յորմէ

ՆՈՒԱԳԵՄ, յորմէ 'ի հակառակէն՝

ՆՈՒԱՂԻՄ, ՆՈՒԱՂ, բաղդ. գեղ-գեղել եւ կերկերել ։

Այս բառը՝ ինչպէս յայտնի է՝ կը նշանակէ նաեւ անգամ, (ժամանակի վրայ խօսելով) ։ Բաղդ. եղանակ, հանգամանք, երբ եւ երփն երփն ։ — Եւ եղեւ յեօթներորդում նուա-գին պատելոյն հարին զփողսն (Յես. Զ. 16) ։ — Ի միում նուագի խօ-սեցի Տէր, եւ յերկրորդումն երազովի ։

Այսպէս նաեւ եղանակ՝ թէ՛ ձայ-նից վրայ կ'ըսուի եւ թէ՛ ժամա-կի . քանզի կ'ըսենք՝ եղանակ եր-գոց, եւ եղանակ ամարան ։ Որով-հետեւ նուագ կամ եղանակ փոփո-խումն է ձայնից, մասանց (ըստ ե-րաժշտաց) ։ Օդային փոփոխումն ալ ըսուած է՝ եղանակ ։ Իսկ՝ նուագ կը պատասխանէ մեր՝ անգամ բառին, — Յառաջնում նուագին, յերկրոր-դում նուագին ։ Եւ նոյն իսկ բառս՝ անցած է Պարսկերէն՝ հէնկեամ, որ նշ. ժամանակ, եւ մերձաւոր է ձայ-նիս ահէնկ, (եղանակ) ։ Տճ. քայիտէ՝ նշ. կերպ, տարազ, եղանակ, նշա-նակէ նաեւ նուագ, եղանակ ամկ. հավա ։ Լտ. tempus, նշ. ժամա-նակ, նաեւ եղանակ երաժշտական ։

Ուրիշ է

ՆՈՒԱԳ, բաժակ, աման, անօթ ։ — Եւ տանել նմա նուագս ոսկիս (Ա. Մկ. ԺԱ. 58) ։ — Ետ նմա իշ-խանութիւն ըմպել ոսկի նուագօք (Բ. Մկ. Դ. 39) ։

Պրս. նավէ, նշ. աման գոգաւոր՝ 'ի ձեւ նաւու . իբր՝ նավէկ, նավակ ։

* * *

ԺԻՐ, Պրսկ. ժէյր, զէր, ջէր, ջէրէ, նոյն նշանակութեամբ ։

ՆԱ, (մկ. կամ շղ.), մի՛ չփոթեր ընդ նա, (դեր.), Յն. μενοῦνγε, ըն-թերցի՛ր μεν οῦν γε, (զօրութեամբ ου), եւ նշ. ոչ, ընդհակառակն ։ — Զայն երարձ կին մի՛ 'ի ժողովրդենէ ան-տի եւ ասէ, երանի՛ է որովայնին որ կրեաց զքեզ, եւ ստեանցն որք դիեցուցին զքեզ . եւ նա ասէ . նա՛, երանի այնոցիկ է որ լսեն զբանն Աստուծոյ եւ պահեն (Ղուկ. ԺԱ. 28) . յն. μενοῦνγε, ոչ, ընդհակառակն ։ — Երանեցի՞ց ժողովրդեան որոց այս այսպէս է . նա՛, երանի ժողովրդեան որոյ Տէր Աստուած է նորա (Սաղմ. ՃԽԳ.) . յն. չիք ։ — Նա՛ աւասիկ ազնուականի իմն ցանկացեալ են (Եբր. ԺԱ. 16) . յն. բայց այժմ ։ — Նա՛ վաճառականք նորա փառաւորք՝ Քանանացւոց, եւ առգնողք նորա իշխանք երկրին (Եսայ.) . յետին մասն 'ի Յն. չիք ։ — Այլ նա՛ աւասիկ իբ-րեւ զկառս իմն լծեալ 'ի չորից ե-րիվարաց զաշխարհս տեսանեմք (Եղ-նիկ) ։ — Զիւն, սառն . . . եթէ յայլ-մէ արարչէ էին, ոչ կոչէր զնոսա

հոգին 'ի փառաւորութիւն ... բայց նա՝ անտանելք ուանիկ ... զնոսա ... 'ի նոյն փառաւորութիւն ... կոչեցեալ (Նոյն) : — Այլ , ասեն , հանգիստ է նմա (սատանայի) խաւարն : Նա ուանիկ՝ ոչ զայն աղաղակէր լսզէոնն դիւաց , այլ թէ տանջանք պատրաստեալ են նմա , զի՞ կայ մեր եւ քո , ասէ ... զի եկիր այսր յառաջ քան զժամանակն տանջել ըզմեզ (Նոյն) : — Ասեն որդիք ժողովըրդեան քո , ոչ ուղիղ է ճանապարհ տեառն , նա՝ նոցա ճանապարհն չէ ուղիղ (Եզեկ. ԼԳ. 18) :

Կը թուի թէ Պարսկերէն է՝ նա , նէ , նի , որպէս է Լա. no , (ոչ) :

* * *

ՁԱՅՆ , Լա. sonus նոյն նշան. : Բաղդ. սիւն , ձիւն , չուն :

* * *

ԴՍՏԻԿՈՆ , բառ մեզ՝ յորէ դուն . իսկ Յն. τὸ δίστεγον , նշ. երկրորդ յարկ տան , իսկ երրորդ յարկ , τρίστεγον , եւ միայարկ , μονόστεγον :

Իսկ (Գործ. Ի. 9) . « Անկաւ յերրորդ դստիկոնէն 'ի վայր » . յն. մի բառ , ἀπὸ τοῦ τριστέγου , յերրորդ յարկէն կամ 'ի վերնայարկէն : Իսկ (Անդ Թ. 37) . «Լուացին զնա եւ եդին 'ի դստիկոնի» . յն. ἐν ὑπερῴῳ , 'ի վերնատանն 'ի վերնայարկէն , որպէս (Անդ 'ի համարն 39) . «Զոր բերեալ եկին՝ հանին 'ի վերնատունն» , զնի համաձայն , Յունին , εἰς τὸ ὑπερῷον , քանզի երրորդ յարկն կայմէր 'ի նուն մն վերնատունն կամ զվերնայարկն :

* * *

ԽՈՐՇԱԿ , հին Պրս. խորշակ՝ նշ. արեւ : — Այրեցաւ 'ի խորշակէ որդի իմաստուն (Առակ) :

ԽՈՐՇԱԿԱՀԱՐ , — Խորշակահար լիցի ամարային որդի անօրէն (Անդ) :

Բաղդ. տապ , տապահար :

* * *

ՀՄԱԿԵՐՈՒԹԻՒՆ , Թարգմ. Յն. ὠμοφαγία :

ՀՄԱԿԵՐ , Յն. ὠμοφάγος , — Ընդէ՞ր լինիմք հմակերք (Մխ. Առակ.) :

ՀՈՒՄ , Յն. ὠμός , նոյն նշ. :

* * *

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ , Պրս. աշթի , նոյն նշանակութեամբ :

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԱՌՆԵՄ , Պրս. աշթի քերդէն : Իսկ

ՅԱՇՏ ԱՌՆԵՄ , զոհէլ հաշտ առնել զդէօ , զոհս մատուցանել դէց 'ի հաշտութիւն : Բաղդ. զոհել եւ յագել :

— Զէրն չէին վասն չէին յաշտ առնէր (Եղնիկ) : Պրս. աշթիխօրէ՝ նշ. հաշտարար կերակուր , կերակուր հաշտութեան կամ բարեկամական սեղան :

* * *

ԹՈՒԶ , Պրս. թուխթէն , (հրամ. եւ արմատ՝ թուզ) , նշ. կծկել , ամփոփել , ծրարել Թրք. դիւրմէք , Պրս. էնճիր՝ նշ. թուզ . նաեւ զծակն 'ի մաւակ ձիոյ ընդ ագուոյ , ընդ որ քակորն արտաքս ելանէ , եւ որ ձգտի եւ ամփոփի բառ պէտս . Թրք. դիւզիւք , եւ Պրս. էնճիրդէն՝ նշ. ծակել :

Յորմէ 'ի մեզ՝

ԱՆՋՐԴԵՏ , ԱՆՋՐԴԵՏԵՄ , — Անջըրդետեաց Աստուած 'ի մէջ լուսոյն եւ 'ի մէջ խաւարին (Ծննդ. Ա. 7) :

ԱՆԱՆՋՐԴԵՏ , տե՛ս՝ ծագ , ծագեմ , եւ ծակ , ծակեմ : Իսկ

ԱՆՋԱՏ , ԱՆՋԱՏԵՄ , ԱՆԱՆՋԱՏ , Պրս. էնճիդէն , ահէնճիդէն նշ. անջատել , զատանել , եւ մանաւանդ ա՛ ոչխարին մորթը վրայէն հանել , մորթը միսէն զատել , Թրք. էէւզմէք :

Յորմէ (թուզ , որ նշանի իբր՝ կծկեալ , ամփոփեալ , սեղմեալ) , 'ի հակառակէն՝

ԹԻԶ , իբր ոչ ամփոփեալ , տարածեալ , ընդարձակեալ : Բաղդ. դիկ եւ քիկ , ծրար եւ ծարիր , բուռն

եւ բուռ, ծայել եւ ծաւալել ։

— Ո՞ չափեաց ափով իւրով ըզջուր, եւ զերկինս թզաւ, եւ զերկիր ամենայն քլաւ (Եսայ.) ։ — Աստուածատուր գիրք զերկինս թզաւ ասեն, եւ զերկիր քլաւ, եւ ոչ աւելի զթիզն քան զքիլն գտանեմք (Եզնիկ) ։ Իսկ

ԹՈՒԹ (*), նոյն ընդ՝ Դութ՝ Թ եւ Դ լծորդք ըստ Յուն. Պրս. եւ Արաբ. — Հովիւ էի եւ թութ քաղէի (Ամով. Է. 14) ։

Յարմէ 'ի հակառակէն՝

ԹԹՈՒ, բաղդ. դեղձ եւ դաղձ, պաղատիտ եւ տտիպ, մանանայ եւ անանուխ ։

* * *

ԿՕՇԻԿ, (կաւշիկ). Պրս. քէֆշ. նոյն նշ. — Եթէ 'ի չաղամաթէ միոջէ մինչեւ 'ի խրացս մի կօշկաց առից ես յամենայնէ որ ինչ քո իցէ (Ծննդ. ԺԴ. 23) ։ Իսկ (Բուզ. Դ. 8). «Այս ինձ կօշիկ լիցին փոխանակ զի երէց արարի զքեզ», թերեւս ուղղելի է կօշտուք, եւ 'ի ձեւ հարցման ։

ԿՕՇԿԱԳՈՐԾ, — Զոստայնանկութեան եւ զկօշկագործութեան ճարտարութիւն 'ի բաց մերժեցին (Ոսկ. Բ. Կորնթ.) ։

ԿՕՇԿԱԿԱՐ, Պրսկ. քէֆշկէր, իբր կօշկարար ։

ՄՈՒՃԱԿ, Պրս. մուճէ, նոյն նշ. ։ — Եթող զանդգալ իւր, եւ էարկ յոտս զմուճակ կնոջն (Վրք. Հց. Զ.) ։

Դոյ եւ

ՍՈԼԵՐ, բառ յետնոյ. Լտ. solea, solearis, (կօշիկ, մուճակ, սանդալ), ծագեալ 'ի բառէս՝ solum, որ նշ. հող, յորմէ 'ի մեզ թարգմանաբար՝

ՀՈՂԱԹԱՓ, իբր՝ պահպանող 'ի հողոյ՝ 'ի փոշւոյ, եւ իբր Տճ. Բօղչա, եւ կազմուած՝ Աւետարանին սա իմաստին համեմատ ։ — Եւ զփոշին որ կառեալ է 'ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք (Ղուկ. Ժ. 11) ։ Իսկ

ՄՈՅԿ, գրեալ եւ

ՄՈՅԹ, իբր համառօտեալ 'ի ձայնէս՝ մօկոյկ ։ — Զմարտիկն զգեցեալ եւ մոյկս ագուցեալ (Բուզ.) ։ — Մոյգս անգամ ոչ ագանէր (Նոյն) ։

Որպէս եւ

ՍԱՆԴԱԼ կամ ՍԱՆՏԱԼ, Յն. σάνδαλον, Պրս. սէնտէլ, որ է մերս սանտալ, նշ. թէ՛ զմակոյկ եւ թէ՛ զհողաթափ ։ Յն. βᾶρις, նշ. նաւակ, մակոյկ, եւ հողաթափ, կօշիկ ։

Տե՛ս եւ մակոյկ ։

* * *

ԲԺԻՇԿ, Պրսկ. պէզէշք, բէժէշք, նոյն նշանակութեամբ ։

Յարմէ համառօտեալ՝

ԲՈՅԺ, բուժումն, բուժեմ ։

ԲՈՒԺՈՒՄՆ, յորոց

ԲԺԺԱՆՔ, կախարդանք 'ի բուժումն ախտից ։

* * *

ՃԱՊՈՒՌ, մագիլ, ճիրան. ծագի յԱրաբականէս՝ ճէպպէր, որ նշ. առիւծ մեծ ։ Յարմէ 'ի հակառակէն՝

ՃՊՈՒՌՆ, ՃՊԻՌՆ, Բաղդ. կէտ եւ կէտ, տիտեռն եւ թիթեռն, ցեց եւ ցեց, կինճ եւ գինձ, տիեզերք եւ տզրուկ ։ Իսկ

ՃԻՐԱՆ, ծագի 'ի Պարսկականէս չէնկալ՝ որ նշ. առիւծային ։

* * *

ՄԱՐՏ (*), պատերազմ, եւ ըստ

(*) Հայերէն է, Թէպէտ եւ 'ի Թրքաց եւս 'ի վար արկեալ ։

(*) Այս տեղ յայտնապէս կը տեսնենք որ ուրիշ ժողովրդեան մը յատուկ անունը՝ 'ի մեզ հասարակ անուան դարձած է, այս կարգէն են տրտօսր, դանդաղ, տափեծ, արծուի, ժմերտ, հիմն, փիշաղ, ջիրաղ, փիրգ ։ Տես զբառսդ ։

Լտ. գիր պատերազմաց mars, և պատերազմ, որուն սեռականէն (martis) ունինք մեր բառը։

Նաև նոյնանուն ամիս մը՝ մարտ, զի նոյն գից նուիրուած էր այս ամիսը (ըստ Հռովմայեցւոց)։

Ունինք նաև

ՌԱԶՄ, որ բուն Պարսիկ է՝ ռազմ. սակայն նոյն Լատին բառն է mars, այսպէս է նաև անահիտ, և փոխուած է 'ի Տիանա, Diana (*)։

Յորմէ

ՊԱՏԵՐԱԶՄ (**), բարդեալ՝ պատ, (այսինքն՝ պատահումն, բաղխումն), և ռազմ։ Պատահեմ՝ ըստ ոճոյ Ս. Գրոց, Նչ. հարկանել, սպանանել։

— Դարձի՛ր դու և պատահեա՛ քահանայից Տեառն, և դարձաւ... և կոտորեաց զքահանայսն Տեառն (Ա. Թագ. ԻԲ. 18)։ — Կոչեաց... և ասէ. մատիր պատահեա՛ դմա, և եհար զնա, և մեռաւ (Բ. Թագ. Ա. 15)։ — Արի՛ և դու քեզէն պատահեա՛ մեզ, զի ըստ առն և զօրութիւն իւր (Դատ. Ը. 21)։ — Խաղաց պատահել նմա պատերազմաւ (Ա. Մկ. Է. 31)։ Յորմէ (մարտ)

ՄԱՐՏՆՉԻՄ, ՄԱՐՏԻԿ, պատերազմող, զինուոր։ Իսկ (Բ. Տիմ. Բ. 5). «Եւ եթէ մարտիցէ ոք, ոչ պսակի եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ։

Յունարէն՝ ἐὰν δὲ καὶ ἀθλῇ τις, եթէ մարտնչիցէ ոք, և թարգմանիչն թուի ընթերցեալ ἀθλητής, մարտիկ, մարտիկ ոք։

Այս խօսքը (Ռմկ. Բ. Տիմ.) թարգմանուած է. «Եթէ նահատակիցի ոք, չպսակի, եթէ ոչ ըստ օրինին նահատակիցի»։

Քանի մը Պարսկերէն բառերու վրայ մանաւոր խօսք։

ՊԱՏԻԺ, Պրս. պատաշ՝ Նչ. բարէ հատուցումն, վարձատրութիւն, իսկ՝ պատաֆերաշ (յորմէ մեր

ՊԱՏՈՒՀԱՍ), Նչ. պատիժ։ — Ամենայն յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի (Եբր. Բ. 2)։ Յն. [illegible] [illegible]։ (Տես՝ լսեմ, 'ի ծանօթ.)։ Իսկ

ՊԱՏԱՀԱՐ, դարձեալ նոյն Պարսիկ բառն է՝ որ վերջին վանկը ձգած է, այսինքն՝ պատաֆերաշը՝ եղած է պատաֆեր. և այս վերջինն ալ իր վերջին վանկը՝ եր՝ ձգելով, և դառնալով 'ի պատաֆ, մեր

ՊԱՏԱՀ բառը կը կազմէ, յորմէ՝

ՊԱՏԱՀԵՄ, Յն. ἀπαντάω, յորմէ՝

ՊԱՏԵՀ, բաղդ. դիպիմ և դէպ, յորմէ՝ անդէպ, (անպատեհ)։

ԴԺՊԱՏԵՀ, բաղդ. դիպել, դիպեցուցանել, և դէպ, 'ի դէպ, դիպող։

Հուսկ յետոյ կը թուի թէ նոյն Պարսիկ բառին՝ միայն վերջին և վերջընթեր վանկերը՝ որ կըլլայ՝ ֆերաշ, կը կազմէ մեր

ՎՐԷԺ, յորմէ

ՎՐԻԺԱԳՈՐԾ, — Իշխանք ձեր... վրիժագործք (Եսայ. Ա. 23)։

ԹՈՇԱԿ, Պրս. թօշէ, թօշ, թէշ, Նչ. պաշար, պաշար ճանապարհի։ Ըստ մեզ՝ կը Նչ. այն բանը որ մէկը ուրիշէն կ'ընդունի։ — Շատ լիցին ձեզ թոշակքն ձեր։ (Տես և չօթ)։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՏՈՅԺ, ՏՈՒԺԵՄ, այսպէս և.

ՏՈԿՈՍԻՔ, ՏՈԿՈՍ, Յն. τόκος, որուն բայը τίκτω, (ծնանիլ), Ուստի նշանակէ նախ՝ ծնունդ՝ զաւակ, որդի, և փոխաբերաբար՝ որդիքն,

---

(*) Վաղնջական Պարսից գրերը որ աջէն կը կարդացուէին, Հռովմայեցիք կարդացին իրենց ոճովը, այսինքն՝ ձախէն աջ, բայց Պ. Էմինեան կը հարցնէ թէ ուրեմն ինչու Տէանա չէ, այսինքն՝ թէ ինչու Հ կորսուած է. և չընդունիր Տիանա և Տէանա բառից նոյնութիւնը (Հետազօտ. էջ 13)։

(**) Պատերազմ, — պատեալ ռազմ։ (Ն. Հյկ. Բռ.)։

[illegible], [illegible]. մենք ալ թարգմանաբար ունինք

ՓՈԽՈՐԴԻ (*), — Փոխ եւտուր, եւ չուանր գփոխորդին (Մեբեր. Թ.)։

Յորմէ (ամփոփք) 'ի հակառակէն՝

ՏՈՒԳԱՆՔ, ՏՈՒԳԱՆԵՄ, բաղդ. վաշխ եւ բաշխ, զանձել եւ քանցել, կցել եւ քեցել։

Իսկ (Ովս. Թ. 11)․ «Եփրեմ իբրեւ զհաւ թռեաւ, եւ փառք նորա 'ի [illegible], եւ յերկանց եւ յղութեանց»․ Յոյնն ունի՝ ἐκ τόκων, 'ի [illegible], զի 'ի Յոյն լեզու՝ որպէս ցուցաւ՝ τόκος, նշ. եւ տոկոս, եւ ծնունդ։

*
* *

Վ․ԱՆԿ, գրի եւ

Վ․ԱՆԳ, նոյն է ընդ

ԲԱՆԿ, Պրս. [illegible], նշանակէ ձայն, հնչիւն։

*
* *

ԴԱՇԽՈՒՐԱՆ, —Ջուր խնդրեաց, եւ ետ կաթն դաշխուրանաւ (Դատ. Ե. 25)․ յն. λεκάνη։

Մեր բառը բարդ է, դաշ-խուրան։

Պրս. [illegible] (դաշ), նշ. զաման յորում զկաթն կթեն, եւ [illegible] ([illegible], ուտելի չրոյ), Պրս. [illegible], (աման կթելոյ զկաթն)։ Յն. χωρέω, նշ. առնել, բաւական լինել, կրել, պարունակել, ինչպէս գործածուած է սա պարագայիս մէջ. — Անդ էին թակոյկք կճեայք վեց ... [illegible] մի մի 'ի նոցանէ մարս երկուս կամ երիս (Յովհ. Բ. 6)․ յն. χωροῦται ἀνὰ μετρητας δύο ἢ τρεῖς.

ՊԱՏԿԵՐ, Պրսկ. [illegible], Զէնդ՝ [illegible], 'ի Սեպագիրս [illegible], կայ եւ Յունարէն πάταικοι,« Փիւնիկեցի բառ մը, եւ կը նշ. նաւորդաց պահապան դիք, եւ անոր պատկերը՝ որ 'ի խելս Փիւնիկեցի նաւաց նկարուած կամ դրոշուած էին։

Յորմէ համառօտեալ՝

ԿԵՐՊ, (պ (տա) կեր — կերպ)։
2 1

Ըստ այսմ եւ Յունականս μορφή, (պատկեր, կերպարան, յորմէ 'ի մեզ՝ մրափ), փոխեալ է 'ի Լատին յետեւատաշութեամբ գրոց forma։

Տես եւ [illegible] եւ [illegible]։

Յորմէ

ԿԵՐՊԱՐԱՆ, ԿԱՐՊԱՐԱՆԱԽՈՐ, (իբր՝ [illegible])։ Բաղդ. դէմք եւ դիմակ, դիմակաւոր։ Իսկ

ՊԱՏՔԱՐ, Պրս. [illegible], նոյն նշ.

*
* *

ԵՕԹ՝Ն, ըստ հնոց՝ եւթն Յն. ἑπτά, Պրս. [illegible], Զէնդ՝ [illegible], Սանս. [illegible]։

ԵՕԹՆԵԱԿ, ԵՒԹՆԵԱԿ, Պրս. [illegible], Թրք. [illegible]։

ԵՕԹՆԵՒՔԵԱՆ, Պրս. [illegible]։

ԵՕԹՆ ՀԱԶԱՐ, Պրս. [illegible]։

ԵՕԹԱՆԱՍՈՒՆ։ Իսկ (Ղուկ. Ժ. 1 եւ 17), «Ցեա այսորիկ երեւեցոյց տէր եւ այլ եւս եօթանասուն եւ երկուս»․ (Յն. եօթանասունս)։ — Դարձան եօթանասուն եւ երկուքն (յն. եօթանասունքն) խնդութեամբ։ — Եկին յԵղիմ, եւ էին անդ երկոտասան աղբիւր ջրոյ եւ եօթանասուն ծառ արմաւենեաց (Ել. ԺԲ. 27)։ — Եկին յեղիմ, ուր երկոտասան աղբիւրքն, եւ եօթանասուն արմաւենիքն, 'ի տիպ երկոտասան եւ եօթանասուն Սուրբ Առաքելոց վարդապետութեան (Նխ. Ել. ԼԸ.)։ — Որ զօրինակ երկոտասան առաքելոց քոց, Քրիստոս, եւ զեօթանասուն ընտրելոց աշակերտաց յառաջագոյն ծանուցեր 'ի թիւ արմաւենեաց եւ աղբերացն Եղիմայ (Շրկն.)։ — Վասն

(*) [illegible], բարդ է, [illegible], եւ բառիս վերջին մասը ոչ թէ [illegible] մասնիկն է, այլ [illegible] բառն է, ըսել կ'ուզէ՝ [illegible] իս, այսինքն՝ [illegible] որդին՝ ծնունդը՝ շահը, Յն. τόκος, ինչպէս ցուցուած է 'ի վերոյ։

երեւեցուցանելոյ զեօթանասունսն (Նէ. Ղուկ.) ։ — Փչեաց Տէրն յերկոտասանան հոգի, եւ ետ իշխանութիւն եօթանասնիցն (Եղէկ) ։

Իսկ Լատինական ընթերցուածն Աւետարանին համաձայն մերումս ունի՝ եօթանասուն եւ երկուս ։

* * *

ՈՐԻՇ, Յն. ὅρος, (սահման) ։

Յորմէ

ՈՐՈՇԵՄ, Յն. ὁρίζω, (խտարինակ ձեւ), բաժանել, անջրպետել, սահմանել. յորմէ՝ հօրէզօն (ըստ արդեաց) ծագ ։ Բաղդ. ծագ եւ ծակ ։

— Որոշեցէ՛ք ինձ զԲառնաբաս եւ զՍօղոս 'ի գործ յոր կոչեցեալ է իմ զդոսա (Գործ. ԺԳ. 2)․ յն. ἀφορίσατε ։ — Որոշեցին տաւաքել 'ի պէտս եղբարցն (Գործ ԺԱ. 29)․ յն. ὥρισαν ։ — Զատանէր եւ որոշէր զանձն (Գաղտ. Բ. 12)․ յն. ἀφώριζεν ։ — Պօղոս... որոշեալ յԱւետարանն Աստուծոյ (Հռովմ. Ա.)․ յն. ἀφωρισμένος ։ — Սահմանելոյ որդւոյն Աստուծոյ (Գործ Ա.)․ յն. τοῦ ὁρισθέντος ։ — Որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ․ յն. κατὰ τὸ ὡρισμένον ։ — Գայ 'ի սահմանս Հրէաստանի (Մարկ. Ժ. 1)․ յն. εἰς τὰ ὅρια ։

* * *

ՍԷՐ, (սեռ.) սիրոյ, Յն. σειρήν, կենդանի առասպելեալ՝ կիսովն կին, եւ կիսովն ձուկն. կին հրապուրիչ եւ խաբուսիկ. հրապոյր, հեշտանք հաճոյից ։ Պրս. սէր՝ նշ. իղձ, փափաք, սայր սրոյ ։ Թրք. սեվի, սեվ-գի, տարփանք, տարփումն ։

ՍԻՐԵՄ, Թրք. սեվմէք ։

ՍԻՐԵԼԻ, Թրք. սեվկիլի-լի, սեվկիլի ։

Յորմէ (սէր)

ՍԱՅՐ, — Ի սայր սուսերի կոտորել ։

ԵՐԿՍԱՅՐԻ, Պրս. դուսէր ։

ՍԱՅՐԱՍՈՒՐ, եւ

ՍՈՒՍԵՐ, ուստի՝ շամշիր, (տեառ զրաղ) է իբր սայրանալ, եւ սաստ-ցեալ շիտտէ՝ նշ. սաստկանալ ։

— Զէր ինչ օգուտ, այլ եւս առաւել զայրացեալ (Մարկ. Ե. 26) ։

Եւ

ՍՈՒՐ, Յորմէ 'ի հակառակէն՝

ՍՐՈՒԱԿ, — Եւ առ Սամուէլ ըզսրուակն իւղոյ ։ Բաղդ. գեղարդն եւ քաղիրթ. աէգ եւ տիկ, արդն եւ արդու, վիրգ եւ գրիւ, քծուար եւ քածուարա ։

Յն. ξυρός (ած.) նշ. հատու, սուր, եւ ξυρόν (գյ.) նշ. ածելի, այսպէս եւ մերս սուր, թէ՝ գոյական է եւ թէ՝ ածական ։ Յն. ὄξος, նշ. քացախ, եւ ὀξύς, նշ. բարկ, թթու, եւ սուր, հատու ։ Թրք. կ'ըսուի միայն՝ քէսքին սիրքէ եւ քէսքին գըլըճ, բարկ քացախ եւ սուսեր հատու ։

— Սո՛ւր, սո՛ւր, սրեա՛ց եւ զայրացի՛ր (Եզեկ. ԻԱ. 9)․ յն. ῥομφαία, ῥομφαία, ὀξύνου καὶ θυμώθητι ։ — Երբեմն այսպէս ուտէ սուր եւ երբեմն այնպէս (Բ Թագ. ԺԱ. 25)․ յն. ποτὲ μὲν οὕτως καὶ ποτὲ οὕτως φάγεται ἡ μάχαιρα ։ Երր. «Երբեմն զայս ուտէ սուր եւ երբեմն զայն»։ — Եւ զՆոմբրս քաղաք քահանայիցն եհար սրով (ἐν στόματι) սուսերի յարանէ մինչեւ ցկին... բերանով սրոյ (Ա. Թագ. ԻԲ. 19)․ ի յն. չիք բերանով սրոյ ։ Յորմէ

ՍՐԵՄ, — Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի (Սաղմ.) ։

ՍՐԱՆԱՄ, ՍՈՒՐԱՄ,

ՍՈՒՐԷՆ, Պրս. սուրէն՝ նշ. յարձակումն, արշաւանք, ըստ մեզ յատուկ անուն մարդոյ ։ Եւ

ՍՈՑՐ, ('ի բարդութեան)

ԱՐՇԱՒԱՍՈՑՐ, նոյն ընդ՝ սրարշաւ ։

Սուր՝ գոյականաբար առեալ, նշ. նաեւ զախտ ժանտամահի ։

ՍՐԱԾՈՒԹԻՒՆ, իսկ (Մարկ. ԺԳ. 8)․ «Եւ եղիցին սովք եւ սրածութիւնք»․ 'ի Յն. չիք սրածութիւն ։

Յունականքս λιμὸς *եւ* λοιμὸς (*սով եւ սրածութիւն*) *նոյնաձայնք են. եւ 'ի մեզ սով եւ սուր ոչ կարի օտարաձայնք, զի սովն նոյն է ընդ սու, որպէս Յովսէփ եւ Յուսէփ, Յովնան եւ Յունան, Յովն եւ Յոյն,* (*տես. Յունի*) *զովող եւ զուող. ըստ այսմ եւ սով իբր՝ սու, — սեւ եւ սուր. Եւ*

ՄԱՀ, *ծագի 'ի Յն.* μάχερα, *որ նշ. սուսեր, սուր. — Բուռն է իբրեւ զմահ սէր* (*Երգ. Ը.* 6).

Բազդ. սրածութիւն. Թերեւս

ՍԵՂԵԽ *կամ* ՍԻՂԵԽ, *սիրոյ ծնունդ եղած ըլլայ.*

Յորմէ եւ համառօտեալն

ՋԵՂԽ, *խակ*

ՍՈՂՈԽ, — *Քաղցրաշունչ սղոխ վէտ վէտս զմկանունսն ծօծէ* (*Վեցր.*).

ՄՂՈԽ, *Թրք. սըրմաք՝ նշ. շունչ,* (*այսինքն՝ հողմ.*), *Յն.* αὖρα.

Ոգւոյ եւ հողմոյ անուն Եբրայեցւոցն եւ Յունարէն եւ Ասորերէն նոյն է, նա թէեւ Հայերէն ոք մանր միտ դնիցէ, նոյնպէս գտանէ, յորժամ տագնապեալ ոք յումեքէ իցէ, ասէ չեա ոգի կլանել, չեա ոգի առնուլ, եւ այնու զօգոյս զոր մինչ ծծեմք՝ յայտ առնէ... յորժամ մեք ասեմք թէ սիք չնչէ, Ասորնայք ասեն՝ այս չնչէ... գիտեմք եթէ այսն հողմ է, եւ հողմն ոգի (*Եղնկ.* 90–92).

Ասի եւ

ՈԳԻ ԱՌՆՈՒԼ, *Թրք.* նէֆէս ալմաք, սօլուք ալմաք.

ԴԱՓՐ ՀԱՏԱՆԵՄ, *նշ.* յէօլ գուրել չուքուրն հարքանելով ըօգօն.

— (*Զի*) *որոտայ 'ի դաշտի, եւ* ... (*Յոբ. ԼԹ.* 21).

Թէպէտ մեր բային պատասխանող Յունարէն բայն է ἀνορίσσω. *սակայն կայ ուրիշ բայ մ'ալ* ταφρεύω, *որ գրեթէ նոյն նշանակութիւնը կուտայ, եւ մերն այս բայէն ծագած կը թուի. կայ նաեւ Արաբ.* ..., *որ նշ. հարուածի, հարուած, որ կը հնչուի նաեւ՝* ..., ..., *այս պատահումը կը տեսնենք* ... *եւ* ... *բայերուն վրայ,* (*Տե՛ս ըդբառդ*). *Յորմէ*

ԴԱՐԲՆԵՄ, —*Թոյլ տէր* ... *դարբին պղնձոյ եւ երկաթոյ* (*Ծննդ. Դ.* 22).

ԴԱՐԲԻՆ, *Աղեքսանդրոս դարբին բազում չարչարանս եցոյց ինձ* (*Բ. Տիմ.*). *յն.* χαλκεύς. *Ուրիշ է*

ԴԱՓԻՒՆ, *Յն.* τύπος, *ձիուն ոտքին ձայնը՝ երբ ոտքը գետինը զարնէ.*

ԴԱՓԵՄ. (...). *Եւ*

ԴՈՓԵՄ, — *Ծափս հար, եւ դոփեա ոտամբ. — Փոխանակ զի կայթեցեր դու ձեռամբ քով, եւ դոփեցեր ոտամբ քով* (*Եզեկ. ԻԵ.* 6).

Եւ

ԹՈՓԵՄ, *յորմէ աշխ.*

ՏՓԵՄ, *կազմութիւնը բազդ. տապան, տապանակ, եւ տուփ.*

* * *

ՑԵՐԻՒՐԵՄ,

ԵՐԻՒՐԵՄ, *Յն.* ἄρηρα, (*'ի բայէս* ἀραρίσκω), *նոյն նշանակութեամբ.*

Յորմէ 'ի հակառակէն՝

ՍՏԵՐԻՒՐԵՄ, — *Ոչ ստերիւրեցայց 'ի ճշմարտութենէ* (*Իմաստ. Զ.* 25). *յն.* παροδεύω. *Բազդ. եղծանեմ եւ ստեղծանեմ, գտանեմ եւ ստգտանեմ, յանձնեմ եւ ստանձնեմ, համբակ եւ ստամբակ, ունկն դնեմ եւ ստունգանեմ.*

Այս՝ ազդեցութիւնն է յունականին, զի Յն. κατὰ (*ըստ սեռ. խնդրով*) *կը նշանակէ՝* ..., ...

* * *

ԱԹՈՌ, *Յն.* ἕδρα, θρόνος, καθέδρα, *Թրք.* օթուրմաք, (*նստիլ*) *եւ* օթուրաք, *նստարան, աթոռ.*

Աթոռ նկատի իբր տեղի բարձր.

— Արար . . . վեց աստիճան աթոռոյն ։ — Տեսի զտէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ (Եսայ. Զ. 1) ։ — Նի՛ստ 'ի գետնի զի չիք աթոռ (Ա՛ղբ. Խէ. 1) ։ — Իջցէն յաթոռոց իւրեանց ամենայն իշխանք ազգաց (Եզեկ. ԻԶ. 16) ։ — Ծառայք Եգղոմայ մտին եւ տեսին, եւ ահա դուրք վերնատանն փակեալ էին, եւ ասեն. գուցէ յաթոռ նստիցի 'ի պէտս (Դատ. Գ. 24) ։ (Տպ. յաթոռն) ։ Յորմէ 'ի հակառակէն՝

ԱՌ ԱԹՈՒՐ,

ԸՆԴ ԱԹՈՒՐ (*), երկուքն ալ մէկ է, նշանակութեան մէջ տարբերութիւն չկայ ։

— Ընկեցին զնա . . . եւ կոխեցին առ աթուր (Դ. Թագ. Թ. 33) ։

Բաղդ. խորան եւ խոնարհ, վեր եւ վայր, անկողին եւ նկուղ, սար եւ սոր ։

Յն. θρόνος (աթոռ), ծագի 'ի բայէս, θράομαι (նստիմ) եւ ἕδρα, յորմէ καθέδρα (աթոռ), ծագի 'ի բայէս ἕζομαι, յորմէ καθέζομαι (նստիմ) ։

Ա՛յլ է

ԱԹԵՐԱՑ, գրեալ եւ

ԱԹԵՐ, Յն. ἀθήρα ։

* * *

ԶԵՌԱՄ, Յն. ζέω, նոյն նշ. ։

ԶԵՌՈՒՆ, **ուն**՝ մասնիկ է, որպէս **խօսուն, թռչուն, չանչուն, նկուն** ։

Իսկ

ԵՌԱՄ, Յն. ἔρρω, նոյն նշ. ։ Ա՛յլ է

ԵՐԵՐԻՄ, Լտ. erro, երերիլ տատանիլ ։ յածիլ այսր անդր, թափառիլ, մոլորիլ ։ — Երերեալ եւ տատանեալ եղիցիս 'ի վերայ երկրի (Ծննդ. Դ. 12) ։

ԵՐԵՐ, — Տեսի զլերինս զի կային յերերի (Երեմ. Դ. 24) ։ Ա՛յլ է եւ

ԵՐՐ, (փառութիւն, ապականութիւն) ։ Տճ. **էրէն**՝ նշ. թարախ, փըտութիւն միրաց ։ — Զմահ կոչեցի ինձ հայր (զի θάνατος արական է), մայր եւ քոյր ինձ **զերր** (զի σαπρία ի-

---

(*) ԸՆԴԱԹՈՒՐ ՀԱՐԿԱՆԵԼ, երբեմն կարծի նոյն ընդ Առաթուր, այսինքն, առ ոտս հարկանել, այլ 'ի Սուրբ Գիրս դնի որպէս ἀνελεῖν ἐν ῥομφαίᾳ, թրով հարկանել, ընդ սրով արկանել, կոտորել 'ի սայր սուսերի ։ — Զերիտասարդս իմ ընդաթուր հարկանել (Յուդթ. ԺԶ. 6). (Ն. Հյկ. Բռ) ։

Բառարանը բառից շարքին նայելով՝ **ընդ-աթուր հարկանելը** կարծեր է թէ կը նշանակէ՝ **ոտքերու 'ի տակ առնելէ**, բայց այնպէս չէ, ուրիշ պատճառ կայ. այս տողերը երկիւղածութեամբ թարգմանուած չեն՝ անոր պատճառը ։ ուստի մեր բառից շարքը բնագրին շարքին չնայիր ։ Եթէ բառ առ բառ թարգմանուի, պէտք է այսպէս ըլլալ ։ զերիտասարդս իմ սրով սատակել, եւ զստնդեայս իմ ընդ աթուր հարկանել կամ զգետնի հարկանել, կամ առ ոտն կոխել ։ (Տես 'ի Յուդիթ ԺԶ. 6. 'ի ծանօթութեանն) ։ Τοὺς νεανίσκους μου ἀνελεῖν ἐν ῥομφαίᾳ, καὶ τὰ θηλάζοντά μου θήσειν εἰς ἔδαφος.

Այս պարականոնութիւնը Թարգմանութեանց մէջ կերեւայ տեղ տեղ ։ ուստի բառին շարքէն խաբուելու չէ ։ Այսպէս է, օրինակի համար ։ — Զայր շոյտ եւ զգոյշ 'ի գործս իւր (Առակ. ԻԲ. 29) ։ յն. ὁρατικόν ἄνδρα καὶ ὀξύν, այս տեղ ալ բառարանը սխալեր է՝ բառից շարքէն խաբուելով, եւ **շոյտ** բառին դէմ (տես զբառդ) նշանակեր է, ὁρατικός, որ զգոյշ, զգուշաւոր՝ ըսել է, մինչդեռ պէտք էր նշանակել՝ ὀξύς ։ Եւ (Երեմ. Ծ. 2) ։ «Ասաց Բաբելոն, յամօթ եղեւ Բէլ աներկիւղն, փափուկն մատնեցաւ Մերոդաք» ։ Այս զառածութիւնն Յունարէնին նման է, իսկ մեր Թարգմանութեան մէջ՝ **փափուկ** կը կանխէ բառն **աներկիւղ** ։ (Զոր միւս խոշոր սխալները՝ օրինակողներուն անհմտութենէն պատճառեալ) ։

Հյկ. Բառարանը՝ **ընդ-աթուր** ըսելով **առաթուր** բառ մը կը ցուցընէ, որ իբր թէ նշանակած ըլլայ՝ **ոտք**, որուն հետեւելով Առձեռն Բառարանն ալ 'ի կարգի բառիցն կը դնէ առաթուր, ոտք ։ Սակայն բովանդակ Հայ մատենագրութիւնն այսպիսի բառ մը չճանչնար ։ Կ'երեւի թէ այս սխալը մտած է՝ առ-աթուր, ընդ-աթուր բառէն, որովհետեւ առանք աշխարհաբար կը թարգմանուին, ոտքի տակ (կոխկռտել, ձգել), ապէ հետեւցընելով կարծուեր է թէ՝ **առաթուր** կը նշանակէ ոտք ։

գական է)։ — Երբ ծածկեաց զնոսա (Ատ. ԻԱ. 26)։ — Աստեղք ոչ են սուրբ առաջի նորա, թո՛ղ թէ մարդ երր, եւ որդի մարդոյ՝ որդն (Ատ. ԻԵ. 5)։ Յորմէ (եռամ)

ԵՌԱՆԴՆ, — կաթսայ յեռանդան տեսանեմ (Երեմ.)։

ԵՌԱՆԴՌՒՆ, բաղդ. Նախանձ։

*
* *

ԼԱՄԲ, Տճ. [illegible], [illegible], [illegible]։ — Եղիցին օղամանեակքն լամբք լծակաց (Ել. ԻԵ. 27)։

Յն. λαβή, որ ծագի 'ի բայէս λαμβάνω, որ նշան. ունել, բռնել։ Մենք ալ [illegible] բայէն ունինք՝

ՈՒՆԵԼԻՔ, [illegible], եւ մասնաւորապէս՝ [illegible], Թրք. [illegible]։ — Յուդա եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի (Գործ. Ա. 16)։ — Համբուրելո՞վ, ասէ, եկիր մատնել... զայս առ մատնիչն. եւ յունելիսն ասէ, զո՛վ խնդրէք (Սեբեր. ԺԴ.)։ Տպ. յունելիսն։ — Զկայծակն առնել ունելեօք երեր (Ես. Զ. 6)։

Արդ մեր բառը լ ա մ բ, վերը λ α μ β ցուցուած Յն. λαμβάνω բային չորս գիրերն է։

*
* *

ՅՈՊՈՊ, Թռչունի մը անուն է, Պրս. [illegible]։ — Էին թեւք նոցա իբրեւ զթեւս յոպոպոյ (Զաք. Ե. 9)։ Իսկ Պրս. [illegible] նշանակէ՝

ՀՈՊՈՊ, ԽՈՊՈՊ, ՀՈՊՈՊՈՒՔ, ԽՈՊՈՊՈՒՔ, իսկ բառս [illegible] ծագի 'ի Յն. ἔποψ, նոյն նշան. որ այլով ձայնիւ կոչի՝ ցին։ (Տե՛ս զբառդ)։

*
* *

ԽՈՆԱՒ, Պրս. [illegible]՝ նշ. արտասուք, բայց թարգմանի [illegible], Տճ. կ'բուսի, [illegible], աշխ. [illegible]։

Բաղդ. լուանամ եւ լամ։

Հայերէնին տուած նշանակութիւնն (տամուկ, տամկացեալ) Թուրքերէնին թեյադրութենէն է. զի Թրք. [illegible], թէ՛ արտասուք է եւ թէ՛ թացեալ, թաց, խոնաւ։ Իսկ

ՏԱՔ, [illegible], ծագի 'ի Յն. δάκρυ, որ նշ. արտասուք, Պրս. [illegible], տաք, եւ [illegible], արտասուք, նմանաձայնք են։ Թող զի եւ ջերմ են արտասուք։ Յորմէ

ՏՈՉՈՐԻՄ, յորմէ

ՏՈԳՈՐԻՄ, բաղդ. թրծել եւ թըրջել, մկրտել եւ մուրկ, (մրկել)։

*
* *

ԼԻՐԲ, բառ Լատին liber, որ նշ. ազատ, տակայն է նաեւ մակդիր Բաքոսի դից դինւոյ եւ արբեցութեան, liberalia, կը կոչուէր Բաքոսի տօնը, յորում ամէն տեսակ լրբութիւն անամօթաբար գործելու եւ խօսելու ազատութիւն կար (առ Հռովմայեցիս)։

ԼՊԻՐՇ, իբր բարդութիւն [illegible] եւ [illegible] բառից, յորմէ՝

ԼՊՐՇԱՆՔ։ Ա՛յլ է

ԼՊԻՐԾ, Լտ. lubricus, նոյն նշ.

ԼՊՐԾՈՒՏ, — Տեսանիցէ ոք զընկեր իւր ընդ լպիրծ տեղիս գնացեալ (Եզնէկ)։

*
* *

ԽԵՇԵՐԱՆՔ, ծագի 'ի Պրս. [illegible], որ նշ. մանրուղք, մանաւանդ՝ փշրանք հացի՝ անկեալք 'ի սեղանոյ։
Յորմէ

ԽԵՐԵՒԷՇ, մանր տակ։ — Այրին բազում տաղանդացն յաղթեաց երկու խերեւէշօքն (Ոսկ.)։
Յորմէ 'ի հակառակէն՝

ԽՈՇՈՐ, յորմէ 'ի հակառակէն՝

ՆՇԽԱՐ, իբր՝ ոչ խոշոր, այսինքն՝ մանր մասունք 'ի բոլորէն։

ՆՇԽԱՐԵՄ, կազմութիւնը բաղդ. նզով, նժար, նժոյգ, նկան, նկուն, նկուղ։ — Ժողովեցէ՛ք զնշխարեալ կտորսդ զի մի՛ ինչ կորիցէ (Յովհ.

Ջ. 12)։ — Բարձին վնչխարս կոտորոյն (Մ—ր. ԺԵ. 37)։ — Տո՛ւր ժողովրդեանդ զի կերիցեն եւ նըշխարեսցեն (Դ. Թ—գ. Դ. 43)։

Ուրիշ է

ԽԵՆԷՃ, Պրս. խէ—ընէ, նշ. կին անուանարկ, ցոփ, պոռնիկ։

* * *

ՀՐԱԺԱՐՈՒՄՆ, Պրս. ֆէրա—ղա. նշ. բաժանումն յիրերաց, հեռացումն, խորշումն, եւ

ՀՐԱԺԵՇՏ, Պրս. ֆէրա—շէյթէն՝ մեկնիլ, բաժանիլ յիրերաց, հեռանալ։

ՀՐԱԺԱՐԵՄ, յորմէ 'ի հակառակէն՝

ՅՕԺԱՐԵՄ, (յաւժար — հրաժար)։

ՅՕԺԱՐ, յորմէ

ԱԽՈՐԺ(*), (յ օ ժ ա ր — ա խ ո ր ժ)
4 1 2 5 3

ԱԽՈՐԺԵՄ, յորմէ 'ի հակառակէն՝

ԽՈԺՈՌԻՄ, ոչ ախորժել, ոչ յօժարել։ —Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում (Մ—րկ. Ժ. 22)։

Յորմէ

ԽՈՐՇԻՄ, — Զահի հարաւ ժողովուրդն, եւ խորշեցաւ եկաց 'ի հեռաստանէ (Ել. Ի. 18)։ Եւ խորշէր զօրն յաւուր յայնմիկ մտանել 'ի քաղաքն, որպէս խորշիցի զօր ամաչեցեալ յորժամ փախչիցի 'ի պատերազմէ (Բ. Թ—գ. ԺԹ. 3)։

ԳԱՐՇԻՄ, գգուիլ, 'ի բաց կալ։ — Զի խորշեցան 'ի նմանէ զօրքն (Մննդ. Նխ. Բ. Թ—գ.)։

ԳԱՐՇԱՆԱՄ, — Ամենայն երանք գարշասցին գինութեամբ (Եզեկ. Է. 17). յն. πάντες μηροὶ μολυνθήσονται ὑγρασίᾳ. այս բան գտանի (Առակ ԻԱ. 7). «Ամենայն երանք ապականեսցին խոնաւութեամբ»։

ԳԱՐՇԵԼԻ, — Մտի եւ տեսի, եւ ահա ամենայն նմանութիւն սողնոյ եւ անասնոյ, (Զոհրապ, սողնոց եւ անասնոց)։ մնոտիք, գարշելիք (Եզեկ. Ը. 10)։ Տպ. [illegible]։ Ի սովորական օրինակս Յուն. չիք, ամենայն նմանութիւն սողնոց եւ անասնոց։

Գոյ սակայն եւ ա՛յլ օրինակ, որ համաձայն է մերումս։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՔԱՐՇԵՄ, ձգել առ ինքն։ — Զի նենգութեամբ պատրէր Աքիտոփել, եւ քարշէր յինքն զԻսրայէլ (Նխ. Բ. Թ—գ. ԽԳ.)։ — Իսկ (Դատ. Ը. 7). «Ես քարշեցից զմարմինս ձեր փշովք անապատի եւ բորկոնիմաւ»։ (Առակ 16). «Եւ առ փուշս յանապատէ եւ զբորկոնիմն, եւ քարշեաց նոքօք զարսն»։ Իբր աշխ. [illegible]։

Բաղդ. մխեմ եւ մղեմ, ընդդրկեմ եւ ընկրկեմ։ Յորմէ (խորշիմ)

ԽՈՐՇ, իբր՝ առանձին տեղ մը, քաշուած տեղ մը։ Յորմէ

ԽՈՌՈՋ, եւ ԽՐՏՉԻՄ։

ԽՐՏՈՒԻԼ (գյ.), աշխ. [illegible]։

— Եղիցի երկիրն Հրէաստանի 'ի խրտուիլ Եգիպտացւոց (Ես. ԺԹ. 17)։

ԽՐՏՆՈՒՄ, եւ

ՀԱԹՉԻՄ, ՀԱՐԹՆՈՒՄ, — Սատանայ արկանէր ուռկան՝ աշխարհի, եւ արդարքն հարթնուին, եւ արտաքս քան զուռկանն ելանէին (Սեբեր.)։ — Յորժամ ուռկան արկանիցի, ձուկն հարթնու, եւ 'ի միջին ծոցն ղիմէ (Նոյն)։ — Յորո՞ց խաչանց արդեօք, 'ի հարթուցելո՞ցն, 'ի փախուցելո՞ց (Աֆ—ր.)։ Ուրիշ է

ՔԱՇԵՄ (աշխ.), Պրսկ. [illegible], նոյն նշանակութեամբ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՔՇԵՄ, վանել։ — Քշել յանձնէ ոչ կարէ (Թղ—ր. Բարսղ 13)։

* * *

ՀԱՅՀՈՅԵՄ, Յն. βλασφημέω։

Բաղդ. հովիւ։ — Ոչ ոք առնէ զօրութիւնս յանուն իմ, եւ կարիցէ հայհոյել զիս (Մ—րկ. Թ. 38)։ յն. κακολογῶ։

(*) Ախորժ, իբր՝ անուշ, անուշիկ՝ (Բերլին. Զարգ. 1470)։

ՅԱՑ ԿԱՐԴԱՄ, ՅԱՑ ՅՈՒ ԱՌՆԵՄ, ՀԱՑ ՀՈՒՋ ԱՌՆԵՄ, Պրսկ. հայ-հույ, հայէ հույ, անմշան ձայներ աղաղակի կոծոյ, բարկութեան, ուրախութեան, եւայլն։ — Ոտնհար լինել, եւ յայ կարդալ (Ովհ. Մանդ.)։ — Եթէ տալ չկամիցիս, ընդէ՞ր պատուհասիցես, եւ յայ յու, եւ հայ հու չ՛ զատապարտել ոգին եւ զվարանեալն առնիցես (Նոյն)։

* * *

ՋՈՐԻ, Պրս. չէ-ա՛ նշանակէ՝
ՑԽՈՒ, իշավայրի, յորմէ (ջորի)
ՋՈՐԵԱԿ, իբր՝ փոքրիկ ջորի։
Պրս. ասի՝ խառէ, որ թարգմանի՝ էշուկ, եւ Տճ. դէվէճէ, կողան։ Յն. ὄνος, նշ. և՛ւ էշ, և՛ւ ջորեակ, (ազգ մարախոյ)։

* * *

ԱՐՃԻՃ (աշխ.), նշ. կապար, իսկ Պրս. էրզիզ, նշ. անագ, Տճ. գալայ։
ԱՐՈՅՐ, Պրս. րույ, նոյն նշ.։ Եւ
ՊՂԻՆՁ, Տճ. բիրինճ, նշ. արոյր։

* * *

ՑՏԵՄ, Պրս. չէյտէն, նշ. կորզել, քարշել։ Յորմէ 'ի հակառակէն՝
ՁԵՑ, բաղդ. փետուր եւ փետել, փուշ եւ չփել, դատակ եւ տատակ, պարան եւ պարանոց, քարբ եւ գարշապար։

* * *

ՀԱՐՍԱՆԻՔ, թարգմ. Յն. ձայնիւ՝ νυμφεῖα։
ՀԱՐՍՆԱՒԷՐ, բարդեալ՝ հարսն եւ ավէր, որ է արմատ Պրս. ավէրտէն բային, որ նշ. ածել, բերել։ Այսպէս եւ
ՓԵՍԱՒԷՐ, Յն. νυμφαγωγός, (νυμφη հարսն), եւ (ἄγω ածել)։

* * *

ԱՊԱՐԹԱՆԵՄ, Պրս. ավէրդ՝ նշ. պատերազմ, յորմէ
ԱՒԱՐ, ԱՒԱՐԵՄ,
ԱՒԱՐ ՀԱՐԿԱՆԵՄ։ — Արագ արագ աւար հարկանել (Ես. Ը. 1)։

Եւ
ԱՒԵՐ, Պեհ. ավէր՝ նշ. աւերակ, կործանեալ, կորուսեալ, ապականեալ, ցրուեալ։ — Տունդ իմ աւեր կայ (Անգ. Ա. 4)։
ԱՒԵՐԱԿ, ԱՒԵՐԱԾ, ԱՒԵՐԵՄ,
Յորմէ (աւար)
ԱՊՈՒՌ, — Արագ արագ աւար կարկանել, եւ փաղփաղակի զապուռ ժողովել (Եսայ. Ը. 1)։
ԱՌ ԵՒ ԱՊՈՒՌ,
ԱՌ (գյ.), — Ամենայն իսկ առն՝ աւար կոչի (Սեբեր. Դ.)։ — Յառ, յաւար արշաւեալ գաս (Եզեկ. ԼԸ. 13)։ — Մեծութիւն թէ առիւ գայցէ, մի՛ յօժարեսցին սիրտք ձեր (Սաղմ.)։
ԱՊՌԵՄ, — Դիմեաց աւարել, ապռել զաշխարհն Պարսից (Նխ. Ա. Մկ. Ջ.)։ — Ոչ կարաց ապռել զերփել (Եզր.)։ Յորմէ 'ի հակառակէն՝
ԱՊՈՒՐ, ՄԱՐԴԱՊՈՒՐ, — Թողին զվրանս իւրեանց, եւ փախեան մարդապուր (Դ. Թագ. Է. 7). Յն. ἔφαγον πρὸς τήν ψυχήν ἑαυτῶν։ (Աշխ. ջանընի գուրթարմագ)։ Իսկ
ՄԱԶԱՊՈՒՐ, աշխ. եւ Տճ. բացատրութեան մօտ է, գըլ փայ, գըլ գուրթուլ։ — Սատակեցաք զամենայն քաղաքն մի ըստ միոջէ, եւ ոչ թողաք մազապուր (Օրին. Գ. 6)։ — Եւ ինքն կորակոր փախուցեալ մազապուր լինէր (Բ. Մկ. ԺԱ. 12)։ — Մազապուր ճողոպրեալ ... 'ի փախուստ անկանէր (Բ. Մկ. ԺԲ. 35)։ — Յեղեռնաւոր պատուհասէն մազապուր եղանէր (Գ. Մկ. Ե. 19)։
Այս բառը Յունարէնին մէջ չկայ 'ի վերոյ նշանակուած կոչմանց մէջ։
ԱՊՐԱՆՔ,
ԱՊՐԻՄ, ԱՊՐԵՑՈՒՑԱՆԵՄ, բաղդ. զերծում եւ զերծում, պրկեմ եւ փրկեմ, փակեմ եւ փախչիմ։

Ուրիշ է

ԱՒԵՂ, Թրք. ֆայտէլի, ծագեալ 'ի Յունականէս՝ ὄφελμα, որ նշ. առաւելութիւն, հանել աւել։ Որուն

բայց կ'ըլլայ ὀφέλλω , *առաւելուլ , լինել աւելի , աւել ածել ։*

ԱՒԵԼ ԱԾԵԼ , *յորմէ*

ԱՒԵԼԻ , ՅԱՒԵԼՈՒՄ , *կազմ. բաղդ. աջող եւ յաջող , երկեւան եւ յերկուանք , օրէն եւ յօրինել , արգոյ եւ յարգոյ ։*

ՅԱՒԵԼՈՒԱԾ , *եւ*

ԱՌԱՒԵԼ , ԱՌԱՒԵԼՈՒՄ , (*առ-աւել , եւ աւել-ի*) ։ *Բանզի Յունական ձայնդ* ὄφελμα , *որ նշ. աւել , նշ. նաեւ առաւելութիւն , աճումն ։ Իսկ*

ՅԱՊԱՒԵՄ , *իբր՝ 'ի բաց բառնալ զաւելորդս ։ — Արարից այց . . . 'ի վերայ ամենայն յապաւելոցն զերեսօք (Երեմ. Թ. 26) . յն.* ἐπὶ πάντα περιχειρόμενον τὰ κατὰ πρόσωπον αὐτοῦ *— Արբուցի ամենայն ազգաց , եւ ամենայն յապաւելոցն զերեսօք (Անդ ԻԵ. 23) . յն.* καὶ πᾶν περικεχαρμένον κατὰ πρόσωπον αὐτοῦ ։ *— Հասեալ ընդ ամենայն հողմս զյապաւեալսն առերեսօք (Անդ ԽԹ. 32) . յն.* κεκαρμένους πρὸ προσώπου αὐτῶν ։

(*Իբր՝ երեսին ածելի դպցընելով՝ մօրուքը յարդարել , կամ մօրուքը կտրել՝ կարճեցընել*) ։

*

* *

ԱԽՏԱՐՄՈՂ (*) ,

ԱԽՏԱՐՄԱՂ , *գրեալ եւ՝ ախտարմօղ , Թերեւս վրիպակաւ , քանզի բարդեալ է ախտար , (աստղ) եւ մող կամ մաղ , Պրս. մօղ , մուղ , մաղ , եւ Յն.* μάγος , *նշ. մոգ , ուստի նոյն է ընդ*

ՄՈԳ , *— Անտեղի է մեզ երկրորդել զառասպելսն . . . եւ ախտարմողացն կամ ախտարմաղացն յառաջասացումն որ են քաւդեայք (Խոր. Բ.)։*

*

* *

ԳԱՁԱՐ , *Պրս. կէշէր , նշ. սանդղին . իսկ Պրս. ճէօքէնտէրէ՝ նշ.*

ՃԱԿՆԴԵՂ , *Տճ. ճանտար , Վրաց. ճաչարտէլի ։* (*ճ ա կ ն* | *գ ե ղ*) (*չիւքիւն* | *ախւր*)

Տաճկական ձայնդ ճանտար , որ մասնաւոր բոյսի մը անուն է , առնուած է 'ի մեզ իբրեւ ընդհանուր անուն բանջարեղինաց ,

ԲԱՆՋԱՐ , *— Ամենայն բանջար վայրի մինչ չեւ լեալ էր 'ի վերայ երկրի (Ծննդ. Բ. 5) ։ Այսպէս Յն.* λάχανον , *որ ընդհանուր անունն է բանջարեղինաց ։ Ըստ Թրք. մասնաւոր բոյսի մը անուն է , լահանա ։*

ՍՏԵՊՂԻՆ , *Յն.* σταφυλῖνος, *նոյն նշ. — Հարցաւ ստեպղին 'ի չաղգամէ եթէ զի՞ այդքան ընդ երկրաւ մտանես (Մխիթ. Առակ) ։*

*

* *

ՃԻՇԴ ՃՇԴԻՒ , *—Եւ եթէ զնախանձուէն ես ճշտիւ քննիցես (Եղիէկ) . Տպ. ճշտիւ . այս ընթերցուածը բաղդ. (Անդ 35) . «Յորժամ ճշգիւ մրցութիւնք լինիցին» ։ —Եւ թէ ճշգիւ ոք քննիցէ զիրան (Անդ 31) . Տպ. ճշմարտիւ ։ —Այլ այժմ չէ ժամանակ ճշգիւ եւ զատկաւ 'ի համագիսի մնցուցանելոյ (Սեբ. Թ. 181) ։ — Բայց այժմ չէ ժամ զայն ճշգիւ քննելոյ (Անդ) ։*

ՃՇԴԵՄ , *բառ Լատին,* justus, justum , *արմատ ,* jus (*արդարութիւն , օրէնք , իրաւունք*) . *իսկ Պրս. ճէսթէն՝ նշ. խնդրել , քննել ։ Յորմէ*

ՃՇԴՐԻՏ (*) , ՃՇԴՐՏԵՄ , *բարդեալ Լատին արմատովս՝* jus (*ճշ*) , *եւ Յունականաւս* κριτής (*դատաւոր , որոշիչ*) ։

ՃՇԴՐՏՈՒԹԻՒՆ , *Տես եւ գրեմ եւ որդեգիր ։ Եւ*

. (*) *Աւտարմօղ ընթեռնու Ն. Հյկ. Բռ. և ըստ այսմ ստուգաբանէ , «Մոլեալ յախտարս , զակատեալ զենս փիլիսոփայութեան ախտարակաց եւ աստեղագիտաց » ։*

(*) *Ճշ ճշէտ . Այսպէս վերջաւորուած ուրիշ բառ չկայ Հայերէն ։ Վերջին երկու գիրը էտ՝ իբրեւ մասնիկ ցուցուած է 'ի Բերին. Ջարգ.* 1496 ։

ՃՇՄԱՐԻՏ, Լատինին միայն j գիրը կ'առնուի իբր համառօտութիւն jus բառին ։

ՃՇԳՐԻՏ, Լատինին երեք գիրը jus կ'առնէ ․ իսկ

ՃԻՇԴ, կ'առնէ ամբողջութեամբ ։

ՃՇՄԱՐՏԵՄ, բարդեալ Լատին արմատովս jus (ճշ), եւ Պրս. ձայնովս՝ շումարդէն,

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ, (ածք.) շումարդէն, (թուել, համարել, կարծել)․ ուստի՝ ճշգրտութիւն, եւ ճշմարտութիւն են իբր թարգմանութիւնք Յն. ὀρθοδοξία ։

Այս տեղ պէտք է բացատրել որ Պրս. շումարդէն կը նշ. թուել կամ համարել՝ իրօք, այսինքն, ըստ թուաբանից, ասելով՝ մի, երկու, երեք, եւայլն, բայց 'ի մեզ առնուած է՝ թուել, համարել, այսինքն՝ կարծել, ընդունել, հաւատալ, որպէս եւ 'ի Թրք. սայմաք, կրկնանշանակ է, քանզի է թուել իրօք, եւ կարծել, ընդունել . իսկ (Եսթեր ԺԶ. 10) . «Ճշմարտութեանց օտար լեալ 'ի զաւակէն Պարսից» . Յն. ταῖς ἀληθείαις ἀλλότριος τοῦ τῶν Περσῶν αἵματος . «Յիրաւի օտար յարենէ Պարսից» ։

Յորմէ (ճշմարիտ) 'ի հակառակէն՝

ՄԱՐԹ, վիճակ ընդ ճշմարիտ եւ ընդ սուտ, եւ

ՄԵՐԹ, վիճակ ընդ միշտ եւ ընդ ոչ երբէք ։ Իսկ

ՆՇՄԱՐ, երեւոյթ ինչ ստուերատիպ, ընդ աղօտ տեսիլ, իբր՝ ա՛ն (ճշ) մար . ճ չմար (ճ, համառօտութիւն jus բառին ։ Ն չմար, իբր՝ ան ճշմարիտ, այսինքն՝ ան՝ փոխանակ ճի, Ն-չմար ։

ՆՇՄԱՐԱՆՔ, —Այն ամենայն ստուեր էր եւ նշմարանք (Ոսկ. Եփ.)։ —Իբրեւ զհաւու թռուցելոյ յօդս, որոյ ոչ գտանիցին նշմարանք գնացից (Իմաստ. Ե. 11) ։ — Օրինակ երկնաւորացն են, այսինքն՝ նշմարանք են այսր պաշտաման (Եփր. Եբրայ.) ։ —Յաչս այնր ապաշխարութեան՝ մերս որպէս նշմարանք են (Եփր. Նխ.) ։

ՆՇՄԱՐԵՄ, տեսանել 'ի բացուստ, կամ ընդ աղօտ ։ — Զգող մի նշմարէին թէ ափն ծովուն իցէ (Գործ. ԻԷ. 39) ։

Շմերդ (*) մոգին պատմութիւնը

(*) Կամբիւս եւ Շմերդ որդիք էին Կիւրոսի ։ Կամբիւս սպանանէ զեղբայր իւր զՇմերդ՝ կասկածեալ թէ խորհի յափշտակել զիշխանութիւն իւր ։ Կամբիւս 'ի խաղալն պատերազմաւ յԵգիպտոս՝ կացոյց 'ի վերայ աշխարհին զՊարիզիթ անն մոգպետ փոխանակ իւր, եւ Պարիզիթեայ էր եղբայր մի՝ նման կերպարանացն Շմերդեայ որդւոյ Կիւրոսի, որ ստէպ Թերեւս զանուն նորա կոչէր ։ Պարիզիթ մոգպետ իբրեւ լուաւ զմահ Շմերդեայ արքայ որդւոյն՝ որում սակաւք իրազէտ էին, եւ տեսեալ զմոլեգնութիւն Կամբիւսեայ անհանդուրժելի լեալ, Թագաւորեցոյց զեղբայր իւր զՇմերդ՝ իբրեւ որդի Կիւրոսի ։ Մեռանի Կամբիւս 'ի պատերազմին ։ Խորհեցաւ Շմերդ զի հարկ էր ծածկել զխաբէութիւնն . վասն որոյ 'ի սկզբան Թագաւորութեանն բնաւ եւ արտաքս ոչ ելանէր . բայց զգուշութեամբն այնուիկ յաւելոյր կասկածանս աւագանւոյն եւ ժողովրդեան ընդ խաբէութիւն իւր ։ Եւ էառ Շմերդ զամենայն կանայս Կամբիւսեայ՝ իւր 'ի կնութիւն . յորս էր եւ Փեդիմա դուստր Ոտանայ իշխանին մեծի՝ Պարսից ։ Ոտան խրատեաց զդուստր իւր զի զննեսցէ զգուշութեամբ Թէ իցեն նորա ականջք . քանզի զՇմերդեայ մոգուն հատեալ էր զականջս Կիւրոս վասն յանցանաց իրիք . եւ Փեդիմա գտեալ պատեհ՝ զննեաց զականջսն Շմերդեայ զի հատեալ էին, եւ զգացոյց հօր իւրում, եւ յայտնեցաւ նենգն ։ Եւ Պրեքասպ յաշխարհաժողով հրապարակի խոստովան եղեւ համարձակ ըզճշմարտութիւն, եւ, ասէ, իմով ձեռամբ սպանի զՇմերդ՝ որդի Կիւրոսի, հրամանաւ եղբօր նորա Կամբիւսեայ, եւ որ այժմ Թագաւորէ, նա ինքն Մոգն է ։ Եւ սպանեալ ըզստանունն Շմերդ՝ ածին 'ի հրապարակ 'ի տեսիլ ամբոխին զգլուխ նորա, եւ կարգեցին զօրն զայն ամ յամէ տօն տարեկանաց 'ի Պարս, կոչեցեալ Կոտորած մոգուց . (μαγοφθονία) ։ (Ռոլ. Հնախ. Հտ. Ա. 465) ։

յայտնի է բանասիրաց թէ ի՛նչպէս պէս զինքը Կիւրոսին տղան կարծեցընել տուաւ, եւ թագաւոր եղաւ։

Եւ ահա այս մոգին (Շմերդ) անունէն ունինք՝

ԺՄԵՐՏ, ԺՄԵՐՏԻՄ, իբր յանդուգն խաբեբայ ըլլալ եւ սուտ՝ Շմերդ մոգին պէս՝

ԺՄԵՐՏԵԱԼ (*), — Այլ չար է, անեն, ազգն, ժմերտ, լիրբ եւ անամօթ (Ռուկ. Եփես.)։ Եզնիկ լուսնին վրայ խօսելով, Յոյն փիլիսոփայից վարդապետութիւնը կը պարսաւէ, Յունաց փիլիսոփաները, կ'ըսէ, 'ի զուր կը ճգնին հաստատելու՝ թէ լուսինը ինք իրմէն լուսաւոր մարմին մը չէ, հապա արեւէն կ'առնու լոյսը։ Մինչդեռ մենք, կ'ըսէ, արեւը մարը մտնելէն շատ ետքը, եւ ամենեւին արեւ չգտնուած գիշեր ժամանակ՝ լուսնին լոյսը եւս աւելի պայծառացած կը տեսնենք, իսկ նոքա կը ջանան մեր տեսածին հակառակը հաստատել, կ'ուզեն որ մարդիկ իրենց աչացը վկայութեանը չհաւատան, կուզեն վարդապետութեամբ ամենուն աչքը կապել։

— Նոքա այնքան ժմերտեալք մինչեւ զամենայն մարդկան աչս կամին ունել (Եզնիկ)։ Այս խօսքը բաղդ. (Ղուկ. ԻԴ. 16). «Եւ նոցա աչք կալեալ էին առ 'ի չճանաչելոյ զնա», ուր քիչ մը ետքը կ'ըսէ, «Եւ նոցա բացան աչք եւ ծանեան զնա»։ — Մինչդեռ հայէին նոքա (աշակերտքն), վերացաւ (Յիսուս), եւ ամպ կալաւ զնա յաչաց նոցա (Գործ. Ա. 9)։

Այս բացատրութիւններն կարծեմ բաւական են երեւան հանելու՝ ժմերտ, ժմերտեմ, ժմերտեալ բառերուն բուն նշանակութիւնը, հանելով այն անստոյգ եւ անյայտ վիճակէն, յորում դեռ կը տատանէր ըստ վկայութեան Հայերէն բառագրոց։

Թերեւս եւ

ԺՄԵՐԵՍ (*), — Ի նմին ժամու պատառն իւր ժմերես (Յեզաբէլ) մատուցեալ սեւացուցանէր զմացառս աչացն (Եփր. Թագ.)։

Այս արմատէն է նաեւ

ԺՏԵՄ, Յն. ζητέω (խնդրել)։

— Ժտեա՛ 'ի Տեառնէ, եւ նա տացէ քեզ (Սաղմ.)։ Իսկ

ԺՏԻՄ, համարձակել, յանդգնել։

ԺՏՈՒԹԻՒՆ, — Վասն ժտութեանն յարուցեալ տայցէ նմա (Ղուկ.)։

Յորմէ 'ի հակառակէն՝

ԳԺՏԻՄ, (ժտել՝ մերձեցում մը կ'ենթադրէ, իսկ գժտել՝ հեռացում մը)։

ԳԺՏՈՒԹԻՒՆ, բաղդ. ընդգրկեմ եւ ընկրկեմ, մերկանամ եւ մերժեմ, յառիմ, յարիմ եւ հեռանամ, սեւեռել եւ սասանել։ Յորմէ (ժտեմ)

ԱԽՏԱԺԷՏ, իբր խնդրող՝ սիրող ախտի, հիւանդութեան, եւ իբր թարգմ. Յն. φιλονοσέω, φιλασθενής։

Բաղդ. դատախազ, մատակախազ, ամօթխած։ Իսկ

ՀԵՏԱԶՕՏԵՄ, Յն. ἐτάζω, նոյն նշ.

ՎԱՂ, — Որ վաղն առ իս եկեսցէ, զնա կացուցից ... — Վաղ կամ անագան, Յն. πάλαι, նշ. նախնի, հին, վաղընջական, οἱ πάλαι, նախնիք, հինք։ Յորմէ

ՎԱՂՆՋԱԿԱՆ, ՎԱՂՆՋՈՒՑ,

ՎԱՂՈՒ եւս, Յն. πρωΐ, 'ի հնումն, երբեմն, (առտնօք, այսինքն՝ անցեալ ժամանակի մէջ)։

Եւ 'ի հակառակէն՝

(*) Բառ անյայտ. (Բարն. Վիէննա, 1850)։ Բառ անստոյգ իբր ժպրհեալ, յանդգնեալ կամ բանդագուշեալ։ Իսկ «ժմերտ» բառից կարգին մէջ չկայ։ (Ն. Հյկ. Բռ.)։

(*) Ն. Հյկ. Բռ. այս բառը կը սահմանէ՝ «Խորշոմեալ երեսօք ծերութեան. [illegible]», պատուելին յարմարցընելով. Թերեւս լաւ եւս է սահմանել, «անամօթ, լիրբ, ժպիրհ երեսօք, իբրեւ զշներդ»։

ՎԱՂԻՒ, ճօղը, (այսինքն, գալիք ժամանակ, որ դեռ եկած չէ)։

— Վաղիւ երթալոց եմ 'ի հայրենիս, անդ համգիր։ — Յորժամ վաղիւն գայ, չարն աղաչէ, այսօր ի՛ւր առնել, եւ զվաղիւն՝ Տեառն (Սեբեր. Ժ.)։

ՎԱՂՈՐԴԱՅՆ, — Եւ եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն (Ծննդ.)։ Իբր թարգմ. πρωΐ։

Ի ՎԱՂԻՒ ԱՆԴՐ, վաղը. վաղը առտու, հետեւեալ առտուն, (գալիք ժամանակի մէջ)։

Բաղդ. երէկ եւ երեկ։ Յորոց

ՎԱՂՎԱՂ, ՎԱՂՎԱՂԵՄ, Իսկ

ՎԱԽՃԱՆ, գրեալ եւ ՎԱՂՃԱՆ, իբր 'ի հակառակէն բառիս՝ ճօղ, Պրս. ֆէրճամ, նոյն նշանակութեամբ։

Յորմէ համառօտեալ

ՎԵՐՋ։ (ֆ է ր ճ-ամ)

վ ե ր ջ

* * *

ՀՐԱՀԱՆԳ, Պրս. ֆէրհէնկ՝ նշանակէ՝ գիտութիւն, ուսումն, կրթութիւն, հանճար, ուշ, խոհականութիւն։

* * *

ՇԱՄԱՆԴԱՂ, Յն. ὁμίχλη, նշ. մառախուղ, ամպ փոշւոյ, (յորմէ աշխ. մուխ), մերս թուի ծագեալ 'ի Պրս. ձայնէս՝ շէմէնտ, որ նշ. մոխիր կամ մոխրագոյն։ Իսկ վերջին վանկդ ուղ՝ մասնիկ է՝ որպէս եւ էղ, էղ, էլ, ուլ, էրկէղ, էրկէղ, ատաղէլ, պատառակուլ, Իսկ

ՇԱՂԱՄԱԹ, Ի չաղամաթէ միջէ մինչեւ 'ի խարացս մի կօշկաց (Ծննդ. ԺԴ. 23)։ Յն. σπαρτίον, (գերձան; թել, լար)։ Պրս. չէմ. չէռէլ, նշանակէ՝ կօշիկ, տրեխ, մուճակ։ Իսկ վերջին վանկը՝ աթ, յաւելուած է։

* * *

ԲՈՐԲՈՐԻՏ, — Վաւաշն այն եւ բորբորիտն Շամիրամ (Խոր.)։ Յն. βορβορώδης, նշ. աղտեղի, գարշ, պիղծ, յորմէ

ԲՈՌ, Իսկ

ԲՈՏՈՏ, 'ի փտոյ, 'ի փտելոյ։

ԲՈՐԲՈՍ, բաղդ. ճենճեր եւ ճանճ։

Իսկ

ՎԱԻԱՇ, Յն. βέβιλος, նշ. պիղծ, աննուէր։ — Ի վաւաշ տիկնոջէն զրպարտեալ Յովսէփ եւ մտեալ 'ի բանտ (Նխ. Ծննդ. ԾԱ.)։

Իսկ գալով բառիս

ԲՈՐ (*), (բօրսուգլիգ), քանի մը կերպով կը մեկնուի, եւ ամէն մէկն իւր հաւանականութիւնն ունի՝ ո՛րը քիչ՝ ո՛րը շատ։

Նախ կը թուի թէ վերը ցուցուած բօրբօրիտ բառէն է ծագած, իբրեւ գարշ եւ զզուելի ախտ մը, զի անկէ բժշկուիլն ալ՝ կ'ըսուի՝ ուրբիւ 'չ բօրսուգլիչ։

Երկրորդ՝ կը թուի 'ի Յունականէս՝ ψώρα, որ նշ. բորոտութիւն, եւ կը ծագի 'ի բայէս՝ ψάω, (շփել, փորել)։

Երրորդ՝ բոլորովին տարբեր տեսութեամբ՝ բօր եւ ուրբ, մի եւ նոյն բառեր են՝ թեթեւ տեղափոխութեամբ գրոց։ Իսկ

ՈՐԲ, Յ. ὀρφός. ὀρφανός, նոյն նշ. բաղդ. ուրկ բառին հետ, որ թէպէտ նշ. աղքատ, (Տես 'ի Սաղմոսն վերնագիր), աղքիւ ուրկէ, Յն. πτωχός (աղքատ), եւ նոյն է ընդ բառիս կոյր (սեռ.) կուր-ի. սակայն իր աժանցները ուրկուգլիգ, ուրկէօ, կը նշ. բօրսուգլիգ, եւ ուրկանոց՝ կը նշ. նոցա դարմանուելու տեղը։

Յորմէ (բոր)

ԲՈՐՈՏ, ԲՈՐՈՏՈՒԹԻՒՆ, (Տես՝ ուրկէմ)։

* * *

ՍՊՈՒՆԳ, Յն. σπόγγος, նոյն նշ.

(*) Բօր, այս բառը Թէ և հին մատենագրութեանց մէջ չկայ, սակայն ածանցները՝ կան. բորոտութիւն, բորոտ։

— Սպունկն… զոր մարդիկ ամպ անուանակոչեն (Զքր. Կ-Ժ.)։ Զի Պարսկերէն էպրէ, որ նչ. պուլուտ, թարգմանի՝ ամպ, ամպիկ։ Այս Պարսիկ բառին աղաւաղումն է Տճ. էպրէ, յորմէ

ՍՈՒՆԿՆ, յորոց

ՍՈՆՔ, ՍՈՆՔԱՆԱՄ, (սպունգի նըման) ուռել, այսինքն, մեծամալ, հպարտանալ կամ գիրանալ, յորանալ։ — Արբենաս եւ փափկանաս, գիրանաս եւ սոնքանաս (Ոսկ.)։

*

* *

ԼԱԻ, Արաբ. էվէ՛թ, նչ. լաւագոյն։

ԳՈՆՁ, Վրաց, քօ՛նջէ՝ նչ. բորբոքութիւն։

*

* *

ԱՇԽԱՏ, Պրս. Բէշխա, նչ. աշխատող, ջանացող. այսպէս եղած է՝ չըլլալու համար՝ աշխէտ։

ԱՇԽԱՏ ԱՌՆԵՄ, — Զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ (Մարկ. Ե, 35)։ Բաղդ. մշակ, վաստակ։

*

* *

ՔԱՂԱՔ, Պրս. քէլաքէ կամ քալաքէ, նչ. ուրախութիւն, խնդութիւն, Թրք. շէնլիք. շադլըք։

Իսկ (Երեմ. ԽԹ. 12). «Լուր ահարկից յԹարովթ զգոյժ քաղաքացն». Յն. πολέμων (պատերազմաց), կարդացուած է πολέων (քաղաքաց)։

Այսպէս եւ Թրք. շէն (ուրախ), սահմանեալ է 'ի մեզ նշանակել՝

ՇԷՆ, գիւղ, եւայլն։ — Ի շէնից մի՛ մտանիցես… մի՛ ումեք ասիցես 'ի շինին։ — Շէ՞ն, շէն, ո՞րչափ տերանց էիր, եւ ո՛րչափ այլոց լինիցիս (Ոսկ. Ա. Տիմ. 92)։

Յորմէ

ՇԻՆԱԿԱՆ, իսկ

ՇԻՆՈՒԱԾ, ՇԻՆԱԾ, ՇԻՆԵՄ, արմատ՝ ՇԷՆ, Թրք. շէնլիք։ — Որ շէնն մնացէ, եղիցի իբրեւ զհօտ մակաղեալ (Ես, Իէ. 10)։

ԱՆՇԷՆ, — Ի շէնս եւ յանշէնս։

Եւ Պրս. ապատ՝ նչ. շէն, յորմէ

ԱՊԱՏ, — Յապատս եւ յանապատս միայնանոցս շինէին (Եղիշէ)։

ԱՆԱՊԱՏ, ընթերցի՛ր ան-ապատ, այսինքն՝ անշէն։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ընթերցի՛ր՝ վաղարշ-ապատ, այսինքն՝ շինեալ 'ի Վաղարշու։ (Տե՛ս եւ՝ քաղաք։

Այսպէս՝

ԱՐՏԱՇԱՏ, ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ, քաղաք Երուանդայ։ Զի շատ՝ Պարսիկ է, եւ նշանակէ՝ ուրախ, սակայն եւ այն տեսութեամբ, որպէս 'ի բառս բազմիմ եւ բազում, եւայլն։

ՇԱՏ, բառ մեզ նչ. բազում։

—Շատ է արդ, ամփոփեա՛ զձեռս քո (Բ. Թագ. ԻԴ. 16). յն. πολὺ νῦν։ — Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ։ — Որում շատ թողուցու՝ շատ սիրէ, եւ որում սակաւ՝ սակաւ։

Դարձեալ, զի Պրսկ. սատ որ նչ. հարիւր, նչ. եւ բազում, որպէս եւ Յն. ἑκατὸν, (հարիւր, եւ բազում), մանաւանդ զի Յն. σάττω, նչ. լնուլ, լցուցանել, լի առնել, յագեցուցանել։ Ուրիշ է

ՇԱՏ, Յն. ἱκανός։ —Շատ են քեզ շնորհքն իմ։ — Եւ շատ եւս այն են՝ որ եւ ննջեցեալք իսկ իցեն (Ա. Կորնթ. ԺԱ. 30)։

ՇԱՏԱՆԱՄ, — Ունիմք կերակուր եւ հանդերձ, եւ նոքօք շատասցուք։ —Ոչ շատացար մարդ եզանել Աստուած (Շարական)։ Լտ. sat, satis, նոյն նչ.։ Իսկ

ՍԱԹ, զոր այլով անուամբ կոչեմք

ԲԱԶՄԱԴՈՒՆԻ ԱԿՆ, — Իբրեւ ըզտեսիլ բազմագունի ական (Եզեկ. Ա. 4). յն. ἤλεκτρον. Տպ. սէվապ։ Թէ որ Պրս. սատ (հարիւր) բառը չէ, Պրս. սատէֆ Թրք. սէտէֆ բառն է, (մարգարտաբեր խեցի ծովային), եւ ինչպէս որ գիտենք, բազմագունի է։

*

* *

ՑԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ, Յն. ἔλεγχος,

այս Յունական բառը կը նշանակէ՝ կշտամբանք, սաստ, ապացոյց, հաւաստիք, հաստատութիւն, յայտնութիւն, ներկայութիւն, բստ այսմ եւ մերը՝ Յունականին երեք նշանակութիւնն ալ ունի։ — Որ ատեայ գյունէքեարլըգը, անմիտ է (Առակ. ԺԲ. 1). յն. ἔλεγχος։ — Հաւատք են յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յունէքեարլըգը որոց ոչն երեւին (Եբր. ԺԱ. 1). ἔλεγχος։ — Պահեսցի 'ի քաջի արանցն յանդիմանութիւն (Գործ. ԻԵ. 21). յն. διάγνωσις, ֆէնըքլըգը, ձանըքլըգը, դէլիլիլըգը։

ՅԱՆԴԻՄԱՆԵՄ, — Ամենայն որ զչար գործէ, ատեայ զլոյս... զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա (Յովհ. Գ. 20). յն. ἐλεγχθῇ։ — Ցեղն զոր ցուցցէ (δείξῃ) տէր, մատուսջիք ըստ տոհմից, եւ զտունն զոր յանդիմանեսցէ (δείξῃ) տէր, մատուսջիք ըստ արանց, եւ որ յանդիմանեսցի (ἐνδειχθῇ) 'ի նզովսն այրեսցի հրով... Յանդիմանեցաւ (ἐνεδείχθη) ցեղն Յուդայի... յանդիմանեցաւ (ἐνεδείχθη) տոհմն Զարայի... յանդիմանեցաւ (ἐνεδείχθη) տունն Զամբրեայ, եւ... յանդիմանեցաւ (ἐνεδείχθη) Աքար (Յեսու. Է. 14—18)։

ՅԱՆԴԻՄԱՆ ԱՌՆԵՄ, Յն. παρίστημι։ — Ոչ յանդիման առնել կարեն քեզ՝ վասն որոյ այժմդ չարախօսեն զինէն (Գործ. ԻԴ. 13)։ — Խրատեսցէ զիս արդարն... եւ յանդիման արասցէ (Սաղմ. ՃԽ. 5). յն. ἐλέγχω։

ՅԱՆԴԻՄԱՆԵՄ, — Դատաստան Տեառն է ընդ ժողովրդեան իւրում, եւ ընդ Իսրայէլի յանդիմանեսցի (Մէք. Զ. 2). διελέγχω։

Այս Յունական բառն (ἔλεγχος) է արմատ մեր Էլէքն, ալաք, յալաք- եւ ալէք- բառերուն։

(Տես զբաղող)։

* * *

ԱՐԻԻՆ

ԱՐԻԻՆ ԽԱՂՈՂՈՅ, Նչ. գինի։

— Կաթն եւ մեղր արիւն խաղողոյ եւ ձէթ (Սիրաք ԼԹ. 32)։ — Պատրաստեցին զփիղսն, ձաշակեցուցին յարիւն խաղողոյ, 'ի զմուռս եւ 'ի թթէ (Ա. Մկ. Զ. 34). 'ի յն. չիք թթէ։ — Զարիւն խաղողոյ ըմպէին, գինի (Օրէն. ԼԲ. 14)։ — Լուասցէ գինւով զպատմուճան իւր, եւ արեամբ խաղողոյ զհանդերձս իւր (Ծննդ. ԽԹ. 12)։

Մերս ծագի 'ի Պրս. էրէյն, որ նշ. չարաւ, թարախ։

ՇԱՐԱԽ, նոյն է ընդ Արաբ. շէրապ, որ նշ. ըմպելի, այսինքն՝ գինի։
Իսկ

ԹԱՐԱԽ, նոյն է ընդ Արաբ. տէրէաք, որ նշ. գինի, եւ թերիակէ, Պրս. նաղ՝ նշ. եւ գինի, եւ թերիակէ, դեղ թմրեցուցիչ։

*

* *

ՀԱՐԷ՛Ք ՀՈՏ, Յն. διάδοτε ὀσμὴν։ (Սիրաք. ԼԹ. 19 ըստ մեզ, 14. ըստ Յուն.)։

*

* *

ԵՐԿԱՅՆԱՄԻՏ, թարգմանութիւն Յուն. ձայնիս՝ μακρόθυμος։

ԵՐԿԱՅՆՄՏՈՒԹԻՒՆ, Յն. μακροθυμία։

ԵՐԿԱՅՆՄՏԵՄ, կամ Յն. μακροθυμέω։

ԵՐԿԱՅՆԱՄՏԵՄ, — Սէր էրքայնամիտ է՛, քաղցրանայ, սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն, ոչ գրգռի (Ա. Կորնթ. ԺԳ. 4). յն. μακροθυμεῖ. (ամենայն Տպ. ընթեռնուն՝ էրքայնամիտ է։ Որոց ընդդիմաբանժանեալ մտածուած են

ԿԱՐՃՄԻՏ, իբր՝ անհամբեր։

ԿԱՐՃՄՏՈՒԹԻՒՆ, անհամբերութիւն։

ԿԱՐՃԱՄՏԵԼ, անհամբերութիւն ընել։ Իսկ

ՆԵՂՍՐՏՈՒԹԻՒՆ, — Ի զայրանալոյ եւ 'ի մրրկեալ նեղսրտութենէ (Սաղմ.)։

ՆԵՂԱՍԻՐՏ, ὀλιγόψυχος μικρόψυχος, իբր թարգմանութիւն Թրք. տար եիւրէքլի։
Տես եւ սրտմտութիւն, սրտմտել։

*
* *

ՈՋԽԱՐ, ստուգաբանի իբր Պրս. աղ խօր, այսինքն՝ կերակուր ուտելի։
Բաղդ. խոյ, գառն, եզն։
Յն. φάγιλος, որ թարգմանի՝ ուտելի, նշ. զգենլի կենդանի, ոչխար, գառն, այծ, ուլ, եւայլն։
Իսկ
ԱՊԱՇԽԱՐԵՄ, է իբր թարգմանութիւն Յն. ἀποκρεύω, որ է բարդեալ ἀπὸ κρέας ('ի մսոյ), այսինքն՝ ձեռն 'ի միս [կալել, պահեցողութիւն ընել, պահք բռնել։
Մեր բառը՝ ապաշխարել՝ կը ստուգաբանի՝ ապ (ἀπὸ) եւ աշխօր։ (Տես 'ի վերոյ՝ ոչխար), զի աշ՝ նշ. կերակուր եփեալ, իմա՝ միս կամ մսեղէն կերակուր, եւ խօր՝ (ուտելի) է արմատ խօրթէն բային, որ նշ. ուտել, եւ կը նշ. 'ի բաց կալ 'ի մսոյ։ Այսպէս եւ Լատիներէն carnaval, որ կը նշ. բարեկենդան, կը թարգմանի, հրաժեշտ 'ի մսոյ, (caro-vale), caro նշ, միս, եւ vale, նշ. մնաս բարեաւ, զի valedico, նշ. հրաժարել, ողջոյն հրաժեշտի տալ։
Յորմէ (ապաշխարեմ)
ԱՇԽԱՐԵՄ, ԱՇԽԱՐ, մի՛ շփոթեր ընդ աշխարհ, այսպէս եւ
ԱՊԱՇԱՒԵՄ, Յն. ἀπὸ (ապ) եւ աշամ, նշ. ըմպելի, որով նշանակած կ'ըլլայ՝ հրաժարել կամ ժուժկալել 'ի գինւոյ, կամ թէ, աշ, (կերակուր) եւ ամ կամ ար, (ըմպելի), այսինքն՝ կեր եւ խմէ։ Ուտել խմելէ հրաժարիլը կամ պահելը նշան է սգոյ, տրտմութեան, որ ընդհանրապէս՝ մէկ կողմ քաշուիլ եւ առանձնանալ կը սիրէ, ասոր համար՝ աշխար, աշխարել կը բղխին ապաշխարելն։ Միթէ մարթ ի՞նչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ մինչ ընդ նոսա իցէ փեսայն, ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել։ Եւ ասոր հակառակ՝ ուտել խմելը՝ ուրախութեան եւ զուարճութեան նշան է, եւ հաւաքարար կը մատուցուի։
Տես՝ խրախճան, խրախուսնք, քաղաք, չէն, բազում, բազմիլ, բազմական։

*
* *

ՈՂՋԱԽՈՀ, բարդեալ՝ ողջ եւ խոհ։
Տես զբաղող։
Յորմէ 'ի հակառակէն՝
ԲՈՂՋԱԽՈՀ, կամ ԲՂՋԱԽՈՀ, իբր՝ անողջախոհ, անողջամիտ, պակասամիտ, որոյ ոչն գուցէ առողջ խորհուրդ, քանզի ասի, «Որ չնայ, առ պակասութեան մտաց ... ցաւս եւ անարգանս կրէ»։ «Կոչեաց զպակասամիտս յերկտասարդաց» (Առակ. Զ. 7)։ Իսկ
ԱՄԲՈՂՋ, ողջ, յորմէ՝ բողջ (պակաս), յորմէ ամբողջ (անպակաս)։

*
* *

ՍՈԽ, Պրս, սօխ, նոյն նշ.
Սոխ նկատի իբր՝ բարկ, կծու։
Յորմէ 'ի հակառակէն՝
ՍԵԽ, բաղդ. ման եւ մուն, մանանայ եւ մանանեխ եւ անանուխ, թութ եւ թթու, գեղձ եւ դաղձ, պաղատիտ եւ տտիպ, քաղցր եւ քացախ։

*
* *

ՑԵՑ, Յն. σῆς, նոյն նշ. — Ցեց ոսկերաց՝ սիրտ հոգած (Առակ)։
Յորմէ 'ի հակառակէն՝
ՑԵՃ, որպէս եւ 'ի բառէս
ՄԵԾ, Յն. μέγας, μείζων, (մեծագոյն), յորմէ 'ի հակառակէն՝
ՄԵՑ, — Ցեցք եւ մեցք եւ կոկուստ յինքեանս կալան զմարմինն (Կոչ. Ընծ. ԺԶ.)։

ՄԷՑ, բաղդ. կէս եւ կէս, տխ-
տեան եւ ծիծեան, տխեղերք եւ
տղրուկ, արագիլ եւ խարագուլ ։

Եւ գերանուանս

ՄԵՁ, 'ի Յն. μείζων, մեծ ։

Տե՛ս 'ի վեր անդր ։ Իսկ

ՁԵՁ, (գեր. տրակ.) ըստ համա-
ձայնութեան Թրք. ոէղ (դուք), ոէղէ
(ձեզ), եւ Յն. σ7ς (ցեց) ։

ԻՆՁ, անուն պատառող գազանի,
Յն. ὗς, (վարազ) · πάρδαλος, Նչ. բնձ ։

Յորմէ

ԸՆՁԱԽՈՑ, Թարգմ. Յն. παρδαλί-
αγχες, անուն թունաւոր բուսոյ, որ
կոչի նաեւ

ԱԿՈՆԻՏՈՆ, Յն. ἀκόνιτον, նոյն Նչ.
—Եզերորս եւ ակոնիտոն (Վէց. Ե.)։

Յորմէ

ԻՆՁ, ՑԻՍ, (գեր. տրակ.) ։ Իսկ

ՄԵԹ, (յք.) ես, (եզակ) ։

Իբր՝ մեք, այսինքն՝ մի՝ ձեւաց-
եալ յոքնական, մի-ք, զի ե-՝ ձե-
ւացեալ է 'ի Յունական ձայնէս՝ εἷς
(մի), իսկ տ-- 'ի Լատին ձայնէս tu
(երկու), ուստի տ--՝ է իբր՝ տ---,
(երկուք) ։ Մե+ը առանց + ի իբրեւ
եզական՝ կը տեսնենք 'ի բարդու-
թեան, մէնէմ, մէն--բէ-ն, մէն--է,
մէն-----մ բառերուն մէջ ։

(Տես զբառսդ) ։

ԻՆԵԻ, (գործ.), ես, (ուղղ.) ։

ՔԵԻ (գործ.), դու (ուղղ.) ։

Ըստ օրինակի Յունականիս՝ μεῦ,
('ի բարբառ գործցի) փոխանակ μοῦ
(իմ) եւ σεῦ փոխանակ՝ σοῦ ('ի բար-
բառ գործցի) ։

* * *

ԳՐԱՊԱՆ, բառ Պարսիկ, կէրէյ-
պ--, Նչ. օձիք, Յն. ὦα, Նչ. (եզր,
ծայր զգեստու) ։ — Զօձիսն գրա-
պանաւ արարեալ բոլորակ ձեւեա-
ցես չուրջանակի (Ել. ԻԸ. 32) ։ —
Ի մօրուացն իջանէ 'ի գրապանս ըզ-
գեստու նորա (Սաղմ. ՃԼԲ.) ։ Մի՛
չփոթեր ընդ

ԳՐԱՊԱՆԱԿ, Յն. φυλακτήρια, իբր՝
պահարան ։ Պահպանակ գրուածոց
նուախայօրէն ծալեալ պատատեալ ։
— Լայնէն զգրապանակս իւրեանց
(Մատթ. ԻԳ. 5) ։ (Տես զբառդ 'ի Բա-
ռարանի Սուրբ Գրոց) ։

* * *

ՊՃԵՂՆ, (պճիղն), յք. պճղունք,
Պրս. պէ-ֆէ-ն. պէ-ժ--ն, Նչ. վէգ,
Արաբ. +ե--, Թրք. --ըէ ։ Յորմէ

ՊՃՂՆԱԽՈՐ, (ասի զհանդերձէ) կա-
մեցեալ ասել, երկայն, փառաւոր,
Թրք. Բօէ--էլ-ը- -էյէ-, իբր Թրգմ.
Յն. ποδήρης, -ը էջ-նէ մ-նչէ- յ---
ցէ-ըըլ--ը-, եւ ասի, χιτὼν ποδήρης,
(հանդերձ երկայն), ծագեալ 'ի բա-
ռէս ποῦς (ոտն) ։ Յորմէ

ՊՃՆԻՄ, որպէս եւ պատմուճան
(տես զբառդ) յորմէ

ՊԱՃՈՒՃԵՄ ։

* * *

ՇԵՐԱՍ (*), Յն. σὴρ τὸ σηρικὸν,
Լտ. sericum ։ — Զհնդիկ որդնէ
այսպէս ասեն. քանզի յայնմ գեռ-
նոյ որ կոչի չերաս ․․․ պանձէ զվաս-
տակս նոցա (Վէցօր. Ը.) ։

Յոյնք եւ Հռոմայեցիք այսպէս
անուանեցին, այսինքն՝ այն աշխար-
հին անունովը՝ ուստի կ'եկէ ․ եւ այս
անունով կը հասկընան Հնդկաստան
կամ Սինէացւոց աշխարհը ։ Տես եւ
---րէ-- ։

Մենք ալ այս օրինակէն թելա-
դրեալ՝ Բ---ըտը՝ կ'անուանենք՝

ԱՍՐ(**), եւ բրդեղէնը

(*) Աշխարհաբար՝ չէր-մ ըսուածը գրաբա-
րէն տարբեր բառ մը չէ, հապա նոյն բառին
սխալ ընթերցուածն է, ըսել կ'ուզենք թէ,
չէր--ին վերջին գիրը Ս. Մ գրին մերձաւոր
նմանութեանը համար՝ անոր հետ շփոթուած,
և չէր-մ կարդացուած է. (ՇԵՐԱՍ.—ՇԵՐԱՄ)։

(**) Յարուեստանոցս նոցա (Ասորւոց) երև-
ելի էին ներկք նոցա, որ և ծիրանիքն կոչէին,
որ ոչ եթէ մի միայն երանգ էր, այլ անուն գլխա-

ԱՍՈՒՐ, ԱՍՈՒՐԵԱՑ, *Ասորւոց երկրին անունն, իբր ոչ եթէ բուրգը Ասորւոց երկրին բերքն ըլլալուն համար, այլ որովհետեւ Ասորւոց երկրին յատուկ տեսակ մը ներկով կը ներկէին զայն. — Եւ ոչ աղբր լուսաներկ յԱսորնական գեղ շրջաբի (Վէրգ. Մշակ. Ա.).*

Վիրգիլիոսի Ասորնական գեղ ըսածը՝ մեր

ՏԻՐԱՆԻ *՛ըսածն է, որ կը ծագի ՚ի բառէս՝*

ՏՈՒՐ, *որ Արաբական կամ Ասորի կոչումն է՝ բառիս*

ՏԻՒՐՈՍ, *Յն.* τύρος, *եւ Տիւրոս՝ ինչպէս յայտնի է՝ Փիւնիկեցւոց կամ Ասորւոց մայրաքաղաքն է,*

Ինչպէս նաեւ

ՍԱՅԴԱՆ, *որուն Յունական հընչումն է* σιδών,

ՍԻԴՈՎՆ, *եւ երկուքը մէկտեղ Տիւրոս եւ Սիդովն — Տուր եւ Սայդան. Արաբ. ---, ---. Յն.* φοῖνιξ.

ՓԻՒՆԻԿ, *Նչ. արմաւ, արմաւենի, նաեւ գոյն արմաւոյ, այն է՝ ծիրանի. խակ մեր ծիրանի բառին պատասխանողն է Յն.* ἡ πορφύρα.

ՊՈՐՓԻՒՐ, *այն է խեցի ինչ ծովային, բերող ներկի ծիրանւոյ, եւ այս Յունական բառէն ունինք*

ՓՐՓՈՒՐ, *յորմէ*

ՓՐՓՐԻՄ,

ՓՐՓՐԵՑՈՒՑԱՆԵՄ, *Յն.* πορφύρω, *Նչ. թէ՛ կարմրանալ, եւ թէ՛ ծովուն փրփրելը. — Եւ ահա այս հարկանի ՚ի նմա, եւ յանկարծ գոչէ, եւ զարկուցանէ զնա... եւ փրփրեցուցանէ (Ղուկ. Թ. 39).*

Ուրիշ է

ՏԻՐԱՆ, *(Պրս. ---), որ ծագի ՚ի բառէս՝ --- որ Նչ. դեղին, եւ սա ՚ի բառէս՝ --- (ոսկի). Եւ ---՝ Թարգմանի դեղին ասլոր, զի ---՝ է ասլոր. Եւ*

ՑՈՐԵԱՆ, *(սեռ.) ցորենոյ, իբր զի եւ ցորեան՝ չէկ, ոսկեգոյն է. այսպէս է ՚ի Յն. քանզի Յն.* πῦρ, *Նչ. հուր, եւ (սեռ.)* πυρὸς *հրոյ. եւ սեռականդ ընկալեալ է իբր ուղղական,* ὁ πυρός, *եւ Նչ. ցորեան. — Բարապան տանն սրբէր ցորեան (Բ. Թագ. Դ. 6). Յն.* ἡ θυρωρός *(իգ.)* τοῦ οἴκου ἐκάθαιρε πυρούς.

* * *

ԿԱՐԱՊ, *տե՛ս եւ՝ կառափն, փոր, գլուխ. Յն.* κάραβος, *Նչ. նաւ. խակ* κύκνος *որ է կարապն Յունաց. փոխի ՚ի մեզ՝*

ՉՈՒԿՆ, *Յն.* κύκνος *(կարապ), կը Նչ. դարձեալ տեսակ մը նաւ, որուն գլուխը՝ կարապի գլխոյ նմանութիւնն ունի, որուն կ՚ըսենք*

ՑՈՒԿԱՆԱՒ, *ուստի բանաւոր է կարծել թէ Յոյն բառէն ձեւացած ըլլայ՝*

ՑՈՒՈՒԿ, *կենդանեաց բերնին դուրս ցցուած մասը՝ քիթի պէս. «Մի՛ կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ».*

Եւ

ՁԻԳ, *Եբր. ---. Բաղդ. ստղուն եւ սուղ.*

ւոր ինչ ազգի երանգոց յօրինելոց ՚ի շնչաւորացն ներկէ, այսինքն ՚ի հիւթոյ անտի խղունջոց ծովու. Սպիտակ եւս և Թուխ և ամենայն խակ միջին աստիճանք գոյին ծիրանւոյ. Երկու իմն ազգ էր խղունջոց ծիրանւոյ, մի որ գտանէր ՚ի ժայռս և յապառաժս, և միւս եւս ազգ՝ բուն խակ խղունջն ծիրանւոյ, զոր խայծիւ որսային ՚ի ծովու, որ կոչէր խակ ծովային ծիրանի. երկնէր և ծիրանի ծով. Որպէս գիւտ ծիրանւոյ Փիւնիկեցւոցն էր, նոյնպէս միշտ խակ առաւելութիւն իմն էր ծիրանւոյ նոցա, և ոչ ուրեք այնպէս ներկանէին կարմիր և մանուշակագոյն որպէս՝ ի Տիւրոս. Բուն զագնիւ տարն արարացւոց ներկանէին փիւնիկեցիքն արուեստիւ և խառնմամբ, ազգի ազգի աստիճանս երանգոց նոցին տալով, և միանգամայն շողիւն եւս. Ինքեանք խակ փիւնիկեցիքն գործէին յատուէ անտի գձորձսն գայնոսիկ. Երևելի արուեստանոցք ատայնանկութեան նոցա էին ՚ի փաղ ժամանակսն ՚ի Սիդոն, և յետոյ յայլ եւս քաղաքսն Փիւնիկեցւոց, մանաւանդ ի Տիւրոս. (Տիեզերական Պատմ. Հտ. Ա. էջ 141).

ԶԳՌՆ, — *Զգանք ուռկանաց առանձինն եղիցին, եւ ձկունք նորա իբրեւ զձկունս ծովուն մեծի* (Եզեկ. ԽԷ. 10)։

ԶԳԵՄ, Էրկինջինէլ (*զէպի ուրիշի մը*)։ *Բաղդ. տողուն, սուղ, սղեմ*։

— *Զգեա զձեռն քո 'ի վերայ ծովուդ, եւ կարկառեսցին անդրէն ջուրքդ*։ *Եւ 'ի հակառակէն՝* Պէղէ Էրէն Քաշէլ, Էրէն Տօգէջինէլ։ — *Յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս*։ — *Զգէր զգործին 'ի ցամաք լի մեծամեծ ձկամբք* (Յովհ. ԻԱ. 11)։ — *Ոչ կարէին ձգել 'ի բազմութենէ անտի ձկանցն* (Անդ 6)։

ԶԳԶԳԵՄ, ԶԳՏԵՄ, ԶԿՏԵՄ,

Յորմէ (*կարապ*) *'ի հակառակէն՝*

ԿԱՊԱՐ, *իբր զի կապար ծանր է բնութեամբ եւ վայրահակ, եւ կարապ եւ նաւ մինչ ջուրին երեսը կը կենան*։

Մենք ալ սաստիկ ծանրութիւնը կապարի օրինակաւ կը բացատրենք, Լտ. plumbeus, *Նչ. կապար, եւ փոխաբերութեամբ Նչ. ծանր*։

— *Ընկղմեցան որպէս կապար 'ի ջուրս սաստիկս* (Ել. ԺԵ. 10)։ — *Քան զկապար զի՞նչ ծանր լինիցի* (Սիրաք. ԻԲ. 17)։ *Բաղդ. ցուցանեմ եւ սուզանեմ*։ *Եւ*

ԿՈՒՊՐ, *իբր զի սեաւ է կուպր, եւ կարապ սպիտակ եւ մաքուր*։ — *Ոչ ոք արդեօք տեսանիցէ զփորն կամ զձիւն, հարցեալ եթէ սպիտա՞կք են այսոքիկ* (Կիւրղ. Գնդ.)։

Բաղդ. ձէթ եւ ձիւթ. եւ կաղմութեան կերպը ըստ օրին. անուր, ծանր ծունր։

Լտ. olorinus color, *գոյն կարապի, սպիտակութիւն կարապի, այսինքն՝ սպիտակ յոյժ*։ *Ա՛յլ է*

ԿԱՊԱՐ, Քայգ Խըլ, Յն. καππαρις։

— *Ծաղկեսցի նշենի... եւ տարածեսցի կապարն* (Ժող. ԺԲ. 5)։ *Իսկ*

ՄԱԿՈՅԿ, Նաւագ, *նոյն է ընդ Պրս.* Մէքիք, *որ Նչ. կկոց, սակս զի ունի զձեւ կկոցի*։ *Եւ*

ԿԿՈՑ է *Յուն.* κύκνος, (*կարապ*)։ *Գաղղ.* navette, *Նչ. կկոց, բայց Թարգմանի՝ նաւակ, զի ծագի 'ի Լտ. բառէս՝* navis, *որ Նչ. նաւ*։

Տես եւ մոյկ։

ԿԿՈՑԵԱԼ, (*առացեալ զաչաց*), Յն. σκαφελίζω, *աչքերուն մակուկի ձեւ տալ, ինչպէս կ'ընեն կարճատեսները*։ — *Աչք քո կկոցեալ հայիցին 'ի նաւա* (Օրէն. ԻԸ. 32)։ *Եւ*

ԿՈԳԻ (*), — *Ջուր խնդրեաց եւ ետ կաթն, դաշխուրանաւ զօրաւորաց մատոյց կոգի* (Դատ. Ե. 25)։ — *Կոգի կովուց եւ կաթն մաքեաց* (Օրէն. ԼԲ. 14)։

Այս բառն ալ՝ այս խումբին կը վերաբերի, այսինքն՝ նոյն Յն. κύκνος *բառն է, որ առնուած է իբրեւ սպիտակ*։ *Բաղդ. ձէթ եւ ձիւթ, կարապ եւ կուպր*։

Յն. κύκνειος, (*որ ինչ կը պատկանի կարապի* (*սպիտակութիւն, երգ*), κυκνίας ἀετὸς, *Նչ. սպիտակ արծիւ*։ *Լտ.* olorinus color, (*գոյն կարապի*), *կամեցեալ ցուցանել զըսպիտակութիւն յոյժ*։ *Ուրինք նաեւ իբր աշխարհաբար՝*

ԿԱՐԱԳ (*կոգի*), *որ նոյնպէս է ծագեալ 'ի* Քարագոյ։

*
* *

ԲԱՇ, *Պրս.* Պէշ, *նոյն նշանակութեամբ*։

*
* *

ԲԱՇԽԵՄ, *Պրս.* պախշիտէն, *նոյն նշանակութեամբ*։

ԲԱՇԽ, *Պրս.* պախշ՝ *Նչ. բաժին*։

Տես եւ բաժանեմ, բաժին։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՎԱՇԽ, — *Ժողովել վաշխս 'ի վերայ վաշխից* (Երեմ. Թ. 6)։

(*) *Որպէս 'ի Հյ. նոյնպէս և Յն. արմատն կով*, βοῦς (Ն. Հյկ. Բռ.)։

Բաղդ. ժողովել եւ ժոխել, գանձել եւ քանցել, ամանել եւ ամալ։
ՎԱՇԽԵՄ,
ՎԱՇԽԱԺՈՂՈՎ,
ՎԱՇԽԱՄՓՈՓ.
ՎԱՇԽԱԿԵՐ, Թարգմ. Պրս. ծէ—ղ—նխօք։ Եւ
ՎԱՇՏ։ Ցորմէ (վաշխ),

ՀԱՇԻՒ, (սեռ.) հաշու-ի։ Կազմութիւնը բաղդ. գրիւ եւ վիրգ, քուէ եւ վէգ, չուայտիմ եւ վշտանամ, վիշտ, ահ եւ հիանամ, արհաւիրք եւ վեհերիմ կամ յԱրաբ. հէ—ղ՝ նոյն նշանակութեամբ։

Ցորոց (վաշխ, հաշիւ)

ՇԱՀ, բաղդ. միավանկ բառից կազմութեան օրէնքին հետ. — ողբ — փող, եւայլն։

ՇԱՀԻՄ, — Եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո։ — Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի։ Ուրիշ է

ՇԱՑԵԿԱՆ (*), Պրս. շ—յէ—ն՝ նշ. ժողով, բազում, առատ, ճոխ։

— Ծնանիցի արգիւնս չայեկանս (Եբր. Զ. 7). Յն. εὔθετον.

ՇԱՑԵԿԱՆՈՒԹԻՒՆ, — Լինիցի նոցա 'ի հանգիստ եւ 'ի չայեկանութիւն (Վեցօր. Ը.)։

— Կարգեսցի կերակուր նոցա 'ի չայեկանութիւն (Անտ)։

Ցորմէ (հաշիւ)

ՀԱՍՈՒ ԼԻՆԻՄ, եւ
ՀԱՍԱՆԵՄ, (ըստ ամենայն նշանակութեանցն)։

ՀԱՍՈՒՑԱՆԵՄ, — Առ զզոյգս եզանցն եւ եզեն, եւ գործեօք եզանցն հ—ոյց զնոսս, եւ կերան (Գ. Թագ. ԺԹ. 21). յն. ἔψησεν, (եփեաց)։ — Հինգ ոչխար հ——ցէ—ւ եւ կայթ մի չամիչ (Ա. Թագ. ԽԵ. 18)․ յն. πεποιημένον, (արարեալ, պատրաստեալ)։

ՀԱՍՈՒՆ, ՏՀԱՍ, յորոց

ՀԱՍԿ կամ յԱրաբ. հ—ըլ նոյն նշ. կամ 'ի ձայնէն՝ հ—կ—յ։ — Տուք մեզ նշան ինչ, եւ ասացէք՝ հասկ, հասկ (Եբր. շէ—ղ—լէթ), եւ ոչ յաջողեցան խօսել այնպէս (Եբր. ս——յէ— սէ—ղ—լէթ). (Դատ. ԺԲ. 6)։

Ի ասվորական օրինակս Ցունաց՝ պակասէ «Տ—ւ+ մէղ նշ—ն էնչ, է—»․ սակայն գոյ եւ այլ օրինակ, մերումս միաբան, (Յն. σύνθημα, նշան, նշանաբան)։ Իսկ հ—կն ոչ է կըրկնութեամբ։ (Տես զբառդ)։ Եւ

ՀԱՍԱԿ, Պրս. ղէ—ղ, նշ. վար եւ ցան, նաեւ՝ հասակ մարդոյ։

Ցորմէ

ՀԱՑՍ, — Եւ առ ժողովուրդն ըզհայան իւրեանց մինչ չեւ խմորեալ էր (Ել. ԺԲ. 34)։ Ցորմէ՝

ՀԱՑ, բաղդ. խաճ եւ խակ։

ՀԱՑ ՈՒՏԵՄ, Տճ. է+մէ+ էէմէ+։ — Ուտէք, հաց կեր. (Յն. φάγε)։

ՀԱՑ ՏԱՄ, իբր թարգմ. է+մէ+ վէրմէ+, որպէս եւ ս—ւ վէրմէ+։

ՋՈՒՐ ՏԱՄ, — Եթէ քաղցեալ իցէ թշնամի քո, հաց տուր նմա, եւ եթէ ծարաւի, ջուր տուր նմա. Յն. ψώμιζε... πότιζε, հյց. խմց.) (Հռ. ԺԲ. 20)։ — Ես տնկեցի, Ապողոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց։ Այսուհետեւ ոչ այն ոք ինչ է... որ զջուրն ետ... որ տնկեացն եւ որ զջուրն ետ (Ա. Կորնթ. Գ. 6, 7, 8)։ Ցորմէ (հաց)

ՀԱՍ, ՀԱՍՈՑԹ, ա՛յլ է

ՀԱՍԿԱՆԱՄ, Յն. ἀσκέω, նոյն նշ.։

Յն. ἄρτος, հաց, ծագի 'ի բառէս՝ ἄρτιος, որ նշ. պատրաստ, յարդարեալ, կազմ, հասուն։ Տճ. հ—ղըր, նշ. պատրաստ։ Իսկ

ՑԱՐԴ, ծագի 'ի Յն. ἄρτος, (հատ ըստ մերձաւորութեան Թրք. ձայնից՝ ս—մ—ն եւ ս—մ—ն, (յարդ եւ նկան,

(*) Շ—հ և չ—հէյ—ն՝ Թէպէտ ձայնիւ մերձաւոր են, սակայն տարբեր արմատէ են, և ընտիր գրուածոց մէջ չ—յէյ—ն ըսելու տեղ՝ չ—հէյ—ն չկայ։ Թէպէտ յետինք կամ ընդօրինակողք ձայնից մերձաւորութենէն՝ խիստ շփոթած են երկուքը։

հաց) . եւ Թրք. ձայնս բօմա , թուի աղաւաղութիւն Յունականին ψωμός, (հէլլ.) ψωμόν, ψωμίον, որ նշ. մասն, նշխար՝ մանաւանդ հացի պատառ ։ — Եթէ կերայ զպատառն իմ միայն, եւ որբոյն ոչ կերակրեցի (Յոբ. ԼԱ. 17) . յն. ψωμόν ։ — Այն է որում ես թացից զպատառն (τὸ ψωμίον) եւ տաց. եւ թացեալ զպատառն (τὸ ψωμίον) տայ... եւ յետ պատառոյն (τὸ ψωμίον) եւ նորա մտեալ զպատառն (τὸ ψωμόν) (Յվ.)։

Յարմէ (հաց)

ՅԱԳԵՆԱՄ ,

ՀԱԳԱՑԻՄ , բաղդ. արբենամ եւ յափրանամ ։

ՅԱԳ, Իսկ (Եզեկ. ԺԶ. 3) , «Նրատէաք առ կաթայ մայն , եւ ուտէաք հաց յագ» . յն. εἰς πλησμονὴν. — Տալ մեզ ուտելոյ եւ հաց յագ (Անդ 8) . յն. εἰς πλησμονὴν ։ — Տացէ երկիր զբերս իւր , եւ կերիջիք յագ (Ղեւտ. ԻԵ. 19) . յն. εἰς πλησμονὴν ։ — Կերիջիք զհաց ձեր յագ (Անդ ԻԶ. 5) . յն. εἰς πλησμονὴν ։ — Կերիջիք զճարպ յագ , եւ զարիւն յարբենալ (Եզեկ. ԼԹ. 19) . յն. εἰς πλησμονὴν ։

Կը տեսնես որ Յունարէններն բալորն ալ արական են ; մինչդեռ Հայերէնները տարբեր , այսինքն՝ առջի երկու կոչումներն առանց նախդրի , իսկ ետքիններն՝ Յ նախդրով արական , եւ այս տարբերութիւնն այսպէս կը մնայ ։

Յ-ը բառին նախընթաց բառը ց ով վերջանալուն համար՝ առը նախդիրը զեղչուած է՝ չարաձայնութենէ փախչելով , եւ պահուած՝ ու-ն այս համդիպումը չկայ ։ Յարմէ

ԱԿՆ, (յք.) ակունք , Թրք. Տօյ՝ նշ. յագեալ , յագ , եւ Տօյմագ (իրնուլ) , եւ Տօյուլ (կշտալ) , եւ աչքի վրայով կ'ըսուի՝ կէօզիւ տօյ , Տօյ կէօզլիւ ։ — Ոչ յագեցի ակն տեսանելով եւ ոչ լցցի ունկն լսելով (Առակ.) ։ Եւ 'ի մեզ Յագնակին բառս [...] , լինի

ԱԶԲ ։ Թրք. աճ , նշ. քաղցեալ , աճ կէօզլիւ , աչխ. ճան աչ ։

Յն. ὀπή , որ նշ. ծակ , ծագի 'ի բայից ὄσσομαι , ὁράω , եւ εἴδω , (տեսանել , հայել) , յորոց ծագին անուանքս ὄψις եւ ὀφθαλμός , (տեսութիւն , աչք) ։ Իսկ

ԱԿՆ ՈՒՆԻՄ , իբր Թարգմ. Պրս. [...] , (յուսալ) ։

ԱԿՆԿԱԼԵՄ , ԱՆԱԿՆԿԱԼ ,

Յարմէ (ակն)

ԱՌԱԿԱՆՔ , [...] ։

Բաղդ. իրան եւ երան ։ — Զառակսնս կնոջ հօր քո մի' յայտնեսցես , զի առականք հօր քում են (Ղեւտ. ԺԸ, 8) ։ Նոյն մաքով ըսուած է . — Անիծեալ որ ննջեսցէ ընդ կնոջ հօր իւրոյ , զի յայտնեաց զանարգութիւն հօր իւրոյ (Օրէն. Իէ. 20) ։ Յարմէ

ԱՌԱԿԱՆԵՄ , — Փակեցից զճանապարհս նորա պատնիշօք , եւ առականեցից զճանապարհս նորա (Ովս. Բ. 6) ։

ԱՌԱԿ , իբր ծածկեալ՝ խորհրդաւոր խօսք , այլաբանութիւն ։

ԱՌԱԿԵՄ , այլաբանութեամբ՝ խորհրդաւոր խօսիլ ։

Եւ 'ի հակառակէն

ԱՌԱԿԵՄ , 'ի վեր հանել զգաղտնիս , նշաւակել , Յն. παραδειγματίζω ։ — Յովսէփ ոչ կամեցաւ առակել զնա (Մատթ.) ։ Յարմէ

ԽԱՅՏԱՌԱԿԵՄ , — Յայտ յանդիման նշաւակեալ խայտառակեաց զնոսա ։

ԽԱՅՏԱՌԱԿ , ԽԱՅՏԱՌԱԿԱՆՔ , իբր յայտնեալ առականք ։

ԱՌ ԱՌԱԿՍ , խայտառակ ընելու համար ։ — Առ առակէ չրջեցուցանէին ։

ԱՌ ԱԿԱՆՍ , աչքի՝ ցուցնելու համար , կեղծաւորութեամբ ։

— Մի' առ ականէ ծառայել իբրեւ մարդահաճոյք ։

Յորմէ (առակ) 'ի հակառակէն՝

ԱՌԱԾ, իբր' յայտնի՝ ծանուցեալ՝ վճռական խօսք։ — Որդի մարդոյ, զի՞նչ է առածդ այդ 'ի մէջ Իսրայէլի (Եզեկ.)։ Իսկ

ԱՆԱՌԱԿ, իբր ոչ անսացող առակի՝ խրատու, զեղծ, Տճ. տըլէք մէլէք։ Պրս. շէշ, (ակն, աչք) և շէշմէ՝ (ակն աղբեր, աղբերակն), և Արաբ. այն, նշ. թէ՛ զմին և թէ՛ զմիւսն. որպէս և 'ի մեզ ակն, (յք. ակունք), նշ. աչք և աղբիւր։

Տե՛ս և ակն (յք.) ականք։

* * *

ՍՐԻՆԳ, Յն. σῦριγξ, (սեռ.) σύριγγος, յաւերժահարսն փոխեալ յեղէգն, (ըստ առասպ.)։ Յորմէ

ՍՐՈՒՆՔ, ՍՐՕՆՔ, զի 'ի սրունից կենդանեաց կազմէր, սրինգ 'ի հնումն, և ապա 'ի տօսախէ և 'ի փղոսկրէ հնարաւորեցաւ (Վէրք. Եռէ. 439 Ծան. Թարգմ.)։ Յորմէ

ՍՈՒԼԵՄ, ՍՈՅԼ. Յն. συρίζω, նոյն նշ. և ծագի յանուանէս σῦριγξ։

Յորմէ (սրունք)

ՍՈՒՆԱՊԱՆ, իբր Թրք. տիզլիք, պահպանակ սրունից։ Այսպէս և

ՔՆԱՐ, ըստ Եբր. կիննօր, Յն. κινύρα, Լտ. cinyra։ — Նա է հայր որ եցոյց զերգս և զքնարս (Ծննդ. Դ. 21). ('ի Յն. չիք՝ հայր, իսկ Եբր. նա է հայր ամենայն երգահանաց և քնարահարաց)։ Յորմէ

ՍՆԱՐՔ, բաղդ. սրինգ և սրունք կամ թէ 'ի բառէս սրունք։

Տե՛ս և սուր (ած.)։

* * *

ԱՐՏ, Պրս. արտ, էրտ, նշ. ալիւր։ Իսկ

ՈՒՆԳ, (սեռ.) ընդ ոյ, Արաբ. հընթա, նշ. ցորեան։ Յորմէ

ԱՆԳ, (գյ.),

ԱՆԳԱՍՏԱՆՔ,

* * *

ՏԱՃԱՏ, ըստ մեզ՝ յատուկ անուն մարդոյ, որ և

ՏԱՇԷՆ, ըստ Պարսից՝ տաշտ, տաշէն, նշ. պարգև. այս և՝ նէվէր, որ է մերս

ՆՈՒԱՐԴ, յատուկ անուն (կնոջ Արայի), իսկ իբր հասարակ անուն,

ՆՈՒԷՐ, որպէս և

ՊԱՐԳԵՒ, Թրք. փէշքէշ, ըստ մեզ է և յատուկ անուն մարդոյ, Յն. δῶρος, նշ. տուրք, պարգև, և բարդութեամբ՝ Θεόδωρος, աստուածատուր, աստուածապարգև, Յունական ձայնիւ

ԹԷՈԴՈՐՈՍ, Տե՛ս և՝ Տրդատ, Միհրդատ։ Արաբ. հիպէ, նշ. պարգև, է նաև յատուկ անուն։

* * *

ՊԱՏՈՒՀԱՆ, Պրս. պատիհան, (հողմամուտ)։

* * *

ՃԵՄԵՄ, Պրս. չէմիտէն, նոյն նշ.

ՃԵՄՔ, յորմէ

ՃԵՄԱԿԱՆ, թարգմ. Յուն. ձայնիւ περιπατητικός, յորմէ՝

ՃԵՄԱՐԱՆ, և

ՃՈՃԵՄԱԿԱՆ, բաղդ. ճամարտակ և զամարճակ։

ՃՕՃԵՄ, կազմութիւնը բաղդ. թափեմ և թօթափեմ։

* * *

ՅՈԳՆ, (յք.) յոգունք, գրի և յոքն, յոքունք։ — Բազում էր զօրութիւն ատողին, և յոգն և յոքն ունէր լսողացն (Ոսկ. Մատթ.)։

ՅՈԳՆԱԳՈՅՆ, ՅՈԳՆԱԿԱՆ, Յն. ὄχλος նշ. բազմութիւն, ամբոխ։

Յորմէ 'ի հակառակէն

ՈՔ, բաղդ. ոմն։ Իսկ

ՅՈԳՆԻՄ, Յն. ὀχλέω, յոգնիլ, վաստակել, ὀχλερὸς, աշխատեցուցիչ, յոգնեցուցիչ. արմատ՝ ὄχλος, բազմութիւն, ամբոխ։ — Յոգնեցաւ

ժողովուրդն 'ի ճանապարհին, եւ բամբասեաց զԱստուած (Թուոց. ԻԱ. 4) ։ յն. ὀλιγοψυχέω ։

* * *

ԾԱՄ, Յն. ἡ κόμη, (գէս, վարս, բազմութիւն հերաց), Տճ. սաչ ։
ԾԱՄԱԿԱԼ, անս եւ [illegible] ։

Յորմէ (ծամ)

ՄԱԶ, (մ ա զ — զ ա մ × ծ ա մ), այն է՝ թել մի 'ի հերաց, Տճ. քըլ ։ — Մազ մի 'ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ (Մատթ.) ։ — Մանուկք քո անկան, եւ մազք արձակեցան (Եզեկ. ԺԶ. 7) ։ Բառդ. յոգն եւ ոք ։

Ծամ նկատի իբր թեթեւագոյն եւ անօսրագոյն ինչ ։

Յորմէ 'ի հակառակէն

ԾԱՄԵԼԻՔ, — Վարսեաց ցից ընդ ծամեղիս նորա (Դատ.) ։
ԾԱՄԵՄ,
ԱՆԾԱՄ, — Իբրեւ զխիստ ինչ զանծամ եւ զանկոտոր (Յոբ. Ի. 18) ։
Բառդ. ծնօտ եւ ծղօտ, ծղիք եւ ծաղիկ, կոշտ եւ կուշտ ։

* * *

ՀԱՍՏԵՄ, Յն. ἵστημι, (ապա.) στήσω, (անց.) ἔστησα, եւ (կր.) ἵσταμαι, στατίον, հաստատեմ ։ Վրս. [illegible], նշ. զոմ կամ եմ, եւ [illegible], նշ. գոյանալ, հաստել, լինել, եւ [illegible]՝ նշ. հաստատումն, գոյութիւն, եւ [illegible], [illegible], նշ. Աստուած ։ Յորմէ
ՀԱՍՏՈՒԱԾ, ([illegible]) ։

Յորմէ 'ի հակառակէն

ԱՍՏՈՒԱԾ (*), ([illegible]) ։
Բառդ. է եւ էք ։ Իսկ
ՀԱՍՏ, — Հզօրաց հաստ աղեղունք թուլացան ։ — Արարից ըղբաղուկ իմ հաստ ։ Եւ

(*) Աստուած բառը որոյ ծագումը և ստուգաբանութիւնն անյայտ է, է սակայն բուն Հայերէն ։ (Քննական Քեր. Հյ. Ա. էջ 272) ։

ՀԱՍՏԱՏ, ՀԱՍՏԱՏՈՒՆ, — Որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի գուցէ անկանիցի (Ա. Կորնթ. Ժ. 12) ։ յն. ὁ δοκῶν ἑστάναι βλεπέτω μὴ πέσῃ ։ Իսկ
ՍՏԱՆԱՄ, Յն. κτάομαι, κτῶμαι, նոյն նշ. Վրս. [illegible]՝ նշ. ստանալ, եւ Յն. κτῆμα, նշ. հաստատութիւն, մանաւանդ դաշտային, ագարակային. Վրս. [illegible], նշ. շահ, օգուտ ։ — Տէր հաստատեաց (Յն. ἔκτισε) զիս (Առակ. Ը. 22) ։ այլ օրինակ [illegible] ։ Այլ է
ԽԻՍՏ, Վրս. [illegible] ։ — Խիստ իբրեւ զգժոխս նախանձ (Երգ. Ը. 6) ։ — Խիստ է բանդ այդ ո՞վ կարէ լսել զմա ։ — Խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել ։
ԽՍՏՈՒԹԻՒՆ, Վրս. [illegible] ։
ԽՍՏԱՍԻՐՏ, Վրս. [illegible] ։

Յորմէ 'ի հակառակէն

ՀԵՇՏ, ՀԵՇՏԻՆ, ՀԵՇՏԱՆԱԼ, եւ դարձեալ Վրս. [illegible]՝ նշ. կազմել, շինել, հաստել ։
ԿԱԶԴՈՒՐԵՄ, — Ըստ կազդուրել մանկանց իմոց գնացից (Ծննդ.) ։
Ըստ մերձաւորութեան Վրս. ձայնիցս՝ [illegible] եւ [illegible], մերձաւորք են եւ 'ի մեզ [illegible] եւ [illegible] ։
ՀԱՍՏՈՅՐ, — Ջհաստոյր վէրան ընկալաւ ։ — Վիրաւորեաց զնա հաստոյր հարուածովքն (Ոսկ. Մատթ.) ։

Իսկ

ԽՍՏՈՐ, — σκόροδον, σκορδον,
21 543
նոյն նշ. σκορδον, յորմէ σκοροδίζω,
2 1 4 5 3
զկծեցուցանել, լինել բարկ եւ կծու, իբրեւ զխստոր, այլ ըստ ձայնին [illegible] ։ — Յիշեցաք զձուկն... եւ զսեխն եւ զմնղրապսակ, եւ ըղպրասն, եւ զսոխն եւ զխստոր (Թւ. ԺԱ. 5) ։

* * *

ՄԱՐԳ, Վրս. [illegible] ։

ՄԱՐԳԱԳԵՏԻՆ, նկատեալ իբր վայր խոնաւ՝ ջրարբի ։

Յորմէ ՚ի հակառակէն

ՄԱՐԱԳ, ուր պահի յարդ և խոտ չորացեալ ՚ի պէտս կենդանեաց ։

Բաղդ. ծմակ և ցամաք ։

*

* *

ՀԱՐՈՒՍՏ, Յն. ἀριστεύς, գերազանց, առաւելեալ, առատ, մեծ, իշխան ։

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ, Յն. ἀρίστευμα, գերազանցութիւն, առաւելութիւն, ճոխութիւն, մեծութիւն, առատութիւն, իշխանութիւն, իսկ ՚ի թարգմանութիւնս պատասխանէ Յունականիս δυναστεία, բռնակալութիւն, տիրապետութիւն, ինքնակալութիւն ։ — Առաջին հարստութիւն Եգիպտացւոց (Եւս. Քրոն)։ — ի վախճանել Ասորեստանեայց հարստութեանն (Նոյն)։

Յորմէ (հարուստ) ՚ի հակառակէն

ԱՐՈՒԵՍՏՈՂ, ԱՐՈՒԵՍՏԵՄ, բաղդ. սինկղիտոս և սինկլքոր, հիւպատ և հպատակ, իշխան և խաչն (արած), նախարար և (նախիր), նախարարած, տիրուն և տրուպ, փարպուկք և բարապան ։

ԱՐՈՒԵՍՏ իսկ (Գործ. Ա. 3). — Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանաց իւրոց ՚ի բազում արուեստս, Յոյնն ἐν πολλοῖς τεκμηρίοις (բազում հաւաստեօք), որ մեծաւոր է ձայնիս τέχνη (արուեստ)։

Յորմէ ՚ի հակառակէն

ԱՐՈՒԵՍՏԱԿՈՒԹԻՒՆ, բաղդ. իմաստուն և իմաստակ

ԱՐՈՒԵՍՏԱԿԵՄ բաղդ. գամարճակ և ճամարտակել ։ Իսկ

ԱՐՀԵՍՏ, ԱՐՀԵՍՏԱՒՈՐ, (յետոյն), իբր՝ նիւթական արհեստ ։

*

* *

ԿՆԻՔ (*), նկատի իբր նշան հաստատութեան. Գրս. Նէկէջ, Ոչ. կընիք, մատանի, քար մատանւոյ, և Նէկէնօյը, փորագրիչ կնքոյ, քանդակող կնքոյ։ — Նշանակ առ զԹլփատութիւնն կնիք արդարութեան հաւատոց (Հռովմ. Դ. 13)։ — Կնքեաց թագաւորն մատանեաւ իւրով և մատանեօք մեծամեծացն (Դան. Զ. 17)։

ԿՆՔԵՄ, — Որ ընդունի զվկայութիւն նորա, կնքեաց թէ Աստուած ճշմարիտ է (Յովհ. Գ. 33)։ — Զնա հայր՝ կնքեաց՝ Աստուած (Մնդ. Զ. 27)։ Յորմէ

ՆԻԳ, (՚ի պէտս ապահովութեան)։ — Զգրուտս պղնձիս խորտակեցից, և զնիգս երկաթիս փշրեցից (Ես. ԽԵ. 2)։

ՆԳԵՄ, և գերանունս

ԻՆՔ, և յոգնով՝ ինքս, ինքդ, ինքն ։

ԻՆՔՍ, ԻՆՔԴ, ԻՆՔՆ, և հաստատութեան կերպով գրուցուած ։ — Ես ինքն. — դուք ինքնին դիտէք ։ — Ոչ եթէ Յիսուս ինքնին (այսինքն՝ ինքն) մկրտէր, այլ աշակերտքն նորա (Յովհ. Դ. 2)։ Եւ

ԻՆՉ, (սեռ.) ընչի, (յք.) ինչք, (սեռ.) ընչից, Յն. οὐσία ։ — Արասցես... որչափ կարող իցէ ձեռն քո ըստ ընչին՝ զոր տացէ քեզ... Տէր Աստուած քո (Օրէն. ԺԶ. 10)։

Յորմէ ՚ի հակառակէն՝

ԻՆՉ, մանաւոր անուն, (բառ քերականութեան), որ ոչ թիւ ունի եւ ոչ հոլով. (աշխ.) մը — ֆէրէ մը, մարդ մը։ Բաղդ. հիմն և իմն ։ Ուրիշ է

ԶԻ՞, Գրս. Չէ, Եղ Չէ ։

ԶԻՆՉ, — Զի՞նչ է այդ ։ — Զի՞նչ արարից. զի՞ է զի վասն քո խրա-

(*) Կնէ+, Ցե+ոյ, և իրմով բարդուած՝ տատոքնէ+, տոտոքնէոյ, հայերէն լեզուի մէջ է+ վերջացած ուրիշ եզակի պարզ բառ չկայ-կայ դասալիք, բայց չի հոլովուիր ։

— Կնիք ՚ի ձայնէս՝ Կնի, զԿնի, որ և ՀԵՏ, զՀԵՏ. (Ն. Հյկ. Բռ)։

մասնեցաւ ցանց։ — Զի՞ է զի յա-րեւու եկիք այսօր։ — Զի՞ ես զա-սաս, Եղիա։ Դարձեալ ուրիշ է

Զի՛, Պրս. չի՛հ, չիհէ՛, նոյն նշ. — Զի՛ բարի, կամ զի՛ վայելուչ։ Նաեւ

Զի, իբր՝ վասն զի, քանզի, Պրս. չէ, նոյն նշանակութեամբ։

*

* *

ՊԱՐԷՏ, — Քիղոն յեօթանց ի-մաստնոյն պարէտ Լակեդեմոնաց-ւոց եղեւ (Եւս. Քրն.)։ յն. ἔφορος, տեսուչ, իշխան, գլխաւոր, հրա-մանատար։ Սակայն մեր բառը ծա-գած է 'ի Յն. πάρεδρος, որ նշ. ա-թոռակից, իշխանակից, իշխան, գործակից, օգնական իշխանի, դա-տաւորի, եւայլն, πάρεδρος որոյ բայը կ'ըլլայ παρεδρεύω։

*

* *

ՀԱԳՆԻ, Յն. ἄγνος, Լտ. Hagnus, նոյն նշանակութեամբ։

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ, այսպէս ըս-ուած, իբր հագնւոյ ձող մը կամ գաւազան մը բռնելով երգելը, ու-րուն բառած է նաեւ՝

ԳԱՒԱԶԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ, Յն. ῥαβδῳδία, եւ որովհետեւ կ'ըսուի նաեւ ῥαψῳδία, անոր համար կը կարծուի թէ այս անունը ծագած ըլլայ 'ի բայէս ῥάπτω, որ նշ. կարել (աղանեալ)։

Կայ նաեւ

ՆՈԽԱԶԵՐԳՈՒԹԻՒՆ, Յն. τραγῳδία, որ ամփոփաբար ողբերգութիւն կամ եղերերգութիւն կը թարգմանուի 'ի մեզ։ — Զողբերգութիւն յայն սակս ասացին նոխազերգութիւն, զի յաղ-թերգութիւնս իւրեանց նոխազօք մեծարեալ լինէին։

Մէկ խօսքով ասոնց ամէնքը կը նշանակեն՝ երգ, տաղ, բառ Յունաց կայ նաեւ անուն մը թատերական երգ կամ խաղ, χορῳδία անուան-եալ, որ ըստ ձայնին նշանակէ՝ բառ ամանց երգ՝ կայեալ 'ի ձեռին ձող սարդենւոյ, զի κόμος նշ. ձող Սար-դենւոյ կամ խուրձ եղեգան, եւ թարգմանի՝

ԽԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ։ Արդ 'ի մեզ՝ երգել. է օրհնաբանել, հռչակել փա-ռաւորութեամբ, մեծացուցանել օրհնու-թեամբ, բարեբանել։

Ցորմէ 'ի հակառակէն՝

ՑԵՐԳ ԱՐԿԱՆԵՄ, ('ի յատի մասս)։ Այսպէս եւ Յն. ὀμνέω, (երգել, եր-գաբանել), նշ. նաեւ՝ յերգ արկա-նել, երգիծանել։

Եւ միով բառիւ

ԵՐԳԱԾԱՆԵՄ, իբր ծանակել եր-գովք, որ կը պատասխանէ Յունա-կանիս χορῳδέω։ Բաղդ. հայհեր-գութիւն եւ հեգնողն։ Իսկ

ԵՐԳԻԾՈՒՑԱՆԵՄ (*),

ԵՐԳԻԾՈՒՄՆ, բառական կը հետա-նան վերը ցուցուած նշանակութե-նէն։ — Զի մի՛ (շունք եւ խոզք) դարձեալ երգիծուցանիցեն զձեզ (Մտթ. է. 6)։ յն. ῥήγνυμι, ῥηγνύω, (պատա-ռել)։ — Լնուն, խածողեն զարմայն

(*) Իպոնաքս Եփեսացի արար երգիծական տաղս ընդդէմ երկուց եղբարց Բուպալոս և Աթենիսի, և կարկառօրէն բուռն հարուածովք տաղիցն այնպէս երգիծոյց զնոսա, զի պատ-մեն զնոցանէ՝ առ զայրոյթ սրտմտութեան 'ի խեղդ մատնեցան։ (Ռոլ. Հնախ. Հտ. Զ. էջ 110)։

— Երկու եղբարք անդրիագործք անուանիք . . . տխեղ իւն կերպարանաց ընդ հեղգն ծաղ-րելով բանդակեցին նմա, անդրի ծաղու նը-շաւակ։ Սակայն վասն է ընդդիմակեալ եր-գիծական բերթողի։ Իպոնաքս ընդդէմ երկո-ցունց եղբարց տաղս երգիծականս ստացեալ գրեաց մինչև յուսահատ եղեալ նոցա խեղդե-ցան։ (Անդ. Հտ. Ա. էջ 596)։

— Բուպալ և Աթենիս եղբարք անդրիագործք պայծառացեալք յաւուրս Իպոնաքսեայ բերթո-ղի. զանգեղեալ բերթողին դրօշեցին զկերպա-րան 'ի ծաղր տեսողաց։ Եւ նորա 'ի-բէն վրի-ժու փոխել արար զառն երգիծանս, մինչև 'ի խեղդ մատնել նոցա յամօթոյ և 'ի զայրա-նալոյ։ (Անդ. Հտ. Ե. էջ 334)։

իւրեանց եւ երգիծուցանեն ։ — Եղիցի քաղաք նոցա յերգիծումն ։

Բանգի կը նշանակեն հերձուլ, ճեղքել, պատառել, (իրօք կամ նըմանութեամբ) . արդ այս նշանակութեանց հետեւորութիւնը սա կերպով կրնանք մերձեցընել ։ Աչխ. եւ Տճ. բացատրութիւնն է, օէրտը վէրօրէւ, օէրտը վըտօրընէւ, օէրտը ծօչէւ. կ'ըսենք նաեւ՝ օէրտը ծօրեըընէւ. ենօրէօ բօրըրմօֆ, կամ սոսկ բօրըրմօֆ, որով կը մօտենան երգիծանել եւ երգիծուցանել ։

Այսպէս նաեւ հաստանել եւ հաստուցանել, առաջին հայեցուածով կերեւան թէ վերաբերութիւն չունին իրարու . սակայն ներքին կապակցութիւն մը ունին, որ իրենց տեղը ցուցուած է ։ (Տես անդ) ։

Համեերգութիւնէն՝ ունինք հակառակ նշանակութեամբ՝

ՀԵՆԳՆ, իբր 'ի ձայն բարձր ։

Ցորմէ 'ի հակառակէն

ՆԵՆԳ, լռիկ, 'ի ներքուստ ։

Բաղդ. երգել եւ երգիծանել, եւ Ցն. ὑμέω, տալ զկրկին իմաստ ։

ՆԵՆԳԵԼ, Բաղդ. չանթել եւ չընթել, փուսան եւ քոււ, չնչել եւ չչել, ճիչ եւ ճիկ, հեծել, հեծեծել եւ ծծել, խանչել եւ խնջել. մռընչել եւ մրմնջել ։

ԴԵՆ, Արաբ. դէյն, նչ հաւատք, կրօնք, պաշտամունք ։ Իսկ

ԿԵՇՏ, Պրս. քէշդ, քէշդէն՝ նչ. սպանանել ։ Հրամ. եւ արմատը՝ քէշ, այս անունը կուտայ Ջանդիկը՝ Զրադաշտական գենէն դուրս բոլոր տարբեր կրօնքներուն, ըսել ուզելով՝ սպանող, այսինքն՝ չիջուցող կրակի, մանաւոր բառ մ'ալ ունին -քէշքէշդէն, որ նչ. սպանանել ըզկրակ, այսինքն՝ չիջուցանել զհուր ։

— Դո՞ւ սպաներ զկրակն (Եղնկ.) ։

Ցորմէ

ԳԷՇ, — Ուր գէշն է, անդր եւ արծուիք ժողովեսցին ։

ԳԻՇԱՏԵՄ, իբր՝ հատանել զգէշն ։ Բաղդ. գլխատեմ, թլփատեմ ։

Ուրիշ է

ՔԷՇ, Պրս. քէշ՝ նշանակէ՝ հաւատք, կրօնք ։ — Եթէ նոյն քէշ է երկոցունց, ընդէ՞ր ատեցեն մոգք զՋանդիկս (Եղնկ) ։

ՔԷՇԱԿԱՐԿԱՏ, — Հայեցեալ ընդ այն քէշակարկատին Պարսից . . . մարդկօրէն բարուք զքէշն կարկատէ, եւ յղութեամբ եւ ծննդեամբ զկրօնսն կցկցէ (Եղնկ) ։

ԵԹԷ, Ցն. εἴτε, եւ Դորացի αἴτε ։

Ցորմէ համառօտեալ՝

ԹԷ, — Ամենայն ինչ ձեր է, եթէ Պօղոս, եթէ Ապողոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանս, եթէ հանդերձեալքն (Ա. Կորնթ. Գ. 21) ։ Ցն. πάντα γαρ ὑμῶν ἔστιν, εἴτε παύλος, εἴτε ἀπολλῶς, εἴτε κεφὰς, εἴτε κόσμος, εἴτε ζωὴ, εἴτε θάνατος, εἴτε ἐνεστῶτα εἴτε μέλλοντα.

ԲՈՋ, Պրս. ֆօզ, նոյն նչ.

Ցորմէ

ՑՈՓ, եւ

ԽՈԶ, քանզի Ցն. πόρνη, (իգ.) πόρνος, (ար.) (պոռնիկ) մերձաւոր է ձայնիս πόρκος (խոզ) . այսպէս 'ի մեզ չուն կոչի պոռնիկն, եւ չնալ է պոռնկել, 'ի նմանաձայնութենէ Ցունական ձայնիցս՝ κοινὸς եւ κυνός ։

Շուն եւ խոզ նկատին իբր պիղծք ։ — Մի տայք զսրբութիւն շանց եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց (Մատթ. Է. 8) ։ — Շուն դարձեալ անդրէն 'ի փսխած իւր, եւ խոզ լուացեալ ընդ տիղմ թաւալեալ (Բ. Պետր. Բ. 22) ։

Այսպէս եւ

ՎԱՐԱԶ, Պրս. վէրրազ՝ նչ. արու խոզ, Լտ. verrus ։

Ցորմէ 'ի հակառակէն

ՎԱՐԱՄ, [illegible], [illegible]. *Բաղդ. խոզ եւ բոզ.*

* * *

ԼԵԶՈՒ, *իբր՝* [illegible] *որպէս՝ հաստ, ահարկու, քսու, բանսարկու, կծու. Արաբ.* [illegible], *Յն.* γλώσσα, γλώττα, lingua, *յորմէ*

ԼԵԶՈՒՄ, — *Շուն ք եւս գայլն եւ լեզուն զվէրս նորա* (*Ղուկ. ԺԶ.* 21). (*ի հայկականէս լեզու*)

ԼԻԶԱՆԵՄ, — *Լիզանէ ժողովուրդս այս զամենայն որ շուրջ զմեօք են՝ որպէս լիզանէ արջառ զդեղ դալար 'ի դաշտի* (*Թւ. ԻԲ.* 4).

ԼԻԶՈՒՄ, *Այժմ լիզուն նոքա զամենայն երեսս երկրի* (*Յուդ. Է.* 4).

Պրս. [illegible], [illegible], *նոյն նշ. Յն.* λείχω, ἐκλείχω, λιχνεύω, *Լտ.* lingo. *Իսկ*

ԼԵՍՈՒՄ, *մանրել, փշրել, Յն.* λεαίνω *եւ* λέανσις, *լեսումն.*

— *Լեսի զնոսա իբրեւ զհող երկրի* (*Բ. Թագ. ԻԲ.* 43). *Յն.* ἐλέανα αὐτοὺς ὡς χοῦν γῆς. *Եւ*

ԼՍԵՄ, *'ի Յունականէս* γλῶττα, γλώσσα. — *Ահաւասիկ ես ածից 'ի վերայ ձեր ազգ 'ի հեռաստանէ...* [illegible], [illegible], *ազգ՝ որոյ ոչ* [illegible] *նորա, եւ ոչ իմանայցես զխօսս նորա* (*Երեմ. Ե.* 15). *'ի Յն. չիք* [illegible], [illegible]. *Միօս համաձայն Եբր. եւ Ասոր.* — *Լսեմք խօսից նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ* (*Գործ. Բ.*). — *Եւ էր ամենայն երկիր լեզու մի եւ բարբառ մի ամենեցուն... ահա ազգ մի եւ լեզու մի ամենեցուն... եկայք իջցուք եւ խառնակեսցուք անդ զլեզուս նոցա զի մի՛ լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ* (*Ծնն. 1—7*). — *Եւ նոքա ոչ գիտէին եթէ լսէր Յովսէփ, զի թարգման կայր 'ի միջի* (*Ծնն. ԽԲ.* 23). *Անանք չգիտէին թէ Յովսէփ* կը հասկընար (*իրենց լեզուն*). — *Ոչ առ ժողովուրդ խորախօս եւ ծանրալեզու առաքեցիս, եւ ոչ առ թանձրալեզուս, զորոց ոչ լսիցես զբանս նոցա* (*Եզեկ. Գ.* 6).

Լսեմը պակասաւոր բայ մըն է, (ըստ քերակ.), որուն պակաս ժամանակները լեցընելու համար դիմում մը կ'ընեայ լսում բային բայանուններուն, եւ մեծապէս կը մերձենան անոնց, (Լիր, լրութիւն). Ուստի կար. լուայ, հրմ. լուր եւ լու եղեւ. իբր՝ լսելի եղեւ. եւ

ԼՈՒ Ի ԼՈՒ, *իբր՝ թէ ըլլար՝ լսուլի,*

ԼՈՒՐ ԱՌՆԵՄ, — *Լուր արարից յԹաբովլթ զգոյժ քաղաքացն* (*Երեմ. ԽԹ.* 2). *Եւ այս մերձեցումը սա տեսութեամբ կը մեկնուի, որ աշխ. նաեւ Տճ. ոճով կ'ըսուի,* [illegible], [illegible], [illegible] *է,* [illegible], *իբր՝ տեղեակ, գիտակ, իրազեկ.*

Ուրիշ է

ԼՈՒ Ի ԼՈՒ, *համարձակ, հրապարակաւ.* — *Լու 'ի լու ամենայն ժողովրդեանն.*

ԼՈՒ ԵՂԵՒ, *աշխ.* [illegible], (*բոլոր ժողովրդեան առջեւ*).

ԼՈՒՐ ԱՌՆԵՄ, (*լսելի առնել, լուր տարածել*). *Իսկ*

ԼՈՒՐԹ, *Լտ.* luridus, luridatus, *նշ. սժգոյն, դեղնագոյն, թխագոյն կապուտակագոյն.*

Յորմէ 'ի հակառակէն

ԴԱԼԱՐ, ԴԱԼԱՐԻ, *եւ*

ԴԵՂ, ԴԵՂ ԴԱԼԱՐ, *Յն.* χλόη, χλωρός, *նշ. կանաչ, նաեւ դեղին, Պրս.* [illegible]*՝ նշ. խաւարտ, բանջար.*

Յորմէ

ԴԵՂԻՆ, *Քանզի Յունականն* χλωρός, *նշ. նաեւ դեղին. Եւ*

ԴԱԼՈՒԿՆ, *Տճ.* [illegible] (*հիւանդութիւն մը՝*), *մի՛ շփոթեր ընդ թալուկ. Եւ*

ԴԵՂՁ, *Պրս.* [illegible], *թարգմա-*

նի՛ գեղջին առլոր, եւ նկատի իբր քաղցր կամ անարժանամ։

Ցորմէ 'ի հակառակէն

ԴԱՂՁ, Յն. ρείγανον, [illegible]։

— Ջրային կրայ եթէ ուտիցէ 'ի մարդ իժի, երիթայ ուտէ դաղձն, եւ այնու անցուցանէ զատայ նեղութեանն (Վեցօր.)։ Բաղդ. թուլթ եւ թթու, պաղատիտ եւ տաքով, քաղցր եւ քացախ, սեխ եւ սոխ, մանանայ եւ մանանեխ եւ անանուխ։ Ցորմէ

ԴԵՂՁԱՆ, (առացեալ գլխոյոից հերաց)։ — Դեղձան հերք (Խոր.)։

Դարձեալ ուրիշ է

ԼՈՐՏ, (ծանր, դանդաղ), lurdus (առարին Լատիներէն), նոյն նշան. — Մի՛ վատ եւ լորտ յառաքինութեանն կայցէ (Ոսկ. Ա. Թես.)։

Լսեմ բայէն ծագումն առած է

ՀԼՈՒ, կազմութիւնը բաղդ. հնազանդ, հզօր, հմուտ։ Եւ

ԼՈՒՐՋ, որ լեէ, այսինքն՝ [illegible]։

Ցորմէ 'ի հակառակէն

ԽՈՒԼ, կազմութիւնը բաղդ. ցուլ, նաեւ հ-լու, խ-ուլ, որգի խ-որթ։

խ ո ւ լ *հ լ ո ւ*
1 3 4 2 1 4 2 3

Խլութիւնը կամ համրութիւնը կը նկատուի իբրեւ պնդութիւն կամ ամրութիւն մը՝ լսողութեան դէմ. ուստի կ'ըսուի՝ լուծան կապանք լեզուի նորա,

Ցորմէ 'ի հակառակէն՝

ԽԱՐԽՈՒԼ, բաղդ. տղբ, եւ զաղփաղուն, չաղփաղփութիւն։

Ասոր պէս նաեւ ուրիշ քանի մը բառեր, որ անհաստատ կամ շարժուն վիճակ մը ցուցընելու բնութիւնն ունին,

ԽԱՐԽԱՓԵՄ, ԽԱՐԽԱԼԻՄ, ԽԱՐԽԱՐԵՄ, ԳԱՐԳԱՓԵՄ, ԱՌ ԽԱՐԽԱՓ, Ի ԳԱՐԳԱՓՍ ՅԱՌՆԵՄ, եւ

ԽԼԵՄ, յորմէ 'ի հակառակէն

ԽՐԻՄ, յորմէ

ՀՐԵՄ, բաղդ. ընդգրկեմ եւ ընկրկեմ, մղեմ եւ մխեմ։ Եւ

ԽԼՐՏԻՄ, ԱՆԽԼԻՐՏ,

ԽԼՈՒՐԴՆ, Պրս. [illegible], Թրք. [illegible]։ Կենդանեաց անուններէ ձեւացած բայեր. խոյ-խոյանամ, արծուի—արշաւեմ, վագր—վարգեմ, կինճ—կնճռնամ, շուն—շնամ։

ԽԼԻՐԴՆ, Թրք. [illegible]։

Ուրիշ է

ԽԱՐԲԱԼԵՄ, — Սիմոն, Սիմոն. ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրեւ զցորեան (Ղուկ.)։

Ձեղամթա, [illegible]՝ նշ. [illegible]

(Տե՛ս 'ի բառն՝ [illegible])։

Դարձեալ լսեմ բայէն ծագումն առած եւ իբր անոր պէսպիսութիւնը կը նկատուի՝

ԼՍԵՄ, իբր զի լսելու համար պէտք է [illegible]։

ԼՈՒՌ ԼԻՆԻՄ, — Լուռ եղէ եւ ոչ բացի զբերան իմ (Սաղմ.)։ Թրք. [illegible]։

Լսել եւ [illegible], ինչպէս նշանակութեամբ, նոյնպէս եւ կազմութեամբ շատ մօտ են իրարու, որմաէ [illegible] եւ [illegible]՝ գրեթէ նոյնք են։

— Լուռ լեր, եւ լուր Իսրայէլ, յաւուր յայսմիկ եղեր ժողովուրդ Տեառն Աստուծոյ քո (Օրին. Իէ. 9)։

Եւ այսպէս զուգութեամբ գործածուած բառեր՝ գտնուած է որ մի եւ նոյն արմատի կը վերաբերին։

Լեառն եւ տէր. — Ո՞վ ելցէ 'ի լեառն Տեառն (Սաղմ. ԻԴ. 3)։

Բամբին եւ բամբակ. — [illegible] ամանդութեան խմոյ եւ [illegible] իմոյ (Ամբ. Ժ. 8)։ — Այս մրրիկ [illegible] նոցա (Ամբ. ԺԵ. 5)։

Մերձ եւ մերժ. — Գիշերն [illegible], եւ տիւն [illegible] (Հռովմ. ԺԳ. 12)։

Զգաստ եւ զգետ. — Տեսանեն զգիւահարն [illegible] եւ [illegible] (Մարկ. Ե. 15)։

Կին եւ կեանք. — Կոչեաց Ա-

դամ զանուն կնոջ իւրոյ Կենաց (Ծն. Գ. 20)։

Օծանեմ եւ անիծանեմ. — Քրիստոս (օծեալն) փրկեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք (Գաղատ. Գ. 13)։

Ցասնում եւ ցածնում. — Ցածեաւ Տէր 'ի ցասմանէն (Նխ. Եւ. ՃԼԴ)։

Արհաւիրք եւ զարհուրիմ. Ի տեսիլ արհաւրացն զարհուրեցաւ ժողովուրդն (Նխ. Եւ. ԽԷ)։

Այո եւ սակս. (տե՛ս զբառդ). — Զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ՞. այո, ասեմ ձեզ, եւ առաւել եւս քան զմարգարէ (Մատթ. ԺԱ. 9)։ — Այո՛, ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէ յայդմանէ (Ղուկ. ԺԱ. 51)։ — Այո՛, ասեմ ձեզ, եկեսցէ այս ամենայն 'ի վերայ ազգիս այսորիկ չարի։ — Այո՛, ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջիք (Ղուկ. ԺԲ. 5)։ — Այո՛, ասեմ ձեզ, զի արասցէ զվրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի (Ղուկ. ԺԸ 8)։

Մոռանիմ եւ մոռանում. — Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ (Սղմ. Լ. 13)։

Աղիք եւ ողորմ, (եւ բարդեալ՝ աղիողորմ). — Աղիք ամպարշտաց անողորմ են (Առակ. ԺԲ. 10)։

Անսամ եւ սանձ. — Զիոց սանձս 'ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ (Յակ. Գ. 3)։ — Երիվար աներասանակ էր Պաւղոս, ընդդէմ աստուածային սանձոյն (Սեբեր. ԺԱ)։

Գիտեմ եւ գտանեմ. — Որչափ ասասցէ իմաստունն գիտել, ոչ կարասցէ գտանել (Ժող. Ը. 17)։ — Եթէ ոչ էր ճնչեալ զերինջն իմ, ոչ գտանէիք զառակն իմ (Դատ ԺԴ. 18). յն. οὐκαν ἔγνωτε, (ոչ գիտէիք)։ *Տես եւ՝ սովորանեմ*։

Աղեղն եւ ուղիղ. — Ասաց Դաւիթ ուսուցանել որդւոցն Յուդայ զաղեղնաւորութիւն, եւ ահա գրեալ է 'ի գիրս ուղղութեան (Բ. Թագ. Ա.)։

Իսկ
ԼՈՒԱՆԱՄ, Յն. λούω, նոյն նչ.

Ցորմէ

ԼՈՒԱՆԱԼԻՔ, — Իբրեւ զաճառ լուանալեաց (Մաղաք. Գ. 2). յն. πλυνόντων, լուացողաց։

ԼՈՒԱԼԻՔ, լուացարան, աւազան Յն. λουτρόν։ — Ատամունք քո իբրեւ զերամակս կարելոց որք ելանեն 'ի լուալեաց (Երգ. Դ. 2. եւ Զ. 5)։ Իսկ (Դ. Թագ. Ժ. 27) «Քակեցին զատունն Բահաղու, եւ կարգեցին զնա 'ի լուալիս մինչեւ ցայսօր» Յն. λυτρών (կոյանոց) որ կարդացուած է λουτρόν, եւ ըստ այնմ թարգմանուած է՝ լուալիք։

Ցորմէ (լուանամ)

ԼԱՄ, բաղդ. խառնու են կազմութեան հետ։

— Լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի (Սաղմ.)։ — (Կին մի) լայր, եւ արտասուօքն իւրովք սկսաւ թանալ զոտս նորա… մտի 'ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ (Ղկ. Է. 37—44)։

Լամ՝ գրեթէ համառօտութիւնն է լուանամ ին, լ(ուան)ամ, լ(ուան)աս, լ(ուան)այ, եւայլն, մինչեւ վերջը այսպէս է։

*
* *

ԿՆՏԱԿ, գրի եւ կնդակ։
ԿՆՏԱՆԱՄ » » կնդանամ։
ԿՆՏՈՒԹԻՒՆ » » կնդութիւն։
ԿՈՒՆՏ » » կունդ։
Յն. φάλακρος, (ճաղատ)։

Մեր բառը կը թուի լինել՝ քէնտէ, չէնտէ, որ ըստ Պարսից կը նշանակէ կտրած էլ, (հեգնական, ծաղրական կամ նախատական բառ մը)։

— Մանկտի մանրիկ ելին 'ի քաղաքէն, աղաղակէին 'ի նա եւ ասէին. ե՛լ, կնտակ. ե՛լ, կնտակ (Դ. Թագ. Բ. 23)։ Ամենայն գլուխք

կնասցեալք (Եզեկ. ԻԹ. 18) ։ — Մի՛ գերծուցուն զգլուխս խուխոնց 'ի կնտութիւն (Ղեւտ. ԺԳ. 42) ։ Իսկ

ՍԿՆԴԻԿ, ՍԿՆԴՈԻԿ, — Բազում են որդիք ընդլէնք (իգ.), տաւել քան զարամբւոյն (Եսայ. ԾԴ. 1 . և Գաղ. Դ. 27) . յն. ἔρημος, Բողէաւ, ւէեաւ, Ընդաջէաւ, աճաւ կամ այրէաջէաւ կամ Հանէաւ ։ — Ո՞վ իցէ ամուլ-ակնդիկ . Հեթանոսաց եկեղեցին (Ոսկ. Մտթ.) ։ — Անժառանգ էի, ակնդուկ և այրի, անծին, ամուլ (Ոսկ. Եսայ.) ։ — Ցանգխանեաց զխս իբրև ակնդուկ մի (Բուզ.) ։

ՍԿՈԽՆԴ, նոյն է ընդ Պրսկերէն + ա ա Ն տ ք ա ղ ,որ նշ. չնչրի ։
2 3 4 5 6 1

ԿՈԽԴՐ, չնչրի, ծովային շուն, Արաբ. ֆէլղ, նշ. շուն ։

* * *

ՆՈԽԱՐՏԱՆ, Պրսկ. Նէ-վար, նշ. չուան, ապաւանդակ վրանի ։

* * *

ԴԱՐՄԱՆ, Պրս. դէրման ։

* * *

ՀԵՐԱՏՈԽԿ (*), Յն. ἱερόδουλος, նշ. պաշտօնեայ մեհենի ։

Հայերը, կ'ըսէ Սարաբոն (Գիրք. ԺԱ. Գլ. ԺԴ. 16) մասնաւոր պաշտօն կը մատուցանէին Անահտայ ։

Հայոց ազնուականներն իրենց աղջիկ զաւակներն անոր մեհեանին բարապաշտութեան կը նուիրէին, ուր վարքերնին կ'աւրուէր ։ Ասկէ այս բառը մասնաւոր նշանակութիւն մը առցած է 'ի յոռի միտս, իբր անամօթ՝ անպատկառ կին, բոզ ։

— Տեսանե՞ս զհերատուկն յանդըգնեալ (Ոսկ.) ։ — Պար առեալ 'ի մէջ բազմականացն իբրև զհերատուկ անուանարկ (Անդ.) ։ յն. ἀπερυθρίαστμένη, (անամօթ, լիրբ) ։

* * *

ՄՐՋԻՄՆ, գրեալ և

ՄՐՋԻԻՆ, Պրս. մուր, մուրչէ, մուրչանէ, մուրխանէ, Յն. μύρμηξ, μύρμος. և Դորացի՝ μύρμαξ, մրջիւն, μυρμηκίζω, մարմաջել, μυρμηκιασμός, բորբոքում, որ պատճառի 'ի մարմաջելոյ ։

ՄԱՐՄԱՋ, Յն. μυρμήκια, արմատ՝ μύρμυξ, (մրջիւն) ։

ՄԱՐՄԱՋԵԼ, — Կուտեցեն իւրեանց վարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց ։

ՄԱՐՄԱՌՈՏ, յարմէ

ՄՈՐՄՈՔԵԼ, ('ի ներքուստ) կամ բարոյապէս, և

ԲՈՐԲՈՔԵԼ, արտաքուստ կամ իրապէս ։

ԲՈՐԲՈՔ ։

* * *

ԿԱՏԱՐԵՄ, Յն. καταρτύω, նոյն նշ. ։ Դարձեալ Յն. κορυφή, գագաթ, ծագ, կատարած ։ — Ի բերանոյ մանկանց տղայոց կատարեցեր զօրհնութիւն (Սաղ.) . յն. ἐκ στόματος καταρτίσω αἶνον, և այլն.

ԼՄԸՆՑԸՆԵՄ է՝ լման, այսինքն՝ կատարեալ ընել, լրացընել (պակասը), վերջացընել, աւարտել ։

ԿԱՏԱՐԱԾ, վերջ, վախճան, վերջին ծայր ։ — Այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս ։ — Ապա եկեսցէ կատարած ։

Յարմէ 'ի հակառակէն՝

ԿԱՏԱՐ, վերին ծայր, ծագ բարձրութեան, Յն. κορυφή ։

— Բարձրագլուխք լերանցն կատարք (Փիլ.) ։ — Բաղկամտա, որոյ կատարն հրով տաչորի (Խոր.) ։

Բազգ. հաւ և յաւ — անյաւ, այգ և ագի ։

(*) Հերատուկ, որպէս թէ հերքն կամ 'ի հերաց հատեալ . նախատական մականիր չատուկ կնոջ կամ աղջկան, հոլանի, հերարձակ, անպատկառ, լիրբ, անամօթ, լկտի ։ Տաճկ. ֆէլլէ, հարզ. գլխիբաց գէշ կնիկ (Ն. Հյկ. Բռ) ։

Ցորմէ (կատարեմ) 'ի հակառակէն
ԿՈՏՈՐԵՄ, ԿՈՏՈՐԱԾ, ԿՈՏՈՐ, բաղդ. բարդել եւ բրդել, պատռել եւ պատառել, յորմէ համառօտեալ՝
ԿՏՐԵՄ, խուզել, փոքրել։
— Մի կտրեսցես զանդրանիկս հօտից քոց (Օրէն. ԺԵ. 19)։ — Լուաւ Դաւիթ եթէ կտրէ Նաբաղ զհօտս իւր … լուայ եթէ կտուրք են հօտից քոց (Ա. Թագ. ԻԵ. 4)։ Իսկ
ԿՏՐԻԼ, աշխ. ոճով կը գրուցուի՝ կըսմ կէրէկ. պաշ կէրէկ. պօյ կէրէկ. ֆիքիր պաշը կէրէկ է, Տճ. շաբաթ ..., (ոճ Տճկ.)։ Տե՛ս հատանել, բրդել։
ԿՏՈՒՐՔ, — Լաբան երթեալ էր 'ի կտուրս խաշանց իւրոց (Ծննդ. ԼԱ. 19)։ — Եւ եղեւ յետ … աւուրց էին կտուրք Աբիսողոմայ 'ի Բեթմարոնս … ահաւասիկ կտուրք են ծառայի քում (Բ. Թագ. ԺԳ. 23—24)։ — Ի կտրոց խաշանց իմոց ջեռան թիկունք նոցա (Յոբ. ԼԱ. 20). (աշխ. ... ...)։
— Որպէս ոչխար առաջի կտրչի անմռունչ կայ (Եսայ.)։
ԿՏՐՈՂ, — Անռուցո՞ւմ զհաց կըտրողաց իմոց, եւ տայցե՞մ արանց զորս ոչ գիտիցեմ (Ա. Թագ. ԻԵ. 11)։ Բաղդ. բրդել եւ բուրդ։
ՄԵԾԱՄԵԾՍ ԿՈՏՈՐԵՄ, իբր Թրք. ... ..., (այլաբանութեամբ)։ —Մեծամեծս կոտորեն … եւ ապա լուծանեն զուխան (Եղն.)։ — Ձկունս լողացն մեծամեծս կոտորելով խախտիցէ (Սեբեր.)։ Իսկ
ՆԱԽԱԿԱՏԻՔ (*), Յն. ἐγκαίνια, (նորոգութիւն, տես զբառդ) առնե նաւակատիս, ἐγκαινόω, ἐγκαινίζω, — εγ — καινιω, ինչպէս յայտնի կերեւի (ող) նոր
ընեալ՝ բարդուած բառ մըն է, նորոգ ..., սակայն բառից առաջին մասը մեր նաւ բառին հետ ամենեւին վերաբերութիւն մը չունի, եւ ոչ ...՝ վերը ցուցուած ..., ... բառերուն հետ։
Առաջինը Ա... է, ... Գրաբար, որ նշ. նոր, իսկ երկրորդը Յոյն է κατοικία, κατοικέσια, որ նշ. բնակութիւն, հաստատութիւն, եւ Յունարէն τὰ κατοικέσια, նշ. նաւակատիք, կամ պարզաբանելով ըսենք, նոր բնակութեան մը, կամ հաստատութեան մը, կամ ո՛ր եւ իցէ նոր բանի մը համար կատարուած հանդէսը, կամ անոր տարեդարձը կ'ըսուի՝ τὰ κατοικέσια։ Այս ոճով կազմուած է νεοκάτοικος, նոր բնակիչ։
— Այր որ որոյ շինեալ իցէ տուն նորաշէն եւ ոչ իցէ արարեալ նմա նաւակատիս, գնասցէ եւ դարձցի 'ի տուն իւր, գուցէ մեռանիցի 'ի պատերազմի, եւ այլ առնիցէ նմա նաւակատիս (Օրէն. Ի. 5)։ — Գալ 'ի նաւակատիս պատկերին զոր կանգ

(*) Այս բառը 1819 Թուականէն սկսեալ՝ ազգային բանասիրաց մտածութեանց նիւթ եղած է։ Առաջին ստուգաբանողն եղաւ Ինճիճեան վարդապետը և անձ իր խօսքերը։ «Մատիցուք այժմ 'ի ստուգաբանութիւն հայկական անուանս՝ ...։ Մարթ էր զայս անուն ածանցեալ կարծել՝ ի ... բառէս, ըստ որում առ յոյնս և առ լատ. նաւ կոչի այն մասն եկեղեցւոյ՝ ուր կայ ժողովուրդն։ Որ է միջին մասըն եկեղեցւոյ, և մեծագոյնն։ Եւ զի 'ի կատարել այսր ... կոչեցեալ մասին եկեղեցւոյ լինի իբր կատարումն, և յետ այնորիկ հնաւեփ տօնն և ցնծութիւն, վասն որոյ դրառս ...՝ մարթ է ստուգաբանել ..., իբր կատարումն նաւու եկեղեցւոյն, կամ զինչ ևիցէ շինուածոյ։ (Եղանակ Բիւզանդեան 1819 ամին)։ Երկրորդն եղաւ Ն. Հյկ. Բառարանը․ Նաւակատիք (որպէս նորակերտիք, նոր կերտել)։ Երրորդն եղաւ Հ. Ա. Վ. Բագրատունին, (տես Քերական. Զարգ. էջ 686) «Կատար, որոյ արմատ ...՝ երեւի 'ի բառն ..., որ է՝ ..., 'ի ... պարսիկ ձայնէն ն-
Դարձեալ (Անդ, էջ 691) «Նաւակատիք, 'ի ... արմատոյ կատարին, և 'ի ... պարս. կականէն՝ է ...»։

նեաց արքայն Նաբուգոդոնոսոր (Դան. Գ. 2)։

* * *

ԶԱՆԴԻԿ, Պրս. զէնտ, այս անունով կը կոչուին զրադաշտական գիրքին հետեւողները, եւ կը թարգմանի կենդանական, կենդանի, եւ նոցա օրինաց եւ կրօնից գիրքն է զէնտ-աւեստա, որ թարգմանուի՝ կենդանի բան, բան կենաց։

Պրս. զէնտէկի՝ նշ. կենդանութիւն, կեանք, Յն. ζωή, կեանք, ζάω. ζῶ ζῇς, ζῇ, ζῶμεν, ζῆτε. ζῶσι, (կեամ, կեաս, կեայ, կեամք, կեայք, կեան, եւ մնր

ԿԵՆԴԱՆԻ, նոյն է՝ ընդ՝ Զէնտ. եւ Պրս. զէնտէ՝ նշ. կենդանի, եւ Արաբ. հայ, եւ Եբր. խայ, Լտ. sanitas, նշ. առողջութիւն, կենդանութիւն։

(կենդ-անի, իբր ա ի ն)
1 3 2

Տես եւ կին։

Այս եւ ասոր պէս բառերու համար ըսուած է, թէ բառը Պարսիկ է, սակայն Լատին ձայնին պատշաճեցընելով ընդունուած է, այսպէս է նաեւ պարտէզ, որ ձայնով Պարսիկ, սակայն բառ լատին իմաստին ընդունուած է։ Տես եւ արտօսր եւ լրտես, արտասուել եւ լրտեսել։

Այս Զանտէկ բառն է որ կը դառնայ, կը լինի

ՄՆԴԻԿ, այս ալ Լատիներէնին թելադրութեամբ, քանզի Լատիներէն argentum vivum, նշ. սնդիկ, բայց թարգմանի՝ կենդանի արծաթ։

Նոյնպէս եւ

ՍԱՆԴ (*), Թրք. հայվան, յորմէ

ՍԱՆԴԱՀԱՐԵՄ, — Սանդահարեա, սանդահարեա զպարկն Անաքսարքեայ, քանզի ոչ կարես զԱնաքսարքոս սանդահարել (Նահնու...)։

(*) Սանդ բառին կազմութիւնը բաղդատէ (Վարդապետ) veritas բառին կազմութեանը հետ։

Այս ալ Լատինին թելադրութեամբ, զի Լտ. sanitas, նշան. առողջութիւն, կենդանութիւն, եւ ասոր հակառակ mortarium, որ նշանակէ սանդ, նմանաձայն գտանի mortalis, մահացու, մահկանացու, եւ mortuus մեռեալ։ Թրք. հայվան, նմանաձայն է Արաբ. ձայնիս՝ հայվան, (կենդանի)։

Յորմէ (սնդիկ)

ՑՆԴԻՄ, սնդիկը նշանաւոր է իր ցնդական յատկութեամբը։

Ունինք նաեւ

ԱՆԴԱՆ, ԱՆԿԱՆ, որ նշ. սանդ (հայվան)։ — (Զմանանայն) աղային յերկանի, եւ լեառին յանդանի, եւ եփէին 'ի պուտան (Թուոց. ԺԱ. 8)։

Եւ այս ձայնն ալ թերեւս՝ զի կը մերձենայ ձայնիս կանան—կանանէ, Պրս. զէնան, (կանայք), զէն (եզ.) կին։ Կէն եւ կէանէ մի եւ նոյն ծագումն ունին։ (Տե՛ս զբառս)։

* * *

ՊԱՐԱՊ, σχολή, նշ. անգործութիւն, պարապորդութիւն։ Ժամանակի յարմարութիւն, յարմար, դիպող ժամանակ։ Ինչ որ կը գործէ մարդ՝ իր պարապոյ ժամերուն մէջ, ինչ բանով որ կը զբաղի, զբաղումն։ Ուսումն։ Ուսումնարան, դպրոց։

Եւ Յն. σχολάζω, նշ. հանգստեան միջոց ունենալ, դադարել։ Պարապել, զբաղել։ Աշակերտել, ուսանել։

— Խնդրէր պարապ զի մատնեսցէ զնա նոցա (Մատթ. ԻԶ. 16)։ — Խնդրէր թէ զիարդ պարապով մատնեսցէ զնա (Մարկ. ԺԴ. 11)։ — Ոչ է ինձ պարապ....

ԱՆՊԱՐԱՊ, իբր՝ զբաղեալ։ —Այր ծեր եւ հիւանդոտ, եւ անպարապ 'ի թարգմանութեանց (Խոր.)։

ՊԱՐԱՊՈՐԴ, ունայն։ —Գայ գտանէ զնա պարապորդ։

ՊԱՐԱՊԵՄ, — Ոչ այժմ եկեսցէ, այլ եկեսցէ յորժամ եւ պարապեսցէ

(Ա. Կորնթ. ԺԶ. 12) յն. εὐκαιρέω։ — Մի՛ զրկէք զմիմեանս, բայց... զի ուխտիցն պարապիցէք (Ա. Կորնթ. Է. 5)․ յն. σχολάζω։

Իսկ գալով մեր դպրոց բառին ծագմանը, Յունական է՝ περίπατος որ նշ. ճեմք, տեղի ճեմելոյ, յորմէ περιπατικός։

ՊԵՐԻՊԱՏԵՏԻԿԵԱՆ, ՊԵՐԻՊԱՏԻԿԵԱՆ, այսպէս կը կոչուին Արիստոտէլեանք, եւ Հայերէն բառով ճեմականք։

(Տե՛ս գրաբ)։

Եւ տեղը՝ յորում փիլիսոփայք իրենց դասերը կ'աւանդէին ճեմելով՝ ճեմարան։

Դպրոց բառէն ձեւացած է

ՓԱՊԱՐ, իբր՝ մէջը պարապ տեղ (լեռան վրայ խօսելով)․ խոռոչ, քարանձաւ։ — Սողնոցն զխօչիւն միայն զմարդոյն առեալ, է որ 'ի ծակս, է որ 'ի սորս, է որ ընդ փապարս երկրի մտեալ զօղեն (Եզնիկ)։ — Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց (Յոբ.)։

Յորմէ համառօտեալ՝

ՓԱՊ, — Անձն դնեմ զքեզ 'ի փապ վիմին։ — Սիմաքոս փապ անուանէ, Թէոդիտոն՝ ծակ (Ոսկ. Եսայ)։

ՓԱՊԱՐԵՄ, — Հանդերձք քո ոչ մաշեցան 'ի քէն, եւ ոտք քո ոչ փապարեցին (Օրէն. Ը. 4)։

Այս օրինաց հետեւողութեամբ, (այսինքն՝ պարապ բառին երկու հակառակ նշանակութեամբ գործածուելուն)

ԹԷԱՏՐՈՆ, Յն. θέατρον։

Յորմէ համառօտեալ՝

ԹԱՏՐ, որ նկատի իբր լի, լցեալ բազմութեամբ։

Յորմէ 'ի հակառակէն

ԴԱՏԱՐԿ, — Ընդ ամենայն դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ։

ԴԱՏԱՐԿԱՆԱՄ։ — Իսկ (Բ. Պետր. Բ. 3)) · «Որոց դատաստանն 'ի բնէ ոչ դատարկանայ (Յն. οὐκ ἀργεῖ), եւ կորուստն նոցա ոչ ննջեսցէ»։

Յայնն առէ, ոչ յամէ, զի ἀργέω, նշ. եւ կալ անգործ, դատարկանալ, եւ յամել։ Այսպէս եւ

ԴՊՐՈՑ, Յն. σχολή։

ԴՊԻՐ, Պրս. դեպիր՝ նոյն նշ.

ԴՊՐՈՒԹԻՒՆ, — Ջնջեա զիս 'ի դպրութենէ քումմէ յոր գրեցեր (Ել. ԼԲ. 32)․ յն. βίβλος։ — Եթէ ոք մեղաւ առաջի իմ, ջնջեցից զնա 'ի դպրութենէ իմմէ (Անդ 33)․ յն. βίβλος։ Յորմէ 'ի հակառակէն

ԹԱՓՈՒՐ, թափ

ԵԿԵՂԵՑԻ, (ազատ յեղաշրջում), Յն. ἐκκλησία։

ԵԿՂԵՍԻԱՍՏԷՍ, (երկփեղած յեղաշրջում), Յն. ἐκκλησιαστής (ժողովող) գիրք։ Յորմէ

ԵԿԵՂԵՑԱՆԱՄ, եկեղեցացաւ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի։

ԵԿԵՂԵՑԱՑՈՒՑԱՆԵՄ, — Եկեղեցացո առ իս զժողովուրդ։ Իսկ (Եզնիկ), «Լուար զանուն եկեղեցւոյն, ուսի՛ր եւ զանուանց յարակցութեան»․ ուղղելի «զանուանց յարաբերութիւն», զի Յունական բառդ ἐκκλησία, (եկեղեցի) կազմեալ է մասնկամբս ἐκ, եւ καλέω, (կոչել)։

(Յորմէ (եկեղեցի)

ԱԿԱՂՁՈՒՆ, ԱԿԱՂՁԵԱՆ, իբր ընդդէմն բառիցս՝ դպրոց՝ եւ թափուր, թատր եւ դատարկ։ Յորոց

ԱՏԱՂՁ։

* * *

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Յն γαλήνη, (արմատ γελάω), նշ. հանդարտութիւն (օդոյ, ծովու)։ — Սաստեաց հողմոյն եւ խռովութեան ջուրցն, եւ հանդարտեցին, եւ եղեւ խաղաղութիւն (Ղուկ. Ը. 24)․ յն. γαλήνη։

ԽԱՂԱՂ, — Եւ 'ի խաղաղ նաւահանգիստ։

ԽԱՂ, (իբր ծանծաղ կամ խաղաղ կողմն գետոյ, ծովու։ Բազդ. հատ։

— Ընկէց զայն (զապարանսն)

'ի խաղ մի առ ափն գետոյն . . . եւ տեսեալ զտապանակն 'ի խաղի անդ, առաքեաց, եւ այլն (Ել. Բ. 4—5). յն. ἕλειος, ἕλος։

Յորմէ 'ի հակառակէն

ԽԱՂԱՄ, շարժել, Թրք. օյնամաք, նչ. թէ՛ խաղ խաղալ, օյուն օյնամաք, եւ թէ՛ շարժել, ուստի՝ օյնաք նչ. յօդք, խաղալիք. իսկ օյուն, խաղ. — Նստաւ ժողովուրդն ուտել եւ ըմպել, եւ յարեան 'ի խաղալ (Ել. ԼԲ. 6. եւ Ա. Կորնթ. Ժ. 7). յն. παίζειν. Յորմէ

ԽԱՂ, — Տեսանէին զխաղն Սամփսոնի (Դատ. ԺԶ. 27). — Խաղ ինչ եւ խաբէութիւն զմեր ոճս համարեսցի (Ոսկ.).

ԽԱՂ ԱՌՆԵՄ,

ԸՆԴ ԽԱՂ.

ԽԱՂԱԼԻԿ, — Նուագէին կանայք խաղալիկ եւ ասէին (Ա. Թգ. ԺԸ. 7).

ԽԱՂԱԼԻՔ, յօդք, Յն. ἄρθρον, մերս իբր Թարգմ. Թրք. օյնաք. — Ամենայն մարմինն յօդիւք եւ խաղալեօք տարածեալ (Կող. Բ. 19).

Յորմէ (խաղ) 'ի հակառակէն

ԱՂԽ, բաղդ. հիւս եւ հաստանք եւ սահմանք։

ԱՂԽԱՄԱՂԽ, բաղդ. ստապատուռ, բարձրաբերձ, խառնիխուռն, խուժադուժ.

ԱՂԽԵՄ, ԱՂԽԱՂԽԵՄ, յորմէ

ԲԱԶՄԱՂԽԱՂԽ (*), յորմէ (աղխ) 'ի հակառակէն՝

ՈՒՂԽ, բաղդ. հիւսեմ եւ հօսեմ, զուրգն եւ գրգանք.

Յն. γέλασμα, նչ. խաղ, ծաղ, ծաղր, ծիծաղ, յօդք անդամոց, խորք ծովու, ալիք. մերս՝ «զբօսանք» նչ. նաեւ ալիք. — Ամենայն զբօսանք քո եւ ալիք քո անցին 'ի վերայ իմ (Յովն.). յն. μετεωρισμός.

*

* *

ՈՒՐԲԱԹ, բառ Ասորի էրուպէ, նոյն նչ. կամ Արաբ. արէֆէ, արէֆէն, նախընթաց օրն տօնի, Եբր. Եօմ շիշի՝ վեցերորդ օր, եւ նշանակէ պատրաստութիւն. Յն. παρασκευή (ἡμέρα), նչ. ուրբաթ, եւ թարգմանի (օր) պատրաստութեան.

— Իսկ Հրեայքն, քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն 'ի խաչին ացանիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ, աղաչեցին (Յովհ. ԺԹ. 31).

*

* *

ԴՈՅԼ, Արաբ. տէլվ, Պրս. տօլ. — Դոյլ իսկ ոչ ունիս, եւ ջրհորս խոր է (Յովհ.). — Ամենայն հեթանոսք իբրեւ զկաթիլ մի 'ի դուլէ են (Եսայ.). Յորմէ 'ի հակառակէն՝

ԹՈՅԼ, ԹՈՅԼ ԱՌՆԵՄ, — Թոյլ տուր ինձ զի հանգեայց (Սաղմ.).

ԹՈՅԼ ՏԱՄ, Թարգմ. Տճ. քօյ վէրմէք.

ԹՈՂՈՒԹԻՒՆ, ԹՈՂՈՒՄ, — Մին անուցու, եւ միւսն թողուցու. — Եւ եղեւ սով յերկրին, թո՛ղ զառաջին սովն (Ծննդ. ԻԶ. 1). Թրք. պրաք էվվէլքինի. — Թո՛ղ զկանայս եւ զմանկտի (Տես եւ Թուոց. ԻԸ. 23. ԻԹ. 6, 11, 19, 22, 25, 31, 34, 38). — Թո՛ղ ինքն նախ երթայր եւ առնոյր

(*) Այս բառը (Տես 'ի Սեբէր. ճառ Գ. էջ 55) բազմախաղախ է, եւ 'ի Ն. Հյկ. բռ. լաւ այսպէս մեկնուած է «Թազմօք ընդ միմեանս խառնելով կամ խաղացեալ, այսինքն, ողխախեալ, խառնեալ, զօդեալ, իբր յն. πολύζυγος և են կոլեալ 'ի միասին և կուտեալ, խառնակ 'ի զանազան իրաց»։ Սակայն կը թուի թէ բազմախաղախ՝ ընդօրինակողի սխալումն է, և պէտք է ըլլալ՝ բազմաղխաղխ։

— Որբ զայսպիսի ինչ բանս և զանուանս և զկարգս ընդ միմեանս խառնեալ չզատանիցեն 'ի միմեանց, բազմաղխաղխ ինչ նիւթոց ընդ միմեանս խառնելոց նման են . . . ապա թէ զամենայն ընդ միմեանս խառնիցես . . . զատանիցես այնուհետև զբազմաղխաղխ նիւթս ընդ միմեանս խառնեալ։

գթագաւորութիւնն (Եղիէկ)։ —Գիտեմ զի բազումք հեգնեն զիս վասն բանիցս, այլ ես թո՛ղ հենգնիմ (Ոսկ. Կողոս. Ա. 603)։ Եւ

ԴՈԽԼ ԱՌՆԵՄ, ԴԼԱՄ։

* * *

ԲԵՐԿՐԵԱԼ, —Ուրախ լեր, բերկրեալ(*), տէր ընդ քեզ (Ղուկ.)։ Յն. κεχαριτωμένη, (Թգ.) շնորհալը, եյ շնորհօր, արժանացեալ շնորհաց, Քաղմագարէկ աստուելըլ շնորհօր։ Այս Յունական բառը կը ծագի ՚ի բայէն՝ χαίρω, (ուրախ լինել, բերկրել), եւ է արմատ բառիցս χάρις, (շնորհք), եւ χάρμα, (բերկրութիւն)։

Պրս. բէրէքէթէն, Ոչ. բազմացուցանել, աճեցուցանել, լնուլ, առաւելուլ, բազմապատիկ առնել, եւ բէրէքէթէ՝ լցեալ, առաւելեալ, աճեցեալ։ Բաղդ. քաղաք, չէն, բազում եւ բազմական, խրախ եւ խրախճան, եւ երախան, խումբ, ախումբ։

* * *

ՁՈՅԳՈՍՏԱՏ, — Արտաշէսի հրամայեաց երթալ ՚ի Պարսս հանդերձ իւրովք զոյգոստատօք (Խոր. Բ. 87)։

Բառդ բառ մեզ թուի լինել նոյն ընդ Յն. ζυγοστάτης, որ Նշ. զուգակշռող, հաւասարող, խորհրդական, օգնական. ζύγος—ἵστημι, իսկ բառ Ն. Հյկ. Բռ. «Բառ անյայտ. Թուի «լինել Ջոյգ ստրկանաց, կամ զոյգ «ստացեալ ՚ի գործ պատերազմի, «այսինքն՝ նիզակակից հեծեալ, ա- «պեստ, ազատորեար, համհարզ, «համահարզ, խօլառ, Արտաշէսի, եւ- «այլն (բառ Յն. ζευγίτης, այսինքն՝ «հծուոր, ամոլք. առ Աթենացիս «էր կարգ զաստ զօրականաց զկնի »ասպետաց»։

* * *

ԹԱՆՁՔ, Պրս. պէնճէ, Թրք. բանճը, Յն. δυσεντερία։ Յորմէ

ՏԱՆՋԱՆՔ, ՏԱՆՋԻՄ,

Յորմէ ՚ի հակառակէն

ՏԵՆՉԱՆՔ, ՏԵՆՉԱՄ, ՏԵՆՉ, եւ

ՏՐՏՆՋԵՄ, ՏՐՏՄԻՄ, ՏՐՏՈՒՄ,

Բաղդ. տարփալ եւ տափալ եւ տառապել, չուայտել եւ տուայտել եւ վշտանալ, ցանկանալ եւ ցակնել, պակչատիլ եւ պժգալ, ախտ եւ տաղտկալ, տրքնել եւ յափրանալ։ Իսկ

ՏԱՊ, Պրս. թապ, թէպ, ջերմութիւն, եւ Թրգ. տաք, Նշ. արեւ։

Տե՛ս եւ տիւ։

ՏԱՊԱՆԱՄ, Պրսկ. թապիտէն։ — Ջօքանչ Սիմոնի անկեալ դնէր տապացեալ (Մատթ. Ը. 14)։ Յն. πυρέσσουσαν։ — Ո՞ գայթակղի, եւ ոչ ես տապանամ։ Յն. πυροῦμαι։ (Իբր Տճ. քըզմագ)։

ՏԱՊԻՄ, հիւանդանալ, տխրա-

(*) Այն բառերը որ ՚ի մեզ մարդկան բաղմութիւն մը կը նշանակեն, կը ծագին այնպիսի բառերէ որ խնդութիւն, ուրախութիւն, (Տճ. շէնլիք) կը նշանակեն, այսպէս է բազար բառը, այսպէս է շէն (գիւղ)։ բազում յորմէ բազմիմ, խրախճան, խումբ, ախումբ, (տես այս բառերը). իսկ այրի (էրիկը մեռած կամ էրիկնէն թողուած կնիկ) կը ծագի Յունական ἔρημος բառէն, որ կը նշանակէ՝ անապատ, մենացեալ, լքեալ, թողեալ, ուստի միայնութիւնը՝ տխրութեան, իսկ բազմամարդութիւնը ուրախութեան ժամանել է։ Այս երեւոյթին հակառակը կը տեսնուի բէրէքէթ բառին վրայ, որ թէպէտ բառ մեզ կը նշանակէ ուրախացեալ, սակայն կը ծագի պարսիկ բէրէքէթ բառէն որ կը նշանակէ լի, լցեալ, և որովհետև Յունական բառը բարդեալ է՝ սրան երկրորդ մասին մէջ կայ χάρις (շնորհք), ուստի այս բերկրեալ բառը ոմանք կը թարգմանեն՝ լցեալ կամ լի շնորհօք։

Այս մտածութենէն թելադրեալ կ՚ըսենք որ բէրէքէթ բառը առաջին անգամ այս տեղ գործածուած է։

(Շատ գեղեցիկ է այս կարգը, բայց բառգարքը գնուտլին, ուստի ընթերցողին ճանճարոյն կը թողունք խելամտել)։

նալ, ջերմանել ախտիւ: — Տապի 'ի խնդիրս և 'ի բանս հակառակութեան (Ա. Տիմ. Զ. 4)· Յն. νοσῶν:

Յորմէ

ՏԱՂՏԱՊԻՄ, — Տաղտապէին երթալ գնեալ ճանապարհն (Բուզ.):

Եւ

ՏԱԳՆԱՊԻՄ, բաղդ. ջեռնուլ և ջերմանել:

ՏԱԳՆԱՊԱՒ, (մկ.) — Ելէք դուք յԵգիպտոսէ տագնապաւ:

ՏԱԳՆԱՊ, — Տագնապ է ինձ յամենայն կողմանց (Դան. Գ. 22)· յն. στενά μοὶ πάντοθεν: Իսկ

Վ.ՏԱՆԳ, նոյն է ընդ՝ տ ա գ ն ա—պ
2 3 5 4 1=վ

վտանգ: — Վտանգ է ինձ յամենայն կողմանց (Բ. Թագ. ԻԴ. 14)· յն. στενὰ μοι πάντοθεν, (երկուքին Յունարէնը մի և նոյն է): Այս խօսքը (Սեբեր. Բ. 24) թարգմանուած է «Անձուկ է ինձ յամենայն կողմանց»: — Ես ջամբեմ ժողովրդեանց այդմիկ վտանգ (Երեմ. Թ. 15): — Ես ջամբեմ ժողովրդեանց այդմիկ վտանգ: (Տես առ Զօհրապայ 'ի ծանօթութեանն):

Վ.ՏԱՆԳԵՄ, — Վտանգեաց զնա բանիւք ... և թախանձեցոյց, և պարտադեցոյց զնա մինչև ցմահ (Դատ. ԺԶ. 16)· յն. ἐστενοχώρησεν:

* * *

ԻՇԽԱՆ, Արաբ. շէյխ, (եզ.) շէխան, շէղան, (յք.), նշ. պետ, գըլխաւոր, նոյնպէս և Պրս. շահ, շէհ: Մեր բառը կամ Արաբականին յոքնականն է, կամ Պարսկականին վրայ ան մասնիկ մը յաւելուած եղած է, որ թէ Պարսկերէն է և թէ Թրքերէն, և կը պատասխանէ, մեր օղ կամ ող մասնկան, զոր օրինակ՝ խօր-ան, (ուտող), չէղան, (մեռնող), յորմէ մերս՝ թօղան: Եւ ըրան, (անող), տօրան, (մաճառող)· ուստի մեր բառը կը նշ. էշխող:

Աստի թուի լինել նաև

ԻՇԽԵՄ:

ԱՇԽԷՆ, յատուկ անուն իգական:

ԳՇԽՈՅ, Յն. βασίλησσα, այս բառը թարգմանուած է 'ի մեզ նաև տիկին: — Զի՞ է քեզ, Եսթեր տիկին:

Ինչպէս նաև քանի մը տեղ Ս. Գրոց մէջ թարգմանուած է՝ թագուհի: Տիկին թարգմանուած է 'ի մեզ նաև՝ Յն. χυρία:

— Յերեսաց Սարայի տիկնոջ իմոյ փախուցեալ եմ ես (Ծննդ.): — Կացցէ գշխոյ ընդ աջմէ քումմէ (Սաղմ. ԽԴ. 10):

Է իրր իգականն բառիս իշխան, դ իգականացուցիչ գիր մ'է, և վերջին վանկը ոյ՝ է դարձեալ իգականացուցիչ ձայն մը, որ նախնական ձևն է ուհի մասնիկին, զոր կը տեսնենք օդոյէ, (օդուհի) բառին վրայ: (Տես գրառդ):

դ իգականացուցիչ գիր մ'է, Արաբական կամ Եբրայական.

Արաբ. խադըմ ծառայ, խադըմէթ աղախին. մէլէք թագաւոր, մէլէքէթ գշխոյ, հըմար խայր, հըմարէթ մատակ խայր, էխ եղբայր, ուխթ քոյր. համ աներ, համաթ զոքանչ, զէվճ այր, զէվճէթ կին, թօր եզն, թօրէթ կով, ըճլ որթ, ըճլէթ զուարակ, բաքարէթ երինջ, քէլպ շուն, քէլպէթ քած, մատակ շուն, հըրր կատու, հըրրէթ մատակ կատու, վահիտ մի միակ (ար.), վահիտէթ (իգ.)· իպն ուստր, իպնէթ դուստր, թէվր եզն, թէվրէթ կով, խալ մօրեղբայր, խալէթ մօրաքոյր, ամմ հօրեղբայր, ամմէթ հօրաքոյր, զէվճ ամուսին (ար.) զէվճէթ ամուսին (իգ.), քէպիր մեծ (ար.), քէպիրէթ (իգ.):

Եբր. պէն ուստր, պաթ նշ. դուստր ... ախ եղբայր, ախօթ քոյր:

Յորմէ (գշխոյ) (իգ.)

ԲԴԵՇԽ, ԲԴԵԱՇԽ, ԲԴԻՇԽ, իրր արականն գշխոյի:

Յորմէ (իշխան) 'ի հակառակէն

ԽԱԾՆ, ԽԱԾՆԱԴԱՐՄԱՆ, ԽԱԾՆԱԲԱԾ, — *Ահա երկիրս Եգիպտացւոց առաջի քո է, 'ի բարւոք երկրի բնակեցո՛ զհայր քո եւ զեղբարս քո, բնակեսցեն յերկրին Գեսեմ, ապա թէ գիտես եթէ իցեն 'ի նոսա արք զօրաւորք, կացո՛ զնոսա իշխանս 'ի վերայ իմոց խաշանց* (Ծննդ. ԽԷ. 6)։ *Ցար եւ նման Եբրայականին, իսկ բաղդ. նախարար եւ նախիր, նախրապարման, նախրարած, հարուստ եւ արուեստ(աւոր), ախնկղիտոս եւ ախոյքոր* ։ (*Բացատրութեան համար դրուած բառեր*)։

Յունական տարբեր օրինակներ կան. — Բնակեսցեն յերկրին Գեսեմ, ապա թէ գիտես եթէ իցեն 'ի նոսա արք զօրաւորք, կացո ըզնոսա իշխանս իմոց խաշանց։ (Տպ. Լէբ-է-)։ —*Ահա երկիրս Եգիպտացւոց առաջի քո է, 'ի բարւոք երկրի բնակեցո՛ զհայր քո եւ զեղբարս քո*։ (Տպ. Լ-ը-դ-ն)։

—*Բնակեսցեն յերկրին 'ի Գեսեմ, ապա թէ գիտես թէ իցեն 'ի նոսա արք զօրաւորք, կացո՛ զնոսա իշխանս 'ի վերայ իմոց խաշանց* (Ծննդ. ԽԷ. 6)։ *Այս հատուածը որ Հայեմէնին մէջ կը կարդանք, Յունական օրինակներուն ոմանց մէջ չկայ*։

Այսպէս եւ

ՈՒՍՏՐ (*), *կազմեալ 'ի բառէս*

ԴՈՒՍՏՐ, *եւ սա 'ի Պարսկականէս՝ դուխթէր, նոյն է եւ Յն.* θυγάτηρ.

(*) «Գերմանացի հայագէտ մը որ տարօրինակ կարծեաց սիրող է ընդհանրապէս, համարած է թէ [illegible] ազաւաղումն է [illegible] բառին, Դ նախաձայն տառին անկմամբ։ Թող տալով որ հեղինակին այդ իւր գիւտով պարծիմենք կ՚ըսենք որ [illegible] և [illegible] բառերուն նշանակութիւնները միշտ խիստ ու ճիշդ զանազանութեամբ գործածուած են. և թէ նախաձայն առաձնականի այսպիսի անկում մը տեսնուած չէ երբէք հայկական լեզուիս մէջ, ուստի և այն կարծիքն ընդունելի չէ ամենևին, ընդհակառակն յանդուգն տեղափոխութիւններն որ յաճախ կը նշմարուին մեր լեզուին մէջ, աւելի համարձակութիւն կուտան մեզի ըսելու որ [illegible] = [illegible] (= sutar) կրնայ նոյն արմատէն բուսած ըլլալ որմէ։ . . . Իսկ մակդրին տարբերութիւնը մեզի դէմ փաստ մը չէ, որովհետեւ tar բան թէ. . ներգործական զօրութիւն ունի, ուստի և su — tar մանաւանդ կրնայ ծնող նշանակել։ Եւ պատշաճագոյն է ենթադրել թէ մեր առաջին նախնիք իրենց մանչ ու աղջիկ զաւկըները մի և նոյն tar մակդրով շինած ըլլան. իսկ եթէ մեզի հարցուի թէ ինչպէս կրնան հայք նոյն բառը sutar ձեւով պահած ըլլալ, մինչդեռ միւս դուստրներն (ինչպէս Հնդ. [illegible], Հնդ. [illegible], գոթ. sunus եայլն) sunu ձեռն ունին առ հասարակ, այո, կը գժուարինք համոզիչ պատասխան մը տալու, սակայն չենք վարանիր ըսելու թէ այսպիսի անհատական նախնականութիւնք գերազանց պարգեւ մըն են, զոր բարեդէպ պատահարք կարող են նոյն իսկ ամենանոր լեզուի մը շնորհել, Թող թէ հայկան հնաւանդ լեզուիս, որուն հինօրեայ ծերութեան նշանները գիտելու շատ առիթ պիտի ունենանք։ Վերջապէս [illegible]=սու—տր տեղափոխութիւնն այն առեն կատարուած էր հարկաւ՝ երբ դեռ սովորութիւն չունէր Հայ լեզուն հին առաձնական շչողը (s) Հ ի փոխելու, որեմն աս Ս ձայնին ստուամը հանդիպած է հայազարմ նախացեղին սկզբնագոյն ժամանակները։ Նախալեզուն անշուշտ թէ sutar և թէ sunu բառերն հաւասարազօր նշանակութեամբ կը գործածէր, որոնցմէ առաջինը միայն Հայուն մեծագանձ ժառանգութիւն մնացած է, իսկ միւսներն երկրորդն առած տարած են մէկտեղ»։

«Այս մեր կարծիքն եթէ ժամանակաւ աւելի եւս հաստատուի, պիտի ուրիշ ճշմարտութիւններ ալ երեւան հանէ, որոնք հայածին ծերունի լեզուիս առանձինն զարգացած ըլլալուն հաւանականութեան հզօրեղապէս պիտի նպաստեն։ Վերջապէս գիտելի է որ Լատինական լեզուն մեր խնդրական բառն ամենեւին չունի, իսկ Յոյնք ուրիշ մակդրով (ya) նոյն su (ծնանել) արմատէն շինած են իրենց υἱός (=su — ya — s) [illegible] բառը»։

«Արդ ինչ մեկնութիւն որ կրնայ Յունական υἱός ին տրուիլ, որ nu մակդիրով ածանցած չէ, նոյն մեկնութիւնը բնաւ չի կրնար գլացուիլ մեր [illegible] բառին, զոր ոչ ya, ոչ un.

Իսկ

ԴՈՒԽՏ, ('ի բարդութեան), —Արտադուխտ, — Սանդուխտ ։ Պրս. [illegible], [illegible], նոյն է ընդ [illegible] (դուստր)։

* * *

այլ tar գիպօղօգոյն մամնկով՝ անտարակոյս խորագոյն ճնուԹեան կնիքը վրան կոխելով յառաջ բերած է Նախահայն . . . նոյն [illegible] (=տար) մակդիրով հաւատարապէս իր սիրելի [illegible] (=ուստր) և [illegible] զաւկըներուն ճայագրոշմ անունները կնքելով ։

(Հ. Սեր. Տէրվիշ. Հնդեւր. Նախալեզու, էջ 160 — 161 'ի Վիեննա)

Մեզ կը Թուի Թէ այն հայագէտ — 'ի հարկէ զբաղէտ — գերմանացին պիտի գիտնար նաև Թէ բառ մը ուրիշ բառի աղաւաղումը այն ատեն կրնայ սեպուիլ, երբոր նշանակուԹեան գիէն փոփոխուԹիւն մը չկրէ, այսինքն մի և նոյն բանը նշանակէ, զոր օրինակ, երբոր Թուրքը [illegible] անունը տայ այն քաղաքին որուն բուն անունը Հերակլիա է, և Յունին εἰς τὴν κῶ ('ի կով) [illegible] շինէ, կամ ἱππόδρομος ին [illegible] ընէ, ասոնք արդարև աղաւաղումներ են, զորս ռամիկը կախորժէ ընել, բայց ասոր հակառակ երբոր բառ մը ուրիշ բառէ մը ծագի, արմատին արդէն ունեցած նշանակուԹենէն՝ ոչ բոլորովին օտար, այլ տարբեր բան մը նշանակելով. և աստչ նոյն վրայ՝ նոր երանգ մը աւելցընելով, այն ատեն մէկը միւսին աղաւաղումը չըլլար, այլ պարզապէս անկէց բղխած. և ահա այս կարգէն են մեր [illegible] — [illegible] բառերը ։ Ուստի այն հայագէտ գերմանացւոյն արձակած վճիռը, — Թէ երբէք արձակած է, [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] է, տրամաբանական չէ, ուստի սխալ է. կրնար ըսել պարզապէս, Թերևս և վայելչապէս Թէ [illegible]՝ [illegible] բառէն կը ծագի ։

Այս ալ կը յաւելունք ըսել, Թէ այդ հայագէտ գերմանացւոյն անունը մեզի ծանօԹ չէ Թէպէտ, և ոչ անոր գրուածոցը վրայ տեղեկուԹիւն ունինք, սակայն կրնանք այժմէն հաւատալ ըլլալ Թէ գերմանացին ըսած է [illegible]՝ ծնունդն է [illegible] բառին, և ոչ Թէ մէկը միւսին աղաւաղումը, ինչպէս որ կարծեցընել կուզէ հնդեւրոպական նախալեզուին հայրը ։

([illegible])

ՇԱՂԱԽԵՄ, — Շաղախեցաւ երկիր յարենէ նոցա, և պղծեցաւ 'ի գործոց նոցա (Սաղմ. ՃԵ. 39)։

Յարմէ

ՇԱՂԱԽ, — Եղև նոցա աղիւսն 'ի տեղի քարի, և կուպր 'ի տեղի շաղախոյ (Ծննդ. ԺԱ. 3)։

Յն. աղիւսն փոխանակ քարի, և կուպր փոխանակ շաղախոյ, կամ, աղիւսն 'ի քար, և կուպր 'ի շաղախ ։ Մերը աշխարհաբարին պէս է, կամ Թրք. աղիւսը քարի տեղ, կուպրը շաղախի տեղ, [illegible] ։

Շաղիղ և շաղախիմ, և 'ի Թրք. մերձաւոր են ձայնիւ, [illegible] և [illegible] ։

ՇԱՂԻՂ, Պրս. [illegible] նոյն նշ. Թրք. [illegible]։ Վերջին վանկդ [illegible], երեւի և 'ի բառդ՝ առասպել, երկիղ, պատառակալ ։

— ԵԹէ բացցէ ոք հոր . . . և ոչ խփանիցէ զնա, և անկանիցի անդ արջառ կամ էշ, տէր հորոյն տուժեսցի արծաԹ և տացէ տեառն նորա և շաղիղն՝ նորա լիցի (Ել. ԻԱ. 34)։

ՇԱՂՂԱԿԵՐ ։

* * *

ԱՓՍՈՍ, Պրս. [illegible], նոյն նշ.

* * *

ԹԻԽՄ, բոյս ինչ, Յն. θύμος, նոյն նշանակուԹեամբ ։

* * *

ԱՊԽՏԵՄ,

ԱՊՈՒԽՏ, — Ապխտեցին իւրեանց ապուխտ ապուխտ (Թւ. ԺԱ. 32), յն. ψύχω, չորցընել, Յն. ψυχρός, չորցընելիք բան մը, կամ չորցընելու տեղի ։ Մեր բառը կը Թուի Թէ Պրս. է. [illegible]՝ նշ. կախել, և [illegible]՝ նշ. կեռ երկաԹի մսավաճառաց, և ամենայն կեղածայր, զորմէ կախի ինչ ։

* * *

ԶՈՒՐ, գիք ջրոց առ Հնդիկս՝ անուանեալ ծուռ ։

Zour (զուր), նուիրական ջրոց ամենէն զօրաւորը մազդեզեան պաշտամանց, որ կը գործածուէր էջէնէի զոհագործութեան մէջ, եւ այս ջրով կը մկրտէին տղայքը եւ նորադարձները, որով սրբոց բնակարանը ընդունուելու շնորհքը կը ստանային ։ (Բառագիրք Դիցաբան. Գերմանական թարգմ. տպ. 'ի Փարիզ 1846) ։

Պրս. զուր՝ նշ. լուացումն, ծոռ նշ. գետ, եւ ծիւր՝ նշ. թամբ ։ (Տես եւ կոհակ, թամբ եւ թումբ) ։ Թրք. զուդ, չեղաթ․ սուռ, նշ. գետ, ջուր ։

Ցորմէ 'ի մեզ աշխ.

ՑԱՑՏԵԼ, իբր՝ լուանալ փոքր մի ։

Եւ

ՑԱՑԵՄ, — Ցայտեցաւ յարենէ ։

Ցորմէ (ջուր) 'ի հակառակէն

ՉՈՐ, բաղդ. գետ եւ գետին, կազմախ եւ կմախք, զուառ եւ կաւառ. նահանգ եւ ներանց, մկրտել եւ մակարդել ։ Եւ

ՉՈՐՔ, (սեռ.) չորից ։ Որպէս եւ 'ի Պրս. ձայնէս չէր, որ նշ. չորք, ծագի մերս

ՉԱՐ, Պրս. ձայնդ՝ չէր (նշանակիչ չորից), նմանաձայն է մերումս չարի, եւ մերս չոր, (որ նոյն է ընդ չար), նմանաձայն է թուական անուանս՝ չորք ։ Ըստ նմանաձայնութեան, Տճ. տէօրտ եւ տէրտ (չորք եւ չարիք) եւ ինչպէս որ բուրէ եւ բէրէ մէկ արմատէ կը ծագին, նոյնպէս եւ չէր եւ չէր ։ Եւ ինչ որ իր բնական կամ առողջ վիճակին մէջ չէ, կ'ըսուի չէր. — ծառ չար, — պտուղ չար, — ակն չար ։

Ցորմէ

ՉԱՐՉԱՐԵՄ, իբր թարգմ. Յուն. κακουχέω, արմատ՝ κακός, (չար) ։

Իսկ (Յակ. Ե. 17) . «Եղիա մարդ էր էբէբէ զէնէ չարչարելի» . յն. ὁμοιοπαθὴς ἡμῖν ։ Այս Յունական ձայնը լաւ եւս թարգմանուած է (Գործ. ԺԴ. 14) . «Զեզ նման կարեօք մարդիկ եմք» . յն. ὁμοιοπαθεῖς ὑμῖν ։ Տես եւ քառ եւ քար ։

Զուր բառէն ունինք՝

ՁՈՐԵՔ, 'ի բարդութեան ։ — Ձորեքօրեայ, չորեքհարիւր, չորեքկին, չորեքտասան. որպէս եւ 'ի չուրէն՝

ՉԱՐԽՔ ։

* * *

ՀԵՐ, Յն. εἶρος, ἔριον, նշ. ասր ։ — Նա հուր հեր ունէր (Խորէն.) ։ Յն. ἡλιοκομάς, նշ. որոյ հերք լուսափայլք են իբրեւ զարեւ, որոյ արեգակնափայլք են հերք, կամ ըստ Յունական ձայնին՝ արեգակնահեր ։ — Կենդանի է տէր եթէ անկցի 'ի հերոյ որդւոյ քո մազ մի 'ի գետին (Բ. Թագ. ԺԴ. 11) ։ Այլ է

ՀԵՌ, Յն. ἔρις, նոյն նշ. — Ուր հեռ եւ նախանձ, անդ եւ անկարգութիւն ։

* * *

ՏԱՌԵԽ, չոր ձուկ. Յն. τάριχος, նոյն նշանակութեամբ ։ Ցորմէ

ՏՐԵԽ, կօշիկ, կազմեալ 'ի չորացեալ մորթոյ կենդանեաց ։

Ցարոց 'ի հակառակէն

ՏԱՌԵՂՆ, ազգ ինչ ծովային թռչնոց, Տճ. գուլէքլին ։ Բաղդ. փոկ (Տճ. ֆոքըլ) եւ փոկ (որթ ծովային), նահանգ եւ ներանց ։

* * *

ԺԱՆԴ, ԺԱՆԿ, Տճ. բաս, Պրս. ժէնկ, նոյն նշանակութեամբ ։ — Կաթսայ լի ժանգով, եւ ժանգն 'ի նմանէ ոչ պարզեցաւ (Եզեկ. ԻԴ. 6) ։

Ուրիշ է նոյնաձայն

ԺԱՆԴ, — Եւ ժանգոյ զպտուղս նոցա, եւ զվաստակս նոցա մարախոյ (Սաղմ. ՀԷ. 46) ։ Պրսկ. ժէնկէ, (հիւանդութիւն ինչ ցորենոյ), Յն. ἐρυσίβη ։

* * *

ՕՃԻՆ, (Աւչին), իբր Լատինացեալն անուանս Եւգենիոս կամ Եւգինէոս, Յն. εὐγένια;։

ՀՈԹՈՒՄ, նոյնպէս Լատին Otho, (սեռ.) Othonis, անուն կայսեր Հռովմայ։ Եւ

ԼԵՒՈՆ, Լտ. Leo, (սեռ.) Leonis, անուն ծանօթ յոյժ առ արեւմտեայս, (—Ֆ)։

*
* *

ՊԻՏԱԿ (գյ.), Պրս. պէթեք, Ոչ. գիր, նամակ, գպրութիւն, Յն. πιττάκιον։ — Գրեա զայն 'ի պիտակս յայս (Վրք Հրց.)։ — Դեռ եւս երեւէր արմատ գրոյն 'ի վերայ պիտակին, որպէս թէ եփեալ մելանաւ էր գրեալ (Անդ)։ Ցորմէ 'ի հակառակէն

ՊԻՏԱԿ (ած.), նման, ոչ իսկ, անհարազատ, օտար, անքուն։ Բաղդ. օրէն եւ օրինակ, կատակ եւ քատակ եւ կատակ, աւետարան եւ զաւեշտարար։ — Զքուն Աստուածն թողին, եւ 'ի պիտակն զառածան (Սեբեր.)։

ՊԻՏԱԿԱԲԱՐ, — Ասի իսկապէս, ասի եւ պիտակաբար (Փիլ.)։

ՊԻՏԱԿԱՆԱՄ, — Զի պատիւքն մի' պիտակասցին (Փիլ.)։

ՊԻՏԱԿԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ, — Ի մերում միջի թէպէտ եւ կոչեցին տերք, պիտականունութեամբ կոչին, իսկ Աստուծոյ՝ բնութեամբ է տէրն անուն (Ոսկ. Եսայ.)։

ՊԻՏԱԿՈՒԹԻՒՆ, — Զարացն չափ՝ պիտակութիւն է ուսուանուն (Փիլ.)։ — Ոչ թէ պիտակութեամբ ունիցի զհօրն զօրութիւն, այլ բնութեամբ հանգոյն նմին (Սեբեր. Ա.)։

*
* *

ԱԻԻԻՆ, Յն. εὐάν, ձայն, երգ (բաքոսական), աղաղակ 'ի պատիւ Բաքոսի, յուղունն ագեալ 'ի Բաքոսէ։

*
* *

ՓՈԽԻՆԴ, Լտ. polenta, նոյն ոչ. — Խառնեաց նմա փոխինդ, եւ եկեր (Հռութ. Բ. 14—15)։

*
* *

ՈԳԵՄ, Յն. αὐχέω, (առել, խօսել, կարծել)։

* *
*

ՄԱՏՈՒՌՆ, (սեռ.), մատրան,
(մ ա տ ր ա ն)
1 2 4 5 6 3
ծագի 'ի Յն. μανδρα, որ ոչ. բակ ոչխարաց, փարախ, ժողով. այսպէս եւ փարախ, ասի, «փարախ Հրէից», ասի եւ «ժողովուրդ Հրէից», Յն. συναγωγή, որ նոյն է ասել՝ եկեղեցի։ — Ոչ թէ 'ի Հրէական փարախն ընթանան ազգք բազումք, այլ յեկեղեցի (Սեբեր. Գ.)։ Ցորմէ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՈՒՌՆ, որ նոյն է ասել

ԱՇԽԱՐՀԱԽՈՒՄԲ, ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ, ԱՄԵՆԱԽՈՒՄԲ, ԱՄԵՆԱԺՈՂՈՎ, Յն. πανηγυρικός, եւ կ'ըսուի, — տօն, — տաճար։

— Աշխարհախումբ ժողովարան չինեցին զաւրքն կաթողիկէ, զոր եւ աշխարհամատուռն անուանեցին, այսինքն՝ համընդունակ հաւատացելոց (Տմնկ.)։

— Նախկին տեառնագրութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ եղեւ Աշտիշատուն եւ Մատրավանից՝ որ 'ի Տարոն, զի առաջին չինութիւն եկեղեցւոյ եւ առաջին մատուռն՝ եղեւ այս եկեղեցի եւ մատրավանքն, որպէս ունիս տեսանել 'ի ստորագրութեան։ Վասն որոյ եւ չարականն աշխարհամատրան կիւրակէին է տեառնագրութիւնն երգեալ վասն նաւակատեաց չինութեան այսր եկեղեցւոյն Աշտիշատու եւ մատրանն, որ է առաջին մատուռն ընդ համօրէն Հայոց եւ իբր գլուխ (Եղանակ Բեռլ. 1819 ամին)։

Սակայն 'ի բանից Սրբոյն Կիւրղի (Կոչ. Ըն̃ծ. ԺԴ.). — Ընդէ՞ր ոչ ըստ այլոց եկեղեցեաց եւ այս Գողգոթայ, տեղիս Յարութեան՝ եկեղեցի կոչեցաւ, այլ տուն վկայութեան»։ Թուեցաւ Ն. Հյկ. Բռ. թէ մատուռն ծագիցի 'ի Յն. μαρτύριον, (վկայարան, տաճար փոքրիկ 'ի յիշատակ մարտիրոսաց). սակայն բան Սրբոյն Կիւրղի ոչ զորբոց մարտիրոսաց է, այլ 'ի հաստատութիւն բանիցն ածէ զբան մարգարէին, որ ասէ. «Վասն այնորիկ համբեր ինձ տէր յաւուր Յարութեան իմոյ 'ի վկայութիւն». ուստի յառաջ ածեալ զբանսն, ասէ. «Տեսանե՞ս, եւ զտեղին յառաջագոյն ասէ զՅարութեան, եթէ 'ի վկայութիւն կարգալոց էր. ապա թէ ոչ՝ ընդէ՞ր ոչ ըստ այլոց եկեղեցեաց՝ տեղիս յարութեան եկեղեցի կոչեցաւ. այլ տուն վկայութեան. նա ուրեմն վասն մարգարէին որ ասաց, «Յաւուր վկայութեան իմոյ։

ՓԱՐԱԽԱԳԵՏ, կը թարգմանուի 'ի մեզ Յունական ἀρχιμανδρίτης, աբբայ, առաջնորդ վանաց։

* * *

ԱՊԱՐԱՆՔ, բառ Պարսիկ, էվարէ, որ նշ. տեխան դատաւորի, տուն դատաւորի, տեղւոյն դատաստանի, Տճ. մահքէմէ։ — Եւ ածեն զՅիսուս 'ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին (Յովհ. ԺԸ. 28). ἄγουσιν οὖν τὸν Ἰησοῦν ἀπὸ τοῦ Καϊάφα εἰς τὸ πραιτώριον, իբր 'է պրէտօրիօն, որ է բառ Լատին prœtorium, (որպէս տեսանի, 'ի բանից չիք՝ ոչ դատաւոր եւ ոչ վանք)։ — Եմուտ միւսանգամ յապարանսն Պիղատոս (Ան. 33.). յն. πραιτώριον։ —Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն (Յովհ. ԺԹ. 9). յն. πραιτώριον։ — Իսկ զինուորքն առին զՅիսուս յապարանսն (Մատթ. ԻԷ. 27). յն. πραιτώριον։ — Հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա (Գործ. ԻԳ. 35). πραιτώριον։

Արդ մեր բառը որ տիրապէս կը նշ. էշխանէ-բէյան օտէն, կամ օտէն դադադանէ, կը նշ. լայնաբար նաեւ՝ տուն, պատասխանելով Յուն. բառիս οἶκος, οἰκία, եւ հրադարակ։ (Տե՛ս Գործ. Դ. 34. Թ. 11 եւ 17. Ժ. 17, ԺԱ. 11, ԺԷ. 5, ԺԸ 7, ԻԱ. 8)։ Այս Լատին կամ Յոյն բառը πραιτώριον կը տեսնենք թարգմանեալ 'ի մեզ նաեւ

ՀՐԱՊԱՐԱԿ, —Եւ զինուորքն տարան զնա 'ի ներքս 'ի գաւիթն որ հրապարակն էր (Մարկ. ԺԵ. 16)։ յն. πραιτώριον։ — Մինչեւ կապանաց իմոց յայտնի զինել 'ի Քրիստոս յամենայն հրապարակիս (Փիլ. Ա. 13). յն. πραιτώριον։

Սակայն՝ ինչպէս որ յայտնի է, աւելի սովորական եղած է հրապարակ բառը գործածել նաեւ հետեւեալ նշանակութեամբ, տունէ դուրս՝ ո՛ր եւ եւ իցէ տեղ, որ մանաւորի չվերաբերիր, այլ հասարակաց է, կամ քաղաքին։ Կը թուի թէ այս բառն ալ միւսին պէս Պարսիկ է, եւ կ'ըսուի՝ ֆէրվարէ, որ կը նշ. չքեղ, փառաւոր տուն կամ ապարանք, իբր Պրս. եւ Տճ. քէօշք։

(ֆ է ր վ ա ր է)
(հ ր ա պ ա ր ա կ)
2 1

Այսպէն Յն. ἀγορα, որ նշ. հրադարակ, կը նշ. նաեւ օդեան դադադանէ։ Հրապարակ, նաեւ

ԱՊԱՐԱՀ, կը թուին լինել իբր՝ աղտեղի, անմաքուր, անսուրբ։ — Ի կին ապարահ մի՛ մտանիցէ։ — Ի հրապարակէ մտեալ ոչ ուտեն եթէ ոչ նախ մկրտիցին (Մարկ.)։

* * *

ՓՈԽՈՒՆ, (յետին) Տճ. ֆուրուն, Լտ. fornax։

* * *

ԹՈՌՆ, Թրք. [illegible], նոյն նշ.

* * *

ՄԵՏԱՂ, Յն. μέταλλον նոյն նշ. եւ ըստ մեզ նկատի էրր՝ պղինձ, խիտտ, ամուր։

Յարմէ 'ի հակառակէն

ՄԱՏԱՂ, -- Որթ մատաղ որ բերէ զեղջիւրս եւ զկճղակս (Սաղմ.)։ Բաղդ. եղջիւր եւ եղանիւր, ճարմանդ եւ մարմանդ։ Իսկ (Եզնիկ), «Իշավայրաց [illegible] զարու յաւանակս 'ի մատաղութեան կորնչոյ» Արդեօք՝ «Ներքինացելո՞ց)»։ Սակայն առավ հանդերձ խօսքին մթութիւնը չվերնար, չլուսաւորուիր։

* * *

ՆԵՂ, ՆԵՂՈՒԹԻՒՆ, Թուի ծագեալ յանուանէս՝ Նեղոս (գետ Եգիպտոս), եւ [illegible]՝ հակադրեալ [illegible] է նեղ, մինչդեռ «[illegible]« (Յոբ. ԺԱ., 9)։

ՆԵՂԵՄ, — Ազգական որդւոց Իսրայելի համեալ է առ իս եւ տեսի ես [illegible] զոր [illegible] զնոսա Եգիպտացիքն (Ել. Գ. 9)։

ՆԵՂՈՒՑ, Յն, στενός։ Յարմէ

ՆԵԽ, ՆԵԽԻՄ, — Նեխեսցի գետդ ... եւ նեխեցաւ գետն, եւ ոչ կարէին Եգիպտացիքն ըմպել ջուր 'ի գետոյ անտի (Ել. Է. 18—21)։

Բաղդ. Եփրատ, Յորդանան։

* * *

ՎԱՐՇԱՄԱԿ, Պրս. [illegible], նշան. ծածկոյթ գլխոյ, եւ [illegible]՝ լաթի կտոր։ — Վարշամակն որ էր 'ի գլուխ նորա ոչ ընդ այլ կտաւն կայր (Յովհ. Ի. 7)։ Յն. σουδάριον (սուդար)։

* * *

ՔԱՂԹՆԱՏ, Պրս. [illegible], նոյն նշանակութեամբ, եւ բարդեալ ըստ օրէն. [illegible], [illegible], [illegible]։ — Զօրէն քաղթնատաց թօթով բարբառեք զոգա (Փէլ.)։

ՔԱՂԹՆԱՏՈՒԹԻՒՆ, — Որ առ քաղթնատութեան թօթովէին, առէք կըրթութիւն զկազ լեզու նոցա էած յուղղութիւն (Ոսկ. Մտթ.)։

* * *

ՄԱԽԱՆՔ, ՄԱԽԱՄ, Յն. μεγαίρω, նախանձել, չարակնել, մախալ, ծագեալ 'ի բառէս μέγαιρα, որ է անուն միումն 'ի ժանդից դժոխոց։

* * *

ԵՐԻՎԱՐ, գրի եւ՝ երիւար, Պրս. [illegible]՝ նշ. երագընթաց ձի։

* * *

ԳՐԱՍՏ, Յն. σάκτρα, (գ ր ա ս տ)
3 5 2 1 4
նշանակէ պարկ, քուրձ, բեռն գրաստու։

* * *

ԹԵՋԱՆ, Յն. Θήσανος, նոյն նշանակութեամբ։ Իսկ

ԱՌԷՋ, Պրս. [illegible], նոյն նշ.։

* * *

ԼԱՊՏԵՐ, Յն. λαμπτὴρ։

* * *

ՊԱՐԱԿԱՆՈՆ, իբր թարգմանութիւն Յն. παράνομον։ — Հայեցեալ յանկխութիւն տեղցն՝ պարականոն գիրն վարկանէր (Խոր. Գ.)։

ԱՐՕՐ, Յն. ἄροτρον, նոյն նշ.։

ԱՐՕՐԵՄ, Յն. ἀρόω։

ԱՐՕՐԱԴԻՐ, Յն. ἀροτὴρ։

ԱՐՕՐԱԴԻՐ ԱՌՆԵՄ, Յն. ἀροτριάω։

Իսկ

ԱՐՕՏ, Յն. ἄροτις, նոյն նշանակութեամբ։ — Եթէ ոչ արօրադիր արարեալ էր ձեր իմով երինջաւն, ոչ էր գտեալ ձեր զառակածն իմ (Փէլ. Ամբ.)։ Այս խօսքը [illegible] գրքին մէջ թարգմանուած է այսպէս. «Եթէ ոչ ճնշեալ էր (ձեր)

զերինջն իմ, ոչ գտանէիք զառասպելն իմ (ԺԴ. 18)։ Համաձայն Յունական ուրիշ օրինակի մը։

* * *

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԻ (*), Յն. μηδικὸς ὄρνις, Նշ. սիրամարգ, բայց Թարգմանի՝ մուրտկան հաւ։

* * *

ԱՑԾԵԱՄՆ, Յն. δορκάς (իգ.), Իբր այծ էն, հանգոյն այծի, որպէս եւ՝

ՋԱՑԼԱՄՆ, իբր՝ ջայլ էն, եւ ջայլ թուի լինել Թրք. ջէյլան, (անուն թռչնոյ)։ Բաղդ. եղնամն, սկիզբն քամենիմ։ Իսկ

ԱՑԾԵՄՆԻԿ, իբր փոքրիկ կամ սիրուն այծեամն։

Յատուկ անուն կնոջ, եւ Թարգմանութիւն Ասորականին։

— Եւ ՚ի Յոպպէ էր կին մի աշակերտեալ՝ անուն Տաբիթա, որ թարգմանեալ կոչի Այծեմնիկ (Գործ. Թ. 36). յն. δορκάς (այծեամն)։

* * *

ԿՏԱԿ, ԿՏԱԿԱՐԱՆ, Լա. codex (քօտէքս), գիրք, մատեան օրինաց, հաւաքածոյ օրինաց, տախտակ օրինաց։

Հռովմայեցիք մոմը հալեցընելով՝ տախտակներու վրայ կը թափէին, եւ ետքը երբոր մոմը պաղէր, անոնց վրայ օրէնքները կը գրէին կամ կը քանդակէին։

— Յորում կայր սափորն ոսկի եւ տախտակք Կտակարանացն։ (Եբր. Թ. 5)։ Յն. αἱ τῆς διαθήκης πλάκες։ — Ջկտակարանս իւր ուսուցանէ նոցա (Սաղմ.)։

Այս Լատին բառն է որ ընդունուած է նաեւ Տճ.ի մէջ քէօթիւք, որ նշ. գիրք, մատեան, արձանագրութիւն մեծ, նշ. նաեւ կոճղ ծառոյ, որպէս նաեւ Լատինն կրկնանշանակ է, քանզի նշ. մատեան օրինաց եւ կոճղ ծառոյ։

Յորմէ ՚ի հակառակէն՝

ԿԱՏԱԿ, ԿԱՏԱԿՈՒԹԻՒՆ, — Աւերեցին բագինք կատակութեան (Ամով. Է. 9)։ Եւ

ՔԱՏԱԿ, բաղդ. Աւետարան, հաւատոյ եւ զաւեշտաբար, պիտակ (գյ) եւ պիտակ (ած.), օրէնք եւ օրինակ։

* * *

ԼՕԴԻԿ, Յն. λῆδος, λήδιον։ — Եհատ Դաւիթ զտուտն լօդկին Սաւուղայ գաղտ... Եհատ զտուտն լօդկի նորա... ահա տուտն լօդկի քո ՚ի ձեռին իմում (Ա. Թագ. ԻԴ. 6—11)։

* * *

ՊԱՏԳԱՄ, Պրս. փէյղամ, բէղղամ, բէյղամ, նոյն նշանակութեամբ։

* * *

ԳԵՐԻ, Յն. κάρ, Նշ. կարիացի, գերի։ Յն. καρικός, Նշ. կարիացի, վատ, արհամարհ որպէս կարիացի, (ատացեալ զգերուց), καρίζω, Նշ. լինել որպէս կարիացի, այսինքն լինել խոտան եւ արհամարհ. ուստի առ Յոյնս, — եւ այս յամենայն դարս — կարիացի եւ գերի համանիշք են։ Յորմէ

ԳԱՐԻ, Յն. κόλιξ, տեսակ մը հաց է, սեւ եւ անախորժ, եւ դժուարաւ ծամելի, եւ այս էր սահմանեալ գերեաց տրուելիք հաց (առ Յոյնս)։ Գարի եւ քերի բառից կազմութիւնը՝ խոտորնակ ձեւով է, բաղդ. մեանիմ եւ մռանամ, աղբիւր եւ աղբիւս, մերկանամ եւ մկրանեմ։ Յորմէ

ԳԱՐԵՂԷՆ, — Ցանկային էքմէկ քարեղէն նկանակի աստուածոց օտարաց մնացոց (Դատ. Ե. 8)։ Այժմու ըն-

---

(*) Ն. Հյկ. Բռ. երկրայութեամբ ունի, « Կամ է ճնգկահաւ, Եգիպտահաւ, եւ կամ սիրամարգ »։

կալեալ օրինակն Յունաց որպէս եւ Եբրայեցւոյն փոխանակ չորից բառից ունի սոսկ՝ ընդրէջէն, սակայն գոն Յունական ձեռագիրք որք ընթեռնուն՝ համգերձ յաւելուածովս՝ ἠρέτισαν ὡς ἄρτον κρίθινον, համաձայն Հայկական թարգմանութեանս ։

∴

ԵԹԵՐ, բառ. Յն. αἰθήρ, զոր մարթ է ընթեռնուլ եւ

ԱՅԹԻՌ (*), — Պատերազմողին պարտ է փորկպարագի ինչ գլխոյ դադար ունել, զի իբրեւ՝ յայթիռ եւ 'ի թռիչս կայցէ (Ոսկ. Մատթ.) ։ — Յայթիռս եւ յակճիռս կալ ընկճեալ (Վեցօր.) ։ Այսպէս զՅունականն γαῖσον ընթեռնումք

ԳԱՅԻՍՈՆ, — Զգեստ զձեռն քո գայիռնաւդ... եւ ձգեաց Յեսու զգայիռնն (Յես. Ը. 18) ։ Իսկ

ՅԱԿՃԻՌՍ ԿԱՄ Յն. ἀκρίζω, նշա. մատուըներուն ծայրին վրայ բարձրանալ, հեռաւոր բանը աղէկ տեսնելու համար, նաեւ՝ մատուըներուն ծայրին վրայ բարձրանալով քալել ։

∴

ԹՈՐՈՒՄՆ, Լտ. torrens, Պրս. Բէրաղ ։

ԹՈՐԻՄ, ԹՈՐԹՈՐԻՄ ։

Յորմէ 'ի հակառակէն

ԴՈՐԱԿ, բաղդ. թոյլ եւ դոյլ, հոսել եւ հիւսել, ադխ եւ ուղխ ։

Յորմէ (թորումն)

ԾՈՐՈՒՄՆ, եւ

ՍՈՐԻՄ, ՍՈՐՍՈՐԻՄ, ուրիշ է Յն. γοργύρα, նոյն նշանակութեամբ ։

ԾՈՐԾՈՐ, Իսկ

ՏԵՌԱՏԵՍՈՒԹԻՒՆ(*), բարդեալ՝ տեռ, որ ծագի 'ի Յն. διάῤῥοια, διαῤῥοή, (հոսումն, բղխումն), եւ տես. բառ Թրք. խմաստիս, է-Բէ-Նէ կէօրմէ, քան կէօրմէ ։ Յն. αἱμοῤῥοοῦσα, — (αἱμοῤῥοέω, առնել տեռատեսութիւն, հոսել կամ կորսնցնել արիւն) ։ Տես եւ՝ ադարահ ։

— Կին մի էր 'ի տեռատեսութեան արեան (ἐν ῥύσει αἵματος)... եւ նոյնժամայն եկաց բղխումն արեան նորա, (ῥύσις αἵματος) ։ Ի մեզ երկու առարկեր բառեր՝ երկու տեղեն, իսկ Յոյնը երկու տեղն ալ՝ նոյն ձայնը պահած է ։ — Այս օրէն իցէ տեռատես 'ի զաչտանի խուլում (Ղեւտ.) ։

∴

ԱՄՊԱՐԻՇՏ (*), ԱՄՊԱՐՇՏԻՄ, Պրս. ֆէրէֆթէն՝ նչ. պաշտօն տանել, պաշտել, պաշտօն մատուցանել, սպասաւորել ։ Այս Պարսիկ արմատէն ձեւացած բառեր՝ միայն բարդութեամբ կամ ածանցքով կը գործածուին 'ի մեզ ։

Պարսկերէն ուրիշ բառ մ'ալ կայ, էնդաշթէն, (նետել) որ 'ի մեզ այս նշանակութենէն զատ՝ վերը ցուցուած ֆէրէֆթէն բային երկու նշանակութիւններուն ալ թէպէտ

(*) Ն. Հյկ. Բռ. ասէ . « Նոյն է ընդ յակճիռս կալ, պատրաստել իբր 'ի Թռչել յոտս, կամ 'ի վեր առնուլ զոտս, եւ կարկառել առ 'ի լսել » ։

(*) Տեռատես, իբր՝ ջեռատես, ջեռեալ 'ի ներքուստ (Ն. Հյկ. Բռ.) ։

(**) Պարիշտ, յորմէ՝ ամպարիշտ, բարեպարիշտ, կռապարիշտ, այն է՝ պար գալն գլուխը, փարիլն, ըստ մեր բառին, Ձէ չէ Պարսկային ֆէրէֆ (Բերկնէ. Զարգ. 690) ։ Ի դուրէյ արմատոյ՝ որ նոյն է ընդ ֆէրէֆ Պարսկացի, եկանէ՝ պաշտ, պաշտել, պաշտօն, անպարիշտ, բարեպարիշտ, աստուածապաշտ, դիւապաշտ, բարեպաշտօն. (Անդ 654) ։

Շատ բացայայտ վկայութիւն է՝ դուրէյ արմատէն եկած դուրշէմ, դուրշօն բառերն, որ է գիրն Ձուլով՝ դուշէմ, դուշօն, դիւցադուշ ձեւն առած են. (Բերսակեան. Զուլցեան էջ 841, Վիէննա 1885) ։

կը պործածուի, Թերեւս ձայնական մերձաւորութեանը պատճառաւ։

Սակայն միջա երկու տարբեր արմատ կան, եւ աղէկ չէ իրարու հետ չփոթել։

ՊԱՇՏԵՄ, ՊԱՇՏՕՆ, — Կանխեաց յառնել 'ի պաշտօն Եղիւէէ (Դ. Թգ. Ձ. 15). յն. դուշմէնլերին Եղիւէէ։

ՊԱՇՏՕՆԵԱՑ, Պրս. քէրէւընտր։

— Գօտի ածեալ պաշտեա զիս։ — Յառն եկաց եւ պաշտէր զնոսա։ — Թողուլ զբանն Աստուծոյ, եւ պաշտել զսեղանս (Գործ. Զ. 2)։ — — Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ, եւ յորժամ արբենան, յայնժամ զյոռին (Յովհ. Բ. 10)։ Ուստի պաշտել է իբր լնուլ (զգինի)։ — Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ (Յովհ. Բ. 10)։ Եւ յորժամ արբենան, յայնժամ զյոռին։ Նաեւ առնել զամենայն սպասաւորութիւն 'ի սեղանի։ — Գօտի ածեալ պաշտեա զիս մինչեւ կերայց եւ արբից։ — Թողուլ զբանն Աստուծոյ, եւ պաշտել զսեղանս (Գործ. Զ. 2)։ Եւ լայնաբար՝ սպասաւորել, ծառայել, եւ պաշտօն մատուցանել. երկիր պագանել Աստուծոյ։ Յորմէ

ԳԻՆԵՊԱՇՏ, շարապճը։ Գիտելի է որ այս Պրս. էնգուշթէն բայէն համազօր բայ մ'ալ կայ, էնգուրդէն, էնգուրէյթէն, որ նշ. ըռուլ, եւ էնգուր նշ. լի, լցեալ, բնծառորեալ, եւ սորա արմատ՝ գուր, (բեռն), մանաւանդ զի էնգուշթէն բային հրամայականը՝ կ'ըլլայ էնգուր,

Յորմէ մեր՝

ԱՄԲԱՐ, ԱՄԲԱՐԵՄ, եւ

ՀԱՄԲԱՐ, ՀԱՄԲԱՐԵՄ, ՀԱՄԲԱՐԱՆՈՑ։ Նաեւ բառս՝ պաշտեմ։

(Տես 'ի վերոյ)։

* * *

ՀԱՄԲԱՒ, Յն. φάμα, (գորացի), փոխանակ φήμη։ — Եղ համբաւս այս 'ի Հրէից մինչեւ ցայսօր (Մտթ. ԻԸ. 15)։ — Որ ինչ սիրով... որ ինչ համտը բարէաց (Փիլիպ. Դ. 8)։ Յն. ὅσα εὔφημα։

* * *

ԽՈՀ, ԽՈՀՈՒՆ, ԽՈՀԵՄ,

Եւ

ԽՈՐ, ԽՈՐԽՈՐԱՏ, եւ

ՀՈՐ, ՋՐՀՈՐ, յորմէ

ԽՈՐԵՄ, — Խորեաց եւ պեղեաց։ — Փորել զխորխորատ։

Յորմէ 'ի հակառակէն

ԽՈՐԵՄ, իբր խանդարել զամբողջութիւնն, բառնալ մասն մի 'ի բոլորէն։ — Խորեաց 'ի գնոց գեղջն (Գործ.)։

ԽՈՐՀ, ԽՈՐՀԻՄ, ԽՈՐՀՈՒՐԴ, նկատի իբր բովանդակութիւն մտածութեանց կամ կամաց, Յն. βουλή, συμβουλία։ — Խորհեաց 'ի հրամանս Տեառն, եւ 'ի պատուիրանս նորա խոկասջիր հանապազ (Սիր. Զ. 37)։

ԽՈԿ, Հրէական սրբութեանց խոկ կայր 'ի միջի, եւ կերակրոցն խորութիւնք (Ոսկ. Մտթ.)։

ԽՈԿԱՄ, — Անձինք ձեր խոկասցեն յերկիւղ Տեառն (Եսայ. ԼԳ. 18)։ — Խոկասցես 'ի գնա 'ի տուէ եւ 'ի գիշերի (Յես. Ա. 8)։ Իսկ (Սաղմ. ՃԺԸ. 77). «Օրէնք քո խօսք իմ էին»։ «Վկայութիւնք քո խօսք իմ էին» (Անդ 99)։ «Պատուիրանք քո խօսք իմ էին» (Անդ 143). յն. μελέτη, (խոկ. խոկումն)։ Ուստի ինձ կը թուի թէ պէտք է խոկ ըլլայ փոխանակ ըլլալու՝ խօսք, որ օրինակողաց սխալն է, եւ մինչեւ ցարդ մնացած է։

Պրս. խաճէյթէն՝ նշ. կամիլ, խընդրել, եւ (այս.) խաճէթ կամ խաճէթ, օժանդակելով բայի՝ նշ. հաջէթ կամ խուրձէ, կազմելով իբր ապառնի ժամանակ բայի, որպէս եւ 'ի մեզ տեսանի բացատրութիւն ապառնի ժամանակի՝ հաջէ բայի։ — Բան-

տապեան ձգեաց զսուսեր , եւ կա- մէր երթալ զիւրովին (Գործ. ԺԶ. 27) . յն. ἔμελλεν ։ — Այն ինչ ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր (Բ. Մկ. Ժ. 28) ։ — Մինչդեռ այգն կամէր լինել (Գործ. Իէ. 33) . յն. ἔμελλεν ։ Եւ արդի Յունարէնին մէջ ալ՝ բայի ապառնի ժամանակը կը կազմուի θέλω , (կամիմ) բային օժանդակելովը ։

ԲԱՐԵԿԱՄ , թարգմանութիւն է Պարսիկ ձայնիս՝ Նէյկխահ ։

Խահ եւ խոահ լծորդք են 'ի Պրսկ . խահեր եւ խոահեր (բայր) , խահէ եւ խօհէ , (տանուտէր , ուսուցիչ) ։

Ուրիշ է՝ խահ , խահամոք , եւայլն (Տե՛ս խաղող) ։

Յարմէ (խոհ)

ՀՈԳ , — Գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր ... հոգովք աշխարհականօք (Ղուկ. ԻԱ. 34) . յն. μή ποτε μήποτε βαρυνθῶσιν ὑμῶν αἱ καρδίαι ... βιωτικαῖς μερίμναις ։

ԱՆՀՈԳ , — Մեք հաճեսցուք ըզնա , եւ զձեզ անհոգս արասցուք (Մտթ. ԻԸ.) ։

ՀՈԳԱՄ . Ո՞ 'ի ձէնջ որ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի ... եւ վասն հանդերձի զի՞ հոգայք (Մտթ.) ։

Յարմէ 'ի հակառակէն՝

ՀՈԳԻ , ՈԳԻ , իբր զի հոգի ազատ է 'ի հոգոց , եւ յամենայն կարեաց բնութեան ։

ՕՂԻ , ՇՈԳԻ , — Քաղցնուլ եւ ծարաւել այնմ էր որ թաղեցան ուրեք 'ի Լիւդիա , իսկ դու հոգի գոլով զի՞նչ ծարաւեսցիս կամ արբցես (Լոկէ.) ։

Որպէս եւ Յունարէն μέριμνα ,
μέριμνα μεριμνα
1 35462 435162 յարմէ մերս

ՄԱՐՄԻՆ , նշանակէ՝ հող ։ — Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ , եւ հոգի ցանկայ հակառակ մարմնոյ (Գաղտ. Ե. 17) ։ — Մարմին եղծանելի ծանրացուցանէ զոգի (Իմաստ.) ։ — Մի՛ հոգայք ընդ հոգւոց ձերոց ... եւ մի՛ ընդ մարմնոց (Ղուկ. ԺԲ. 22) ։

* * *

ՀԱՄԱՐ , Պրս. ամար , հէմար , շէմար՝ նշ. հաշիւ , համար ։

ՀԱՄԱՐԵՄ , Պրս. շէմարէյտէն՝ նշ. հաշուել , թուել (իրօք) . «ընտ Պորոէյ» ։ — Հայրն իմ համարէ զաւուրսս , եւ եթէ յամեմք , մեծաւ վշտօք 'ի տրտմութեան լինի (Տօէբէբ Թ. 5) . — Համարեցաւ զընդոծինս իւր երեքարիւր ութեւտասն (Ծննդ.) ։

Իսկ ըստ Թրք. սայմաք , եւ իբր աշխ. սէպէլ , եւ Յն. λογίζομαι ,

— Համարի՞ք եթէ այնք Գալիլեացիք են մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս , զի զայնպիսի անցս կրեցին (Ղուկ.) ։ — Իրիկունն յարժամ 'ի մահիճս եղանես , համարեա թէ 'ի գերեզման ես իջեալ (Վրք. Հրց.) ։

Այսպէս եւ թուիմ . — Ո թուէ զբազմութիւն աստեղաց , եւ զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ (Սաղմ.) ։ — Թուեցան յաչս անզգամաց թէ մեռան ։

Յարմէ 'ի հակառակէն՝

ՑԱՄԱՌ (*) , ՑԱՄԱՌԵՄ , հաստատուն մնալ 'ի կարծիս , պնդել ։

— Ոչ ոք յամառէ եթէ ոչ զոն չարիք (Վերծ. Բ.) ։ — Յամառեաց նա (Յովնան) 'ի քարոզելն Նինուէացւոց ։ Այսպէս եւ

ՀԱՇՈՒԵՄ , (թուել , մի , երկու , եւայլն) , յարմէ

ՀԱՇՈՒԻՄ , (համարիմ , կարծեմ) ։

* * *

ՔԱՆԴԱԿԵՄ , Յն. κεντέω , Պրսկ. քէնտէն՝ նշ. փորել , քանդակել ։

(*) Ն. Հյկ. Բռ. ստեղծանէ զբառդ . — Այն որ յամէ յառս և յառածս իւր , կամ ճանճյն յարեալ է 'ի խորհուրդս իւր ։

ԲԱՆԴԱԿ, յորմէ համառօտեալ

ԲԱՆԴ, — Ուսումն մանկութեան քանդ է 'ի քարափ, իսկ ուսումն ծերութեան, գիր է 'ի պաղի (Առ.)։

Յորմէ

ԿԱՆԴԱՂԵՄ, — Զադփադփուն կանգաղեալն 'ի հողմոյ շարժեցի։

Եւ

ԿԱՇԿԱՆԴԵՄ, (բարդեալ, կաշ. որ է Պրս. քէշ, (չուան)։

Յորոց հակառակէն

ԲԱՆԴԵՄ, ԲԱՆԴՈՒՄՆ, յորմէ

ՎԿԱՆԴԵՄ, ԱՆՎԿԱՆԴ, բաղդ. կայկայեմ եւ քայքայեմ։ Իսկ

ԲԱՆԴՈՒԿ, Պրսկ. բէնտուք, նոյն նշանակութեամբ։

* * *

ՆԱՐԴԷՍ, Յն. νάρκισσος, Լտ. narcissus, Պրս. Նէրկիզ։ Վարի 'ի մեզ եւ իբր յատուկ անուն մարդոյ, ծանօթական ձայնիւ

ՆԵՐՍԷՍ, զոր առ Եւսեբեայ (Քրոն. Ա. էջ 105) ընթեռնումք՝ Ապոլէս, անշուշտ սխալմամբ, ուր Յոյնն ունի ναρσῆς իբր անուն ուրումն 'ի թագաւորացն Պարսից։

* * *

ԱՂԲԻՒՐ, ըստ նախնի գրչութեան՝ աղբէօր, ծագումն առած է Ալֆէոս կամ Ալֆէս կամ Ալֆէոս գետին անունէն։ Յորմէ

ԵՂԲՕՐ (*), եղբաւր (սեռ.), եղբայր՝ ուղղ.)։

Գտնենք այս երկու բառերը իրենց հոլովներովը՝ եզ. եւ յգ.

Աղբեւր, եղբաւր, (եղբօր)
(Աղբեր) » »
Աղբերբ, եղբարբ.
Աղբերք, եղբարք,
Աղբերց, եղբարց.
Աղբերբք, եղբարբք.

Այսպէս ձայնական նմանութիւն կայ Յն. ἀλφεός կամ ἀλφεύς, (Ալփէոս

(*) «Կրակին պէս ջուրն ալ կը պաշտէին Հայերը, զոր կ'անուանէին Ակնեղբօր։ (Սուրս — Ֆրէր)։ Զէնտավեստայի մէջ բառն և ութ հըլերնեղուն կարգը՝ Արտվիզուր մ'ալ կը գըտնեմք, որ է երկնային ջրոյ աղբիւր, և Զէնդ Արամազդայ աղջիկ։ Արտվիզուր բառին վերջին վանկը՝ Հայոց Զուր բառին հետ մէկ ծագումն ունի. և տարակոյս չկայ որ հայք Ակնեղբօր անուանը տակ, երկնային ջրոյ աղբիւր կը պաշտէին՝ պարսից նման»։

«Մովսէս Խորենացւոյն ըսածին նայելով կրակ բրոջ և ջուր եղբօր պաշտօնը լերան մը տակ կը կատարուէր, որուն դիրքը չի նշանակեր գծրախտաբար, և կը պաշտէին Փութ ըսուած այրին մէջ»։ (Հետազօտութիւնք 'ի վերայ Հայկ. Հեթանոսութեան, Մ. Էմինեան. Տպ. Արմաշ 1875)։

— «Եւ անտի գնացեալք 'ի խորաձոր զառ 'ի վայր լեռնէն յարեգակնն կոյս սակաւ մի առ 'ի կողմն հարաւոյ, 'ի Կոգովտ լերինն, որ 'ի վայր իջանէ 'ի տուն կրակի, անդուստ հրոյ անդադար այրման աստուածոցն, և բարինս հանեալ յակն յորդաբուղխ աղբերն որ բղխէ յոտս լերինն, որ է յառաջս խորանքիմին, որ կոչի տեղին բութ. Բանզի վառէին զկրակն բոյրն, և զաղբիւրն եղբայրն»։ (Խորեն. Պատմ. Հռիփս. Տպ. Վենետիկ, 1843 էջ 301)։

— «Հին պարսից պէս (տես 'ի Հերոդոտ, Ա. 139) նախնի հայոց մէջ ալ գետերը սրբազան յատկութիւն մը ունէին։ Մանաւոր պատիւ կընդունէր Եփրատ. և սոր ապացոյց կրնան սեպուիլ այս գետոյս եզերքը շինուած քաղաքներուն՝ նախապատիւ սեպուիլը, ինչպէս են՝ Անի, Թիլ, Երիզա, Բագայառինջ, Աշտիշատ»։

— «Տակիտոս ալ (Տարեգիրք Զ. 375) ասանկ ըլլալուն վկայութիւն կուտայ։ Այս պատմիչին խօսքին նայելով՝ թէ որ պատմածը ճիշդ է, Եփրատայ եզերքը բնակողները կը կարծէին որ երբեմն այս գետոյն ջրերը առանց յայտնի պատճառ մը ունենալու կը շատնան՝ անձրեւ չեղած ատենն ալ, և մօտ ժամանակներն բարեյաջող դէպք մը կը գուշակեն. և այն ատենը ջրերուն երեսը երեւցած փրփուրէն՝ իրենց գործերուն վերաբերեալ գուշակութիւններ կը հանեն»։

— «Տակիտոս կըսէ ալ, թէ գետոյն մէջ ձի մը կը զոհէին, և թէ հայերը ջուրին երեսի տեսքէն հանած գուշակութիւններէն զատ՝ երկնքի

տապետն ձգեաց զասանդ, եւ չու-եր երթալ զիւրայլն (Գործ. ԺԶ. 27). յն. ἔμελλεν ։ — Այն ինչ ծա-ռակարմիր արեգակն ընդ երկիր ծա-ւալել կամէր (Բ. Մկ. Ժ. 28) ։ — Մինչդեռ այգն կամէր լինել (Գործ. Ի. 33). յն. ἔμελλεν ։ Եւ արդի Յու-նարէնին մէջ ալ՝ բայի ապառնի ժա-մանակը կը կազմուի θέλω, (կամիմ) բային օժանդակելովը ։

ԲԱՐԵԿԱՄ, թարգմանութիւն է Պարսիկ ձայնիս՝ Նէկխահ ։

ԽՕՀ եւ ԽՈՀ լծորդք են 'ի Պրսկ. խօհէր եւ խօհէր (քոյր), խօճէ եւ խօճէ, (տանուտէր, ուսուցիչ) ։

Ուրիշ է՝ խահ, խահամօք, եւայլն (Տե՛ս խաղող) ։

Յորմէ (խոկ)

ՀՈԳ, — Գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր . . . հոգովք աշխարհակա-նօք (Ղուկ. ԻԱ. 34). յն. μή ποτε μήποτε βαρυνθῶσιν ὑμῶν αἱ καρδίαι . . . βιωτικαῖς μερίμναις ։

ԱՆՀՈԳ, — Մեք հաճեցուք ըզ-նա, եւ զձեզ անհոգս արասցուք (Մատթ. ԻԸ.) ։

ՀՈԳԱՄ ։ Ո՞ 'ի ձէնջ որ հոգալ իւ-րում յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի . . . եւ վասն հանդեր-ձի զի՞ հոգայք (Մատթ.) ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՀՈԳԻ, ՈԳԻ, իբր զի հոգի ազատ է 'ի հոգոց, եւ յամենայն կարեաց բնութեան ։

ՕՂԻ, ՇՈԳԻ, — Քաղցնուլ եւ ծա-րաւել այնմ էր որ թաղեցան ու-րեք 'ի Լիբիա, իսկ դու հոգի գո-լով զխօ՞րդ ծարաւեցիր կամ արբ-ցես (Լուկէ.) ։

Որպէս եւ Յունարէն μέριμνα,
μέριμνα μεριμνα
1 3 5 4 6 2 4 3 5 1 6 2 յորմէ մերս

ՄԱՐՄԻՆ, նշանակէ՝ հող ։ — Մար-մին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի ցանկայ հակառակ մարմնոյ (Գաղատ. Ե. 17) ։ — Մարմին եղծա-նելի ծանրացուցանէ զոգի (Իմաստ.) ։ — Մի՛ հոգայք ընդ հոգւոց ձերոց . . . եւ մի՛ ընդ մարմնոյ (Ղուկ. ԺԲ. 22) ։

* * *

ՀԱՄԱՐ, Պրս. ամար, հէմար, չէ-մար՝ Նչ. հաշիւ, համար ։

ՀԱՄԱՐԵՄ, Պրս. չէմարէյտէն՝ Նչ. հաշուել, թուել (իրօք). «բար Պար-ւէց» ։ — Հայրն իմ համարէ զա-ւուրս, եւ եթէ յամենք, մեծա-վչտօք 'ի տրամութեան լինի (Տօֆ-բէթ Թ. 5) ։ — Համարեցաւ զընդո-ծինս իւր երեքարիւր ութեւտասն (Ծննդ.) ։

Իսկ ըստ Թրք. սայմաք, եւ իբր աշխ. սէպէլ, եւ Յն. λογίζομαι ։

— Համարի՞ք եթէ այնք Գալի-լեացիք են մեղաւորք քան զամե-նայն Գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին (Ղուկ.) ։ — Իրիկունն յարժամ 'ի մահիճս եղանես, համարեա՛ թէ 'ի գերեզման ես իջեալ (Վրք. Հրց.) ։

Այսպէս եւ թուեմ. — Ո թուէ զբազմութիւն աստեղաց, եւ զա-մենեսեան զնոսա յանուանէ կոչէ (Սաղմ.) ։ — Թուեցան յաչս անզգա-մաց թէ մեռան ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՅԱՄԱՌ (*), ՅԱՄԱՌԵՄ, հաստա-տուն մնալ 'ի կարծիս, պնդել ։

— Ոչ որ յամառէ եթէ ոչ գոն չարիք (Վեցօր. Բ.) ։ — Յամառեաց նա (Յովնան) 'ի քարոզելն Նինուէ-ացւոց ։ Այսպէս եւ

ՀԱՇՈՒԵՄ, (թուել, մի, երկու, եւայլն), յորմէ

ՀԱՇՈՒԻՄ, (համարիմ, կարծեմ) ։

* * *

ՔԱՆԴԱԿԵՄ, Յն. κεντέω, Պրսկ. քէնտէն՝ Նչ. փորել, քանդակել ։

(*) Ն. Հյկ. Բռ. սահմանէ զբառդ. — Այն որ յամէ յառս և յառածս իւր, կամ հաստատուն յարեալ է 'ի խորհուրդս իւր ։

ՔԱՆԴԱԿ, յորմէ համառօտեալ

ՔԱՆԴ, — Ուսումն մանկութեան քանդ է 'ի քարի, իսկ ուսումն ծերութեան, գիր է 'ի պաղի (Առկ.)։
Յորմէ

ԿԱՆԴԱՂԵՄ, — Զաղփաղփուն կանգաղեալն 'ի հողմոյ շարժեցի։
Եւ

ԿԱՇԿԱՆԴԵՄ, (բարդեալ, Ւ-Հ, որ է Պրս. +էշ, (չուան)։
Յորոց հակառակէն

ՔԱՆԴԵՄ, ՔԱՆԴՈՒՄՆ, յորմէ

ՎԿԱՆԴԵՄ, ԱՆՎԿԱՆԴ, բաղդ. կայկայեմ եւ քայքայեմ։ Իսկ

ՔԱՆԴՈՒԿ, Պրսկ. +էնտու+, նոյն նշանակութեամբ։

* * *

ՆԱՐԴԻՍ, Յն. νάρκισσος, Լտ. narcissus, Պրս. Նէր+էյս։ Վարի 'ի մեզ եւ իբր յատուկ անուն մարդոյ, ծանօթական ձայնիւ

ՆԵՐՍԷՍ, զոր առ Եւսեբեայ (Քրոն. Ա. էջ 105) ընթեռնումք' Աբ-է-, անշուշտ սխալմամբ, ուր Յոյնն ունի ναρσῆς իբր անուն ուրումն 'ի թագաւորացն Պարսից։

* * *

ԱՂԲԻՒՐ, ըստ նախնի գրչութեան' ...-, ծագումն առած է' Ալֆէ-- կամ Ալֆէ- կամ Ալֆէ-- գետին անունէն։ Յորմէ

ԵՂԲՕՐ (*), եղբաւր (սեռ.), եղբայր' ուղղ.)։

Դնենք այս երկու բառերը իրենց հոլովներովը' եզ. եւ յք.

Աղբեւր, եղբաւր, (եղբօր)
(Աղբեր) » »
Աղբերր, եղբարբ.
Աղբերք, եղբարք,
Աղբերց, եղբարց.
Աղբերբք, եղբարբք.

Այսպէս ձայնական նմանութիւն կայ Յն. ἀλφέος կամ ἀλφεύς, (Ալփէոս

(*) «Կրակին պէս ջուրն ալ կը պաշտէին Հայերը, զոր կ'անուանէին ...։ (Սուրս — Ֆրէր)։ Զէնտավեստայի մէջ բառն և ութ ...ներուն կարգը' ... մ'ալ կը գտնեմք, որ է երկնային ջրոյ աղբիւր. և ... Արամազդայ աղջիկ։ ... բառին վերջին վանկը' Հայոց ...բառին հետ մէկ ծագումն ունի. և տարակոյս չկայ որ հայք ... անուանը տակ, երկնային ջրոյ աղբիւր կը պաշտէին' պարսից նման »։

« Մովսէս Խորենացւոյն ըսածին նայելով կրակ բրոջ և ջուր եղբօր պաշտօնը լերան մը տակ կը կատարուէր, որուն դիրքը չի նշանակեր գմրախտաբար, և կը պաշտէին Պութ բռնուած այրին մէջ»։ (Հետազօտութիւնք 'ի վերայ Հայկ. Հեթանոսութեան, Մ. Էմինեան. Տպ. Արմաշ 1875)։

— «Եւ անտի գնացեալք 'ի խորաձոր զառ 'ի վայր լեռնէն յարեգականն կոյս ամպու մի առ 'ի կողմն հարաւոյ, 'ի Կոտոր լերինն, որ 'ի վայր իջանէ 'ի տուն կրակի, անդաց հրոյ անդադար այրման աստուածոյն, և բարինս հանեալ յակն յորդաբուղխ աղբերն որ բղխէ յատս լերինն, որ է յառաջս խորափիտին, որ կոչի տեղին բութ։ Քանզի վառէին զկրակն բոյրն, և զաղբիւրն եղբայրն»։ (Խորեն. Պատմ. Հռիփս. Տպ. Վենետիկ, 1843 էջ 301)։

— «Հին պարսից պէս (տես 'ի Հերոդոտ, Ա. 139) նախնի հայոց մէջ ալ գետերը սրբազան յատկութիւն մը ունէին։ Մանաւոր պատիւ կընդունէր Եփրատ, և առոր ապացոյց կրնան սեպուիլ այս գետոյս եզերքը շինուած քաղաքներուն' նախապատիւ սեպուիլը, ինչպէս են' Անի, Թիլ, Երիզա, Բագայառինճ, Աշտիշատ »։

— « Տակիտոս ալ (Տարեգիրք Զ. 375) ատենի ընդարձակ վկայութիւն կուտայ։ Այս պատմիչին խօսքին նայելով' թէ որ պատմածը ճիշդ է, Եփրատայ եզերքը բնակողները կը կարծէին որ երբեմն այս գետոյն ջրերը առանց յայտնի պատճառ մը ունենալու կը շատնան' անձրեւ չեղած ատենն ալ, և մօտ ժամանակներն բարեյաջող դէպք մը կը գուշակեն. և այն ատենը ջրերուն երեսը երեւցած փրփուրէն' իրենց գործերուն վերաբերեալ գուշակութիւններ կը հանեն »։

—«Տակիտոս կըսէ ալ, թէ գետոյն մէջ ձի մը կը զոհէին, և թէ հայերը ջուրին երեսի տեսքէն հանած գուշակութիւններէն զատ' երկնքի

կամ Աւփիեւս, գետ կամ աղբիւր), *եւ* ἀδελφός (*եղբայր*), *եւ* φράτωρ, φράτηρ, (*յորմէ Լտ.* frater), (*եղբայր*) *եւ* εὐφράτης, (*Եփրատ*)։

Եւ

ԱՂԲԻՒՍ (*), *ըստ Նախնի գրչութեան՝ աղբեւս*։ *Յորմէ*

ԱՂԲ, *յորմէ*

ՋԱՂՓԱՂՓՈՒՆ, *իբր՝ թոյլ, անհաստատ (իր)*։

ՇԱՂՓԱՂՓՈՒԹԻՒՆ, *անհաստատ, անհիմն, ընդունայն (խօսք), բաղդ. կակուղ եւ կղկղանք, ամպ եւ ջամբ*։

Յորմէ (աղբ) 'ի հակառակէն

ՀԱՂԲ. *եւ*

ԽԻՂԲ, *բաղդ. ծոյլ եւ ծուզակ*։

Յորմէ 'ի հակառակէն

ՋԱՂԲ, *բաղդ. հիւսել եւ հասել*։

Յորմէ (աղբիւր)

ԵՂՋԻՒՐ, *ըստ Նախնի գրչութեան՝ եղջեւր*։ — *Ալփէոս գիք փոխեալ յաղբիւր, 'ի գետ, եւ գիք գետակունք եղջերաւորք են 'ի նշանակ գետոց յառաջս բաժանելոյ (Դէյ-ք.)*։ — *Եւ ցլաղէմն Երիդանոս կրկին եղջերբք ակնծածանչ (Վէրք. Մշակ. Դ. 368)*։ — *Երիդանոս որում իբրեւ ցլու դէմս եւ եղջիւր, ասէ, զի առ հասարակ գիք գետականք այնպէս նկարէին՝ վասն գոչելոյ ալեացն, եւ յառաջս բաժանելոյ (Անդ 'ի Ծանօթութեանն 361)*։ *Յորմէ*

ԵՂՋԵՐԻԿ, — *Որդիք եղջերիկք եւ խստասիրտք են առ որս առաքեմն զքեզ (Եզեկ. Բ. 2)*. *յն.* σκληρόπρόσωπος։

ՄԻԵՂՋԵՐՈՒ, *թարգմ. Յն.* μονόκερως, — *(իբր՝ օղ), որպէս լեզու, բանսարկու*։ *Յորմէ ձեացեալ*

ԵՂՋԵՐՈՒ, *Յն.* ἔλαφος, *բաղդ. ոըրամ եւ տարմ, եւ թուրմ*։

Եղջիւր նկատի իբր՝ պինդ, ամուր, յորմէ 'ի հակառակէն՝

ԵՂՏԻՒՐ, *ըստ Նախնի գրչութեան՝ եղտեւր, գրեալ եւ*

ԱՂՏԻՒՐ . . . *աղտեւր*։ *Բաղդ. ճարմանդ եւ մարմանդ, ճամբար եւ չամբ*։ *Իսկ*

ԽՏՂ, *Յն.* εὐώλιον, *նոյն նշ. (առ) խտեղ, յորմէ*

ՏԵՂԻ, *յորմէ*

ՏԵՂԻ ՏԵՂԻ, Ի ՏԵՂԻՍ ՏԵՂԻՍ, *Յն.* κατὰ τόπους, *աշխ. տեղ տեղ. Թրք. եէր եէր*։

ՁԵՏԵՂԵՄ,

ՁԵՏԵՂ ՊԱՀԵՄ, *ամուր՝ հաստատ պահել*։ *Յորմէ (տեղի)*

ՏԵՂԵԱԿ, *աշխ. տեղը գիտցող, Պրա. —ահ—, նշ. ճամբան գիտցող*։

— *Էչ զճանապարհ ընդ որ միանգամ անցանէ, այլ ոչ մոռանայ, եւ դէպ լինի զի իշավարն մոռանայ, նա իբրեւ տեղեակ զուղղորդն տանի (Վէցօր. Ը.)*։

Եւ 'ի հակառակէն (տեղի)

ՏԵՂ, *անձրեւ*։

ՏԵՂԱՄ, — *Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեան Արտաշիսի, տեղայր մարգարիտ 'ի հարսնութեան Սաթինկանն (Խոր.)*. *ըսուած է նաեւ Յն.* ὕεται χρυσός, *(ոսկի տեղայ)*։

Բաղդ. գետին եւ գետ, զաւառ եւ կաւառ, նահանգ եւ նհանգ,

և գետնի երեւոյթներէն ալ բան մը կը գուշակէին»։ (Ծանօթութիւն Պ. Մ. Էմինեանի).

— *«Այս «եղբայրէ» բառը կամ առոր մօտ նշանակութեամբ բառ մը մեր լեզուին մէջ գործածուած ըլլալը չեմք յիշեր, բայց պարտաւորեցանք մեր բնագրին մէջ գտնուած գաղղիերէն «frère» — ֆրէր բառը այսպէս թարգմանելու»*։

— *«Գուցէ հեղինակը «եղբէր» և «եղբայր» բառերուն մի և նոյն բաղաձայն գրոց նմանութենէն այսպէս ստուգաբանութիւն մը հանած ըլլայ»։ (Ծանօթութիւն Թարգմանչին, Յովհ. Տէրոյ. Պրուս.)*.

Թէ որ արգոյ Թարգմանիչը Խորենացւոյն վերը ցուցուած տողերը յիշէր, այս ծանօթութիւնը չէր գնէր։

(Ծանօթ. Հեղինակին)։

(*) *Աղբիւր և աղբիւս բառերը նոյն օրինօք են կազմեալ։ բաղդ. մեռանիմ մեռանեմ, ապի և ապեղանի, ատաման և ատամօքս*։

ճարմանդ եւ մարմանդ, եղջիւր եւ եղտիւր ։

*
* *

ՄՇՏԻԿ, — Ցօղեայ յիս մշտկաւ ։ — Շուրջ եղեալ զմշտկաւ զսպայի ։

Պրս. մուշթ՝ նշ. բուռն կամ ափ, Տճ. եումրուգ, յորմէ մուշթի՝ որ նշ. ըմբռնեալ, այխ. չօմ, Տճ. օթջ. որպէս եւ Պրս. տեսթէ, եւ նշ թէ՛ ըմբռնեալ, եւ թէ՛ արգակ, Տճկ. տեմեթ, եւ կազմեալ է 'ի բառէս տեսթ, (ձեռն) ։

Այսպէս եւ միրս

ՏՐՑԱԿ, թուի 'ի Թրք. տիրսէք, բազուկ, արմուկն), խակ

ԲԱԶՈՒԿ, Պրս. պազու, բազու, նոյն նշ. Նաեւ կռնաչեղէնի մը անուն՝ բազու եաթրաք. բազուկ (բոյս ինչ) ։

*
* *

ԳԵՂԳԵՂ, բառ Եբր. կալկալ. գալգալ, Յն. γελγελ ։ — Եւ անուանն անուն կոչեցաւ գեղգեղ՝ խռով խուկ լսելով (Եզեկ. Ժ. 13)։ Բաղդ. բառր,

Յորմէ

ԳԵՂԳԵՂԵՄ, ԳԵՂԳԵՂԱՆՔ,

Եւ համառօտեալ

ԳԵՂՕՆՔ, յորմէ 'ի հակառակէն

ԿԵՐԿԵՐԻՄ, — Կերկերեցաւ կոկորդ իմ ։ — Կերկերեալ ձայն ։

Բաղդ. նուագ եւ նուաղ, նուագել եւ նուաղել ։

*
* *

ՎԵՐ, (Ի բարդութեան), — վերաբերել — վերծանել — վերածել ։ Պրս. զէր, պէր, նշ. 'ի վեր ։

ՎԵՐԻՆ, Պրս. պէրէյն, նոյն նշ.

— Զվերինն խնդրեցէ՛ք, զվերինն խորհեցարուք ։

ՎԵՐԱԿԱՑՈՒ, Պրս. զէրտէսթ, Յն. ἐπιστάτης, Տճ. իսթէ պաշը ։

Ի ՎԵՐ, — Ցերկինս 'ի վեր, եւ յերկիր 'ի խոնարհ ։

Ի ՎԵՐԱՅ, Ի ՎԵՐՈՒՍՏ, — Վարագոյրն ցելաւ 'ի վերուստ մինչեւ 'ի վայր ։ Յորմէ

ՎԵՐՍՏԻՆ, Թարգմ. Յն. ἄνωθεν ։

— Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ, Յն. ἄνωθεν, պարտ է ձեզ ծնանել վերստին (Յովհ. Գ. 3—8)։ ἄνωθεν ։

Յորմէ (վեր) 'ի հակառակէն

ՎԱՅՐ, կազմութիւնը բաղդ. այթիռ եւ եթեր, եւ գայիառն ։

Տճ. աշաղը, ('ի բարդութեան)։ — վայրաբերել, վայրահակ, վայրագաւիթ ։

Ի ՎԱՅՐ, — Տաց նշանս յերկինս 'ի վեր, եւ նշանս յերկիր 'ի խոնարհ ('ի վայր)։ Երբոր կ'ըսենք՝ 'է չօյր, կ'ենթադրուի՝ տեղի մի, (տեղ մը), որով չօյր բառը երկու նշանակութիւն կը ստանայ ։

Տաճկերէնի մէջ՝ եապան նշ. տեղի, Յն. ἄγρος ։ — Եապանա կիթմիշ, երթալ այլուր կամ յօտարութիւն. այս բառը նշ. նաեւ՝ ընդունայն, — պոշունա եապանա կիթտի, 'ի նանիր վատնեցաւ ։ Կ'ըսուի նաեւ՝ պօշ եէրէ, պօշունա, պօշ եէրտէ։ Մենք ալ կ'ըսենք՝ 'ի վայրի դալարուօջ, կ'ըսենք նաեւ՝

ԸՆԴ ՎԱՅՐ, ՎԱՅՐԱՊԱՐ, ՎԱՅՐԱՎԱՏԻՆ ։ Այսպէս նաեւ

ՋՈՒՐ, մի՛ չփոթեր ընդ՝ ճուր ։ Տճ. պօշ եէրէ ։ Կազմեալ 'ի բառէս՝ ուր, բառ մը՝ որ տեղւոյ վրայ կը գրուցուի ։ — Մօտ յայն տեղին ուր զհացն կերան ։ Յորմէ

ՋՐԱԽՕՍ, ՋՐԱՀԵՏ ՎԱՐԻՄ ։

Յորմէ (վայր)

ՎԱՅՐԻ, ՎԱՅՐԵՆԻ, Տճ. եապանի, Յն. ἄγριος, իբր՝ ἀέργιος, անհերկ, անմշակ, խոպան, ամայի ։

Ուրիշ է

ՎԱՅՐԿԵԱՆ ՄԻ, ՎԱՅՐ ՄԻ, իբր՝ վայրկեան մի. (տես զրաւոյ), եւ նշանակէ այխ. ... (միայն ժամանակի վրայ խօսելով) եւ չի կրնար

տեղւոյ վրայ ալ ըսուի . զոր օրինակ՝ քիչ մը հեռու , քիչ մը մօտ , քիչ մը անդին , եւայլն — Անդ նիստ տաս վայր մի (Հռութ. Դ. 1) ։

* * *

ԱՌԱՍԱՆ , — Առասան երեքին ոչ վաղվաղակի խզեսցի (Առակ.) ։
Գրս. ըէս , ռէսէն , նչ չուան ։
Իսկ
ԵՐԱՍԱՆԱԿ , Արաբ. ըէսէն , նոյն նշանակութեամբ ։ Յորմէ
ԱՊԱՐԱՍԱՆ , ԱՊԵՐԱՍԱՆ ։

* * *

ՓՈՅԹ , Յն. βοήθεια , նոյն նչ .
ՓՈՒԹԱՄ , Յն. βοηθῶ ։ Յորմէ
ԲՈՅԹ , — Ձեռս կախեցին զբութոց (Երեմ. Աշխ.) ։ Ըստ մերձաւորութեան Յունական ձայնիս βόειος, որ նչ. մեծ , հաստ , խոշոր , Գրս. էնկէշմէ պէշէրէ , բոյթ) . Թարգմանի Վէթ մատն , Տճ. պաշ բարմաք , (գլխաւոր՝ մեծ մատն) ։

* * *

ՊԱՐԱՐԵՄ , Գրս. բէրվէրտէն , նչ . տածել , սնուցանել , պարարել ։
ՊԱՐԱՐԱԿ , Գրս. բէրվարէ ։
ԵԶՆ ՊԱՐԱՐԱԿ , Գրս. կէավի բէրվար ։
ՊԱՐԱՐ , Գրս. բէրվար ։ — Հաց արդեանց երկրի քոյ եղիցի յագուրդ եւ 'ի պարար (Եսայ. Լ. 23) ։
ՊԱՐԱՐՏ , Գրս. բէրվարտէ , բէրվէրտէ , նոյն նշանակութեամբ ։
ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ , — Որպէս 'ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ (Սաղմ.) ։ Յորմէ համառօտեալ
ՊՈՐՏ , (չըսելու համար՝ պարտ) ։ — Յաւուր յորում ծնար ոչ ոք եհատ զպորտ քո (Եզեկ. ԺԶ. 4) . (Տպ. եհատ) ։ Այլ օրինակ . ոչ հատապորտ քո ։ Յոյնն խապառ զանց կ'ընէ այս խօսքը , իսկ մերը Ասորերէնին եւ Եբրայեցերէնին համեմատ կ'ընթանայ ։
ՊՈՐՏԱԲՈՅԾ , ՊՈՐՏԱՊԱՐԱՐ ։

* * *

ՀԱՄԲԱՐՈՒ (*) , գրի եւ
ՀԱՄԲԱՐԻ , Արաբ. հէվտէրէ , նշակէ՝ կարապ ։ Բառգ. հաւալուսն ։
Կարապ (ըստ գիտնոց) Թռչուն նուիրական Ապողոնի , գից երաժշտութեան , քանզի կարծիք էին հնոց եթէ կարապ օրհասական ընդ վախճանել չնչոյն՝ գեղեցիկս երգէ ողբաձայն նուագօք ։
— Անդ հանգիցեն համբարուք ... եւ յուշկապարիկք բնակեսցեն 'ի նմա (Եսայ. ԺԳ. 21) ։ — Համբարուք եւ դստերք ջայլամանց , եւ պատահեսցեն դեւք յուշկապարկաց ... անդ հանգիցեն յուշկապարիկք (Անդ ԼԴ. 14) ։ — Արասցէ կոծ իբրեւ զվիշապաց , եւ սուգ իբրեւ զդստերաց համբարեաց (Միք. Ա. 8) ։ Տ'ես եւ (Եսայ. ԽԳ. 20 ։ Երեմ. Ծ. 39 ։ Յոբ. Լ. 29) ։ — Զհամբարու այլք յուշկապարիկ թարգմանեցին , եւ համբաւի վասն սորա թէ ծովային կենդանի է , 'ի միջոյն 'ի վայր ձուկն , եւ 'ի վեր՝ կնոջ կերպարան , եւ այնքան քաղցրաձայն մինչ զի պակնուն լսողքն (Իսէ. Մեկն. Յոբայ) ։
Իսկ
ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿ , գրեալ եւ
ՈՒՇԿԱՊԱՐԻԿ , Գրս. օշկէ , էշկէհէ , Տճ. ըչքըրըք , (հեկեկանք , ընդհատումն ձայնի՝ պատճառեալ 'ի սաստիկ լալոյ) ։ Իսկ երկրորդ մասն բառիդ պարիկ , նոյն է որ 'ի բառն համբարու , որով նոյնանայ իմն նշանակութիւն համբարուին եւ յուշկապարկի ։ — Յուշկապարիկք ասին լինել յաւերակս , զոր Յոյն լեզու իշացուցանէ (Եզեկ.) ։ — Անուանք

(*) Վերը ցուցուած վկայութեանց բնագրաց մէջ համբարու բառին պատասխանողն է Յն. σειρήν, որ առասպելեալ կենդանի մըն է՝ կիսով չափ կին , և կիսով չափ ձուկն , խաբեբայ և հրապուրիչ , որ իր գեղեցկաձայնութեամբը ունկնդիրները ուշաթափ կընէր , ուստի անցորդ մը պէտք էր որ ականջները գոցէր , անոր ձայնը չլսելու համար ։

անձանց են յուշկապարկաց լուց (Նոյն) ։ — Յուշկապա-ռկեացն, զոր Յոյնն իշա-κένταυρος) ասիցէ ... եւ ար-իշացուցք իսկ են ոմանք 'ի նէ որք իբրեւ յանապատի ...) ։ — Բարոյախօսն ասէ ւշկապարկաց թէ մահարերք 'ի ծովու են, եւ երգեն երգս ձայնս, եւ կերպարանք նո- 'ի պորտն' կին մարդոյ է, ն թռչնոյ է (Եղէֆ. Բարոյ.) ։ , վերջին մասն յուշկապարէկ որ առանձին առնուած բառ ը նչ. իբր' համբարու կամ յարիկ ։ — Թէպէտ եւ ասին ուանք 'ի գրոց յուշկապար-մ համբարուաց կամ պար-ղնէկ) ։ Ուրիշ է

Կ, Պրս. պէհրի, նչ. հարսն, նակամն νύμφαι, (հարսն, յա-արսն) բառին պատասխա-

Յորմէ

— Ջծովացուլն 'ի կովէ ե-ասեն եւ զպայն 'ի մարդկա-զառլեզն 'ի չանէ (Եղնէկ.) ։ միւսն ասէ, զպայն իսկ իմ ռեսեալ է (Նոյն) ։

* * *

ՄԱՑԵՄ, Պրս. ֆերմա, ար-ֆերմաթէն (հրամայել) բային, ա. ֆրմանա ։

ՐԱՆ ։ Իսկ

ՐԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՑ, պատգա-ուԹիւն, պատասխանի տալն ամախօսին, Յն. χρηματισμός ։

ԱՆ ԱՌՆՈՒՄ, Յն. χρηματίζομαι ։ ման առ 'ի հրեշտակէ սրբոյ զքեզ 'ի տուն (Գործ. Ժ. 22). ρηματίσθη ։ — Էր Նորա հրաման 'ի հոգւոյն սրբոյ (Ղուկ. Բ. Ն. αὐτῷ ἦν κεχρηματισμένον, (էր րամանն (կամ յայտնութիւն) 'ի մերձաւորութենէ Պրս. եւ Յն. ձայնիցս' ֆերմա եւ χρηματισμός ։

* * *

ԲՈՒՆ ԾԱՌՈՑ, Պրս. պէհն' նոյն նչ. իսկ Պրս. պօամ, նչ. բուն կամ բնական երկիր, այսինքն, հայրենիք. բնութիւն. բնակութիւն, բընակարան ։ Ուստի

ԲՈՒՆ, — Որոյ հայհոյութիւնն 'ի բունն իսկ գնայ (Եղնէկ) ։

ԲՈՒՆԵՄ, ԲՆԱԿ, — Օրէն մի եւ նոյն կացցէ բնակին եւ եկին որ գայցէ մերձենալ 'ի ձեզ (Ել. ԺԲ. 49) ։

ԲՆԱԿՈՒԹԻՒՆ, եւ

ԲՆԱԿԵՄ, — Բանն մարմին եղեւ եւ բնակեաց 'ի մեզ (Յովհ. Ա.). յն. σκηνόω, σκηνάω, Արաբ. սաքէն, Թրք. սաքէն օլմաք ։

ԲՆՈՒԹԻՒՆ, եւ

ԲՈՅՆ, վերը ցուցուած Պրս. պէհն եւ պօամ արմատներուն կը վերաբերին ։ Բնակիլը կը նկատուի իբր հաստատուն կերպով տեղ մը կենալ, զետեղուիլ քաղաքի մը կամ տան մը մէջ, յորմէ 'ի հակառակէն'

ԲԱՆԱԿԻՄ, ԲԱՆԱԿ, — Եկին յանապատն Սինայի եւ բանակեցան յանապատի անդ, եւ բանակեցաւ Իսրայէլ անդ հանդէպ լերինն (Ելից. ԺԹ. 2) ։

* * *

ԱՐՈՒԱՐՁԱԿԱՆ (*), գրի եւ արուարձան, արուարձային, արուարձակեայ, եւ նոյն է ընդ

ԱՐՁԱԿԱՎԱՅՐՔ, — Պատուար արտաքոյ քաղաքին լինիցի 'ի բնակութիւն, եւ յարձակավայրս նորին (Եղէկ. ԽԸ. 15) ։

* * *

ԱՐԿՂ, Լտ. arcula, arcella, arca, նոյն նչ. — Արկղն Կտակա-

(*) Սահմանակից ... և որոշեալ միայն արձանօք յորոշումն սահմանաց։ (Ն. Հյկ. Բռ)։

րանաց (Եբր. Թ. 4) ։ — Զարկղն ինքն (Յուդա) ունէր (Յովհ. ԺԲ. 6) ։

ԱՐԿՂ, յորմէ ԱՂԿՐ ։

* * *

ԳՈՒՐԳԷՆ, յատուկ անուն մարդոյ, եւ նոյն ընդ

ԳԱՐԵԳԻՆ, Պրս. կէօրկէն, նոյնպէս յատուկ անուն մարդոյ ։

Բաղդ. Սմբատ, Վահրամ, Տրդատ, Միհրդատ, Ներսէս, Զարեհ ։ Տես եւ՝ Մեսրոպ եւ Մարիբաս ։

* * *

ՇԱՂԱԿՐԱՏ (*) ։

ՇԱՂԱԿՐԱՏԵՄ, — Ոչ շատ խօսել, ոչ շաղակրատել, եւ ոչ զանօգուտս բարբառել (Ոսկ. Ա. Տիմ. Դ.) ։

Այս բառը յատուկ անունէ մը ծագած է, բաղդ. ժմերտ, ժմերտեմ) ։

Կալլիկրատ անունով մէկը Աքայեցւոց կողմանէ պատգամաւոր կը խրկուի 'ի Հռովմ, բայց նա իր ընդունած պաշտօնին բնութեանը հակառակ՝ եւ Հռովմայեցւոց հաճելի ըլլալու մտքով՝ ծանր եւ անտեղի չարախօսութիւններ կ'ընէ Յունաց վրայով (Տես 'ի Պօլիբ. Հրէշտ.) ։

Յորմէ եւ

ՇՈՂՈՔՈՐԹ ։

* * *

ԱՏԵԱՄ, գրի եւ՝

ԱՏԵՄ, Լտ. odi. odini. նոյն նշ. եւ odium. ատելութիւն, odisus. ատելի, Արաբ. ա'դու, ատելի, Թշնամի, եւ ադավէթ, ատելութիւն, Յն. ἄτη, (բստ առասպ.) դուստր Արամազդայ եւ Հերայ, դիցուհի դժբախտութեանց, աղետից, դժբախտութեանց, ատելի մահկանացուաց եւ անմահից · ἄδης, նշ. դժոխք, տարտարոս, անդարամետական դիք, Պղուտոն, դատաւոր դժոխոց, ատելի մահկանացուաց, եւ այլաբանեալ՝ գերեզման, մահ ։ — Եւ ընդէ՞ր սիրեցեր զմահ զոր աշխարհ ամենայն ատեաց (Լամբ. Զբօսն. Մեռ.) ։

* * *

ԴԵՀԿԱՆ, ԴԵՀԿԱՆՈՒԹԻՒՆ,

ԴԵՀՊԵՏ, Պրս. դէհգան, դէհխան, Տճ. քէօյ քէհեասը, քէօյ բէյի. դի դէհ նշ. գիւղ ։ — Սկիզբն գործակալութեան, աշխարհատարած դեհկանութեան (Բուզ.) ։ (Միոյ աշխարհի երկու դեհպետք ոչ լինին (Եղիշէ) ։ Իբր՝ [illegible] կամ [illegible], որով Պրս. բառս դէհ, բառ մեզ նշանակէ՝ կողմն,

ԴԵՀ, — Ընդ երկուս դեհս ։ — Զաջոյ դեհն, — Ի ձախ դեհէ, յորմէ այս.

ԴԻ, (կողմն), — ո՛ր դի, աս դին, — ան դին, աս դիէն, — չորս դիէն ։

Իսկ

ՆԺԴԵՀ, թուի բարդեալ Պարսկականաւ՝ նէ (չիք), իբր՝ նժդեհ, անգիւղ, անքաղաք, անտուն, ելեալ՝ մեկնեալ հեռացեալ 'ի հայրենեաց, օտարացեալ, պանդուխտ, եւ իբր թարգմանութիւն Յունական ձայնիս ἄδημος ։ Պրս. Նաշին՝ նշանակէ՝ քաղցեալ, նօթի ։

* * *

ՀՐՈՒԴԵՆ, Պրս. ֆէրէյտուն, յատուկ անուն մարդոյ ։

* * *

ՈՍՏԱՆ, Յն. ἄστυ, նշ. քաղաք, մանաւանդ մայրաքաղաք, եւ է մակդիր Աթենացւոց քաղաքին, Լտ, civitas, յորմէ Գաղղ. cité ։ Լտ. ostivum, նշ. դուռն ։

(*) Աս բառին վերջաւորութիւնը (կրատ) ունեցող ուրիշ բառ չկայ մեր լեզուին մէջ՝ (բացի [illegible] սրտաբացի բառէն) ։ Աս յունական վերջաւորութիւն մըն է, մանաւանդ բառ մը, որով բարդուած շատ բառեր կան յունարէնի մէջ, ἀριστοκρατία. δημοκρατία. αὐτοκράτεια ξενοκρατοῦμαι, եւայլն ։

ՈՍՏԱՆԻԿ, ըստ մեզ՝ իբր գլխաբաժանեալ գեղջկականի, ազատ քաղաքացի, ազնուազգի, Յն. ἀττικός։
Յորմէ
ՈՍՏԻԿԱՆ, իբր վերակացու կամ պաշտօնեայ քաղաքի, կամ իբր Յն. ἀττιάναξ։

* * *

ՎԱՉ, ՎԱՉԷ, ՎԱՉԵԱՑ,
ՎԱՉԿԱՏՈՒՆ, Լտ. vectura, (սայլ, վաչէ)։

* * *

ՎԱՀՐԱՄ, Պրս. պահրամ, պեհրամ, յատուկ անուն մարդոյ։ Հրատ (մոլորակն)։

* * *

ՄԻՀՐԱՆ, Պրս. Միհրան, յատուկ անուն մարդոյ։ Տես եւ Սմբատ, Տրդատ, Միհրդատ, Ներսէս, Զարեհ։

* * *

ՇՈՒՇԱՆ, Պրս. սուսէն, (ծաղիկ)։

* * *

Տ, տ, մեր այբուբենի գիրէն մէկը, Տ։ Այս գիրը Լատինին S, (էս) գիրն է, եւ փոխեալ 'ի մեզ Տ։ — Սակու, տակու, — Սակոս, տակոս։

Գիտենք որ Արաբը ս եւ տ, կէտով մը կը զանազանէ, ինչպէս նաեւ [illegible] եւ [illegible]։

կայ նաեւ Յունարէն՝ σ ի՛ փոխանակող τ, զոր օրինակ θάλασσα — θάλαττα՝ τέσσαρες — τέτταρες։

Իսկ գալով մեր

Ս, ս, գրոյն, այս ալ Լատին է, եւ նորա երրորդ գիրը, C։ Ի մեզ հորինողական գիրքը չէ պահուած։ Տես եւ՝ Գ։

* * *

ՎԱՑԵԼՔ, ՎԱՑԵԼԵՄ,

* * *

ՎԱՑԵԼՈՒՉ, Պրսկ. վէյլ, նոյն նշ. զոր բարեյիշատակ Գէորգ պալատական սահմանէ, «Գտուածն իւրն 'ի ժամանակի իւրում ըստ հաճոյից»։

* * *

ՓԱՐԱԽ, Պրս. ֆերահէմ, նշ. համաւաքումն, ժողովիլն՝ խմբիլն 'ի մի վայր, — Ոչ թէ 'ի Հրէական փարախն ընթանան ազգք բազումք, այլ յեկեղեցի (Սեբեր. Գ.)։ — Ոչ 'ի փարախ հաւաքեալ զգուշանալով 'ի գայլոց (Խոր.)։ Յորմէ եւ

ՊԱՌԱԿ, — Եկն 'ի պառակս հօտին որ առ ճանապարհաւն (Ա. Թագ. ԻԴ. 4)։ Յն. ἀγέλη, յորմէ Տճ. աղըլ։

ՊԱՌԱԿ ՊԱՌԱԿ, (խումբ խումբ)։ — Առ միմեանս մակաղին եւ առ միմեանս պառակ պառակ արածին։

Յորմէ 'ի հակառակէն

ՊԱՌԱԿ, ('ի բարդութեան)։
ԵՐԿՊԱՌԱԿ, ԵՐԿՊԱՌԱԿԻՄ, եւ
ՊԱՌԱԿՏԵՄ, ՓԵՌԵԿՏԵՄ, ՓԵՌԵԿԵՄ, Բաղդ. պատել եւ պատառել, գրոհ եւ արոհ, հօտ եւ յօտել։

Յորմէ (փարախ)

ԲԱՐԱԿ, չուն՝ պահապան հօտի, չուն պահապան, չուն։

Յորմէ եւ

ԲԱՐԱՊԱՆ, պահապան դրան, դռնապան)։ — Բարապանոց դժոխոց տեսեալ զքեզ սարսիցե՞ն (Յոբ. ԼԸ. 17)։ Յորմէ (լայնաբար)

ԲԱՐԱՒՈՐ, Յն. ὑπέρθυρον, իբր վերին մասն շրջանակի դրան։ — Ի վերայ երկուց սեմոց եւ բարաւորին (Եզ. ԺԲ. 7)։ — Սրսկեսջիք զբարաւորաւն եւ զերկոքումբք սեմօքն (Ելք 22—23)։ Ուրիշ է

ԲԱՐԱԿ, (ած.), Պրս. պարիկ, նոյն նշանակութեամբ։ Յորմէ

ԲԱՐԱԿԱՄԱՆ, — Ամաչեսցեն եւ կռուազործքն բարակամանք (Եսայ. ԺԹ. 9)։ Դարձեալ ուրիշ է

ԲԱՐԱԿ, նոյն ընդ բարակ, Տճկ.

կէ-վէրմէք ։ — Եթէ լուասցիս բորակաւ (Երեմ. Բ. 22)։

Յորմէ (փարախ) համառօտեալ

ԲԱԿ, ասի

ԲԱԿ ՈՉԽԱՐԱՑ, եւ բակ տան, որպէս եւ դուռն, դուռն ոչխարաց եւ դուռն ապարանից, ըստ օրինակի Յունականին, քանզի Յն. αὐλή, նշանակէ՝ թէ՛ գոմն եւ թէ գաւիթն։ Իսկ

ԲԱԿ ԼՈՒՍՆԻ, իբր թարգմանութիւն Թրք. այ աղըլը։ Տես եւ՝ կալ լուսնի։ Յորմէ

ԲԱԿ ԱՌՆՈՒՄ։ — Բակ առեալ ծրանայ շուրջ զնովաւ (զլուսնիւ) (Եղիշէ)։ Իսկ

ԲԱՂ, իբր նախդիր կամ մասնիկ, ('ի բարդութեան), — բաղ-դատել, — բաղաձայն, — բաղդատութիւն եւ կրկնութեամբ՝

ԲԱՂԲԱՂԵԼ, կցկցել։

ԲԱՂԲԱՂԱՆՔ, կցկտուր՝ բանք։

ԲԱՂԲԱՂԱՑՔ, նաեւ

ԲԱՂԱՑՔ, ԲԱՂԲԱՋԱՆՔ, — Զամենայն զօր խօսեցիս, իբրեւ բաղբաջանս արհամարհեցին (Սեբէր.)։

ԲԱՋԱՂԱՆՔ, — Զնոյն բաջաղանս այլովք պատմութեամբք կարկատեցին (Եղիշէ)։ — Անմտութեամբ լի են բաջաղանքն (Նոյն)։

ԲԱՐԲԱՆՋ, — Համարիմ զիմաստութիւնն Յունաց յիմարութիւն եւ բարբանջ (Վեցօր)։ — Իբրեւ զբարբանջ ծերութեան, որ անցեալ զառանցեալ իցէ (Անդ)։ — Որք զխորհրդոց մտաց բարբանջ հաստատել կամէին (Ոսկ. Ա. Տիմ.)։

Թուի լինել նոյն ընդ Թրք. պօշ, (կապ, կցորդութիւն)։

(Տես եւ չաղ (մասնիկ)։

Գրի նաեւ

ՓԱՂ, — Փաղանուն, — փաղառութիւն։ Ուրիշ է՝ փաղաքուշ։

Իսկ

ԿԱՊԵՄ, Լտ. capio, նոյն նշանակութեամբ, Թրք. պաղլամագ, որ նոյն է ընդ Թրք. գափ-ամագ։

ՓԱԿԵՄ, — Կանգնեցին զդրունս, զփակս եւ զնիգս նորա (Նեեմ. Գ. 14)։

ՓԱԿ, ՓԱԿԱՆՔ,

կապեմ, իբր՝ գափամագ,

փակեմ, իբր՝ պաղլամագ,

Այսպէս

կալ, իբր՝ կէլմէք,

գալ, իբր՝ գալմագ,

— Եղիցին 'ի նա յուսացեալք ամենայն փառաւորք տան հօր իւրոյ 'ի փոքրկանց մինչեւ 'ի մեծամեծս, (եւ զամենայն անօթս 'ի փոքուէ մինչեւ յանօթս ագանովթայ, բացցէ եւ ոչ ոք իցէ որ փակիցէ, եւ փակեսցէ, եւ ոչ ոք իցէ որ բանայցէ), եւ եղիցին կախեալ զնմանէ յաւուր յայնմիկ (Եսայ. ԻԲ. 24)։ Փակաթթըլ գաբուսուզը աչըրլար Յունարէնին մէջ չկայ։ — Բազում այրիք էին յաւուրս Եղիայի 'ի մէջ Իսրայէլի յորժամ փակեցան երկինք զերիս ամս եւ զվեց ամիս (Ղուկ. Դ. 25)։ — Կապեաց Եղիա զանձրեւաբեր ամպ եւ արձակեաց (Սեբէր.)։

ՓԱԿԱՆԵՄ, յորմէ 'ի հակառակէն՝

ԲԵԿԱՆԵՄ, ԲԵԿՏԵՄ, ԲԵԿՈՐ,

Յորմէ (փակեմ) իբր 'ի հակառակէն՝

ԲԱԽԵՄ, — Յորմէ հետէ մտցէ (Յն. ելցէ) տանուտէրն եւ փակեսցէ զդուռնն, եւ սկսանիցիք կալ արտաքոյ, եւ բախել զդուռն (Ղուկ. ԺԳ. 25)։ (Աշխ. դանըշըրլը էլլէն դուռը գագըլըն էդէր)։

ԲԱԲԱԽԵՄ, յորմէ (բախեմ) 'ի հակառակէն՝

ՓԱԽՆՈՒՄ, ՓԱԽՉԻՄ, բաղդ. առ,

տպուտ եւ տպրիմ, պնդեմ եւ պընդիմ, վանդեմ եւ վանեմ, գերծում եւ գերծանիմ, պրկեմ եւ փրկեմ եւ պրծանիմ ։

* *
*

ԿԱՊՏԵՄ, Լտ. capto, նոյն Նչ. ԿԱՊՈՒՏ, իսկ

ԿՈՂՈՊՏԵՄ, Յն. κλοπεύω, κλέπτω։ Իսկ κλώψ, (սեռ.) κλωπός, Նչ. գող։

ԿՈՂՈՊՈՒՏ, κλωπή, նոյն Նչ.։

*
* *

ԱՑԳՈՐԵՄ, ԱՑԳՈՐԵԼԻ, — Տեղի այգորեկի (Տես Ա. Եզր. Գ. 15)։ Յն. χρηματιστήριον, Գաղղ. salle d'audience, կամ Թրք. [illegible]։

Մեր

ԱՐՇԱԼՈՅՍ բառը որ տարբեր ուղղագրութիւններ ունի, աշալուրջ, աշալուրջ, նաեւ տարբեր ստուգաբանութիւններ, ինչպէս կը ցուցընէ Ն. Հյկ. Բռ. մեր կողմանէ կը ստուգաբանուի այսպէս. — Բառիս առոյգ գրչութիւնն է՝ արշալոյս, իբր արջալոյս, եւ այսպէս ըլլալը Յունականին թելադրութենէն է, քանզի Յն. λύκη եւ λύκος, յոյժ նմանաձայն են, եւ λυκαυγής. λυκόφως, Նչ. արշալոյս, նաեւ վերջալոյս, եւ λυκοφία, Նչ. գիշեր աղօտալոյս։ Ի λύκη (այգ) բառէս, որ համարեալ 'ի նմանաձայն բառէս՝ λύκος (գայլ), փոխի 'ի գայլալոյս, իբր Գաղղ. entre chien et loup։ Բաղդ. ծնկաւէր։

*
* *

ՌՈՃԻԿ, որ եւ

ՀՌՈԳ, Պրս. րուզ, եւ Զէնտ՝ րաճ, Նչ. օր, եւ րուզի, րաճէ, Նչ. օրական պարէն, օրական ապրուստ, օրական ուտելիք։ Տես եւ պատառճակ, տես եւ թոշակ։

— Տայր Յախէփի ռոճիկս հօրն եւ եղբարց իւրոց ցորեան ըստ բերան (Ծննդ. Խէ. 12)։ յն. κατὰ σῶμα, (ըստ մարդաթուի) մերձաւոր է κατὰ στόμα (ըստ բերան)։

*
* *

ՄՈՑՐ,

ՄՈՒՐԱՆԱՄ, ՄՈՒՐՈՂ, Յն. μοῖρα, μορία, μόρος, μορίον, յորմէ Տճ. մուրա, Նչ. մասն, բաժին, μοιράω, առնուլ բաժին, ունել բաժին, իսկ μείρομαι, զրկիլ, չքաւորիլ։

— Մի պակասեսցէ ... մուրող որ շրջիցի 'ի ցոյց (Բ. Թագ. Գ. 29)։

— Որդիք նոցա մուրացք եղիցին (Սաղմ.)։

*
* *

ՊԱԿՆՈՒՄ,

ՊԱԽԵՄ, — (Ռոֆ. Եռայ.)։

ՊԱԽԻՄ, — (Ա. Մկ. — Փէշ.)։

ՊԱԿՈՒՑԱՆԵՄ, ՊԱԽԵՑՈՒՑԱՆԵՄ, (Ռոֆ. Եռայ. եւ Մովք.)։

Ցորոց աչխ.

ՎԱԽՆԱՄ, ՎԱԽԿՈՏ, Պրս. վախ, Նչ. երկիւղ, եւ վախէյտէն, վախէտանէյտէն, երկնչել։ Ուրիշ է

ՎԱԽՔ, ծագեալ 'ի ձայնէս՝ χάος, (քաւոս)։ Կազմութիւնը բաղդ. քաւեայ եւ վէգ։

*
* *

ՈՂՈԳՈՄԷՆ, գրի եւ՝ ողոգոմ, ողոգոմէ։ Թուի լինել նոյն ընդ՝ ἐλαιοχομία, որ Նչ. մշակութիւն ձիթենեաց, կամ որ ինչ վերաբերի 'ի ձիթենի, ըստ մեզ մանաւոր առմամբ Նչ. զատին՝ կոչեցեալ

ԾԱՂԿԱԶԱՐԴ (*), եւ որպէս կոչի տօն կամ օր արմաւենեաց, (Յն. ἑορτή կամ ἡμέρα βαΐων), կոչեցեալ է նաեւ ողոգոմէն, իբր տօն կամ օր ձիթենեաց։

(*) Ծաղկազարդ. որ արմաւենեաց և բաբերանութեան. ('ի յն. ἐυλογիմէնօս, բարեբանեալ, օրհնեալ, կամ իւղոտեալ, վարագեղ. անտառազարդ. ծառազարդ)։ (Ն. Հյկ. Բռ.)։

Յայտնի է որ ռամիկը գեռ

ՉԱՐՉԱՐԴԱՐ *կանուանէ այս տօնը, որ ծաղկազարդ կամ ծառազարդ բառից աղաւաղութիւնն ըմբռնած են գիտունք, սակայն գիտնոց տուած այս անուններր մեր բուն հին նախնեաց իսպառ անծանօթ էին, նոքա երբէք այս տօնը ծաղկազարդ կամ ծառազարդ չանուանեցին, այլ պարզապէս տօն արմաւենեաց, կամ Յունական ձայնիւ ողոգոմէն, (տօն ձիթենեաց)։*

Յն. ἐλαία (*), *նշ. ձիթենի, եւ* ἐλεεινός, *ողորմ, աղխողորմ, ցաւագին։ Եւ այս Յունական բառից մերձաւորութիւնէն՝ մեր մէջ ալ ղուրղուր բառ մը սանդծուած է, սակայն միայն ժողովրդային շրջանակին մէջ մնացած, եւ այս բառն ալ կը թուի թէ, Պրս, ղուրղուր. ղուրէ ղուրէ, ղուրղուրնէր ձայնն է, որ կը նշ. ողորմ հառաչանք, ողբաձայնութիւն, հեծեծանք։*

Սաղմոսաց եւ երգոց ողբաձայնութիւնք Ծաղկազարդի օրէն սկըսեալ կը լսուին յեկեղեցւոջ։

Այս Պարսիկ ձայնը՝ ղուրէ ղուրէ, կը տեսնենք հայկական օծումն ընդունած

ԴԱՐԻԻ ԵՒ ԴԱՐԻԻ, — *Եւ Յորդանան գայր լցեալ դարիւ եւ դարիւ որպէս յաւուրս հնձոց ցորենոյ (Յեսու. Գ. 15)։ Իբր՝ հեծեծելով կամ զափունսն կոծելով, կամ իբր Թրք. Բոլու Բոլու, Յն.* ὁ δὲ ἰορδάνης ἐπλήρουτο καθ᾽ ὅλην τὴν κρηπῖδα αὐτοῦ.

Յորմէ եւ Սգաթանգեղոս. — Գետն Երասխ յորուցեալ գայր դարիւ եւ դարիւ։

Պինդ վերը յիշուած ἐλαιοκομεῖον *արմատին կը վերաբերի նաեւ*

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ, ՈՂՈՐՄԻՄ։ Յն. σπλάγχνον, *նշ. աղիք, գթութիւն,* σπλαγχνίζομαι, *գթամ, ողորմիմ, — Աղիք ամպարշտաց անողորմ են (Առակ ԺԲ. 10). յն* τὰ σπλάγχνα τῶν ἀσεβῶν ἀνελεήμονα.

Անտի զարձեալ

ԵՂԵՐ, ԵՂԵՐԱԿԱՆ, ԵՂԵՐԱՄԱՅՐ, ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ, Յն. ἔλεος, *Գաղղ.* chant lugubre։

Եւ 'ի բառէ աստի

ԵՂԵՌՆ, *աղէտ, վնաս, չարիք, վտանգ,* Յն. ἔλεγχος, *կշտամբելի, յանդիմանելի, եպերելի։*

Տես եւ աղագ, յաղագս։

— Որ լինելոց էր առ եղեռանէ նմա եւ արարածոց իւրոց (Եզնիկ)։ — Զայն ոչ եթէ առ եղեռանէ ինչ լեալ ասեմք մարդոյն, այլ վասն լաւութեանց (Անդ)։ — Յորժամ յաջողեսցի մեծութիւն չարին, գլխոյն եղեռան է (Ոսկ.)։ Իսկ 'ի ճառին (Ոսկ. Հռ. ԺԳ. էջ 165). «Կազմեալ փայլատակունս գլխոյն եղեռան», ընթերցի՛ր եղեռան, ըստ անմարկութեան Ն. Բիւզ.։ (Տես ողոգոմէն)

ՈՂՈՔ, *— Պատասխանի ողոք՝ դարձուցանէ զբարկութիւն (Առակ ԺԵ. 1)։*

ՈՂՈՔԵՄ, *իբր կակղել աղաչաւոր բանիւք, կակղել իբրեւ իւղով։*

Յորմէ 'ի հակառակէն

ԲՈՂՈՔ, *ձայն բառնալ, 'ի ձայն բարձր գոչել, գանգատել. Բաղդ. կոչել եւ գոչել, հեծել եւ հծծել, չանթել եւ չնթել, գուսան եւ քուսլ, ճիկ եւ ճիչ, մնչել եւ մռնչել։*

ԲՈՂՈՔԵՄ, *եւ*

ՈԼՈՔ, *իբր պինդ՝ տոկուն, հաստատուն մասն մարմնոյ։*

(*) Յունականքդ ἔλαιον (ձէթ), և ἔλεος (ողորմութիւն) նոյնաձայնք են, տարբերեալք յուղղագրութեան։ Եւ 'ի մեզ՝ ողորմիմ, ողորմութիւն, որ գրի Ո իւ, նոյն յունականն է՝ միայն E. փոխեալ Ո. Այսպէս և առ Լատինս, oleum, ձէթ, ծագեալ 'ի յն. ἔλαιον. Լտ. oliva, (ձիթապտուղ) յն. ἐλαία. Լտ. olivetum. (ձիթաստան) յն. ἐλαιών. Լտ. olea (ձիթենի) յն. ἐλαία.

Այսպէս եղած են և 'ի մեզ ողոգոմէն, ողորմիմ, ողորմ եւայլն։

ԲԵՒՐ, Պրս. դէհհէզար, նոյն նշանակութեամբ, այսինքն՝ տասն հազար, (10,000)։ — Մատուցաւ առ նա պարտապան մի բեւր քանքարոյ (Մատթ. ԺԸ. 24)։ յն. μυρίων ταλάντων։ Պէտք չէ շփոթել ընդ

ԲԻՒՐ, Պրս. բիւր՝ նշ. բազում։ — Բիւր տասապելս յօդեցին Պարսք զնմանէ (Խոր.)։ Իսկ

ԲԻՒՐԱՍՊ, Պրս. դէհհէզարէսպ, որ կը թարգմանի՝ 10,000 ձի (ունեցող)։ Մարաց Աժդահակ թագաւորին մականունն է։ Եւ Աժդահակ անունին բուն հին Պարսկային հնչումն է՝ աժի դահակա, եւ Սանսք. ահի (ahi), Զէնտ՝ ազի (asi) կամ աժի,

Յորմէ 'ի մեզ

ԻԺ, նշանակէ՝ օձ։

Պարսից առասպելը կ'ըսէ թէ Հրաւդէն (Ֆէրիտուն) զԱժդահակ դէմավէնտ կամ դէնդավէնդ (Դմբաւընդ) անուն բարձր լեռան վրայ բանտեց, որով Պրոմիթէոսի Կովկասու վրայ բանտուել ըլլալուն առասպելաց կը նմանի։

—Ննջելն Հրաւդենայ... զարթչելն Հրաւդենայ, եւ տանել զԱժդահակ յայրս ինչ լերինն եւ կապել (Խորէն.)։

* * *

ԿՈԿՈՐԴԻԼՈՍ,

ԿՐՈԿՈՏԻԼ, Յն. κροκόδειλος, որուն աւրիշ բառով կ'ըսենք տիմսահ։

(Տես գրաւղ)։

Արդ մերս

ԿՈԿՈՐԴ (*), (յորմէ ձեւացեալ է բառս ՈՐԿՈՐ), կ'երեւայ թէ այս գազանին անունէն կը ծագի

(կ ր ո կ ո տ — կոկորդ)
1 5 2 3 4 6

— Պտուղ նորա քաղցր է 'ի կոկորդի իմում (Երգ.)։

Յորմէ (կրոկոտ) 'ի հակառակէն

ԳՈՐՏ, զի նման է նմա, եւ զի յոյժ փոքր է քան զնա։ Բաղդ. ցուլ եւ ուլ, տիեզերք եւ տղրուկ։

Յորմէ (որկոր)

ՈՐԿՈՐԱՑ, ՈՐԿՈՐՈՒՍՏ, ՈՐԿՐԱՄՈԼ։

Ունինք նաեւ

ՆՀԱՆԳ, Պրս. նէհէնկ, որ նշ. տիտեռն, կոկորդիլոս կամ ձիադետի, Յն. χαμαιλέων, գազան ծովային, երկակենցաղ։

Յորմէ 'ի հակառակէն

ՆԱՀԱՆԳ, (ցամաք երկիր, հող)։ Տես աւան եւ հիւանդ. բաղդ. փոկ եւ փոկ, գետ եւ գետին, գաւառ եւ կաւառ, ցամաք եւ ծմակ, ատին եւ ոստին, ջուր եւ չոր։

Այս գազանը կամ ծովային նհանգը (χαμαιλέων) կ'ըսուի Պարսկերէն՝ նաեւ աֆէթ-դէրդէ, որ թարգմանի՝ արեւակողմը դարձող, (արեւդակնատենչիկ)։ կ'ըսուի նաեւ աֆէթ-պերէսթ, (արեւապաշտ), եւ այսպէս ըսուած է, վասն զի միշտ երեսը արեւին կողմը կը դարձընէ, եւ բերանը դէպ ի արեւը բանալով կը քնանայ։

(Ոսկ. Մեկն. Մատթ.)։ «Վասն էր 'ի մեծացուցչէն վրիպեալ, եւ զչքաւորին թախանձեա, զհատուցիչն խրլխըլեա, եւ զարեւիշուշան (*) հա-

(*) Կոկորդ և որկոր, յն. λάρυγξ, φάρυγξ. առջինը խրոպէս նիւթական է, տճ. գըրթլըգ-կամ գըրթլըգ. իսկ երկրորդը տաճկերէնին նշանակութեամբն է, որ կըսուի պօղազ, եւ կըսուի պօղազ դէ-չքէ-ն, և Հայերէն որկորուտ, որկորեայ, որկրամոլ։ Յն. λαιμός, Գաղղ. gorge, gosier: Այս յունական բառը կը նշանակէ նաև որկրամոլութիւն։

Թէ բո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն։ (Խոր)։ և յունական բարդութիւնք λαιμαργία, λαίμαργος, λαιμαργέω (և λιμός. սով)։

(*) Արեւիշուշա, (որպէս Թէ արեւասուտ), ἀγνώμον, ingratus, ապաշնորհ, որ ոչ ճանաչէ զերախտիս կենաց, և այլոց բարեաց, կամ գուածոն կենաց, անմիտ, անճանաչող, ապերախտ։ (Ն Հյկ. Բռ)։

տուցանելի (*) (Տպ. հատուցանել) հաշուիս»։ Այս խօսքիս մէջ՝

ԱՐԵԽԻՇՈՒՇՏ, (եթէ գրչի սխալ չունի) կը թուի նշանակել իւր իր հայեցուածը՝ շեշտ կամ ուղղակի արեւին կողմը նայող, կամ դէմքը յարեւակողմն շեշտող, եւ թէ վերը յիշուած [illegible] թարգմանութիւնն է, եւ կը նշ. յափշտակող եւ նենգաւոր, ինչպէս կոկորդիլոսն է։

Խօսքին կարգէն ալ այնպէս կը հասկցուի, քանզի յափշտակողը հատուցանելու կամ նորէն ետ դարձնելու համար չի յափշտակեր, եւ դուն., կ'ըսէ, յափշտակողը՝ հատուցանելի կը կարծես։

Ցոյն բնագրին ἀγνώμων, թէ' ապերախտ կը նշանակէ, եւ թէ' խարդախ, նենգաւոր, ուխտադրուժ, զրուժան, որ ուն կայ 'ի բանի իւրում։ Ունինք առ Եզնկայ,

ԱՐԵԳԱԿՆԱՏԵՆՉԻԿ, «Ա.ս 'ի յարեւէ զարեգակնատենչիկն արկանելոյ», ըսել կ'ուզէ՝ [illegible], եւ այս բառն ալ [illegible] նշանակութեան կը մօտենայ։

ՎԷՊ. Յն. ἐυέπεια, (ճարտարութիւն ասացուածոյ, գեղեցկութիւն բանից)։ Կազմութիւնը բաղդ. վեհ, վրան։

* * *

ԽՈՐՏԻԿ, Պրսկ. [illegible], [illegible], նշ. կերակուր պատրաստ, կերակուր ուտելի։

* * *

ՍՏԵՐՋ, ՍՏԵՐՋԱՆԱՄ, —Ոչխարք քո եւ այծիք ոչ ստերջացան (Ծն. ԼԱ. 38)։ Յն. στεῖρα, նշ. ամուլ, ցամաք (երկիր), Պրս. [illegible]. ամուլ, ստերջ, (սաի զկնոջէ եւ զանասնոյն կենդանեաց), եւս եւ զգետնոց։ Մի' շփոթեր ընդ [illegible]։

(Տես զբառդ)։

* * *

ԲՈՒ, Պրս. [illegible], [illegible], նշ. յոպոպ Տճ. [illegible]։

* * *

ԳՈԼ, (անուն)։ — Վա՜շ զի ջեռայ եւ տեսի զգոլ (Ոսկ. Եսայ.)։

ԳՈԼԱՆԱՄ, — Որ 'ի տապոյ ջերման գոլանայցէ (Ոսկ. Եսայ)։ Եւ

ԳՈԼՈՐՇԻ, ԳՈԼՈՇԻ, — Ի գոլորշւոյն որ 'ի սրտէ երկրի 'ի վեր ցոլանայ (Եզնիկ)։ — Ցասումն քան ըզհուր գոլոշիք հնոցի (Սիրաք ԻԲ. 30)։ Լտ. calor, նշ. ջերմութիւն, նոյն է եւ caldor, յորմէ

ԳԱՂՋ, (այսպէս եղած է՝ չըլլալու համար [illegible])։ Ասոնց կազմութիւնը բաղդ. գող եւ գաղտ, խանձ(ակեր) եւ խանձ, գլորել եւ գալարել։ Տե'ս եւ՝ մարգավար։

* * *

ԴՍՐՈՎ, գրի եւ

ԴՐՍՈՎ,

ԴՍՐՈՎԵՄ, ԴՐՍՈՎԵՄ, Յն. διατύρω, նոյն նշանակութեամբ։ Իսկ

ՊԱՐՍԱՒ, ՊԱՐՍԱՒԵՄ, նոյն ընդ

ԲԱՍՐԱՆՔ, ԲԱՍՐԵՄ, Յն. περιστύρω, նոյն նշանակութեամբ։

ԱՆԲԱՍԻՐ, (դար-ով, պարս-աւ, բասր...)։

* * *

ԱՐՈՒՍԵԱԿ, (սեռ.) արուսեկ-ի։ Արաբ. [illegible] նշ. փառաւոր, Տճ. [illegible], Պրս. [illegible], (գիշերափայլ)։ Իսկ բառ մեզ ծանօթ մոլորակին, Լտ. luciber.

ԼՈՒՍԱԲԵՐ, —Զիա՞րդ անկաւ յերկնից արուսեակն որ ընդ առաւօտն

(*) Հատուցանելի, բաղդ. Եզնիկ 69 — «և միւսն զոռիծու կորիւն անուցեալ ածէ 'ի համբոյր և 'ի քծինս, մինչև պատել զանուցանելեաւն»։

ծակէր (Եսայ.)։ — Տեսիլ նորա իբրեւ զանտիլ արուսեկի ։

* * *

ԳԼԵՄ, Յն. κυλίω, նոյն նշանակութեամբ ։ Յորմէ
ԳԼԱՆ, Յն. κύλινδρος ։ Եւ
ԳԼՈՐԵՄ, — Եթէ գլորիցի մին, կանգնեսցէ զնա ընկեր իւր, եւ վայ միումն յորժամ գլորիցի (Ժող. Դ. 10)։ — Եղէ մերձ 'ի գլորել (Սաղմ. ՃԺԷ.)։
ԳԼՈՐՈՒՄՆ, — Սա կայ 'ի գլորումն եւ 'ի կանգնումն բազմաց (Ղուկ. Բ. 34)։ Եւ
ԳԱԼԱՐԵՄ, ԳԱԼԱՐՈՒՄՆ, եւ
ԳԵԼՈՒՄ, — Եգել զաղխս նորա (Դատ. Ե. 30)։

Յորոց 'ի հակառակէն

ՔԻԼ. — Ո՛ չափեաց զերկինս թըզաւ, եւ զերկիր ամենայն քլաւ (Եսայ.)։ — Ոչ աւելի զթիզն քան զքիլն զառանեմք (Եզնիկ)։ Եւ
ՔԱՅԼ, քանզի այս ալ չափ մըն է, ինչպէս նաեւ՝ կանգուն։ — Ոչ տաց ձեզ յերկրէ նոցա եւ ոչ քայլ մի ոտին (Օրին. Բ. 5)։ — Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն եւ ոչ քայլ մի ոտին (Գործ. Է. 5)։ Յն. βῆμα ποδός։ Բաղդ. թուզ եւ թիզ. ծալել եւ ծաւալել, ծառել եւ ծրարել, բուռն եւ բռնել։ Իսկ
ՔԱՅԼԵՄ, է իւր աչխ. որ կ'ըսուի նաեւ քալէմ։

* * *

ԿՆՃԻՒՆ, Պրս. քէնճ, նշ. զանգուրք հերաց, խորշոմք այտից, հանդերձից, ոլորք չուանի։ — Ի զառամութիւն մաղձի եւ 'ի կնճիռն անիրաւութեան տեսանեմ զքեզ (Գործ. Ը. 23)։ Յն. σύνδεσμος։ — Լոյծ զկնճիռն անիրաւութեան (Եսայ. ԾԸ. 6)։ — Գտաւ կնճիռն յարս Յուդայ (Երեմ. ԺԱ. 9)։ — Ոչ խոժոռեցաւ ինչ, եւ ոչ ամենեւին կնճիռն ծնաւ յերեսս նորա (Վրք. Հրց.)։

* * *

ԹՈՊՐԱԿ, (աչխ.), Պրս. Թէփրէ, Տճ. Թօփրագ։

* * *

ԳՆԱՄ, յորմէ
ՉԳՆԱՄ, Յն. ἰχνέομαι, κινέομαι, κινοῦμαι, եւ κνήμη, նշ. բարձք, սրունք։

* * *

ԿՈՐՈՎ, Լտ. vigor, յորմէ
ԿՈՐՈՎԻ, յորմէ 'ի հակառակէն՝
ԳՈՐՈՎ, ԳՈՐՈՎԻՄ, յորմէ
ԱՆԱԳՈՐՈՅՆ, ԱՆԱԳՈՐՈՆ, եւ
ՈՐՈՎԱՅՆ, այսպէս եւ Յն. κοιλία (որովայն) եւ κηλέω (գորովել) σπλάγχνον (աղիք), եւ σπλαγχνίζομαι (գորովել, գթալ)։ Բաղդ. արգանդ եւ արգահատել։

* * *

ԴԵՆՋԱԿ, ըստ մեզ՝ իբր լանջակալ, կրծկալ, Պրս. Բէշէնէր, իսկ ըստ Յն. եւ Լտ. λέντιον, linteum, նշ. իբր աչխ. լաթ, չարշաֆ, Տճ. պէզ։ — Առեալ դենջակ մի սփածաւ (Յովհ. Գ. 5)։ Յորմէ
ԼԱՆՋՔ, — Ի վերայ լանջաց եւ որովայնի (Ծննդ.)։

* * *

ԼԵԶՈՒԱԳԱՐ, Յն. γλώσσαργος, στόμαργος։
ԳԼԽԱԳԱՐ, Յն. κεφαλαργής, Յունական վերջաւորութիւնն ἀργ, փոխեալ 'ի մեզ գար։

* * *

ԲԼՇԱՆԱՄ, Պրս. բէլաշ, նշ. տկարացեալ անդամ, թոյլ անդամ։
Յորմէ
ԲԼՇԱԿՆՈՒԹԻՒՆ, (բլշ—ակն)։

* * *

ՊԱԽՈՒՑ, իբր համառօտութիւն բառին՝ ց (ո կ ա) կ ա պ։
ՑՈՒԿԱԿԱՊ։ 4 3 2 1

Այսպիսի համառօտութեան օրինակներ.

Դատախազ—ատոխ, վախճան—վերջ, երանգ—ներկ, պատկեր—կերպ, ճառագայթ—ջահ, աճապարել—ճեպել, զանազանել—զնել, Գարեգին—Գուրգէն, Մարիբաս—Մեսրոպ։

* * *

ՈՒԹ, Յն. ὀκτώ, Լտ. octo, Իտ. otto։

ՈՒԹՍՈՒՆ, Տճ. սէքսէն, իբր՝ սէքիզ-օն։

ԻՆՆ, (սեռ.) ըննի, Պրսկ. նէհ, Յն. ἐννέα։

ԻՆՆՍՈՒՆ (*), Տճկ. տօքսան, իբր՝ տօքուզ-օն։

* * *

ԲԱԿՂԱԽՈՐԱՆ (**), թարգմանութիւն Յունական ձայնիս՝ κυαμοφαγία. Բակղ. դաշխուրան։ Տե՛ս [illegible]։ Յն. ἡ πυανεψία, թարգմանի բակլայ-եփոց, այն է՝ ազգ ինչ արգանակի՝ պատրաստել բակլայիւ. τὰ πυανέψια կամ, τὰ ἱερὰ πυανέψια, էր անուն տօնի առ Աթենացիս, որ հանդիպէր յամսեանն Նոյեմբերի, եւ ամիսն կոչէր πυανεψιῶν, որուն վեցերորդ օրը կոչէր νηστεία ծոմ, (կանոնց)։

Հիմա ալ դեռ Յոյները մեծ պահոց առաջին օրը՝ ջուրի մէջ թրջած դրուած ոչ (եփած) բակլայ ուտելու սովորութիւն ունին։

* * *

ՊԱՐԿ, Պրս. պէրք՝ նշ. պատրաստութիւն պիտոյից ճանապարհի,

(*) Ուն կամ սուն. մասնիկը Թէպէտ Թուրքն ալ ունի, սակայն միայն՝ սէքսէն, տօքսան, բառերուն վրայ. իսկ մերը՝ երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, իննսուն։

(**) Կը քաղենք 1859 Թերթէ մը, [illegible] Մարտ 1 ի Թուէն ինչ որ Տէրոյենց պատուելի կը գրէր այդ բառի ստուգաբանութեան մասին։

«Մեծ պահոց առաջին օրուան տրուած այս անունս ոմանք բաքլա խօրան կը ստուգաբանեն. և կ՚ըսեն որ եկեղեցիները խորաններուն վարագոյրը քաշուած և սեղանները գոցուած ըլլալնուն համար այս անունն այն երկուշաբթի օրուան յատկացած է։ Բայց Թէ որ այս անունս պատճառ մը ըլլար նէ՝ բուն բարեկենդանին օրուանը տալու էր այս անունը. վասն զի խորանները նախ եւ առաջ բուն բարեկենդանին օրը գոցուած կը տեսնուին. շաբաթ իրիկունէ գոցուած ըլլալով։ Ուստի մեզի մէկ ուրիշ ստուգաբանութիւն մը ունիլ յարմար կ՚երեւի։

«Յայտնի է որ յոյները բարեկենդանին վերջին շաբթուն միս ուտելէն կը կտրուին. և այն կիրակիին [illegible] կ՚ըսեն. որուն ճիշդ բառական Թարգմանութիւնն է հայերէն [illegible], եւ տաճկերէն [illegible] բառերը, եւ այն կիրակիէն մինչեւ բուն բարեկենդան՝ եօթն օր նաւակատիքի կերակուր կուտեն. եւ այն շաբթուան [illegible] կ՚ըսեն, որ [illegible] ըսել է։ Ասոր նման ստուգաբանութիւն մը ունենալ կը կարծեմ բաքլա խօրան անուանն ալ. եւ կը գտնեմ որ բաքլա բառը՝ նոյն իսկ արաբացւոց բաքլ բառն է, որ ըսել է հնտեղէն. ինչպէս են ոսպն, սիսեռ, լուբիա, բրինձ, եւ այն հնտեղէնները որուն յատկացած է բակլա բառը։ Բաքքալ բառն ալ ասկէց կելլէ որ հնտեղէն ծախող ըսել է։ Խօրան ալ պարսկերէն խօր բառին յոգնականն է, որ ըսել է ուտող. ինչպէս նանխօր հաց ուտող բառին մէջ։ Եւ այսպէս բաքլա խօրան՝ ըսել կըլլայ, հնտեղէն ուտողներ. կամ հընտեղէն ուտելու օր։ Այս ստուգաբանութիւնը մեզի օրինաւոր կ՚երեւի. եւ յայտնի է որ մեր աշխարհաբար լեզուին կերպարանուած ժամանակը... Պարսից տէրութեան ձեռքն ըլլալով՝ պարսկերէն լեզուն ալ մեր այն ժամանակի նախնեացը ծանօթ էր։ Այս բառիս գործածութիւնը գրոց մէջ տեսած չունիմք, որկէց կը գուշակեմ որ վերջին ժամանակները հնարուած է»։

(1887 Փետրուար 21, Մասիս շաբաթաթերթ)։

պաշար ճանապարհի ։ — Մի՛ պարկ ի ճանապարհ, եւ մի՛ երկուս հանդերձս ունիցիք (Մատթ.) ։

* * *

ԹԱՂԱՐ(*), աման խեցեղէն, բառ չեղաթայից՝ ըստ ձայնին եւ ըստ նշանակութեանն. Տճ. տաղար ։
— Վաղ իսկ ծաղկունք զան յերեւան պարագիր 'ի նեղ թաղար, (Բոտր. Վէրտըրէ) ։

* * *

ԱՆԴԱՃԵՄ, ԱՆԴԷՃ, Պրս. էնտուզէ, նշ. հոգ, փարանք ։ —Սկսաւ անդաճել եւ քննել ։ (Եղիշ.) ։

* * *

ՈՒՏԻՔ, (սեռ.) ուտեաց, թարգմ. Յն. τὰ φαγήσια ։

* * *

ՏԱՇԵՄ, Պրս. թէշ, թէյշէ, նշ. ուրագ (գործի հիւսանց) ։ Յորմէ
ՏԱՇԵՂ, ՏԱՇԻՂ, էղ, իղ, մասնիկները բաղդ. առատ-ել, երկ-իղ, երկ-եղ, պատառակ-ալ ։

* * *

ՊԱՑԾԱՌ, Արաբ. պէյզա, նշանակէ՝ սպիտակութիւն, լուսաւորութիւն), յորմէ պէյազ, սպիտակ ։

* * *

ՎԱՐԱԳՈՅՐ, Պրս. ֆէրաղէյր, նոյն նշանակութեամբ ։

* * *

ՎԱՐՈՒԺԱՆ, Պրս. վէրշ. վէրշան, նշ. տատրակ, Տճ. գումրու ։

* * *

ԽԱԺԱՄՈՒԺ, թուի լինել Պրս. խէլըւաշ, խէլփաշ, որ նշ. ժխոր, աղաղակ ամբոխի, կագ եւ կռիւ ։
— Այլ այն խաժամուժ ամբոխ (Յովհ. Է. 49)։ Յն. ἀλλ' ὁ ὄχλος οὗτος, (այլ այն ամբոխ), Հայերէնին մէջ՝ խաժամուժ բառն յաւելուածով դըրուած է ։ Բաղդ. կափարիչ ։

* * *

ՍՏԵՒ, —Յովհաննէս ունէր հանդերձ 'ի ստեւոյ ուղտու (Մատթ. Գ. 4) ։ Յն. θρίξ, (մազ, բուրդ) ։ Մերձ է 'ի Յն. στύπη, στύππη, (բուրդ, ստորին տեսակը), յորմէ Տճ. [illegible], այսպէս եղած է՝ չըլլալու համար [illegible] ։

* * *

ԲԱՐԲԱՐՈՍ, Յն. βάρβαρος, որ ոչն է Հելլեն, որուն Պարսիկ բառով կ'ըսենք
ԽՈՒԺ, Պրս. խուզ, (Սկիւթացի) ։
ԽՈՒԺԱՍՏԱՆ, Պրսկ. խուզիստան, (Սկիւթիա) ։
Յորմէ (խուժ) ձեւացած է
ԴՈՒԺ, — Եթէ ոչ գիտիցեմ զօրութիւն ձայնին, լինիցիմ այնմ որ խօսիցին ընդ իս խուժ, եւ նա որ խօսիցի ընդ իս, դուժ (Ա. Կորնթ. ԺԴ. 11) ։ —Յն. ἐὰν οὖν μὴ εἰδῶ τὴν δύναμιν τῆς φωνῆς ἔσομαι τῷ λαλοῦντι, βάρβαρος. καὶ ὁ λαλῶν ἐν ἐμοὶ βάρβαρος.
Եւ բարդեալք
ԽՈՒԺԴՈՒԺ, ԽՈՒԺԱԴՈՒԺ, ԽԺԴԺԱԴՈՅՆ, — Ուր ոչ է Հրեայ, եւ ոչ հեթանոս ... խուժդուժ (Յն. βαρβαρὸς), Սկիւթացի, ծառայ, ազատ (Կողոս. Գ. 11) ։ Բաղդ. արհամարհ, կերակուր, հայհոյել, բարձրաբերձ ։

* * *

ԼԵՐԴԱԲԵԿԵՄ, (Տճ. ճիյէրինի փարչալամագ) ։ — Հանդերձից շուք թագաւորաց բացուստ 'ի բաց գչարագործս լերդաբեկէ (Ոսկ. Բ. Կորնթ.) ։

* * *

(*) Պրս. տաղար, բաժակ գինւոյ (ըստ Դէորգ գրքի) ։ Թաղար անօթ կաւեղէն իբրեւ պոյտն, եւ ծաղկանց (ըստ Տճ. Հյկ. Բռ.), Թաղար, խեցի, կուժ, սափոր (ըստ Տճ. Հայ Բառարան) ։

ՑՈԽՈՈԽԹԲ, չախըրփան։

ՑՈԽՈԹԵՄ, —Այնչափ զգօնացուցանել զօձս զխաեն, մինչեւ յուռթիւք կոչել 'ի տունս, եւ կերակուրս մատուցանել (Եղնկ)։ Յն. ἱερομαντία, Նչ. կախարդանք։

Բաղդ. Ներատուկ։

* * *

ԴԱՀԵԿԱՆ, Յն. δ α ν ά κ η, նոյն
1 2 6 5 4 3
նշանակութեամբ։

Ցորմէ համառօտեալ

ԴԱՆԳ, Յն. δαν(α)κ(η), իբր փոքրագոյն մասն նորին։ — Հինգ ձագք երկուց դանգաց վաճառին։ — Զօրեից դանգաց գին (Ոսկ.)։ Սակայն Պրս. եւս ասի դանկ, Թրք. դէնկ, չորրորդ մասն դիրհէմի։

Ցորմէ 'ի նախատակէն

ԹԱՆԿ, ԹԱՆԿԱԳԻՆ, ԹԱՆԿԱԳՆԻ, (մկ.), մեծագնի։

Եթէ չիցէ 'ի Պարսկականէս՝ բէնկ, բէնկեար, որ նչ. չքնաղագիւտ, սակաւագիւտ իր, իր մեծագին։ Կալցի ով որպէս եւ կամի։

* * *

ՎԱՐՁԱԿ, Պրս. ֆարաե կամ բարաե, նչ. մուրացկանութիւն. սակայն մանաւորաբար կը նշանակէ այն առակը որ գուսանք եւ երգեցիկ կանայք (Յն. ᾄδουσα) խաղին կամ երգելուն մէջ անդը կամ վերջը՝ ներկայ գտնուողներէն կ'առնուն իբր վարձք, եւ այն առակը կ'ըսուի

ՎԱՐՁԱՆՔ։ Այս բառը լայնաբար կը նշանակէ՝ պարգ, օժիտ։

— Ցաճախեցէք յոյժ զվարձանս եւ զօժիտս, եւ տաց... եւ տուք ինձ զաղջիկն զայն կնութեան (Ծն. ԼԴ. 12). յն. ἡ φερνή, եւ եւս լայնաբար՝ որ եւ իցէ փոխարինութիւն։ Ուստի նոյն արմատէն է նաեւ

ՎԱՐՁՔ, իսկ երգեցողները կ'ըսուին՝ գուսանք (ար.), եւ վարձակ (իգ.)։ — Լսիցե՞մ ակաւին զձայն գուսանաց (ᾀδόντων) եւ վարձակաց (ᾀδουσῶν)։ Ցուցարէնը մի եւ նոյն բառն է արական եւ իգական։ Իսկ (Մէք. Ա. 7), «Զամենայն արձանս նոցա այրեսցեն հրով». Յն. μίσθωμα, վասն որոյ ուղղութեամբ կ'ազգաբարէ Ն. Հյկ. Բռ (*), «Սխալ է գրեալն 'ի սովորական օրինակս մեր» «զամենայն արձանս նորա». եւ ուղղելի՝ վարձանս, որպէս ունի Յն. եւ Եբր.։

* * *

ՅԱԶԿԵՐՏ, յատուկ անուն մարդոյ (առ Պարսս) եզդէկէրդ, եզդճէրդ։

* * *

ԱԳՌԱՒ, Արաբ. ղըրապ, նոյն նչ. Թրք. գարղա, Յն. ἀγρεύς, ազգ ինչ գիշակեր թռչնոյ, եւ κόραξ, նչ. ագռաւ։ Աթենաս՝ Ագռաւկոսին տուփ մը յանձնեց պատուիրելով որ չբանայ. բայց նա հետաքրքրութեամբ բացաւ։ Ագռաւ մը գնաց դիցուհւոյն մատնութիւն ըրաւ՝ թէ Ագռաւկոս տուփը բացաւ, (ըստ առասպ.)։ Ցարեւելս տեսակ մը ագռաւ կը ճանչնան ընդ անուամբ՝ գարղա գարղա (մանրիչ ագռաւ)։

— Թռչունք երկնից հաստուցանեն զբարբառ քո, եւ որոց թեւք են, պատմեն զբան քո (Առակ.)։ Ձեւաւոր զրուցուածք մըն է Տաճկերէն, գուշ խապէր վէրիր կամ կէթիրիր։

* * *

ՁՈՀՐԱՊ, յատուկ անուն մարդոյ, Պրս. սէհրապ՝ նոյնպէս անուն մարդոյ։ Բաղդ. Գուրգէն, Գարեգին, Սմբատ, Զարեհ, Պերոզ, Հրազդան, Վահրամ, Ներսէս։

* * *

(*) Զարմանալի է՝ դարձեալ նոյն սխալը տեսնել Աստուածաշունչի վերջին տպագրութեան մէջ (1860), բառարանին այս զգուշաւոր ազգաբանութենէն ետքը։

ԿՂՁԻ ,

ԳՈՒՂՁ , Պրս. քէօլչէ , [(քծուար) , իսկ՝ քէօլօսխ նշանակէ՝ կուշտ հողոյ ։

* * *

ԲՈՒՐԳՆ , Յն. συργός , նոյն նշ. այսինքն՝ աշտարակ . բայց թարգմանի՝ բոցաձեւ , բոցաւէտ ։

* * *

ՆՈՒՐԲ , Յն. νεβρός , նշանակէ՝ ձագ , կորիւն ։

* * *

ՆՐԲԵՄ , Յն. νεῦρον , նշ. թել , լար , իսկ յք. νεῦρα , նշ. ջիղք , նեարդ ։ — Մաշէ եւ անօսրացուցանէ եւ նրբէ (Ոսկ. Ա. Տիմ.) ։ Բաղդ. գանակ , նրան , սուր , թիթեղն ։

* * *

ՄԱՆԻՇԱԿ , Թրք. մենեքշէ , մենեւշէ ։ Բաղդ. վարդ , մեխակ , քրքում , յասմիկ , շուշան , յակինթ , հիրիկ ։

* * *

ԳԻՐԱՆԱՄ , — Գիրացաւ , ստուարացաւ , լայնացաւ (Օրէն. ԼԲ. 15) ։ — Կերան եւ յագեցան , գիրացան եւ փափկացան (Նեեմ Թ. 25) ։ — Վասն այսորիկ ստուարացան , մեծացան , գիրացան եւ պարարտացան (Երեմ. Ե. 28) ։ Յն. յոկ , «ստուարացան եւ մեծացան» ։

ԳԷՐ , — Ցուլք գէրք պաշարեցին զիս (Սաղմ.) ։ Պրս. ֆէրպէհ , (գէր , պարարտ) ։

* * *

ԱՔԱՑԵՄ , — Ընդդէմ խթանի աքացել (Գործ. Թ. 5) . այսինքն , [illegible] ։ Յն. λακτίζω , նոյն նշ. արմատ՝ λαξ ։

Ի մեզ արմատ՝

ԱՔ (*) , — Որպէս թաթք առ 'ի գնալ եւ յընթանալ , եւ այլքն որ ինչ միանգամ 'ի ձեռն աքից գործին (Փիլ.) ։ Եւ

(ԱՔՍ) , (Յն. λάξ) , 'ի բայս

ԱՔՍՈՏԵՄ , գրեալ եւ աքցոտեմ ։ — Ձծեծեաց զոտս ընդ գետնի աքստելով (Ոսկ. Մատթ.) ։

ԱՔԱՑԻ , — Աքացի ծեծես եւ թշնամանես (Ոսկ. Մատթ.) ։

ԱՔԵԱՑՔ , — Եթէ կարասցէ՞ թափել հովիւ 'ի բերանոյ առեւծու աքեացս երկուս (Ամովս. Գ. 12) ։

Իսկ

ԱՔԾԱՆ , ԱՔՑԱՆ , Յն. λάκτις , Արաբ. քելպէյն , որ թարգմանի՝ շունք — երկու շուն , զի քելպ՝ նշանակէ՝ շուն , եւ էյն մասնիկ յոքնականացուցիչ (երկուական) , իբր զի աքծանը երկու շան նմանութիւնն ունին , խածնելով եւ բռնի քաշելով ։ Եւ մեր բառն աքծան , կրնայ գտնիլ 'ի քօփան , եւ քօփ՝ կը նշանակէ՝ շուն . (ա ք ծ ան)
2 1 3
կամ 'ի բայէս՝ խածանեմ , իբր՝ [illegible] , ինչպէս Թուրքերէն կ'ըսուի՝ [illegible] , (խածգան) ։

ԿԱՑԻՆ , Յն. ἀξίνη ։

Թերեւս 'ի մեզ եւ

ՄԱԳԻՂ , ՄԱԳԼԵՄ , ՄԱԳԼՑԵՄ ։

* * *

ԱՄԻԿ , ըստ մեզ փոքր էգ ուլ ։ Իսկ ըստ Յն. ἀμηνή, ἀμνός , էգ գառն ։

Յորմէ

ԱՄԻՃ , [illegible] ։ Բաղդ. ոչխար խոյ , գառն ։

* * *

ՍԱՐԵԱԿ , անուն թռչնոյ , Պրս. սարէք , նշ. սոխակ ։ (Տե՛ս սոխակ) ։

Յորմէ թերեւս մերս

ՇԱՐԱԿԱՆ(*) , իբր՝ յոքնականն Պարսիկ ձայնից ։

* * *

(*) Նոյն ընդ Տճ. այաք ։ (Ն. Հյկ. Բռ.) ։

(*) Երբ. շիր, շիրա. Արաբ. շիայր , Պրսկ. [illegible] , Ոմն. շարքէ ։ Ն. Հյկ. Բռ.) ։

ՊԱՐՏՔ, ՊԱՐՏԻՔ, Տճ. պօրճ.
ՊԱՐՏԱՊԱՆ, Տճ. պօրճլու.
ՊԱՐՏԻՄ, Տճ. պօրճլույում.

—Զամենայն զպարտսն թողի քեզ վասն զի աղաչեցեր զիս. — Թո՛ղ մեզ զպարտիս մեր. — Որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. — Քանի՞ ինչ պարտիս Տեառն իմում. Իսկ

ՊԱՐՏ. (ընդ բայի),

ՊԱՐՏ է, — ԷՐ, — ԻՑԷ, Արաբ. ֆարզ տըր. — Հաւատացելոյն լուսաւոր աշխարհի պարտ է լինել եւ աղ (Ոսկ.). —Ուրախ լինել եւ խնդալ պարտ էր (Ղուկ. ԺԵ. 32). —Պատմեսցի քեզ զի՞նչ պարտ իցէ առնել (Գործ. Թ. 7).

* * *

ՇԱԼԱԿ(*), Պրս. շալաք, նչ. ձորձ, կապերտ, քուրձ. — Քաղեաց 'ի նմանէ ազոխ լի շալակաւ իւրով (Դ. Թագ. Դ. 39). յն. ἱμάτιον, (ձորձ, արկանելիք, վերարկու). Իսկ (Բ. Մկ. Թ. 8). «Զնա ինքն յերկիր հոգեալ՝ շալակաւ շրջեցուցանէին. Յն. φορεῖον (պատգարակ).

Ուստի շալակ (ըստ Բ. նշ.) թուի լինել Լատիներէն՝ sella (աթոռ, պատգարակ). Իսկ աչխ.

ԼԱԶԱԿ, Պրս. լէճէկ, նոյն նշ. զի լէճ՝ նշ. երեսք, դէմք, եւ բառդ նշ. ծածկոյթ երեսաց (կանանց). Եբր. շալոխ նշ. ոստայնանկ.

* * *

ՍՈԽԳ, Պրս. սօխ, նոյն նչ.
ՍԳԱԽՈՐ, Պրս. սօխվար, նոյն նչ.
ՍՈԽԳ ՈՒՆԻՄ, Պրս. սօխ տաշթէն, Տճ. եաս թութմագ.

* * *

ՆԱԺԻՇՏ, Պրս. նաճիզ, նչ. կոյս աղջիկ, Յն. ἄβρα, (աղախին, սպասեակ), յորմէ

ԱՐԲԱՆԵԱԿ, սատի է նաեւ

ՕՐԻՈՐԴ, աւրիորդ, իբր՝ աւրիարդ. — Նաժիշտք նորա (դստերն Փարաւոնի) շրջէին առ գետովն... առաքեաց զնաժիշտ մի առնուլ զնա (զմանուկն) (Ել. Բ. 5). յն. ἄβρα. Թրք. օվրէթ, օվրաթ, նչ. կին.

Իսկ

ՀԱՐՃ, Արաբ. ճարիյէ նոյն նչ.

* * *

ԱՊԱՐՕՇ, ապարաւշ, Պրս. շաւղ, շաւղարէ, նոյն նշանակութեամբ.

(շ ո ւ պ ա ր ա, ա պ ա ր օ շ)
6 5 2 3 4 1 6 3 4 5 2 1

* * *

ՆԱԽԱՏՕՆԱԿ, Յն. προεόρτια.

* * *

ՄԵՐԿԱՑԻՑ(*), բարդեալ՝ մէրկ-տէտ, երկրորդ մասն բառիդ՝ Պարսիկ է, տէտէն, (գլտել, տեսանել), եւ է իբր՝ մերկատեսիլ, մերկ. — Փառանձեմն մերկատիտ 'ի մէջ աշխարհին կոծէր (Բուզ. Դ. 15).

* * *

ՊԱԿՇՈՏԻՄ, գրի եւ՝ պագշոտիմ.
ՊԱԿՇՈՏ, Յն. βακχεύω, իբր՝ բաքոսանալ, այսինքն՝ անկղիտանալ 'ի հեշտութիւնս մարմնոյ. Լտ. baccabondus, baccans, baccha.

Յորմէ

ՊԱԳԱՆԵՄ, յորոց 'ի հակառակէն
ՊՃԳԱՄ, բաղվ. ախտ եւ տաղտկամ, տարփամ եւ տառապիմ, շուայտիմ եւ տուայտիմ, տենչամ եւ տանջիմ, ջեռնում եւ ջերանիմ, անձուկ եւ անձուկ, յօժարիմ եւ հրաժարիմ, ախորժիմ եւ խոժոռիմ.

ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ, որ եւ՝ թարգմ. Տճ. եէր էօփմէք, (արեւելեան բացատրութիւն).

(*) «Լծ. ռմկ. շլիք. շըլնիք. եւ Արաբ. շելաք, շելէֆ», եւայլն. (Ն. Հյկ. Բռ.).

(*) Մերկատիտ, իբր՝ մերկածիծ, մերկ ստեամբ (որպէս եւ դիել՝ է ծծել).
)Ն. Հյկ. Բռ.).

ԽՐԿՐՊԱԳԵՄ, «պօքանէմ» գրեթէ միշտ բարդութեամբ գործածուած է, եւ քիչ անգամ. — Զամենայն որոց ոչ իցէ կրկնեալ ծունր Բահաղու, եւ զամենայն բերան որոց ոչ իցէ պագեալ զնա (Գ. Թագ. ԺԹ. 19)։

Դարձեալ՝ Պրս. պօսէյտէն, եւ Իտալ. baciare, (յորմէ աշխ. պաչել), նշանակէ՝ պագանել։

Տե՛ս եւ՝ համբուրեմ։

*
* *

ՄԷԳ, Պրս. մէղ, նշ. մութ, խաւար, Յն ὀμίχλη։ — Դնէ զձիւն որպէս զասր, եւ զմէգ որպէս փոշի ցանեաց (Սաղմ. ճխէ.)։

Յն. ὀμίχλη (մէգ), զոր առ Եզնկայ ընթեռնումք, «Դնէ զձիւն իբրեւ զասր, եւ զեղեամն (*) իբրեւ զփոշի ցանեաց»։ համեմատ Եբր. եւ Ասորւոց։ Ի մեզ աշխ.

ՄՈՒԽ, (ծուխ), առանցմէ եկած է

ՄԽԱԼ, (ծխել)։

*
* *

ԼՈՒՏԱՄ, Յն. λοιδορέω, նոյն նշ.

*
* *

ԱՐՏՕՈՒՆՈՒԹԻՒՆ, գրի եւ՝ արտօնութիւն, նիւթական թարգմանութիւն Յուն. ձայնիս ἐξοχή, ἐξ-ἔχω։

*
* *

(*) Եզնկայ կոչումներն 'ի Ս. Գրոց մեր սովորական Թարգմանութենէն չեն, այլ տարբեր օրինակէ մը, Եբրայականին մանաւանդ համեմատ՝ քան թէ Եօթանասնից Յունականին. նաեւ Նոր Կտակարանը տարբեր Թարգմանութիւն է, զոր օրինակ՝ (Մատթ. ԺԲ. 33). «Կամ արարէք զծառն բարի եւ զպտուղ նորա բարի, կամ արարէք զծառն չար, եւ զպտուղ նորա չար», Եզնիկ կ՚ըսէ, «Կամ արարէք զծառն քաղցր, եւ զպտուղ նորա քաղցր, կամ արարէք զծառն դառն, եւ զպտուղ նորա դառն»։ Նոյնպէս (Ա. Կորնթ. Ժ. 25). «Ամենայն ինչ որ 'ի սպանդանոցի վաճառի». Եզնիկ բնագրին Յունական μάκελλον (սպանդանոց) բառը կը գործածէ. «Ամենայն որ 'ի մսավաճառի վաճառի»։

ԱՌԱՏ, Պրս. ռատ, ռէտ, նշ. առատ, առատաձեռն, ուժեղ, կորովի։ — Եթէ ակն քո առատ է (Մատթ. Զ. 22). յն. ἁπλοῦς։

*
* *

ՄԱՏԱԿ, Պրս. մատէ, նոյն նշանակութեամբ։

*
* *

ԲԵՐԵՄ, տես եւ բերան։ Յն. φέρω, նոյն նշանակութեամբ։ Յորմէ

ՀԱՄԲԵՐԵՄ, իբր՝ տանել լաւութեամբ, լռել, Յն. ὑποφέρω։ — Գիտէ համբերել ցաւոց (Եսայ.)։ Նոյն է ասել՝ տանել ցաւոց։ Գրեալ եւ

ԸՄԲԵՐԵՄ, } Կոչ. ընծ.
ԸՄԲԵՐՈՒԹԻՒՆ, նոյն նշ. }

ԲԵՐ, (միջ.) Յն. φέρε։

ԱՆԸՄԲԵՐ, անտանելի։

ԴԺՈԽԸՄԲԵՐ, դժուարակիր։

Տաճիկ բային հետ մէկտեղ գործածուած, Թուրք ձայնն ալ շատ մօտ է իրարու, կէթիրմէք (բերել), կէօթիւրմէք (տանել)։

Այլ է

ԸՄԲԵՐԱՆԵԼ, Յն. ἐπιστομίζω։

— Զորս պարտ է ըմբերանել (Տիտ. Ա. 11)։ Բաղդ. բուռն եւ ըմբռնեմ, ձեռն եւ ընձեռեմ։

ՏԱՐԱԲԵՐԵՄ, Պրս. պէր, որ նշանակէ՝ բերք, է արմատ պէրտէն բային՝ որ նշ. տանել, բերել։

Այս արմատէն է նաեւ

ԲԱՐԻ, ԲԱՐՈՒԹԻՒՆ, Պրսկ. բար, նշ. բերք երկրի, արդիւնք երկրի, եւ 'ի մեզ նոյն է՝ բարութիւնք երկրի, եւ բերք երկրի։ — Կամ արարէք զծառն բարի, եւ զպտուղ նորա բարի։ Բաղդ. չար։

Որպէս եւ

ԽԱՑՐԻՔ, հին Պրս. խէր, եւ Թրք. խայըր, նշ. բարի։

Տե՛ս եւ խէր-խայըր։

*
* *

ՆԿԱՏԻՄ, Յն. θελύνω, θηλυκεύομαι։

*

* *

ՍՏՆԱՆԵՄ, Յն. στένω, Նշ. կարող լինել առնել ինչ (չարիս), մեռանել։ — Մարտիցեն ընդ քեզ եւ ոչ կարիցեն ստնանել (Երեմ. ԺԵ. 20)։ — Ճշմարտից հաւատացելոց ոչ սատանայ փորձութեամբքն կարէ ստնանել, եւ ոչ կախարդք դեւօք (Եղնիկ)։ — Անմեղի ումեք ոչ դեւք մեղանչել կարեն, եւ ոչ գազանք տիրանել յօժարեն (Եղնիկ)։ Տպ. տղանելու։ — Վիմին ինչ ոչ ստնանել կարացեալ՝ ինքն առ վիմին խորտակեցաւ (Ագաթ.)։

*

* *

Վ.ԹԱՐՈՒՄՆ, Յն. φθάρμα, նոյն նշանակութեամբ։

Վ.ԹԱՐԵՄ, Յն. φθείρω, նոյն նշ.։

ԱՆՎ.ԹԱՐ, Յն. ἄφθαρτον, նոյն նշ.։

*

* *

ՏԱՊԱՆԱԿ, ՏԱՊԱՆ, Պրսկ. Թէ-պէնկէ, Թէպէնկէ-, նշ. արկղ, Յն. τάφος, նշ. գերեզման։

Յորմէ (տապան) համառօտեալ

ՏՈՒՓ, Պրս. Թէ-պօ-, նշ. փայտեղէն գօգաւոր աման։ Իսկ

ԱՊՏԱԿ, նոյնպէս համառօտեալ 'ի ձայնէս՝ տա-պա-նակ, ըստ նմանաձայնութեան պարսկայնոյն, զի Պրս. Թէպէնկէ (տապանակ), եւ Թէպէնչէ, Թէպանճէ (ապտակ)։

*

* *

ԵՐԱԽԱՅ, ԵՐԵԽԱՅ, տղի, ըստ եկեղեցւոյ, զնորադարձ հաւատացելոց, որք չեւ եւս ընկալան զկընիքն հաւատոյ, եւ ծագի յԱստուածանէս

ՌԱԿԱՅ (*), Յն. νεόφυτος, մատաղատունկ։ — Մի՛ մատաղատունկ՝ զի մի՛ հպարտացեալ անկցի յորոգայթս սատանայի (Ա. Տիմ. Գ. 6)։ Նոյնը կը թուի ըլլալ նաեւ Արաբ. բ-յ-։

*

* *

ՍԵԽԱՄԱՂՁՈՒԹԻՒՆ,

ՄԵԼԱՄԱՂՁՈՒԹԻՒՆ, Յն. μελαγχολία, Տճ. Վէրդ։ Մերս

ՄԱՌԱԽՈՒՂ, (սեռ.) մառախլ-ոյ Յն. ὀμίχλη։

ՄԱՌԱԽԼԱՊԱՏ, թուի նոյնպէս 'ի Յն. μελαγχολία, իբր զի սեւամաղձութիւն եւ մառախուղ տխրեցուցիչք են եւ հեղձամղձուկք առհասարակ։ Բաղդ. չամանդաղ։

*

* *

ԱՐՔ, Յն. ἀρχός, ἄρχων, (առաջնորդ, գլխաւոր, իշխան)։ Յորոց

ԱՐՔԱՅ, ԱՐՔՈՒՆԻ,

Յորմէ (արք) 'ի հակառակէն

ԱՐԳԱՆԱԿ, բաղդ. աշտիճան եւ աշտուճ։

ՈՒՐԿ, (աղքատ)։ —Աղօթք ուրկի (Սաղմ. ՃԱ. վերն.)։ յն. πτωχός, (աղքատ)։ — Բաշխեաց, ասէ, եւ ետ օրկաց (ուրկաց), արդարութիւն նորա մնայ յաւիտեան (Սեբեր. Թ. 181)։ Ի սաղմոսն՝ տնանկաց։

Յորմէ

ՈՒՐԿՈՏ, եւ

ՁՈՒՐԿ, ՁՐԿԵՄ, — Ձրկեալն 'ի ձէնջ աղաղակէ։ Ուրիշ է՝ զուր։

Եւ

ՈՒՐՈՒԿ, կազմութիւնը բաղդ. ուշ եւ ուրուշ։

ՈՒՐԿԱՆՈՅ,

Յորմէ (արքունի կամ Յն. ἄρχων) 'ի հակառակէն

ՈՐՔԻՒՆ, ՈՐՔԻՒՆՈՏ, այսպէս եւ

ՍԻՆԿՂԻՏՈՍ, ՍԻՆԿԼԻՏՈՍ,

(*) Այս բառը Հրեայք կը գործածէին, երբ ոչ Իսրայելացւոյ մը դէմ բարկանային, եւ անոր երեսը Թքնելով կը Թշնամանէին։

Այս բառը կը նշան. անհանճար, անարդ, դուզնաքեայ որ կամ անզգամ. — Որ ասիցէ ցեղբայր իւր յիմար (Յն. ῥακά), պարտաւոր լիցի ատենի (Մատթ. Ե. 22)։

Ցորմէ 'ի հակառակէն

ՍԻՆԼՔՈՐ, — *Զսինլքորսն ժողովրդեանն որ մնացին (Եզեկ. ԼԹ. 9)։ — Զգաւորս թագաւորին հանդերձ ամենայն սինլքորօք ժողովրդեանն* (Առ. ԽԱ. 10)։ *Բաղդ. հիւպատոս եւ հպատակ, հարուստ եւ արուեստ(աւոր), իշխան եւ խաչն(արած), նախարար եւ նախիր, (նախրարած)։*

Այսպէս եւ 'ի Պարսկականէս՝ [illegible] *(դպիր, ատենադպիր)։*

Ի մեզ

ՆՈԽԱՍՏ,

ՓԱՆԱՔ, *Պրս.* [illegible], *(դպիր, ատենադպիր)։ Ի մեզ*

ՓԱՆԱՔԻ, *այսպէս եւ Պրս.* [illegible], *որ նշ. դպիր, քարտուղար, 'ի մեզ փոխեալ 'ի* [illegible], *եւ իւր յատուկ անուն 'ի վար արկեալ փոխանակ անուան Մաշտոց, որուն համար Խորենացին երկու տեղ ակնարկութիւն կ'ընէ, թէ Մեսրոպ դպիր էր կամ քարտուղար արքունական դիւանին։*

— (Մեսրոպ) անեալ եւ ուսեալ առ Մեծին Ներսէսի, եւ յետ եղից նորա յաշխարհէ 'ի դրանն արքունի կարգեալ քարտուղար (Խոր. Պատմ. Գիրք Գ. ԽԷ.)։ — (Վարդապետն) ոչ փոքր ինչ կրէ աշխատութիւն յաղագս քարտուղարի, զի մինչեւ գնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք 'ի ճարտարաց գտանէր անդ 'ի դպրաց (Նոյն անդ. ԾԲ.)։

(Տես եւ Մաշտոց)։

Նոյնպէս Մեծին Ներսէսի սարկաւագ էր Խադ, եւ այս անունն ալ Արաբերէն կը նշանակէ գիր, ձեռագիր, գրութիւն, եւ գիտենք որ Մեսրոպ եւ Խադ տարբեր անձնաւորութիւններ են, ինչպէս որ պատմութիւնը կը ցուցընէ։

Խորենացւոյն եղբօրը Մամբրէի համար ըսուած է որ այս անունն ալ Մամբրէի իբրեւ մակդիր դրուած է, վերծանող, ընթերցող, Լատիներէն membrana, *կը նշ. մագաղաթ կամ մագաղաթեայ թուղթ, մատեան, եւ ըստ իս եղաւ որ այն երեւելի Մ*[illegible] *որ Խորենացւոյն ձեռքովը անմահացած է, ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ Մեսրոպ, այսինքն թէ Մարիբասը՝ Մեսրոպ բառին անուն է, ինչպէս Գուրգէն =Գարեգին. (մ ս ր բ, մ ր բ ս)* [illegible], [illegible], *սանք այնպիսի սուտեր են, որ ճշմարտութեան կերպարանք ունին, որով եւ աւելի վտանգաւոր են։*

* * *

ԴՐԴԵՄ, *Թրք.* [illegible] *եւ* [illegible], *նշ. խթան։ — Դրդիչ եւ ոչ բռնադատիչ (Եզնիկ)։*

ԴՂՐԴԵՄ, — *Դղրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասեն. ո՞վ իցէ սա (Մատթ. ԻԱ. 10)։ Եւ*

ԴՐԴԵՑՈՒՑԱՆԵՄ, — *Դրդեցոյց ըզԴաւիթ թուել զԻսրայէլ (Ա. Մնաց. ԻԱ. 1)· յն.* ἐπέσλεισε· *այս բառը թարգմանուած է՝ (Բ. Թագ. ԻԴ. 1)·* [illegible]։

ԴՂՐԴԵՑՈՒՑԱՆԵՄ, — *Զամենայն բանակ նորա դղրդեցոյց (Դտ. Ը. 12)։*

ԴՐԴՈՒԵՑՈՒՑԱՆԵԼ, *յորմէ 'ի հակառակէն՝*

ԴՐՆԴԻՒՆ, — *Շաչիւն կառաց եւ դրնդիւն երիվարաց (Մէք. Ա. 13)։*

ԽՈՐԴԱՄ, *յորմէ 'ի հակառակէն*

ՅՈԽՈՐՏԱՄ, *եւ*

ԽՐՈԽՏԱՄ, *բաղդ. ճիչ եւ ճիկ, չունչ եւ չչունջ, չանթեմ եւ չընթեմ, գուսան եւ քուս, գոչել եւ կոչել, հեծեմ, հեծեծեմ եւ հծծեմ։*

ԴՐԴՈՒԵՄ, *յորմէ*

ՎՐԴՈՎ, ՎՐԴՈՎԵՄ, ԱՆՎՐԴՈՎ, ԱՆԴՐԴՈՒԵԼԻ։

ԽՈՐԴ, *անուն թռչնոյ, իբր՝ խարդացող, կարկաչող, (մի՛ չփոթեր ընդ՝* [illegible]*), կամ թէ իցեն ծագեալք 'ի Պրս.* [illegible], *որ նշ. ձայն, գոչիւն աղաղակի, եւ* [illegible], *գո-*

չիւն անհաւոր, ղուրբէյթէն՝ գոչել, աղաղակել 'ի ձայն մեծ, մռնչել, Յն. ταραχή, խռովութիւն։

ԳՈՐՏ։

* * *

ՇՂԱՐՇ, Պրս. շալվար, Նչ. վարտիք։

* * *

ՍԿՈՒՏԵՂ, Լտ. scutella, նոյն նշ. եւ սա 'ի Յն. σκυτάλη (գաւազան), եւ մասնաւորապէս այնպիսի գաւազան կամ գլան, որ Սպարտացիք պատերազմի ատեն կը գործածէին, եւ այսպէս էր գործածութեան կերպը։ Այս գլաններուն վրայ՝ նեղ նեղ կտրուած երկայն թղթեր կը փաթթէին, եւ բանակին հրամանատարին տրուելիք հրահանգները կը գրէին վրան, եւ ետքը թղթերը կարգով կը քակէին վրայէն, եւ կարելի չէր ըլլար կարդալ՝ մինչեւ որ նորէն վրան չփաթթուէր՝ նոյն կարգաւ։ Եւ որովհետեւ այս գլանին հաւասարը բանակին հրամանատարին քովն ալ կար, ուստի անիկայ թղթերը վրան փաթթելով կը կարդար, կ'իմանար գրուածը։ Վերջերը այս բառը գործածուած է ամէն հրամանագրի եւ ծանուցագրի, եւ լայնաբար նշանակած է նաեւ՝ թուղթ, եւ ամէն մետաղեայ թիթեղ, եւ այս վերջին նշանակութեամբ է Լատիներէնի մէջ գործածութիւնը։

— Բերաւ գլուխ նորա (Յովհաննու Մկրտչի) թէփսիլէ (Մատթ. ԺԴ. 11). յն. πίναξ։

* * *

ՊԱՏՃԱՌՔ, Պրս. պահանէ, Նչ. չարագործ, մեղաւոր։ Բաղդ. վասն եւ մեղս, եւ փաստ, եւ եղագ, եւ յաղագս։ — Ես եւ ոչ մի ինչ պատճառ գտանեմ 'ի սմա (Յովհ. ԺԸ. 38). յն. αἰτία, Ես այս մարդուն վրայ յանցանք մը չեմ գտներ։

ՊԱՏՃԱՌԱՆՔ, — Վասն այսր պատճառանաց աղաչեցի (Գործ. ԻԸ. 20). յն. διὰ ταύτην τὴν αἰτίαν παρεκάλεσα։

ՊԱՏՃԱՌԵՄ,

Յորմէ (պատճառ) 'ի հակառակէն՝

ՊԱՏՃԵԱՆ (*), ՊԱՏՃԷՆ, իբր պատճառեալ, երկրորդական, ոչ բուն, ոչ իսկ։ Յն. ἀντίγραφον։

ՊԱՏՃԻԿ, բաղդ. օրէն եւ օրինակ, պիտակ եւ պիտակ, հաւասար եւ զուգեշտ, կտակ եւ կտակ։

* * *

ԲԱՐԵԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ, բարեկենդան՝ [illegible]։

— Ի ձայն ցնծութեան, խոստովանութեան, եւ 'ի ձայն բարեկենդանութեան (Սաղմ.). յն. ἑορτή։ — Պարծեցան ատելիք քո 'ի մէջ բարեկենդանութեան խրախճանաց (Սաղմ. ՀԳ. 5). յն. ἑορτή։ Յորմէ Տճ. [illegible]։ — Ես ասացի 'ի բարեկենդանութեան իմում թէ ոչ սասանեցայց յաւիտեան (Սաղմ. ԻԹ. 7). յն. εὐθηνία, ([illegible], [illegible], [illegible])։ — Դարձուցից զամենայն բարեկենդանութիւն նորա (Ովս. Բ. 11). յն. εὐφροσύνη։ Իսկ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, — բուն բարեկենդան, — բարեկենդան Վարդավառի, — բարեկենդան Ծննդեան աշխ. [illegible]։

Այս վերջինը բուն Պարսիկ է, առջինին ձայնին մօտեցուցած եւ յարմարցուցած, եթէ երկուքն ալ մի եւ նոյն Պարսիկ բառ չեն, այսինքն՝ [illegible], [illegible], (տօն ուրախական), Յն. ἑορτή։

Այսպէս կոչի (ըստ այժմու Պարսից) վերջին եօթնեակն շաբաթ ամսեան, որք են նախընթաց աւուրք [illegible], (աւուրք պահոց ըստ Մահմետականաց)։ (Փափաքելի էր գիտնալ թէ զրադաշտական գենը

(*) Լտ. pagina։ (Ն. Հյկ. Բռ.)։

որ առթի մէջ կը գործածէր այս բառը)։

*
* *

ՇԱՐԺԵՄ (*), Յն. σαλεύω. συσσείω։
ՇԱՐԺԼԵՄ, ՇԱՐԺՈՒՆ, ԱՆՇԱՐԺ,
Թրք. չէվիրմէք, Նչ. չարժ, Յունարէն σεισμός։ Իսկ
ՍԱՐՍԵՄ, — Բարապանաց դժոխոց տեսեալ զքեզ սարսեցի՞ն (Յոբ.)։
ՍԱՐՍՌԱՄ, ՍԱՐՍՈՒՌ, ՍԱՐՍԱՓ, եւ
ՍՐՍԿԵՄ, — Սրսկեսցի՛ք զխարաւորան եւ զերկոքումբք սեւօքն (Եզ. ԺԲ. 22)։ Թրք. սէրփմէք, սէրփիլմէք։ Այսպէս Թուրքական են
ՊԱՑԹԻՄ, ՊԱՑԹՈՒՑԱՆԵՄ, Թրք. փաթլամաք, յորմէ
ՎԱՑԹԻՄ, աշխ. պօփէլ, եւ
ՃԱՑԹԵՄ, Թրք. չաթլամաք։ Բաղդ. դրդեմ եւ դրդուեմ եւ վրդովեմ։

*
* *

ՊԱՏԻԻ, (սեռ.) պատուոյ, Պրս. փայէ։ Պրս. փայ՝ Նչ. ոտն, հին Պրս. փատ։ Իսկ
ՊԱՏՈՒԱՆԴԱՆ, Պրս. փայէնտան՝ Նչ. ոտքին կողմն՝ անգղոց ուստի լինի վերելակել։
Պարսիկ բառդ նշանակէ նաեւ՝
ՊԱՏԱՆԴ, Նշան հաստատութեան՝ ապահովութեան, Թրք. րէհին։

*
* *

ԽՈՒՆԱԽԱԳՈՒԹԻՒՆ (**), Թուխ թարգմանութիւն Պրս. ձայնիս խանտար. խանտալար. (խան, խօն, Նչ. սեղան, եւ տար, տալար, գլուխ, գըլխաւոր պետ. որով խունախագ՝ նշանակած կըլլայ՝ սեղանապետ, տաճարապետ, որուն ուրիշ բառով կ՚ըսենք
ՀԱՑԵՐԷՑ, — Ո՞ւր մեզ խունախագութիւնն եւ խոհակերութիւնն պիտանացու է (Ոսկ. Մ. Բ. 24)։

*
* *

ՀԱՄԲԱԿ, Պրս. հէմքա, Նչ. ընթացակից, օգնական, հետեւող, իսկ Յն. ὄμφαξ, (սեռ.) ὄμφακος, Նչ. խակ, տհաս, (պտուղ, հասակ)։
— Դիոգինէս համբակ տեսանելով ստահակեալ՝ զմանկածուն տանջեաց (Պէտ.)։ Բաղդ. դաստիարակ։
Յորմէ ՚ի հակառակէն
ԱՄԲՈԿ, եւ
ՅԱՄԲՈԿ ԱԾԵՄ,
ՍՏԱՄԲԱԿ, բաղդ. եղծանեմ եւ ապեղծանեմ, գտանեմ եւ ստգտանեմ։ Յորմէ
ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ, — Արդարացաւ ամպարշտութիւնն Իսրայելի առ ապըստամբութեամբն Յուդայ։
ԱՊՍՏԱՄԲ,

*
* *

ՎՍԵՄ, Յն. εὔσημος, Նչ. բարենշան, երեւելի, անուանի, նշանաւոր, մեծ, եւ εὔσεμνος, պատուական, յարգելի։

*
* *

ԳՈՅՆ, (երանգ), Պրսկ. կէօն, Զէնտ՝ կաօնա, նոյն նշանակութեամբ, կը նշանակէ նաեւ՝ պէս, նման, համգոյն, իսկ (Բ. Օրէն. ԻԲ. 22)։ «Հարցէ զքեզ... խորշակաւ եւ գունով»։ Յոյնն ունի ὦχρα, (դալուկն, դեղնութիւն), որ ՚ի մեզ թուի ընթերցեալ՝ χρόα, որ նշանակէ գոյն, մանաւանդ զգոյն երեսաց։

(*) Մենք չենք վարանիր՝ շարժել բային նախաձայն շ տառը նախդիր նկատելու, որով կը մնայ՝ արժ. (Հնդեւր. Նախ. 64)։

(**) Ն. Հյկ. Բռ. ստուգաբանէ զբառդ «ի Պրս. խուն (արիւն) կամ ՚ի Հյ. խունկ։ Զանգումն ուտելեաց արեամբ՝ ըստ աւագաց Լիւգացւոց. ճամադամք, յօրինուածք խորտկաց»։
Եւ այսպէս ստուգաբանելուն պատճառը այս լինել կը թուի, Յն. καρίκη, καρυκεία, կենդանեաց արիւնով պատրաստուած տեսակ մը Սօս (sauce) անուն է, և կը նչ. ընտիր խորտիկ, եւ καρικοπαιός, նշանակէ խոհակեր։

Տե՛ս քաւնաւ ։

ԳՈՒՆԱԿ, Գրս. կէօնէ ։

ԳՈՒՆԱԳՈՅՆ, Գրս. կէօնէ կէօն ։

ՀԱՆԳՈՅՆ, Գրս. Հէմկէօն, էյնկէօնէ, ընկէօնէ ։ Նոյն Պարսիկ ձայն փոխի 'ի կէյն, որպէս եւ 'ի մեզ

ԳԻՆ, եւ

ԳՈՆ, իբր մասնկունք ։

ՏՐՏՄԱԳԻՆ ; Գրս. էնտօհկէյն ։

ԽՆԴԱԳԻՆ, Գրս. խօշկէյն ։

Ո՛ՐԳՈՆ, իբր՝ ո՛ր գոյն, ո՛րպէս ։ Բազդ. ո՛րգան ։

Նաեւ իբր մասնիկ՝ առաւելու-թեան նշանակող, ('ի մեզ),

ԻՄԱՍՏՆԱԳՈՅՆ, ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ ։

Ունինք նաեւ՝ Լատին մասնիկ մը tio, (սեռ.) tionis, սա տարբերու-թեամբ որ 'ի մեզ՝ բառին եւ մաս-նիկին միջ ու վանկի մը յաւելուած կը մանէ, եւ առանց անոր չըլլար, ուստի

..ԹԻՒՆ, կըլլայ՝ արքայ-ու-թիւն, զօր-ու-թիւն, եւայլն ։

Յորմէ իբր համառօտեալ

ՈՅԹ, (սեռ.) ու-թ-ի ։ —երեւ-ոյթ, ալեւ-ոյթ, ծածկ-ոյթ, ունինք նա-եւ թուրանական,

ԻՉ, — փրկիչ, ուսուցիչ, (ճի, չի), — պէք-ճի, կէօ-ճի ։

ՈՒՉ, — տեսուչ, ընկալուչ, (պաք-տա-ճըն, տըր-ճը, կէօր-էն-ճէ ։

ԻՃ, — ուտիճ, կապիճ, գրուիճ ։

ՈՒՄՆ, — գոչումն, բեկ-ումն, — ցաս-ումն, (ալըմ, ապըրմ, դէօ-քէմ, պէլիմ, կէլիմ, տալըմպամ, դօ-յամ ։

*

* *

ՀԵԳ, ՀԵԳԵՆԱՑ, ՀԵԳԵՄ, Ա-րաբ. հէճէ, նշ. վանկ, եւ հէճէլէ-մէք, նշ. հեգել ։ Յորմէ

ՀԱԳԱԳ, յորմէ

ԾԵՔԵՄ, ԾԵՔԵՆԱՑ, բաղդ. բար-բառիմ եւ բարբարիմ ։

*

* *

ՊԱԽ, աշխ. խօլած մօ, հօլլամօ, (ըստ բացատրութեան Ն. Հյկ. Բռ.) ։ Գրս. քէօխտէն՝ նշ. եփել ։ — Ոչ ու-տիցէք 'ի նոցանէ հում, եւ ոչ պախ՝ եփեալ ջրով (Ել. ԺԲ. 9) ։ յն. ἡψημένον ἐν ὕδατι ։

Դիտելի է որ այս բերուած վկա-յութեան մէջ՝ պախ բառին դէմ Յու-նարէնին մէջ բառ մը չկայ, իսկ խօլած մօը բառարանինն է, իբր տեղին յարմարաւոր խօսք մը ։ ուս-տի պիտի ըսենք թէ եփեալ ջրով կրկնութիւն մը նկատուելու է՝ իբր պախ բառին բացատրութեան համար գրուած ։ — Ոչ ուտիցէք ... պախ, այսինքն՝ եփեալ ջրով կամ 'ի ջուր ։

Ուրիշ է

ՊԱՂ, Յն. πάγος, πάχνη, (սառ, պարզ, եղեամն) ։

ՊԱՂԻՄ, — Պաղեցան որպէս պա-րիսպ ջուրք, պաղեցան ալիք 'ի մէջ ծովուն (Ել. ԺԵ. 8) ։ Յն. παχνίζω, παχόνω, παγόνω, (սառիլ, պնդանալ) ։

*

* *

ՇԻԳՂ, գրի եւ չինգղ, չինկղ ։

— Զգենուլ ծիրանիս կամ արկա-նել շիգղ ոսկի (Ա. Մկ. ԺԴ. 44) ։ (Յն. πόρπη), ճարմանտ, օղամանեալ հանտերէյէս ։

Բառս ծագի 'ի Յն. σύγκλωσις, որ նշ. միաւորութիւն, մանուած, փա-թոյթ, շղթայ, օղակ շղթայի, հիւ-սուած ։

*

* *

ԱՅԼ, (շռ.), Յն. ἀλλά ։

Ա՛ՅԼ, (ած.), Յն, ἄλλος ։ Թրք. էլ, նշանակէ օտար ։

ՏԱՊԱՐ, Գրս. թէպէր նոյն նշ. Իսկ

ՏԱՊԱԼԵՄ, յորմէ

ԹԱԽԱԼԵՄ, — Եւ հայեցեալ տե-սին զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն (Մար. ԺԶ. 4) ։ յն. թաւալեալ էր վէմն ։

Թրք. տէփրէշմէք, (տեպրէշմէք)։ Բաղդ. ուրիշ Դուրանականներու հետ, չարժել, սարսել, պայթել, ճայթել։

* * *

ՍԵՐԿԵՒԻԼ, Արաբ. սէֆէրճէլ, նոյն նշանակութեամբ։ Բաղդ. խնձոր, ծմերուկ, սանձ, գեղձ, թուղ, թութ, վարունգ։

* * *

ՍԱՀՄԱՆ, Պրս. սաման, նոյն նշ. Տես եւ՝ որոշեմ, որիշ։

* * *

ՆՍԵՄ, Պրս. նէշէմ, նէշմ, նէժմ, նշ. մթութիւն գիշերային, խաւար գիշերոյ։

* * *

ՎԱՐՈՒՆԳ, Պրս. խարէնդ, նշ. վարունգ խոշոր՝ սերմանացու։

* * *

ԿՏԱՊ, Պրս. կէտապ, նշ. քաղցու թանձրացեալ, ռուփ, Տճ. բէքմէզ: —Սիրէին կտապս չամչէզէնս (Ովս. Գ. 1)։ Յն. πέμμα, (կարկանդակ, եւ ամէն տեսակ անուշահամ խմորեղէն, խամուրլու բէտէ, չէօրէք)։

* * *

ՀՐԱԶԴԱՆ, Պրս. խէրէզդան, յատուկ անուն մարդոյ (Դուրանական)։ Իսկ առ Խորենացւոյ յիշատակի իբր անուն գետոյ. «Շէնս պարգեւեալ նմա առ Հրազդան գետով»։

* * *

ԴԱՅԵԱԿ, Պրս. տայէհ, Յն. τιθήνη, τιθή։ Իսկ

ԴԻԵՄ, Յն. τιθάζω τιθάζομαι, θάομαι, (ապռ.) θήσομαι։

ԴԻԵՑՈՒՑԱՆԵՄ, τιθηνεύω։ —Դիեցոյց նոցա մեղր 'ի վիմէ, եւ իւղ յապառաժ վիմէ։ Յն. τιτθή, նշ. պտուկունք ստեանց։

ԴԱՅԵԿԵՄ, տէյէյօ-յօնէլ։

ԴԱՅԵԿՈՐԴԻ, — Մանայեն դայեկորդի Հերովդի (Գործ. ԺԳ. 1). յն. σύντροφος, (ծննդակից)։

* * *

ՄԻԹԷ, լաւ եւս է գրել այսպէս քան մի թէ։ Յն. μήτι, նոյն նշ.
— Սկսան ասել ցնա մի ըստ միոջէ, միթէ ես իցեմ, եւ միւսն միթէ ես իցեմ (Մարկ. ԺԴ. 19). յն. μήτι ἐγώ... μήτι ἐγώ։

* * *

ԱԽԱ՛Ղ, Պրս. ախա՛խ, նոյն նշ.։

* * *

ԲԱՀ, Պրս. ֆեհ, նշ. թիակ նաւու, եւ թի՝ որով խառնի շաղախ 'ի պէտս շինուածոյ։

* * *

ՔՈՒՐԱՑ, — Առի զերեսուն արծաթին, եւ արկի 'ի տուն Տեառն 'ի քուրայն (Կոչ. Ընծ.)։ Բառ Պարսիկ քէօրէ, որ նշ. բովք, հալոց։
Գրի եւ
ՔՐԱՑ (յետին), յորմէ
ՔՐԻԱԿԱՆ, — մեղք, — յանցանք, իբր ոճիր 'ի մետաղս 'ի բովս դատապարտելի։

* * *

ԿԱՆԵՓ, Պրս. քէնէվ, քէնէբ, քէնէվիր, քընեապ, Յն. κάναβος։

ԹԱՇԿԻՆԱԿ, Պրս. դէժէք, նոյն նշ.։ — Տանէին 'ի քրտանէ նորա թաշկինակս (Գործ. ԺԹ. 12)։ յն. σουδάριον, որ է բառ Լատին sudarium։

* * *

ՍՈՒԴԱՐ, — Ի վերայ ապիտակ սուդարին զթուխ նամփորտն յօրինեսցէ (Ոսկ.)։

* * *

ՃԱՀԻՃ,

ՃԱԽԻՆ, ՃԱԽՃԱԽՈՒՏ, ՃԱԽՆԱՑԻՆ,

Ցորդ աչխ.

ՃԽՃԽԱՆՔ, ՃԽՃԽԻԼ, *Պրս.* چاه, *նշ. ջրհոր, եւ* آب, *նշ. գետ, ջուր*։

ՅԱԻԷՏ, *Պրս.* ياقوت, *Սանսքրիտ* [illegible]։

ՅԱԻԻՏԵԱՆ, *Պրս.* [illegible], *Սանսք.* [illegible]։

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ, *Պրս.* [illegible]։

Աչխ.

ԱՏԵՆ, (*ժամանակ*), *կը թուի աս-կէ առնուած*։

*
* *

ՓՈՐ, (*գլ.*), *Յն.* φορός, *նշ. կրող*՝ — *Երանի որովայնին որ կրեաց զքեզ* (*Ղուկ. ԺԱ. 27*). *յն.* κοιλία, *նշ. որովայն, եւ* κοῖλος, *գոգաւոր, եւ* κοιλένω, *նշ.*

ՓՈՐԵՄ, *յորմէ*

ՓՈՐ, *յորմէ*

ՓՈՐՈՏԻ։

Ուրիշ է՝ փոր (*կարապ*),
Ուրիշ է՝ փոր (*ած.*)։

*
* *

ՎԱՂԵՄ, *յորմէ*

ՎԱՂՎԱՂԵՄ, *որպէս, կկկցեմ, վաղվաղեմ, Լտ.* vago, *նոյն նշ.*։ *Յն.* βιβάζω, *նշ. ընթանալ, ընթացուցանել*։

*
* *

ՏՈՒՐԵԻԱՌ, *Թարգմ. Պրս.* [illegible], [illegible], [illegible]. (*առւաւուր*)։

*
* *

ՔՂԱՄԻԴ, *Յն.* χαμυς, (*սեռ.*) χλαμίδος։ — *Արկին զնովաւ քղամիդ կարմիր*։ *Յորմէ ձեւացեալ*

*
* *

ԱՄՂԱՆ, — *Տեսի յաւարին ամ-ղան մի նկարէն* (*Յես. Է. 21*)։

*
* *

ԽՈՐԷՆ, *անուանի քաջ զօրա-վար, 'ի թիւս որոց Վարդանանց. կայ նաեւ համանուն վկայ աօնելի ընդ Աբրահամու վկայի*։

Պարսկերէն ալ կայ՝ [illegible], *որ նոյնպէս հաչակաւոր քաջի մը ա-նունն է*։

*
* *

ՋՐԳՈՂ, *Թարգմ. Յուն.* κλεψύδρα (*գործի ժամանակաչափ առ Աթե-նացիս 'ի պէտս ճառից ատենա-խօսաց*)․ *իսկ* (*Ղուկ. ԺԴ. 2*). «*Այր մի էր անդ ջրգողեալ*»։ *Յն.* ὑδρωπικός, *այս Յունական բառը կը նշանակէ՝* ὕδρωψ *բռնած ախտով վարակեալ, եւ այս ալ՝ տեսակ մը հիւանդութիւն է, որ մորթոյն ներ-քեւ ջուր կը հաւաքի*։

*
* *

ԱՆԴՈՀ, ԱՆԴՈՀԱԿԱՆ, *Պրս.* اندوه, *նշ. հոգ, վարանք, տխրու-թիւն*։

*
* *

ԱՆՕՍՐ, *Արաբ.* عنصر, *նշանա-կէ՝ տարր*։

*
* *

ՈՒՐԱՐ, *գրի եւ՝ որար, Յն.* ὠράριον։

*
* *

ԲԱՂԱՐՋ, (*անխմոր հաց*) *Տճ.* [illegible], [illegible], *Պրս.* [illegible], *Թրք.* [illegible], *որ թարգմանի ծրար փոք-րիկ, Լտ.* buccella, (*պուչչէլլա*) *տեսակ մը հաց* (*առ Հռովմայեցիս*), *որ կայսերք ժողովուրդին կը բաժ-նէին*։ *Տես՝ կարկանդակ*։

Ալիւր զանգեալ ջրով, Հայս ան-խմոր՝ եփեալ 'ի մոխրի, որ կոչի Թուրքերէն [illegible], *եւ թարգմանի* [illegible]։ *Յն.* ὁ ἐγκρυφίας ἄρτος, *խմոր ծալածոյ*։ — *Եւ առ ժողովուրդն զհայսն իւրեանց մինչչեւ խմորեալ*

էր, եւ զզանգուածս խմորեանց ծրարեալ 'ի կապուտ խմորեանց (Ել. ԺԲ. 34)։ —Եւ եփեցին զհայսն զոր հանին յԵգիպտոսէ՝ նկանս (ἐγκρυφίας) բաղարջս (Ել. ԺԲ. 39)։ Յն. καὶ ἔπεψαν τὸ σταῖς ὃ ἐξήνεγκαν ἐξ Αἰγύπτου ἐγκρυφίας ἀζύμους. ὁ ἐγκρυφίας ἄρτος (pain cuit sous la cendre), հաց եփեալ 'ի մոխրի։

* * *

ՀՐՈՒՇԱԿ, աշխ., Տճ. հէյլէ, Պրս. ֆէրաւշէ, Նչ. ձաւար, Տճ. պուլկուր։

* * *

ԱՓՍԵԱՑ, գրի եւ ափսէ, Յն. ἐψάνη, Նչ. պնակ, եւ ἀψίς, ἀπσὶς, պնակ բոլորշի։ Պրս. սէհան, յորմէ 'ի մեզ՝ սան։

* * *

ԺԱՆԻՔ, Պրս. ճէնէ՝ Նչ. կնճիթ փղի, ֆիլ խօրթումու, իսկ աշխ.
ԱՂՐԱՑ, կը թուի աղօրէ բառէն ձեւացութիւն մը։
Տես նաեւ՝ ակառն։

* * *

ԿԱՊԻԿ, Պրս. քէպպէ։

* * *

ԲՐԱԲԻՈՆ, Յն. βραβεῖον, նշանակէ՝ մրցանակ։

* * *

ԲԱՂԱՆԻՔ, Յն. βαλανεῖον։

* * *

ԳԱՒԱԶԱՆ, Պրս. չէվկան, չէվկէնէ, Նչ. խթան եզին, իսկ
ԽԱՐԱԶԱՆ, թուի ըստ օրինակի վերնոյն կազմեալ, 'ի Պրս. բառէս՝ խառ, որ Նչ. էշ։ — Եւ արար խարազան չուանեայ։

* * *

ԶՕՇԱՔԱՂՈՒԹԻՒՆ,
ԶՕՇԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ, Յն. αἰσχροκέρδεια, (ամօթալի շահ), Պրս. չիրքին, Նչ. ամօթալի, տգեղ, աղտեղի, պիղծ։ Յորմէ
ԶՕՇՈՑ, ԶՕՇՕՏԵԼ ԱԶԱՑ, իբր տգեղանալն աչաց՝ չկարելովն հայել համարձակ (կէօզ քամաշմագ)։

* * *

ՀԱՒԱՍԱՐ, յորմէ
ՀԱՍԱՐԱԿ, իբր՝ համասարէ։
— Որք սերմանեն եւ որք հնձեն, հասարակ ցնծասցեն։ (Աշխ. համառարակէս ասքախանա)։ Յորմէ
ՀԱՍԱՐԱԿԱԾ
ՀԱՍԱՐԱԿՈՐԴ, — Հասարակորդս մեզ արարեր զգոսս (Մակք. Ի. 12)։ Յն. ἴσος, (հաւասար)։
ՀԱՍԱՐԱԿ ՕՐ, կամ Օր հասարակ, յորմէ ազաւաղեալ աշխ. օհարաւէ։ Հասարակել աւուր, — զհասարակ գիշերաւ։
ՀԱՍԱՐԱԿԵԼ, նոյն է ընդ
ՀԱՒԱՍԱՐԵԼ, Պրակ. հէմահէր, նոյն նշանակութեամբ։ Բաղդ. համեմատ

* * *

ՀԱՆԱՊԱԶ, Պրս. էնպազ, հէմպազ, Նչ. ընկեր, իբր՝ բաղմակից, սեղանակից, հաղորդ հացի։ Յորմէ
ՀԱՆԱՊԱԶՈՐԴ, ՀԱՆԱՊԱԶՈՐԴԵՄ, կազմութիւն բառից է ըստ օրին. հաղ-որդ, բագ-որդ, բաժան-որդ, հասարակ-որդ, կամ իբր Յն. συνέστιος, եւ կամի ասել, ընկերական, սովորական, ամենօրեայ։ — Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր (Մատթ. Զ. 11)։ Յն. ἐπιούσιος, որ ինչ կարեւորն է օր ըստ օրէ 'ի պահպանութիւն կենաց։
—Էին հանապազորդեալք ... հաղորդութեան բեկանելոյ հացին (Գործ. Բ. 42)։ Տես Հաղորդ։
Հանապազորդ բառին տարբեր առումը՝ բաղդ. մխիթարիչ, հիմն,

քաղաք, բերկրեալ, ազնիւ, արեւ, պատարագ. Որք իրենց նախնական նշանակութենէն հեռացած, եւ նոր նշանակութիւն մը առած են.

*
* *

ԵԲՐԱՅԵՑԻ, գրի եւ հեբրայեցի. Յն. ἑβραῖος, որուն երկրորդական 'ի մեզ' զատ կարդացուած է, այս Բառերս վերջին մասը եղէ, ունինք նաեւ այլ կերպարանքով, Իսրայէլացի, Ղեւտացի, Դիոսկուրացի, Հայեցի կամ Հայացի.

Այս մասնիկը Յոյնն ալ ունի, ιστὶ, — ἑλληνιστὶ, ἑβραϊστὶ.

Նոյն է ասել եւ

ՀՐԵԱՅ, (սեռ.) հրէ-ի.

Կազմութիւնն է այսպէս, Յն. ἑβραῖ εβ, իբր թէ. ευ, փոխ 'ի Հ, (տես՝ հյու եւայլն), եւ ραῖ, ռէ. ուստի հրէ՝ առնելով ի յանգը՝ կը կազմէ բառիս սեռականը՝ Հրէ-ի, եւ որովհետեւ ամէն սեռական հոլովի որ եով կը վերջանայ, ուղղականը կըլլայ եայ, (պաշտօնէ-ի, պաշտօնեայ, փախստէ-ի, փախստեայ), այսպէս եւ հրէ-ի, հրեայ, եւ ածանցքը կըլլայ

ՀՐԵԱՐԷՆ, ինչպէս նաեւ

ԵԲՐԱՅԵՑԵՐԷՆ, թէպէտ ըսող եղաւ թէ «Հրեայ, Յն, ἑβραῖος, — Հեբրայեցի բառին ստուգաբանութիւնն է Միջագետի գաւառին բնակիչք», (տե՛ս Լեզու, 1887, Հոկտեմբեր). սակայն մենք զմին միւսին պէսպիսութիւնը կը նկատենք, եւ թարգմանչին ըքանչելի ճարտարութիւնը, Յունական երկու բառերու դէմ երկու բառ գտնել կարող ըլլալու համար. Թէ որ Հրեայ՝ Եբրայեցի բառին աղաւաղութիւնն է, ո՛վ է մեղաւորը. — Խանգարիչն Իսրայէլի (Գ. Թագ. ԺԸ. 17).

Զի դիտելի է որ թէպէտ Եբրայեցի եւ Հրեայ մէկ ըլլայ նշանակութեամբ, սակայն Ս. Գրոց թարգմանութեան մէջ՝ մէկը միւսին տեղ յախուռն գործածուած չէ, այլ միշտ ἑβραῖος ին դէմ Եբրայեցի, եւ ἰουδαῖος ին դէմ, (որ մասնաւորապէս Յուդայեան կը նշանակէ Հրեայ գրուած է. Այս դիտողութիւնը մեզմէ յառաջ ըրած է Ն. Հյկ. Բռ..

Իսկ գալով Եբրայեցի բառին ստուգաբանութեան, երկու կերպ կը մեկնուի, առաջին կ'ըսուի թէ Եբեր (որ Սեմայ թոռան թոռն է), առնուած է, իբր երեւելի նահապետէ մը. ոմանք ալ կ'ըսեն թէ, Եբրայեցերէն (ի՛վրի), արմատ՝ (էպէր) բառն է, որ կը նշ. յայնմ կողմանէ, այսինքն՝ յայնմ կողմանէ գետոյն (Եփրատայ), եւ գետին միւս կողմը անցնող. Այս անունը տուին Աբրահամու, եւ ըսին՝ Եփրատի կողմերէն եկած ուստի երբ եօթանասնից մէջ (Ծննդ. ԺԴ. 13) կը կարդանք, «Եհաս ոմն եւ պատմեաց Աբրահամու յայնկոյս կողմին». Յն. ἀπήγγειλεν Ἄβραμ τῷ περάτῃ, Բնագրին մէջ կ'ըսէ՝ Աբրահամու Եբրայեցւոյ.

Կ'երեւի թէ ուրիշները տուին նոցա այս անունը, եւ անոր ցեղը ուրիշներէն ըսուեցաւ Եբրայեցի, քանզի անոնք ինքզինքնին կ'անուանէին Իսրայէլ, Իսրայէլացի, ինչպէս որ մենք զմեզ կ'անուանենք՝ Հայ, եւ ուրիշները զմեզ կ'անուանեն Արմէնիոս.

Իսկ (Ա. Թագ. ԺԷ. 8). «Ո՞չ ապաքէն ես այլազգի եմ, եւ դուք Եբրայեցիք ծառայք Սաւուղայ». Յոյնը կ'ըսէ՝ «Եբրայեցիք Սաւուղայ», բնագիրը կ'ըսէ՝ «Ծառայք Սաւուղայ», Հայերէն թարգմանութեան մէջ՝ բառին երկու նշանակութեանը համար երկու բառ գրուած է.

*
* *

ՊԻՀ, (գոյք, ստացուածք), Պրս. պէհ՝ նշ. բարի. — Յափշտակել զպիհս

ուրուք (Ո․կ․)։ Ցորմէ Թերեւս
ԴԺԳՀԻ, կամ Թէ իցէ իբր համառօտութիւն բառիս՝ դժգոհեն։
ԴԺԳՀՈՒԹԻՒՆ, ԴԺԳՀԵԼ։

* * *

ԱՂԱՆԴ, — Զգուշանալ յաղանդոյ փարիսեցւոց (Մատթ. ԺԶ. 12)։ Յն. διδαχή, վարդապետութիւն, նաեւ՝ δόγμα, θρησκεία։

Պրս. ալա, նշ. Թոյն, եւ ալէանդէ, նշ. տեսակ մը խաշոր՝ Թունաւոր սարդ։ Իսկ

ԹՈՅՆ, Պրս. Ֆիհէյն՝ նշ. օձ, վիշապ, եւ Ֆա՛ուն նշ. ժամանաման, սրածութիւն, (Խաստատուբրեթ)։

* * *

ՎՐԷՊ, Պրս. Ֆէրէպ, նշ. Թիւր, խոտոր, եւ Ֆէրէպ՝ նշ. խաբկանք, սխալումն։

ՎՐԻՊԻՄ, Պրս. Ֆէրէպէտէն՝ խաբել, մոլորեցուցանել։ Եւ

ՎՐԻՊԵՑՈՒՑԱՆԵՄ

ՎՐԻՊԱԿ, — Ոչ ձեռն նորա եկն 'ի վերայ մեր, այլ վրիպակ ինն գործեցաւ (Ա. Թագ. Զ. 9)։ Յն. σύμπτωμα (պատահումն)։ Նոյն արմատէն լինել կը Թուի նաեւ

ՀՐԱՊՈՅՐ, — Որ արբուցանէ ընկերին հրապոյրս պղտորս։

ՀՐԱՊՈՒՐԵՄ, նաեւ

ՀՐԱՒԷՐ, ՀՐԱՒԻՐԵՄ։

* * *

ԴԻՊԱԿ, (Եսայ. Գ. 21—24)։

ԴԻՊԱԿԱԳՈՐԾ, — Փոխանակ ոսկեհուռ դիպակագործ պատմուճանից քուրձ զգեցիր (Ո․կ. Ես.)։ Պրս. տիպա, նոյն նշանակութեամբ։

* * *

Գ, երրորդ գիր ըստ կարգի Հայերէն այբուբենից, սակայն ձայնիւն եւ ձեւով նոյն է ընդ Լատինականիս g. իսկ Յունական այբուբենի կարգաւ՝ նոցա երրորդ գրոյն, այսինքն, γ ին կը պատասխանէ, Գէօրգ, Գրիգոր։

Յունական γ (Γ) գրին ձեւէն հնարուած է մեր Ր գիրը, եւ անոր իբր կրկնութիւնը՝ Ռ։

Երկրորդ՝ մեր Ղ գիրը՝ հակառակ գիրքով. իսկ մեր Լ գիրը ձեւովն ու ձայնովը Լատին է (L), եւ գիտելի է որ Թէ՛ Հայ եւ Թէ՛ Լատին այբուբենից երկոտասաներորդ գիրն է, սակայն սա ըսել պէտք է որ Լատինին ալ այս գիրը Յունաց Γ ին շրջուն ձեւն է, եւ կերպով մը՝ դարձեալ նոյն Γ գիրն է։

Ի Յոյնն λ իբրեւ Թուանշան՝ նշ. 30, որպէս եւ Լ 'ի մեզ։ Ասոր համար է որ Յունական γ գիրը մերթ Լ Թարգմանած են, մերթ Ղ։

Աղ, աղաղակ, եղէգն, աղօրիք, աղամ, Ղուկաս, Պաւղոս, Հեղինէ, Լուկան, Գաղիլիա, Էմմանուէլ, Հելլեն, ալեւր, եւ, հիմայ մեզի կարելի է երկուքն ալ 'ի գործ ածել, սակայն միշտ ծայրայեղութենէ փախչելով։

Այս է, կարծեմ, լուծումն այն բազմակնճիռ հանգոյցին, եւ այն հռչակաւոր կրակոտ վիճաբանութեան, «յաղագս Լ եւ Ղ տառից մերոց(*), որ տեղի ունեցաւ երկու նշանաւոր հանճարներու մէջ։

* * *

ՄԱՇԵՄ, Յն. μασάομαι, նշ. ուտել, կլանել, սպառել, ծախել։

* * *

(*) Բանասիրաց հաճելի ծառայութիւն մը ընելու մտօք՝ երկասիրութեանս աւարտը կը դնեմ միատեղ՝ յիշեալ երկու վիճաբանութիւնները, որոց առաջինը տպուած է յաղագս Զարգացելոց [illegible] վերջը, իսկ միւսը առանձին տետրակ մ'է տպագրեալ 'ի Մխիթարեանց, 'ի Վենետիկ, 1852։

ՈԶՆԻ, Յն. ἐχῖνος, նոյն նշանակութեամբ, (ἐχῖνος)։
4312

• • •

ՎԱՌ, ձայն, Յն. ἡ βαρέα։

• • •

ՓԱՐԱԶՈՒՆՔ(*), — Պակասեցին փարազոնք բնակելոյ 'ի մէջ Իսրայէլի, պակասեցին մինչեւ յարուցեալ Դեբովրա, մինչեւ յարեաւ մայր Իսրայէլի (Դատ. Ե. 8)։ Յն. պերազոն յիսրայէլի . . . մայր յիսրայէլի։

Պրս. պէրազէնդէ, նշ. փառաւոր, փայելուչ, եւ բէյրամ, ֆէյրամ, բէրամ, նշ. հզօր, քաջ, յաղթող, վարի առ նոսա եւ իբր յատուկ անուն, անուն ծանօթ առ մեզ

ՊԵՐՈԶ, սատի է 'ի մեզ'

ՓԱՌՔ, ՓԱՌԱՒՈՐ, ՈՒՂՂԱՓԱՌ, խակ (Ամբ. 9). «Ցանկացան իբրեւ գարեղէն նկանակի Աստուածոյ օտարաց անուանց» ընկալեալ օրին. Յն. ունի ընդրեցին Աստուածս նորս, բայց կայ ուրիշ օրին. մը որ կ'ըսէ՝ ἠρέτισαν ὡς ἄρτον κρίθινον, ցանկացան իբրեւ գարեղէն նկանակի (աստուածոց նորոց)։

ՀՈՅԶ, Տճ. խօշ։

• • •

ԿԱՄՔ, Պրս. գեամ, նոյն նշանակութեամբ։ Այս Պարսիկ բառ նշանակէ նաեւ

ՔԻՄՔ։

• • •

ԹՆԾԿԱՄ, աշխ. Բեշլամ, չէմ բամ, տղայոց ձայն արձակելն տրտնջելով։ Տճ. Բըլմաք, ձայն հանել, բարբառել։ — Խնդրեցէ՛ք եւ տացի ձեզ, որպէս թնծկալով կորիւնք հայցեն (Եփր. Խրատ)։

• • •

ԹՆՋՈՒՔ, աշխ. Բնճամ, աղգ ինչ ուտելի։ Ջամբռելով պնդացած մազերու վրայ խօսելով։

• • •

ԴԱՄԲԱՆ, Յն. τύμβος, նոյն նշանակութեամբ։

• • •

ԳԱՄՓՌ, (Տես եւ շուն, կուզր, սինդիկ)։ — Մին յոլազ լաւ է քան զհազար զամփռ շուն (Ովկեփոր)։ Նշ. շուն Յն. κέρβερος, կերբեր, շուն՝ պահապան դրանց դժոխոց (ըստ առասպ.), Արաբ. քելբ, եւ Եբր. քալբ, նշ. շուն։ (Տես եւ քարբ)։ Ուրիշ է

Ի Ս. Գիրս (Տես 'ի Ցոբ), Դժոխքը դռնապաններ ունի, (թերեւս դուրս ելլել ուզողներն արգելելու համար), որովհետեւ մուտքը ազատ է, (entrée libre)։ — Բարապանաց դժոխոց 'ի տեսանելն զքեզ (կամ տեսեալ զքեզ) սարսեցի՞ն։

(Ծննդ. Գ. 24), «Եւ հրամայեաց քերովբէից կամ քրովբէից եւ բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց»։ (Ներս մտնելը արգիլելու համար)։ Եբրայեցերէն բառը կը նշ. պահապան։

• • •

ՄԱՏԻՏ, (բառ յետնոց), Տճ. գուրշուն գալէմ, Արաբ. մըդադ, նշ. մելան։ Բաղդ. Թանաք։

• • •

(*) Որպէս Թէ փառազուն, փառազն, փառաւոր եւ ճոխ ըստ ազգի, ճարուստ, հզօր։ Այսպէս Թարգմանի 'ի Յն. Լտ. Եբրայական բառն ֆերազի կամ փերազի. զի եւ ֆազ կամ փազ ըստ Եբրայեցւոց է փառք։ Իսկ (Դատ. Ե. 8), վասն բառիս բնակելոյ (որ չիք յայլս) եդին ոմանք 'ի Հայոց 'ի Լս. համեմատ բառիս փարազոնք իբր մեկնութիւն՝ զօրութ, որպէս եւ ցարդ ընթեռնուն ոմանք յԵբր. փերազոն կամ փերազօթ, նշանակութեամբս՝ բնակութիւն, աւան, գաւառ. ուստի եւ 'ի Հին Բռ. փարազունք, աւանք, եւ յատեփորիկ ինչ՝ փարազոնք, գեղ, շէն։

ԶՄԵԼԻՆ , գրի եւ

ԶՄԻՂԻՆ , ԶՄԻԼԻՆ , Յն. σμίλη, (կարոց փոքրիկ եւ հաստ յսյժ , ածելի վարսավիրայի)։

— Կարեաց զայն զմելինաւ զըպրապետին (Եզեկ. ԼԶ. 23)։ (Ա՛յլ օրին. ուստուրա)։ Յն. ξυρός , ածելի։ Իսկ

ԶԵՄԵՂԵՄ , եւ

ԶՄԵՂԿԵՄ , երկու տարբեր գրչութիւններ , եւ երկուքն ալ երկբայելի , մինչեւ որ ժամանակը ուղիղ ընթերցուած մը երեւան հանէ . տակայն եւ այնպէս մեզ կը թուի թէ՝ երրորդ ընթերցուած մըն ալ պիտի ըլլալ՝ զմեղել, ծագումն առնելով զմելին կամ զմեղին բառէն։ (Տես 'ի վերոյ)։ Այս տեղ կը յիշեցընենք որ մեր ածելի (ուստուրա) բառին ծագումն տուած է Պրս. ազարդէն կամ ազուրդէն բայը , որ կը նշանակէ՝ երկաթեայ սրածայր գործիքով մը կոթել կամ վիրաւորել . ուստի այս առմամբ զմելին կամ զմեղին բառէն ծագումն առած կը թուի զեմեղեմ կամ զմեղկեմ , եւ կամ զմեղեմ , նշանակելով իբր՝ վշտացուցանել կամ վնասել ։ Եւ ակէց է նաեւ

ՄԵՂԱՆՉԵՄ , որ իր բուն նշանակութիւնն է՝ վնասել ։ — Ոչ եթող մարդկան մեղանչել նոցա (Սաղմ ՃԴ. 14)։ Յն. ἀδικέω ։ Մի՛ մերձենայք , ասէ , յօծեալս իմ , եւ 'ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք (Անդ 15)։ Յն. πονηρεύω ։ — Զի եւ հերոյ վարսից նորա ոչ մեղանչէր հուրն ։

ՄԵՂԱՆՉԱԿԱՆ , (վնասակար)։

— Խայթոց Տրիգոնին եւ յետ մահու իւրոյ մեղանչական է (Վեցօր.)։

ՄԵՂ , — Եթէ կոյրք էիք , ոչ էր ձեր մեղ . բայց արդ ասէք թէ տեսանեմք , եւ մեղքն ձեր 'ի ձեզ հաստատեալ են ։ — Իմ եթէ չէր եկեալ ... մեղ ինչ ոչ գոյր նոցա ։

ՄԵՂՔ , ԱՆՄԵՂ , — Զանմեղս դատապարտէիր , եւ զվնասակարս արձակէիր (Դան. ԺԳ, 53)։ — Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղիցէ եւ լուսինն 'ի գիշերի (Սաղմ.)։

Իսկ (Եզեկ. ԺԷ. 2), «Ի ժամանակի յորում յիշեսցեն որդիք նոցա զմեղանս իւրեանց»։ Ընթերցի՛ր զսեղանս, որպէս ունի Յոյնն (Ի նմանութենէ Ս եւ Մ գրոց ծագեալ է չփոթութիւնդ)։

ՄԵՂՔ , կը նկատուի իբրեւ համառօտն ... ։ (Տես այս բառը)։ Յորմէ

ՄԵՂՄԵԽ, եւայլն ։ (Տես այս բառը)։

* * *

ՆՇԿԱՀԵՄ , Պրսկ նիշկէհիշտէն , նոյն նշանակութեամբ . եւ նիշկէհիշ , (արհամարհանք)։ — Նշկահեաց Մովաբ զԻսրայէլ (Դ. Թագ. Ա. 1)։ Յն. ἀθετέω ։

ԱՆԿՈՒՇԵՄ , ԱՆԳՈՒՇԵՄ ,

ԱՆԿՈՄՆԵՄ , ԱՆԳՈՄՆԵՄ ։

* * *

ՅՈՒՐՏ , Արաբ. սէրտ , եւ Պրս. սէրդ , նշ. ցուրտ , իսկ՝ Պրս. կէրմ , նշանակէ

ՋԵՐՄ , եւ Յն. θέρμον , Արաբ. ջէմրէ , նշ. ջերմութիւն , եւ Պրս. կէրմա , կէրմի ։ Յորմէ

ՋԵՐՄԱՆԱՄ , ըսնէլ ջէրմէն ։ Եւ

ՋԵՌՆՈՒՄ , — Ցուրտ էր եւ ջեռնուին , ջեռնոյր եւ Պետրոս (Յովհ. ԺԸ. 18)։

— Լաւ է ամուսնանալ քան ըզջեռնուլ . (ջեռնուլ ցանկութեամբ)։

Յորմէ 'ի հակառակէն

ՋԵՐԱՆԻՄ , — Անկանէր 'ի մահիճս իւր , եւ զախտ մահու ջերանէր (Ա. Մկ. Ա. 6)։ — Զվաղնջուխանուսցն ցաւս ջերանիցի (Ոսկ. Եփ.)։ Բաղդ. տարփամ եւ տառապիմ , տենչամ եւ տանջիմ , անձկամ եւ անձկանամ , չուայտիմ եւ տուայտիմ , ցանկամ եւ ցականիմ ։

ՋԵՐՄԱՋԵՐՄ , ՋԵՐԱՋԵՐՄ , Պրս. կէրմակէրմ ։

* * *

ՄԻՇՏ, Պրս. հէմիշէ, նոյն նշանակութեամբ. իսկ հակառակ առամամբ լաւ եւս համեմատի ընդ Թրք. չէմէք (մ ի շ տ), որ նշ. այժմ.
3 2 1 4

Մէշտ՝ վարի առէպ ընդ՝ դայիմ, (տես գրառդ)։ — Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս։ — Յաւարտ գրեթէ ամենայն աղօթից։

* * *

ՔՈՒՌԱԿ, աշխ. յաւանակ, ձագ իշոյ, Պրս. քէռռէ, նոյն նշանակութեամբ։

* * *

ԱՑՑ ԱՌՆԵՄ, Յն. σκοπεύω.

ՑԱՑՑ ԵԼԱՆԵՄ.

ԱՑՑԵԼՈՒ, ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ, տեսուչ, Պրսկ. պէյէկ կամ էշէկ, նշ. լրտես, տեսանող։ — Զայցելութիւն նորա զայն ա՛յլ առցի (Սաղմ. ՃԸ. 8)։ Յն. τὴν ἐπισκοπὴν αὐτοῦ λάβοι ἕτερος. Նոյն բան է եւ 'ի գործս առաք, թարգմանեալ է՝ «Զկարգ նորա առցէ ա՛յլ»։ Յորմէ եւ

ՀԱՑԻՄ, Արար. հայէալ, նշ. հայեցուած, երեւակայութիւն։ — Հայեցարուք 'ի ձեզ վասն արանցդ այդոցիկ զինչ արժան իցէ առնել։

ՀԱՑԵԼԻ, Յն. εἴσοπτρον.

Յորմէ (այցելութիւն) եւ

ՀԱՑՑԵՄ, բաղդ. պաղատիմ.

* * *

ՍՓՈՒԵՄ, (տես՝ սերմանեմ), որոյն հետ սերտիւ կապակցութիւն ունի, իբրեւ մի եւ նոյն արմատէ ծագած, Յն σπείρω, (սերմանել, տարածել, ցանել)։ Յորմէ

ՍՓԻՒՌ, ՍՓԻՌ, — Միթէ ի սփիւռս հեթանոսաց երթայցէ (Յովհ. Է. 35)։ Յն. εἰς τὴν διασπορὰν τῶν Ἑλλήνων. — Ցրեցից զնոսա 'ի սփիւռս (Երեմ. ԺԵ. 7)։ Յն. διασπερῶ αὐτοὺς ἐν διασπορᾷ։ Յորմէ

ԲՈՒԵՄ, աշխ. բուռը (թէրէֆը) թարթել, Տճ. պատուն էլէր։ Յորմէ

ԲՈԽՈՒ, պօպէ կամ որ և էջէ չէմէշէն վրայ Թութամէ պուրմամէ (կիր)։

— Կանգնեցից անդ քարինս մեծամեծս, եւ բռեցես զնոսա բռով (Օրին. ԻԷ. 2)։ Բաղդ. ծալել, ծրար, ծարրել, ծարիր, եւ ծաւալել։

Յորմէ (բռել) 'ի հակառակէն

ԲՐԵՄ, (մի՛ շփոթեր ընդ փորել)։

— Բրեա՛ զորմդ, եւ բրեցի զորմն (Եզեկ. Ը. 8)։

Յորմէ (բուռ) 'ի հակառակէն

ԲՈԽՈՒՆ, որ կը նշ. զոգեալ ձեռն, ափ ձեռին ամփոփեալ։

ԲՈՒՆԱԼԻՐ, յորմէ

ԸՄԲՌՆԵՄ, Յն. χείρ, նշ. ձեռն, բուռն. նշանակէ նաեւ՝ զօրութիւն, բռնութիւն, ըստ այսմ եւ 'ի մեզ

ԲՌՆՈՒԹԻՒՆ, ԲՌՆԱՆԱՄ, ԲՌՆԻ, (մկ.) — Բռնի մեք զուրուք ոչ կերաք եւ արբաք (Նեեմ. Ե. 14)։

ԲՌՆԱԲԱՐԵՄ, — Բռնան է ինձ 'ի քէն (Ծննդ. ԺԶ. 5)։ Յն. ἀδικοῦμαι ἐκ σοῦ.

ԲՌՆԱԻՈՐ, ԲՌՆՑԻ (մկ.), — Եթէ որ հարկանիցէ զընկեր իւր ... բռնցի (Ել. ԻԱ. 18)։ Ի մեզ աշխ.

ԲՌՆԵԼ, յորմէ

ԲՌՆԿԻԼ, հետեւողութիւն է Տճ. զի առ նոսա, Թութմագ, (բռնել), յորմէ Թութուշմագ, (բռնկիլ)։

Այսպէս է նաեւ՝ Տճ. եան, (քով), եանաշմագ, (մերձենալ), յորմէ՝ եանմագ, (այրիլ). եւ եագըն, (մօտ)., յորմէ՝ եագմագ, եւ 'ի մեզ աշխ.

ԿՊՑԸՆԵԼ, կը նշանակէ՝ վառել։

— Ճրագը կպցուր, այսինքն՝ ճրագը վառէ։

ԿՊԻԼ, գաւառացի մը ինձ ըսաւ. «Մարդուն ճրագը ե՛րբ է կպել որ հիմայ պիտի կպի։

Տես նաեւ՝ ալ, ալն եւ ալեւ։

* * *

ԿԱԿԱՆ, Յն. κωκυτός, (արտասուք), եւ գետ դժոխոց՝ կոկիւտն։

ԿԱԿԱՆՈՒՄՆ, — Լալեաց զալիւն

մանկանցն՝ հանդերձ մարցն կականմամբ (Խորէն.)։ Յն. κωκύμα, նոյն նշանակութեամբ։

ԿԱԿԱՆԵՄ, Յն. κωκύω, նոյն նշ. — Կական բարձ 'ի ձայն մեծ (Բ. Թագ. ԺԹ. 4)։

ԿԱԿԱՆԱԲԱՐՁ, (մկ.), — Կականաբարձ արտասուալից զձեռս լի աղօթիւք յերկինս ամբառնային (Ագաթ.)։ — Զձայն բարձեալ կականէին (Ողբ. Ե. 13)։

* * *

ԳԼՈՒԽ, Պրս. Քէլլէ, յորմէ Տճ. Քէլլէհ, նշ. գլխանոց, փակեղն։

Այս Պարսիկ բառը ձայնաւորներէն թօթափուելով կ'ըլլայ Քըլ, որպէս եւ 'ի մեզ թօթափուելով ձայնաւորներէն, կ'ըլլայ գլխ(ոյ)։

Սէբաստացի եւ Չօրագ բառերուն վրայով ըսուած է որ Յն. σκάφος եւ κάραβος կը նշանակեն՝ գոգաւոր կամ ինչ որ գոգաւոր է, բաժակ, նաւ, գլխանոց եւայլն. այսպէս է նաեւ՝ Քէլլէ կամ Քըլլէ, որ՝ ինչպէս յայտնի է, գոգաւոր է 'ի ձեւ սկաւառակի։ Բաղդ. սկաւառակ, սաղաւարտ, տաղաւար, վրան, կարապ, կառափն, փոր։

ՀԱՆԵՄ Ի ԳԼՈՒԽ, իբր Տճ. պաշա չըքարմաք։ — Հանէր չըքէչէրի 'ի Քըլլէ յաղօթան Աստուծոյ (Ղուկ. Զ. 12)։ Յն. διανυκτερεύω, (գիշերը անցունել)։

ԵԼԱՆԵՄ Ի ԳԼՈՒԽ, Տճ. պաշա չըքմաք, այսինքն՝ կատարել, լնուլ, արդիւնաւորել։ — Այլ Աստուծոյ վճիռն ել 'ի գլուխ, կախեցաւ որդւովքն Համան, որ մնացեալ էր յԱմաղեկայ, եւ ջնջեցաւ յիշատակն Ամաղեկայ որպէս եւ ասացն Աստուած (Նխ. Եղիշէ.)։

Այսպէս եւ

ԿԱՌԱՓՆ, տես եւ կարապ։

Յն. κράνιον, κάρηνον, κάρ, ([illegible]), սակայն մերս ծագի 'ի Յունականէս՝ κάραβος, (նաւ), եւ ամէն գոգաւոր մարմին։ Եւ Յն. καραβοειδής, σκαφοειδής, նշանակէ Քոֆուռ, 'է Յէնէլէ։ Յորմէ

ԿԱՌԱՓՆԱՏԵՄ, ըստ օրին. Քլլեուքեմ։ Եւ

ԿՈՓԵՄ, յորմէ

ԿՈՌՈՒՓ, բաղդ. կարապ։ Իսկ

ՓՈՐ, ուրիշ անուն կարապ թռչնոյ։

— Զարագիլ եւ զփոր (Օրէն. ԺԴ. 16)։ — Կիկնոս, այսինքն՝ փոր կամ ձկնաքաղ (Վեցօր. Ը.)։ — Նա եւ փորն կարի իսկ գեղեցիկ է (Ոսկ. Մեկն. Մատթ.)։ — Եւ փորն իսկ քաղձրաձայն թռչուն է (Ոսկ. Եփես.)։ — Ոչ ոք արդեօք տեսանիցէ զփորն կամ զձիուն, հարցեալ եթէ ապիտանիք են այսոքիկ (Կիւրղ. Գանձ.)։ — Զփարիան եւ զփոր եւ այլք այսպիսիք (Խորէն.)։ Յն. κάραβος, նշ. նաւ, եւ նաւ՝ ինչպէս յայտնի է, գոգաւոր է, իբր մէջը փորուած։

«Պրս. Նաւ, Նաւէ, նշ. փայտ՝ որոյ մէջն իցէ փորոգեալ որպէս տաշտ, եւ ամենայն իր որ գոլով երկայն՝ մէջ նորին դատարկ իցէ, Նաւ ասի» (Պրհ. Բուրհան Գաթըէ Դրբէ)։

Ուստի 'ի մեզ՝ այս տեսութեամբ՝ փոր (գյ.) նշանակած է՝ Չօրաղ, իբր՝ մէջը փորուած նաւ, (Յն. κάραβος)։

Իսկ

ՓՈՐ, իբրեւ ածական, նշանակէ՝ դատարկեալ, փորուած, սնամէջ։

— Ցօղունն վարսակաց ամենեւին փոր եւ սնամէջ է (Վեցօր. Ե.)։ — Մինչ ընդ միմեանս մածեալ իցեն քարինք, եւ չկայցէ ինչ փոր, անքակ միան 'ի միմեանս (Ոսկ. Եփես.)։ — Ուր հաստատուն է հիմն, եւ չիք ինչ փորին (Ոսկ. Ա. Տիմ.)։ Յորմէ

ՓՈՐԵՄ, ՓՈՐԱԾՈՅ, — Գուբն զոր փորեաց եւ պեղեաց (Սաղմ.)։ Իսկ (Գործ. Ա. 19)։ «Հեղաւ ամենայն փոր նորա»։ Յն. τὰ σπλάγχνα, (աղիք)։ Յն. κοιλία, նշ. որովայն, փոր, եւ ծագի 'ի բառէս κοῖλος, κοίλη, որ

նշ. փորածոյ, եւս եւ՝ նաւ, յորմէ եւ Տճ. գէլէ, (չափ ինչ արմտեաց)։

ՓՈՐ, կը նշանակէ նաեւ տեսակ մը ձուկ, Յն. σκορπίδιον, Տճ. իսգօրբիթ։ Այս բառը բաղդատէ ֆրանս. բառին հետ, եւ կը տեսնես որ ձուկին ծագած է Յն. κόγχος բառէն, որ կը նշանակէ՝ կոնքա, ինչպէս փոր (կարապ), եւ փոր (ձուկն)։

*

ԱՇՏԱՐԱԿ, — Բաժանեաց զլեզուս նոցա առ աշտարակաւն (Նխ. Ծննդ.)։ — Ուխտատաստանքն յորոց վերայ՝ աշտարակն անկաւ։ — Աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն (Սաղմ. Կ. 4 եւ Ծրկն.)։

ԱՇՏԱՆԱԿ, — Ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանակի (Մատթ.)։ Յարմէ

ԱՇՏԱՆԱԿԵՄ, -- Ջմիոյ ուրումն զձին կալեալ՝ արիաբար աշտանակէր (Խոր. Բ. 79)։ Եւ

ԱՇՏԻՃԱՆ, գրի եւ

ԱՍՏԻՃԱՆ, — Աշտիճան բարի անձանց խրեանց շահին (Ա. Տիմ. Գ. 13)։ —(Պաւղոս) իբրեւ եհաս յաստիճանսն... կացեալ 'ի վերայ աստիճանացն չարժեաց զձեռն... եւ ասէ (Գործ. ԻԱ. 35—40)։

Այս երեք բառն ալ բարձրութիւն ունեցող բան կը նշանակեն, եւ կը թուի թէ ծագած են Պրս. ուշթըր կամ շթըր բառէն, որ կը նշանակէ ուղտ, իբր՝ կենդանեաց մէջ ամենէն բարձրագոյնը նշանակելով։

Եւ ծովու ալիքն ալ ծովու մակարդակէն բարձր ելլելուն համար՝ կ'ըսենք՝ լեռան պէս բարձրանալ ալեաց. («Ելանեն լեռնան, եւ իջանեն դաշտանան»)։ այսպէս

Պրս. ուշթըրէ, որ վերը ցուցուած ուշթըր բառէն ածանցուած է, կը նշանակէ՝ ալիք ծովու, որպէս եւ մէւճ նշանակէ ալիք, եւ մէւճէ՝ ալիք ծովու, նաեւ ուղտուն կնակի ցցուած մասը։

Արաբերէն՝ ճէմէլ՝ նշ. ուղտ, եւ ճէպէլ՝ լեռան։

Յարմէ (աշտարակ) 'ի հակառակէն ԱՏՈՐ, ԱՏՈՐՈՏ, ԱՏՈՐԵԻ, ԱՏՈՐԻՆ, — Էջ նախ 'ի ստորին կողմ երկրի (Եփես. Դ. 9)։ Ուրիշ է

ՍՏՈՐԻ, — Բուն զեղարդան նորա իբրեւ զստորի ոստայնանկաց (Ա. Մնաց. ԺԱ. 23 եւ Ա. Թագ. ԺԷ. 7)։ — Փայտ նիզակի նորա իբրեւ զստորի ոստայնանկաց (Բ. Թագ. ԻԱ. 19)։ Յն. ἱστόποδες, (այն գլանաձեւ փայտն է, որուն վրայ կտաւը կը փաթտուի)։

Բաղդ. աթոռ եւ առաթուր։

Ուրիշ է՝

ԱՇՏԵԱՅ, նիզակ կարճաբուն, Լտ. hasta, Պրս. խիշթ, նոյն նշ.։

Իսկ

ԱՇՏՈՒՃ, ԱՍՏՈՒՃ, է 'ի հակառակէն բառիս աշտեան։ Բաղդ. արքայ կամ արքան եւ արքանակ, նաեւ՝ հիւպատոս եւ հպատակ, արք եւ ուրկ կամ ուրուկ, իշխան եւ խաշն, նախարար եւ նախիր, արքան եւ որքին, որքինոտ։

*

* *

ՍՏԻՆ, Սանսք. ստանա, Զէնդ. ֆշտանա, Պրս. փիստան, Յն. στῆθος, (լանջք, կուրծք)։

— Քանի՝ գեղեցկացան ստինք քո, քոյր իմ հարսն, քանի՝ գեղեցկացան ստինք քո 'ի գինւոյ (Երգ. Ա. 2)։ Տպ. Մանթէ։ — Տո՛ւր նոցա, Տէր, — զի՞նչ տացես նոցա, տո՛ւր նոցա արգանդ անորդի եւ ստինս ցամաքեալս (Ովս. Թ. 14)։ Յարմէ

ՄԻԱՍՏՆԻ, իբր՝ մէկ ստին ունեցող, Յն. μονόμαζος, (ըստ Յունաց նաեւ ἡ ἀμαζών անստին), այսպէս կը կոչուէին Սկիւթացի պատերազմող կանայք, որ քաջ աղեղնաւոր կամ նետաձգութեան մէջ աջողակ ըլլալու համար իրենց մէկ ստինը կը խարէին, երբեմն երկուքն ալ,

եւ կ'ըսուէին՝ անստինք, ἀμαζονεῖς ' մենք ալ նոյն Յունական ձայնիւ կ'ըսենք ։

ԱՄԱԶՈՆՔ, խոկ (Բ. Մնաց. ԺԴ. 15), «Եւ զվ—–պՆէ-Ն կոտորեցին, եւ առին խաշինս բազումս եւ ուղտս, եւ դարձան յԵրուսաղէմ», առփրական Յոյնն ունի — καὶ τοὺς Ἀλιμαζονεῖς, որ Թափառական ցեղի մը անուն է, եւ սակայն կայ Յոյն օրինակ մը, որ ἀμαζονεῖς կը գրէ. եւ կ'երեւայ որ մեր Թարգմանչին ձեռքի օրինակն այնպէս էր, որուն հետեւելով՝ ἀμαζονεῖς Թարգմաներ է՝ վ—–պՆէ+, (ամազոնք). յիշուած է նաեւ (Անդ ԻԲ. 1) «Արաբացիքն եւ Ալիմազոնեայքն» Յն. οἱ ἀλιμαζονεῖς, որ Յոյնն ու Հայը միաբան են ։

Սոյն կը նկատուի իբր՝ ջրոտ, խոնաւ, Թացեալ, կամ յոյր եւ պարարտ, կաԹնաբուղխ եւ մննդարար ։

Յորմէ 'ի հակառակէն

ՈՍՏԻՆ, ցամ—+––պ, Ծ—ր———պ, ՙՐր ' — Ծառ՝ որ ջրարբին եւ ոստին է, զի ընդ ջրարբիս՝ ջրարբի է, եւ ընդ ոստինս՝ ոստին համարի (Վեցօր. Ե.) ։ — Երկիր ծարաւուտ որ ոստին է, անջրդի (Ոսկ. Եսայ.) ։ — Յոստին տեղիս (Վեցօր) ։ Բաղդ. զաւառ եւ կաւառ, ցամաք եւ ծմակ, նահանգ եւ ներհանգ, չոր եւ ջուր, տօգորիմ եւ տօչորիմ, մկրտեմ եւ մակարդեմ ։

ՍՐԲԵՄ, Թրք. -է-Բէ-րՎ+՝ նշ. աւել ածել, բառնալ զաւելորդս 'ի բաց. եւ -է-Բէ-րՉէ նշ. աւել ։

Յորմէ

ՍՐԲԻՉ, (ածելի, –––պ––ր–), իբր Թարգմ. Պրս. Բ–+է, (ածելի) եւ Բ–+, (մաքուր) ։

— Սրբիչ մի՛ ածիցէ զգլխով իւրով մինչեւ լցցին աւուրքն (Թուոց. Զ. 5) ։ Յն. ξυρὸν ։ — Ա՛ռ դու քեզ սուսեր յեսանաւոր սուր քան զսրբիչ վարսավիրային, եւ ածիցես զայն զգլխով քով եւ զմօրուօք (Եզեկ. Ե. 1) ։ Յն. ξυρὸν ։ Եւ մերձաւոր է Տճ. ձայնիս, -է-Բէ-րՉէ ։

Պրս. -է-Բէ-րրէ, նշ. ածելի ։ Պրս. Բ–+, նշ. (սուրբ, մաքուր), եւ Բ–+է ածելի, յորմէ 'ի մեզ Թարգմանաբար՝ -րԲէՆ, ուստի առ՝ սրբել զմօրուս՝ զհերս, (Յն. ἀφαιρέομαι), զեղնգունս՝ (Յն. περιονυχίζω), զայգի, (καθαίρω) — Ամենայն (ուռ) որ բերէ պտուղ, սրբէ զնա (Յովհ. ԺԵ. 2), որ նշանակէ, յապաւել, 'ի բաց բառնալ զաւելորդս, յօտել ։

Յորմէ

ՍՈՒՐԲ, ՍՐԲՈՒԹԻՒՆ, Յն. τὸ ἅγιον.

Դիտելի է սա խօսքը. «Դայ զընտանէ զնա պարապորդ, Տ—+րԲ—Լ եւ յարդարեալ» (Մատթ. ԺԲ. 44) ։ Յն. σεσαρωμένον, որ նշանակէ՝ ––ԲԼ –ՖԲ—Լ, այսինքն ––ըՐ—Ֆ, 'ի բայէս σαρόω, (––ԲԼ –ՖԲԼ), 'ի մեզ Տ—+րԲ—Լ, որ նոյն է ընդ -րԲԲ—Լ. (-է-Բէ-րէ-ըՎ—Լ) ։

Թուրքերէն՝ -էըՎ+ (սրբել) եւ -է-Բէ-րՎ+ (աւել ածել), այս երկու բայերը իբրեւ մէկ բառ կը գործածուին մէկտեղ. -էըՎ+ -է-Բէ-րՎ+, -էըՓէ -է-Բէ-րՓէ-. -էՃր -է-Բէ-րէ-ր (սրբել, մաքրել, ջնջել, անհետ առնել) ։ Եւ

ՍԱՓՐԵՄ, նոյն ընդ -րԲԲ—Ճ ։

ՍԱՓՐԻՉ, կազմութիւնը բաղդ. զափր (հատանել) եւ զարքնել, զարբին ։ Ուրիշ է՝

ՍԱՓՈՐ, Պրս. -Բպ—՝ նշ. խեցեղէն աման ։ Կազմ. բաղդ. Տապուհ ։

— Պատահեսցէ ձեզ այր մի որ սափոր ջրոյ յուս ունիցի (Մրկ. ԺԴ. 13) ։ — Սափոր ալերն մի՛ պակասեսցէ, եւ կամփսակ իւղոյն մի՛ նուազեսցէ (Գ. Թագ. ԺԷ. 14) ։

* * *

ՓՈՍ, Լտ. fossa, նոյն նշանակութեամբ ։ — Փոս փորեսցէ եւ պատնէշ կանգնեսցէ (Եզեկ. ԻԶ. 8) ։ — Ի փոսոյ գետոյն մինչեւ 'ի կողմանս, եւայլն (Ես. ԻԷ. 12) ։

* * *

ԶՈՒ, *բառ Ասիական կամ Դուրանական՝ նովին հնչմամբ եւ նշանակութեամբ։ Թրքերէն՝* ճու, *Տճ.* չէշմէ։

ԶՈՒԵՄ, ԶՈՒ ԱՌՆԵՄ, *յորմէ*

ԶՈՒԱՌԱԿԱՆ, — *Ի մէջ ոտից նորա անկաւ ծանրացեալ ... անդ անկաւ չուառականն* (*Դատ. Ե.* 27)։ *Յն.* ἐξοδευθείς, չըգըպ, էլէրէք, ֆնալաշէրէք, մահվ օլարագ)։ *Բառն ի Յունարէն* ἐξοδεύω *եւ* ἀπέρχομαι *բայերը կը նշանակեն՝* չըգմագ, էրթմագ, *եւ* մահվ օլմագ, գօվուլմագ, ճիգմագ. *եւ Տաճկերէն փոխանակ ըսելու՝* մեռնիլ, *կ'ըսուի՝* էճէլէ գէլմէ (*՚ի յաւէտ մեռ*), πορεύομαι, *երթալ եւ մեռանել։ Ուստի առնեն հետեւողութեամբ է մեր Էրթալ բային առած մասնաւոր նշանակութիւնը հետեւեալ խօսքերուն մէջ.*

ԵՐԹԱԼ ԶԻՒՐՈՎԻՆ։

— *Միթէ զիւրովի՞ն երթայցէ* (*Յովհ. Ը.* 22). *Յն.* μήτι ἀποκτενεῖ ἑαυτὸν, (մէրէ քէնտինի էօլտիւրէճէք մի՞)։ — *Բանտապետն ձգեաց զսուսեր, եւ կամէր երթալ զիւրովին* (*Գործ. ԺԶ.* 27)։ *Յն.* ἔμελλεν ἑαυτὸν ἀναιρεῖν, (քէնտինի էօլտիւրէճէք իտի)։

Յորմէ (*չու, չուեմ*)։

ԶՈՎ, (*աշխ.* [illegible] *բայսի վրայ խօսելով*), *չառաւիղ, ոստ։ — Ըստ թուոյ արմատոցն որ ՚ի խոնարհ արձակին՝ նոյնպէս երեւեցուսցէ ՚ի վեր, եւ զջով բուսոյն տայ* (*Վեցօր. Ե.*)։

ԶՈՎԱՆԱՄ, — *Արձակեալ ոստղն, կապեալ ծունր, ջովացեալ, ալըցեալ, համակաթուռ* (*Ագաթ.*)։

Իսկ

ԳՈՒՃ, *Պրսկ.* գուճ՝ *նշ. զգճեղն ուղտու, եւ լայնաբար՝ ՚ի ծունր իջանել* (*՚ի նշան յարգանաց*). *ուստի ՚ի մեզ կ'ըսուի*։

Ի ԳՈՒՃՍ ԱՆԿԱՆԵԼ, (*աշխ. ծունկ չոքիլ*) ։(*Ոսկ. Մատթ. Ա.*)։

Ի ԳՈՒՃՍ ԻՋԱՆԵՄ, — *Ի գուճս իջեալ աղաչէին* (*Յուդթ. Դ.* 10)։

Ի ԳՈՒՃՍ ԿԱՄ, — *Կայր ՚ի գուճս ՚ի վերայ ծնգաց իւրոց* (*Գ. Թագ. Ը.* 54)։

Ի ԳՈՒՃՍ ՀԱՐԿԱՆԻՄ, — *Թագաւորն ՚ի գուճս հարեալ* (*Բուզ.*)։

Յորմէ ՚ի հակառակէն

ԶՈՒՔԱՄ, — *Զո՛ւք առ մեզու* (*Ոսկ.*)։

ԶՈԳԱՄ, *բաղդ. երգ եւ երթամ, պնդեմ եւ պնդիմ։ Ուրիշ է*

ԶՈԿ, *Պրսկ.* ճօգ, *նոյն նշանակութեամբ*։

ԶՈԿԱՏ, — *Ա՛յլ ջոկ է ձկանց որ ՚ի ծովս շրջին* (*Վեցօր.*)։ — *Զմշակացն եւս դասս եւ ձեռագիտացն ջոկս քննեսցուք* (*Ոսկ. Մատթ. Գ.*)։

* * *

ՄՇԱԿ, *Արաբ.* մէշագգ *նշ. տառապանք, աշխատութիւն, նեղութիւն, տագնապ. Պրս.* րէնճպէր՝ *նշ. մշակ, բայց թարգմանի՝* աշխատօղ *կ'ըսուի, զի* րէնճ՝ *նշ. տառապանք, միշտ։ Բաղդ. երկ, երկիր, հերկ, աշխատութիւն, վաստակ,*

Պրսկ. մուշագ՝ *նշ. պաշտօնեայ, սպասաւոր, Յն.* ἐργάτης, *յորմէ Տճ.* ըրղաթ, *՚ի բառէս* ἔργος, (*երկ*)։

— *Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայր իմ մշակ է* (*Յովհ. ԺԵ.* 1). *Յն.* γεωργός։

* * *

ԼԱԽՏ, *Պրս.* լախթ, *նշ. ուռն, Տճ.* թօփուզ։

* * *

ՓՈՒՆՋ, *Պրս.* դէմէթ, դէմէթճէ։

— *Եօթն հասկ ՚ի միում փնջի* (*Ծննդ. ԽԱ.* 5)։

* * *

ՄԱՆԵՄ, *Պրս.* մանէյտէն, մանէթէն, *նոյն նշանակութեամբ*։

Լտ. manus, *նշ. ձեռն,* manifactus, *ձեռագործ։ — Ուրք բարբառնակացն պատին մանին գծա-*

ռովքն որ չուրջ զնոքօք իցեն (Վեցօր. Ե.)։ — Եկն եւ մանկանց նմա կարս (Սեբեր. Գ.)։

ՄԱՆՈՒԱԾ, ՄԱՆՈՒԱԾՈՅ,

ՄԱՆԱԾ, (աշխ.)։

ՄԱՆ ԱՌՆՈՒՄ,

ՄԱՆ ԳԱՄ, (աշխ.)։ Բաղդ. ոլորիմ եւ բոլորեմ։

* * *

ՏԱԽՈՒՂ, ՏԱԽԻՂ, — Օրհնեցէ՛ք զտէր սաղմոսարանաւ եւ քնարաւ, եւ աղեաւ, եւ տաւուղաւ, ծնծղայիւք, թմբկաւ եւ պարուք (Սեբեր. Է.)։ Նոյն եւ Տճ. թավուլ։

* * *

ՍՐԱՀ, Արաբ. սարհ, սէրա, նշ. ապարանք, եւ սարա՝ նշ. գետին, հող, Պրս. սէրայ՝ նշ. տնակ.

ՍՐԱՀԱԿ, Յն. αὐλή. στοά։

* * *

ՍԵՐՄՆ, ՍԵՐՄ, Յն. σπέρμα, σπόρος, նոյն նշանակութեամբ։

ՍԵՐՄԱՆԵՄ, Յն. σπείρω, եւ այս Յունականն բայէն է 'ի մեզ՝ սփռեմ, եւ Յունականէդ σπόρος (սերմ), ծագի σποράς (սփիռ)։ Տե՛ս եւ սփռեմ։

Եւ այս երկու բայերը, սերմանեմ եւ սփռեմ, իբր մէկ արմատէ ծագումն առած են։

Երկուքին մէկ տեղ գործածութիւնը կը տեսնենք հետեւեալ խօսքին մէջ։

— Հնձես զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես ուստի ոչ սփռեցեր... գիտէիր եթէ հնձեմ ուր ոչ սերմանեցի, եւ ժողովեմ ուստի ոչ սփռեցի (Մատթ. ԻԵ. 24—26)։ — Ուր սերմ է, անդ բազում տոհմականք, ուր սերմ է, անդէն եւ հունձք 'ի մօտոյ (Ոսկ. Մատթ.)։ — Կին որ եթէ սերմ առցէ եւ ծնանիցի արու (Ղեւտ. ԺԲ. 2)։ — Զորդի աղախնոյդ արարից յազգ մեծ, զի սերմն քո է (Ծննդ.)։ Իսկ Ծննդ. Ա. 11), «Բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ սերմանել սերմն»։ Յն. σπεῖρον σπέρμα, ըսել է, սանող սերման, սերմնաբեր կամ որ սանէջէ յէնթեան սերմն։ Արդ այս խօսքը առնուած է՝ իբր σπείρειν σπέρμα, եւ ըստ այսմ թարգմանուած է՝ սերմանել սերմն։

Այսպէս եղած է նաեւ 12 համարին մէջ, ուր վերի խօսքը կրկնուած է։ Նոյնպէս 29 համարին մէջ, «Ետու ձեզ զամենայն խոտ սերմանելի՝ սերմանել սերմն», Յն. σπεῖρον σπέρμα։ Այս խօսքը Բարսղի «Վեցօրէից»ին մէջ (Ճառ Ե.) յիշուած է եօթն անգամ, եւ թարգմանուած է այսպէս, Բղխեսցէ երկիր բանջար խոտոյ սերմանեօք հանդերձ ըստ ազգի իւրում։ Բղխեսցէ երկիր բանջար խոտոյ սերմանեօք հանդերձ։ Բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ սերմանեօք հանդերձ ըստ ազգի իւրում։ Բղխեսցէ երկիր զբոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ։ Բղխեսցէ երկիր զբոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ ըստ ազգի իւրում։ Բղխեսցէ երկիր բոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ ըստ ազգի իւրում։ Բղխեսցէ երկիր զբոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ։

Եւ ահա եօթն անգամ «սերմանեօքն հանդերձ» կրկնուած է, եւ անփոփոխ պահուած է՝ եօթն անգամն ալ, փոխանակելով Ծննդոց «սերմանել սերմն» ընթերցուածին։

Յորմէ (սերմն) եւ

ՍԱՂՄՆ, ՍԱՂՄ, — Հարկանիցեն զկին յղի, եւ ելանիցէ սաղմն աննկար (Ել. ԻԱ. 22)։ — Յովհաննէս չեւ ելեալ 'ի սաղմարոյն մզանացն (Ոսկ. Մտթ.)։ Պրս. շիան՝ նշ. զարգանդն ուր գոյանայ ձագն կենդանւոյ։

ԼՈՒԾՔ, ԼԾԵՄ, ԼԾՈՐԴ, բաղդ. հաւնել եւ հիւսել. իսկ «Դա՛րձ անդրէն, մի՛ առաէն լուծանիր» (Եզեկ. ԻԱ. 30)։ «Առ առն մեղաւորի եմուտ լուծանել» (Կրոտ.)։ Թարգմ. է Յունականին καταλύω, իջեւանել։

Բանասիրական աշխարհը լաւ կը ճանչնայ շՋայէլ (ζωΐλος)։ Համբաւի յաջողակ նախանձընդդէմը, եւ կը թուի թէ այս անունը արհամարհանաց մաքով արուած է իրեն իբրեւ

մակդիր, եւ իր բուն անունը կորսուած. քանզի այս բառը կը ծագի Յն. ζήλος բառէն, որ կը նշանակէ՝ նախանձ (*)։

ԱՇՈՒՆ, սեռ.) աշնան։ Այս բառիս մէջ յայտնապէս կ'երեւի

ՇՈՒՆ, (սեռ.) շան. ուրեմն եւեւէն երթանք գտնելու, թերեւս յաջողինք։ Յն. κύων, Լա. canis։

Բաղդ. κύων, (շուն), κίων, (սիւն) եւ χιών, (ձիւն)։

ՇՆԱՄ, ՇՆՈՒԹԻՒՆ, Արաբ. չէՆ-, նշանակէ՝ պոռնկութիւն, (չէյՆ, ֆէյլէ չէյՆ, ամօթ, պատկառանք, սիրծ արարք)։

ՇՆԱՑՈՂ, ՇՆԱՑԵԱԼ, Յն. κοινάω, κοινόω, նշ. պղծել, եւ κοίνωμα, պըղծութիւն, պոռնկութիւն, եւ արմատ բառիցս է κοινός, հասարակ, հասարակաց. խառնակ, ուր կամ առ որ մարթի մատչել ամենայն ուրուք. արդ՝ այս Յունական բառս κοινός, նոյնաձայն գտանի բառիս κυνός որ է սեռ. հոլով բառիս՝ κύων, (շուն)։

Արդ՝ 'ի նմանաձայնութենէ բառիցդ κοινός եւ κυνός ընդ Արաբական ձայնիս՝ զինա, որ նչ. պոռնկութիւն, պատճառեալ է՝ շուն, շնութիւն եւայլն, նշանակել պոռնիկ, պոռնկութիւն եւայլն։ Սակայն կայ նաեւ բառ մը κυνάω, որ ըստ ձայնին է՝ շնալ. ռամկօրէն նչ. ջեռնուլ, (տաքցեալ պշանց)։

Բաղդ. բող եւ խող։

Իսկ (Բ. Մկ. Դ. 7—26). «Յասոն անուն ոմն եղբայր Ոնեայ ջանացաւ շնութեամբ մտանել հանել զքահանայապետութիւնն Ոնեայ»։ «Յասոն այն որ դաւով զիւրոյ եղբօր զքա-

Եսայ. Ա. 18. —Եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զձանձախարիթ, իբրեւ զձիւն սպիտակ արարից։ (Նո Հյկ. Բռ. 'ի բառն յանջախորէԲ)։

(*) Յունաց մէջ կան առանկ անուններ, զորօրինակ Կրեսոս Լիւդացւոց Թագաւորը որուն ամբաւ հարստութիւնը առակ եղած է, և χρισὸς կը նչ. ոսկի. Կռոնոս, գիր ժամանակի, և χρόνος նչ. ժամանակ։

համայութիւնն ինքն չնացաւ»(*)։

Յն. σκύλαξ, նշ. շուն. իսկ σκῦλον, նշ. յափշտակութիւն, աւար, կողոպուտ, եւ σκυλεύω, յափշտակել, ուժգին առնուլ, կապտել, կողոպտել, զաւածանել։

Արդ այս երկու Յունական բառից նմանաձայնութենէն պատճառեալ է որ մեր շուն եւ շունշէն բառերը նշանակեն նաեւ յափշտակել եւ յափշտակութիւն։

Նորէն մեր տեղը դառնանք.

Մեզ անհաւանական չթուիր թէ Աշուն՝ ծագումն առած ըլլայ շուն բառէն։ Անձնաւորեալ Աշունը կը նկարուի 'ի տիպ պատանւոյ, որուն մէկ ձեռքը կողով մը մրգեղէն կայ, եւ քովն ալ շուն մը զոր միւս ձեռքովը կը փայփայէ։

«On présente cette saison (աշնան համար կ'ըսէ), sous l'emblème d'un jeune homme tenant d'une maine une corbeille de fruits et caressant un chien de l'autre. (Բուֆֆէր+ Առասպ. 'ի բառն automne)։

Շան հակապատկեր ճանչցուած է

ԳԱՌՆ, — Մի՛ եփեսցես զգառն 'ի կաթն մօր իւրոյ (Ել. ԻԳ. 19։ ԼԴ. 26։ Օրէն. ԺԴ. 21)։ Յն. οὐχ ἑψήσεις ἄρνα ἐν γάλακτι μητρὸς αὐτοῦ յԵբր. գնի, ուլ, փոխանակ գառնին։ Եւ մերս Եգնիկ Եբրայականին ըզ-հետ ընթանայ յասելն. «Զուլ 'ի մօր կաթն չհրամայէ եփել»։

— Անօրէնն որ մատուցանէ զոչ-խար (Եբր. զգառն) պատարագ, այնպէս է որպէս թէ զշուն ոք մոր-թիցէ (Ես. ԿԶ. 3)։

Բառս ծագի 'ի Լատինականէս՝ caro, (սեռ.) carnis, որ նշ. միս։

Բաղդ. ոչխար, խոյ, վառեակ,

Յն. φάγιλος, նշ. գառն կամ ուլ, կամ այծ, եւ թարգմանի՝ ուտելի, ծագեալ 'ի բայէս φάγομαι, (ուտեմ)։

Բիչ մ'ալ մեր գառնուկը մոռկ ընենք.

Յունարէն ἄρς, նշ. գառն, յորմէ ծագի մերս

ՀԱՐՍՆ, ըստ մերձաւորութեան ձայնիցս, Յն. ἄρς (գառն), եւ Ասոր. ..... (հարսն), եւ այս այսպէս մտածուած է թերեւս այս տեսութեամբ որ կինը՝ հակառակ պարագայի մէջ, այսինքն՝ «Մինչ կենդանի է այրն, շուն (μοιχαλίς) կոչի եթէ լինիցի առն այլում» (Հռովմ. Է. 3). իսկ հարսն կամ գառն, է կին օրինաւոր բնակեալ ընդ առն իւրում։ Այսպէս եւ Տճ. մերձաւոր են ձայնքս ..... (կոյս, աղջիկ), եւ ..... (գառն)։

Հարսն կամ գառն իբրեւ օրինակ որբութեան՝ է հակապատկեր շան, այսինքն՝ կնոջ որ խղեալ զհարսանեկան կապն՝ երբեմն զառքօք գայ եւ երբեմն զնոքօք։

Բաղդ. բոզ եւ խող։

— Կապ են հարսանիքն, զարդ եւ կապ յԱստուծոյ որոշեալ. լուծումն եւ քակտումն է պոռնկութիւն (Ոսկ. Կողոս. ԺԲ.)։ —Կապանք արդարութեան է ամուսնութիւն (Վերջոյ Բ.)։

Ի Թրք. ..... , նշ. կապ, եւ ....., հարսանիք։

Եղիանոս (Գիրք. ԺԱ. 10), Հոմերոսի չարայաչաղ ոսոխին՝ Զոյիլոսի համար կ'ըսէ, — «ἐκαλεῖτο δὲ ζωΐλος οὗτος κύων ῥητορικός». «Եւ կոչէր Զոյիլս այս՝ շուն հռետորական»։

Այս տեսութեամբ մենք ալ կ'ըսենք՝ հօջէլ, որ յատուկ է շան, եւ յօշոտել, որ է չարախօսել առ նախանձու։ (Տե՛ս այս բառերը)։

Եթէ անհաւանական չթուիր՝ ..... բառը ..... բառէն ձեւացած համարիլ, նոյնպէս՝ կարծեմ անբնական չէ հետեւցընել թէ .....

(*) Այս խօսքը ուրիշ բառով ըսուած է (Նխ. Բ. Մկ.) «Յատոն ..... զքահանայութիւնն Յոնեայ»։

բառէն կազմակերպած ըլլայ՝

ԳԱՐՈՒՆ, Անձնաւորեալ գարունն է նորահաս պատանի մը՝ ձեռքը փունջ մը ծաղիկ, եւ գիրկը գառնուկ մը բռնած։

«Sur un bas-relief du palais Mettie, il tient (գարնան համար կ'ըսէ) d'une main un bouquet de fleurs, et de l'autre un agneau: (Բառգ. Առասպ. 'ի բառն printemps)։

Երբ կ'ընդունինք թէ շ-ւ-ն եւ ջ-ւ-ն բառերէն ձեւացած են՝ շ-ւ-ն եւ ջ-ւ-ն, կը մնայ գիտնալ թէ ինչ է

ԱՄԱՌՆ(*), (սեռ.) ամարան. որով գիտցած ըլլանք ամբողջ չորս եղանակաց անունները։

Արդ այս հանգոյցը լուծելու համար՝ նախ յիշենք թէ Յ-Ժ-ն Ճ-յլ է բառ Վիրգիլեայ, եւ տաք հակառակ ամառը ժիր է, որուն Արաբական ձայնով կ'ըսուի՝ հ-մ-չ-մ։ Եւ ա՛յս է մեր ամառն, սեռ.) ամառ-ան։ Բառգ. երկաթ եւ արծաթ։

Երկրորդ՝ յիշենք թէ Ճ-յլ բառը Յոյնին Ն-խ-ն-ձ-ն է. երրորդ՝ ըսուեցաւ թէ Համերոսի նախանձընդդէմն հակառակողն էր Ջոյիլ, եւ այսպէս կոչեցաւ իր յաչաղկոտ բնաւորութեանը համար. քանզի անունն իսկ թարգմանի նախանձոտ, եւ իրեն մակդիրն է՝ δμηρομάστιξ, (խարազան Համերի, Համերամարտ)։ Ուրեմն զՋոյիլոս ոչ այլ ինչ պարտիմք ըմբռնել, այլ անձնաւորութիւն իմն ծուլութեան եւ նախանձու, եւ հոմանիշ ձմերան, եւ ինչպէս զձմեռն հակառակ կը նկատենք ամարան, նոյնպէս եւ զՋոյիլ հակառակ Համերի. եւ ահա կը տեսնենք Հ-մ-ր բառին մէջ ծածկուած ա-մ-ա-ն, զոր կը խնդրէինք։

Տե՛ս եւ Հերմէս։

Տարին կը բաժնուի չորս մասանց, եւ իւրաքանչիւրը իր անունն ունի, գարուն, ամառն, աշուն, ձմեռն, եւ կ'ըսուին չորք յեղանակք տարւոյ. հիմայ այս

ՑԵՂԱՆԱԿ, կամ

ԵՂԱՆԱԿ, (տես եւ՝ Նուագ, համգամանք, երփն երփն։

Բառիս համար ալ բան մը ըսենք։

Բանասիրաց յայտնի է որ Համերոս Տրովադայի հռչակաւոր պատերազմը երգած է, եւ այս պատերազմին շարժառիթն եղած է Հեղինէի (Յն. ἑλένη) աքանչելի գեղեցկութիւնը։

Հայկազն քերթողը բանաստեղծական թռիչով Համերոսին չափ, եւ աւելի եւս բարձրանալով, հրաշակերտեր է մեզի՝ այս եւ հետեւեալ բառերը յանուանէ հրաշագեղին Հեղինեայ,

ՑԵՂՑԵՂԱԿ, ՑԵՂՑԵՂՈՒԿ, ՑԵՂՑԵՂԵՄ, ՑԵՂՈՒՄ, եւ

ՀԵՂ, (աշխ.) անգամ, — երկու հեղ — երեք հեղ։ Բառգ. Նուագ, համգամանք։ Եւ

ՀԱՂ ՔԱՆ ՋՀԱՂ,

ՄԻԱՀԱՂՈՑՆ, բառգ. Նուագ։

Կողբացին Թերեւս զայս ակնարկելով կ'ըսէ հիացմամբ. «Այս կա՛ոք զարմանալիք 'ի հակառակ եւ յաննման երփնարաց լծեալ եւ ծածուկ ձեռամբ ուղղեալ։

Ուրիշ է

(*) Ամառը կազմուած է սանսկ. sama, Բակտրիարէն՝ hama, «ամ», և Հայապարթեւ «նոր» բառերէն։ Սակայն դիտելու է, որ ինչպէս sama և hama, այսպէս նաեւ Հայերէն «ամ» բառը կը նշանակէ «ամառ», որովհետեւ . . . Հայոց ամանորն ամառնային գիշերահաւասարին կըլլայէր, յերեւել նորոց պտղոց. այնպէս որ դժուար է որոշել թէ արդեօք ամա՞ռ բառը «ամ»էն ածանցած է, թէ ընդ հակառակն ամ բառը ամառէն։ Իմ կարծիքով պէտք է ըսել թէ ամառ նոյն է ընդ ամ բառին, միայն «առ» նախդիրը նորա վերջոյ յաւելցած է, նշանակելու համար թէ ամ առ կամ առընթեր կամ 'ի վերայ կայ։

(Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը, էջ, 213. Ծանօթ. 2)

ՀԵՂԻՆԱԿ, որ կը ծագի ἕλλην Հելլէն բառէն։

— Ի զուր ուրեմն պարծին Աթենացիք ծնողք գոլ կամ դայեակք արուեստից եւ գիտութեանց (Յովհաննու Բենէէն Անտիոքացւոյ, Հտ. Ա. էջ 389)։ (Իոսէ. Նեբբ. Հտ. 1 էջ 132։ Պլուտ. Հտ. 2 էջ 345)։

— Ժողովեալ զայսոսիկ նախիրեցին 'ի փառս Հելլենացւոց աշխարհին ... զբոլոր իսկ զՅոյնս ոչ զանազանիմ մայր կամ դայեակ ասել իմաստից (Խոր. Պատմ. Ա.)։ (Այս խօսքը Իսոկրատէն փոխառութիւն մ'է)։ Եւ Որատիոս Խորենացիէն յառաջ կարճ խօսքով մը պանծալի վկայութիւն մը տուած է Յունաց համար․

«Ըզհանճար՝ Յունաց ետ Մուսա, Յունաց ողորկ լեզուաւ խօսել» (Արուեստ Քերթ. 321)։

«Այս եւս հաչակ գրուածքի Յունական հանճարոյն եւ ողորկութեան տաղից յորատեան գրչէն զի՞նչ պարծանք չիցեն Հելլէն քերթութեանց» (Անդ Ծանօթ. Հայ Թարգմ.)։

Բովանդակ Ս. Գրոց մէջ Երգ Երգոցի գրքին պէս վառվառուն երեւակայութեամբ բանաստեղծական գրուածք մը չկայ․ անանկ որ եթէ այն աստուածեղէն գիրքը հոգեւորապէս չմեկնուի, սոսկ սիրահարական փեսայի եւ հարսին, կամ աւելի պարզ, երկու տարփածորաց սիրալիր զրուցատրութիւն մըն է։

Հոն՝ կարծես թէ աստուածարեալ Հայ Թարգմանչին խանդն ալ արթըներ է, եւ ինքն ալ սկսեր է ստեղծաբանել, ոչ թէ այն հոգեշունչ տաղից վրայ օտարոտի յաւելուածոց կուտակութեամբ, որ ներելի չէ, այլ նորաձոյլ բառից զարմանազան պէսպիսութեամբ, եւ գեղեցկաւ զգեղեցիկ բացատրելով։

Համերական ոսկի գրչաւ յանմահութիւն ճակատագրեալ ոքանչելուհւոյն անուանը ἑλένη, իրեն նիւթ կամ նախագաղափար առնելով, գունագոյն երանգներ կուտայ անոր, այնպիսի վայելուչ եւ ճարտար եղանակաւ մը, որ անոր գրչին ներքեւ անիկայ ոչ եւս Հեղինէ է, այլ ատա

ԱՂԱԻՆԻ, անգ

ԵՂԵԻՆԻ, այլուր

ԵՂՆ, եւս եւ

ՄԱՅՐ (*), (ի, իւ)։

— Մի է գեղեցիկ իմ, միանձնի իմ (Երգ Երգոց)։ — Աչք քո աղաւնիք (Անդ)։ — Դարձի՛ր Նմանեաց, եղբօրորդի իմ, որթուց եղանց (Անդ.)։ — Տեսիլ նորա իբրեւ զընտիր եղեւնափայտից Լիբանանու (Անդ)։ — Գիրանք տանց մերոց մայրք (Անդ)։

ՄԱՅՐԻ, (անտառ մայրից, եւ լայնաբար՝ անտառ)։ — Որ ոք մտանիցէ ընդ ընկերի իւրում 'ի մայրի հարկանել փայտ (Օրէն. ԺԹ. 5)։

— Գտաք զնա 'ի դաշտս մայրեաց (Սաղմ.)։ Ա՛յլ է

ՄԱՅՐԻ, որ նոյն է ընդ մորի։

— Ի մայրեաց առիւծուց եւ 'ի լերանց ընձուց (Երգ Երգոց)։ — Եթէ տայցէ՞ կորիւն առիւծու զձայն իւր 'ի մայրւոյ իւրմէ, եւ ոչինչ իցէ յափշտակեալ նորա (Ամով. Գ. 4)։

— Ո՞ւր են մայրիք առիւծուցն, եւ որսք կորեանց նոցա ... առիւծ ... ելից զմայրիս իւր որսով (Նաւ. Բ. 11—12)։ — զարմանի որպէս զառիւծ 'ի մորւոջ իւրում (Սաղմ.)։

Կը մնայ ծանուցանել այս տեղ որ Հոմերոս եւ Հերոդոս անուանց՝ սո՛սկ ձայնական մերձաւորութենէն Հերոդոտի ստորոգելիքները՝ Համերոսի վերագրուած է։

(*) Թէ այս բառը, և ԹԷ մայրի (անտառ) մայրի, (ողջ կենդանեաց) որ և մօրի, եւս և՝ մոր, մորատ, ատոնց ամենքն ալ մայր, (մօրւ մորք) բառէն ծագումն առած են, և անոր պէսպիսութիւնները կը նկատուին։

Նախնեաց այս եղանակը որ երբեմն գործածուած է, շատ մութ է, եւ բացատրելը դժուարին, այս կարգէն են ծիածան եւ ծծումբ, աղբիւր եւ աղբիւս, ապի եւ ապեղանի։

Ցիշենք որ ամառն բառին ծագումը տուինք Համերոսին, այս տեղ պիտի տեսնենք որ Հերմէս ինքն է ամառն։

Բացատրենք։ Հերմէսի Պարսկերէն անունն է Բէյր. այս բառը կը նշանակէ նախ՝ Փայլածու ըսուած մոլորակը, որ ամէն մոլորակներէն աւելի մօտ է արեւուն։ Երկրորդ՝ արեգակնային տարւոյն (սկսեալ 'ի Նաւասարդէ, կամ որ նոյն է, Մարտի քսանումէկերորդ օրէն, յորում արեգակը կը մտնէ խոյ ըսուած աստղատունը) չորրորդ ամսուան անունն է, որ կը սկսի ամառնային արեւադարձին առաջին օրէն, յորում արեւը կը մտնէ 'ի Խեցգետին։

Այս անունը լայնաբար կը նշ. ամառն։ (Տե՛ս եւ ջեր)։ Մեր բուն Հայկական տարւոյն չորրորդ ամիսն ալ (սկսեալ 'ի Նաւասարդէ) կ'ըսուի՝ Տրէ, որ է նոյն ինքն՝ Բէյր։ (Տե՛ս եւ Տէր եւ Տրէ)։

Հերմէս Եգիպտական աստուած մըն էր, եւ Հերմոպոլսեայ մէջ կը պաշտուէր, եւ Եգիպտական բառով կ'ըսուէր Բ—Բ (Թօթ)։

Արձանագրութիւն մը կայ՝ «Թօթ գերագոյն տէր«։ Այս Եգիպտական անունը կը նշ. նաեւ՝ ամառն, մենք ալ ամառուան արեւուն տաքը կ'անուանենք

ՏՕԹ, — Ջերմութիւն աւուրն բարձաք եւ զտօթ (Մ—Բ.)։

Պրս. Բ—ֆԲէն, Բ—դէյդէն, յորմէ է 'ի մեզ՝ դող։ (Տես զբաղ)։

Հերմէսի Պարսկերէն անունէն (Բէյր) ունինք՝

ՏԻԻՐ, գրեալ եւ

ՏԻՐ, — Դիպեալ 'ի ճանապարհի երազացոյց երազընդհան պաշտաման՝ Տիւր դից դպրի գիտութիւն քրմացն. կամ, պաշտաման Տրի դից դպրի (Ագ—Բ.)։

ՏԻՐԵՄ, — Թագաւորք ազգաց տիրեն նոցա (Մ—Բ.)։ -- Առ այր քո դարձ քո, եւ նա տիրեսցէ քեզ (ԾՆՆԴ.)։ Այս յատուկ անունը՝ իբրեւ երդման ձեւ գործածուած կը տեսնենք՝

— Տի՛ր, ձն անդր։ — տի՛ր, ձն 'ի բաց տար։ (Իբր՝ քաւ լիցի, տէր։ Աշխ. Ա—ջ ըէէ, Ա—ջ հէ—ըէէ, հէ—է ըլլայ, Ա—ջ ըէ—ջըէէ)։ Մերս

ՏԻԴԱՏ, այս արմատէն բարդուած է, Բէյր—դատ։ (Տիրատուր, Աստուածատուր)։ Մերս

ՏԷՐ(*), ինչպէս նաեւ Յունացելոյս κύρος (յորմէ κύριος), նոյն Պարսիկ ձայնն է՝ Բէյր, այսպէս նաեւ՝ տրէ, (որ ցուցաւ)։ տեղափոխութեամբ գրոց, ըստ օրինակին՝ տեղի եւ եաղ, զենում եւ եզն, փող եւ ողբ։

Տէր, մեր մէջն ալ՝ Աստուծոյ անունն է, եւ 'ի Ս. Գիրս Եբրայեցերէն Եհովայ անունին կը պատասխանէ. «Ես եմ Աստուած Աբրահամու, եւ —ն—ն էմ դէր է»։ (Երբ. Եհովայ)։

Այս բառին սեռականը ճանչցուած է Թէպէտ

ՏԵԱՌՆ, սակայն առանձին բառ է, (Տես՝ լեառն), եւ նոյն է ընդ Յուն. τυράννος, տէր, արքայ,
12435
բացարձակ իշխան, միահեծան, յոր-

(*) Այս բառը ստուգաբանուած է (տես Քերակ. ի պէտս զարգ. 70. և տայեբք Հայ. Քեր. 49) Տէ—էր. Թերեւս Տէյր բառէն ենթադրելով. և Այտընեան կը հաւանի սոր. փասն զի կըսէ, «ստուգաբանութիւն հիմակու ատենս լեզուագիտութեան այն ճիւղը կը նշանակէ որ բառերու ներքին կամ ծածուկ կազմութիւնն ու բաղադրութիւնը լուծելու կ'զբաղի. Զոր օրինակ գրաբար Տէր անունն երկու տարերացը կը լուծէ. Տէ և Էր» (Քննական Քերակ. Վիեննա, 337 ի ծանօթութեան)։

մէ եւ յատուկ անուն Թագաւոր ։

ՏԻՐԱՆ, բաղդ. հայր, եղբայր բանիրուն սեռականներուն հետ ։

Ունինք նոյն արմատէն եւ

ՋԵՐ, որ գոյական է, եւ կը նշ. օդի ջերմութիւնը ։ Բաղդ. տօթ ։

— Օրհնեցէ՛ք, ջեր եւ տօթ զՏէր ։

Յունարէն ալ կայ այս ձայնը, θέρος, որ նշ. տօթ, եղանակ ամառուան, ամառն, հունձք, ամիս հընձոց ։ — «ἐγγὺς τὸ θέρος», մերձ է ամառն ։

Ա՛յլ է ջերմ, ջեռնում եւայլն ։

(Տես զբառսդ) ։

ԴԵՐ, (՚ի բարդութեան), — Դեռաքրիստոս, գերանուն,

Է ՚ի հակառակէն բառիս՝ տէր, իբր՝ ընդդէմ կամ հակառակ, կամ, ոչ բուն, ոչ ուղիղ կամ սուտ, ոչ կատարեալ ։ Յորմէ

ԹԵՐԻ, ԹԵՐԱՆԱՄ, — Թերացեալ կասկածել ։ Եւ

ԹԻԻՐ, ԹԻԻՐԵՄ, — Գտաք զսա զի թիւրէ զազգս մեր, եւ արգելու ՚ի տալոյ հարկս կայսեր, եւ ասէ զանձնէ, թէ Քրիստոսն իցէ (եւ) Թագաւոր ։

Յորմէ (գեր) ՚ի հակառակէն

Թեր, կողմն, ոչ հակառակ ։

— Ի նոցա թեր եղանէ ։ Աչխ. [illegible], կամ, [illegible] ։ — Յայամ՝ յայնմ թերէ, (այսայն կողմէն) ։ Իսկ ([illegible], էջ 210). «Մի թերին յանոյշս եւ միւս թերին ՚ի դժոխս». ընթերցի՛ր առանց ինչ խղճելոյ, «Մի թերն յանոյշս եւ միւս թերն ՚ի դաժանս» ։

Հերմէս էր պատգամաբեր երկնաւոր, եւ թարգման կամացն Արամազդայ, որ ընդունեց Ապողոնէն մարգարէական հոգի, այսինքն՝ կանխագիտութիւն հանդերձելոց ։

Յն. ἑρμῆς, Թարգմանի միջնորդ, թարգման, Հերմէսի՝ Լատիներէն անունն է, Mercurius, յորմէ մերս

ՄԱՐԳԱՐԷ, (տես եւ մնգիկ) ։

Հերմէսի Արաբերէն անունն է [illegible], եւ այս ձայնը մեր

ՕՏԱՐՈՏԻ բառին այնչափ մօտ է որ թէպէտ եւ գիտենք թէ օտար բառէն ածանցում մըն է. սակայն կը փորձուի մարդ ըսելու թէ նոյն Արաբացին է, ոչ միայն ձայնական մերձաւորութեանը համար, այլ եւ քանզի միշտ կեղծ անուանց յիշատակութեան առթիւ գործածուած կը տեսնենք,

— Բարկացուցին զիս օտարոտովք, եւ գարշելեօք իւրեանց դառնացուցին զիս (Օրէն. ԼԲ, 16) ։ — Օտարոտի իմն գից թուի պատմիչ լինելոյ, քանզի զՅիսուս եւ զյարութիւնն աւետարանէր (Գործ. ԺԷ. 18) ։ Որովհետեւ Հերմէս մեռելներ կը յարուցանէր՝ գաւազանին ծայրը դպցընելով (բառ տառապելաց) ։

ՆՕՏԱՐ, (համարեալ յանանց լինել Լատինական notarius), քանզի Հերմէս էր նախ՝ դից դպիր, դպիր երկնաւոր ։ Յորմէ

ՆԱՐՕՏ, — Նարօտ պէսպէս նկարուց (Դաւ.) ։ Քանզի նօտարի է նկարել զբարբառ ՚ի քարտի, սեւոյն ընդ սպիտակին խառնմամբ ։

Հերմէս գիք պերճախօսութեան, յորմէ ՚ի հակառակէն

ՀԱՄՐ, ՀԱՄՐԱՆԱՄ, Պրս. [illegible] նշ. թէ՛ համր, եւ թէ՛ չուրթն ։

Նոյնպէս եւ

ՑԱՄՐ, ՚ի հակառակէն Հերմեայ, որ ժիրն է ՚ի տիպ ամարան, եւ թեւաւոր յոտն եւ ՚ի գլուխն՝ ՚ի նշանակ անհնարին երագութեանն ։

Ուրիշ է

ՑԱՄԵՄ, ՑԱՄԵՆԱՄ, ՚ի բառէս՝ ամ, (տարի), ժամանակ ։ Յն. χρονίζω, նոյն նշանակութեամբ՝ յանուանէս χρόνος, (ժամանակ) ։

— Յորժամ ուրեք յամիցէ (Առակ ԼԱ. 2) ։ Յն. ὅταν που χρονίζῃ ։ — [illegible] տէր իմ զզալ ([illegible]) . իբր՝ [illegible], [illegible] ։ — Եկեա-

ցէ եւ ոչ յամեսցէ (*Եբր. Ժ.* 37)։ *Յն.* χρονίζω։

Յոյն բանաստեղծին պանծացուցած աքանչելուհւոյն ἑλένη *անուանէն եւ զբը՝ Հռովմայեցի բանաստեղծին հռչակած դիւցազնուհւոյն Դիդէի* ἡ διδῶ *անուանն ալ մեր Հայկազն բանաստեղծին գրչին ներքեւ կը մտնէ, եւ աքանչելապէս կը փոխի 'ի*

ՏԱՏՐԱԿ (*), *ինչպէս առաջինը յաղաւնի*։

— *Զայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում* (*Նէճ Նեքոց*)։ — *Գեղեցկացան ծնօտք քո իբրեւ զտատրակի* (*Առ.*)։

Դիդէի վէպը յայտնի է բանասիրաց, որ իր էրկանը մեռնելէն ետքը չուզեց երկրորդ ամուսնութիւն մը, թէպէտ եւ ասոր համար շատ բռնութիւն եղաւ իրեն դէմ որ յանձն առնու։

— *Զէք տատրակէ այսպէս ասեն, թէ յետ... իւրոյ առաջին ամուսնոյն՝ ա՛յլ ուրուք ամուսնութիւն ոչ խնդրէ, ոչ 'ի կենսն իւրոյ վարուժանին եւ ոչ 'ի մահու, այլ նովին յիշատակաւ անձկաբեկ կեայ եւ մեռանի, եւ ոչ խառնակի յայլ օտար ամուսնութիւն* (*Վեցօր. Ը.*)։

— *Ըստ ամենց իմաստնագոյն բնախօսութեանն որք ճշմարտապէս զատողութեամբ պարկեշտագոյն յողջախոհութեան զտատրակաց զոլ ասացին երամս, վասն զի օրինակ իմն իբր դաշնաւոր ուխտապահութեամբ զմտերմութիւն մինչ առ իւրն համանման պահէ, զուգակից 'ի կենսն համայն եւ զկնի մահուն եղոյն ուրուք 'ի նոցանէ* (*Պէտ. Գէրք Ա. Օրէն. Է.*)։

Դիդէ՝ կոչի եւ Եղիսա, եւ էր դշխոյ Տիւրացւոց, եւ ապա Կարքեդոնացւոց։

(*) Բառիս ռ գիրը աւելադրութիւն է, որպէս և 'ի Բառգրաց։

— *Սա խաբեաց զբնակիչս երկրին* (*Կարքեդոնացւոց*) *խնդրելով 'ի նոցանէ երկիր՝ ըստ չափու տարածութեան մորթոյ արջառոյ, եւ նոքա ոչ խելամուտ լեալ խորամանկութեանն շնորհեցին նմա զայն։ Այլ նա 'ի փոկս նուրբս զմորթն հատեալ պարփակեաց երկիր ընդարձակ* (*Թուղթ*)։

Եւ այս անուանէն՝ Եղիսա, ունինք

ԱՂՈՒԷՍ, — *Կալարո՛ւք մեզ աղուեսուն մանուն* (*Նէճ Նեքոց*)։

* * *

ԱՑԺՄ, *համառօտութիւն բառիցս՝ այս ժամ, յայսմ ժամու*։ *Տճ.* շիմդի։

ԱՑԺՄԻԿ, *իբր Տճ.* շիմդիճիկ, *եւ աշխ.* հիմաճուկ։

* * *

ՈՒՆԻՄ (*) *ծագի 'ի Յն.* οἰνόω, *որ նշ. արբենալ գինեաւ, գինել, եւ* οἰνομένος, *նշ. արբեալ 'ի գինւոյ, գինեհարեալ,* οἰνόληπτος, *կալեալ 'ի գինւոյ,* (οἶνος *գինի,* λαμβάνω *ունիմ*)։

— *Համարեցաւ եթէ գինի կալաւ զխելս նորա* (*Եփր.*)։ *Յորմէ*

ԸՆԴՈՒՆԻՄ, (*կտր.*) *ըն-կալայ. է թարգմանութիւն Յուն. ձայնիս՝* μετέχω, (μετὰ *ընդ,* ἔχω *ունիմ*)։

Իսկ

ՈՒՆԱՑՆ, *իբր՝ անոյն, այսինքն՝ ոչ ունող յինքեան, եւ այսպէս եղած է՝ չըլլալու համար՝ անուն։ Եւ*

(*) Բայ մը իրեն աններեւոյթին հետ կը գործածուի, զոր օրինակ. Ունել ունէր, որ կը թարգմանուի՝ Բեղետ և. Յն. δὲ μὲν οὖν. ուստի Հայերէն գրցուածք մըն է — Ունել ունէր և առաջինն իրաւունս. (Եբր. Թ. 1), աշխ. ալ ասոր մօտ գրուցուածք մը կայ. Յն. εἶχε μὲν οὖν καὶ ἡ πρώτη. — Երթալը կերթամ, (Թէպէտ կերթամ) տեսնելը կը տեսնեմ (Թէպէտ կը տեսնեմ)։ Տաճկերէն ալ կընայ ըսուիլ, կիթմէսի կիտէրիմ, ալմասը ալըրըմ, պագմասը պագարըմ, որուն կը հետեւի՝ լաքին...։

ԸՆԴՈՒՆԱՑՆ, 'ի բայէս՝ ընդունէմ։ — Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է (Ժող. Ա. 1)։ Իսկ

ԱՆՀՈՒՆ, իբր երկրորդ ձեւ մը ունայն բառին, այսինքն՝ որ հուն չունի, խիստ խոր, անդունդ, իբր Յն. ἄβυσσος, անյատակ, եւս եւ՝ անհուն, ἀ βυσσος. ἄβυθος ἄβυθος։

Եղած է անհուն, չըլլալու համար անուն. (ածերորդ, հ)։ Իսկ

ՈՒՆԱՑՆ, իբր՝ այն-ուն, (Հ չըր-ջեալ 'ի Ց, այսպէս՝ ուն-այն, ան-հուն։ Տճ. տէպտէն՝ կը նշանակէ՝ չատ խորունկ՝ որ հուն, այսինքն՝ յատակ չունի. սակայն այդ բառը կը նշ. նաեւ բան մը՝ որ սոյդ չէ, հիմ չունի, անհիմն, ընդունայն, ունայն։

Յն οἶνοψ, որ նոյնպէս կը ծագի οἶνος (գինի) բառէն, նշ. չառագոյն, կարմիր, լրթագոյն, 'ի գոյն գինւոյ. իսկ գծուլէ առացեալ՝ նշ. խոր, խո-րին, անհուն։ Արդ

ՀՈՒՆ է իբր արմատ ունէմ բային։ — Անց ընդ հունն Յորդանանու (Ծննդ. ԼԲ. 22)։

ՀՈՒՆ ԳԵՏՈՑ, — Յանցանելն ընդ հունն Յորդանանու (Նխ. Օր. Դէ.)։ Իսկ (Մէք. Զ. 2). «Լուարո՛ւք, բլ-լուրք, զդատաստան Տեառն, եւ ձորք՝ հիմունք երկրի». (Ջոհրապ՝ էն յուրտ էն տաանդ՝ եւ Նոր Տպ. էն յուրտ էն զէմանդ)։ Յն. αἱ φάραγγες θεμέλια τῆς γῆς. էն յուրտ՝ զէմանդ էրէրէ։ Յորմէ

ՀՆԱՐ (*), բաղդ. ատակ, յորմէ ա-տակեմ։

Բառիդ կազմութիւնն է ըստ օ-րինակին՝ արդար, 'ի բառէս՝ արդ, եւ զարդարեմ, 'ի բառէս՝ զարդ. եւ ըստ այսմ հնար՝ նշանակէ՝ անցք՝ ելք՝ դիւրութիւն՝ միջոց պատճա-ռող, հայթայթող։ Յորմէ

ԱՆՀՆԱՐԻՆ, իբր երրորդ ձեւ մը անհուն բառին։

— Անհնարին էին վերջին աղէտքն քան զառաջին սէրն (Գ. Թագ. ԺԳ. 15)։ — Ուրախութիւն ամպարշտաց բեկումն անհնարին (Յոբ. Ի. 5)։ — — Անդունդք անհնարինք պաշարե-ցին զիս (Յովն. Բ. 6)։

Իբր աշխ. վերջին աստիճանի, այսինքն՝ յայժ, կարի։

Այս բառիս պատասխանող Յու-նական բառն է՝ ἔσχατος. ἐσχάτη, որ նշանակէ զհուսկ վերջինն կամ զհե-ռաւորն, եւ արմատն է ἔχομαι, (ու-նիմ)։

ՀՆԱՐԻՄ, — Նա հնարեցաւ ազ-գին մերում, եւ չարչարեաց զհարսն մեր (Գործ.)։

ՀՆԱՐԱՒՈՐԻՄ, եւ

ՀՆՈՑ (*), Յն. οἴνων, նշ. մառան գինւոյ։ Պրս. խէնէ՝ նշ. ջրամբար, եւ խէնէէ՝ կրակետղ, հնոց հրոյ։ — Արկցեն զնոսա 'ի հնոց հրոյ (Մտթ.)։ յորմէ յայտնապէս կ՚երեւի թէ, բա-ռիդ արմատը հուր չէ։ (Տես 'ի Ներ-քոյ՝ հին)։ Յորմէ

ՀԻՆԻՆԱՄ, իբր՝ հինհինամ։

— Կրթումն հնինման այրեցե-լոցն յաճախագոյն լինի (Նէսս. Կղմ.)։

— Հինինայ հուր 'ի ծոցին (Բառգ. Վրդ.)։ Աշխ. հնճալ, հնհնալ։ Իսկ

ՀԻՆ, ծագի 'ի Յն. οἶνος, որ նշ. գինի, եւ Յն. καινός, որ նշ. նոր, սահմանեալ է նշանակել 'ի մեզ

ԳԻՆԻ, Արաբ. խամր, նշ. գինի, յորմէ՝ մախմուր, (գինով)

Այս բառախաղը պատճառած է 'ի նմանաձայնութենէ բառիցս Տճ. էսքի (հին), եւ Պրս. սէքի (գինի), յոր-մէ միրս՝

ՍԿԻ, (բաժակ գինւոյ)։ Տե՛ս եւ կին։ Իսկ

ՆՈՐ, Լտ. nurus (**), նշ. հարսն,

(*) Հնարդ՝ Հէտնէր զոլ Թուեցաւ ումեմն։

(*) Ն. Հյկ. Բռ. ստուգաբանէ զհնոց՝ հրնոց։

(**) Բայց ինչ կայ որ Լատին nurus (հարսն)

եւ Յն. νέαρος, Սանս. Նաւա, եւ Պրս. Նէվ, Նօ, նշ. Նոր։

— Գինի նոր, բարեկամ նոր. ապա թէ հնասցի, ուրախութեամբ արբջիր (Սիրաք)։ — Ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութեամբն իւրով նորն 'ի հնոյ անտի (Մարկ. Բ. 21)։ — Ոչ ոք արկանէ գինի նոր 'ի տիկս հինս...։ գինի նոր 'ի տիկս նորս արկանելի է (Անդ 22)։ — Ոչ ոք ըմպէ զհինն եւ կամիցի զնորն. քանզի, ասէ. Հինն քաղցրագոյն է (Ղուկ. Ե. 39)։

Յն. χρηστότατος, ազնուագոյն, պատուականագոյն, ընտիր։

ԱՆՈՅՇ, Պրսկ. Էնուշ՝ նշ. գինի, եւ Նուշէյթէն՝ ըմպել. իսկ՝ Նուշ. նշ. մեղր, քաղցրաւենի, գիներբութիւն,

—Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ (Յովհ.)։ Յն. ըղ-ճարաթ։ Իսկ (Ղուկ. Է. 46). «Իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա խունկ անուշիւ (Յն. μύρφ) օծ (զոտս իմ)»։ Եւ (Բ. Կորնթ.). «Հոտ անոյշ (εὐωδία) եմք Քրիստոսի առ Աստուած»։ Եւ (Եփես. Ե. 2). «Պատարագ եւ զենումն Աստուծոյ 'ի հոտ անուշից», (εἰς ὀσμὴν εὐωδίας)։ Եւ (Փիլիպ. Դ. 18). «Որ 'ի ձէնջ հոտ անուշից (ὀσμὴν εὐωδίας) պատարագ ընդունելի»։

Իբր Տճ. Խօշ քոքու, (Թարգմանաբար)։ Յն. γλυκὺς, որ նշ. քաղցր, վարեալ գոյականաբար՝ նշ. գինի, որպէս եւ 'ի մեզ՝ քաղցու, ծագի 'ի բառէս՝ քաղցր, եւ սա 'ի բառէս՝ քաղց։ (Տե՛ս զբառդ)։

ՔՐՄԱՆՈՅՇ, իբր ազգումն Յունականին, քանզի Յն. μέλισσα, որ նշ. մեղր կամ մեղու, նշ. նաեւ՝ քրմուհի։ Եբր. Տէպօրահ, նշ. մեղու, է նաեւ յատուկ անուն իգական սեռի։

—Դեբովրա կին մարգարէ ... դատէր զԻսրայէլ 'ի ժամանակին յայնմիկ (Դատ. Դ. 4)։ — Եւ մեռաւ Դեբովրա դայեակն Ռեբեկայ (Ծննդ. ԼԵ. 8)։

«Անոյշ» Հայ ձայն է. եւ միտքն յայտնի (Քերակ. Զարգ. 89)։

Յն. γλεύχος, նշ. քաղցու, γλυκὺς, քաղցր, եւ Թրք. Աճ, (քաղցեալ, եւ Աճը, լեղի, եւ Յն. γλυκὺς, որ նշ. քաղցր, նշանակէ եւ երբեմն լեղի, յորմէ ծագի մեր իսկ

ԼԵՂԻ (*) տես եւ քացախ։ Եւ

ԽՂԷԳ, մի՛ շփոթեր ընդ՝ Եղէգն. (տես.) եղիգի, Յն. πικρίς։

— Բաղարջ ընդ եղիգի կերիցեն (Ել. ԺԲ. 8)։ — Ընդ եղիգի դառնացունին՝ փոխան զվարս աստուածային (Շնորհ.)։

Բառդ տեղափոխութեամբ գրոց նոյն է ընդ Լեղի. (ե ղ է գ, լ ե ղ ի)։
4 1 2 3

բառէն ծագի 'ի մեզ Նոր. Պարզենք.

Բառախաղ մըն է. որ պատճառեալ է 'ի նմանաձայնութենէ Թրք. բառից՝ Կէլին, (հարսն) և Կէլէն, (եկ, այս ինքն, նորեկ). և առ Եղիշէի ընթեռնումք «փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք Նորէկ հարսանցն»։ Ուստի Թրք. Եէնի Կէլէն, նշ. նորեկ, նորոգ եկեալ, իսկ Եէնի Կէլին, նշ. նորահարսն և՝ նորամուտ հարսունք. (իբր՝ նորեկ). Գ. Մկ. Ա. 10.

Այսպէս և,

ՆՈՒ, որ նշ. հարսն, նկատմամբ սկեսրառնն և սկեսեր, Պարսիկ է։ Նու՝ (որ գրի և Նէվ) և նշ. նոր, որուն յոքնականը կ'ըլլայ Նաւէ։

ՆՈՎԱՆՔ, և

ՆԵՐ, երկու եղբարց կանայք այսպէս կոչին նկատմամբ իրերաց. և Երբ, և Ասոր, Նար, Նէր, նշանակէ նոր։ (Տես Ներեմ։)

Այսպէս և,

ՔԵՆԻ, քոյր հարսին, նկատմամբ փեսային Յն. χαινή (իգ) նշ. նոր, և Թրք. Եէնի, նշ. նոր։

(*) Լեղի՝ 'ի մեզ տիրապէս նշանակէ՝ Յն. χολή, Թրք. Էօթ, և է գոյական։ —Մատուցին նմա գինի ընդ լեղի խառնեալ։ — Յետոյ դառնագոյն գտանի քան զլեղի (Առակ)։ — Ողկոյզ նոցա՝ դառնութիւն լեղւոյ։

Կ'ըսուի նաեւ

ԴԱՌՆԻՃ, *Յն.* πικρὶς. *Իսկ*

ՑՈՌԻ, *Պրս.* *գուրէ՝ նշ. աղօխ.*

— Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. եւ յորժամ արբենան, յայնժամ զյոռին (Յովհ.):

Նորէն մեր առջի տեղը դառնանք.

ԱՆԴՈՒՆԴՔ, *որ նշ. ծով, թուի թէ ստուգաբանի իբր՝ ոչ ընդունող, անընդունակ, 'ի բաց մերժող, եւ պատասխան է, Յն.* ἄδεκτος *բառին.*

Եւքսինեան Պոնտոս, (εὔξεινος *կամ* εὔξενος πόντος), *թարգմանի՝ հիւրընկալ ծով, առանջականող, վանատուր, այսպէս առացեալ 'ի հակառակէն՝ փոխանակ առելոյ* ἄξενος, *ինչպէս էր իր նախկին անունը, հիւրամերժ, հիւրադաւ, սակս յաճախ ալեկոծութեանն*, ξεναπάτης.

Յորմէ

ԹՈՒՆԴ, ԹԻՆԴ, ԴՆԴԻՒՆ, ԹՆԴԱՄ, ԴՐՆԴԻՒՆ, ԹՆԴԻՒՆ.

Ուրիշ է՝ գրգեմ, եւայլն.

(*Տես գբասոզ*).

Յորմէ (*անդունդք*)

ՑԱՆԴԳՆԻՄ, *ընթերցի՛ր ջունդ-ֆընէմ, իբր՝ ջունդ-ֆնամ. այսինքն գնամ ընդ անդունդս, փնամ ընդ ծով.*

ՑԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ, *ընթերցի՛ր ջունդ-ֆնութիւն. Իսկ* (*Թուղ. ԺԱ.* 17). — *Բարձցեն ընդ քեզ ցջունդֆնութիւն ժողովրդեանց. Ասէ Ջահրապ 'ի ծանօթութեան. «Յօրինակին, Ջունդֆնութիւն ժողովրդեանց».*

ՑԱՆԴՈՒԳՆ, *բաղդ. յիմար, պանդոյր.*

Նաւարկութիւնն 'ի հնումն աւելի երկիւղալի եւ վտանգաւոր էր քան այժմ, այնպէս որ Յունաց մէջն անգամ որ նաւարկութեան սահմանուած ժողովուրդ մըն էր, առակ եղած էր ըսել, θάλασσα καὶ πῦρ καὶ γυνὴ, κακὰ τρία. *Ասոր մօտ է նաեւ յԱռակին. «Մէր կանանց... եւ ջուր եւ հուր ոչ երբէք ասեն, շատ* (Լ. 16).

ՀԱՆԴՐՈՒՆ ԱՆԴՈՒՆԴՔ. *Յն.* ἀδρία, *Վենետիկեան ծոցին մէջ առենօք քաղաք մըն էր, եւ անոր անունովը Ադրիական ծով ըսուեցաւ.*

— Մինչդեռ ծփէաք 'ի Հանդրին անդունդս (*Գործ. ԻԷ.* 27). *Յն.* διαφερομένων ἡμῶν ἐν τῷ Ἀδρία.

Յորմէ ունեցած ենք

ԱՆԴՐՈՒԱՐ, *գրեալ եւ անդրվար, անդրուվար. իբր՝ թարգմանութիւն Պրս. ձայնիւ դէրէ-կէօլու, (ծովանցիկ), մակդիր երագընթաց ձիոյ.*

ՔԱՐԻԲԴ, ՔԱՐԻՒԲԴ, *Յն.* χάρυβδις, *այս յատուկ անունը անծանօթ չէ մեր բանասիրաց. զի յիշուած է Նոննոսի դիցաբանական առասպելաց մէջ. «Առ Սիկիլական եւ Տիւռենական ծովուն է խոր ինչ... Նաւորդայն լի վշտագնութեամբ եւ մահուամբ... յաղագս այսորիկ եւ Հոմերոս ասէ իսկ թէ յայսկոյս քածն, եւ յայնկոյս Արամազդեան քարիւրգըն, այլ հակադարձեալ կոչեաց զքարիբդն ընդդիմադրել ընդ քածին».*

Արդ ասիկայ մասնաւոր անունն է Սիկիլիոյ յորձանքին, սակայն լայնաբար կը նշանակէ՝ յորձանք, անդունդք. Պրս. կէրդապ, որ թարգմանի՝ շրջանք կամ պտոյտք ջուրց, եւ Պարսիկ բառդ բարդ է, կէրդ, բոլորակ, շրջանակ), եւ ապ (ջուր), եւ զարմանալի զուգադիպութեամբ մի եւ նոյն բառն է Թուրքերէն եւ կէրդապ.

Արդ այս Յունական χάρυβδις *անունէն՝ բայ մը կը ձեւանայ,* χαρυβδίζω, *որ նշ. մխել 'ի ջուր, մխրճել, մկրտել, ընկլուզանել, խորասուզել. եւ մենք կը փորձուինք կարծել թէ մեր*

ԿԱՐԱՊԵՏ(*) *բառը ասկէ կը ծագի, ինչպէս նաեւ*

(*) Լծ. Կառապետ կամ կարաւանապետ. (Ն. Հյկ. Բռ.).

Հայերէն ունինք կոնք, և անկէ կոնա-

ԽՈՐԱՓԻՏ, (տե՛ս՝ եւ միրտիչ)։

Թէպէտ գիտենք որ Չօրօտեօ՝ կը նշ. յառաջընթաց. եւ կը պատասխանէ Յուն. πρόδρομος, որով մեր ցուցածէն բոլորովին կը հեռանայ, եւ կը նոյնանայ՝ Վերթէլ բառին նշանակութեանը հետ, սակայն պէտք է գիտնալ որ այս երեւոյթը՝ նոր բան մը չէ, ուրիշ շատեր ալ տեսանք ըստ այսմ օրինակի. զոր օրինակ՝ պատարագ, փայտ, եւայլն, եւայլն. որ իրենց նախնական նշանակութենէն բոլորովին օտարացած են։

ՎԻԹԽԱՐԻ, ՎԻԹԽԱՐ, նոյն է ընդ Յն. χάρυβδις, (խ ա ր ի վ տ — վիթխար)
4 5 6 2 1 3
իբր՝ անդնդային, այսինքն՝ մեծ, անճոռնի. Բաղդ. անհեթեթ։

— Արդարեւ անհնարին մեծանգամ յաղթամարմին եւ վիթխարի է (փիղ) յանասունս (Վեցօր)։

ՎԻՐԱԳ, նոյն է ընդ՝ Յն. χαρίβ, βιραχ, (անագորոյն, գազանամիտ)։

Իսկ

ՎԱՅՐԱԳ, թուի 'ի ձայնէս՝ վայր, վայրենի, Տճ. եապան, եապանի, եապան տօնճը, Յն. ἄγριος։

ՎԱԳՐ, Տե՛ս եւ Տէգրիս, Տիգրան։

Յորմէ

ՎԱՐԳԻՄ, բաղդ. խոյ, յորմէ՝ խոյանամ, արծիւ եւ արչաւ, խլուրդն եւ խլրտել։

Յորմէ 'ի հակառակէն

ՎԱՐԿԵՄ, կապել, կաշկանդել։

— Սատանայ որ սատրիկս վարկէ զնոսա (Ոսկ. Մատթ.)։

Բաղդ. պրկեմ եւ փրկեմ, պարեմ եւ պարանիմ, պնդեմ եւ պնդիմ։

Եւ

ՎԱՂՐ. Պրս. թեբէրէնկ՝ նշ. ձօտէր, եւ Յն. πέλεκυς, նշ. ձօղր. եւ նմանաձայնութիւնդ որ 'ի մեզ՝ 'ի նմանաձայնութենէ երկուց բառիցդ է պատճառեալ. Բաղդ. սակր եւ սակռ, ինչպէս եւ կանաչ, կինճ եւ կնձնի (Տես գրառդ). Յորմէ

ՎԱՂՐԱԻՈՐ, եւ

ՎԱՂԱԿԱԻՈՐ, Յն. πελεκυφόρος։

— Եհար վաղերբ զգլուխն Երուանդայ (Խոր.)։ — Վաղրաւորք, սակրաւորք (Բուզ.)։ — Մերկացեալ ըզվաղակաւորն իմ 'ի պատենից իւրոց (Եզեկ. Ծ. 42)։ — Ելցէ վաղակաւորն իմ 'ի պատենից իւրոց (Եզեկ. ԻԱ. 3)։ — Ողջոյն 'ի բերան Յովարու, եւ վաղակաւորն 'ի ձեռին. Բաղդ. սակր եւ սակռ, Յն. πέλεκυς եւ πελεκάν։

* * *

ԱՆԴՈՐՐ. — Կոչեաց զանուն նորա՝ Ռէհովբովթ. ասէ, զի այժմ ընդարձակեաց մեզ տէր (Ծննդ. ԻԶ. Յն. εὐρυχωρία։

ԱՆԴՈՅՐ, Յն. εὐρύχωρον, (ընդարձակ)։

— Այս ծով մեծ եւ անդորր (Սղմ.)։ Յն. εὐρύχωρον։ — Ճարակեսցին խաշինք իմ 'ի տեղւոջ պարարտութեան եւ յանդորրու (Եսայ. Լ. 23). Յն. εὐρύχωρον։ — Երկնչիմ մի՛ գուցէ զանդոյր ճանապարհ գնայցես (Սէբէոս Ժ.)։ Բաղդ. ապահով։ Եւ

ԴԻԻՐԻՆ, ԴԻԻՐ, ԴԻԻՐԵՄ, եւ 'ի ձայնէն անդորր

ՀԱՆԴՈՒՐԺԵՄ, ՀԱՆԴԱՐՏԵՄ. — Բազում եւ այլ ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ (Յովհ.)։

Սոքա ամենեքեան ծագին 'ի Յն. ἄνδηρον, որ նշ. գետափն, ծովեզր, ափն, եզր, ցամաք։

Բաղդ. ցամաք։

Յորմէ (անդորր, անդոյր)

ՊԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆ, ՊԱՆԴՈՅՐ, բաղդ. անդունդ եւ յանդուգն, յանդգնութիւն. Այսպէս եւ 'ի Յն. χείμαρρους, (վտակ, հեղեղատ)

վար, եռապետ, բայց նաեւ եօզապետ (յառաջընթաց), զոր առջինէն զատել անկարելի է։ (Հնդեւր. նախ. էջ 69)

ՑԻՄԱՐ, *բաղդ. անդորրութիւն եւ պանդորրութիւն*։

*
* *

ՍԻՐՏ. *տես գրառդ*։

ՄԻՏ, *տես գրառդ*։ *Ցորոց*

ՍՐՏՄՏԻՄ, *բարդեալ՝ ոէըտ եւ մէտ, երկու բառով (սիրտ եւ միտ) կազմուած. (բարկանալ)*։

ՍՏՐՋԱՆԱՄ, [(*ս տ ր* , *այսինքն*։
1 3 2
սրտ(մտ)իմ. (Հ՝ որպէս եւ 'ի ՆՆ-ջէմ), միմիայն ոէըտ բառով կազմուած. (բարկանալ)։

Ցորմէ 'ի՛հակառակէն

ԺՄՏԻՄ, *այսինքն՝ զմտիմ, զմտ (առ ածել), միմիայն մէտ բառով կազմուած*։

Բաղդ. ցասնում եւ ցածնում, հրաժարեմ եւ յօժարեմ, խորշիմ եւ ախորժիմ։

*
* *

ԿՈԻԺ, *աշխ. կոաշ, Պրս. քէոաժ, քէոաշէ, նոյն նշանակութեամբ*։

— *Ե՛րթ, առացի՛ր քեզ կուժ մի ստեղծեալ 'ի կաւոյ ... եւ խորտակեսցես զկուժն, եւ ասասցես ցնոսա ... այսպէս խորտակեսցից զժողովուրդդ զայդ ... որպէս խորտակի աման խեցեղէն, որ ոչ կարիցէ միւսանգամ բժշկել (Երեմ. ԺԹ. 1—11)*։ — *Առէ՛ք առ իս կուժ մի նոր, եւ դի՛ք այդր (Դ. Թագ. Բ. 20)*։ — *Ա՛ռ զգեղարդնդ 'ի սնարից դորա, եւ ըզկուժ ջրոյդ ... եւ ա՛ռ Դաւիթ ըզգեղարդնն եւ զկուժ ջրոյն 'ի սնարից նորա ... եւ արդ ահաւասիկ գեղարդնն արքայի եւ կուժ ջրոյն ո՞ւր է որ առ սնարս նորա կային (Ա. Թագ. ԻԶ. 11—16)*։

*
* *

ՁՏԵՄ, ՁՈԻՏ, *Պրս. ըէոտատէն, զտել, սրբել 'ի ժանգոյ, պարզել 'ի մօրոյ, եւ ոստ՝ նչ. պարզ, անխառն, զուտ, վճիտ, Թրք. ոստէ*։

— *Նովաւ փորձեալ զարդարս զըտեսցէ (Եղնէկ)*։ — *Ի փորձութիւնն նորա իբրեւ 'ի բովս զտին (Անդ)*։ — *Դրուագեաց ոսկւով զտով (Դ. Թագ. Զ. 21)*։ — *Իբրեւ զարծաթ զտեալ (Ցոբ. ԻԲ. 25)*։

Ա՛յլ է շոտ, շոտանէմ։

*
* *

ՔՕՇ, *քաւշ, նոյն ընդ նախագ. Պրս. քէշը, քէշէն, նոյն նշանակութեամբ*։

Եւ ահա քօշ մի այծեաց ... եւ քօշին եղջիւր էր 'ի մէջ աչաց նորա, եւ քօշն այծեաց մեծացաւ (Դան. Ը. 5—8)։

*
* *

ԳԵՐԵԶՄԱՆ, *Պրս. կէրէզման, նչ. երկինք*։

ԴԺՈԽՔ, *Պրսկ. դոուզախ, որ ըստ նոցա նչ. տիրապէս՝ դժոխք, ըստ մեզ նչ. նաեւ գերեզման*։

— *Ոչ է խորհուրդ եւ գիտութիւն 'ի դժոխս յոր դուն երթալոց ես (Ժող. Թ. 10)*։ — *Ցո՞ չոգաւ, միթէ 'ի գերեզմա՞ն երկրի զոր գիրք դժոխք կոչեն (Եղնէկ) « Իսկ անդ, « Կէան 'ի փառս եւ կէան յանարգանս, եւ մի ըէրէն յանոյշ, և մոա ըէրէն 'ի դժոխս »*. *ուղղիլի է. « Մէ ըէրէն յանոյշ և մոա ըէրէն 'ի դժոխս ». բաղդ. « Ոչ 'ի միոջէ ծառոյ երկու պտուղք, մին անոյշ եւ մին դառն » (Անդ)*։

Եւ Պրս. կէօր, որ ըստ նոցա նչ. գերեզման, է արմատ բառիս

ԿՈՐՈՒՍՏ, *կոր-ուստ, այս մասնիկը կերեւայ նաեւ 'ի բառս զալ-ուստ, (կէլուշ), փախ-ուստ, (փաշ-ուշ)*։ *Թրք. մօտ է, կէլուշ, ուշու, ղաաա-ուշ*։

ԿՈՐՆՉԻՄ, — *Դժոխք եւ կորուստ անյագ են (Առակ Իէ. 26)*։ — *Դժոխք եւ կորուստ ... եւ տարտարոսն ... ոչ երբէք ասեն, Շատ (Առակ Լ.*

16)։ — Միթէ պատմեսցէ՞ ոք 'ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո 'ի կորստեան (Սաղմ.)։

*
* *

ՊԱՆ. Լտ. panis, նշ. հաց։
— Խոյս երկուս անարատս, եւ պանս բաղարջս (Ել. ԻԹ. 2). Յն. ἄρτος, (հաց)։ — Պան մի եւ չօթ մի իւղով զանգեալ (Ստր. 23). Յն. ἄρτος։ — Անդ ուտիցէք զպանսն որ 'ի խանի կատարմանն իցեն (Ղեւտ. Ը. 31)). Յն ἄρτος։ — Մատուսցէ պանս բաղարջս... զանգեալ իւղով (Ղեւտ. Է. 12). Յն. ἄρτος։ — Ահարոն եւ որդիք նորա կերիցեն զպանսն որ 'ի խանի անդ (Ել. ԻԹ. 32). Յն. ἄρτος։ — Պատարագ Տեառն պանս բաղարջս զանգեալ իւղով (Ղեւտ. Բ. 4). Յն. ἄρτος։

Ուրիշ է

ՊԱՆ, իբր մասնիկ 'ի վերջս բառից. պարտիզպան, դռնապան, բարապան, այսպէս Պրս. բաղպան, դերպան, դահճեպան, աշխ. էնճիւմեպան, գէնճեպան, խանումպան։

*
* *

ԺԽՈՐ, ԺԽՈՐԻՄ, Պրս. ժէղուր, չէղուր, նշ. բարձրաձայն եւ խառնագոյն աղաղակ։ — Զի՞նչ ժխորն իցէ, զի՞նչ աղմուկ եւ սատանայական ամբոխ (Ոսկ. Մատթ.)։ — Տեսին պահապանքն զքահանայապետսն ժխորեալս, եւ իբրեւ գծով 'ի սաստիկ ալեաց տագնապեալս (Ճառընտ.)։

*
* *

ԽԱՆ, Յն. κανοῦν, նշ. սակառի, Թրք. սէպէթ։ — Զխոյսն զերկոսին եւ զխանն բաղարջաց (Ղեւտ. Ը. 2)։

*
* *

ԱՆՈՒՐՋՔ, Յն. ὄναρ, ὄνειρος։ Այսպէս ասացեալ առ 'ի չչփոթելոյ ընդ անուր։ — Բազում անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա (Մատթ. ԻԷ. 19)։ Յն. πολλὰ γὰρ ἔπαθον σήμερον κατ' ὄναρ δι' αὐτόν.

*
* *

ՍՄԲԱԿ, — Սմբակք երիվարաց նորա իբրեւ զվէմ հաստատուն համարեցան (Ես. Ե. 28)։ — Որպէս ձիոյն 'ի սմբակէն վարելոյ (Եզնիկ)։
Պրս. սըմպ՝ նշ. եղունգն ձիոյ։

Իսկ

ՍՄԲԱՏ, ըստ մեզ՝ յատուկ անուն, նոյնպէս եւ ըստ Պարսից՝ Սըմպատ՝ է յատուկ անուն մարդոյ։
Բաղդ. Ջահրապ։

ԳԻՍ, Պրս. կէյս՝ նոյն նշանակութեամբ։ — Գէսք փոխանակ զգեստու տուեալ են նմա (կնոջ), (Ա. Կորնթ. ԺԱ. 15)։ Յորմէ

ԳԻՍԱՒՈՐ, — Այր եթէ գիսաւոր է, անարգանք են նմա, բայց կին եթէ գիսաւոր է, փառք են նմա (Անդ 14)։ Յն. ἡ κόμη, նշ. գէս, եւ κομήτης, նշ. գիսաւոր, եւ գոյականաբար առեալ՝ նշանակէ՝

ԿԱՐՍԱՄ, եւ սա 'ի Պարսկականէս՝ քէրքէմ, Լատիններէն՝ cometa, cometes, եւ այդ Յունական կամ Լատին բառ ընկալեալ է 'ի մեզ իբրեւ յատուկ անուն մարդոյ, ծանօթական ձայնիւ.

ԿՈՄԻՏԱՍ. անուն մեծանուն հայրապետի առ նախնեօք, եւ առ մեօք՝ քահանայ — Վկայքն Կոմիտասայ։

*
* *

ՊԱՏՐՈՒՃԱԿ(*), Պրս. պատրուղ,

(*) Կենդանի զէնլի 'ի պէտս ուտելոյ կամ զոհելոյ, յորմէ եւ պատարագ. ոռճիկ յուտելի անասնոց, խաշն եւ արջառ, եւայլն։ Ի Ս. Գիրս ըստ Յն. դնի πρόβατον, եւ Վր. ջէօվէրէ, որ է նոյն, Եբր. ծօն, որ է ընդ Հյ. ձօն եւ զէնս (Ն. Հյկ. Բռ.)։

դադրաղչ, նշ. Թռչակ, ռոճիկ, եւ Թարգմանի համապատօրեայ, այսինքն՝ կերակուր զոր առնու մարդ օր ըստ օրէ, եւս եւ զգենլի կենդանիս, որք համապատըն զենուն, որպիսիք են եզն, ոչխար, եւայլն։

— Պատրուճակք՝ անյապք մի՛ մեացին, եթէ յօղեաց եւ եթէ յայծեաց, եթէ յարջառոց եւ եթէ 'ի հաւուց, եւ եթէ 'ի խոզից (Եղեղէ)։

Պարսիկ բառդ դադրաղ՝ նշ. Նախ՝ հին կայսրա, համդերձ հնոտի, կամ համդերձ զոր համապատօր զգենու մարդ, զգեստ ազանելի համապատօր, Թրք. կէնտելիք։ Իսկ

ՊԱՏՄՈՒՃԱՆ կամ է 'ի հակառակէն վերնոյն, իբր համդերձ պայծառ, 'ի հարսանիս արկանելի կամ 'ի տօնս, եւ կամ բառ՝ յերկուց Պարսիկ տարերց, դադան եւ ճան, ձուլեալ 'ի մի, եւ կամ, 'ի Պրս. դէրճան (վէրալէոն), զգեստ փառաւոր, մեծագին։

— Եւ Իսրայէլ սիրէր զՅովսէփ... եւ արար նմա պատմուճան ծաղկեայ... եւ եղբարքն առեալ զպատմուճանն Յովսեփայ զենին ուլ այծեաց, եւ թաթաւեցին զպատմուճանն յարեանն, եւ առաքեցին ըզպատմուճանն ծաղկեայ առ հայրն իւրեանց, եւ ասեն. Զայս գտաք, ծանի՛ր եթէ որդւոյ քո՞ իցէ պատմուճանդ եւ եթէ ոչ...։ Պատմուճանս որդւոյ իմոյ է (Ծննդ.) — Վաղվաղակի հանէ՛ք զպատմուճանն առաջին, եւ ագուցէ՛ք նմա (Ղուկ.)։

Յորմէ

ՊԱՏՄՈՒՃԱԿ, (հանդերձադէտ)։

Բաղդ. համդերձ եւ դերձակ։

— Գնաց Քեղկիա քահանայ... առ Ողդա մարգարէ կին Սեղղովմայ, որդւոյ Թեկուայ, որդւոյ Արասայ պատմուճակի (Դ. Թագ. ԻԲ. 14)։ Եւ

ՊԱՏՐՈՅԿ, (սեռ.) պատրուգ-ի,

ՊԱՏՐՈՅԳ, հետեւողութեամբ Յունականին, քանզի Յն. λίνον, նշ. Թէ՛ պատրոյգ, Թէ՛ կտաւ եւ Թէ՛ համդերձ։ — Զեղէգն ջախջախեալ՝ մի՛ բեկցէ եւ զպատրոյկն առկայծեալ մի՛ շիջուսցէ (Ես. ԽԲ. 3)։

*

* *

ՀԵՐԻԻՆ, Յն. ὀρύγιον, գործի ծակելոյ, զի ὀρίσσω, նշ. ծակել։ — Առցես հերիւն, եւ ծակեսցես զունկն նորա (Օրէն. ԺԵ. 17)։ — Ծակեսցէ զունկն նորա հերեամբ (Ել. ԻԱ. 6)։ — Ծառայ թէ չելանէ, ծակեսցի ականջն հերեամբ (Նխ. Օր. ԼԵ)։

*

* *

ՄԱՆ, բառ Եբր. 'ի մեզ յաւելուածով մը՝ մանանայ, որպէս եւ Լիբանան, Մատաթիա, Յորդանան Կոստանդիանոս։ Այս յաւելուածի պատճառն յայտնի չէ։ Նկատի իբր՝ քաղցր, նկատի նաեւ իբր՝ մանր։

— Եւ անուանեցին որդիքն Իսրայելի զանուն նորա ման, եւ էր իբրեւ զսերմն գնձոյ սպիտակ, եւ համ նորա իբրեւ զխորիսխ մեղու։

Յորմէ եւ

ՄԱՆՐ, (սեռ.) ման-ու, ՄԱՆՐԵՄ։

— Ընդ անկանել ցօղոյն շուրջ զբանակաւն, եւ ահա 'ի վերայ երեսաց անապատին (իջեալ էր մանանայն) մանր իբրեւ զգինձ, եւ սպիտակ իբրեւ զեղեամն 'ի վերայ երկրին (Ել. ԺԶ. 14)։

Յորմէ (ման) 'ի հակառակէն

ՄՈՒՆ, —Երրորդ հարուած մունն խոշտանգիչ՝ ծանրածնունդ (կամ, մանրածնու, կամ մանրակծու), բարուց եւ կծուակիծ բանից նոցին (Նխ. Ել. Ի.)։ — Մուրկ փխրեալ եւ մանրեալ (Ղեւտ. Բ. 14)։ Տպ. մաքրեալ)։

ՄԱՆԱՆԱՅ, — Եւ մանանայն էր իբրեւ զսերմն գնձոյ՝ սպիտակ, եւ տեսիլ նորա իբրեւ զտեսիլ սառին, եւ շրջէր ժողովուրդն, եւ քաղէին,

եւ աղայլն յերկանի, եւ լեռուէն յանդանի, եւ եփէլն 'ի պուտան, եւ առնէյն նկանս, եւ էր քաղցրու-թիւն նորա իբրեւ գլխոյիսև Ե-ղոյ Լ Վեղու (Թագ. ԺԱ. 7—8)։

Յորմէ 'ի հակառակէն

ՄԱՆԱՆԵԽ, ՄԱՆԱՆԻԽ, զի նկատի իբր կծու, բարկ։

— Հատն մանանխոյ կծու է, եւ ջերմ բնութեամբ (Կուր. Ընձ.)։

— Որպէս մանանխն լեալ կսկծե-ցուսցէ, եւ ճնշեալ զկծեցուցանէ (Եփր. Աւետ.)։ Եւ

ԱՆԱՆՈՒԽ, (սեռ.) անանխ-ոյ։

Նոյնպէս կծու եւ բարկ։

Բաղդ. սոխ եւ սեխ, թութ եւ թթու, գեղձ եւ դաղձ, քաղցր եւ քացախ, պաղատիտ եւ տախպ։

*

*   *

ՆՈՒՇ, Լտ. nux, (սեռ.) nucis,

Յորմէ

ՆՇԻ, —Նշլին ծաղկէ գուշակ գար-նան, գունով սպիտին վկայքն՝ ար-եան (Շնորհ.)։

*

*   *

ԳՐԱՒ, Պրս. կէրէվ, նոյն նշանա-կութեամբ։ — Որ զգրաւ պարտա-պանի դարձուցանէ (Եզեկ. ԺԸ. 7)։

ԳՐԱՒԵՄ, Պրս. կէրէվէյտէն։

— Մի՛ գրաւեսցես զվերին եւ ըզ-ներքին երկան, զի զոգիս գրաւէ այնպիսին (Օրէն. ԻԴ. 6)։ — Եթէ գրաւեսցես զբաճկոն ընկերի քո, նախ քան զմտանել արեւու դար-ձուսցես անդրէն (Ել. ԻԲ. 26)։

ԳՐԱՒԱԿԱՆ, Պրս. կէրէվկեան, նոյն նշանակութեամբ։ — Զի՞նչ գրա-ւական տաց քեզ. եւ սաէ. զմա-տանիդ, եւ զգինդդ, եւ զգաւա-զանդ (Ծննդ. ԼԸ. 17)։

Եւ քանզի Պրսկ. կէրէվէյտէն, որ նշ. գրաւել, նշանակէ նաեւ՝ հաւա-տալ. ուստի եւ 'ի մեզ՝ 'ի հաւա-տալոյն՝

ԱՌՀԱՒԱՏՉԵԱՅ, որ նոյն է ընդ ֆրանսերէն։ —Առհաւատչեայն գրա-ւական սափ (Ոսկ. Եբր.)։ Եւ

ԿՐՕՆ (*), կրաւն, իբր համառօ-տութիւն բառիս՝ գ ր ա ւ (ա կ ա) ն

ԿՐՕՆԱՒՈՐ (**), որ սափ եւ

ՀԱՒԱՏԱՒՈՐ, ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ,

— Կրօնաւորութիւն սուրբ եւ ա-նարատ . . . այս է, այցելու լինել որբոց եւ այրեաց . . . անարատ պա-հել զանձն յաշխարհէ (Յակ. Ա. 27)։

Ի բառէս՝ ֆրանս, գրաւական, Յն. δόξα, նշ. ե՛ւ կրօն, ե՛ւ կարծիք)։

ՎԱՐԿ, զկարծութիւնն բաղդ. քու-եայ եւ վէգ,

ՎԱՐԿԱԾ, չործէք։

ՎԱՐԿԱՆԻՄ, —Զնոցայն լաւ վար-կուցեալ քան զիւրն փրկութիւն (Խոր.)։

— ՆՈՐԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ, — Նորակրօ-նութեամբ մարդկան եմուտ յաշխարհ (Իմ. ԺԴ. 14)։ Այժմու Յունականն χενοδοξία, (ունայնափառութիւն), այլ թարգմանիչն մեր թուի ընթերցեալ, թերեւս ըստ իւրում օրինակին, καινοδοξία, զի Յն. καινός, նշ. նոր, եւ χενός, ընդունայն, սնոտի(***).

(*) Կրօն, որպէս Թէ կրեալ եւ պահեալ, կամ կրելի օրինօք (Ն. Հյկ. Բռ.)։ — Կրօն բառը կիրք բառէն կը ծագի, այն նշանակու-Թեամբ որ զԱստուած ճանաչելն մի հզօր ցան-կութիւն, եւ անդուլ փափաք է մարդոց մէջ, (Քրիստ. Շանշեանց, Տպ. էջմ. 1873)։

(**) Կրօնաւոր, Պրս. ֆեջէւ, Երբ. կրօղ. 'ի ֆեջէրէն քաշել, կրել. որպէս եւ կրօնաւորն է կրօղ, ժուժկալ, համբերող, խաչակիր (Ն. Հյկ. Բռ.)։

(***) Այսպէս Յն. χενοφονία, որ ըստ ձայնին է ունայնաբանութիւն, Թարգմանուած է Ա. Տիմ. Զ. 20, նորաձայն բան, իբր Թէ Յն. գրուած ըլլար καινοφονία, (նորաբանութիւն)։ —«Ո՜վ Տիմոթէէ, պահեա զաւանդն, խոտորեալ 'ի պղծոց եւ 'ի նորաձայն բանից»։ Մինչդեռ մի և նոյն խօսքը, որ կրկնուած է մի եւ նոյն բա-ռերով, Բ. Տիմ. Բ. 16. ('ի բնագրին), 'ի մեզ տարբեր կերպով Թարգմանուա, է, ճարտարա-տութեամբ, «Այլ 'ի պղծոց եւ 'ի սնոտի խօսից

եւ երկրորդ մասն Յուն. բառիդ՝ δόξα, ունի կրկին նշանակութիւն, զի նշ. փառք, կարծիք, կրօնք, հաւատք․ Եւ այսմ Յունական առման եւ 'ի մեզ եւս՝ ֆ—ր—ֆ, ('ի բարգութեան) նշանակէ՝ հաւատք, ὀρθόδοξος, թարգմանի ուղղափառ, κακόδοξος, չարափառ, ἑτερόδοξος, այլափառ, ὀρθοδοξία թարգմանի 'ի մեզ նաեւ՝ ուղէղ ճօրբողէօօբէն, «Շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ (Պարք.)․ Եւ Յն. ὀρθοτομῶ, որ ըստ ձայնին է ուղիղ, քաջ կամ բարւոք հատանել, թարգմանեալ է 'ի մեզ «Ուղիղ համառօտել»․ (Բ. Տիմ. Բ. 15)․ իսկ «Կարծիքն իմ ընդունայն եղեն ինձ, (Յոբ. ԻԲ. 20) մարթի թարգմանել, «Փառքն իմ ընդունայն եղեն ինձ», ուր Եբրայեցին ունի, «Փառքն իմ նորոգեցան յիս»․

* * *

ՀՈՏ, ՀՈՏԻՄ, ՀՈՏՈՏԵՄ, Յն. ὀδμή, Լտ. odor, նշ. հոտ, եւ ὄζω, (անց. կատ.) ὄδωδα, հոտոտել, եւ ἡ ὀδωδή, նշ. հոտ, եւ ὀδωδής հոտաւէտ․ Մերս մերձաւոր է, Տճ. ֆօֆ-մաք, հոտել, եւ ֆօֆըլըմաք, հոտոտել․ — Արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է (Յովհ. ԺԱ. 39)․ Յն. ἤδη ὄζει․

* * *

ՈՑԺ, Յն. ἴς, նշ. ոյժ, կորով, ὑγιής, ողջ, առողջ, ողջ, ամբողջ, եւ ὑγιεία, առողջութիւն, ոյժ, եւ զի՛ք առողջութեան, ուժոյ, առողջութիւն անձնաւորեալ․

— Զայն առ ուժի գործէիր․ — Զի ոչ յաւիտեան է առն ոյժ եւ զօրութիւն․ Յոբմէ

ՑՈՑԺ, (մկ.), բաղդ. կար (կարողութիւն) եւ կարի (մկ.)․ Եւ

ԺՈՑԺ, զկազմութիւնն բաղդ. ժառանգ․

ԺՈՒԺԱՄ, ԺՈՒԺԵՄ, — Նեղութիւնք որոց ոչ կարէ ժուժալ (Եղնիկ)․

ԺՈՒԺԿԱԼ, ԺՈՒԺԿԱԼԵՄ, բարդ. ժոյժ կալ, որ ունի ժոյժ․

ՆՐԻԶ, Պրս. չէօ, չէօէ, նշ. չուան, չէղէ, պարանդակ, եւ չէղէն, հաստատուն․

ԵՐԻԶԱՊԻՆԴ, Պրս. չէղղէնդ․

— Եւ մեռեալն ոտիւքն կապեալովք, եւ ձեռօքն երիզապնդօք (Յովհ. ԺԱ. 44)․ Այս արմատին կը վերաբերին հետեւեալ բառերը իբրեւ նշանակիչք հաստատութեան, ամրութեան, պնդութեան․

ԵՐԷԶ, երկիր անմշակ․ քարուտ, կոշտ երկիր․ —Ջերէզն եւ զանպտղաբեր երկիրն ոռոգանիցէ (Փիլ.)․

ԵՐԻԹ, —էղ․ — Մայրեւորն հերձեալ փայտ մեծ, եւ եդեալ սեպս, ասէ ցառիւծն եւ ցայլսն, օգնեցէ՛ք ինձ պատառել զփայտս, զի՛ք իւրաքանչիւր զձեռս 'ի ներքոյ եւ ձգեցէ՛ք․ Իբրեւ եդին, ոստոյց զերիթսն, եւ մնացին անլոյծ (Մխ. Առակ ԶԶ.)․

ԵՐԴՈՒՄՆ, ԵՐԴՆՈՒՄ,

Այսպէս նաեւ (Եզնկ. ԺԴ. 16)․ — Կենդանի եմ ես, ասէ Ադոնայի տէր․ եթէ (իցէ) ուստերք նոցա դստերք ապրեսցին, այլ ինքեանք ապրեսցին, եւ երկիրն եղիցի 'ի սատակումն․ — Եթէ մահ առաքեցից յերկիրն յայն... եւ Նոյ եւ Յոբ եւ Դանիէլ 'ի միջի նորա իցեն, կենդանի եմ ես, ասէ Ադովնայի տէր, եթէ (իցէ) ուստերք եւ դստերք նոցա մնասցեն․ այլ նոքա արդարութեամբ իւրեանց զանձինս իւրեանց ապրեցուսցեն (Անդ 20)․

մերժեսջիք»․ եւ առա յայտնապէս կերեւի որ Թարգմանչին օրինակն է որ այդ վրիպակը գործած է, եւ ոչ Թէ Թարգմանիչն ինքն. որ երկիւղածութեամբ Թարգմանած է՝ ինչպէս որ գտեր է․

Փակագծի մէջ առնուած էջէ բայը — եւ ան ալ՛ երկու անգ՝ — յայտնի չէ թէ ինչու համար դրուած է, որովհետեւ նշանակութիւն մը չունի, եւ ոչ Յունարէնին եւ ոչ Եբրայեցերէնին մէջ կայ այդ բայը։

Դարձեալ (Սղմ Ի. 3 եւ 31). — Եթէ հարցանե՞լ գայք դուք առ իս. կենդանի եմ ես, եթէ տաց ինչ ձեզ պատասխանի, ասէ Ադոնայի տէր։ Եւ (ԺԸ. 3.) — կենդանի եմ ես, ասէ Ադոնայի Տէր, եթէ լինիցի առակդ այդ որ ասա 'ի մէջ Իսրայէլի։

Դարձեալ՝ (ՃԼԱ.) Թէ մտից... թէ ելից... թէ տաց եւայլն։ (Տպ. Իե ու մտէց). Յոյնն՝ թէ մտից. εἰ εἰσελεύσομαι ὡς ὤμοσα ἐν τῇ ὀργῇ μον εἰ εἰσελεύσοντας εἰς τὴν κατάπαυσιν μου. Այս խօսքը բաղդ. Եբր. Գ. 11—18 եւ Դ. 3—5։

Իսկ (Սաղմ. ՂԴ. 11). — Որպէս երդուայ 'ի բարկութեան իմում՝ թէ մտցեն 'ի հանգիստ իմ, (կամի ասել, մի՛ մտցեն)։ Նաեւ բաղդ. Մարկ. Ը. 12. — Զի՞ է զի ազգս այս նշան խնդրէ, ամէն ասեմ ձեզ իմ տացի նշան ազգիս այսմիկ։ (Այսինքն՝ ոչ տացի). Յն. εἰ δοθήσεται σημεῖον։

— Ասէ Տէր զՄովսէս... կենդանի եմ ես, զի որ... ոչ լուան ձայնի իմում, թէ տեսանիցեն զերկիրն զոր երդուայ հարցն նոցա (Թուոց ԺԴ. 20—23)։

Յորմէ 'ի հակառակէն

ԶԵՐԴ, նման, ու էոչ։

Բաղդ. ճշմարիտ եւ մարթ։

Յորմէ (երիզ կամ երէզ) 'ի հակառակէն՝

ԵՐԵՍՔ(*), նկատեալ իբր՝ փափուկ։

Բաղդ. չուաշ եւ չուշ։ — Երեսք կնոջ պոռնկի եղեն քեզ, անամօթացար առ ամենեսեան (Երեմ. Գ. 5)։ — Կարծրացուցին զերեսս իւրեանց քան զվէմ (Երեմ. Ե. 3)։

ԶՅունական ձայնն σκληροπρόσοπος (ժպիրհ երեսօք) գտանեմք թարգմանեալ 'ի մեզ (Եզեկ. Բ. 4). «Որդիք եղջերէկ եւ խստասիրտք են առ որս առաքեմն զքեզ»։ Իսկ՝ — Երթալ՝ յերեսաց սովոյն պանդխտանալ յայլազգիս (Նէ. Դ. Թագ.)։ — Աղքատացաւ յոյժ Իսրայէլ յերեսաց Մադիամու (Դատ. Զ. 6)։ — Յերեսաց անիրաւութեան բռնաւոր արդար (Ես. ԾԷ. 10)։ — Աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն (Սաղմ. Կ. 4)։

Այս ոճը հասարակ է Հայոյն, Յոյնին, Պարսկին եւ Թրքին։ Պրսկ. ռուայ, եւ Արաբ. վճհ, նշանակեն՝ երես եւ պատճառ։

Յորմէ (երես)

ԵՐԱԶ(*), 'ի մերձաւորութենէ ձայնիցս Պրս. ռուայ (երես) եւ Արաբ. ռէուեա, ռուայէ (երազ), Յն. μορφή, յորմէ Լտ. forma, Նչ. երեւոյթ, տեսիլ, երես, եւ μορφεύς, մորփեւս, մորփէոս, դիք քնոյ եւ երազոց։

Յորմէ եւ 'ի մեզ

ՄՐԱՓ, ՄՐԱՓԵՄ, բառք որ տան զանվրէպ հաւաստիս ոսկեդարեան հնութեան, որպէս եւ բառքս գաճ, գաճաճ, թիթեղն, գերձան եւայլն։ որք չեւ եւս երեւեցան 'ի մատենագրութիւնս նախնեաց ցարդ 'ի լոյս ելեալս։

Մորփէոս դիք քնոյ եւ երազոց, որ զամենայն կերպարանս կերպարանի առ 'ի պատրել 'ի քուն զմարդիկ։

Պրս. խուապ՝ Նչ. քուն եւ երազ, եւ խէպ՝ նշանակէ

ԽԱԲ, ԽԱԲԱՆՔ, — Արար խաբանօք (Դ. Թագ. Ժ. 19)։

(*) . . . Այս վերջին ճշմարտութեան անսուտ վկայ են Երէք, Երես, Երաշտ, որոնց նախ նաւոր ձեւերն էին աներկբայապէս՝ Երէ-ք, տրես, Թրաշ-տ, (Հնդեւր. Նախ. 67).

(*) Բառիդ վերջին երկու գիրը՝ մասնիկ նկատուած է 'ի Քերական. Զարգ. 1496։

ԽԱԲԷՈՒԹԻՒՆ, *խարդախութիւն, պատրանք, դաւանք, եւ Արաբ. խուդուդ, նշ. խաբերայ ։*

ԸՆԴ ԽԱԲՍ ։

* * *

ՀԱՆԴԵՐՁ (*) *գրի եւ*

ԱՆԴԵՐՁ, — *Կապուտակ անդերձ (Նխ. Եւ ԺԺԴ.)։ —Վասն աստեաց եւ կապուտակ անդերձից (Նխ. Ղեւտ. ԽԲ.)։ Յորմէ*

ԴԵՐՁԱՆ(**), (*ա ն դ ե ր ձ—դերձան*)
5 6 1 2 3 4

Եւ

ԴԵՐՁԱԿ. — *Ազէ սա՛ ընդ դերձակն եւ ընդ Թագագործն (Ոսկ.)։*

Պրս. դէրզի, նշ. կցորդութիւն, անդին կցորդութեան, կարան հանդերձից. յորմէ Թրք. դէրզի էնմէք, (կցորդել). եւ Պրս. դէրզմէն, ասեղն, դէրզման, դերձան, եւ դէրզի՝ դերձակ ։

Իսկ առաջին մասն մեր բառին՝ հան, որ եւ՝ հն, Պարսիկ է՝ հէմ, որպէս եւ 'ի բառս համ-դէպ, համդիպիմ, յամ-դիման. ուստի՝ համդերձ՝ նշանակէ ազանելի ինչ ձեւեալ եւ ագնդեալ ասղանեաւ, կցեալ կարանաւ, եւ յընդարձակ միտս՝ ձորձ, կապերտ ։ «Իբրեւ զհանդերձս (Յն. ράκος) ապարահից ամենայն արդարութիւն մեր» (Եսայ. ԿԴ. 6)։ Իսկ Բ. Թագ. Ա. 24. «Որ զգեցուցանէր ձեզ կարմիրս հանդերձ զարդուց ձերոց». Յն. «Հանդերձ զարդուն ձերով», համաձայն օրինակին որ 'ի ձեռնօթութեանն Զոհրապայ ։ Եւ որովհետեւ հանդերձ՝ է ազանելի կցորդեալ կարանաւ, աստի առեալ է նշանակել պարզապէս կցորդութիւն, կցորդ, կից, եւ է ըստ քերականաց՝ Նախադրութիւն ։

ՀԱՆԴԵՐՁ, — *Հանդերձ Մարեմաւ, — ձեօք հանդերձ, — հանդերձ այսու ամենայնիւ ։ Իսկ Յոբ. Ա. 11. «Մեծատունն հանդերձ շահիւքն իւրովք թարշամեսցի». Յոյն ունի «Ի ճանապարհս կամ 'ի գնացս իւր». զի Յն.* πορεία, *նշ. ընթացք, գնացք, ճանապարհ,* πορεύω, *ընթանալ, եւ* πορισμὸς, *շահ,* πορίζω, *շահիմ։ Իսկ Դան. Բ. 14. «Ոչ կարացին ընդդէմ կալ թշնամեաց իւրեանց ընդ որս պոռնկեցան». զի Յն.* πορεύω, *(տե՛ս 'ի վերոյ) մերձաւոր է եւ ձայնիւ՝* πορνεύω, *(պոռնկել), եւ պատճառող շփոթութեանցս ։*

Հանդերձ կոչի ամենայն զգեստ պատրաստեալ, այսինքն՝ ձեւեալ, կարեալ, եւ ըստ այսմ՝

ՀԱՆԴԵՐՁԵՄ, *նշանակէ՝ պատրաստել ինչ ։ — Յարուցեալ Բաղաամ ընդ առաւօտն, հանդերձեաց զէշ իւր (Թւ. ԻԲ. 21)։ — Հանդերձեաց զէշն, եւ ասէ. վարեա՛ եւ գնա՛ (Դ. Թագ. 24)։ — Էր Դաւիթ զգեցեալ պատմուճան հանդերձեալ (Բ. Թագ. Զ. 15)։ — Արկցէ 'ի վերայ նորա Ահարոն խունկ հանդերձեալ, աղացեալ մանր ։ — Յորժամ զճրագսն հանդերձիցէ, ծխեսցէ խունկ 'ի վերայ նորա (Ել. Լ. 8)։ — Տո՛ւր երկուս պատմուճանս հանդերձեալս (Դ. Թագ. Ե. 22)։ — Զաւետիս կենաց ունի՝ զարդիս եւ ըզհանդերձելոցն (Ա. Տիմ. Դ. 8)։*

ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ, *գրի եւ*

ԱՆԴԵՐՁԱՊԵՏ, *իշխան, վերակացու, տնտես, տաճարապետ, Յն.* οἰκονόμος, ταμίας, *իբր՝ Թարգմ. Տճ. քաֆթան աղասը ։*

— Մտո՛ւր 'ի գիւան անդր, առ Սամնաս հանդերձապետ (Ես. ԻԲ. 15)։ — Հանդերձապետ քաղաքին (Եւս. Քր.)։ — Հանդերձապետ Եղագացւոց աշխարհին (Անդ)։

Ուրիշ բառ է

ԱՆԴԱՐՁ, ԱՆԴԱՐՁԱԳԻՐ, *Պրս. էն-*

(*) *Ի համ՝ դարձ, շուրջ պատող զմարմինն։ (Ն. Հյկ. Բռ.)։*

(**) *Դերձան —ն մասնիկ ցուցուած է 'ի Քեր. Զարգ.* 1493 ։

տէրէն, որ նչ. պատուէր, կտակաւ աւանդեալ վերջին կամք, որոյ բայը կըլլայ՝ Էնտէրէշէտէն. —Անզարձ առնէ, եւ քահանայն գրէ 'ի թղթին զբան անզարձի նորա (Կանոն).

Իսկ

ԸՆԹՆՌՆՈՒՄ, (կոր.) ընթերցայ, (հրամ.) ընթերցի'ր.

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. Մերձաւորութիւն ձայնիցս՝ հանտէրէ եւ ընթերց(ուած), թուի պատճառեալ 'ի մերձաւորութենէ Պարսիկ եւ Արաբ. բառիցս՝ տէրս (կցորդութիւն) եւ տէրս (դաս, ուսումն, ընթերցումն), յորմէ մուտէրրիս, (դասախօս, ուսուցող, վարժապետ). Յորմէ

ԸՆԴԵԼ, ԸՆՏԵԼ, բաղդ. կարդալ եւ կիրթ, ափեամ եւ ամոք. Իսկ

ՎԱՐԺ, ՎԱՐԺԵՄ, Պրս. վէրզիտէն, նչ. ամոքել, վարժել, գործել կամ առնել ինչ 'ի ամոքութենէ, եւ վէրժ՝ նչ. ամոքութիւն, վարժութիւն.

Յորմէ

ՎԱՐԺԱՊԵՏ,

Այլ է

ՎԱՐԴԱՊԵՏ, Լտ. veritas, նշանակէ՝ ճշմարտութիւն, 'ի ձայնէս veras, որ նչ. ճշմարիտ, եւ թուի արմատ մերումս վարդապետի, Յն. ἱεροδιδάσκαλος, եւ ἀσκητὶς, ուսուցող, հրահանգիչ, եւ ըստ եկեղեցւոյ առեալ՝ միանձն, կրօնաւոր. Մեր բառը կը պատասխանէ մանաւանդ՝ եւ Արաբականիս՝ ֆաքիհ, (ուսուցող), Լատին բառիս՝ doctus, (գիտուն, հմուտ, բազմահմուտ, յորմէ doctor). եւ doctor legis, (վարդապետ օրինաց, ճշմարտութեան օրինաց, վարդապետ օրէնսգիտութեան, մեկնիչ օրինաց). Յն. νομοδιδάσκαλος, եւ Ասորականիս՝ խուրէ, որ նչ. ընթերցող, (մերձանող), մեկնիչ, վարդապետ օրինաց, զի եւ Արաբ. ֆըրուր, նչ. ընթերցումն. Թրք. օֆուճուղ, որ նչ. ընթերցող կամ տեղեակ ընթերցուածոց, տխողոս է եկեղեցականաց (զոյականաբար առեալ). Եւ ծանօթ ձայնդ՝ խոճա, Եբրայեցերէն նշանակէ՝ էմաստուն.

— Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, եւ զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես (Մատթ. ԻԲ. 16). Յն. διδαχή, նչ. վարդապետութիւն. բայց երբ խօսքը մոլար վարդապետութեան վրայ է, 'ի մեզ թարգմանուած է՝ ուսում. — Ոչ ասաց զգուշանալ 'ի խմորոյ, այլ յաղանդոյ Փարիսեցւոցն եւ Սադուկեցւոց (Մատթ. ԺԶ. 12). Յն. διδαχή, Լտ. doctrina.

Յորմէ 'ի հակառակէն

ՊԱՏՐԵՄ, ՊԱՏՐԱՆՔ, ՊԱՏԻՐ,

Վ, եւ Պ, լծորդք են, — Վանդակ եւ պինդ, մեհեանդ, Պրսկ. կէրտէնտէնդ.

Յն. ψευδοδιδάσκαλος, նչ. սուտ վարդապետ. — Լինէին եւ սուտ մարգարէք 'ի ժողովրդեանն որպէս եւ այժմ 'ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սպրդեալ մուծանիցեն հերձուածս կորստեան (Բ. Պետր. Բ. 1).

Այսպէս կազմուած է, չչփոթելու համար ընդ դուրտէմ, դուրտուրէն. եւ ընդ՝ դուրտէմ, դուրտուրէմ, դուրտ է եւայլն.

*
* *

ՀԱՄԲԵՏԵՄ, — Համետեաց զէշ իւր (Ծննդ. ԻԲ. 3). — Զոյգ իշոց համետելոց (Դատ. ԺԹ. 10).

Ծագեալ 'ի Պրս. ամադէն, որ նչ. պատրաստել, հանդերձել, կազմել.

Յորմէ հայթայթեալ՝

ՀԱՄԵՏ, — Ամենայն համետ իշոյ յորոյ վերայ նստիցի . . . պիղծ լիցի (Ղեւտ. ԺԵ.). Յն. ἐπισάσσω, ἐπισάττω, (σάσσω, σάττω), պատրաստել, հանդերձել.

Յորմէ 'ի մեզ աչխ.

ՍԱԶԵՄ, ՍԱԶԱԾ, — Մէնչէ- Շուշնը սազիլ, ժամը կուրճակուլէ.

Ա՛յլ է

ՀԱՄԵՄԱՏ, *Պրս.* հէմտէմ, *որ նշ. համընթաց, զուգընթաց, ընթացակից, եւ ծագի 'ի բայէս* տէմէկ, *(գալ), նաեւ՝* հէմրահ, *նոյն նշանակութեամբ։ — Ոչ գտանի կին գեցիկ համեմատ սմա* (Յոբ. ԺԱ. 19)։

ՀԱՄԵՄԱՏԵՄ, — *Ընդ լուսոյ համեմատեալ՝ առաւել գտանի* (Իմ. Է. 29)։ — *Ընդ հոգեւորս զհոգեւորս համեմատեմք* (Ա. Կորնթ. Բ. 13)։

Ա՛յլ է զարձեալ

ՀԱՄ, ՀԱՄԵՂ, ԱՆՀԱՄ, ԱՆՀԱՄԻՄ, ՀԱՄԵՄ, — *Եթէ աղն անհամեսցի։ — Վանականդ . . . ծիծաղի՞ս եւ անհամի՞ս։ Յն.* ἄμωμον։

* *
*

ՓՈՂ, *Թրք.* պօղազ, պօրու, *Պրս.* բօրու։ *Յորմէ*

ՓՈՂՈՏԵՄ, *Թրք.* պօղազլամագ, պօղմագ։ *Եւ*

ՓՈՂ ՀԱՐԿԱՆԵՄ, *Թարգմ. Թրք.* պօրու չալմագ։ — *Հարցեն փող աւագափող եւ եկեսցեն ցրուեալքն* (Ես. Իէ. 13)։

ՓՈՂԱՐ, փողահար։ — *Ետես զփողարսն եւ զամբոխ յոյժ* (Մատթ. Թ. 25)։

ՓՈՂԵՄ, *աշխ.* պօռալ։

Փողոց հնչումն նկատի իբր ձայն ուրախական, յորմէ 'ի հակառակէն

ՈՂԲ, (*ողբ, բող = փող*)։
2 3 1   3 1 2

— *Փողս հարաք ձեզ, եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ, եւ ոչ կոծեցարուք* (Ղուկ. Է. 32)։

Դարձեալ

ՓՈՂ, *Պրս.* փէօլ, փուլ, *նշ. խեռնւէշ, լումայ, նաքարակիտ,* մանղր պարա. *եւ այս մօօք աւելի աշխարհաբար է. իսկ գրաբարն է՝*

ՓՈԽ, *յորմէ՝* փոխորդէ, *(տե՛ս ըզբառդ)։ — Հանգանակօք եւ փոխովք մի՛ աղքատանար* (Սիր. ԺԸ. 33)։ *Տճկ.* բօրճ։ *Յն.* δάνειον։

ՓՈԽ ԱՌՆՈՒՄ, *Յն.* δανείζομαι *Թրգմ. Թրք.* էօտիւնճ ալմագ։ — *Փոխ առնու մեղաւորն եւ ոչ հատուցանէ* (Սաղմ. ԼԶ. 21)։ *Յն.* δανείζω։

ՓՈԽ ՏԱՄ, *Թարգմ. Թրք.* էօտիւնճ վէրմէք։ — *Մեղաւորք մեղաւորաց փոխ տան* (Ղուկ. Զ. 34)։

Ուստի ունիմք՝

ՓՈԽԱՌՈՒ, *եւ*

ՓՈԽԱՏՈՒ, — *Եղիցի փոխատուն իբրեւ զփոխառուն* (Եսայ. ԻԴ. 2)։ *Յն.* ὁ δανείζων ὡς ὁ δανειζόμενος։

ԼՈՒՄԱՅԱՓՈԽ, ՓՈԽԵՄ, ՓՈԽԱՆ, ՓՈԽԱՆԱԿ, ՓՈԽԱՆԱԿԵՄ, ՓՈՓՈԽԵՄ,

— *Զջուր մեր գնով արբաք, եւ փայտն մեր* տուողն փոխանակէ (Ողբ. Ե. 4)։ *Յոյնն ունի* ἐν ἀλλάγματι, *իբր՝ փոխանակաւ. որ թուի ընթերցեալ՝* ἀναλλάγματι։

ՓՈԽԱՐԷՆ, *իբր՝* փոխօրէն։

ՓՈԽԱՐԻՆԵՄ։

Նոյնպէս է եւ

ՓՈՂՈՑ, *Յն.* πόρος, *Թրք.* պօղազ, *նշ. անցք, ճանապարհ, կիրճ, լերանց մէջ, եւ հուն գետոյ։*

ՆՐԲԱՓՈՂՈՑ, *իսկ*

ՊՈՂՈՏԱՅ, *Յն.* πλατύς, (*ար.*), πλατεῖα, (*իգ.*), *զօրութեամբ՝* ὁδός, *նշ. արահետ, արքունի ճանապարհ,* լայն փողոց։ *Եւ*

ՊՈՂՈՎԱՏԻԿ, — *Ծօշափեցից զքեզ իբրեւ զսուսեր պողովատիկ պատերազմողի* (Ջաքար. Թ. 13)։ *'ի Յն. եւ յԵբր. չիք՝ պողովատիկ։ Նմանաձայնք են Յն.* πλατύς, *(պողոտայ), եւ Պրս.* բալադ՝ *(պողովատիկ)։*

Յորմէ աշխ.

ՊՈՂՊԱՏ,

ՊՂՏՈՐ, *Թրք.* պուլանըգ, *նոյն նշ. իսկ՝* պուլուտ՝ *ամպ,* պուլուտլու՝ *ամպամած, ամպոտ. պղտոր։*

— *Ցականէ աղբերն պղտորեալ է ջուր նորա* (Եզեկ)։

— *Վա՜յ որ արբուցանէ ընկերի իւրում հրապոյրս պղտորս* (Ամբակ. Բ. 15)։

(պ (ու) լ (ու) տ)
(պ — ղ — տ)

ո-լոր, բոլ-որ, տաք, տոչ-որ տող-որ։

ՊՂՏՈՐՈՒԹԻՒՆ, — Զպղտորութիւն աչացն… 'ի բաց պարզել (Եղնկ)։

ՊՂՏՈՐԵՄ, — Եկայք, իջցուք եւ պղտորեսցուք զլեզուս նոցա, եւ ոչ առաց թէ… պղտորեցէ՛ք (Ափ-Բ.)։ — Ա՛ռ սմիակ պղտորէիր զջուրսն (Ամբ-Հ. Դ. 15)։

*
* *

ՆՇԱՆ, Պրս. Նիշան, նոյն նշ. Յորմէ համառօտեալ

ՆԻՇ, — Սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն (Խոր.)։ — Ցայս նիշ անզուոջ բնակէ (Վրդ. Հրց.)։

ՆՇԱՆԱԻՈՐ, իսկ, (Գործ. ԻԸ. 11) «Ելաք 'ի նաւ մի Աղեքսանդրացի… նշանաւորաւ Դիոսկուրացւոց»։ Յն. παράσημον, եւ առի՛ παράσημον τῆς νέως (նշ. նաւու), որ է զարդ ինչ եդեալ 'ի գլուխ նաւու, յորոչումն յայլոց. եւ է պատկեր միում 'ի դից, որպէս 'ի նաւու առա՛ Դիոսկուրեանց։

ՆՇԱՆԱԿ, — Եւ այս նշանակ ձեզ, գտանիցէք, եւայլն (Ղուկ.)։

ՆՇԱՆԵՄ, — Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց (Սաղմ.)։

ՆՇԱՆԱԿԵՄ, — Ազգաբոս նշանակեաց հոգւոյն՝ սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ (Գործ. ԺԳ. 27)։

ՆՇԱՆ ՏԱՄ, — Որ մատնելոցն էր զնա, ետ նոցա նշան։ — Զայս նըշան տուեալ էր նոցա։ Եւ

ՆՇԱԻԱԿ, Պրս. Նիշանկեահ։

ՆՇԱԻԱԿԵՄ, իբր՝ նշանակել՝ 'ի յառի միտս։ Իսկ

ՆՇԱՆԻԼ, ՆՇԱՆ ՏԱԼ, ռամկական է, եւ նիւթական թարգմանութիւն Թրք. Նիշանլանմագ։

ՆՇԱՆՏՈՒՈՒԹԻՒՆ, ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ, Թրք. Նիշանլը։

*
* *

ՔԱՐՏ, ՔԱՐՏԷՍ, ՔԱՐՏԷԶ, — Սպառեցաւ ամենայն քարտէսն 'ի հուր… եղին 'ի մահ չայրել զքարտէսն… ա՛ռ դու քեզ քարտէս մատեան… ա՛ռ դու ա՛յլ քարտէս… որ էին յառաջնում քարտիսին (Երեմ. ԼԶ.)։ — Քարտէզն եւ սեւագեղ եւ եղէգնն… չնայիս այնուհետեւ 'ի քարտն եւ յեղէգն (Սեբ.)։

Բառ Յն. χάρτης, Պրս. քեաղըտ, քեաղէդ, Արաբ. քըրթաս։ Յորմէ

ԿԱՐԴԱՄ, Արաբ. քըրտաս, (ընթերցուած)։

Կարդա՛լ նշանակէ 'ի մեզ նախ՝ կոչել. — Մեծաձայն կարդացէք, թերեւս… 'ի քուն իցէ, եւ յառնիցէ (Գ. Թագ. ԺԸ. 27)։

Այսպէս եւ Պրս. խանտէն, նշ. ընթեռնուլ, եւ կոչել եւ երգել, յորմէ խանէնտէ, (երաժիշտ եւ ընթերցող). այսպէս եւ Յն. ἄσομαι, նշ. երգել, յորմէ 'ի մեզ՝ տաղել (Տե՛ս զբառդ)։

Յորմէ

ԿԻՐԹ(*), բաղդ. ընթեռնուլ եւ ընդել, սովսրէս եւ սովոր։

ԿՐԹԵՄ, եւ

ԿՐՏՍԵՐ, գրեալ եւ ԿՐՑԵՐ, ԿՐՍԵՐ, իբր՝ կրթատէր, համբակ, (առացեալ զաղայոց), եւ իբր թարգմանութիւն Յն. φιλόπονος. φιλομαθής։

Յն. παιδεία. նշ. խրատ, կրթութիւն, դաստիարակութիւն, ծագեալ 'ի ձայնէս παῖς, (մանուկ, տղայ)

— Ի տղայական տիս կրթութեամբ վարեցեալ՝ զբանական սառ_

(*) Ըստ իմում ստուգաբանութեան կիրթ բառը… իր ծագումը կառնու Արդ կամ Հարթ արմատէն, կ տառը նախդրական մասնիկ մ'է, զոգցես նիւթականութեան իմաստ մը տալով, ինչպէս եւ յառաջիկայ բառերէն կերեւի, թէ բաղդատուին դէմ առ դէմ. կեղծ—եղծ. կեղակարծ—եղակարծ կամ յեղակարծ, կերպ—երփն, կեղտ—եղտ, կոզզուրեմ—ճաստ, ճաստայր։ (Սուքիաս Վ. Պարոնեան, Արեւելեան Մամուլ, Զմիւռնիա, 1880 Ապրիլ, էջ 552)։

նայ շնորհ (Պէտ.)։ — Ի վայելուչ վարժողաց զօգտակարագոյնն կըրթելոյ խրատու (Ածէտ)։ Ա՛յլ է՝

ԿԵՐՏ (*), ԿԵՐՏԵՄ, Պրս. քէրտէն, (առնել, շինել), եւ քէրտ (գործ, արարք), կը պատասխանէ Յունական բայիս ποιέω (առնեմ), ποιητὴς (արարիչ, արարող, յօրինող, ճարտար), յորմէ բարդեալքս

ԳԱՍՏԱԿԵՐՏ, ՁԵՌԱԿԵՐՏ, ՓԱՅՏԱԿԵՐՏ, ՀՐԱՇԱԿԵՐՏ, եւ յատուկ անուանց հետ

ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ։

Յորմէ (կերտեմ)

ՔԵՐԹԵՄ, ՔԵՐԹՈՂ, ՔԵՐԹՈՒԱԾ, ըստ մտաց 'ի վերոյ յիշեալ բառից ποιέω, ποιητὴς, որ կ'ըսուի նաեւ ճարտար, կամ Յունական ձայնիւ՝ պօէտ։

Իսկ

ԳԻՐ, Յն. γράμμα, խուլ (Ա. Եզր. Թ. 52), «Առաքեցէ՛ք զգիր այնոցիկ որք ոչ ունիցին ինչ», Յոյն ունի ἀποστολὰς, որ թուի ընթերցեալ 'ի մեզ ἐπιστολὰς, (զգիրս, ըզգիր)․ միւսք բանին է «Առաքեցէ՛ք կամ տո՛ւք 'ի վայելիցդ զոր վայելէք՝ եւ այնոցիկ որք ոչ ունիցին ինչ»։

ԳՐԵՄ, Յն. γράφω։

ԳԻՐՔ, Յն. γραφὴ, կամ 'ի ձայնէս՝ κεραία գրուած կամ եղանակ գրչութեան։ — Յովտ մի որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինաց (Մատթ. Ե. 18)։ Յն. κεραία։ — Դիւրագոյն իցէ երկնի եւ երկրի անցանել, քան յօրինացն միոյ նշանախեցի անկանել (Ղուկ. ԺԶ. 17)։ Յն. κεραία։

Աստի է 'ի մեզ՝

ՔԵՐԱԿԱՆ, ՔԵՐԱԿԱՆՆ, Յն. κηρὸς, նշ. մոմ, եւ լայնաբար՝ տախտակ մոմապատ, κήρωμα, եւ κηρόω, նշ. պատրաստել տախտակս մոմապատս։ Քանզի 'ի վաղ ժամանակս մինչեւ մագաղաթին գիւտ հնարեալ էր, մոմ հալեալ արկանէին 'ի տախտակս պըղընձիս, եւ 'ի պաղելն եւ 'ի պնդանալ մոմոյն, ապա գրէին 'ի նմա, կամ գրաշմէին գրչաւ երկաթեաւ (στύλος), եւ վերին ծայրիւ գրչին ջնջէին կամ քերէին զմիանգամ գրեալն, 'ի կոկել զանհարթութիւնս գրոյն կամ ուղղել զվրիպակս․ եւ այս են միւսք տակաւոր բանին, «Դարձուցանել կամ շրջել զգրիչն»․ իբր՝ ուղղել, սրբագրել . . . «Եւ զգրիչն դարձուցեալ՝ անարգիցն արկցէ սեւ նիշ, զպերճանացն հատցէ զզարդ» (Որոտ. Աստուած. Քէրթ. 444—445)։ Վասն այսորիկ 'ի մեզ՝ քերթեմ, քերեմ ունին կրկին նշանակութիւն։ Որպէս եւ

ԳՐԵԼ, 'ի մեզ նշանակէ նաեւ՝ համարել, թուել, կարծել։

— Զյանցանս մեր քեզ գրեցեր։
— Այդ մի՛ գրեսցի ինձ 'ի յանցանս։
— Որպէս զվիմին զթել ոչ գրեցեր, եւ զաւազոյ․ փոքու ուսանել մի համարեսցիս (Նարէկ.)։ — Գրեացուք թէ բժշկեալքն էին ինչ նմա անկ (Եղիշէ)։ Գրե-թէ, այսինքն՝ գրեա թէ, համարեա թէ։ — Մինչ գրե՛-թէ լի իսկ լինել (նաւուն յալեաց)։

Տճ. սա՛յ քէ, (սայմագ), եւ սան քէ (սանմագ), համարել եւ կարծել. յոյժ նմանաձայնք են։

Եւ բարդութեամբ

ՈՐԴԵԳԻՐ, ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆ, ՈՐԴԵԳՐԵՄ։

Ուրիշ է

ՏԱՐԱԳԻՐ ԱՌՆԵՄ, իբր թարգմ. Յն. προγράφω։

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ, Յն. προγραφὴ։

Իսկ

ԳՈԳԵՄ,

ԳՈԳ, ԳՈԳՑԵՍ, ԳՈԳՋԻՐ, 'ի բայէս գոչեմ, կոչեմ, (ասեմ)։

(*) Հին մատենագրութեանց մէջ միայն արմատը կերտ կայ գործածուած. կերտեմ՝ յետնոց մէջ միայն տեսնուած է. իսկ բարդութեամբ՝ յաճախ նաեւ հնոց մէջ։

Յն. ἔπω, (ասել), բայց կը գործածուի նաեւ մեր ջէբ'րէին նշանակութեամբ, πὲς ὅτι ἤκουσα, (գրեթէ լսեցի)։ Յունական ձայնքս՝ κρίνω (զատել, համարել, կարծել) բայցի՝ մեր ջէբէմին հետ ունեցած ձայնական նմանութենէն պատճառած է այս։ Տե՛ս՝ ճշգրիտ։

ԴՈՒՆԱՊԱՆ, Պրս. դէրպան։

ՃԱՄԱՐՏԱԿ, Յն. σαμάρταχος, նոյն նշանակութեամբ. (այս անունը մատենագրութեանց մէջ տեսնուած չէ, սակայն կայ բայը

ՃԱՄԱՐՏԱԿԵՄ, — Եւ Համերոս զբաբանեալ պաճուճեալ բանիւք ընդնոյնս ճամարտակէ (Եզնիկ)։ — Ի զուր է ճամարտակելն նոցա (Անդ)։

Յորմէ

ԴԱՄԱՐՃԱԿ, եւ 'ի հակառակէն՝

ՃԱՌ, ԿԱՃԱՌ, — Ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ (Սաղմ. ԼԹ. 8)։ Յն. κεφαλή։ — Ի ճառս գրոց գրեալ է վասն իմ (Եբր. Ժ. 7)։ Յն. κεφαλή, (գլուխ)։ — Ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է (Ա. Կորնթ. Ա. 18)։ Յն. ὁ λόγος։

ՃԱՌԵՄ, — Ճառեա երկրի, եթէ խելամուտ արասցէ զքեզ (Յոբ. ԺԲ. 8)։

Յորմէ 'ի հակառակէն

ՃԱՌԱՏԵՄ, ՃԱՌԱՏԱՆՔ, եւ

ՃՈՌՈՄ։

ԱԳԱՆԻՄ, արմատ այգ (ըստ կրկին նշանակութեան)։ Յորմէ

ԱԳՈՒՑԱՆԵՄ, զգենուլ, զգեցուցանել. իջեւանել. կալ ուրեք մինչեւ ցայգ։

Ըստ առաջին նշանակութեան՝

— Հանէք զպատմուճանն զառաջին եւ ագուցէք նմա (Ղուկ.) = Եղիցի նմա որպէս հանդերձ զի ագանի (Սաղմ. ԾԸ. 13)։ — Պատուիրեաց նոցա ... ագանել հողաթափս (Մարկ. Զ. 9)։ — Ագուցեալ զոտս պատրաստութեամբ (Եփես. Զ. 15)։

Թրք. թեղագրութիւն, այաք գօյը կէյմէք։ Յն. ὑποδέω։ Նոյն թեղագրութեամբ կը նշանակէ նաեւ՝ ճամբէլ կէյմ յոլ էնէլ։ Տճ. կէյտիրմէք։

Յորմէ կը ձեւանայ նաեւ անունն՝

ԱԳՈՅՑՔ, (բառնալիք, ձող կամ լծակ ագուցանելի ընդ օղամանեակս բառնալ ինչ։ Տճ. տըրըք)։

— Ագուսցես զլծակն յօղամանեակն (Ել. ԻԵ. 14)։ — Ձուլեաց նմա չորս օղամանեակս ոսկիս ... եւ ագոյցս՝ բառնալ զնա ագուցիւքն Անդ ԼԷ. 10)։ — Եղեն օղամանեակքն ագոյցք լծակացն առ 'ի բառնալոյ զսեղանն (Անդ ԼԷ. 14)։ — Եւ զագոյցս տապանակին արար յանփուտ փայտից (Անդ ԼԷ. 10)։ — Զոլ լնեխն ագոյց 'ի բազուկս նորա եւ 'ի վերայ մերկոյ պարանոցի նորա (Ծննդ. ԻԷ. 16)։

Եւ ըստ երկրորդ նշանակութեանն՝

— Իսկ Հրեայքն, քանզի ուրբաթ էր, զի մի' մնասցեն 'ի խաչին ագանիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ, աղաչեցին եւ այլն (Յովհ. ԺԹ. 31). Տճ. տաղտըղըմըզ։ — Ա՛ռ մեզ ագի՛ր զի տարաժամեալ է օրս (Ղուկ. ԻԴ. 29). Լատիներէն՝ habitus, (չուխ) նշ. հանդերձ, եւ habito, բնակիմ։ Պրսկ. ճիպպէ, հանդերձ, եւ տօլամէ, բնակիմ։

Յորմէ (ագանիմ)

ԱԳԱՐԱԿ, բաղդ. արկանելիք եւ յարկ, Յն. ἀγρὸς, ածեմ (զգօտի) եւ ածու։ Ըստ այսմ եւ

ՕԹՈՑ, Յն. ὀθόνη, ազգ ինչ զգեստու, մերձաւոր է ձայնիւ Թուրքականիս՝ օրտու, (վրան), եւ օտա, (սենեակ), յորմէ 'ի մեզ՝

ՕԹ, — Ի տունս Ասկաղոնայ առ օթ զագարեսցեն (Սոփ. Բ. 8)։ —

Եկին առ նա յանկողինս օթի (Եզեկ. ԻԳ. 18)։ Եւ

ՕԹԵԽԱՆ։ Տես զզամ եւ զգնում։

* * *

ԴԱՐ, Արաբ. դէհր, (եզ.) էտհար, (յք.) դարք, յաւիտեանք։

Ցորմէ եւ

ՇԱՐ, — Թագաւորել նման չարս տասն։ — Գուցէ ուրեք անուանեալ չարքն ոչ զառ 'ի մէնջ կարգեալ (կամ կարծեալ) ամս նշանակիցեն (Եւս. Քր.)։ Ա՛յլ է

ՇԱՐ, Յն. σειρά. σειρή, Թրք. շըրա։ — Իբրեւ զչար ոսկի է, զի եթէ զառաջնոյն բուռն հարկանիցես, ամենայն զկնի գայ (Ոսկ. Մատթ.)։

Դարձեալ

ՇԱՐ, (գաւառական), Պրս. շէր՝ աղնիւ պատուա Հնդկային։

Քիչ բանողին չար չալիկ,
Շատ բանողին չուլ չալիկ։

ՏԱՐԻ, Եթէ չիցէ 'ի Զանգիկ ...բէդա բառէս։ Նաեւ

ԱՄ, Արաբ. ամ, եւ Լտ. annus, նշ. տարի։ Ցորմէ

ԱՄԻՍ, եւս եւ Յն. μείς, նշ. ամիս, (ըստ Եւողեան բարբառոյ)։

-- Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յաւուրս տարւոյ (Ել. ԺԲ. 2)։

ԺԱՄԱՆԱԿ, Արաբ. զէման, զէմանէ,

Ցորմէ

ԺԱՄ

ԺԱՄԱՆԵՄ, հասանել 'ի ժամու, ունել կամ գտանել պատեհ ժամանակ։ — Հաց անգամ ոչ ժամանէին ուտել (Մարկ. Զ. 31)։ Յն. εὐκαιροῦμαι։

ԱՊԱԺԱՄԱՆ, չհասեալ 'ի սահմանեալ ժամուն, անպատեհ, յետնեալ։ Ա՛յլ է

ԴԱՐ, Պրս. Դար, նշ. զաղաթն։

— Դիմեաց ամենայն երամակն 'ի դարէ անտի 'ի ծով (Մարկ. Ե. 13)։

Ցորմէ

ԴԱՐԱՒԱՆԴ, յորմէ 'ի հակառակէն

ԿԱՐԱՒԱՆԴ, բաղդ. կոչտ եւ կուչտ, քծուար եւ քածուարատ, խեցի եւ ցեխ, թրծել եւ թրջել։

— Վիրաւորեցաւ ընդ կարաւանդան 'ի ներքս (Ա. Թագ. ԼԱ. 3)։ Եւ

ԴԱՐԻՄ, (ասացեալ զհաւուց, զթռչնոց). կալ հանգչել, դադարել 'ի բարձու։

ԴԱԴԱՐԵՄ, յորմէ 'ի հակառակէն

ԴԱՐԱՆ, —Դուք յարիջիք 'ի դարանէ անտի, եւ մտջիք 'ի քաղաքն (Յես. Ը. 7)։

ԴԱՐԱՆԻՄ, — Նստի դարանեալ։

ԴԱՐԱՆԱՄՈՒՏ, —Տեսէ՛ք զի դուք դարանամուտ լինիցիք յետուստ քաղաքին (Յես. Ը. 4)։

Ցորմէ (դարանիմ) 'ի հակառակէն

ԹՈՒԱՆԻՄ, ԹՈՒԶԻՄ, բաղդ. առ եւ ապուռ, եւ ապրիմ, պրկեմ եւ փրկեմ, պնդեմ եւ պնդիմ, սեւեռիմ եւ սաւառնեմ, ընդգրկեմ եւ ընկրկիմ, սալանամ եւ սլանամ։

ԹՈՒԻԶՔ, թեւք, թռչող։

ԹՈՒԶՈՒՆ, ուն՝ մանիկ, որպէս չարժ-ուն, գնայ-ուն, թաք-ուն։

Ա՛յլ է

ԴԱՐ, Թրք. Դէվր։ Պրս. Դէվրան՝ նշ. կոճատ թիւ։

*

ԽՆԾՈՐ (*), ԽՆՁՈՐ, ծագի յԱրաբ. խընզիր, (խոզ), Թելադրութեամբ Յունականին, զի Յն. μῆλον, որ նշ. խնծոր, է նաեւ ընդհանուր անուն ամենայն զենլի անասնոց, որպիսիք են, ոչխար, այծ, խոզ, եւայլն. Լտ. pomus, (ընդհանուր անուն ծառոց պտղաբերաց), նմանաձայն հանգիպեալ է Թրք. ձայնին տօմուզ, (խոզ)։ Բաղդ. մուկն, միս եւ մառեակ, եւ ուրիշ պտղոց անուանց հետ։

* * *

(*) Խնծոր, որպէս Թէ խնկածոր, կամ խանձելի, նախանձելի. Ադամայ պտուղ կարծեցեալ։ (Ն. Հյկ. Բռ)։

ԵՐԴ, 'ի բարբառ Թրքաց, [illegible]՝ նչ. տուն, վայր բնակութեան, սեփականութիւն հայրենի, վիճակ ժառանգութեան, քաղաք հայրենի, գաւառ հայրենի, հայրենիք։

— Առցեն իւրաքանչիւր ոչխար ըստ տանց ազգացն իւրեանց, ոչխար ըստ երդ (Ել. ԺԲ. 3)։ Յն. λαβέτωσαν ἕκαστος πρόβατον κατ' οἴκους πατριῶν, ἕκαστος πρόβατον κατ' οἰκίαν.

Ն. Հյկ. Բռ. յետ վկայութեանն զոր ածէ 'ի մէջ. «Ոչխար ընդ երդ». յաւելու Յն. ըստ տանց հայրենեաց, եւ կամի ասել, թէ հանդէպ Յունականին [illegible]՝ եդեալ է 'ի միրումն [illegible], սակայն յայտնապէս երեւի զի 'ի Հայ թարգմանութեանս «Ըստ տանս ազգացն իւրեանց» կամ «ըստ տանց հայրենեաց», եդեալ է հանդէպ Յունականին κατ' οἴκους πατριῶν. իսկ «Ոչխար ըստ երդ» փոխանակ πρόβατον κατ' οἰκίαν։

(Երդ) յորմէ 'ի հակառակէն

ՈՒՐԴ, (առաւակ յառաջումն պարտիզի)։ Բաղդ. ցամաք եւ ծմակ, նահանգ եւ նհանգ, գաւառ եւ կաւառ, չոր եւ ջուր։

Լատիներէն՝ orior, նչ. ծագել, ելանել, սկիզբն առնուլ, որոյ [illegible] լինի ortus, եւ նչ. ծագեալ, սերեալ, ծնեալ, ծնունդ. յորմէ 'ի մեզ՝

ՈՐԴԻ, յորմէ 'ի հակառակէն

ԽՈՐԹ, — Ո՞ր որդի է զոր ոչ խրատիցէ հայր. զի եթէ առանց խրատու լինիցիք ... ապա խորթք իցէք եւ ոչ որդիք (Եբր. ԺԲ. 8)։ Յն. νόθος։ — Բաժանէ զխորթն եւ ըզսերտ որդին (Ոսկ. Եբր)։

ԽՈՐԹԱՆԱՄ, ԽՐԹՆԱՆԱՄ, ԽՐԹԻՆ, եւ

ՈՒՐՋՈՒ, խորթ ուստր կամ դուստր, (նկատմամբ մօրուի)։

— Որդի կրտսերոյ Պաղոմէի ... եւ ուրջու Կղէոպատրայ (Եւս. Քր.)։

— Ե՛ւս դժնդակ ծուխ որ ընդ մէջ մօրուին եւ ըրջուաց ծխիցի (Սեբ.)։

Եւ լայնաբար՝ անուանք ձագուց ամանց չորքոտանեաց,

ՈՐՈՋ, յորմէ

ՈՐՈՃԵՄ, ՈՐՈՃ, — Խոզ զի թաթահերձ եւ կճղակարաչխ է, եւ որոճէ ոչ, անսուրբ իցէ նա ձեզ։ Եւ

ՈՐԹ, (սեռ.) ու, ուց։

ԱԼՈՋ։ Ա՛յլ է

ՈՐՁ, Յն. ἄρπην, ([illegible])։

— Որ կայցէ 'ի խաչին նորա որձ (Մաղաք. Ա. 14)։

Եւ այս Յունական անունէն է նաեւ յատուկ անունս

ԱՐՍԷՆ։

Ուրիշ է

ՈՐԴՆ։ Յն. ὀρταλὶς է ընդհանուր անուն ձագուց անասնոց։ Իսկ

ԶԱՒԱԿ, Յն. σπέρμα։ — Տացես ինձ զաւակ առն (Ա. Թագ. Ա. 11)։ Յն. σπέρμα ἀνδρῶν, (զաւակ արանց)։

Բաղդ. որդի։

Յորմէ (զաւակ)

ՑԱՒ, — Տրամութեամբ ծնցես որդիս (Ծննդ.)։ Եւ

ԶՈՒ, Արաբ. [illegible] (եզ.), [illegible] (յք.), նչ. ժառանգ, որդի, զաւակ, Յն. αὔασις, ὄασις, ովասիս, այսպէս կոչին վայրք ջրարբիք, ծառաւէտք եւ արգաւանդահողք յաւազուտս Լիբիայ. յորմէ 'ի մեզ՝

Աւազ, — Լինէր իբրեւ զաւազ զաւակ քո (Ես. ԽԸ. 19)։ — Որոց խոստացար բազմացուցանել զզաւակ նոցա իբրեւ զաստեղս երկնից, եւ իբրեւ զաւազ առ ափն ծովու (Դան. Գ. 36)։ Յորմէ

ԶՈՒԱՐԱԿ, թերեւս եւ

ԴՈՒԱՐ, ՏՈՒԱՐ, յորմէ

ՏՈՒԱՐԱԾ, [illegible] Հայերէն է, եւ 'ի Թրքաց 'ի կիր արկեալ։ Յն. ταῦρος, նշանակէ՝ ցուլ։

Զաւակ բառին հակառակէն

ԶԱԾԱԾ, իբր [illegible]։

— Մի՛ երկնչիր, որդեդ Յակոբ-

եան, զածանդ Իսրայելեան (Ե.)։ Յն. [illegible]։ Եւ

ԱՋԱՋՈՒՆ, —Կլանէին եօթն հասկքն ազազունք եւ խորշակահարք զեօթն հասկսն զգեղեցիկս եւ զատոքս (Ծննդ. ԽԱ. 24)։

Յորմէ (երդ) 'ի հակառակէն՝

ԵՐԹԱՄ, բաղդ. տուն եւ տանիմ, ընդունիմ եւ ընթանամ, դրկեմ եւ փրկեմ, աւարեմ եւ ապրիմ, ապականամ եւ սրանամ, սնուեմ եւ սաւառնիմ, փակեմ եւ փախնում, վարկեմ եւ վարգիմ, ընդդրկեմ եւ ընկրկեմ, պնդեմ եւ պնդիմ, մխեմ եւ մղեմ։

∴

ԳԱՄ, իբր՝ լինել 'ի շարժման, եւ լանել 'ի տեղւոջէն յորում գտանի ոք՝ երթալ ուր չէն։

Բայ անկանոն, ըստ քերականաց, 'ի Թրք. [illegible], իսկ անց. կատ.

ԵԿԻ, Յն. ἥκω, նոյն նշ.։

Յորմէ (գամ) 'ի հակառակէն

ԿԱՄ, (բյ.) [illegible]. դարձեալ Թրք. [illegible]։

— Կացցէ արեգակն հանդէպ Գաբաւոնի (Յես. Ժ. 12)։

Կամ բային իբրեւ երկրորդ ձեւ նկատի

ԳՈՄ, որում վկայէ ձայնի եւ նըշանակութեան միաձայնութիւնն։ —Ոյր իցեն երկու համդերձք, տացէ զմին այնմ ոյր ոչն գոյցէ. եւ ուր կայցէ կերակուր, նոյնպէս արասցէ (Ղուկ. Գ. 11)։

Նոյնպէս եւ բարդեալդ

ԻՆՔՆԱԿԱՑ, որ առի նոյնպէս եւ

ԻՆՔՆԱԳՈՅ, (թէպէտ եւ առաջինն է ընտրելի)։ — Յայտնի ցուցանէր եթէ ոչ ինքնակաց ինչ իցեն... զի մի՝ ինքնակաց կարծիցեն զարարածս (Ոսկ. Ես.)։ — Մի է յիւրմէ ինքնակաց, եւ ոչինչ յումեքէ ընկալեալ (Սեբեր.)։ — Երկու արմատս բարւոյ եւ չարի ասէ, եւ զայն ոչ յղութեամբ եւ ծննդեամբ, այլ ինքնակացս (Եզնիկ)։ — Ամենայն ինչ որ չէր եւ եղեւ, արարած է, եւ ոչ ինքնակաց (Անդ)։ — Քանզի գնեն եւ նոքա մի ինչ ինքնակաց սատանա ամենայնի, որոյ ոչ յումեքէ եղեալ, այլ ինքն անձամբ ինքնակաց առաջին գոլով (Անդ)։

Գամ բայէն՝

ԳՈՒՑԷ, իբր՝ ստորադասական եղանակ։ — Ոյր գուցէ, տացի նմա եւ յաւելցի, եւ ոյր ոչն գուցէ, եւ այլն (Մատթ. ԺԳ. 20)։

Եւ նոյնն՝ 'ի հակառակէն, եւ իբր մակբայ, աշխ. [illegible]։ — Գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ 'ի քուն։

Այս մակբայը միշտ ստորադասական, կամ նոյն մաքով ապառնի բայի վերայ կը գործածուի։

— Գուցէ երբեք վերացցի անձն իմ 'ի քէն, գուցէ երբեք արարից զքեզ անապատ երկիր (Երեմ. Զ. 8)։ Թրք. [illegible]։

Իսկ էմ բային ստորադասական եղանակը՝

ԻՑԷ, ըղձականի (մակբայի) պէս կ'ըսուի, ինչպէս նաեւ Թրք. [illegible]։

— Իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքդ այդոքիկ (Եզեկ. ԼԷ. 3)։

Աշխ. [illegible]։ Եւ

ԻՑԻ՜Ւ, (բուն ըղձական), եւ ուրիշ բառով. — Ո՜ տայր։

Ուրիշ արմատէ է

ԳՈՄՔ, — Թաքեաւ ժողովուրդն յայրս եւ 'ի գոմս եւ 'ի վէմս եւ 'ի խորխորատս (Ա. Թագ. ԺԳ. 6)։

Պրս. [illegible], Ռշ. գոմք կամ փարախ, եւ Տճ. [illegible], եւ նկատի իբր ապահովութիւն յերեաց գայլոց եւ այլոց վնասակարութեանց. Նշանակէ նաեւ փայտեղէն նիգ կամ աղխք, փականակ, աղխել զդուռն 'ի զգուշութիւն եւ 'ի պահպանութիւն։ Եւ ասափ է 'ի մեզ՝

ԳԱՄ, իբր՝ աներկեւանութիւն,

ապահովութիւն, հաստատութիւն, ամրութիւն, հնարաւորութիւն։

— Որք խնդգեանոյն ոչ կարեն գամս գտանել յաջորդ եւ 'ի սեղ պատեանս զեանոյն (Վեցօր.)։ — Ոչինչ կարացին գամ եւ մուտ գտանել (Ոսկ. Եփ.)։ — Այնպիսի զօրութիւն ետ մեզ Աստուած, որում ոչինչ կարէ գամ գտանել չարութիւն նոցա (Անդ)։ Յորմէ բարդեալ

ԳԱՄԱԳԻՏ ԼԻՆԻՄ, եւ

ԳԱՄԱԳԻՒՏ ԼԻՆԻՄ, տե՛ս գիւտեմ եւ գտանեմ։ — Չլինէր գամագիւտ պաշարմանն (Եւս. Քր.)։ — Ոչ մահ կարիցէ գամագիւտ լինել (Ոսկ. Մտթ.)։ — Չլինիցի ինչ քեզ այնուհետեւ գամագիւտ հուրն (Անդ)։ — Չառայցէ գամագիւտ լինել իւղն այն 'ի մկանունս մեր՝ ունելեացն նորա (Անդ)։ Եւ

ԵՐԿԱԹԱԳԱՄ, իբր՝ պնդեալ՝ հաստատեալ երկաթով։ — Բեւեռապինդ երկաթագամ տապան գործել (Ագաթ.)։

Յորմէ 'ի հակառակէն Թուի

ԹԱՄԱՀԵՄ, բաղդ. պրկել եւ պըրծանել, փակել եւ փախչել։

Յորմէ (երկաթագամ) Թուի 'ի մեզ՝

ԳԱՄ, իբր՝ քէ-էօ։ Ա՛յլ է

ԹԱՄԵՄ, որ նոյն է ընդ Խամեմ, (տե՛ս զբառդ), իբր՝ ըմպել մինչեւ խաղաս, կամ մինչեւ ցամաքեցուցանել զբաժակն, յորմէ՝ լայնաբար նշանակէ՝ ցամաքեցուցանել, սպառել զհիւթն, քամել։

— Քամեաց զգզաթն, եւ էջ ցօղ 'ի գզաթէ ամանի (Դատ. Զ. 38)։ — Զմժղուկս քամէք, եւ զուղտս կլանէք (Մտթ. ԻԳ. 24)։ — Եթէ ըզջուրն (հազարի) քամեալ՝ անապակ ըմպիցէ ոք, սատակի (Եղնիկ)։ — Ջուր խոր է խորհուրդ սրտի առն, եւ այր իմաստուն քամէ զնա (Առակ. Ի. 5)։ — Զբաժակն քեո քո արբցես՝ զխորն եւ զլայնն ... ըզբաժակն ապականութեան, զբաժակն քեո քո Շամրնի, եւ քամեսցես (Եզեկ. ԻԳ. 33—34)։ — Պատրոյգ ճրագի, որ ծծէ քամէ զիւղն առ 'ի կերակուր հրոյ (Վեցօր.)։

Ի բայէս՝ կամ, որ ցուցանէ լինել 'ի վիճակի հաստատութեան կամ անշարժութեան, 'ի հակառակէն նշանակէ՝ լինել 'ի վիճակի շարժման կամ անհաստատութեան։

ԿԱՄՆ, ԿԱՄՆԱՍԱՅԼ, Յն. ἄμαξα, (սայլ)։ Եւ բայս

ԿԱՍՈՒՄ, (մանրել զորայս), մի՛ շփոթեր ընդ, կասեմ, կասեցուցանեմ։

— Արօր կազմել եւ լուծս յօրինել, եւ սայլս եւ կամուռս, զօրանն կասել եւ կասուլ (Ոսկ. Մտթ.)։ — Զկանայս եւ զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկէսս 'ի ներքոյ կամացն արկեալ կասուին (Բուզ.)։ — Ուռնա կասոյր 'ի կալն ցորեան (Ա. Մնաց. ԻԱ. 20)։ — Կանգնեա՛ց եւ կա՛ս զնոսա, դուստր Սիովնի (Միք. Դ. 13)։ Յն. ἀνάστηθι καὶ ἀλόα αὐτούς, θυγάτυρ ειών։

ԿԱՄ, (շղ.) բառ նշանակիչ անհաստատութեան. — մահ կամ կեանք, այո՛ կամ ոչ, ես կամ դու։ — Կամ արարէք զծառն բարի եւ զպտուղ նորա բարի, կամ արարէք զծառն չար եւ զպտուղ նորա չար (Մտթ. ԺԲ. 33)։ Եւ 'ի հակառակէն

ԿԱՅ, (գյ.), — Ոչ հանգուսցէ ըզքեզ, եւ ոչ լինիցի կայ Թաթից ոտից քոց (Օրէն. ԻԸ. 65)։ — Մինչեւ ցե՛րբ ոչ հարկանիցեմք բուռն զկայից եւ զմնայից (Ոսկ. Փիլ. Ժ.)։

ԿԱՅՈՒՆ, ԿԱՅԿԱՅԻՄ, — Կայկայեցուս ազխատութեամբ չարափառութիւն (Խոր.)։

Յորմէ 'ի հակառակէն

ԹԱՅԹԱՅԵՄ, բաղդ. սասանեմ եւ եղծանեմ։

ՋԿԱՅ ԱՌՆՈՒՄ, աշխ. [illegible]։

ԿԱՅ ՄՆԱՅ, (Ժամագիրք)։ — Անդ յանձանձէր զկայց մնաց ժողովրդեանն (Ա. Մկ. Ե. 53)։ — Անդ

յանձանձէր ածէր զօրավարն զկայ եւ զմնաց զօրականին (Եղիշէ)։

Թերեւս եւ

ԿԱՅՄ, Նկատեալ իբր հաստատութիւն կամ իբրեւ զօրաւոր ինչ, այս խումբէն եղած ըլլայ։ Տես զբառդ։

Տճ. կէֆ նչ. նաւ. Իսկ

ԿԱԼ, Յն. ἄλλως, նոյն նշանակութեամբ, փախչելու համար 'ի սաստկեւ նշանակելոյ։ Բաղդ. ἄλλος, այլ, այլ ոք, եւ ἄλλα, այլ, սակայն, եւ ἄλλας այլ։ — Ուստի՞ կերակրեցից զքեզ, 'ի կալո՞յ եթէ 'ի հնձանէ։ — Ոչ զբասա զոյ վիշապաց եթէ զարգինս 'ի կալոց ուրեք կրիցեն (Եղնիկ)։

ԿԱԼ, նշանակէ նաեւ բակ լուսնորայ, մանաւանդ լուսնի, այսպէս եւ առ Յոյնս, ἄλως, որ նշանակէ՝ կալ, նշանակէ նաեւ՝ բակ լուսնի, եւ Պրս. [illegible] (հարման), նշանակէ՝ կալ, եւ բակ լուսնի, ([illegible]), եւ Թրք. [illegible] բակ լուսնի, ինչպէս բակ ոչխարաց, [illegible] (ἀγέλη)։

Նոյնպէս կը տեսնեմ՝ կամ, կաս, կայ, կաց, կալ, անուանք են. ձեւացեալք 'ի բայէն՝ կամ. ամանք իբրեւ հաստատութիւն նշանակելով, եւ ամանք իբր՝ անհաստատ, շարժուն։ Ա՛յլ է

ԿԱՑԻՆ, Յն. ἀξίνη։ — Թէ անկցի 'ի մեղեխէն (Նէ. Ը.)։ — Խոփոյ եւ կացնոյ յարգ (Ա. Թագ. ԺԳ. 21)։ — Ձեռք մեր փապարեալ են 'ի կացնի (Եղիշէ)։ Ա՛յլ է զարձեալ՝

ԳԱՄ ՄԻ, իբր՝ մի անգամ, եւ է համառօտութիւն բառիս [illegible], (տե՛ս զբառդ)։ — Որ գամ մի յայնպիսի չարչարանս մատնեալ իցէ (Ոսկ. Մատթ.)։ Նոյնպէս

ՄԻԱՆԳԱՄ, — Զամենայն զոր միանգամ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ։ Ի մեզ աւելորդութեամբ կը գործածուի, ինչպէս նաեւ 'ի Թրք. Ա՛յլ է

ՄԻ ԱՆԳԱՄ, Յն. ἅπαξ։ — Մի անգամ եւ երկիցս։ Իսկ

ԳԱՄ ՔԱՆ ԶԳԱՄ, իբր՝ առաւել քան զառաւել, կամ աչխ. [illegible] — Գամ քան զգամ վատթարանայր, ([illegible])։

* * *

ՆԱՐԴՈՍ, Յն. νάρτη, νάρδον, νάρδος, Պրս. [illegible]։ — Նարդոս իմ ետ զհոտ իւր (Երգ. Ա. 12)։

ԻՒՂ ՆԱՐԴԵԱՆ, Յն. μύρον νάρδου. — Եկն կին մի որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, եւ բեկեալ զշիշն եհեղ 'ի վերայ գլխոյ նորա ... յառաջագոյն խնկեաց (Յն. προέλαβε μυρίσαι) զմարմինն իմ 'ի նշան պատանաց (Մարկ. ԺԴ. 3—8)։

Իւղ նարդեան նկատի իբր իւղ օծութեան, որ զհերս գլխոյ եւ ըզմորթ մարմնոյ թանայ, փափկացուցանէ եւ պարարէ, եւ որպէս առաւ պաշտի յօծումն մարմնոյ 'ի փափկութիւն կամ 'ի մաքրութիւն, (տե՛ս 'ի գիրս Եսթերայ Բ. 3, եւ 'ի Դան. ԺԳ. 17). եւ զոր օրինակ յառաջ պատրաստելոյ իւղեփեցաց արուեստիւք հնարեցաւ 'ի մեզ՝ հակառակ նշանակութեամբ՝ [illegible], (տե՛ս զբառդ), 'ի ցուցանել զՁիղս մարմնոյ, յորմէ եւ [illegible], (առացեալ զբազկաց) որ ցուցանէ ըզհզօրն եւ զկարճնեղ, նոյնպէս եւ 'ի [illegible] իւղոյն պատշաճեցաւ

ՆԵԱՐԴ, — Միսքն եւ ջիլքն եւ առաւքն եւ ներարդքն (Ագաթ.)։ Յորմէ

ՆԵԱՐԴԱՊԱՏ, — Խորտակեսցիս ըզբազուկս նորա հզօրս · [illegible] (Եզեկ. Լ. 22). Յն. τοὺς ἰσχυροὺς καὶ τοὺς τεταμένους։

[illegible]՝ նկատի իբր պինդ, զօրաւոր, տոկուն, յորմէ 'ի հակառակէն

ԼԵԱՐԴ, իբր՝ փափկագոյն ներքին մասն մարմնոյ։ — Հան զլեարդն եւ զլեղին, եւ դի՛ր զգուշութեամբ... վասն ո՞յր բարձաք զփիրսս եւ ըզ-

եւ զլեզխս ձկանս . . . սիրտդ
րդդ , եԹէ ոք ունի զեւ կամ
ղծ , զայս արժան է ծխել . . .
ղու 'ի սրտէ անտի եւ 'ի լեր-
ւնն եւ ծխեսցես (Տովբ. Զ.
.
ԱՐՈՑԹ , Թուի բարդեալ , զի
-ն՝ նչ. լեարդ . — Առցես
, եւ զգմակն եւ . . . զլեր-
ն (Եւ. ԻԹ. 22) . Բաղդ. կոչա
ա , (իբր՝ յոյժ փափկագոյնք) .
դ. ընդերք , զնդերք եւ լըն-
(իբր՝ ներքինք մարդոյ) .

.

. .

Ն , ----եր , ----ր , ---ր , Թուի
Պրս. -----, որ նչ. նուրբ
բարակ . Եւ որ ինչ նուրբ
ն է . Որպէս եւ
ԱԿ , ծագի 'ի Պրս. -------- ,
ՅՃ. --------- , նչ. նուրբ Թի-
րկամԹոյ , բարակ , տափա-
ֆադդ. սուր .
րանն . . . անցոյց ընդ փողս
սրին (Մուշեղի) . — Մոյկ ա-
լ , եւ զնրանն յազգեր կա-
եւ 'ի վերայ նրանին . . . —
ամԹ ձեռինն որ կայր 'ի վե-
ատապանի նրանին՝ հարկա-
------- Ե.) . — Եգին զանակ
պէս զի հատցէ եւ կերիցէ .
անակն . . . եհար 'ի սրտի իւ-
. . եհան 'ի նմանէ զնոյն զա-
ւ եհար յիւրում կշտին (Անտ

.

. .

ԱԻ , բառ Պարսիկ , ------ ,
անակութեամբ .
ացին ծերք եւ պառաւունք
յարակս Երուսաղեմի (Զաք.
— Զրուցեն զնմանէ եւ պա-
ք (Խորեն.) , — Զպառաւունս
զմարս .
ԻԻՄ , պառընալ , հիննալ ,
յամ նմանուԹեամբ) .

— Բժիշկք որ 'ի սկզբան ցաւոյն
գէպ իցէ , զայն 'ի սկզբանն մա-
տուցանեն , որ յընդմիջելն՝ զայն 'ի
միջոցի , եւ որ 'ի պառաւել ցաւոյն՝
զայն հուսկ յետոյ (Եզնիկ) . — Այլ
ընդէ՛ր ոչ ասիցէ 'ի -------- ցաւոյն ,
— Քանզի 'ի Յոյն լեզու՝ ցաւ , հի-
ւանդուԹիւն (ἡ ἀσθένεια) է , իգա-
կան , որպէս եւ ------՝ նշանա-
կէ՝ կին ծեր .
—Որպէս ասէ հին տառապելն , «Յա-
նօրէն ձեռաց ելցէ վնաս» , ἡ ἀρχαῖα
(հին) իգական է , քանզի ածական
է՝ պատշաճեալ գոյականի իւրում
παραβολή (տառապել) , որ է իգական .
Բաղդ. (Յոբ. ԺԷ. 14) . «Զմահ
կոչեցի ինձ՝ հայր , մայր եւ քոյր ինձ՝
զերր» . Քանզի Յն. ὁ θάνατος , մահ ,
արական է . իսկ ἡ σαπρία , (երր)
իգական է .

.

. .

ՀԱՄԱՅՆ , նոյն է ընդ՝ ----- եւ
----- , 'ի բարդուԹեան . — ամենա-
կալ , — ամենազօր , եւայլն .
Յորմէ
ԱՄԵՆԱՅՆ , Պրս . ------ , Արաբ. ---
--- , Լտ. omnis , omne , Յն. πὰν ,
նշ. ամենայն , — πανάγιος , ամենա-
սուրբ , այսինքն , ------ ---- -----
----- .
ԱՄԵՆԵՔԵԱՆ , Պրս. -------- .
ԱՄԵՆԵՔԻՆ , Պրս. -------- .
ՀԱՄԱԿ , Պրս. ------ ,
ՀԱՄԱԽՈՀ , Պրս. ------- . Ա՛յլ է
ԱՄԷՆ , Եբր. նշ. եղիցի . —Եւ ա-
սասցէ ամենայն ժողովուրդն , ամէն .
Նոյն բառ է նաեւ 'ի Նոր Կտա-
կարանի , (տէպ) . — Ամէն ասեմ
ձեզ , — Ամէն ամէն ասեմ ձեզ .
Իսկ
ՀԱՄ , ('ի բարդուԹեան) , Պրսկ.
----- , (նման , պէս) , — համամիտ ,
համեմատ . Որպէս եւ
ՀՈՄ , (նոյնպէս 'ի բարդուԹեան) ,

Յն. ὁμός, նշ. նման, հաւասար, — ὁμώνυμος, (համանուն)։

Ընտրելի է 'ի բարդութիւնս համ քան զհամ։

*
* *

ՄԱՇ, ոլեռն, Պրս. մաշ, նոյն նշանակութեամբ։

*
* *

ԽՄԵՄ, նաեւ աչխ. — Ջերմու. թիւն արեգականն ծծեաց խմեաց զնոսա ճառագայթիւքն (Վեցօր.)։

ԽՈՒՄ, կերխում,
ԽՄԱՆ, խմող,
ԽԽՈՒՄ, ջուրը թաթխուած,
ԽԽՄԵԼ,

Պրս. խամ, նշ. գինի, եւ Թրքերէն՝ խամ, նշ. ըմպելի, եւ Պրսկ. խէմ, նշ. կարաս գինւոյ, եւ Արաբ. խամր, նշ. գինի, յորմէ է՝ մախմուր, (գինով)։

Յորմէ (խմեմ)

ԽՈԽՈՄ, ջրարբի, խոնաւ տեղ, ծմակ։ — Փուշն 'ի խոխոմս եւ յապառաժս բուսանի (Ոսկ.)։

Տես՝ քամել զբաժակն։

*
* *

ԿԱՄՔ, Պրսկ. կեամ, քեամ, նոյն նշանակութեամբ։ Այս Պարսիկ բառ նշանակէ նաեւ

ՔԻՄՔ։

Յորմէ (կամք)

ԲԱՐԵԿԱՄ, Թարգմ. Պրս. Նէյքխահ։

Յորմէ (կամք)

ԿԱՄԻՄ, — Այն ինչ կամէր առաւօտն 'ի գիշերոյն մերկենալ (Ա. Մկ. Ե. 30)։ — Այն ինչ արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր (Բ. Մկ. Ժ. 28)։ — Իբրեւ օրն լուսանալ կամէր (Անտ)։ — Բանտապետն ձգեաց զսուսերն, եւ կամէր երթալ զինքն։ — Մինչդեռ կամէր ելանել յԱսորիս (Գործ. Ի, 3)։ — Իբրեւ կամեցաւ զնա ածել Հերովդէս (Գործ. ԺԲ. 6)։ — Եւ մինչդեռ այգն կամէր լինել (Անտ ԻԹ. 33)։ Յն. ἔμελλεν. — Զի՞նչ կամիցիս առնել (Գործ. ԻԲ. 26)։ Յն. μέλλεις։

Առնք եւ առնց պէս շատեր, որ կամիմ բայով 'ի մեզ կը բացատրուին, ոչ թէ նշանակեն տիրապէս կամիլ, այլ ընդ բայի՝ կազմեն իբր ապառնի ժամանակ բայի, պատասխանելով Յունականին՝ μέλλω, այսպէս նաեւ 'ի Պարսից լեզու՝ բայս խասթէն, որ նշ. խոսնել, կամել, եւ ընդ բայի՝ կազմէ զապառնի ժամանակ նորին, եւ արդի Յունարէնն θέλω (կամիմ) բայի օժանդակութեամբն կազմէ զապառնի ժամանակն։

ԲԵՒԵՌ, Յն. βέβαιος, նշ. աստոյգ, ճշմարիտ, հաստատուն։

ԲԵՒԵՌԵՄ, բաղդ. սեւեռեմ։

Յորմէ (բեւեռ)

ՎԱՒԵՐ, ՎԱՒԵՐԱԿԱՆ, Պրս. դավէր, նշ. հաւատք։ Այսպէս եւ

ՍԵՒԵՌԵՄ, ՍԵՒԵՌ, Լտ. severus, նշ. պինդ, խիստ, ամուր, եւ Թրք. սաթ, նշ. մեղեխ, աշխ. չաթ, եւ սէվրէ, սրածայր։ Յորմէ

ՍԵԳ (*), ՍԵԳԱՑԵԱԼ, Բաղդ. երէզ եւ երիզ։

ՍԵԳՀԱԿԱՆ, հոսդադան, էրաչան, բոան։

ՍԵՓԱԿԱՆ, (ըստ յեանց)։

Բառս՝ սեպեհ՝ փոխի նաեւ 'ի վեպէր,

Ի ՎՍԵՐ ԳԱՄ, դնդել յամառաբեամբ, խըրխրալ։

Կազմութիւնը բաղդ. վսեմ, վէգ, վէճ, վէպ։

Սեպեհել բային հակառակէն՝ է

ՍԱԽԱՌՆԻՄ, բաղդ. սալանալ եւ սլանալ, թռչել եւ թռչել։

ՍԵՊՈՒՀ, Պրս. սեփէհ, նշ. հեծելազօր, եւ պատասխանէ Գաղղիական chevalier, յորջորջման (ասպետ)։ Իսկ

(*) Սեգ եւ Սեգահ ըստ մեզ տարբեր արմատէ բառեր են, Թէպէտ եւ Ն. Հյկ. Բռ. եւ Քերական, Զարգ. համարին լինել նոյն։

ՇԱՊՈՒՀ (*), Պրս. շահպուր՝ է յատուկ անուն, եւ թարգմանի՝ արքայորդի ։ Ունիմք

ՀԵՂՈՅՍ, թեւեռ, Յն. ἧλος, նոյն նշանակութեամբ ։ Եւ

ՀԵՂՈՒՍԵՄ, բեւեռել ։

* * *

ԵԶ, ծագի 'ի Յն. εἷς, որ նշ. մի, ոմն (արական) ։ — Մահուամբ եզոյն ուրուք 'ի նոցանէ (Խոր.) ։

Յորմէ

ԵԶԱԿԱՆ, Յն. ἑνικός ։

Յայսմ արմատոյ է նաեւ՝

ԵՍ, դերանուն Ա. դիմաց, եւ նկատի իբր՝ միութիւն, մի, Յն. εἷς, Արաբ. էնա, նշանակէ՝ ես, եւ զուգաձայն գտանի Յունականիս ἕνα, (մի, հյց. εἷς, ուղ. արական) ։

Որպէս եւ Բ. դէմն՝

ԴՈՒ, նշ. երկուութիւն, երկու ։

Լտ. tu (դու), մերձաւոր է ձայնիւ ընդ duo, եւ ընդ Յն. δύο, (երկու) ։ Նոյնպէս եւ Պրս. թէօյ (դու), եւ դէօյ (երկու) ։

Ապա չէ անդէպ ասել, թէ Յն. εἷς, եւ Արաբ. էնա, եւ հյ. եզ. եւ Լտ. tu, եւ Պրս. թէօյ, եւ Լտ. duo, եւ Պր. դէօյ, թելադրած են՝ մեր Ա. եւ Բ. դիմաց դերանուններն՝ ես եւ դու ։ այսպէս եւ Պրս. մէն, եւ Զեղաթա, մէն, որք նշանակեն՝ ես, առիթ եղած են մեր անորոշ անուանց

ՄԷՆ, — Առին մէն մի դահեկան եւ նոքա (Մատթ. Ի. 9), ἔλαβον, καὶ αὐτοὶ ἀνὰ δηνάριον, այսպէս եւ Արաբ. էնէ, որ նշ. ես, նմանաձայն գտանի Յն. (εἷς) ἕνα, որ նշ. մի, (հյց.) ։

Յոյնին մէն (εἷς) առնուած է իբրեւ ես, եւ Պարսկին եօը (մէն), առնուած է իբրեւ մի ։

ՄԻՆ, մի՛ չփոթեր ընդ՝ մի ։

— Մինն պարտէր հինգ հարիւր դահեկան, եւ միւսն յիսուն ։

Յորոց

ՄԵՆԱՒՈՐ, ՄԵՆԱՆԱՄ, ՄԻՆԱՒՈՐ,

— Զիա՞րդ ... նստաւ մենացեալ քաղաքն բազմամարդով (Ողբ. Ա. 1) ։

ՄԵՆԱՍՏԱՆ, իսկ

ՉԵԶՈՔ, ընթերցի՛ր՝ չ-եզ-ոք, իբր՝ եօ ու մէ ոչ, եւ թարգմանութիւն Յն. οὐδέτερος, որ նշ. ոչ մին եւ ոչ միւսն ։

ՄԻ, (աշխ. մէկ), μία, իգականն ձայնիս εἷς. իսկ (Յես. ԺԲ. 9), «Զթագաւորն Երիքովայ զմի, ըզթագաւորն Գայեայ ... զմի, զթագաւորն Երուսաղեմի զմի» եւայլն. եւ այսպէս քսան եւ ինն անգամ մի բառը դրուած է համաձայն Եբրայեցերէնին, իսկ Յոյնը չունի այս կրկնումները՝ գէ՛թ եւ ոչ մի անգամ ։ Եւ որովհետեւ այս կրկնումները Եբրայեցերէնին մէջ երեսուն եւ մի անգամ է, անոր համար վերջին համարին մէջ կ՚ըսէ, «Ամենեքեան սոքա թագաւորք երեսուն եւ մի» . իսկ Յոյնը որովհետեւ քսան եւ ինն թագաւոր կը համրէ, ուստի 'ի վերջոյ կ՚ըսէ . «πάντες οὗτοι βασιλεῖς εἰκοσιεννέα», յայսմ նաեւ մերն Յոյնին համաձայն կ՚ընթանայ, «Ամենեքեան սոքա թագաւորք քսան եւ ինն» ։

ՄԻՒՍ, ըստ հին գրչութեան մեւս, զոր մարթ է գրել մ՚եւս, իբր՝ մէ եօս, թարգմ. Թրք. պիր տահա ։

Կայ նաեւ՝

ՄԻՒՍ ԵՒՍ, իբր, դայւ, դայւ եօս էնդ ։

— Միւս եւս պակաս է 'ի քէն,

ՄԻՒՍԱՆԳԱՄ, նրնէն՝ Երնըրըդ անգամ. իսկ (Մատթ. ԺԹ. 28), «Ի միւսանգամ գալստեան յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց» ։ Յն. ἐν τῇ παλιγγενεσίᾳ, Ի վերա-

(*) Դիտելի են Շապուհ եւ սաֆար բառերուն վերայ կատարուած խաղը, Շապուհ՝ Պարսիկ հնչմամբ շաթուր, եւ սաֆար, Պարսիկ հընչմամբ սեպուհ ։

[illegible] [illegible], կամ 'ի [illegible] [illegible]։

ՄԻՄԵԱՆՑ, իբր՝ [illegible], եւ իբր Թարգմ. Թրք. [illegible]։

Զթուականդ ժ, մի՛ շփոթեր ընդ Մի՛, (մկ.) Յն. μή։

ՈՄՆ(*) է ածական, որ միշտ մարդու վրայ կ'ըսուի, — այր ոմն, կին ոմն, մանուկ ոմն, ուրումն մեծատան, Տերտուղեաւ ոմամբ, Լտ. homo (ուղղ.), hominis (սեռ.), այր, կին, անձն։

ԹԻԻ, (սեռ.) Թու-ոյ։

Յիշեցունէ մեզ դարձեալ զԳրա[illegible], Լտ. duo, եւ Յն. δύο, (երկու) իբրեւ սկիզբն Թուոյ, որպէս թէ յերկու Թուոյ սկսանի բուն Թիւ, զմին չհամարեալ ընդ Թիւս, զի է պարզ միութիւն։

Մանաւանդ՝ զի 'ի Պարսից լեզու կարի նմանաձայնք են՝ [illegible] (դուք), եւ [illegible] (Թիւ)։ Յորմէ

ԹԵԻ, երկու բազուկք կենդանեաց, մանաւանդ Թռչնոց, նկատի եւ իբր՝ կողմն, զի ասի, աջ Թեւ, ձախ Թեւ, իբր՝ [illegible], Թրք. [illegible]։

ԹԵԹԵԻ, ԹԵԻԱԿՈԽԵՄ, Յն. πτερύσσομαι, πτερόω։

ԹԵԻԵՄ, Թռչել Թեւովք։

Յորմէ 'ի հակառակէն՝

ԴԵԴԵԻԵՄ, իբր՝ [illegible]։ Բաղդ. տանիմ եւ տատանիմ, վարիմ եւ վարանիմ։

Եւ

ԹՈԹՈՎԵՄ, [illegible] կամ [illegible]։

(*) Բառիդ վերջին գիրը աւելադրութիւն է. եւ ասիկայ կը տեսնուի շատ բառերու վրայ. — Եօթն, ատամն, սերմն, որոմն, ամառն, ձմեռն, ինքն, եւայլն։ Դարձեալ զի hominis (սեռ.), իսկ [illegible]՝ [illegible] ին յոքնակին է, եւ ոչ Թէ [illegible] ին. քանզի սորա յոքնակին է (յոգն), [illegible]։ Այս վերջինն իբրեւ առանձին բառ առնուելով՝ Թէ [illegible] ին եւ Թէ [illegible] ին յոքնակի նշանակուած է [illegible]։

Թէ [illegible] բառին՝ որ նշանակէ նաեւ [illegible], 'ի հակառակէն է՝

ԴԷԳ, յորմէ

ՀԱՆԴԷԳ, ինչպէս նաեւ՝ [illegible]։

Յորմէ յանդիմանեմ.

ԴԻԳԻՄ, ՀԱՆԴԻԳԻՄ, ԴԷԳՔ,

Ի ԴԷԳ, (մկ.) [illegible],

ԴԻԳՈՂ, ԱՆԴԷԳ, [illegible]։

Բաղդ. պատառ եւ պատեհ, անպատեհ, դժպատեհ, այսպէս եւ Թրք. [illegible], (ուղի, ուղիղ եւ աջող), յորմէ՝ [illegible] (հանդիպել). եւ Պրս. [illegible], (աջ կամ ուղիղ), եւ [illegible], (դէպք, դիպուածք), եւ Թրք. [illegible] (հանդիպել)։

Յորմէ (Թիւ)

ԹՈԻԵՄ, (ներգ.) համարել, 'ի Թիւ արկանել՝ տալով զանուանս Թուոցն։

ԹՈԻԻՄ, (կրաւ.) համարել, կարծել։ — Թուեցան յաչս անզգամաց, Թէ մեռան։ Բաղդ. համարեմ եւ համարիմ։ Այսպէս է եւ Թրք. [illegible], նշանակէ՝ Թուել (իրօք) եւ համարել, աշխ. [illegible]։

ԹՈԻԽՔ, [illegible]։

* * *

ՏԱՐՐ, — Ճարտարմտութեամբ ... ըստ տարերց աշխարհիս։ Արաբ. [illegible], [illegible], նոյն նշանակութեամբ։ Յորմէ

ՏԱՌ, առեալ իբր սկիզբն կամ արմատ դպրութեան, նշանագիր։

* * *

ԲԽԵՄ, ԲՂԽԵՄ, Յն. πηγάζω, եւ աղբիւր՝ πηγή։ Յորմէ

ՓՍԽԵՄ, եւ

ՓՂՁԿԻՄ, եւ

ՄՂՁԿԻՄ, — Հեղձնում, մղձկիմ (Ռ-կ.)։

ՀԵՂՁԱՄՂՁՈԻԿ, իսկ

ՄՍԽԵՄ աշխ., բաղդ. վանել եւ վատնել։ Իսկ

ԺԱՑԹԲԵՄ, հանել արտաքս, փսխել, (իրօք կամ նմանութեամբ),

Լտ. jactus, jacio, jactatio, jaculatio. — Ոչ ակն ածէին զանդէպսն եւ զանիրաւսն ժայթքել ։ Եւ

ԺՔԹԵՄ , յուղէլ , ըրժել , խառնել ։ — Գիշերի յորժամ առ ծովեզեր կայցես , եւ զջուրն ժքթիցես , նըշոյլք լուսոյն հատանին (Եզնէկ) ։

ԺՔԹԵՑՈՒՑԱՆԵՄ , ըռժանել , ֆըլըրըռցոցանել ։ — Զօգոյն որ զցայգ առնու ՚ի խոնաւութենէ ջուրց , հասեալ ջերմութեան արեգականն , չքթեցուցանէ ՚ի բաց զատմկութիւնն , ուստի ընդ արեւածայրս ցօղ անկանի (Եզնէկ) ։

Աստի Թերեւս

ՇԻԹԲ ,

Կայ նաեւ

ԾՔԹԻՄ , իբր ԲԵԲԵ——ԲԵ—ՄԲ ըռըժէլ , կամ ինչպէս աշխարհաբար կ'ըսուի , շըէրէ , եւ բայ մ'ալ ունինք՝ ըռէրըէռւլ ։ — Նա (դուստրն Հերովդիայ) չքթեալ չայլեալ մտեալ կաքաւէր (Ոսկ.) ։ — Զարդարէր աղջկանց լկտեաց չքթելոց (Թուղթ Բար.)։ — Ցուլիցն , Ծուլացելոցն , անմըտացն , չքթելոցն (Աֆր.) ։

* * *

ԵՐԷՑ , (սեռ.) երից-ու , Բառ Յն. ἱερεύς , (մեծ , ծեր , քահանայ) , եւ սա ՚ի ձայնէս ἱερός , նուիրական , սուրբ) ։ Յորմէ

ԵՐԵՔ , (սեռ.) երից ։ (Դիտէ՛ ուղղագրութիւնը , այսպէս եղած է՝ չշփոթելու համար ընդ՝ երէք (կենդանիք) ։

Յորմէ համառօտեալ (առ նորովք) , ԵՌ , (՚ի բարդութեան) ։

ԵՌԱՄԵԾ , ԵՌԱՆԿԻՒՆ , ԵՌՈՏԱՆԻ ։

Երեքն է խորհրդաւոր , նախապատիւ կատարեալ թիւ , մի անզոյգ , եւ մի զոյգ թիւէ կազմեալ ։ Պիւթագորեանք եւ Պղատոնեանք զերեքն քան զամենայն թիւ մեծ եւ գերազանց համարէին , եւ եռանկիւնի ձեւը կ'ըսուէր Յն. σημεῖον τοῦ Θεοῦ ։

Յն. τριάζω , իբր՝ երեքկնել , կը նշանակէ երեք անգամ գետինը զարնել ընդդիմամարտը ՚ի մրցման , վասն զի այս էր նշան յաղթութեան ։

Երեքալեան ծով (Յն. τρικυμία) ըսելով՝ կիմանային՝ շատ կատաղի ծով , եւ երրորդ ալիքն քան զառաջինն եւ զերկրորդն կատաղի կը համարուէր ։ Եռանկիւնի էր Աթենացւոց արդարութեան ատեանը , եւ անոր ձեւէն առնելով անունը կոչեցաւ τὸ τρίγωνον , (եռանկիւն) , նաեւ Նոցա օրինաց տախտակներն (κύρβεις) , եռանկիւնի էին , ինչպէս նաեւ ամէն պաշտօնական թղթեր կը կոչուէին δέλτος , Յունական Δ գիրին անունէն առնելով , քանզի եռանկիւնի էին ։

Պիւթեան հարցկին (πυθία) պատգամատեղին եռոտանի (τριπους) էր ։

Երեք անուն ունենալը ազնուականութեան նշան էր առ Հռովմայեցիս ։

— (Երեքն է) լի թիւ , ունայնութիւն ոչ ունելով (Փիլ. Ճ. ԽԶ 532) ։ — Երեքն կատարեալ է , ունելով սկիզբն , մէջ եւ աւարտ (Խոսք.) ։ — Երիցս ՚ի հրատ կայծականց ցօղեաց ծորան քաղցրածաւալ , երիցս ՚ի ծագըս յարկին բոց ծառացեալ փայլատակեաց (Վէրք. Մշակ. Դ. 381—382) ։ — « Երիցս հնչեալ նուէր » , զի երրեակ թիւն մեծ էր եւ խորհրդական եւ աստուածային առ հինսն . մինչեւ ասել նմին իսկ Վիրգիլեայ ՚ի հովուական տաղսն , « Աստուած ինքնին երրեակ թուով է զուարճացեալ » (Անդ ՚ի Ծան. 381)։

— Երրակի զքեւ նարօտ ՚ի գոյն երրեակ նախ շուրջ պատեմ զքաղնեօքդ այսոքիւք , երիցս ապա շուրջ զքոյին ածեմ պատկեր ։ Աստուած ինքնին ՚ի թիւ կոճատ է զուարճացեալ (Վէրք. Մշակ. Ը.) ։

— Աստ անզօյգ թիւ խմանի երբեակն գերագոյն 'ի թիւս, զի ըստ Արիստոտելի եւ Պլուտարքեայ բովանդակէ զսկիզբն, զմէջ եւ զկատարած. եւ զի զարձեալ սովոր զօրութիւնք զիցն երկնաւորաց եւ սանդարամետականաց բացատրին, քանզի երրեակ 'ի ձեռին Արամազդայ նկարին շանթք, եւ Պիսիդոնի երեքարձէն զաւազան (τρίαινα), եւ Պլուտոնի երեքգլխի շուն, Պարկեայք երեք (τριάδελφαι), Գորգոնեայք (αἱ γοργόνες) ժանտք դժոխոց՝ երեք, ըստ այսմ եւ Արտեմեայ եռադիմակ էին պատկերք, եւ անունն էր յերկրի՝ Անահիտ, յերկինս՝ Լուսին, եւ 'ի սանդարամետս՝ Եկատէ (Անդ 'ի Ծ-ն. 77).

Հնդկաց երրորդութեան չաստուածն է Պրամա, Վիշնու եւ Սիվա. Քաղդէացւոց աստուածաբանութիւնը կը դաւանէր երեք սկիզբն կամ պատճառ. Պարսիկք երեք միհրական պաշտօն կուսուցանէին ժողովրդեան. Ճապոնացիք կը գործածէին երեք թիւը իբրեւ նշանակիչ աստուածութեան. եւ Սիպերիայի անապատներուն մէջ գտնուեցան հին դրամ, յորոյ վերայ դրոշմեալ էր, 'ի պատիւ երրեակ եւ մի աստուածութեան. Չինաստանի մէջ եւս այս վարդապետութիւնը կայ, քանզի այդ երկրին ժողովուրդը կը հաւատայ թէ կայ գերագոյն Աստուած որ ստեղծեց զամենայն, եւ նորա բնութենէն կան երկու ուրիշ կառավարողներ որ ընդ նմա կը տիրեն. մին՝ վերին, եւ միւն՝ ստորին կամ անդնդային աշխարհի վերայ. Պուրկաս կ'ըսէ, Չինաստանցիք երբ աստուծոյն կ'ելլեն, կը դարձընեն իրենց երեսը յարեւելս, եւ իրենց ձեռուընին յարելով իրարու, կ'ըսեն, երրորդութիւն աստուածն պահէ զմեզ իւր օրինաց մէջ. Նոր աշխարհի մէջ եւս կայ այս հաւատքը, քանզի Հարաւային Ամերիկացիք իրենց Թանկա-Թանկա, կամ երրեակ եւ մի աստուածը կը պաշտեն. (Տէրէմուրան դէֆտէրի ֆէրէհլէօղ, 1841 Մօսք).

Իսկ (Յոբ. Գ. 4) «Այլ եւս Երէք աւուրք, եւ Նինուէ կործանեսցի». Երբ. ֆ.......ն.

Երէք բառէն է նաեւ

ԵՐԵՍՈՒՆ, իսկ (Ղուկ. Գ. 23). «Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ, որոց որպէս կարծէր որդի Յովսեփայ». Յունականն ὢν (որ է կամ որ էր) թուի թարգմանչին ընթերցեալ ըստ իւրում օրինակին ὧν (որոց), այլ ստոյգ միտք բանին է... «Եւ էր, որպէս կարծէին, որդի Յովսեփայ».

Նաեւ

ԵՐԷ, գրեալ եւ

ԷՐԷ, երէ վայրի կամ էրէ վայրի, ծագեալ է 'ի բառէս Երէք, ըստ նմանաձայնութեան Յունին, քանզի Յն. τρία, (երեք) եւ θυρία, յք. երէք (այսինքն, անասունք), ա՛յլ է երիվար կամ երիւար.

* * *

ԵՐԹԵՒԵԿ, նչ. երթեւեկող, երթեւեկութիւն. — Եկին որդիքն Իսրայելի գնել ընդ այլ երթեւեկան (Ծննդ. ԽԲ. 5). Յն. μετὰ τῶν ἐρχομένων. — Երթեւեկացն մարդիկ տայիր 'ի գինս (Եզեկ. Իէ. 15). — Ոչ գոյր երթեւեկ՝ տանից. Տէնէբրու համր էկող թաշող չէօր. — Զի՞նչ պատճառք իցեն երթեւեկի նորա 'ի վերայ ջուրցն (Վեցօր.).

ՄՈՒՏ ԵՒ ԵԼ, Տճ. կիրէրէ չըքար.

— Լրտեսք էք դուք, եւ զխոել զել եւ զմուտ աշխարհիս եկեալ էք ... զել եւ զմուտ երկրիս եկեալ էք տեսանել (Ծննդ. ԽԲ. 9—11). Յն. τὰ ἴχνη. Ոճ Հայ. եւ Տճ..

Այսպէս եւ

ՏՈՒՐ ԵՒ ԱՌ , Թարգմ. Տճ. ալըշ վէրէշ, ալըշ էթմէ ։

*

* *

ԿՈՒԵՄ , Յն. κουρίζω ։ Յորմէ

ԿՈՒԱՆ , եւ

ԿՈՒՌ ,

ԱՌ ԿՈՒԱՆ , (մկ.) , ՚ի բառէն կուռն (կռնակ) ։

Յորմէ եւ այլն.

ԿՈՒՆԱԿ , բաղդ. գիք եւ թիկն = թիկունք , — Յարիցեն գիք , եւ եղիցին ձեզ թիկունք ։

Յորմէ (կռեմ)

ԿՈՒՌՈՒՔ , Յն. κουρὰ , նշ. գերծումն , տաշեղ ։ Իսկ

ԴՐՕՇԵԱԼ , որ նոյն է ընդ կոտոտ , ծագի ՚ի Պրս. ... , (որ նշ. քերծուլ , տաշել , Թրք. ... , Յն. κουρίζω ։ Ըստ մեզ՝

ԴՐՕՇԵՄ , Յն. ξύω , նշ. ածիլել , քանդակել , դրօշել , Պրս. ... , նշ. որ կուռս դրօշէ , որ ածնէ դրօշեալս ։ Յորմէ

ԴՐՈՇՄ , ԴՐՈՇՄԵՄ , բաղդ. կուռք եւ կռեմ ։ Ա՛յլ է

ԴՐՕՇ , դրաւշ , Պրս. ... , նոյն նշանակութեամբ ։ Յորմէ

ԴՐՕՇԱԿ , դրաւշակ , ... ։ —Կին մի մերձեցաւ ՚ի դրօշակ հանդերձի նորա ։ Իսկ

ԴՒՌՔ , որ նշանակէ՝ կուռք , դրօշեալ պաշտելի ըստ հեթանոսաց , ծագի ՚ի Պրս. բառէս , ... , որ նշ. ... , Թրք. ... , եւ ընդհակառակն՝ ՚ի հին Պրս. բառէս՝ ... , որ նշ. կուռք , թուի ծագեալ մերս

ՊՈՅՏՆ , (սեռ.) պուտան ։ Յորմէ

ՊՈՒՏՆԱՐԴ , իբր՝ պտուկի ձեւ ունեցող , կաթսայ եւայլն ։

Պոյտն՝ իբրեւ խիստ եւ կարծր մարմին , յորմէ ՚ի հակառակէն՝

ՊՏՈՒԿ , (սաղմանց , ծառոց) որ են փափուկ մարմինք ։

ՊՏԿԵՄ , բաղդ. խեցի եւ ցեխ , ադիւս եւ ակօս ։ — Եթէ կարի ճըմլիցես զպտկունսն , եղանէ արիւն (Առակ. Լ.) ։ — Զի թէպէտեւ ոստովք առժամանակ մի պտկեսցէ (Իմ. Դ. 4) ։ Ուրիշ է

ՊՏՈՒՂ , Տճ. ... նշ. փոխարէն , փոխարինութիւն , եւ զի՞նչ է պտուղ՝ եթէ ոչ՝ փոխարինութիւն վաստակոց ։

(սեռ. պ տ ղ—ոյ
պ տ լ
է է այսինքն՝ ...,

— Ահաւասիկ մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի , մինչեւ առցէ զկանուխն եւ զանագան (Յակ. Ե. 7) ։

ՊՏՈՒՂ ՏԱՄ , Թարգմ. Տճ. ... ։

ՊՏՈՒՂ ԲԵՐԵՄ , ՊՏՂԱԲԵՐ , Թարգմ. Յն. καρποφόρος ։ Պայտն իբրեւ անօթ խեցեղէն յառանին պէտս պաշտեալ լինի՝ եւ է՝

ՊԻՏԱՆԻ , բաղդ. կարասի եւ կարեւոր ։

ՊԻՏՈՅ , ՊԷՏ , ՊԷՏՔ , ԱՆՊԻՏԱՆ , ՊԷՏ ԱՌՆԵՄ ,

ՊԻՏԱՄ , պէտս ունել , կարօտել , Յն. δέομαι ։ — Պիտայ (*) Ահարոն աստուածաւորին Մովսէսի բժշկել զխոտորումն ՚ի Մարիամու (Փիլ.) ։

Եւ

ՊԻՏԻ , —Ոչ պիտի մեզ այր սպանանել յԻսրայելէ (Բ. Թագ.) ։ — Այր ոչ պիտի ծածկել զգլուխ իւր (Ա. Կոր.) ։ — Եւ զի՞ պիտիցի (...) զարմանց սաել (Անդ) ։ Իսկ

ՊԵՏ , (...) , Նոր Պրս.

(*) Ն. Հյկ Բռ. յետ բերելոյ ՚ի մէջ զայս վկայութիւն ՚ի Փիլոնէ , յաւելու . «Այժմու Յոյնն δεῖται , այսինքն՝ աղաչէ» . սակայն այս Յոյն բայց՝ նախ՝ նշանակէ՝ պիտոյ , պէտս ունել , կարօտել , եւ երկրորդ՝ աղաչել. ուստի Թարգմանութիւնն Փիլոնի Թուի ուղիղ . «պիտայ Ահարոն», այսինքն՝ Ահարոն պէտք ունի կամ կարօտի Մովսէսի ՚ի բժշկութիւն Մարիամու ։

դէւ, եւ հին Պրս. դէւ, դաչէւ՝ նշանակէ տէր։

Եւ թուի թէ այս բառը նոյն է ընդ դէւ, կուռք (ըստ ծագմանն), որ յառաջ նշանակէր տէր։

Ըստ Պուտտայական կրօնից՝ աստուածային եւ նուիրական համարեալ անուանք՝ ըստ Զրադաշտական գենին վարին հակառակ մտօք։

Յորմէ

ՆԱՀԱՊԵՏ, այս բառը կը ստուգաբանուի իբր նախախնամ, բարդեալ Նաի եւ պէտ բառերով, Յն. πατριάρχης. սակայն կը թուի ձեւացեալ Պարսիկ բառովս՝ Նավպէտ, որ նչ. բուն եւ բուն ծառոյ. որ 'ի մեզ բարդեալ ընդ անուանս՝ պետ նշանակէ՝ (փոխաբերութեամբ) գնախահայր ազգատոհմի միոյ, իբրեւ զբուն ծառոյ։

Ունիմք բառեր, որ այնպիսի կերպարանք մը առած են, որ առաջին հայեցուածով չես կարծեր թէ օտար ձայն մըն է, զոր օրինակ՝ բարեկենդան, բարդուած է բարէ եւ կենդանութեան բառերով, մինչդեռ առիկայ Պարսիկ բառ մըն է, պէրղենդան, եւ կը նչ. բարեկենդան։ Անջրպետել, բերկրեալ, բուրաստան, փորանկեալ, փարելի, եւայլն։ Այսպէս է նաեւ

ՆԱՀԱՏԱԿ, իբր՝ Նախ-առակ. սակայն թուի լինել բառ Պարսիկ Նավատէ, որ նչ. քաջազն, եւ կը պատասխանէ Յունականին ἥρως, դիւցազն։

ԴԻՔ, (տես 'ի վերոյ), նկատին իբր անմահք, ուստի ունիմք 'ի նորին հակառակէն՝

ԴԻ, ԴԻԱԿՆ, —'ի վերայ դիականց անկելոց։ —'ի վերայ դիական խօսնառն իւրոյ։

Եւ 'ի սորա հակառակէն՝

ԴԻՔ, ՏԻՔ, որք նկատին իբր միշտ կենդանիք. եւ առք կենաց, կեանք, — մանուկ տիովք, — 'ի տիս ծերութեան։ Իսկ

ԴԵԻ, Պրս. դէյՀ նոյն նշանակութեամբ։

Ինչպէս որ ըսուեցաւ, հակառակ մտքով առնուած են Սանսքրիթ դէվա, եւ Զէնտ՝ դաէվա, որ ըստ նոցա՝ նշանակէ՝ սատուած, յորմէ է 'ի մեզ նաեւ

ՏԻԻ, ուստի Աստուած (դիք) կեանք (տիք) եւ լոյս (տիւ)։

Յորմէ

ՏԵԻԵՄ, Արաբ. դէվամ՝ նչ. տեւականութիւն, մշտնջենաւորութիւն, հանապազորդութիւն, Լտ. durare տեւել, duratio տեւականութիւն։

Դիտողութեան արժանի են յաջորդ ազգակից բառք. Լտ. dies, օր, եւ Deus Աստուած, divus, երկինք, dius աստուածային, diurnum տուընջենային, diu 'ի տուէ եւ տեւական, diva դիցուհի, dives մեծատուն, առատ։ Յն. ζεὺς (ուղ.), διὸς (կոչ.), եւ (դորացի) δεῦς (կոչ.), ζεῦ, Դիոս, Արամազդ։ Լտ. Jupiter (ուղ.), Jovis, Արամազդ, juvenis, պատանի, Պրս. ճէվան, եւ Սանսքրիթ եուվան, պատանի, նորատի, եւ Թրք. գէնճ, նչ. երէկ, օր երեկեան։

Ոչինչ ընդհատ արժանի դիտողութեան է

ՕՐ, (աւր), (ուղ.) աւուր, եւ Զէնտ՝ ահուրա մազդա, եւ 'ի սեպագիրս, աուրա, Արամազդ. Եբր. ուր, ընթերցեալ՝ օր, նչ. լոյս, եւ Յն. ἄνως, նչ. արշալոյս, ἄυριος առաւօտեան, ἄυριον վաղիւ, αὔρα օդ, հանդարտութիւն օդոյ, եւ ὥρα ժամանակ, դէպ ժամանակ, նաեւ գեղեցիկ երեւոյթ, եւ Լտ. aura լոյս, օր, եւ aurora արշալոյս, եւ այս վերջին բառս կարգէն թուի

ՕՐԷՆ, (աւրէն), համեմատ լուսոյ, եւ յաւիտենական, եւ իբր՝

ՈՐ ԷՆ, նաեւ յարաբերական ը-

գերանունը, եւ նորա համա-
ժիւնը
Ո, — Օրէն յաւիտենական
յազգս (Ել. Մտէղ.)։
Ուստի
էն, համառակ Աստուծոյ,
իչտ։ (Տես եւ իրաւունք)։
՝ ըստ համաձայնութեան Յու-
չ. աւան, գիւղ, քաղի,
նչ. օրէնք, եւ νομός, աւան,
գաչտ, արտ։
ինչ օրէնք կամ քաղաք, կամ
ամենեւին տեղի բնակեալ
ամբ (Գ. Մկ. Դ. 3)։ — Քա-
ող քաղաքի, եւ օրէնք ընդ-
(Ե.)։ Իսկ — Զաահմանս Հր-
անի եւ զերիս օրէնսն (Ա.
— Սարա կամ Սարայի պա-
լ էր լինել 'ի կանանց օրինի
ԺԸ. 12)։ — Ի կանանց օ-
մ (Ծն. ԼԱ. 35)։
Թուրանական բացատրու-
 ...
օլմ...։ (Տես եւ տեղատես)։
Է (օրէն) իբր 'ի հակառակէն
ԱԿ, ՁՕՐԷՆ, եւ
։ Բաղդ. կռակ եւ քառակ,
լ, աւետարան եւ զաւեչտա-
պիտակ եւ պիտակ։ Եւ
, իբր մանիկ յաւարտս բա-
-աստուածօրէն, մարդկօրէն,
մկօրէն, գառնկօրէն, հեգնօ-

, Յուն-արէն, փոխ-արէն, եւ
, Հայ-երէն, Եբրայեց-երէն։
Յորմէ (օրէնք)
ՆԵՄ, եւ
ՈՒԹԻՒՆ, (աւրհնութիւն)։
րհնութիւն ատացի որ զօ-
նէ։
՝ 'ի Պրս. ձայնէս՝ ...՝ որ
ս է միջարկութիւն զովու-
. սակայն ծագի 'ի բայէս ...
..., Զէնա՝ ... (սահղ-
, առնել), եւ սաի միայն
ւծոյ։

ՀԱՑՐ, կազմուած է 'ի բառէս՝
ԱՑՐ, եւ սա 'ի Պրսկ. էր, նոյն
նշանակութեամբ, Եբր. էշ. նչ. այր,
եւ էշա, կին, եւ առով լաւ եւս կը
հասկընանք թէ ինչ ըսել է, — Սա
կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ ա-
ռաւ (Ծնն.)։

Իսկ բառիս սեռականը

ՀՕՐ, (հաւր), է առանձին բառ,
Պարսկերէն՝ խօր, որ եւ խուր, հուր,
նչ. արեգակն, արեւ, հայր լուսոյ,
կեանք, խուրէ՝ Պահլ. լոյս, յորմէ
բարդեալ՝ խուրչէտ կամ խօրչէտ, որ
թարգմանի լոյս արեգական, կամ
արեւ, որ վարի նաեւ իբր յատուկ
անուն, որպէս ունիմք առ Եզնկայ,
ԽՈՐԱՇԷՏ կամ ԽՈՐԱՇԻՏ։

Արդ

ՀՈՒՐ, Պրս. եւս՝ հուր, խուր, նչ.
արեգակն եւ Արաբ. հուր, նչ. ջերմ,
..., (ամենիմաստ տէր)
ԱՐԱՄԱԶԴ, եւ Ն. Պրս. ...,
զի Զանդին՝ ..., ...՝ նչ.
ԻՄԱՍՏՈՒՆ, Յն. σοφός իսկ σῶφρον։
ԻՄԱՍՏ, յորմէ
ԻՄԱՍՏՆԱՆԱՄ, մի՛ չփոթեր ընդ՝
..., (տե՛ս զբառդ)։
Յորմէ (իմաստուն) 'ի հակառակէն՝
ԻՄԱՍՏԱԿ, բաղդ. օրէն եւ օրինակ,
պիտակ եւ պիտակ, հաւատի եւ
զաւեչտ։ Յն. σοφιστής, այն է՝
ՍՈՓԵՍՏԷՍ, ՍՈՓԵՍՏ, իսկ
ՍՈՓԵՐ, (գիրք, մատեան) է բառ
Եբր. սօֆէր, որ նչ. դպիր։ Յորմէ
ՍՈՎՈՐ, բաղդ. ընթեռնուլ եւ ըն-
գել, կարդալ եւ կիրթ, վերծանել
եւ վարժ։ (Եթէ չիցէ 'ի Պրս. ...)։
ԱՑՐԵՄ(*), իր ծագումն ունի 'ի
բառէս այր, եւ սա 'ի բառէս՝ հայր,
եւ ասոր հակառակ՝ մեր մայր բառը
իր ամփոփական նշանակութենէն զատ,

(*) Այրեմ եւ ... բնաւ իրերաց հետ
վերաբերութիւն չունին, եւ վերջնոյն սկզբան
Հ գիրը նախդիր չէ։

մարիլու նշանակութիւն մ՚ալ ունի, երբոր կ՚ըսուի՝ «Զհրապոյն ըղձուշութեամբ իմն 'ի մայր դարձուցանեն» (Ոսկ.). եւ արեւու համար, «'ի մայրն մտանել»: — Ի հասարակ աւուր եմուտ արեգակն 'ի մայրն (Եղիշէ 'ի Խուղ.). եւ այլն.

ՄԱՐԵՄ, Յն. μαραίνω, թառամիլ, նուաղիլ, շիջանիլ, Կեղտ. mar, եւ Լտ. mare, նշ. ծով, եւ morire, եւ Գրս. մօրթէն, նշ. մեռանել:

Նորուն մեզ հետեւեալ դիտողութիւնը ընել Տարականաց սա երգին. «Անմխիթարան աղաւնի անքըննելի, որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ 'ի հօրէ պատմէ զահաւոր եւ զմիստանգամ զալուստն»: Կ՚երեւի թէ մէկը ձախողակի հախանձաւորութեամբ փոփոխութիւն մը մուծած է՝ գնելով 'ի հօրէ զարհուրելով 'ի յօրտուղ. ինչպէս նաեւ յարաբերականին վրայ Զ մը բեռցուցեր է:

Տարականին այս խօսքը կանխարկէ Յոհ. ԺԶ. գլխոյն 13 եւ 14 համարները, — Յորժամ եկեսցէ նա, հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ, զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսէն (կամ լսիցէն) խօսիցի, եւ զգալոցն (Յն. ըղգալոցն) պատմեսցէ ձեզ: Նա զիս փառաւորեսցէ, զի յինէն առնէ առնուցու եւ պատմեսցէ ձեզ»:

Գալով այր բառին գործածութեանը, կը փարի 'ի մեզ՝ նաեւ մորդ բառին հետ:

ԱՅՐ ՄԱՐԴ, աշխ. էրքէկ մորդ, Տճ. էր քիշի, էր ադէմ.

— Առն մարդոյ, (Յն. առն) չէ պարտ ծածկել զգլուխ իւր (Ա. Կորնթ. ԺԱ. 7): — Արձակեա զկինդ յայր իւր, զի այր մարգարէ է (Ծննդ. Ի. 7). (Յն. զի մարգարէ է):

Այսպէս առի 'ի մեզ նաեւ

ԿԻՆ ՄԱՐԴ, աշխ. կնիկ մորդ:

— Կին մարդ (Յն. կին) յածութեամբ ուսցի... այլ ուսուցանել կնոջ մարդոյ (Յն. կնոջ) ոչ հրամայեմ, եւ ոչ ճոխացան լինել (αὐθεντέω), քան զայր մարդ (Յն. զայր) (Ա. Տիմ. Բ. 11): — Արժա՞ն է կնոջ մարդոյ (Յն. կնոջ) հոլանի յաղօթս կալ (Ա. Կորնթ. ԺԱ. 13):

ԱՅՐ, ի, իւ, տարբեր նշանակութիւն ունի հոլովոյն տարբերութեամբ, եւ կը նշանակէ՝ քարայր, ինչպէս նաեւ հայր՝ ի, իւ, տարբեր նշանակութիւն կ՚առնու, զի կը նշ. եղեւին կամ մայր ծառ, Պարսկերէնն ալ՝ քէօղ կը նշ. թէ՝ քարայր, եւ թէ՝ մայր ծառ: Միւրինէն քիչ մը տարբեր,

ՄՈՐԻ, կը թուի ծագեալ 'ի բառէս՝ հայր, (մօր). վասն զի կը նշ. զտեղին՝ ուր ծնած ու սնած է, կամ ուր որ իր մօրը բնակարանն է, վասն զի միայն իր մայրը կը ճանչնայ, (գազանի վրայ խօսելով):

— (Գազանք) 'ի ծագել արեւու ժողովին, եւ 'ի մորիս իւրեանց դադարեն: — Դարանի (կամ վարանի) 'ի գազանխս որպէս առիւծ 'ի մորւոջ իւրում (Սաղմ.): — Ել առիւծ 'ի մորւոյ իւրմէ (Երեմ. Դ. 7),

Ինչպէս հայր էն

ՀԱՅՐԵՆԻՔ, (մարդու վրայ խօսելով), որ կը նշ. իր հօրը եւ նախահարց բնակած երկիրը:

Այր (սեռ.) առն, բառին սեռականէն է

ԱՌՆԵՄ, եւ իւր անցեալ անկատարը՝ առնէի. իսկ կատարեալը՝

ԱՐԱՐԻ, ունի Յունական արմատ, ἀραρίζω, նոյն նշանակութեամբ, կամ թերեւս բոլորովին այս Յունականէն կազմուած ըլլայ:

ԿԻՆ ԱՌՆԵՄ, ըստ Գրս. զէնքէրտէն, — Արք կանայս առնեն:

Ա՛յլ է

ՅԱՌՆԵՄ, Յն. ὄρνυμι, նոյն նշ.:

Ա՛յլ է նաեւ

ԱՌՆՈՒՄ, Յն. ἄρνυμαι, նոյն նշ.։
— Սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ (Ծննդ.)։ — Առաւ Բաբելոն, յամօթ եղեւ Բէլ։

Տպ. — Բաբելոն։

Հայր բառին հակառակէն

ՀՕՐՑԻ, աշխ. խօրթ հայր։

ՅՕՐԱՑ, — Ընդ մէջ յօրայքն եւ խորթիցն (Սեբէր.)։ Իսկ

ՄԱՅՐ, Պրս. մադէր, մաթառ, Յն. μήτηρ. μᾶ. μαῖα, նոյն է որ ինչ է հայր, եւ ձեւացեալ ըստ այնմ։ Ուստի եւ սորա ստացականն է առանձին բառ, իբր խոնաւ եւ ջրատ տեղի, բեղմնաւոր, նշանակ ծննդականութեան, որպիսի համարեալ են ճահիճք եւ ամենայն ջրարբի վայրք, հակառակ հօր, իբր խօր, խուր, հուր, սկիզբն ջերմութեան, ծնուցիչ զօրութիւն՝ խառնեալ ընդ խոնաւութեան։ Իսկ՝

ՄՕՐՔ, իբր՝ ճախին։ — Եւ ոչ մօրք անգամ տղմացեալ միայն (Վեցօր.)։ Եւ

ՄՕՐԱՑ, ՄՕՐԱԿԱՆ, — Հաւուց վայրենեաց եւ մօրականաց (Եփ. Թր.)։

ՄՕՐՈՒՏ, ՄՕՐԱՆԱՄ, Ծովացեալ՝ մօրացեալ կային ջուրք յանդաստանս (Սեբէր.)։

ՄՕՐՏԱՆԱՄ, — Տեղիս յամարայնի մօրտացեալս ջրով (Սեբէր.)։ — Երկնաւոր անձրեւօք մօրտացեալ (Ածք)։

Եւ

ՄՕՐՈՒ, աշխ. խօրթ մայր։
— Ծուխ որ 'ի մէջ մօրուին եւ ըրջուացն ծխիցի (Սեբէր.)։ Եւ

ՄԱՐԻ, Յն. θήλεια, Թրք. Տիշի թավուգ։
— Աքաղաղ որ շրջի 'ի մէջ մարեաց սիգալով (Առակ. Լ. 31)։

*

* *

ԹԱՆՁՐ, (սեռ.) թանձ-ու, Լտ. densus, նոյն նշանակութեամբ։

*

* *

ՍԵՂԱՆ, Պրս. չէշան, նշանակէ՝ սեղան ճոխ, սեղան արքայական։
— Ուտիցէք եւ ըմպիցէք 'ի սեղան իմ յարքայութեան իմում։

*

* *

ԱՐՄԱՒ (*), գրի եւ

ԱՄԲՐԱՒ, եւ

ԱՄՐԱՒ, — Մնուցի զնոսա ամբաւով եւ բանջարով (Վրք. Հրց.)։ — Ցքի զոր յամբրաւոյն առնէին, եւ 'ի պէտս գինւոյ փոխէին, զայն կոչէ (Ոսկ. Եփ.)։

ԱՐՄԱՒԵՆԻ, ԱՄԲՐԱՒԵՆԻ, ԱՄՐԱՒԵՆԻ, բաղդ. սկիսմն եւ սկիզբն։

Արգ՝ ամբրաւ՝ է բարդեալ ամբր-աւ. եւ կազմեալ է այսպէս. Յն. ἄμβροτος, նշ. անմահ, անապական, յորմէ է մեր բառին առաջին մասը՝ ամբր. իսկ երկրորդ մասը՝ աւ, է իբր համառօտութիւն բառին՝ հաւ (թռչուն), ուստի ամբրաւ՝ ստուգաբանի՝ անմահ հաւ. քանզի հաւն արմաւ՝ որ եւ փիւնիկ հաւ, անմահ է, վերստին ծնանելովն 'ի մոխրոյն (ըստ առասպելաց)։ Եւ քանզի Յունական ձայնին φοῖνιξ, (փիւնիկ) կրկին է նշանակութիւն, զի նշանակէ զպտուղն եւ զհաւն արմաւ, վասն այնորիկ եւ հայեցին արմաւ կրկնանշանակ է Յունականին հանգոյն, զի յայտ առնէ՝ եւ՛ զպտուղն, եւ՛ զհաւն։

*

* *

(*) Որպէս յայտնի է, բառս այս գրի յաճախ արմաւ, եւ ոչ ամբրաւ, Թէպէտ եւ վերջինս այս մերձաւորագոյն է Յոյն արմատոյն. Ամբրաւն գրեթէ խափանեալ է այժմ. մինչեւ Ն. Հյկ. Բառագրքոյն ռամկական համարել զամբրաւ, եւ իբր աղաւաղութիւն արմաւոյն։
Այսպէս եւ «կէչէ» բառին հնագոյն ուղղագրութիւնն է, «կէտ», սակայն 'ի վաղուց գագարեալ է յարկանելոյ 'ի կիր. մինչեւ բազմաց չգիտել իսկ եթէ գուցէ այնպիսի ինչ Հայերէն բառ։

ՄԱՃ, — Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով եւ հայիցի յետս (Ղուկ.)։ Պրս. մաճ, նոյն նշանակութեամբ։

ԿԱՊԷՆ, Պրս. քէօպին, նշանակէ որ ինչ կանխաւ տուեալ լինի հարսին ի կողմանէ փեսային։ (Տե՛ս եւ չընաքտար, դողչաքտաքհան)։

*

* *

ԱԲԵՂԱՑ, Արաբ. եպիլ, նոյն նշանակութեամբ։

ՃԱՀ, այսպէս գրուած է՝ փախչելու համար ի ձայնէս հայ, որ է անուն թռչնոյ. Պրս. հա, հայ, նշ. տեղի, ուստի

ՃԱՀԵՄ, նշ. յարմարել բառ տեղւոյն։

ԱՆՃԱՀ, անյարմար, անտեղի, Յն. ἄτοπος. — Անճահ առասպելք (Սեբեր.)։ Կամ յԱրաբ. հայէք, պատշաճ, արժանի, ճահաւոր։

ԱՍՊԱՐ, Պրս. ասբեր, ասբար, էսբեր, նոյն նշանակութեամբ։

Յն. ἀσπίς, նշ. վահան բոլորշի. Թող զի ասպարք ի վաղ ժամանակս բոլորշիք էին վահանաձեւ։

Յորմէ

ԱՊՍՊԱՐԵՄ, ոչխ. ապսպրել։

Այսպէս եւ Պրս. ասբարտէն, ասբերտէն, էսբէրտէն բայք, (որոց հրամ. լինի ասբար, ասբեր, որք են նախ. արմատք, եւ նշանակեն՝ ասպար, վահան), նշանակեն՝ ապապարել, պատուիրել։ Բաղդ. պատել եւ պատմել, եւ պատուիրել։ Եւ

ՍՊԱՌԵՄ, ՍՊԱՌՈՒԱԾ, Ի ՍՊԱՌ, ՍՊԱՌ, Պրս. ասբերիչէսդէն, նշ. կատարել, ամբողջանալ, աւարտիլ։ Յն. εἰς τέλος. քանզի Պրս. ասբերէ, էսբերէ, նշ. վախճան, կատարած, եւ մերձաւոր ձայնիցս ասբեր, էսբեր, որք նշ. ասպար, վահան։ Բաղդ. զրահ եւ զրաւ։ — Ի սպառ սիրեաց զնոսա (Յովհ. ԺԳ. 1), Յն. εἰς τέλος։

Ի բարդութեան

ՍՊԱՌՍՊՈՒՌ, կրկնութիւն ի նմին արմատոյ, որպիսիք են կերակուր, խառնամանն, հայհոյել, խոնդամանդ, խաղտախուզա, բարձրաբերձ։

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆ, Յն. πανοπλία. — Զսպառազինութիւնն հանէ յոր յուսացեալ էր։ Եւ

ՍՊԱՌՆԱՄ, ՍՊԱՌՆԱԼԻՔ (*), բաղդ. ազդեմ եւ սաստեմ։ Եւ

ՊԱՏՍՊԱՐԵՄ, Յն. ὑπερασπίζω, իբր ծածկել ընդ ասպարաւ, վերակացու լինել, (Ծննդ. ԺԵ. 2)։

ՊԱՏՍՊԱՐԱՆ, Յն. ὑπερασπιστής։ Եւ

ՊԱՐԻՍՊ, որուն վերջին գիրը (Պ), աւելադրութիւն է. այս ձեւով ունինք կազմուած քանի մը բառեր, այսինքն՝ բառին մէկ գիրը կրկնուած բառին վերջը կամ սկիզբն, այսպէս են՝ անդունդ, (որ է իբր անընդունող, ծուծկալ, (իբր՝ ոյժ կալ, ոյժ ունեցող), պանդուխտ, ամպրոպ, (Յն. ὄμβρος), թակարդ, (Պրս. թէքէր)։

Ի սոցունց

ՊԱՐ, ՊԱՐԵՄ, — Լուաւ զձայն երգոցն եւ զպարուց (Ղուկ. ԺԵ. 25), շարժուն վիճակ կենթադրուի։

Բաղդ. խաղ, խաղամ եւ խաղաղ։

Յորմէ ի հակառակէն

ՓԱՐԻՄ, բաղդ. սեւեռել եւ սաւառնել, պնդել եւ պնդիլ։ Իսկ Ա. Կորնթ. Դ. 13. «Իբրեւ աղբ նշաւակի եղեաք ամենայն աշխարհի, ամենեցուն փարելի լինել մինչեւ ցայժմ»։ Արդ

ՓԱՐԵԼԻ(**), առանձին բառ է. Պրս.

(*) Իսկ ՚ի Գործ. Թ. 1. «Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք և սպանմամբ աշակերտացն Տեառն», Յոյնն ունի «... լցեալ սպառնալիս եւ սպանումն յաշակերտսն Տեառն», եւ Յուլի մերձաւորութենէ ձայնիցս ἐμπνέων (շնչեալ) եւ ἐμπλέων (լցեալ) պատճառ շփոթութեան։

(**) Ն. Հյկ. Բռ. ասէ. «Փարելի ջնջած, որ փարի զարբելի ենթակայիւ, կամ որպէս փարատիչ աղտոյ, սրբիչ, մաքրիչ, Յն. περικάθαρμα, տարաքրիչ, շուրջ մաքրիչ, որ այ-

չիւրիւք, որ Նչ. անարգ եւ անպիտան ոք, արժանի ընկենլոյ արտաքս, երից դանգաց գին ։

Ուրիշ է

ՊԱՐ, որ գործածուած կը տեսանուի բարդութեանց մէջ իբրեւ մասնիկ (էքն) կամ բառ, եւ է Յն. περί,

Դարձեալ 'ի բառէս՝ ասպար՝

ՇՊԱՐ, — ի ծարիր եւ 'ի մնգոյր չպարէիր (Եզեկ. ԻԴ. 40) ։

Շպար՝ իբրեւ անուն չկայ մատենագրութեան մէջ, հետեւաբար եւ 'ի բառագիրս նշանակուած չէ իբրեւ բառ, ինչպէս կան ուրիշ չնշանակուածներ ալ, զոր օրինակ՝ ճամարտակ, ժմերա, թէպէտ այս յետինը գործածուած է տեղ մը (Ոսկ. Եփս.) «Այլ չար է, սեհն, ազգն, ժմերա, լիրբ եւ անամօթ ։

ՇՊԱՐԻՄ, — կին որ 'ի մնգոյր եւ 'ի ծարիր չպարիցի (Ոսկ. Մատթ.) ։

Շպարելն է ածել զերեսօքն օտար ինչ, սոյնպէս իմա՝ եւ զկետագայս,

ԺՊԻՐՀ, ԺՊՐՀՈՒԹԻՒՆ, որ 'ի կիր արկանի մանաւանդ ընդ բառիս երես ։ - Ազգ ժպիրհ երեսօք ։ — Որ ժպիրհն է երեսօք իւրովք, ատելի լիցի ։ — Ցարիցէ թագաւոր ժպիրհ երեսօք ։ Եւս եւ որ ինչ անկ է երեսաց ։

ԺՊԻՏ, ԺՊՏԻՄ, մի՛ շփոթեր ընդ՝ ԺՄՏԻՄ,

ԾՊՏԻՄ, ԾՊՆԻՄ,

ՀՏՊԻՏ, ՀՏՊՏԻՄ, ՀՊՏԻՄ, ՀՊՏԱՆՔ, նաեւ

ՊԱՇԱՐԵՄ, գուշաթմագ,

(ա ս պ ա ր, պ ա շ ա ր)
2 3 1 4 5 3 1 2 4 5

Եւս եւ

ԱՌԱՍՊԵԼ, Յն. πρόβλημα, Նչ. առասպար եւ առասպել, Պրս. քէրէթէ, Նչ. ծածկոյթ, վարագոյր, եւ քէրէթէ՝ առասպել ։

լուր Թարգմանի 'ի մեզ տարագիր կամ անսարգել, եւ փոխանակ » ։

(առասպ-ել, ա ս պ ա ր-ել)
1 4 5 3 2

եւ վերջին վանկն՝ ել, մասնիկ է՝ նման մասնկանցն՝ ալ, ել, իղ, եւղ, եղ ։ պատատակ-ալ, անարգ-իլ երկ-իղ, երկ-եւղ, երկ-իւղ, երկ-եղ ։

Իսկ

ԱՌԱՍՏԱՂ (*),

ա ռ ա ս տ ա ղ,
1 2 3 6 7 5 4, այսինքն՝
ա ռ ա գ ա ս տ եւ
ա ռ ի գ ա ծ

Նոյն ընդ

ԱՌԱԳԱՍՏ, (ձաձքալը), Պրս. խէյմէ Նչ. առաստաղ եւ առագաստ ։

ԱՌԻԳԱԾ, բարդեալ Յունականաւս՝ στέγη ։ (=սթաղ), որ Նչ. ծածկոյթ, յարկի, առաստաղ ։ Իսկ

ԴԱՍՏԱՌԱԿ, Պրս. դէսթուրչէ, (ձաձքալը թէլա) ։

Ունինք դարձեալ սաղարէն կամ խաղարէն

ՍՓԱԾԱՆԻՄ, Յն. περιζώννυμι ։

ՍՓԱԾՆՈՒՄ, ՍՓԱԾԱՆԵԼԻ, — կարեցին տերեւս թզենւոյ եւ արարին իւրեանց սփածանելիս (Ծննդ.) ։

Բարդուած սփ (համառօտութիւն սաղարի) եւ ածիմ ։ իբր շուրջ ածել, ընդ մէջ ածել իբր զգօտի ։

Յն. περίζωμα περί (շուրջ), ζώνη (գօտի), եւ դարձեալ ζῶμα, նշանակէ սփածանելի ։ Տես եւ զգածիմ ։ զգածնում ։ Ուրիշ է

ՊԱՇԱՐ, որ կը թուի թէ նոյն է ընդ ձայնիս

ՎԱՃԱՌ, յորմէ

ՎԱՃԱՌԱԿԱՆ, — Երթայք 'ի վաճառականսն եւ գնեսջիք ձեզ (Մտթ.) ։ Պրս. սօտա եւ պազար, պազարկեան (պազիրկեան) ։ Եւ

ՊԱՃԱՐԱՆՔ, ՊԱՃԱՐԵՄ, — Եսեա Յակոբ եթէ գոյ վաճառ յերկրին Եգիպտացւոց, ասէ ցորդիս իւր . . . ահա լուեալ եթէ գոյ ցորեան յԵգիպ-

(*) Առաստաղ = սթաղ, ընկալեալ է եւ 'ի Թուրքաց ։

տոս, իջէք անդր, եւ գնեցէք մեզ սակաւ մի կերակուր ··· տարայք զվաճառ ցորենոյդ ձերոյ ··· եւ տալ նոցա պաշար 'ի ճանապարհ ··· ընդվաճառս ցորենոյդ ··· տանիցիք ··· յերկրի աստ առնիցէք վաճառ ··· եւ ետ նոցա պաշար 'ի ճանապարհ (Ծննդ. ԽԲ. ԽԳ. ԽԴ.)։

(Այս պատմութեան առթիւ մտածուած են այս բառերը)։

Ուրիշ է

ՊԱՃԱՌ, (*անստուն*), *Պրս.* չարփա, *նշանակէ՝ չորքոտանի*, չար (*չորք*) *փա* (*ոտն*). *կազմ. բաղդ. պաշարեմ, վիթխարի, առեւանգեմ*։

Ուրիշ է դարձեալ

ԱՍՊՆՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ, *Պրս.* սփէնճ, *Նշ. հիւր, օտար, եւ Լտ.* Hospes, *նոյն նշանակութեամբ, եւ* Hospitum, *հիւրանոց*։

*

* *

ՄԿՐՏԵՄ, (*տես մակարդեմ*)։

Նախ

ՄԽՐՃԵՄ, ՄԽԻՐՃ, *Լտ.* mergo, immergo, *Նշ.* ընկըմէլ, բաթմալ, *յորոց 'ի հակառակէն՝*

ՄՈՒՐՃ, *բաղդ. ծնօտ եւ ծղօտ, դոյլ եւ թոյլ*։ *Ցորոց*

ՄԵՐԿԱՆԱՄ, (*ըստ օրինի խոտորնակ ձեւոյ*)· *բաղդ. մեռանել եւ մոռանալ*։ *Զի տռ 'ի մկրտել կամ մըխրճել պարտ է մերկանալ· դարձեալ զի մկրտելն է 'ի բաց ընկենուլ եւ մերկանալ զհինն, մաքրել, սրբել*։

— *Մերկացարուք զհին մարդն գործովք իւրովք եւ զգեցարո՛ւք զնորն նորոգեալ 'ի գիտութիւն* (Կող. Գ. 9)։ — *Եկեալ յերախայութենէ 'ի մկրտութիւն ... մերկացաւ զանօրէնութիւն, եւ զգեցաւ զլոյս աստուածգիտութեան* (Մշտ.)։

Բաղդ. լոգանամ եւ լոկ։ *Եւ*

ՄԽԵՄ, — *Որ մխեաց ընդ իս 'ի սկաւառակդ* (Մրկ. ԺԴ. 20)։ *Յն.* ὁ ἐμβαπτόμενος μετ ἐμοῦ εἰς τό τρυβλίον

— *Ոտք քահանայիցն կրելեաց տապանակին մխեցան յեզր ջրոյն Յորդանանու* (Յես. Գ. 15)։ *Յն.* βάπτω ἐμβάπτω βαπτίζω ἐμβαπτίζω, (*մկրտել, մխրճել եւ մխել*) *մի եւ նոյն են Հայերէնին պէս Յն.* βάπτω, *Թրք.* դալդըրմագ, դալըմագ, դալմագ, դալգըն։ *Եւ*

ՄԽԵԼ ՁԵՌԿԱԹ, *Նշ.* էլինի ճուպ խօթէլ, էլինի ճուպ տալ, *յորմէ*

ՄՈՒԽ, *Յն.* πεπυρωμένον, *Պրս.* հըտճիլ, ծըղագէլ։ — *Ձեռաս մուխս չարին շիջուցանել* (Եփես. Զ. 16)։

Ցորմէ (մխեմ) 'ի հակառակէն

ՄՂԵՄ, *աշխ.* հըել, հէտտըրմէլ։

Բաղդ. ընդգրկեմ եւ ընկրկեմ, ձգեմ (կարկառել) եւ ձգեմ (քարշել)։ *Եւ*

ՄՂՕՆ ՏԱՄ, — *Մղօն տուեալ ընկէց 'ի վայր յերիվարէն* (Զենոբ), *յետոյ, (իբր՝ մղումն տալ)*։ *Ա՛յլ է*

ՄՂՈՆ, *Յն.* μίλιον, *Պրս.* միլ։ — *Մղոն մի, մղոնս երկուս*։

Մկրտութիւն, որպէս ցուցաւ, նկատի իբր լուացումն, մաքրութիւն, եւ սրբութիւն։

Ցորմէ 'ի հակառակէն՝

ՄՐԿԵՄ, *իբր՝ խանձատել, այրել կիսով չափ. աշխ.* էրել (*այրել*), մըէլ։

ՄՈՒՐԿ, քանչըլ էնլ, *մանաւանդ՝ ցորեան, եւս եւ՝ հասկ նոր հասուն, սեւացեալ եւ փխրելի*։ *Բաղդ. տոչորել եւ տոգորել*։

— *Մուրկ նոր փխրեալ եւ մանրեալ*։ *Տպ.* ճաքրէալ։ — *Առցէ քահանայն զառ 'ի յիշատակէ նորա 'ի մրկէ անտի* (Ղեւտ.)։ — *Մուրկ է՝ յորժամ 'ի հասեալ հասկիցն առեալ փխրեսցէ ձեռօք եւ աղասցէ* (Մեկն. Ղեւտ.)։ *Ցորմէ 'ի հակառակէն՝*

ՄՈՒՐՃ, *բաղդ. աղիւս եւ աղօտ, ծղօտ եւ ծնօտ, կուշտ եւ կոշտ, արուգ եւ ուրագ, քծուար եւ քածուարտ*։ *Ցորմէ (մուրկ)*։

ՄՈՒՐ, ՄՐԵՄ, աբեղաբնակ ծխոյ, եւս եւ՝ մըլան: — Մուրն անտակ ինչ է ծխոյ թանձրացելոյ (Նանեա): — Մրեալ զարտեւանունս (Ոսկ. Մատթ.): — Խանձեալս, մրեալս յաշխարհէն կործիչէին (Կորիւն): — Գան արքեն, խանձեցին, մրեացին (Կանոն): — Գրեալ ոչ մրով, այլ հոգւովն Աստուծոյ կենդանւոյ (Բ. Կորնթ.): Յն. ἀμαυρόω; μαυρόω, նչ. աղտ, նախմ, թխացոյն: Եւ

ՄՐՃՈՑ, — Եւ ոչ մրեալ զարտեւանունս իբրեւ զմրճոտ պուտան (Ոսկ. Մատթ.):

ՄՐՃՈՑԵՄ, — Ի ճենճերս զոհից եւ ՚ի չարաւս աղտեղիս մրճոտեցիք (Եղիշէ): Եւ

ՄՐՈՒՐ, տէրտ, Թրք. Բօրթու:

— Օծցին իւղով ՚ի մրրոյ պարզելոյ (Եզ.): — Միթէ եւ նոյնպէս հայրն Զրուան եւ բարի՞ էր արդեօք եւ չար. եւ ՚ի բարւոք իրակէն նորա բարւոք որդին եղեւ, եւ ՚ի չար մրրէն(*) նորա չարն (Եղիշէ, էջ 128): (մրրոյն): Տպ. մայաէն: Յարմէ

ՄՐՐԻԿ, աեաս ծաախ հրայ. հողմ սաստիկ մառախղով որ մթացուցանէ զօդ: — Եկանէր բոց երկրին իբրեւ մրրիկ հնոցի: — Մրրիկ ծխոյ: — Իբրեւ զփոշի զոր տարաւ մրրիկ: — Եղեւ մրրիկ մեծ ՚ի ծովուն:

ՄՐՐԿԻՄ, պղտորէլ օրդեօ ոանէ մրրէկ: - Բարկութիւն մրրկեալ: — Ի մրրկեալ նեղարտութենէ: — Իբրեւ զփոշի առնուոյ ՚ի փոթորկէ մրըրկեալ: Բաղդ. օդ եւ չամանդաղ:

Յն. γνόφος, նչ. խաւար, մրրիկ, եւ γνοφία, մրրիկ հողմոյ: Իսկ

ՄԱՐԶԵՄ, Յն. γυμνάζω: Յարմէ եւ

ՄՐՑԻՄ, Յն. ἀθλέω, γυμνάζω:

Այս երկու բայերը ծրէյանամ բայքէն են՝ իբր անոր երկրորդական ձեւը: Եւ այս ալ Յունականին թեւլադրութիւնն է, զի Յունական բային (γυμνάζω) արմատն է γυμνός, (մերկ): Յն. γυμνάς, նչ. մարզիկ, մերկ, ըմբիշ: Յարոց

ՄՐՍԻՄ, կամ

ՄՍԻՄ, բաղդ. սօսկ (մերկ) եւ սօսկանամ (մերկանամ) եւ սօսկամ, (յահէ, ՚ի ցրտոյ):

Յարմէ ՚ի հակառակէն

ՄՍՈՒՐ, ներքին կողմն ախտոյ եւ իբր ջէբէն ճայը:

Այս բառ եւ ՚ի Թրքաց իսկ ՚ի կիր արկեալ է: Ա՛յլ է

ՄԱՐԶ, Պրս. Տէրղ. նչ. կողմն:

Յարմէ

ՄԱՐԶՊԱՆ, Պրս. Տէրղպան, կողմնակալ, կուսակալ: Հուսկ յետոյ վերը ցուցուած մարզ, մարզ բառերէն կը թուի

ՄՕՐՈՒՔ, — Որպէս իւղ զի իջանէ ՚ի մօրուս եւ ՚ի գլուխն Ահարոնի, եւ ի մօրուացն իջանէ ՚ի գրապանս զգեստու նորա (Սաղմ.): — Ա՛ռ դու քեզ սուսեր յեսանաւոր, սուր քան զորբիչ վարսավիրայից... եւ ածիցես զայն զգլխով քով եւ զմօրուօք (Եզեկ. Ե. 1):

Յարմէ (մկրտել) ՚ի հակառակէն՝

ՄԱԿԱՐԴԵՄ, էճր բանծրաց-աց-անելով գնդել:

ՄԱԿԱՐԴ, — Բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց (Բուզ.):

Բաղդ. հասեմ եւ հիւսեմ, պնդիմ եւ պնդեմ, սաւառնել եւ սեւեռել: Թանամ եւ թան, թրծեմ եւ թըրջեմ, ջուր եւ չոր, գետին եւ գետ, նհանգ (գազան ծովային) եւ նահանգ (ցամաք, երկիր), գաւառ եւ կաւառ:

Յարմէ

ՄԱԿԱՐԴԱԿ, ՄԱԿԱՐԴԱԿԵՄ, եւ

(*) Եզնկայ այս խօսքը բաղդ. (Անդ. 21), «Որ ինչ մրրախառն էր ՚ի նմանէ, եւ չէր պատշաճ արարչութեան, զայն եթող, եւ յայնմ մրրոյ են չարիք մարդկան»: (27) - «Ընտրեաց զբարին ՚ի մի Թեր, եւ զչարն մրրախառն ՚ի միւս կողմն, ուստի չանայ մրրախառն, զըղտակն պղտորել»: (30) «Զյատակն ՚ի մի կողմն ընտրեաց, ուստի զալարածն արար, եւ ըզմրրախառնն եթող»:

ՄԱԾՆՈՒՄ, ՄԱԾԱՆԵՄ, — *Մածան որպէս կաթն սիրտք նոցա* (Սաղմ.)․ *այսինքն՝* [illegible]։

ՄԱԾՈՒՑԱՆԵՄ, — *Իբրեւ զկաթն կթեցեր զիս, եւ մածուցեր զիս իբրեւ զպանիր* (Յոբ. Ժ. 10)։ — *Լեառն մածեալ կոչէ, զցիրն եւ ըզլոյծն եւ զջրին ժողովէ եւ հաստատէ․ զոր օրինակ զկաթին լոյծ բնութիւնն խախացն ժողովէ եւ պնդէ, եւ 'ի մի միաբանութիւն զմեղկն եւ զատարածն ածէ, եւ չէ հնար այնուհետեւ մեկնելոյ յայնմանէ յորում միացաւ... Նոյնպէս եւ Քրիստոս յորմէ հետէ միացաւ ընդ ոգիս մեր իբրեւ խախաց ընդ կաթին, չքակի եւ չլուծանի, այնպիսի էր եւ Պաւղոսի ոգին․ երբեմն էր իբրեւ ըզկաթն՝ լոյծ, եւ յորմէ հետէ միացաւ ընդ Քրիստոսի, ասէր, Ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի* (Սեբեր. Գ.)։ *Յորմէ՝*

ՄԱԾՈՒՆ (*), ՄԱՃԱՌԱԿ, [illegible] — *Զտասն մաճառակս զկաթին տարցես հազարապետին* (Ա. Թագ. ԺԷ. 8)։ Յն. μάζα, μαζόνη, Պրս. [illegible], Նչ. *մածուն*, Թրք. [illegible]։

Յորմէ (մածնում) 'ի հակառակէն

ՄՈՑԵՄ, [illegible]։

— *Ձերնջոցն զորթան անջրպետեալ քեցիցեն, զի ժամանակաւ ընդելուզանիցեն․ կամ մօցել 'ի կաթինն սովորութենէ* (Ոսկ. Մատթ.)։

Բաղդ. կցեմ եւ քեցեմ։

* * *

ՈՒԱՀԱՆ, *ուհան*, *նոյն եւ Պրս.* Յն. ὀρείγανον, (*դաղձ*)։

* * *

ՄՈՒԿՆ, (*սեռ.*) *մկան*։

(*) Յունաց 'ի մէնջ առեալ զմածուն, եւ նովին անուամբ կոչեն զնա, ոչ գիտելով զստուգաբանութիւնն, եթէ մածուն ասի, բանզի մածեալ է, այնպէս եւ զանունն ունի, (Մագիստ.)։

Յն. μῦς, Պրս. [illegible], *նոյն նշանակութեամբ*։ *Բաղդ. վառեակ*։

Յորմէ

ՄԿԱՆ, [illegible], *ըստ Յունին․ քանզի եւ* Յն. μῦς, *Նչ. թէ՛ զմկանն, եւ թէ՛ զներքին մասունս մասն մարդկային մարմնոյ, որ կոչի* [illegible], *նաեւ՝ զընդգեր, եւ հասարակ լեզուաւ՝*

ՄԻՍ։ *Յորմէ*

ՄՍԱՆ, [illegible], Թրք. [illegible]։ *Միջան նկատի իբր՝ ներքինն մարմնոյ*։

Յորմէ 'ի հակառակէն

ՄԿԱՆՈՒՆՔ, *բաղդ. աղիք եւ ալիք*․ — *Որ առաքէր... թուղթս մագաղաթեայս 'ի վերայ ջուրցն մկանանց* (Ես. ԺԸ. 2)։ *'ի Յն. չիք*։

Եւ

ՄՍԱՆՈՒՆՔ, [illegible]։

Յորմէ (մկան) 'ի հակառակէն

ՄԿՈՒՆԴ, *բաղդ. քաղիրթ եւ գեղարդն, սուր եւ սրուակ, տիկ եւ տէգ, կուշտ եւ կոշտ*։

Մուկն իբր զազիր ինչ, յորմէ

ՄՂՈՒԿՆ, ([illegible])։

* * *

ՄԺԵՂ, ՄԺԻՂ, ՄԺԵԽ, [illegible] Պ. [illegible] *Նչ. խայթոցաւոր, խայթիչ․ մ է խ ի ղ*
1 4 3 2

— *Եկն մժիղ ընդ ամենայն սահմանս նոցա* (Սաղմ. ՃԴ. 31)։

— *Գորտք եւ ճանճք եւ մժխեք 'ի սկզբանն խռնութենէ բխեցին* (Վեցօր)։

ՄԺՂՈՒԿ, *իբր* [illegible]։

— *Զմժղուկս քամէք եւ զուղտս կլանէք* (Մատթ.)։

Յորմէ 'ի հակառակէն

ՄՈՂԻՋ, *իբր* [illegible], ([illegible])։ *Բաղդ. ցեց եւ ցեծ, տըզրուկ եւ տիզլիք, կէտ եւ կէտ*։

* * *

ՄԱՐԽ, Պրս. մէրէ, նչ. Թրք. չէ-րայ. Իսկ՝

ՄԱՐԱԽ, Պրս. մըրէ, մէյէ, նոյն նշանակութեամբ.

ՄԵԽԱԿ, Պրս. մեյխեկ նոյն նշանակութեամբ, բայց Թարգմանի՝ բեւեռիկ, մանր բեւեռ, իբր զի մեխակն (Տճ. գարըֆը գըրընֆիլ) ունի զձեւ փոքրիկ բեւեռի, եւ քանզի Թրք. գըրընֆիլ՝ նչ. նաեւ զծաղիկն համանուն, վասն այնորիկ եւ 'ի մեզ

ՄԵԽԱԿ, կոչի եւ ծաղիկն՝ գըրէնֆիլ. Ասի Թարգմանաբար եւ

ՁԱԳԱԽՈՏ,

*

* *

ՄՈԽԻՐ, (սեռ.) մոխր-ոյ.

Մոխիր՝ նկատի իբր աղտեղութիւն

— Ի մոխիրս աղտեղիս մրճոտիցիք (Եզէկ).

ՄՈԽՐՈՑ, — Ի պարապէն մինչ 'ի գուռն մոխրոցին (Նեեմ Գ. 15).

Յն. κοπρίον, Լտ. maculo, նչ. աղտեղել, ապականել, արատաւորել. maculatus, աղտեղի, maculatio, արատ, աղտեղութիւն, macula, արատ, բիծ, աղտեղութիւն.

Յորմէ 'ի հակառակէն

ՄԱՔՈՒՐ, մաքր-ութիւն, մաքրեմ, (մ ո խ ր = մ ա ք ր).

ՄԱՔՐԵԱԼ, — Գայ, գտանէ զնա պարապորդ, մաքրեալ եւ յարդարեալ. Իսկ (Ղուկ. Բ. 14). «Մուրկ նոր փլիրեալ եւ հարդեալ», ընթերցի՛ր հանրեալ, որպէս ունի Յոյնն (ἐριχτά). Բաղդ. խոտորնակ ձեւով բառերու հետ, աղբեւր եւ աղբեւս, մեռանիմ եւ մռանամ, մկրատեմ եւ մերկանամ. Ունինք եւ

ՄՈՃԻՐ, գոչէ ոճխայ, ռմկ. մանաւանդ, իբր՝ հճէր.

*

* *

ԼՈԿ, Պրս. լէվէ, նչ. մերկ.

Յորմէ

ԼՈԳԱՆԱՄ, բաղդ. մերկանամ եւ մկրատեմ, փոկ (որթ ծալու, անատուն երկակինցող) եւ բոկ. Եւ

ԼՈՂ. ԼՈՂԱՄ, եւ

ՂՈՒՂԱԿ, գրեալ եւ

ԼՈՒՂԱԿ, ԼՈՂԱԿ, յորմէ

ՂՕՂԵՄ, Բոգչէլ. Բաղդ. ցուցանեմ եւ ռուզանեմ, անկողին (տեղի բարձր) եւ ընկղմիմ.

— Ղօղեցին եւ մտին 'ի տունն..., եւ հարին զնա եւ սպանին (Բ. Թգ. Դ. 7).

ՂՕՂԵՑՈՒՑԱՆԵՄ, Բոգգաղնել. ծածկել. — Ձգայց ղօղեցուցանէ (Եզեկէլ). Բաղդ. ցուցանեմ եւ ռուզանեմ, ծածկեմ եւ ծածկեմ, ցանուեմ եւ ցածնուեմ, կարապ եւ կապար.

Յորմէ

ՔՕՂ, գրեալ եւ

ՔՈՂ, յորմէ

ՍՔՕՂԵՄ, ՍՔՈՂԵՄ, եւ

ԳՈՂ, ԳՈՂԱՆԱՄ, եւ

ԳԱՂՏ, ԳԱՂՏՆԻ, ԳԱՂՏՈՒԿ, — Առնել, ուսուցանել, երթալ գաղտուկ (Փիլ. Եղս. Ոսկ. Բազլ.). — Ազգակիցքն գաղտուկ եղանէին արտաքուստ կցորդ լինել (Գ. Մկ. Դ. 10).

ԳԱՂՏԱԳՈՂԻ, եւ

ԳՈԳ, ԳՈԳԱՆԱՄ, բաղդ. ծածկեմ եւ ծոց.

Յորմէ 'ի հակառակէն

ԿՈԿ, — Կուռ եւ կոկ էր ճանապարհն.

ԿՈԿԵՄ, իբր՝ օղորքել.

— Զորէն կոկեցելոյ խմո մամոյ (Փիլ.). — Ի մեղուոյն... թեւովքն իւրեւ ծեփովք զորմն կոկելով (Ա. Որբ.). — Վիմեղէնն այն բնութիւն, եւ մանաւանդ կոկեալն եւ ողորկեալ (Արեք.). Եւ

ԾՈՑ, որ նոյն է ընդ՝ գոգ.

*

* *

ՊԱՇՏԱՏԱԿԱՆ, իբր՝ օձէր, Պրս. բէյշթար, որ Թարգմանի՝ կանխագոյն տուեալ, կանխիկ հատուցեալ. յաւելուած է 'ի մեզ մասնիկն ակն.

— Փարաւոն արքայ Եգիպտացւոց... զՔանանացին եւ զՓերեզացին... եւ պաշտատեղան զատեր իւրում (Յես. ԺԶ. 10)։ — Իսկ պաշտատակինս տայ Անուշայ 'ի նոյն 'ի Մարաց որ առ սաամբ լերինն բնակեցան (Խոր. Ա. 30)։ Յորմէ

Պաշտած (*), 'ի մերձաւորութենէ Արաբական ձայնիցս՝ [illegible], պաշտած, եւ [illegible], օժիտ։

— Ի Տեառնէ պաշտաճի կին առն (Առակ)։ — Եթէ քաղցր զիանն ըզՋրուանն, ոչ պարտին զդառն սըտաւղն զԱրհմնն 'ի նմանէ համարել. եւ եթէ դառն հաչուին, չէ [illegible] (Տպ. [illegible]) զքաղցր սըտաւղն զՈրմիզդ 'ի նմանէ դնել (Եզնիկ)։

ՉԷԹ, (անա.) ձիթ-ոյ, նշանակէ՝ [illegible], Արաբ. [illegible], իսկ

ՉԻԹԵՆԻ, ծառն, եւ նկատի իբրեւ մաքուր, նիւթ օծութեան, եւ առիթ լուսաւորութեան։ — Իւղով որով իմով օծի զնա.

Յորմէ 'ի հակառակէն՝

ՉԻԽԹ, իբր՝ [illegible] եւ [illegible]։

Բազդ. կարապ եւ կուպր, աճառ եւ աճիւն, մաքուր եւ մախիր։

ՄԱՂԱՉԻԹԵՆԻ։ — (Փէլ.)։

ՈԻՇ, հին Պրս. [illegible], Պրս. [illegible], [illegible]. [illegible], եւ Թրք. [illegible], նոյն նըշանակութեամբ։ Յորմէ

ՈԻՇԵՂ, ՈԻՇԻՄ, ՑՈԻՇԱՐԱՐ, եւ

ՑԻՇԵՄ, ՑԻՇԱՏԱԿ, եւ

ՑՈԻՇ ԱՌՆԵՄ, ՑՈԻՇ ԼԻՑԻ, ՑԻՇԵՑՈԻՑԱՆԵՄ, իսկ (Ես. ԿԵ. 3—4)· — Զոհէին 'ի պարտէզս իւրեանց, եւ արկանէին խունկս յաղիւսեայս իւրեանց՝ զիւացն որ չէին 'ի յիշատակս իւրեանց, եւ յայրս կոզմաննեալ նըջէին վասն երազ տեսանելոյ։

Յոյնն ունի, — Զոհէին 'ի պարտէզս, եւ արկանէին խունկս յաղիւսեայս՝ զիւացն որք չէին. 'ի գերեզմանս եւ յայրս կոզմաննեալ նըջէին վասն երազ տեսանելոյ։

Յն. δείκνυμι, μνημεῖον, Նշ. [illegible] յիշատակ եւ գերեզման, այսինքն՝ չիրիմ կանգնեալ առ յիշատակէ, եւ 'ի մեզ իսկ՝ [illegible]. [illegible] նշանակէ՝ գերեզման։

Յորմէ (ուշ)

ԱՊՈԻՇ, ԱՊՇՈԻԹԻԻՆ, — Ապշութիւն մտաց (Ագաթ.)։ — Ապշութիւն ունի զդիրսս ձեր (Մարկ. Ը. 12)։

ԱՊՇԵՑՈԻՑԱՆԵՄ, — Մոգէր եւ ապշեցուցանէր զազգն Սամարացւոց (Գործ. Զ. 9—11)։

ԱՊՇԻՄ, եւ

ԱՓՇԻՄ, — Ի բարձրութենէ խոնարհեցայ եւ ափշեցայ։ — Լցան տունք ափշելոց։

ԱՓՇՈԻԹԻԻՆ, յորոց

ՊՇՆՈԻՄ, իբր՝ [illegible],

ՊՇՆԵՄ, ՊԻՇ, — Յորժամ ոք հայիցի պշնելով... այլ զի ոչ առէպ պշեալ (Սեբէր.)։

Յորմէ (ուշ)

ՈԻՍԱՆԻՄ, ՈԻՍՈԻՑԱՆԵՄ, ԱՆՈԻՍ, Թրք. [illegible] (միտք), [illegible] (մտացի), [illegible] (ուսուցող), Պրսկ. [illegible], [illegible], [illegible], [illegible], (ուսուցող, առաջնորդ, հմուտ)։

Այսպէս [illegible] եւ [illegible], յորոց եւ յիշեցուցանել եւ ուսուցանել ազգակիցք են իրերաց։

Սոկրատ սովոր էր ասել, «Յիշեմք զոր կանխաւն ուսեալ եմք, եւ չմարթի ումեք յիշել զոր չիցէն կանխաւ ուսեալ կամ գիտացեալ»։

Եւ

ՑՈԻՑԱՆԵՄ, — Ցոյց ինձ ճանապարհ յոր եւ գնացից (Սաղմ.)։ —

(*) Թէպէտ եւ զմիւսնեան ապացուցութիւնն եւս ընթեռնու [illegible], սակայն 'ի վերջ կոյս մատենկանն կարգեալ ցանկ ապացրական սխալանաց՝ ուղղէ անդ զվրիպակն՝ 'ի [illegible]։

Ցուցից ձեզ յումէ՞ երկնչիցիք (Ա-ւետ.)։

Այսպէս «ուսուցանեմ եւ ցուցանեմ» որպէս կազմութեամբ, նոյնպէս եւ նշանակութեամբ մօտ են յոյժ միմեանց, որպէս եւ Յունարէնն, զի Յն. δείκνυμι, նշ. ցուցանել, եւ καταδείκνυμι, ուսուցանել, եւ ἀποδείκνυμι, որոյ թարգմանութիւնն է՝

ԱՊԱՑՈՒՑԱՆԵՄ, (յետին)։ — Նա է հայր որ եցոյց զիրգս եւ զքնարս (Ծննդ. Դ. 21)։ Յն. καταδείκνυμι։ — Ցուցցէ ձեզ Տիւքիկոս (Եփես. Զ. 21)։ Յն. γνωρίζω, ծանուցանել։ — Բազում եւ ծանր վկայս գնէին զորս ոչ կարէին ցուցանել (Գործ. ԻԵ. 7)։ Յն. ἀποδείκνυμι, ապացուցանել։

Աշխ. եւ Տճ. ալ կ'ըսուի, մեկուն ցուցընել թէ ինչ պէտք է ընէ, — Ցոյց տուր ինծի՛ թէ ի՛նչպէս ընեմ։ — Պանը կեցութեր՝ նորը փեսայցնէր։ Ան չէր գիտեր, ուր ինչո՞ւ չէ ցուցուցեր մեզ։

Յորմէ

ՑՑԵՄ, իբր՝ 'ի վեր երեւեցուցանել, երեւելի առնել, ցուցանել։

ՑՑՈՒԻՄ, ՑԻՑ, — Ջձեռն իւր ձախ ձգեալ 'ի ցիցն ... վարսեալ ցից ընդ ծամելիս նորա (Դատ.)։ — Յորժամ առաքն կոկղացին եւ տերեւն ցցուիցի (Մատթ.)։ — Զլակոնացի ոմն հարցեալ թէ ո՞ւր սահմանք Սպարտայ, եւ նորա զնիզակն ցցեալ՝ ասէ, յայսմ վայրի (Պէտ.)։ Եւ

ՑՈՒՑ, իբր ցոյց, ցուցումն, աղաղակ կամ երգ 'ի ցոյց ցնծութեան։

— Կայթիւք, վաղելով, ցուց բարձեալ մարդկանն զքաղաքամէջսն լցին խնճոյիւք (Ագաթ.)։ Ի նուագս բամբռան եւ յերգս ցցոց եւ պարուց (Խոր.)։ — Մինչ 'ի ցո՞ւցս պարիցես (Ոսկ.)։ Յն. πομπή։ Եւ

ՑՑՈՒՆՔ, փունջ հերոց։ — Ցցունս 'ի վարսից գլխոց ձերոց մի՛ առնիցէք (Ղեւտ.)։ — Զիւղաթուրմ ցցունսն հոլանեալ ... առնէին (Գ. Մկ.)։ — Գերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւազդայ, եւ ցցունս էր թողեալ (Խոր.)։

Յորմէ (ցուցանեմ) 'ի հակառակէն

ՍՈՒԶԱՆԵՄ, բաղդ. ցանուլ եւ ցածնուլ, ծածեմ եւ ծածկեմ։

ՍՈՑՁՔ, — Օձք բայանան ընդ հողով, եւ որջք իւրեանց են 'ի սորս եւ 'ի սոյզս երկրի (Փէլ.)։ Իսկ

ՄԽԻԹԱՐԻՉ, բառ Արաբացի, խաթըր, մ խ (ի) թ (ա) ր, որ նշ. յու-
ու ի
շարար, յիշեցուցիչ։

— Իսկ մխիթարիչն (Հոգին սուրբ զոր առաքեսցէ նա յանուն իմ, նա) ուսուսցէ (ձեզ զամենայն), եւ յիշեցուսցէ (զամենայն զոր ինչ ասացի ձեզ) (Յովհ. ԺԴ. 26)։

Եւ որովհետեւ նմանաձայնք են Արաբ. խաթըր, (յիշողութիւն), յորմէ՝ խաթըրլամագ, յիշել խաթըրա կեթիրմէք, յուշ ածել, խաթըրը դըրգմագ, յիշեցուցանել, եւ Թրք. խաթըր սօրմագ, խաթըր սօրմայա կիթմէք։ իբր յայց ելանել սգաւոր բարեկամի, 'ի մխիթարութիւն, եւ ցաւակից լինել նմա, ապա մխիթարել՝ նշանակէ 'ի մեզ սփոփել, ցաւակից լինել։

— Զայս ուսուցանիցի՛ր եւ մխիթարեսջի՛ր (Ա. Տիմ. Զ. 2)։ — Ակն ունէի թէ ոք տրտմեսցի ընդ իս, եւ ոչ ոք էր, եւ մխիթարիչ ինձ ոչ ոք գտաւ (Սաղմ.)։ — Եւ առաքեաց Դաւիթ մխիթարել զնա (զԱնոն) 'ի ձեռն ծառայից իւրոց վասն հօր իւրոյ ... մինթէ փառաւորե՞լ ինչ զհայր քո առաջի քո առաքեաց առ քեզ Դաւիթ մխիթարիչս (Բ. Թագ. Ժ. 2-3)։ — Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ ... քահանայք ... զի լի եղեւ տառապանօք (Եսայ.)։

ՄԽԻԹԱՐ ԼԻՆԻՄ, մխիթարիչ կամ մխիթարութիւն լինել։ — Ի ծոց

իւր կրեսցէ զնոսա, եւ մխիթար լիցի յղեաց (Եսայ.)։

ՄԽԻԹԱՐ ՏԱՄ, *թարգմ. Թրք.* Թէսէլլի վէրմէք։ — Տալ մխիթար մըշտաց նոցա (Ոդբ.)։

• • •

ԲՂՈՒԿ (*աշխ.*), Պրս. պէլուք, նշ. բաժակ գինւոյ կամ սամ գինւոյ. կամ ազգ ինչ բաժակի գինւոյ։

• • •

ՀԵՐԻՍԱՑ, Պրսկ. հէրիսէ, Տճ. քէշքէք։

• • •

ՔՈՒԵԱՑ, (*սեռ.*) քուէ-ի, Յն. κυβεία, նշ. խաղ նարդի, բախտ, պատահար. եւ κύβος, քուեայ, խարանարդ, որ է ձեւ վեցկողմանի, քառակուսի, եւ Արաբերէն՝ քէապ, որ նշանակէ նաեւ՝ կոճ ոտից, վէգ, Թրք. աշըք, Բօքուք, Պրս. քէշպուլ՝ նշ. կոճ ոտից, վէգ, եւ քէշպուլպազ՝ նշ. Թրք. քումարպազ, (խաղամոլ)։

Ցորմէ

ՔԻՒ, եղերք յարկի, կողմանք յարկի։ — Ընդ քուաւ վիմին, առէ, առաջի պատուարին (Կոչ. Ընծ.)։

Ցորմէ աշխարհաբար

ՔՈՎ, որ կը հոլովուի եզ. եւ յք. — քովի, քովով, քովէ, քովը, քովէս, քովերու, քովերով, քովերէ, քովերը, ունի եւ՝ քովընտի ('ի կողմանէ), քովէ քով։

Ցորմէ (քիւ)

ՑԻՒ (*), — Եղին 'ի տանիսն, եւ 'ի ցուցոյն կախեցին զնա (Ղուկ. Ե. 19)։ Յն. κέραμος, (կղմինդր)։

(*) Այս բառը՝ Ն. Հյկ. Բառ.ին մէջ՝ ցու կը կարդանք. (տես անդ ցու). եւ այսպէս կարծուած էր 'ի վաղուց հետէ, մինչեւ որ Ոսկեբերանի Թարգմանութենէն երեւան ելաւ Թէ ուղղականը ցիւ է, եւ ոչ ցու։

Արդ առեալ զիս՝, խմանամք զերկաթին կողմանս չինուածոյ, կարկառեալ՝ 'ի գուրս (Թրք. սաչագ), պահել յանձրեւոյ. իսկ ցիւն է բուն ծածկոցն կամ յարկ չինուածոյն, ուր կղմինտրն զետեղի։

Քուեայ յառեանս խորհրդոյ առեալ լինի, իբր յայտարար կարծեաց առենակալաց, ուստի՝

ՔԱՒԵՄ, արդարացուցանել, անմեղ առնել դատեալն, անպարտապարտ արձակել։ Ցորմէ եւ

ԳՈՎԵՄ, եւ 'ի հակառակէն

ԽՈՒԵՄ, դատապարտել զոք, նեղել։ — Մի՛ զոք խուիցէք, եւ մի՛ զոք զրպարտիցէք (Ղուկ.)։

Ցորմէ 'ի հակառակէն

ԳԳՈՒԵՄ, սոքա չորեքեան թուին ծագեալք 'ի բառէս՝ քուեայ։

ԳԳՈՒԱՆՔ, եւ

ՔՔՈՒԻՄ, — Դու քքուիս եւ ծիծաղիս (Եփր. Ադամ.)։ — Մի՛ քքուել կարի ընդ պէսպէս եւ ընդ ազգի ազգի հանդերձս (Ոսկ. Մտթ.)։ — Զմարթս դեսպակացն օծանեն՝ յորում նստին եւ քքուին (Ոսկ. Փիլիպ.)։ Իսկ

ԽՈՐԱՆ, ծագի յԱրաբականէս՝ քուրէ, որ նշ. քուեայ, եւ նկատի իբր՝ քառակուսի, յորմէ ձեւս

ԽՈՐԱՆԱՐԴ, խորան-արդ, 'ի ձեւ խորանի, այսինքն՝ քուէի։ Յն. κύβος, նշ. ե՛ւ քուեայ, ե՛ւ խորանարդ։

Խորան՝ նկատի իբր՝ բարձր, չքեղ, փառաւոր, յորմէ 'ի հակառակէն՝

ԽՈՆԱՐՀ, ցած, ալչագ։ Բաղդ. աթոռ եւ առաթուր եւ ընդաթուր, սաղաւարտ եւ սաղաւար։

Ցորմէ (խորան) եւ

ԽԱՐԱՆ, վէրք այրուցեալ։ — Խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածոյ (Ել. ԻԱ. 25)։ Բաղդ. սաղաւարտ եւ խաղաւարտ։ Այսպէս եւ

ԽՈՑՐ, Յն. ἡ χόρυς, նոյն նշանակութեամբ։

Եւ այսպէս գրեալ է՝ առ 'ի չչփոթելոյ ընդ՝ խոր, կոր, կոյր, քոյր։

Յորմէ 'ի հակառակէն

ԽՈՅԼ, եւ

ԽՈԼ, մի՛ չփոթեր ընդ խօլ։

Բաղդ. ընդ վ. վ։

Խօլան համեմատի ընդ

ՏԱՃԱՐ, Պրս. Թէճէր, Թաչէր, եւ 'ի սեպագիրս՝ Թաճարա։

Պրս. չարջէհ, (որոյ աղաւաղեալն է՝ չէրկէ) չորեքանկիւնի, քառակուսի, նոյնպէս եւ Պրս. չարթաք, շինուած չորեքկողմեան կամ չորեքկամարեայ, շուրջ տեսանելի տեղի, ամենահայեաց։

Լտ. quatuor, Նչ. չորք, եւ Պրս. չաթէր, Թրք. չաթըր, Յն. τέτταρα. τέτταρα, Նչ. չորք, եւ փոխանակ ասելոյ՝ «տունն», ասի ոճով «ἐντὸς τῶν τεττάρων, որ Նչ. 'ի տան, παρα ϐῆναι τὰ τέτταρα, նշանակէ՝ ելանել 'ի տանէ։

Ի խօսս ասեմք, չորս դուար մէջ, եւ Տճ. դէօրթ դուվար արասընտա, որ Նչ. 'ի տան, 'ի սենեկի, յառանձնութեան, Արաբ. քեաբ՝ Նչ. խորանարդ, յորմէ քեաբէ կոչի ուխտատեղին Մահմետականաց, որ թարգմանի քառակուսի, խորան, տաճար։

Յորմէ

ՏԱՃԱՐԱՊԵՏ, Յն. ἀρχιτρίκλινος։

Յն. τρίκλινον, Նչ. սրահ, մանաւանդ սեղանատուն, ճաշարան, եւ թարգմանի՝ երեք բազմոցաւոր, այսին. երեք բազմոց ունեցող։ Քանզի դայս ձեւ օրինակի էին սեղանք կերակրոյ նոցա, եւ վերակացուն սեղանոյն կամ մատակարարն կոչէր՝ ἀρχιτρίκλινος, որ 'ի մեզ թարգմանի՝ տաճարապետ։

— Առէք եւ բերէք տաճարապետին ... իբրեւ ճաշակեաց տաճարապետն ... խօսի ընդ փեսային տաճարապետն։ (Յն. ἀρχιτρίκλινος)։

Ի տառէն Է

ՎԷԳ, որ Նչ. կոճ ոսկր։

Այսպէս Արաբ. քեաբ՝ Նչ. եւ՛ քուեայ, եւ՛ կոճ ոսկր։ Բախտ կազմութիւնն բաղդ. գլորել եւ վրդովել, անգրգռելի,

անվրդով։

Ի ՎԷԳ ԳԱՄ, իբր մաքառել կամ մրցել։

Յորմէ

ՎԷՃ, յորմէ 'ի հակառակէն

ՎԻՃԱԿ. — Վիճակ դադարեցուցանէ զվէճս (Առակ. ԺԸ. 18. Լոթ Նէր, Ծնոթրէն)։

Ի բառէս վէգ, (քուեայ)

ՎԵՑ (*), յորմէ եւ

ՁԵԻ, — Գնաց քառակոյս նշանն ընդ մարտ հրաւիրակ (Վէրք. Եղէ. Է.)։ — Քառակոյս կոչէ զնշանն քուաձեւ 'ի վեցից հաւասար կողմանց կազմեալ, վասն քառակուսի ամենայն կողմանցն գոլոյ որպէս ըզքուեայ (Անդ Մանօթ. Թարմ.)։

Յորմէ

ՎԵՇՏԱՍԱՆ, իսկ

ՎԱԹՍՈՒՆ, մերձաւոր երեւի Զանգիկ ձայնիս, թոշաթէ, (վաթսուն)։

Մերս

ՎԿԱՅ, ծագի 'ի թուեայ կամ վէգ բառէ։ Յն. μαρτυρία, Նչ. վկայութիւն, քուեայ։ Եւ

ՎԿԱՅԵՄ, է որպէս արկանել քուեայս, եւ արկանել քուեայս՝ է վկայել, հաստատել։ Իսկ

ՎԷԺ, ՎԻԺԵՄ, հոսել, Պրս. վէժէ՝ Նչ. թափել, հեղել։ — Ի վիժել արտասուաց խաղաղութիւն եւ ջեր գործի (Ոսկ. Մատթ.)։

ԳԱՀԱՎԷԺ ԱՌՆԵՄ, (ընկենուլ 'ի բարձուէ)։ — Հանին յարտեւան լերինն ... գահավէժ առնել զնա։

(*) (Վեցին) մայր ձեւն է Զեբեւս οὔτεξς. որուն վրայէն դիւրաւ մեկնութիւն կը գանէ Զէ մեր վեց. Եւ Զէ sex. Ξξ նոյն ձեւերը. միայն Հնդ. խշվաշ նախաձայն խ մը ունի, որ նոյն լեզուին յատուկ յաւելուած մը կերեւայ։ (Հնդեւր. Նխ. էջ 132)։

Եւ 'ի հակառակէն՝

ՎԻԺԱԿ, իբր ընդդիմահար մարմին անջրպետող․ Բաղդ․ հոսել եւ հիւսել, լուծանել եւ լծել․

Յարմէ՛ (վէժ) նաեւ

ՎԷՏ, — Քաղցրաչունչ սաղոխ վէտս վէտս զմկանունան ճօճել (Վէցօր)․ Յարմէ

ՎՏԱԿ,

Եւ 'ի հակառակէն (վէտ)

ՎԷՏ, նկատել իբր մնայուն՝ անջընջելի, կիտուած 'ի մարմնի, գիր կոտել․ — Վէտս 'ի վերայ ոգւոց մի՛ առնիցէք 'ի մարմինս ձեր․ — Ի մարմինս իւրեանց վէտս մի՛ հատանիցեն (Ղեւտ)․ Բաղդ․ վէժ եւ վիժակ․ Ա՛յլ է

ՎԻԳՆ, Պրս․ [illegible], Թրք․ [illegible]․ — Ոչ է հնար՝ եթէ վիգն ոք սերմանեսցէ, եւ ցորեան հնձեսցէ (Ոսկ․)․

*

* *

ԱՍՏՂ (*), Յն․ ἀστήρ, Լտ stella, Զէնդ՝ [illegible], Պրս․ [illegible], [illegible] եւ [illegible]․

(ս ի թ ա ր է = ἀ σ τ ή ρ)
σ η τ α ρ   4 1 3 2 5
2 4 3 1 4

Իսկ

ԱԶԴՐ, է 'ի Յն․ γαστὴρ, որոյ սկզբան գիրը γ (զ) թէ որ վերնայ, կըլլայ ἀστὴρ․ Տես եւ կաթսայ․

Յարմէ

ԱՍՏՂԻԿ(**), Յն․ ἀφροδίτη, Ափրոդիտէ, դիցուհի սիրոյ եւ աստղանց․ մեր բառը ըստ երեւութին աստղ բառէն է, եւ իբր թարգմանութիւն Պրս․ [illegible] բառին, որ ըսել է՝ փոքր աստղ, աստղիկ, սակայն այդ առումը որչ միտք մը չի տար, վասն զի Ափրոդիտէի կամ տարփանաց դիցուհւոյն եւ փոքր աստղի մէջ բնաւ վերաբերութիւն չկայ․ ուստի կը թուի թէ ս բառը կը պատասխանէ Լատին բառի՝ catulastra, որ նշ․ աղջիկ յարբունս հասեալ, եւ կը թարգմանի [illegible] կամ [illegible]․ catulio, նշ․ ջեռնուլ (տացեալ զշանց)․ Տես եւ սկնդիկ, սկունդ․

ա ս տ ղ, (սեռ․) ա ս տ ե ղ,
ἀ σ τ ὴ ρ (սեռ․) ἀ σ τ έ ρ ο ς

Լտ․ s t e l l a
2 3 4 5 1

ա զ դ ր, (սեռ) ա զ դ ե ր,
γ α σ τ ή ρ (սեռ․) γ α σ τ έ ρ ο ς

Յարմէ (աստղ)

ԱԶԴ, ԱԶԴԵՄ, — Ոչ որպէս քաղդեայքն աստեղանչմարք որ զծնընդոց պատճառս եւ զմահուանց յաստեղաց դնեն (Եղիշէ)․ — Թէ յաստեղաց էին պատճառք ծննդոց, ընդէ՞ր 'ի հնդկիս ոչ ոք երբեք սպիտակ ծնաւ (Անդ)․ — Բախտաւորութեանց եւ չուառութեանց զաստեղսն դնեն պատճառս (Անդ․)․ — Պատճառս փոփոխման տարերաց չորից բնութեանցն զաստեղս դնեն (Անդ)․ Յն․ ἄι θηίς, նշ․ զգայութիւն, զգացումն․

ԱԶԴ ԱՌՆԵՄ, թարգմ․ Տճ․ [illegible], [illegible]․

ԱԶԴՈՅ, իսկ 'ի Շարականին, «Աստարաջիք զխչատակ սրբոյն Սարգսի զօրավարին, որ է գուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան»․ Ն․ Հյկ․ Բռ․ ընթերցեալ ըստ հին Տըպագրութեան ինչ, «Ազդ արաջիք» եւայլն, մեկնէ ըստ այնմ, առեալ, «[illegible]»․ Այլ

(*) Մեր բառը մէկ բանով միայն կը տարբերի միւսներէն, զի կը վերջանայ ղ ով․ մինչդեռ միւս ամենքն ալ ր ով, բայց ի Լատինէն, որ մերինին պէս Լ․ Տես նաեւ ինչ որ ցուցուած է ղ եւ ր գրերուն վրայ․

(**) Պէտք է ըսել Թէ Պարթեւաց ժամանակ եւ 'ի Յունաց անտի մտու պաշտօն դիցուհւոյս (Ափրոդիտեայ) 'ի Հայս, որք փոխանակ Ափրոդիտեայ աստղիկ անունը սեպհականեցին նմա, որ զուտ Հայկական է, եւ Հայ բանաստեղծից եւ մատենագրութեան ծնունդ (Ագաթ․ եւ իւր Բազմ․ Գաղտնիքը, էջ 149)․

բուն միտք բանին է, «սատ, (այս ինքն, յեկեղեցւոջ կամ 'ի մատրան սատ սրբոյն Սարգսի), որ (եկեղեցին կամ մատուռն նուիրեալ յիշատակի սրբոյն) է դուռն երկնից» ևայլն. որպէս ունին ընտիր օրինակք. Յարմէ և

ՍԱՏ, [illegible]. — Ի սատտէ քումմէ, տէր (Սաղմ.). — Եթէ ոչ սատ արարչին յանդիմանէր ըղնաստ (Եզնկ).

ՍԱՏԵՄ, — Սատանայ 'ի Նա Յիսուս. Յարուցեալ սաստեաց հողմոյն և ծովուն. — Վարդապետ, սաստեա աշակերտացն քոց զի լռեսցեն.

ՍԱՏԻԿ, ԱՆՍԱՏ, — Անսաստ զազանութիւն. Իբր. [illegible]. — անսաստ ալիք ծովու.

ԱՆՍԱՏԵՄ, չանսալ հրամանի, անխուշել, դիմադրել. — Անսաստել ումեք Աստուծոյ չար է. (Եզնկ). Ա՛յլ է

ԱՆՇՈՒՇՏ, Պրս. [illegible], Տչ. թոյլ, ակար.) [illegible].

Յարմէ

ՇՈՒՇԵՄ, [illegible]. Թրք. [illegible].

— Որք 'ի ձգելոց չուանացն վերայ գնայցեն, չէ հնար սակաւիկ շուշել, և եթէ փոքր մի հեղգայցեն, մեծամեծ չարիք գործին (Ոսկ.).

Այսպէս և

ԶԵԿՈՒՑԱՆԵՄ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆ, — Փեստոս զեկոյց արքայի զՊաւղոսէ (Գործ. ԻԵ. 14). (Տես՝ զգամ, զգացուցանեմ).

Զգեցուցանել, ազդ առնել, տալ տեղեկութիւն. Պրսկ. [illegible], Արաբ. [illegible], Տչ. աղիւսակ աստեղաբաշխական, աստեղագիտութիւն, գուշակութիւն, նոյնպէս և

ԱԽՏԱՐՔ, (իբր յաջողութիւն).

Պրս. [illegible], Տչ. աստղ, բախտ.

ԱՊԱԽՏԱՐՔ, (իբր ձախորդութիւն).

ՎԱՏԱԽՏԱՐԱԿ, Պրս. [illegible], (անբախտ, չարաբախտ).

Ի բաղէս ախտարք

ԿԱԽԱՐԴ,

(ա խ տ ա ր ք = կ ա խ ա ր դ)
4 3 6 2 5 1   6 1 2 4 5 3

Յարմէ

ԽԱՐԴԱԽ, Պրս. [illegible], Տչ. կախարդութիւն, խարդախութիւն, և [illegible]՝ կախարդ, թովիչ, նենգաւոր, խաբեբայ.

Դարձեալ 'ի բաղէս՝ ախտարք

ԽՏՐԱՆՔ, ԽՏԻՐ, [illegible] 'ի [illegible]. և լայնաբար՝ ընտրութիւն, որոշումն, զխտողութիւն, տարբերութիւն.

— Ոչ գոյ արքայութիւնն Աստուծոյ խտրանօք (Ղուկ. ԺԷ. 20). Յն. παρατήρησις. — Խտրանքն սկըսաւ 'ի հեթանոսաց, աստեղացդ շարժման տալ զաստեղս բերումն, զայս ինչ յայսմ ժամանակի յաջողակ, և 'ի միւսումն ոչ ևս ըստ նմին օրինակի. — Ոչ գոյ խտիր Հրէի և հեթանոսի, զի նոյն տէր է ամենեցուն (Հռոմ. Ժ. 12). — Զաւուրս խտրէք, և զամիսս և զժամանակս (Գաղտ. Դ. 10). — Եթէ զանօրէնութիւնս խտրիցես, ո՞ կարէ ժուժկալ լինել առաջի քո (Սաղմ.). իսկ սովորական օրին. «Թէ զանօրէնութիւնս իմ քննես, ո՛ կարէ կալ առաջի քո». — Որ խտրէ զհողմս, ոչ սերմանէ (Ժողով. ԺԱ. 4). Յն. παρατήρησις, τήρησις, παρατηρέω, τηρέω.

ԱՆԽՏԻՐ, — Ընդ հեթանոսս ուտէր անխտիր (Գաղտ. Բ. 11). 'ի Յն. չիք մակբայդ.

ԽՏՐԵՄ, յորմէ

ԸՆՏՐԵՄ, [illegible].

ԸՆՏԻՐ, [illegible]. Եւ.

ԽՆԴՐԵՄ, ԽՆԴԻՐ, և

ԸՆԹՐԻՔ, իբր՝ ընտիրք կերակրոց և ըմպելեաց, կոչունք. Եւ

ԿՏԻՐՔ, իբր՝ ընտիր, ազնիւ, մեծագին օժիտ հարսանեկան.

— Զիցէ՛ ձեռնհաս (հարանն) թաւխանձս (կալուած տուեալ յօժիւ) եւ կտիրս (մեծագին զարդք տուեալ յօժիւ) 'ի մէջ բերել (Ոսկ.)։
Եւ

ԱՆԴՐԱՆԻԿ, (սեռ.) անդրանկան. ըն տ ր ա ն ք, իբր լաւագոյն, ընտիրն 'ի ծննդոց։

— Ի մէջ եղբարց բազմաց որ երէցն է, նա է պատուական (Սէըա․ Ա. 24)։ —Ռուբէն, անդրանիկ իմ, դու զօրութիւն իմ եւ սկիզբն որդւոց իմոց (Ծննդ. ԽԹ. 3)։ —Եթէ լինիցին առն միում երկու կանայք, եւ լինիցի 'ի նոցանէ մին սիրելի եւ միւսն ատելի, եւ ծնանիցին նմա որդիս՝ սիրելին եւ ատելին, եւ լինիցի որդի անդրանիկ՝ ատելւոյն, եւ եղիցի յաւուր յորում ժառանգեցուցանիցէ որդւոց իւրոց զինչս իւր, մի՛ իշխեսցէ անդրանկացուցանել զորդի սիրելւոյն՝ անտես արարեալ զորդի ատելւոյն զանդրանիկ. այլ զանդրանիկ ատելւոյն ծանիցէ՝ տալ նմա կրկին յամենայնէ որ ինչ գտանիցի նորա, զի նա է սկիզբն որդւոց նորա, եւ նմա անկ է անդրանկութիւնն (Օրէն. ԻԱ. 15—17)։ Եւս եւ

ԽՈՏՈՐԻՄ, ԽԱԹԱՐԵՄ։

ԴԵՐԱՆԻԿ, Պրս. Բէր—հէ, նոյն նշանակութեամբ։

ԱՆԴԱՄ (*), բառ Յն. ἔντομ, ἔντομος, նոյն նշանակութեամբ։

ՍԻՈՆ, Յն. χίων, (սեռ.) սեան, սեամբ, 'ի սեանէ, սիւնք, սեանց, սեամբք։

ՁԻՈՆ, Յն. χιών, (սեռ.) ձեան, ձեամբ, 'ի ձեանէ, ձիւնք, ձեանց, ձեամբք, 'ի ձեանց։ Բաղդ. շուն, Յն. κύων, (սեռ.) շան, շամբ, շանց, շամբք։

ՇԿՕԹԱԿ ԱՌՆԵՄ, Յն. ἐξωθέω։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ,
ԽՈՍՏՈՎԱՆ ԼԻՆԻՄ, Պրս. Խէ—Բ, Խէ—Բէ—, Խէ—Բէ—Վ—Ն. նոյն նշանակութեամբ։ Եւ
ԽՈՍՏԱՆԱՄ։ Այլ է
ԽՕՍՔ, Պրս. —Էխէ—Ն, —Է—ԽԷՆ, նոյն նշանակութեամբ։
ԽՕՍԻՄ, —Եկա՛յք Խօ—Էց—ըա—+ ընդ միմեանս, ասէ տէր (Ես. Ա. 18). Յն. խօսեսցուք։ Տես խոկ, խոկամ։

— Իսկ «Խօսեցաւ տէր ընդ Մովսեսի եւ ընդ Ահարոնի . . . խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայելի»։ Յամախ վարի իբր աչխ. Մ—Վ—Է—ԷՆ Հէ—, Ահ—ը—Ն—ԷՆ Հէ—, եւայլն. որպէս եւ Թրք.։ Իսկ (Ես—յ. Ա. 19). —Եկա՛յք խօսեսցուք ընդ միմեանս, ասէ տէր»։ Առաջին Տպ. խօսեցարուք. սակայն Ջոհրապ 'ի ծանօթութեանն ասէ, «Ոմանք՝ խօսեցուք»։

Յոյնն եւ Եբրայեցին եւս յառաջին դէմս ունին, այսինքն՝ Խօ—Է—ց—+։ Բաղդ. Ն—յՆ ԽԳ. 26. Բայց քեզ յուշ լիցի, եւ ըՆ— Վ—Վ—Ն— —Է—ց—+։ Իբր աչխ. Է—ը— ՀԷ— Խօ—ԷՆ+ — Է—ը— ՀԷ— ——ԷՆ+, քանզի Յոյնն չասէ՝ ըՆ— Վ—Վ—Ն—, այլ լոկ՝ խօսեսցուք, դատեսցուք։

Յարմէ 'ի հակառակէն

ԽՕՇԻՒՆ, ձայն ակար, որպէս տերեւոց եւ ոտնաձայն։ Բաղդ. գուսան եւ քուռ, չանթել եւ չնթել, հեծել եւ հծծել, գոչել եւ կոչել, ճիչ եւ ճիկ, հառաչ եւ հաչակ։

— Սողնոցն գխօշիւն միայն ըղմարդոյն առեալ, է որ 'ի ծակս, է որ 'ի սորս զօղեալ թագչին (Եղնկ)։

(*) Անդամ, Պրս. Ա—Դ—Մ։ (Ն. Հյկ. Բռ)։

— Խօշիւն ինչ դարձեալ անյայտ հնչման 'ի հեռաստանէ յորժամ գայցէ յականջս (Փէւ.) ։

ԽՕՄՆԱԿ, իբր խօսող, երգող, (հաւ), զոր Պարսիկ հնչմամբ հեւս ունիմք

ՍՈԽԱԿ, — Յորժամ լսիցես զձայն սոխակի որ գեղգեղէ քաղցրաձայն (Վէցօր) ։ — Ի քաղցր ե՞րգս հպարտանաս, չիցես որպէս սոխակին եւ փորն (Ո-կ.) ։

Թռչունս այս կոչի նաեւ 'ի մեզ ծիծառն կամ ծիծառնուկ, որպէս եւ 'ի Պրս. բառէս՝ ֆէրաշիւրօ, (որ նշ. ծիծառն), է մերս

ԵՐԱԺԻՇՏ, Յն. ἀηδών, նշ. սոխակ, երամիշտ ։ — Երաժշտական թռչնոցն երգովք ամենայն վայրք հրնչէին (Նէրս.) ։ — Ոմանք ('ի թռչնոց) բնաւորականք յինքեանց երգեցող երաժշտութեամբ (Պէտ.) ։

Ուրիշ բառ է

ԽՕՍԻՄ, (հայցական խնդրով), եւ

ԽՕՍԵՄ, ամկ. նշանել, Թրք. նիշանլամաք, թէպէտ ձայնով նոյն է ։

— Այր ոք որոյ խօսեալ իցէ կին, եւ չիցէ առեալ զնա (Օրէն. Ի. 7) ։ — Շինէին շինուածս, եւ խօսէին կանայս ։ — Խօսեցայց զքեզ ինձ յաւիտեան, եւ խօսեցայց զքեզ ինձ արդարութեամբ . . . եւ խօսեցայց զքեզ ինձ հաւատովք (Ովս. Բ. 19) ։ Իսկ (Մատթ. Ա. 18) . «Խօսեալ էր մայր նորա Մարիամ Յովսեփու . . . գտաւ» եւայլն, զհայցականդ իմա՛ ուղղական, Յն. μνηστευθείσης τῆς μητρός αὐτοῦ μαρίας τῷ Ἰωσήφ. . εὑρέθη, եւայլն, այսպէս նաեւ (Անդ Թ. 16) ։

— Առնու եղանէ չըրթնէն նորա 'ի հարգերձէն. այսինքն՝ չըրթնէն ։ — Խօսեցին որդիքն Իսրայելի խնամութիւն ընդ Քանանացիս (Եփր. Դատ.) ։

Պրս. խէսէր, խէսուր, նշ. աներ կամ սկեսրայր, խէսուրէ, խէսրէ, խէսրէյնէ, խէսու, խէշու, զոքանչ կամ սկեսուր, խէսրանէր, խօսնայր, փեսայ, խասրէ, եղբայր հարսին, խէսրանէրէ, խնամութիւն, խաշէնդէ, հարսն, խէշաշէնդէ, քենի, քոյր հարսին ։

ՍԽՈՒՐ, — Մի՛ տարցես զկապէնս պռնկի, եւ մի՛ զշան սխուրս 'ի տուն Աստուծոյ (Օրէն. ԻԳ. 18) ։

Յորմէ

ՇԱՆՍԽՈՒՐ, Յն, ἄλλαγμα κυνός ։

ՍԽՐԱՆԱՄ, Յն. θαυμάζω ։

Նոյն է ընդ խէսր, խէսրէ, եւայլն Պարսից ձայներուն, որ ամուսնական վիճակ բացատրելու բնութիւն ունի ։ Կազմութիւնը բաղդ. սոխակ եւ խօսնակ ։

Բաղդ. Թարաթառ ։

ԽՕՄՆԱՅՐ, Պրս. խէսրանէր, իբր՝ այր խօսեալ ։ — Ողբա՛ առ իս իբրեւ զհարսն քրձազգեաց 'ի վերայ զխակրան խօսնան իւրոյ ։

ՍԿԵՍՈՒՐ, (սեռ.) սկեսր-ի ։

— Դուստր զմայր իւր անարգիցէ, եւ նու զսկեսուր իւր (Եղնէկ) ։ Տպ. զ'կէսուր ։ (Քանզի բառք սկըսեալք » իւ, չառնուն ՝ բացում անգամ փոխելով 'ի չարաձայնութենէ, զոր օրինակ, — Սուրբ զՄարիամ զԱստուածածինն, զփառաւորեալ եւ զամենօրհնեալ միշտ սուրբ զկոյսն, սուրբ զՅովհաննէս Մկրտիչն, սուրբ զՍտեփաննոս նախավկայն, սուրբ զառաքեալսն եւ զմարգարէս, զայր եւ զյաղթող սուրբ զվկայսն . եւայլն . — Զանապական սուրբ զխաչն օրհնեսցուք . — Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քո ։

— Եւ այն ազմուկ զսկեսրուն կայցէ, մանաւանդ թէ ոչ զսկեսրուն, այլ զհարսանմբն, զի այնուհետեւ ամենայն հոգք ոչ սկեսրին, այլ հարսին լինիցի (Ո-կ.) ։

Արդ 'ի բառս սկեսուր, սկզբնական գիրն », նկատի իբր յաւելուած, (որպէս եւ 'ի բառս սկա-

նիմ, թպանիմ, սթափ, աքաղել), որ բարձեալ՝ միայ կեսուր կամ կեսր, իբր՝ կեսար կամ կայսր։

Եւ որովհետեւ Պրս. խէ-րէ (սկեսուր), եւ խէ-րէ-լ (թագաւոր) մերձաւորք են ձայնիւ, եւ այս մերձաւորութեան աղագաւ՝ սկեսուր անեալ թուի 'ի մեզ 'ի ձայնէս՝ կեսար, որ է համանուն թագաւոր անուան առ Հռովմայեցիս, որպէս Խոսրովն առ Պարսիկս։

Այսպէս եւ

ՓԵՍԱՅ, թուի լինել նոյն ընդ Պրս. բա-դա-լա կամ բա-լա, որ նշ. թագաւոր, եւ թարգմանի՝ գլխաւոր պահապան։

Պրս. շահ, շէհ, նշանակէ եւ՛ թագաւոր, եւ՛ փեսայ. եւ առ մեզ փեսայն եւ հարսն անուանին թագաւոր եւ թագուհի։ — Իբրեւ փեսայի եդ ինձ պսակ (Եա.)։ Իսկ

ՋՈՔԱՆՉ, մայր հարսին (նկատմամբ փեսայի)

Ձեւացեալ 'ի բառէս

ՍՔԱՆՉՔ, յորմէ

ՍՔԱՆՉԵԼԻ, եւ սա 'ի Յունականէս՝ σκάνδαλον, (որոգայթ առից, գայթակղութիւն)։

ՍՔԱՆՉԱՆԱՄ, իբր կամեցեալ ասել, եթէ սքանչացումն առն 'ի կին, լինի նմա որոգայթ։

Համերոս առ 'ի ցուցանել զառաւելութիւն գեղեցկութեանն Հեղինեայ կոչէ զնա γυνεκῶν θαῦμα διὰ γυνεκῶν, սքանչելիք կանանց, սքանչելին 'ի կանայս. եւ վասն գայթակղութեանն առեալ է, եթէ զգեղ նորա եղեն արդիւնք տասնամեայ պատերազմին եւ աւերմանն Տրովայ։

— Սուր եւ պատերազմ ոչ եղեւ առանց կնոջ, եւ ահա վկայէ Եգիպտ (Սլ-գ.)։ — Եթէ առ կենդանեաւ իւրով տեսեալ էր քո զկինդ, Մենելայէ, ապա ոչ մեծ ինչ զը-րէիր 'ի վերայ այնքանեայ կնոջ կըռուել (Ղու-կէ.)։

Եւ ահա անուանք ազգականութեան եւ խնամութեան առ մեզ յուշ առնեն մեզ զփառաւորագոյն անուանս Պարսից, Յունաց եւ Հռովմայեցւոց։ Այսպէս եւ

ԹԱՐԱԹՈՏ, կամ

ԹԱՅՐԱԹՈՏ, որ նշ. ընտանի մերձաւոր 'ի պատճառս խնամութեան, է Յոյն ձայնս τερατώδης, որ նշանակէ՝ զարմանալի, սքանչելի։

— Եկի քակել զայր 'ի հօրէ, եւ զդուստր 'ի մօրէ, եւ զհարսն 'ի սկեսրէ իւրմէ։ Ոչ եթէ զայլն ինչ թայրաթոտք ընդ միմեանս անկանիցին, այլ կարի հարազատք եւ սիրելիք միմեանց (Ոսկ. Մատթ.)։ — Բարեկամք եւ բարեսացք եւ բազում ազգատոհմք եւ թայրաթոտք (Վեցօր)։ Իսկ

ՍՐՍԿԱՊԱՆ, Պրս. սէրէշ-քէ-ան նշանակէ՝ քող հարսին արկեալ զերեսօքն՝ 'ի մտանելն յառագաստ։

— Ամենայն հարսանց եղեն արգելանք սոյս սրսկապանք իւրեանց (Մէ.)։ — Կանք սրբութեանցն եւ սրսկապանն (Թ---). իբր՝ վարագոյր, որպէս եւ առագաստ՝ է սրսկապան եւ ծածկոյթ։

* * *

ՇԱՊԻԿ, Պրս. չէ-պէ՝ նշ. գիշերային ագանելի, ցայգական հանդերձ, Տճ. կէճէլիք։

* * *

ՎԼՈՒԵԱԿ, (սեռ.) վառեկ-ի, Արաբ. ֆ-րէ նշ, մուկն։

Բաղդ. մուկն եւ միս։

* * *

ԿԵՍԱՐ, բառ Լատին cæsar, Յն. καῖσαρ, անուն յաջորդաց առաջնոյ ինքնակալին Հռովմայեցւոց Յուլիոսի, յորմէ

ԿԱՑՍՐ , յորմէ

ԿՇԽՌ (*) , տըքտըր , հասատըր ։

— Մեղուորք մեղուորայ փոխ տան , զի առցեն անդրէն զկշխան ։ (Ղուկ. Զ. 34)։ Յն. τὰ ἴσα ։

— Կշիռ արդարութեան , — Կշիռ արդար ։

— Որ , ասեն , 'ի կշռոց աստեղատան ծնանի , արդար լինի ըստ օրինակի կշռոց որ զարդարութիւն եւ զստուգութիւն ունի (Վեցօր.)։

ԿՇՌԵՄ , — Կշռեցին նմա երեսուն արծաթի (Մատթ. ԻԶ. 15)։ Յն. ἔστησαν ։

Կշիռ է նշանակ արդարութեան , Արաբ. Միզան , Նշ. կշիռ , արդարութիւն , կշիռ աստեղատուն՝ նուիրեալ 'ի փառս Հոկտաւիանոսի կայսեր ։ Տե՛ս՝ չէքի ։

Յորմէ (կշիռ) 'ի հակառակէն

ԿԱՇԱՌ , ԿԱՇԱՌԵՄ , — Անուանի կաշառս եւ թիւրէին զիրաւունս ։ Իսկ Բուղ. Զ. 8. «Այս ինձ Պօշէշ+ լիցին փոխանակ զի երէց որարի զքեզ» թերեւս Պաշխաւ ։ Կամ 'ի ձեւ հարցման ։

Յորմէ 'ի հակառակէն

ՇՌԱՑԼ ։

Դարձեալ 'ի հակառակէն բառիս՝ կշիռ ,

ԿՑԻՐ , ոգոհ , յորմէ եւ բայն

ԿՑՐԵՄ , պինդ ունել , չկամիլ տալ ։

Յորմէ՝ պէս պէս առմամբ

ԿԻՑ , ԿՑԵՄ , — Աղաղակեաց 'ի ձայն մեծ Շուշան , աղաղակեցին եւ երկոքին ծերքն կից նմին (Դան. ԺԳ. 24)։

Յորմէ 'ի հակառակէն

ՔԵՑԵՄ , ՔԵՑ , — Ձեռնջայն զորթս անջրպետեալ քեցել մացել 'ի կաթին ասխորութենէ (Ոսկ. Մատթ.)։ Լծեցէ՛ք զերինջան , եւ քեցէ՛ք զորդիսն 'ի հետոց նոցա (Ա. Թագ. Զ. 7)։ Յն. ἀπάγω ։

Բաղդ. մած եւ մացեմ ։

Եւ կրկնութեամբ

ԿՑԿՑԵՄ , բաղդ. բաղբաղեմ , եւ 'ի կափուցանելոյ՝ կափկափեմ ։

Ի նմին արմատոյ

ԿՑՈՐԴ ,

ԿՑՈՐԴ ԿԵՆԱՑ , (կենակից) , Յն. συμβιωτής ։ (Դան. ԺԴ. 1)։

ԿՑՈՒՐԴ ։ նոյն եւ

ԿԱՑՈՒՐԴ , հանտէս , տօն ։

Բաղդ. կաճառ եւ ճառ ։

Դարձեալ 'ի բառէս՝ չօէր

ԿԾԾԻ , եւ կծծին է աղտեղի , անարգ , ուստի 'ի նմանէ

ԳԾՈՒԾ , ԳՁՈՒՁ , ստորին , անարգ , նուաստ ։

ԳՁՁԵՄ , խաստարաչալանէլ , աշխալանաչալանէլ ։

— Յարժամ զնոյս մեծարոյ կարծիսն (Տպ. կարծիսն) գձձեսցուք , եւ հանցուք զնա յաչաց իւրոցն խաբեցելոց (Եղիշէ)։

Դարձեալ 'ի բառէս՝ չէճէ ,

ԿԾԻԿ , — Կծիկ մազոյ ։

ԿԾԻԿ ԿԱՄ , — Կծիկ կալ ընդ բռնութեամբ (Ոսկ.)։

ԿԾԿԵՄ , — Մի՛ կծկիցես զձեռն քո յեղբօրէ քումմէ կարօտելոյ , այլ ընդարձակելով ընդարձակեսցես նմա զձեռն քո (Օրէն. ԺԵ.)։ — Մի 'կծկել զձեռն առ 'ի չտալոյ փոխ եղբօրն (Նխ. Օրէն. ԼԴ)։ Իսկ

ԿԻՑՔ , Զոյգք ոտից կենդանեաց , իբր թարգմանութիւն Պրս. ճէ-ֆթէ , եւ Տճ. չիֆթէ , աքացումն ձիոյ , ջորւոյ եւայլն ։ Յորմէ

ԿԻՑՍ ԸՆԿԵՆՈՒՄ , թարգմ. Թրք. չիֆթէ աթմագ ։

ԿՑԱՏԵՄ , ԿՑԱԾԵՄ , ԿՑԱՑԵՄ , — Պօղոս անկուշող , կցացող տառուածեղէն օրինացն ... որ կիցս ընկենոյր (Սեբեր. ԺԱ.)։ — Յարժամ կցածիցես իբրեւ զէշ , եւ եղջիւր ածիցես իբրեւ զցուլ (Ոսկ. Մատթ.)։ — Եղջիւր ածեն եւ կցածեն (Ոտղ.)։

* *

(*) Արմատն երեւի տօլ , տօլէլ ։ (Ն. Հյկ. Բառարան)։

ԵՂՈՒՆԴՆ, Յն. ἐλαία, Նշ. պտուղ ձիթենւոյ, (զէյթին), Նշ. նաեւ բիծ 'ի մարմնի 'ի ձեւ եւ 'ի գոյն պտղոյ ձիթենւոյ։ (զէնէ)։ Իսկ

ՍԻՍԵՌՆ, բառ Լատին cicer, նոյն նշանակութեամբ։

Այսպէս կոչեցաւ Կիկերոն, զի 'ի դէմս կամ 'ի քիթ նախահաւուն նորա էր ելունդն 'ի չափ, 'ի ձեւ եւ 'ի գոյն սիսեռն (Պլուտ. 'ի Կիկերոն)։

(Մի՛ շփոթեր ընդ Թիթեղն)։

Բաղդ. տիեզերք եւ ազգաւ, կէտ եւ կէտ, մեծ եւ մեց, կլինճ եւ գլինճ։

*

* *

ԱՄՈՒՍԻՆ (*), (սեռ.) ամուսն-ոյ. այր կանանց, կին արանց։

ԱՄՈՒՍՆԱՆԱՄ, —Նա էր ամուսին եւ կին ուխտի քո։ — Որպէս անզգամէ կին զամուսին իւր։

Առ Պարսիկս ընդ միով արամբ երկու կամ աւելի կանայք, կոչին 'ի միմեանց՝ օրտաքէ, աքէ։

Ամուսնութիւն նկատի իբրեւ օրինաւոր զուգութիւն։

Յարմէ 'ի հականակէն

ՑԱՒՄՆԵՄ(**), ՑԱՒՄՆՈՒՄ, ՑԱՒՍՈՒՄ, ՑՈՍԵՄ, ՑՈՄՆՈՒՄ, ՑՈՍՈՒՄ, մտանել առ կին, կամ ննջել կնոջ ընդ առն, արտաքոյ օրինաց։ — Ցաւոէին ըզգատերան կայենի։ - Եթէ ոք զոր իցէ խօսեցեալ՝ յաւցի (Կանոն.)։ — Ցանձն առին յաւնուլ յափշտակեալ 'ի ժողովրդենէ անտի կուսանս (Եփր.)։ — Մարք 'ի տայգերոցն յաւնիցին (Ոսկ. Մատթ.)։ — Երիտասարդք 'ի բազմն յաւնութին (Փիլ.)։

Իսկ

(*) Ն. Հյկ. Բռ. ստուգաբանէ, «Որպէս ՁԷ համասին. 'ի միասին։

(**) Տես զայսմանէ 'ի Բազմավէպն 1875. Պրակ Դ. 352 եւ 'ի Հայկական բառաքննութեան Ն. Բիւզանդացւոյ, էջ 21. Տպ. 'ի Կոստանդնուպոլիս. 1880, եւ յԱրեւելեան Մամուլ. էջ 538. ապրիլ 1880. ի Զմիւռնիա։

ԱՌԵՒԱՆԳԵՄ(*), ծագի 'ի Յն. ἀγγαρεύω, որ նշ. բռնադատել, ըկել։

(ա ռ ե ւ ա ն գ , ἀγγαρευ)։
4 5 6 7 1 2 3

Զկազմութիւնն բաղդ. ուխտաբան, վիթխարի։

Յն. ἄγγαρος, նշ. թղթաբեր, սուրհանդակ, եւ ἀγγαρεῖα, սուրհանդակութիւն, Պրս. անկարեա։

Եւ որովհետեւ 'ի Պարսս պաշտօն թղթատարութեան կամ սուրհանդակութեան կամաւոր չէր, քանզի ձրի էր, եւ բռնի կատարել կուտային իւրաքանչիւր գեղերու կամ քաղաքներու, ուստի բառը՝ բռնաբարելու միտք մը առած է։

Այսպէս է 'ի մեզ եւ

ՊԱՀԱԿ ՈՒՆԻՄ, Թրք. անկարեայա թութմագ։

ՊԱՀԱԿ ՎԱՐԵՄ, Թրք. անկարեայա չէվիրմէք։ Քանզի

ՊԱՀԱԿ, Պարսիկ բառ է, բէյկ, որ նշանակէ՝ սուրհանդակ։

— Ունէին պահակ զՍիմոն Կիւրենացի (Մարկ. ԺԵ. 20)։ — Զնա կալան պահակ զի բարձցէ զխաչափայտն նորա (Մատթ. ԻԷ. 32). Յն. ἀγγαρεύω։ — Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի։ — Պահակն վարել այն իսկ է, զուրն փետել, տարապարտուց ձգձգել եւ յանդէպս վարել խուելով (Ոսկ. Մատթ.)։ — Պահա՞կ ոք վարէ տարապարտուց, համբե՛ր (Սեբեր)։ Ա՛յլ է՝ պահեմ, եւայլն։ Տես զբառդ։

Յարմէ (առեւանգեմ)

ՀԱՐԵՒԱՆՑԻ, — Ոչ կամիմ զձեզ այժմ 'ի հարեւանցի անցանել (Ա. Կորնթ. ԺԶ.)։

ՀԱՐԵՒԱՆՑԻԿ, իբր անհաստատ։

Բաղդ. հափափել եւ ափ յափոյ, հիմն եւ իմն։

(*) Ըստ Ն. Հյկ. Բռ. ստուգաբանութիւն բառիդ է՝ «Առնուլ զկին, եւ անկանել փոխանակ յայլ երկիր»։

Եւ 'ի հակառակէն

ԺԱՌԱՆԳԵՄ, (ըստ օրինակի ույժ, ժ-ույժ)։

*

* *

ԳԱՌԱԳԵՂ, ԳԱՌԱԳԻՒՂ, մանաւանդ՝

ԳԱՌԱԳՒՂ, Լատիներէն՝ carcer, (բանտ, կապանք)։

— Գայլ 'ի բերան հարին, եւ տարան գառագղիւ (Եզեկ.)։ — Ի փարագիղն արգելուցուն (Վեցօր.)։ — Ի գառագղացն գերծանիցի (Ոսկ.)։

ՀՍԿԱՅ, գրի եւ

ՍԿԱՅ, Յն. γίγας, (ըստ առասպ.)։ Ծագի 'ի Յն. σκιά, որ նշ. ստուեր, ուրուական։ Բառդ. քաջ։

— Զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն (Եզնիկ)։ Նոյնպէս եւ

ՇՈՒՔ, (սեռ.) շք-ոյ, ----։

է 'ի Յունականէս՝ σκιά,

Յորմէ 'ի հակառակէն

ԻՍԿ, բուն, ստոյգ։

Յորմէ (սկայ)

ԱԶԳ, 'ի միրձուորութենէ Լատին ձայնիցս genius, ոգի. (ուրուական, քաջ, գեւ), եւ gens, gentilis (ազգ.) Նոյնպէս եւ Արաբ. ջին, (ոգի, ուրուական, գեւ), եւ ջինս, (ազգ, տոհմ, ցեղ)։ Իսկ

ՍՏՈՒԵՐ, ծագի 'ի բառէս

ՍՏՈՒԱՐ, եւ սա 'ի Պարսկականէս՝ ---, (հաստատուն, հաւատարիմ, ամուր, պինդ, մնայուն)։ 'ի մեզ՝ թանձր, մեծ, ինչպէս ստուերը քան զբուն իսկական մարմինը, ասոր համար է որ Յոյնին σκιά (ըստուերը) 'ի մեզ նշանակուած է հըսկայ, (մեծ, անհեթեթ)։

Կազմ. բառդ. ---- եւ ----։

Յորմէ (ստուեր)

ՍՈՒՏ, ՍՏԵՄ, ՍՏՈՒԹԻՒՆ, բառդ. սկայ եւ իսկ։ Յն. εὖψδος, նշ. սուտ, եւ ψεύδο-αι, ստեմ։

Ի ՍՈՒՏ ՀԱՆԵՄ, — Ի սուտ հանել զՕգոստոս (Խոր.)։ իբր Թարգմ. Թրք. ---- ----։ Այլ է

ՇՈՒՔ, ՇՔԵՂ, (պատիւ), Պրսկ. ----, նոյն նշանակութեամբ։ Իսկ (Ա. Կորնթ. ԺԱ. 10)։ — Պարտի կնոջ շուք ունել գլխոյն վասն հրեշտակաց, Յոյնն ἐξουσία (իշխանութիւն)։ Այլ է ամենեւին՝ սկեմ, հսկեմ։ (Տես գլուխ)։

ԳԱՃ, Պրս. ----, նշ. կիր. 'ի մեզ ազգ ինչ կրոյ, Տճ. ----. Լտ. calx նշ. կիր։ Յորմէ

ՔԱՋ, ըստ նմանութեան Յունարէնին, զի Յն. ἡ τίτανος, նշ. գաճ, եւ ὁ τιτὰν, տիտան, հսկայ, քաջ, եւ ոգի, (Թրք. ----, ----)։

— Եթէ դու յորս հեծցիս յազատն 'ի վեր 'ի Մասիս, կալցին զքեզ քաջք, տարցին զքեզ յազատն 'ի վեր 'ի Մասիս, անդ կացցես, եւ զլոյս մի՛ տեսցես (Խոր.)։ Իսկ

ՎԱՂ ՔԱՋ ԸՆԴ ԱՌԱԻՕՏՆ, է իբր խաղ բառից, իբր զի Թրք. ---- ----, նման է ձայնիս՝ ----, (քաջ)։

Յորմէ (քաջ) 'ի հակառակէն՝

ԳԱՃԱՃ, Թրք. ----։ Եւ

ՃԿՈՅԹ, — Ճկոյթ իմ ստուար է քան զմէջ հօր իմոյ (Գ. Թագ.)։

ԾԿՈՅԹ, Թրք. ---- ----։ Եւ

ՃՃԻ, Պրս. ----, նշ. փառեակ։ Բառդ. փառեակ, կինճ, ճիռ։

— Ճճիք մնասակարք։

ՁԱՐԱՃՃԻ, — Կրետացիք հանապազ ստեք, չարաճճիք (Տիտ. Ա. 12)։ Յն. κακὰ θηρία, (չար գազանք)։

ՃՃԵԿԵՐ, — Հաց պաչարի իւրեանց չորացեալ եւ ճճեկեր (Յես. Թ. 5)։ Նոյն թարգմանեալ է առ Ոսկեբերանի, «Կրետացիք հանապազ ստեք, չարագազանք»։ — Զեղբօրն չարաճճոյ գխորհուրդ ընդէ՞ր ոչ գիտաց (Եզնիկ)։

Ասռի Թուին

ԺԺՄԱԿ, ԺԻԺՄԱԿ, ---- ----, ----, իսկ

ՉԱՆՉ, Պրսկ. ճէնճէ՝ Ռշ. թին, կորիզ խաղողոյ ։ Յորմէ

ՃԱՆՃ, միջատ փոքր, թեւաւոր, բազմապիսի ։ — Զքահանայն զկծեցուցանէ զմեզ, լուածն եւ ճանճն եւ մժխով (Եղնկ) ։

(Տես Հնդեւր. Նախ. էջ 77), ուր ըսուած է թէ «Հաւանական է որ մեր Հայ նախնիք իբրեւ զըզըզըզան ըմբռնած ըլլան ճանճն, որուն թեւիկներն սուրգիւ բացաձայնչ են» ։

ՃՆՃՂՈՒԿ, իբր փոքրագոյն 'ի թռչնոց ․․․ ։ — Երկու ճնճղուկք դանգի միոջ վաճառին ։ Բաղդ. ճկոյթ, (Տճ. սէրչէ քուչուք), եւ ճնճղուկ, (Տճ. սէրչէ գուշ) ։ Եւ

ՉՆՉԻՆ, (անս.) չնչեն-ոյ, կամ 'ի բանէս ոչինչ ձուլեալ 'ի մի ։

— Չնչին փայտին հաւատան մարդիկ զանձինս իւրեանց (Իմ.) ։

Ծանճ՝ նկատի իբր զազրալի ինչ ։

— Ծանճք մեռեալք զազրացուցանեն զիւղս անուշութեան (Ժող. Ժ. 1) ։

Նոյնպէս եւ

ՃԵՆՃԵՐ, զարշահոտ ծուխ մսոյ ։

Յորմէ ամկ.

ՃԵՆՃ, — Ի ճենճերս աղանդիս մրճոտիցիք (Եղիշ.) ։

Յորմէ 'ի հակառակէն

ՋՆՋԱՆ, — Ջնջան լինի արդարոյն անօրէնն (այսինքն՝ մաքրութիւն) ։ (Առակ. ԺԱ. 18) ։

Կազմ. բաղդ. դաղ-ան, իշ-խան ։

ՋՆՋՈՑ · ՋՆՋԵՄ, — Ջնջել զարծաթ եւ զանել (Եփր.) ։ — Ջնջեա զիս 'ի դպրութենէ քումմէ զոր գրեցեր (Ել. ԼԲ. 32) ։ Այսպէս եւ Թրք. սիլ-մէք, Ռշ. ջնջել, սրբել, նաեւ՝ անհետ ընել ։

ՋԻՆՋ, (մաքուր, վճիտ) ։ Ա՛յլ է

ՃԻՃ, մնացորդ խաղողոյ յայգւոջ, Յն. ἐπιφυλλίς, Պրս. ճէրա, Ռշ. ճաչըր գէնտա 'ի բաղանէ ։ — Եթէ կըթողք մտեալ էին 'ի քեզ, ո՞չ ճիւ մի ոչ թողուին ։

Յորմէ՝ իբր գոյգն կութ

ՃՈՒԱՔԱՂՈՒԹԻՒՆ, — Ո՞չ ապաքէն լաւագոյն է ճռաքաղութիւն Եփրեմի քան զկութն Աբիեզերայ (Դատ. Ը. 2) ։

Յորմէ (գաճ)

ԿԻՃ, ԿՈՒԻՃ, — Ձեն քան զկուճ որ բուն ազխաւոր իցէ, ազխառկագոյնք (Ո-կ.) ։ Յորմէ

ԿՃԵԱՑ, — Անոյ էին թակոյկք կըճեայք վեց (Յ-հ.) ։ Եւ

ԿՃԻՃ, կամ

ԿՃՈՒԻՃ, (յետ.) ։ Ա՛յլ է

ԿԱՃ, կամ Թրք. քէչի ։

ԿԱՑՃ, յորմէ

ԱՑԾԵՆԱԿԱՃ, Տճ. նմանաձայնք են քէչի եւ քէչի, (այծ եւ կաճ) ։

Յորմէ (կուճ)

ԿՈՃ, այս՝ է ձեռնեդեռ ...՝ նշանակէ էն հաստատութեան, ամրութեան, զօրութեան ։ Բաղդ. ճարմակը ։

ԿՈՃԻ ՈՏԻՑ, եւ

ԿՈՃՂ, ԿՈՃԱԿ, յորմէ

ԿՃՂԱԿ, եղունգն կամ ծայր ոտից եղին, ոչխարի եւայլն ։

— Ոտն մարդոյ եւ կճղակ անասնոյ մի՛ գնասցէ ընդ նա (Եզեկ. ԽԹ. 11) ։ Եւ

ԿՈՃԿԷՆ, — Եւ էին զնովաւ պարեգօտք ասղնեգործք եւ կոճկէնք (Բ. Թագ.) ։ Եւ

ԿՈՋԱԿ, եւ

ԿՈՃՈՊԵՄ, իբր հաստանել 'ի կոճոյն, 'ի ծառոյն ։

Յորմէ 'ի հակառակէն

ՓՈՃՈԿ, — Հատոյն ցորենոյ փոճոկս զգաձեւս կազմեաց 'ի հասկին (Վեցօր) ։

* * *

ՈՒՐՈՒԽԱԿԱՆ, ոգի մեռելոյ ։

— Պագանել երկիր ուրուականաց մեռելոց ։ — Զմարդկան ուրուականս 'ի պաշտօն առնել զիս անուանէին ։

Ծագեալ յԱրար. րուհ, (ոգի, հոգի), կամ րույէ, (երեւոյթ, տեսիլ) ։

ՈՒՐՈՒԱԳԱԾՏ , *խել*

ՈՒՐՈՒԱԳՐՈՒԹԻՒՆ , ՈՒՐՈՒԱԳԻԾ , ՈՒՐՈՒԱԳՐԵՄ , ([illegible]) *իբր , ստուերագրութիւն , ստուերագիր , ստուերագրեմ ։ Գրս. ասէ , որ նշ. գիծ , ագի չար , (յորմէ 'ի մեզ' այս) նշանակէ եւ ստուեր , եւ Արաբ.* [illegible] , *որ նշ. գիծ , այս , նշ. եւ ստուեր , հովանի ։ (Տե՛ս ստուեր) ։*

∴

ՍԿԱՒԱՌԱԿ , *բաղդ. գլուխ , կատարին ,* Յն. σκάφη , (*յորմէ Թրք.* [illegible]) *նշ. բամակ , թաս , գագաթն մարդոյ , եւ լայնաբար որ ինչ գոգաւոր է 'ի ձեւ սկաւառակի կամ սաղաւարտի ։ մակոյկ , նաւակ ։*

Նոյն բառ է յետեւառաջութեամբ գրոց

ՍԱՂԱՒԱՐՏ , Յն. περικεφάλαιον ։

Նոյնպէս եւ

ՍԱՐԿԱՒԱԳ (*) , *իբր անուն պաշտաման որքոյն Ստեփաննոսի նախավկայի , առեալ յանուանէ նորա ,* Յն. στέφανος , *որ նշ. սաղաւարտ , պսակ , եւ նոյնին նման ինչ , գլխանոց ,* ἡ στεφάνη , *(սաղաւարտ) ,* [illegible] *եւ* [illegible] , *կազմին բառ մասին 'ի բառիցս* [illegible] *եւ* [illegible] , *որք նշանակեն ,* [illegible] , [illegible] , [illegible] ։

— *Հակ-առակ , — խորան-արդ , — գի-արդ . եւ* [illegible] , *պսակարդ , զմրխթարդ ։*

Նոյն է ընդ [illegible] ։

(*ս ա ր կ ա ւ ա գ*)
1 7 6 2 3 4 5 8

(*) Ն. Հյկ. Բառարանը 'ի վերջ կոյս բառարանին այբուբենի կարգաւ նոր բառեր կը շարէ , «Յաւելուած աշխարհիկ բառից անվրէպ 'ի գրոց առ մեզ եկելոց» ։

Եւ այս բառերու կարգին մէջ բառ մը կը գտնէ «Սարգել կամ սարգել» , որ իւր իմացուածովը կը նշանակէ կազմել , հանդերձել , եւ կը յաւելու «Որ լինի արմատ սարկաւագելոյ» ։

Նաեւ

ՏԱՂԱՒԱՐ , *զի է զգաձեւ , խոբանարդ ։ Եւ*

ՏԱՂ , *յորմէ*

ՏՈՂ , ՏՈՂԵՄ ,

Յորմէ 'ի հակառակէն'

ՏՈՂՈՒԿ , *բաղդ. հիւսեմ եւ հոսեմ , թրծեմ եւ թրջեմ ։ Յորմէ*

ՆՈՂԿԱՄ , *յորմէ*

ՏԱՒԱՂԵՄ , *եւ*

ԽԱՂԱՒԱՐՏ , *'ի սաղաւարտէ , պալար ուռուցիկ , զմրխթաձեւ ։*

Բաղդ. խոյր եւ խոյլ ։

Սաղաւարտ Յն. περικεφαλαία , *(գլխանոց) նկատի իբր' թագ , որ դնի 'ի գլուխ ։ Բաղդ. թագ , գլուխ ։*

Յորմէ 'ի հակառակէն

ԱՒԱՐՏ , *վերջ , վախճան , վերջին ծայր ։ Բաղդ. ծեր եւ ծայր , ծագ եւ ձագ , հաւ եւ յաւ , սկիզբն եւ սպառումն , հաւս եւ յետոյ , այգ եւ ագի ։*

Սաղաւարտ գլխանոց զինուորական , եւ նկատի իբր անօթ պատերազմողի , եւ յաղթականն առնու զպսակն , եւ նիւթ պսակին են 'ի բուսոց որք ոչ թառամին ։

Որպիսիք են

ՏԱՒՍԱԽ , *ս ա ղ ա ւ (ա ր) տ , որ*
4 5 6 2 3 1
է անթառամ ։

ՍԱՐԴ ։ *ս ա (ղաւա) ր տ , եւ սատի լայնաբար ամենայն տերեւ' ասի*

ՍԱՂԱՐԹ , *եւս եւ ամենայն բանջարեղէն'*

ԽԱՒԱՐՏ , — *Ոչ կերիցէ խաւարտ եւ ոչ բանճար դալար* ([illegible]) ։

Յորմէ

— *Խաւարծի , —* ([illegible]) , *իբր' փափկագոյն* ([illegible]) , *եւ*

ԱՂԱՐԾԻ , *կամ*

ԱՂԱԾՐԻ , *յորմէ 'ի հակառակէն*

ԹԱՒԱՐԾԻ , [illegible] , [illegible] ։ — *Այր թաւարծի , եւ զօտի մաշկեղէն ընդ մէջ իւր (Դ. Թագ.) ։ Յորմէ*

ԹԱՒ , ԹԱՒՈՒՏ ,

Եւ 'ի հակառակէն

ՔԱԾԱԽԱՐՈՏ(*), (*խ ա ւ ա ր ծ ի*)։
1 2 5 4 7 3 6

Բաղդ. Ներքինի, մալեալ։

Վերջին մասնկդ ոտ, նոյն է որ ինչ է 'ի բոր-ոտ, քաս-ոտ, լուսն-ոտ մեհեր-ոտ։ — Զթաղամասութն եւ զմալեալն եւ զքածուարոտն եւ ըղհատեալն մի մատուցանիցես Տեառն։

Ցորմէ 'ի հակառակէն

ՔԾՈԽԱՐ, *հատոր մեռազի, երկաթի, պղնձոյ, հալելոյ եւ պաղելոյ, որ նկատի իբր՝ պինդ, կարծր։ Իսկ*

ԹԱՂԱՄՍԱԽՈՐ, *կամ*

ԹԱՂԱՍՄԱԽՈՐ, *Յն.* θλαττὸς· *Նչ. ներքինացեալ ճմլելով, Տճ. դուալմուշ, եւ* θλάσμα, *է՛ մալելն, ճմլելն։*

Սարդ ունի կրկին նշանակութիւն, զի նշանակէ նաեւ զմիջատն սարդ, մամուկ, զի Պրս. դէֆնէ, Նչ. սարդ կամ սարդի ոստայն, եւ Թրք. դէֆնէ, նշանակէ զտունկն դափնի, Յն. δάφνη, *եւ ահա երկու նշանակութիւնք երկուց լեզուաց միացեալ են 'ի մեզ՝ 'ի միում բառի՝ մամուկ։ Իսկ*

ՄԱՄՈՒԿ, *է իբր մամիկ, այսինքն՝ հանի, մեծ մայր կամ պառաւ կին, զի*

ՄԱՄ, *Պրսկ. Նչ. մայր, որպէս հաւն, մեծ հայր, կոչի՝*

ՊԱՊՈՒԿ, ՊԱՊԻԿ, ՊԱՊ, *Յն.* πάππος,

Գոյ առասպել Յունական, «Արաքնէ (ἡ ἀράχνη) *(սարդ), պարծէր եթէ ճարտարագոյն է քան զԱթենաս յարուեստի ոստայնանկութեան. իսկ դիցուհին եկն 'ի կերպարան պառաւոյ տեսանել զնա եւայլն, Թերեւս զայս առասպել ակնարկէ մերս մամուկ, եւ պառաւ կոչի 'ի մեզ՝*

ԱԽՍԱՐԴ, *յորմէ 'ի հակառակէն*

ԽՐԽՏԱՍԱՐԴ, (*ար.*) *երխառ-սարդ,* ἔρως = ἔρρωτα, (*սէր, տարփանք*), ἐρατῶ, *մասայ տարփական նուագաց։*

Կամ իբր Յն. ἔαρ = *գարուն,* (ἔαρ = ερα), ἐαροτρεφής, *սնուցեալ եար երա գարնան, գարնանասուն=նորահաս։*

ԵՐԱԽԱՅՐԻՔ, ԵՐԵԽԱՅՐԻՔ, (*Յն.* ἔαρ, *գարուն, նոր*), *եւ խայր, (հին Պրս. խէր, Պրս. խայըր, բարիք, բերք. նորաբեր, նորահաս, եւ իբր Պրս. նէվխէր՝, նէվխայրէ։*

ՅԱՅՐԱՏ, — *Զհայել յայրատ աչօք Յն.* ἐρωτηκά.

ՆԱԽԱՍԱՐԴ(*), *իբր նոր տարի, Հայերէն Ամանոր բառին իբր թարգմանութիւն, այսինքն՝ առաջին ամիս տարւոյ, եւ կազմի 'ի Հնդիկ եւ Զանդի անուանց նավա, (նոր), եւ սարադա կամ սարեդհա, (տարի)։*

Երբայական ամիսն ապիպ պատահէ այսմ ամսեան, եւ 'ի Սուրբ Գիրս ուր ասի 'ի բնագրին, «Զգուշացի՛ր ամսոյն ապիպ, զի յամսեանն ապիպ ելէք դուք յԵգիպտոսէ», եօթանասնիցն ունի τῶν νέων, *(նորոց), իսկ 'ի մեզ թարգմանեալ է, «Զգուշացի՛ր ամսոյն նաւեաց, զի յամսեանն նաւեաց ելէք դուք յԵգիպտոսէ». եւ կանուխ՝ որպէս ցուցեալ է յիւրում տեղւոջ, ծագի 'ի բառէս նաւ։*

Նաւասարդ (տարւոյ գլուխ, կամ

(*) *Քածուարոտ, Արու որպէս բած եղեալ։ (Ն. Հյկ. Բռ.)։*

(*) *Նաւասարդ, որոյ սկիզբն եւ անունն անգամ մթութեան ամպոց մէջ ծածկուած է, որք ինչուան նոյն տապանակին գագաթը կը բարձրանան, Նաւասարդն՝ որ հին Հնդիկ եւ Զանդիկ լեզուաւ նավա սարադա ստուգաբանի, այսինքն՝ նոր տարի, նոյն հին ազգին աւանդութեամբ յիշեցընէ ջրհեղեղի յիշատակն այլ։ Սարադա որ եւ սարաստաթի, Մեծին Բրահմայ աստուածոյն դուստր եւ կին ճանաչի, եւ ջրոց դիցուհի, ամիկան աղբերականց եւ գետոց։ (Բազմավէպ . . .)։*

«Նաւասարդ՝ որպէս թէ՝ նոր այս արդ կամ արտ, կամ որպէս Պրսկ. նէվխէ՛ր, այս է՝ նոր ժամանակ կամ եղանակ»։ (Ն. Հյկ. Բռ)։

սկիզբ), այս բառը յեղաշրջուելով կազմուած է

ՍԱՐԱԽԱՆԴ, որ կը նշ. հրուանդան, այսինքն՝ ցամաքի մը կամ լեռան մը իբրեւ գլուխ՝ դէպ 'ի դուրս ցցուած մասը.

(ս ա ր ա ւ ա ն դ), (իրօք կամ նը-
5 6 7 4 3 2 1 8
մանութեամբ), եւ որովհետեւ քանի մը բառ ունինք՝ [illegible], [illegible], [illegible], որ սարաւանդին վերջին մասը անելով կը ձեւանան՝

ԳԱՀԱԽԱՆԴ կամ ԳԱՀԱԽԱՆԴԱԿ, եւ

ԴԱՐԱԽԱՆԴ կամ ԴԱՐԵԽԱՆԴ,

ԲԱՐՁՐԱԽԱՆԴ կամ ԲԱՐՁՐԱԽԱՆԴԱԿ. Իսկ

ՀՐՈԽԱՆԴԱՆ (*), Պրս. [illegible], նոյն նշանակութեամբ [illegible]. Իսկ վերջաւորութիւնը՝ [illegible], է՝ [illegible]՝ յեղաշրջեալ, (դ ա ն = ա ն դ).
1 2 3 2 3 1

[illegible], է անուն առաջին աւուր եւ ամսեան տարւոյ, իսկ

ՀՈՌԻ, է անուն երկրորդի ամսեան տարւոյ.

Վրացերէն՝ [illegible]՝ նշ. [illegible], եւ

ՍԱՀՄԻ, անուն երրորդի ամսեան տարւոյն.

Վրացերէն՝ [illegible]՝ նշ. [illegible], Պրս. [illegible], նշ. երրորդ, իսկ անուն չորրորդի ամսեան տարւոյ

ՏՐԷ, Պրս. [illegible], է նոյնպէս անուն չորրորդի ամսեան (արեգակնային) ամին Պարսից. Տես եւ՝ տէր.

Ջհինգերորդն

ՔԱՂՈՑ, եւ զվեցերորդն

ԱՐԱՑ, թողեալ, քանզի չեն ծանօթք, անցցուք յեօթներորդն՝

ՄԵՀԵԿԱՆ, Պրս. [illegible], է նոյնպէս եօթներորդ ամին Պարսից.

Իսկ

ԱՐԵԳ, (տե՛ս զբառդ), ութերորդ ամիս է ըստ մեզ՝ եւ Պրս. [illegible], (որ նշ. արեգակն), է անուն ութերորդ ամսեան նոցա.

Բառս՝ [illegible] է 'ի մեզ իբր՝ արեգակնային, զի սափ

ԱՐԵԳ ԴՈԽՈՆ, — ([illegible]).

ԱՐԵԳ ՔԱՂԱՔ, ([illegible]).

ԱՐԵԳ ԱՄԻՍ, եւ (ամսուան վրայ խօսելով), — Եմուտ Եսթեր առ արքայն յերկոտասաներորդ ամսեանն Ադար, որ է Հայերէն՝ Արեգ (Ե-Բ. Բ. 16). Իսկ [illegible]՝ իբրեւ արեգակն, չիք ուրեք 'ի կիր արկեալ լոկ, այլ բարդութեամբ

ԱՐԵԳԱԿՆ, ԱՐԵԳՁԵՐ, ԱՐԵԳՈՒՆԻ,

Այլ

ԱՀԵԿԱՆ, իններորդ ամիս,

ՄԱՐԵՐԻ, տասներորդ,

Անծանօթ են մեզ.

ՄԱՐԳԱՑ, մետասաներորդ,

Միայն

ՀՐՈՏԻՑ, (անուն մերուս երկոտասաներորդ ամսեան), որ մերձաւոր է ձայնիւ բառիս՝ [illegible], որ է անուն քսանեւհինգերորդի աւուր արեգակնային ամսոյ Պարսից, որ ասի նաեւ՝ [illegible], որով մերձենայ ձայնիւ՝

ՀՐԱՏ, — Ջիցէ՞ տեսեալ ձեր ընդկատայս եւ զանս լի ջրով եռացուցեալս 'ի հրատի... զի թէ յերկարեսցեն թողցեն 'ի բորբոքեալ հրատին, եւայլն ([illegible]).

Յն. πυρόεις, (ած.) նշ. հրային, հրատիպ, իսկ գոյականաբար առեալ՝ ὁ πυρόεις, նշ. զմոլորակն Հրատ.

ԱՏՐ, Պրսկ. [illegible], նշ. [illegible], 'ի մեզ 'ի բարդութեան եւեթ.

ԱՏՐԱԳՈՅՆ, ԱՏՐԱՇԷԿ, եւ

ԱՏՐՃԱՆԱԿ(*), (բառ յետնոց), թերեւս թելադրեալ 'ի բառէս՝

ԱՏՐՈՒՇԱՆ, Պրս. [illegible], որ թարգմանի՝ մեծապայծառ պլուլին, մեծապայծառ կրակատուն, նուիրական պլուլին, (Յն. πυρεῖον).

(*) Հրուանդանք ստուգաբանի՝ հրաձեւ գահաւանդք 'ի ծովափունս. (Ն. Հյկ. Բռ.).

(*) Ատր (Պրսկ. ադեր), նշանակէ՝ [illegible] (զգալի, նիւթական), իսկ [illegible]՝ աննիւթ.

Կամ թարգմ. բառիս՝ հրոյն ։
(հրա ցան)
(ատր ծան) ակ ,
իբր՝ հրացանակ , կամ
իբր՝ հրազէնք ։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ , (աշխարհ) , Պրս. ադերբայճան . իսկ

ՃՐԱԳ , Պրս. ճերաղ, ճրա, ճէրա, ճարագ ։ Յորմէ

ՃԱՌԱԳԱՅԹ , (տես և որոգայթ) ։

Յորմէ համառօտեալ

ՋԱՀ ։

Եւ (կրակ = ճրագ) ։

ԿՐԱԿ , — Իբրև լուցին կրակ 'ի մէջ գաւթին (Ղուկ. ԻԲ. 59). Յն. πῦρ ։ — Հէքդ եւ թշուառականդ, որպիսո՞ւմ կրակի ցանկանայցես (Ոսկ. Տէր.) ։

ԿՐԱԿԵՏՂ , — Տեսանեն կրակետղ կայծականց, եւ ձուկն մի 'ի վերայ (Յովհ. ԻԱ. 9) ։

Կրակ՝ յոքնակի չունի, ինչպէս նաեւ հուր ։

* * *

ՊՍԱԿ , — Իբրև փեսայի եդ ինձ պսակ, եւ իբրև հարսն զարդու զարդարեաց զիս ։
Բառ Պարսիկ , պէսակ , բէսակ , նոյն նշանակութեամբ ։

Յորմէ ձեւացեալ բառքս՝

ՎԱԿԱՍ , —Իբրև զփեսայիւ՝ արկ զինեւ զվակասն (Կոչ. Ընծ. Գ) ։

Յն. μίτρα , (խոյր , թագ , պսակ), եւ սա նկատի իբր զարդ վայելչութեան ։ Եւ

ՎԱՍԱԿ , յատուկ անուն մարդոյ, կամեցեալ ասել՝ Ստեփանոս. (Յն. στέφανος , պսակ) ։

Այլ է նոյնաձայն անուանս՝

ՎԱՍԱԿ , անուն նշանաւոր մատնչին առ Եղիշէի, Յն. φάταζ , (սեռ.) φάταχος , (ֆասանէլ. ղըղաբաթէլ) ։

Պսակ նկատի իբր ամբողջութիւն ։

Բաղդ. օղ , օղակ , յորմէ ոլոր , ոլորել , յորմէ՝ բոլոր , բոլորել ։ — Բոլորեալ պսակ 'ի փշոց եդին 'ի գլուխ նորա ։

Յորմէ 'ի հակառակէն

ՊԱԿԱՍ , ՊԱԿԱՍԵՄ , եւ
ԿԱՍԻՄ , ԿԱՍԵՑՈՒՑԱՆԵՄ ։

Յորմէ (պսակ),

ՍԱԿ , իբր՝ բովանդակութիւն , ամբողջութիւն , չափ որոշեալ եւ որոշիչ ։ Յորմէ

ՍԱԿԱՒ , իբր՝ չափով , չափաւոր , ոչ աւելի ։ Յորմէ

ՏԱԿԱՒ , ջուրն տակաւ նուազէր , աշխ. քիչ քիչ կամ եավաշ ։

Յորմէ

ՏԱԿԱՒԻՆ , — Տակաւին թեւարկեա զժողովրդեամբ իմով չարձակել զնոսա (Ել.) ։ (Ս եւ Տ լծորդք) ։

Բաղդ. սակաւ եւ տակաւ ։

Իսկ

ԿԷՍ , (սեռ.) կիսոյ , Յն. κίρκος , նշ. անուր , օղ , անիւ , յորմէ Լտ. circus , յորմէ մերս

ԿՐԿԷՍ , զկրկէս նկատեալ բոլորակ , յորմէ ,

ԿԷՍ , բոլորն յերկուս հաւասար մասունս բաժանեալ ։ Բաղդ. ողջ եւ բողջ , պսակ եւ պակաս , կատարել եւ կոտորել , եւ կտրել ։

Յորմէ (կէս) ,

ՍԿԻԶԲՆ , որ է իբր՝ [illegible] , ըստ առածին՝ թէ սկսանելն՝ է ժամանել 'ի կէսն գործոյն ։

Ἀρχὴ γάρ λέγεται μὲν ἥμισυ παντὸς ἐν ταῖς παροιμίαις ἔργου, καὶ τό γε καλῶς ἄρξασθαι πάντες ἐγκωμιάζομεν ἑκάστοτε. τὸ δ' ἔστι τε, ὡς ἐμοὶ φαίνεται, πλέον ἢ 'ς τὸ ἥμισυ καὶ οὐδεὶς αὐτὸ καλῶς γενόμενον κεκωμίακεν ἱκανῶς.
(Պղատոն , օրէնք Զ. 753 է. եջ 158) ։

Քանզի յառակսն իսկ՝ սկիզբն կէս ասի ամենայն գործոյ , եւ այլն ։

— Սկիզբն հարկ է լուսաւորութեան , եւ նորոգել դարձեալ 'ի սկզբանն (Փիլ. Է.) ։ — Սա է սկիզբն եւ ծնունդ պատերազմաց (Անդ) ։ — Որ մարդկանն է , սկիզբն ունե-

լով զնախնիս, խոկ որ յոգւոյն՝ սկիզմն ունի զիմաստութիւն (Անտ)։
ՍԿՍՄՆԱԿԱՆ, — Աստուածային ա-նունն է առաջնորդագոյն եւ սկսմնա-կան, որով ամենայն աշխարհ վարի (Անտ)։ — Առաջին հրահանգացն եւ սկսմնականաց թեւակոխութեամբք (Անտ)։ — Սկիզմն անէ փախստեան (Անտ)։ — Սկիզմն ամենեցուն գո-յացուցանեն զԹիւ (Անտ)։ — Աստ-ուածատօնակքն յաղագս սկսմանցն ... սկսմունս հակառակ դնելով ... սկսմանցն պարագայից արժանի, վասն որոյ առաջրեաց, թէ ձեզ ա-մխաս այս սկիզմն (Անտ)։
ՍԿՍՄՆԱԳՈՅՆ, ՍԿՍՄՆԱՏԻՊ, —Ցոյց սկսմնատիպ իցէ ազգն, այնոցիկ եւայլն (Անտ)։ —Զցոյց սկսմնատիպ զգայնոյն (Անտ)։ — Սկզմունս ա-մենայնի ... գչորս տարերս (ՍՀՏ.)։
Սակայն՝ սկիզմն եւայլն, խափա-նեալք են, եւ զասոս փոխանակեալք
ՍԿԻԶԲՆ, ՍԿԶԲՆԱԿԱՆ, ՍԿԶԲՆԱ-ԳՈՅՆ, ՍԿԶԲՆԱՏԻՊ, որպէս եւ ամ-բրաւ, ամբրաւենի խափանեալք են, եւ սովորական լեալ է արմաւ՝ ար-մաւենի։
Թէ Ս է փոխանակ Զ ի, տես Թա-փել եւ սԹափել, քողել եւ սքողել։
Եւ թէ Բ է եկամուտ 'ի բառիս [illegible], յայտնի է 'ի բայէս
ՍԿՍԱՆԻՄ։
Ցորմէ 'ի հակառակէն
ԽՍԿ, ԽՍԿ ԱՐԴ, իբրեւ սկիզբն բա-նի, Թրք. [illegible], (արդ) եւ [illegible], (արդ)։
ՀՈԽՍԿ, ՀՈԽՍԿ ՈՒՐԵՄՆ, ՀՈԽՍԿ ՑԵ-ՏՈՅ, ՀՈԽԿ ԱՊԱ, բաղդ. հաւ եւ յաւ ('ի բառիս անյաւ),՝ վաղ, վաղնջա-կան եւ վաղիւ, սաղաւարտ եւ ա-ւարտ, ծագ եւ ձագ, ծեր եւ ծայր։

*
* *

ՀԱՏԱՎԱՃԱՌ, — Զսեղանս հա-տավաճառացն գրուեաց (Մրկ. ԺԱ. 15)։ իբր Թարգմանութիւն Յն. κολ-λυβιστής, զի κόλλυβος, նշ. խիստ մանր սակ, իբր ցորենի մը ծան-րութեամբ, որով բառը լայնաբար նշանակած է նաեւ՝ հատ մը ցորեն, եւ եւս լայնաբար՝ ցորեն, եւ մաս-նաւորապէս այն ցորենը որ կ'օրհ-նուի 'ի յիշատակ մեռելոց, κόλλυβα անունով (ըստ Յունական ծիսի)։
Հիմայ ալ տարբեր պարագայի մէջ խաշած ցորեն կը բաժնեն՝ մեղմէ ոմանք
ՀԱՏԻԿ, անուամբ, այսինք, երբ պզտիկ տղեկի մը առաջին ատամը ծայր կուտայ, խաշած ցորենը շա-քարեղէնի հետ խառնելով դրացեաց եւ բարեկամաց կը բաժնեն, որով, կ'ըսեն, տղուն զգացած ցաւը կը մեղմանայ, եւ ակռաները դիւրու-թեամբ կը բուսնին։
Այս արարողութիւնն նոր բան չէ, այլ հին եւ աւանդական, զոր Պար-սիկներն ալ կը կատարեն, եւ կ'ա-նուանեն՝ [illegible], ([illegible]՝ նշ. հատ, եւ [illegible]՝ հատիկ)։
Գէորգ դպիրն պալատական այս-պէս կը գրէ, «Ցորժամ հանգերձեալ են բուսանիլ ատամունք մանկանց, յիւրաքանչիւր ազգէ արմտեաց փոքր ինչ յիրեարս խառնեալ, եւ 'ի մէջ գլխոյ ոչխարի եղեալ եփեն, եւ յետ այնորիկ բաշխեն դրացեաց եւ բա-րեկամաց. եւ այսպէս առնելով հա-ւատան ռամիկք եթէ ատամունք մանկանն դիւրաւ բուսեալ՝ ոչ վրդո-տացուցանեն զմանուկն»։
ՀԱՏԱՆԵԼ ԴԱՀԵԿԱՆ, Թարգմ. [illegible] Թրք. [illegible]։
Իշխան լիցի հատանել առանձինն դահեկան (Յն. առնել) յաշխարհի քում (Ա. Մկ. ԺԵ. 6)։ եւ լայնաբար՝
— Ի լերանց նորա հատանիցես պղինձ (Օր. Ը.)։ Յն. μεταλλεία։ — Զրամն ուստի ոսկին եւ արծաթն հատանի (Խոր.)։

*
* *

ՑԻՔԻ, Գաղղ. poisson fermentée comme bière, cidre, etc. ըմպելի ոգելից, ըմպելի խմորուն։

— Վա՛յ որ յառնէին ընդ առաւօտն, եւ զհետ լինի ցքւոյն։ — Դառնացաւ ցքի՝ ըմպելեաց։ Յն. σίκερα. (բառ Եբր.)։

* * *

ԱԼԻՒՐ (*), ըստ բուն նախնի գրչութեան՝ ալեւր. բառ Յունական, Յն. ἄλευρον։ Յորմէ

ԱՂՕՐԻ, աղաւրի, ա լ ա ւ ր ի, ալեւրի, ալեւր, եւ

ԱՂԱՄ, Յն. ἀλέω։

ԱՂԱՐՏԵՄ,

ՑԱՂԱՐՏ ՎԱՐԵՄ, եւ

ԱՂՏԵՂԻ, ԱՂՏԵՂԱՑՈՒՑԱՆԵՄ, — Լուացի զոտս իմ, զիա՞րդ աղտեղեցուցից զնոսա (Երգ.)։

ԱՂ, Յն. ἅλς, Լտ. sal, (Լատինին Տը ա հնչուած է)։

ԱՂՏ, — Գումարեցան 'ի ձորն աղի, որ է ծով աղտից։

ԱՂԻ, — Յեզր ծովակի միոյ որոյ աղի են ջուրք (Խոր.)։

Աղտ՝ մանաւանդ 'ի բարդութիւնս

ԱՂՏԱՂՏ, — Ջուր թթու եւ աղտաղտ (Վեցօր.)։

ԱՂՏԱՂՏԻՆ, — Աղտաղտին տեղւոյ ջուր քաղցր բխել։

ԱՂՏԱՂՏՈՒԿ, — Բնակեսցէ յերկիր աղտաղտուկ։ —Արար զերկիրն պտղաբեր՝ յաղտաղտուկս (Սաղմ.)։

Եւ

ՀԱԼԻՄ, — Որպէս հալի մոմ առաջի հրոյ (Սաղմ.)։

Թուրքերէնին մէջը [illegible] եւ [illegible] իբրեւ առած մէկտեղ կը գործածուին [illegible]։

Անձրեւէ փախչելու աաթիւ, [illegible]։

ալ [illegible]։ ― [illegible] Կազմութիւնը բաղդ. աղ — յ'աղ'իմ — հ'ալ'իմ։

ՑԱՂԵՄ, — Ամենայն ինչ աղիւ յաղեսցի (առ 'ի պահել 'ի փտութենէ)։

Յորմէ 'ի հակառակէն

ՑԱՂԿԻՄ, նեխիլ, ժողխիլ, լուծանիլ։ — Նեխեցան մարմինք նոցա, եւ կողոպտեցան, եւ յաղկեցան, քակեցան, լուծան 'ի միմեանց (Բուզ.)։ Բաղդ. ժողովեմ եւ ժողխեմ

Յորմէ 'ի հակառակէն՝

ԹԱՂԿԻՄ, իբր՝ խառնիլ, թանձրանալ, հածել։

— Հերք թաղկեալ եւ խառնակեալ (Մանդ.)։ —Մորթ թաղկեալ։ — Թիկին անկուած խիտ եւ հոծ, եւ կարի յոյժ թաղկեալ է (Փիլ.)։

Յորմէ 'ի հակառակէն

ԹԱԼԿԱՆԱԼ, սպառել ուժոյ։

— Իբրեւ մարդոց թալկացելոց ծարաւեաց 'ի Սիոն (Եզ.)։ Եւ

ԹԱԼԱՆԱՄ, նուաղել, թուլանալ, աշխ. [illegible]։ — Փոխեաց նա զգոյն իւր, եւ եղեւ իբրեւ զթալացեալ (Եւս.)։ — Ոչ ամենայն թալանալ եւ ցնորել մարդկան 'ի դիւէ է (Եզնիկ)։ — Ամենեքեան առհասարակ թալացեալ էին 'ի ծարաւէ (Բուզ.)։

Յորմէ

ԹԱԼՈՒԿ, մի չփոթեր ընդ՝ [illegible]։ Աշխ. [illegible]։

— Մաղձայոյզ ոք իցէ, եւ թալուկ եւ ցնորք զարտիւն գայցէ։ — Որոց թալուկ զարտիւն գայցէ զառաջինն՞ անդէն յ'ի ներքս ունել ըզմաղասն ջանան (Ոսկ. Մատթ.)։

ԱՂԱՋՈՒՐ, Յն. ἅλμη, ջուր աղի, ծով։ — Որպէս դարձոյց զջուրս յաղաջուրս (Սեբ.)։ Եւս՝ իբր Յն. ἀλάστωρ (ամպարիշտ, աննուէր, չարաչուք)։ յորմէ է 'ի մեզ

ԱԽՆԹՈՐ, կամ

ԱՂՆԹՈՐ, ԱԽՆԹՈՐԱԳՈՅՆ, —Ջի՞նչ

(*) Ալիւր. — [illegible]՝ մանրիկ, [illegible]՝ արմատ։ (Քերական. Ջարգ.)։

խօսիս, ով աղաջուրդ, եւ ամենե-ւին աղաջորդ (Ոսկ. Եփ.)։ — Զոր բազում աղաջուրք 'ի փիլիսոփայից տանն (Անտ)։ Յորմէ (աղ)։

ՀԱՂՈՐԴ, իբր բաժանորդ աղի, հասարակորդ, ընկեր հացի եւ աղի։

Ուստի

ԱՂ ԱՌՆՈՒՄ, ԱՂ ԵՒ ՀԱՑ ՈՒՏԵՄ, նչ. հաղորդել սեղանոյ, հացակից, սեղանակից լինել, եւ — Իմ զի աղ եւ հաց կերեալ է յաշխարհին ձե-րում, գութ եւ սէր ունիմ առ աշխարհն ձեր (Եղիշէ)։

ՈՒԽՏ ԱՂԻ, նշանակ հաստատուն բարեկամութեան։ — Ուխտ աղի է առաջի Տեառն (Ղեւտ. Բ. 13)։ — Ես բերել ըստ օրինացն հաւատա-րիմ երգմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ կնքել (կամ կնքեալ) վարազ նկարագիր մատանեաւ. (Բուզ.)։ Ա՛յլ է

ԱՂ(*), բառ Յն. ἀγέλη, (փարախ, հօտ, ժողով)։ — Դիմեցին 'ի մահ իբրեւ խաշինք սուրբք յաղն երկ-նաւոր (Եղիշէ)։

Աղ նկատի իբրեւ կարեւորագոյն եւ առաջին 'ի պիտոյս կենաց։

Սովոր էին Հռովմայեցիք ասել. «Թերել եղընգամբ զաման աղին», կամեցեալ ցուցանել զկարի չքաւո-րութիւն։ — Regustatum digito terebrare salinum contentus perages». (pers. satv. 138)։

ԱՂՑՔ, պիտոյք, կարիք, կարօ-տութիւն։ — Գողանալ՝ յաղցից բռնութենէ (Փիլ.)։

ԱՂՑԱԽՈՐ, — Աղցաւոր կեանք։ Յն. ἀλληλετμένος βίος, Թշուառ կեանք։

Եւ մէկ բառով

ԿԵՆՑԱՂ։

Յորմէ (աղ)

ԱՂԱԽԻՆ, իբր աղագին, փոխա-նակեալ՝ վաճառեալ ընդ աղի, զի 'ի Թրակիա ընդ աղի փոխանակէին զգերիս։ Յն. ἁλώνητος, եւ Հռով-մայեցիք աղ տային 'ի վարձ փո-խարինի ծառայութեան. ուստի 'ի բառէս sal, որ նշանակէ՝ աղ, ա-մենայն գին կամ փոխարինութիւն ծառայութեան կոչեցաւ salarium, յորմէ 'ի մեզ

ԾԱՌԱՑՈՒԹԻՒՆ, ԾԱՌԱՑ. Իսկ

ԱԼԻՔ, Յն. ὁ ἅλς (աղ), եւ ἡ ἅλς (ծով), Թրք. տուզլու, Հայերէն ա-լիք, նշանակէ նաեւ սպիտակ հեր, իբր՝ սպիտակացեալ իբրեւ զալիս։

Յունարէն πολιός, որ նշանակէ սպիտակ՝ խօսելով զմօրուաց, պատ-շաճի նաեւ ծովու, քանզի, πολιή θάλασσα, նչ. փրփրեալ ծով։

— Մի՛ խորշեսցուք 'ի բազմա-ժամանակեայ ալեաց ծերոյն (Ի-մաստ. Բ. 10). μὴ πρεσβύτου εὐτρα-πῶμεν πολιὰς πολυχρονίους։

Յորմէ

ԱԼԵՒՈՐ, ԱԼԵՒՈՅԹ, ԱԼԵՒՈՐԻՄ։

Ալիք (տուզլու), նկատի իբր վերին մասն (ատացեալ զծովէ)։

Յորմէ 'ի հակառակէն

ԱԼՔ, — Եղին ձմերանի ընդ ա-լուց (Ներքին, խորագոյն) կողմն նաւելոյ (Եղիշէ)։

ԱԼՈՒՑՔ, ներքինք երկրի. Բաղդ. կարապ եւ կապար, ունչք եւ ունջք։

Եւ

ԱՂԻՔ, կոչին ներքինք կենդան-եաց. Բաղդ. մկան եւ մկանունք։

Իսկ Յն. ἔντερα, որ թարգմանի՝ ներքինք, 'ի մեզ լսի

ԸՆԴԵՐՔ, նոյնպէս

ԼԻՆՏՐ, (յք.) լնտերք, եւ

ԴՆԴԵՐՔ, նշանակեն ներքին մա-սունք մարդկեղէն մարմնոյ։

Ա՛յլ է

ԸՆԴԷ՛Ր, ընթերցի՛ր՝ ընդ-է՛ր, այս-ինքն՝ վասն է՛ր. Իսկ

ԱՌԸՆԹԵՐ, իբր՝ առ-ընդ-թեր.

Յորմէ (աղց)

(*) Ն. Հյկ. Բռ. զաղ՝ իմանայ իբր Տճ. Թուղ եւ զբանն Եղիշէի մեկնէ, իբր զի. ասէ, «Աղ սիրելի է խաշանց, եւ նորա իբրեւ խա-շինք դիմեցին յաղն»։

ՔԱՂՑ, յորմէ

ՔԱՑԱԽ. իբր թեյադրութիւն իմն Թրքերէնին ուր, աճըգ՝ նշ. քաղց եւ աճը՝ քացախ, լեղի։

—Եառուն 'ի կերակուր իմ լեղի, եւ 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ (Սաղմ.)։ —Սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ (Յովհ. ժԹ. 20)· 'ի Յն. չիք ընդ լեղւոյ։ — Իբրեւ ա՛ռ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն (Անփ 30)· 'ի Յն. չիք, հանդերձ լեղւովն։ — Ետուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ (Մատթ. Իէ. 34)· Յոյնն ունի, քացախ ընդ լեղի։

Յորմէ (քացախ) 'ի հակառակէն

ՔԱՂՑՐ (*), քաղց. մանանայ եւ մանանեխ, անանուխ, ման եւ մուն, թութ եւ թթու, դեղձ եւ դաղձ, սեխ եւ սոխ, պաղատիտ եւ տտիպ։

Եւ Յն. γλυκὼς, նշ. քաղցր, եւ γλυκείδιον, նշ. քացախ. իսկ γλεῦκος, նշանակէ

ՔԱՂՑՈՒ, գինի նոր, խաղողոյ։

Ի սոցունց հակառակէն՝ իբրեւ դառն

ՄԱՂՁ, — Ի դառնութիւն մաղձի եւ 'ի կնճիռ անիրաւութեան տեսանեմ զքեզ (Գործ. Ը. 23)· Յն. εἰς χολὴν πικρίας, ('ի մաղձ դառնութեան)։ Եւ

ՄԱՂԱՍ, — Որ թափիցէ զմաղձն եւ զմաղաս դառնութեան (Աֆոն.)։ — Զատէպ յորանջելն եւ զձգտել հմուտ բժիշկք 'ի մթերելոյ մաղասոյ ասեն (Նչնէկ)։

Դարձեալ 'ի ձայնէս՝ աղցք՝

ԲԱՂՋՔ, ԲԱՂՋԱՄ, եւ

ԻՂՁ, ԸՂՁԱՄ, ԸՂՁԱՆԱՄ, —Ըղձանային այգուն լինելոյ։

Եւ 'ի հակառակէն

ԵՂՁԱՆԱՄ, — Աղերս վասն մեղաց արկանել, ընդ յանցանացն եղձանալ (Ոսկ.)։ Եւ

ՁԵՂՋ, ՁԻՂՋ, — Եղեւ զիղջ մեծ 'ի վերայ Իսրայելի։

ԶՂՋԱՄ, ԶՂՋԱՆԱՄ, եւս եւ

ԽԻՂՃ, ԽՂՃԵՄ, եւ

ՃՂՃԻՄ, ոչ առատ, խնայող, որ խղճէ իմն 'ի տալ։

*
* *

ԹՈԽՂԹ, (սեռ. թղթ-ոյ)։

ԹՂԹԵԱՆ, եւ

ՏԱԽՏԱԿ, ծագի 'ի Յն. ἡ δέλτος, կը նշանակէ ամէն պաշտօնական գրութիւններ, տախտակներ, ծանուցագիր, յայտագիր, ծիղգ, նամակ, թուղթ (գրեալ), յոքնակի αἱ δελτωταί, (եռանկիւն տախտակներ) թղթեան։

Այսպէս յորջորջեալ յանուանէ Յունական գրոյս Δ (տելթա), զի առ Հելլենս ամենայն պաշտօնագիր էր եռեքանկիւնի ձեւով։ Տե՛ս եւ էբէ։ (Յն. դէլթա, չորրորդ գիր Յունաց), Եբրայեցւոցն՝ դալէթ, (չորրորդ գիր Եբրայեցւոց։

Իսկ Արաբ. թէլաթ, (ասէլոս նշ. երեք), եւ կը թուի թէ նոյն է ընդ Յունական անուանս դէլթա որ թէպէտ է չորրորդ գիր ըստ կարգի Յունական այբուբենից, սակայն ձեւովն է եռեքանկիւնի (Δ)։

Ուրիշ է նոյնաձայն տախտակ, Տճ. թախթա նոյն նշանակութեամբ։

Յորմէ

ՏՈԽՂՏ, ըստ թեյադրութեան Արաբականին, զի խատտ, նշ. թուղթ (գրեալ), եւ խատմ, տուղտ, ծաղիկ ծանօթ, Թրք. հաթմի չիչէյի։

Եւ

ԹԻԹԵՂՆ, մանաւանդ զի նոյն բառ է թիթեղն եւ թուղթ.

թուղթ, (սեռ) թ ղ թ-ոյ
1 2 3

թ (ի) թ (ե) ղ ն, (սեռ) թ ի թ ղ-ան
1 3 2
թ ղ թ-թիթղ

(*) Քաղցր եւ քաղց կարծենք իրարու հետ առնչութիւն չունին (Հնդեւր. Նախ. 79)։

Իբր զի Թիթեղն նուրբ է եւ բարակ իբրեւ զԹուղթ, այսպէս եւ զանակ՝ ծաղի 'ի Պրս. Թէնէ-ք բառէն որ նշ. նուրբ, բարակ, անօսր, իբր զի զանակն նուրբ է։ (Այս Պարսիկ բառէն է նաեւ Տճ. Թէնէ-քէ բառածը։ Տե՛ս եւ Նրան։

Աստի է նաեւ

ԹԵՐԹ, (յետին), իսկ

ՏԻՏՂՈՍ, բառ Լտ. titulus, Յն. τίτλος։

*

* *

ՏՐԱՄ, սեղմ եւ պինդ (գետին), բառ Լատին, duramen, duramentum, նշ. հաստատութիւն, ամրութիւն, պնդութիւն։ — Ի վերայ տրամ գետնոյ (Վրք. Հրց.)։

Յորմէ 'ի հակառակէն

ԽՐԱՄ, Բացուած, Դեղէ Փորեալ Եղեղեալ։ —Ելից զխրամ քաղաքին։ — Վասն քո հատուս խրամ, եւ եղեւ անց եղբօր քում (Կէ-րղ.)։

ԽՐԱՄԱՏ, բարդեալ՝ խրամ-հատ, որպէս փայտատ, Թլփատ։

ԽՐԱՄԱՏԵՄ, պատառել զգետին կամ զորմն եւայլն։

ԽՐԱՄԱՏՈՒԹԻՒՆ, —Վասն քո խրամատեցաւ ցանգ (Ծննդ. ԼԸ. 29)։ — Խրամատեաց տէր խրամատութիւն (Բ. Թագ. Զ. 8)։ — Խրամատեաց տէր զԹշնամիս իմ առաջի իմ որպէս խրամատիցին ջուրք (Բ. Թգ. Ե. 20)։

Յորմէ (տրամ) եւ

ՏԱՐՄ, բաղդ. յօդ, զօդ, եւ հօտ։

Յորմէ 'ի հակառակէն

ՏԱՐՏԱՄ, ՏԱՐՏԱՄՈՒԹԻՒՆ, բաղդ. Թեւեմ եւ զեղեւեմ, վարիմ եւ վարանիմ, յօդեմ եւ յօշեմ։

*

* *

ԹԱՐՄԱՏԱՐ, Եբր. անկարեար, ՉԻՉԻՆ, Ղաղէաղէան։ — Այն է սկիզբն աղանդոյն Մարկիոնի, Թո՛ղ զայլ բազում Թարմատարն (Եզնիկ)։

Բաղդ. հաղփ եւ զաղփաղփուն։

Բոլորովին ուրիշ բառ է

ԹԱՌԱՄԻՄ, ՋԱՌԱՄԻՄ, ՋԱՌԱՄ, եւ ԹԱՐՇԱՄԻՄ, Թառամել, Խամրել.

Իսկ (Յակ. Ա. 11)։ «Մեծատունն հանդերձ շահէ-քն Էրբեմն Թարշամեսցի»։ Յն. ἐν ταῖς πορείαις αὐτοῦ, 'ի գնացս իւր։ Յն. πορεία, գնացք, ընԹացք, եւ ποριsμό; շահ, πορεύω ընԹանալ, եւ πορίζω շահել, օգտել։ Մերձաւորութիւնք ձայնից՝ պատճառք շփոթութեանս։ Թառամիլ եւայլն կազմութեան կերպը բոլորովին նոր եւ տարօրինակ է. վասն զի բուն բառն է

ԱՆԹԱՌԱՄ, որ է Յն. ἀμάραντος, եւ գրոց տեղափոխութեամբ կազմուած է մերը.

(α μ α ρ α ν τ, — ա ն Թ ա ռ ա մ)
1 7 6 5 4 2 3 — 1 6 7 5 4 3 2

Այս բառին վրայ տարօրինակ երեւոյթ մը կը տեսնուի. բառս նախնական ձեւն է անԹառամ, եւ չէ Թէ Թառամիմ բայէն ձեւացած ածական մը, այլ ընդհակառակն՝ անոր արմատն է։

Յորմէ կազմուած են վերը ցուցուած բառերը։

Յորմէ (Թառամիմ) 'ի հակառակէն

ՏՈՐՈՄԻՄ, ('ի յոռի միտս) պղտորիլ, տառապիլ։ Եւ

ԹՈՒՐՄ, ԻՒՂԱԹՈՒՐՄ, իբր՝ Թրջել, օծել։ Յորմէ Թերեւս՝

ԹԱՐՄ, (յետին), եւ

ԹՐՄԵՄ, — Տասներորդ նաչհոյ՝ մզեալ իւղով Թրմեալ (Ել. ԻԹ. 40)։

Եւ

ԹՈՒՐՋ, ԹՐՋԵՄ, — Թրջել զարմաւենին։ — Զամաչե՞ս, չԹրջի՞ս այնպիսի իրօք հպարտանալ (Ոսկ.)։

Եւ

ԹՄՐԻՄ, ԹՄՐՈՒԹԻՒՆ, ԹՄԲՐՈՒԹԻՒՆ, ԹՄԲԻՐ, —Եւ արկ տէր Աստուած Թմրութիւն 'ի վերայ Ադամայ, եւ ննջեաց (Ադամ) (Ծննդ.)։

Եւ

ՋՄԲՐԻՄ, — Ի սաստիկ անապականց զմբրեալ ։

Ցորմէ (Թմբիր) 'ի հակառակէն՝

ԹՄԲՈՒԿ, իբր զարթուցիչ, սթափեցուցիչ ։ Եւ

ԹՐԵՄ, շաղախել ։ — Թրեա՛ զխիւս երիս ալիր ։ — Հին խմորն ոչ թրի ընդ նոր ալևրն ։ Եւ

ԹՐԾԵՄ, — Եկա՛յք, արկցո՛ւք աղիւս, և թրծեսցո՛ւք զայն հրով (Ծննդ.) ։

ԹՐԾՈՒՆ, — Պարիսպք Բաբելոնի 'ի թրծուն աղիւսոյ և 'ի նաւթոյ կազմեցան ։

ԹՐԾՈՑ, իբր՝ հնոց թրծելոյ աղիւս

— Մաքրել զթրծոց (Սիր.) ։

Ցորմէ 'ի հակառակէն՝

ԹՐՔԱԾ, աղբոտ արտաթորանք ։

— Ի կրել արտաքս զաւելորդ թրքածս մոխրոցացն (Փրղ.) ։ Եւ

ԾՐԴԵՄ, — ծրդեալ կաս յանիրաւութիւնս (Եզեկ.) ։

(ծ ր դ ե լ = թ ր ծ ե լ)
3 2 1

ԾԻՐՏ, ԾԻՐԴ, աղբ (աղաւնոյ) ։

Բաղդ. հաղբ և աղբ, օդ և յօդ, լուծ և լոյծ, կակուղ և կղկղանք ։

Ցորմէ (Թրքած)

ԹՐԻՔ, ԹՐՔԵՄ, (աշխ.), Գերմաներէն Dreck՝ նոյն նշանակութեամբ ։

Իսկ

ԴՈՒՐԴՆ, (սեռ.) դրդ-ան. Ցն. τροχός, նոյն նշանակութեամբ ։

— Բրուտ լինել զկակուղ կաւն դնէ 'ի վերայ դրդան ։ Տե՛ս և անիւ ։

Դուրգն նկատի իբր հաստատուն՝ պինդ մարմին,

Ցորմէ 'ի հակառակէն

ԳՐԴԱՆՔ, հոսանք ։ Բաղդ. հիւսել և հոսել, աղխ և ուղխ ։ Եւ

ՔԻՐՏՆ, (սեռ.) քրտ-ան,

ՔՐՏՆԻՄ, ՔՐՏՆՈՒԹԻՒՆ ։

ԸՆԴ ՔԻՐՏՆ ՄՏԱՆԵՄ, (իբր աշխ. սբրտն ջրիջին մտնել) ։

Բաղդ. խոնաւ ։

* * *

ԽԹՈՒՄ (*), վերջին օրն քառասնորդաց, նախընթաց օրն Զատկի ։ Բառ Ասորերէն, խթում, հթում, նշ. վերջին, վերջ, Արաբ. խէթամ, խաթմ, և Ցն. ἔσχατος ։

* * *

ԶՈՅԳ, Ցն. ζεῦγος, Արաբ. զէվճ, իսկ՝ ընկոյզ՝ Արաբ. ճէվզ ։

ԶՈՒԳՈՒԹԻՒՆ, ԶՈՒԳԵՄ, — Զոյգս տատրակաց (Ղուկ.) ։ Ցն. ζεῦγος ։

Սորմէ

ԶՈՒԽՈՂ, — Է բարեկամ որ զուող է սեղանոյ, և ոչ կայցէ առ քեզ յաւուր նեղութեան քո (Սիրաք.) ։

ԶՈՎԱՂ, (յԵղեկ), «Թէ ճշմարիտ է նմա օրինացն Աստուած յարմէ զարարածս ամենայն դնէ, ապա ստարին՝ զոր նմա զոյգ մուծանէ, չէր պարտ նորա արարածոցն ցանկանալ» ։ (Տալ. և Զմիւռն. օրին. դպրութ.), բաղդ. (Անտ 235), «Զուռնի զոք ընդ իւր զովաղակից» ։ — Ընդէ՛ր լինիս զովող... ընդ որդիս կորստեան (Սեբեր. Ն. 89) ։

Ցն. κοινωνός, որ նշ. ընկեր, հաղորդ, բաժանորդ, հասարակորդ ։

Ցն. κοινωνία, պատասխանէ Լատին ձայնին communicatis, (հաղորդութիւն, զովողութիւն) ։

ԶՈՎՈՂԻՄ, իբր հաղորդակից լինել, — Միթէ և առքա որպէս հէնքն զխաշինս արդարոյն զովաղեցան ։

ԶՈՎՈՂՈՒԹԻՒՆ, — Սանեցէ ընկերի իւրում... եթէ՛ 'ի զովողութեան, և յորմէ եթէ 'ի յափշտակութեան (Ղևտ. Զ. 2) ։ Ցն. κοινωνία ։

(*) Ն. Հյկ. Բռ. 'ի բանից Ռուպելեանին, Մխիթարայ Այրիվանեցւոյն և նմանեաց յետնոց առեալ սահմանէ այսպէս. «Նաւակատիք յորում լինի խթել 'ի կթեղէն կերակուրս ընդ երեկս, և բերէ վկայութիւնս 'ի նոցանէ. «ի Թան կամ 'ի պանիր և ձուղ խթել. խթնեալ նաւակատեօք, խթնուլ յերեկոյն ։

ԺՈՂՈՎ, (ժ ո ղ ո վ = գ ո վ ո ղ)
1 2 3 4 5   1 2 5 4 3

Յորմէ

ԾՈՎ, — Ժողովեսցին ջուրքդ... 'ի ժողով մի, եւ երեւեսցի ցամաքն· եւ ժողովեցան ջուրքն... 'ի ժողովս իւրեանց, եւ երեւեցաւ ցամաքն... [illegible] ջուրցն կոչեաց [illegible] (Ծննդ. Ա. 9—10)։ Իսկ

ԺՈՂՈՎԵՄ, (սասնջակամել, հիւրընկալել, նման Յունարէնին, συνάγω, Նչ. ժողովել եւ սասնջակալել)։ — Օտար էի եւ ժողովեցէք զիս (Մատթ. ԻԵ. 35)։ Տես նաեւ՝ հաւաքել եւ ուաքել։ Իսկ

ՆԶՈՎՔ, է իբր՝ [illegible], [illegible], եւ իբր՝ Թարգմանութիւն Լատին ձայնիս excommunicatio, (ան-զով-ողութիւն)։

ՆԶՈՎԵԱԼ, Յն. ἀποσύνακτος, (արտաքսեալ, մերժեալ յուխտէ եկեղեցւոյ)։

ՆԶՈՎԵՄ, — Նզովիւք նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ սպանցեն զՊօղոս (Գործ. ԻԳ. 14)։

Իսկ 'ի վերջին Սաղմոսին, «Փոքր էի ես յեղբարս իմ», եւայլն. 6, «Ելի ես ընդ առաջ այլազգւոյն, [illegible]», Յոյն ունի, «Եւ նզովեաց զիս կուռքն իւրովք». բառգ. (Ա. Թագ. ԺԷ. 23). «Եւ նըզովեաց զԴաւիթ այլազգին դիւովք իւրովք»։ Յորմէ նաեւ

ՍՈՎ, իբր՝ հետեւանք անհաղորդութեան, պակասութիւն կարեւորաց 'ի պէտս կենաց։ Եւս եւ

ԱՆՍՈՒԱՂ, իբր սովեալ, կամ իբր անզովող, զրկեալ 'ի պիտոյից կերակրոյ, անհաղորդ սեղանոյ։

Յորմէ (ժողովիմ) 'ի հակառակէն

ԺՈՂԽԻՄ, իբր՝ [illegible], [illegible]։

Բառգ. կայկայիմ եւ քայքայիմ, լծիմ եւ լուծանիմ։

Յն. διάῤῥια լուծութիւն, διαῤῥέω լուծանիմ, ժողխիմ։

—Շահ բանիցն կսկծելեաց պնդէ, եւ չառայ ժողխել (Ոսկ.)։

Որպէս եւ 'ի ձայնէս՝ զովողիմ, 'ի հակառակէն՝

ԶԶՈՒԵՄ, [illegible], [illegible], [illegible]։ Բառգ. յօժարիմ եւ խոժոռիմ, քարշեմ եւ զարշիմ, զզուեմ եւ խուեմ։

— Զզուեցայց ապա եւ ես 'ի ժողովրդենէ իմմէ (Յոբ.)։ — Զի մի՛ ամբարտաւանք զզուեսցեն զիս, (Սաղմ.)։ Յորմէ

ԶԱԶԻՐ, —Եօթն երինջք եղանէին ժանդք եւ զազիրք տեսանելով (Ծն. ԽԱ. 20)։

[illegible] վարի յաճախ 'ի յառի միտս. վասն որոյ աճմամբ իմն եղեալ է՝

ԱՒԱԶԱԿ, ըստ օրին. սոսխ եւ զատախազ. Գուրգէն եւ Գարեգին, եւ է՝ իբր զովողակից, հանգանակող գողութեան եւ սպանութեան։

— Աւազակք յորժամ ընդ միմեանս աղ անսուցուն, մասանան զքարսն (Ոսկ.)։ — Աւազակքն գիտեն պահել զզաչինս աղ եւ հացի։ — Աղ եւ հաց զաւազակս 'ի հաւանութիւն ածէ ընդդէմ թշնամեաց։ — Աւազակք յորժամ հաղորդին, ոչ եւս լինին աւազակք առ այնոսիկ որոց հաղորդեցան (Ոսկ.)։ Եւ

ԱՒԱԶԱՆ, իբր՝ ժողով ջուրց, Արաբ. [illegible] (եզ.), [illegible] (յք.), ընդունարան ջրոյ, ջրամբար, Տճ. [illegible]։ Յորմէ (ծով)։

ԾԱՒԻ, իբր՝ ծովային, կապոյտ (ասացեալ զաչաց)։ — Այս անուն զանգրահեր է եւ ծաւի (Վեցօր.)։ — Աչս ծաւիս, յօնս միակիցս, բիբս խարտեաչս (Ոսկ. Կողոս.)։

Արաբ. [illegible]՝ Նչ. ջուր, եւ [illegible], ծովագոյն, կապոյտ. Յն. κύανος, կապոյտ (ծովու, երկնի), եւ ὠκεανός, ծով, ովկիանոս։

Եւ 'ի հակառակէն

ԾԱՐԱՒԻ, ԾԱՐԱՒ, ԾԱՐԱՒԵՄ,

Բառգ. ջուր եւ չոր, Նհանգ եւ

նահանգ, գետ եւ գետին, կաւատ եւ գաւառ, մկրտեմ եւ մակարգեմ, ասին եւ ոստին։

Տարմէ 'ի հակառակէն

ԱՆՁՐԵՒ, յորդութիւն ջրոյ։

Տարմէ 'ի հակառակէն

ՁԱՆՁՐԱՆԱՄ, դուշգիւն ու յաճախութեան։

ՁԱՁՐՈՑԹ, ՁԱՆՁԻՐ, ԱՆՁԱՆՁԻՐ, բաղդ. արբենամ եւ յափրանամ, խնջոյք եւ խոնջ, անձնչ եւ տանջանք։ Տարմէ (ծով)

ՁՈՎ, եւ

ԾՈՒՓ, ԾՓԱՆՔ, — Գիտել զամպարշտի ուրախութիւն, եւ զլկանս եւ զծփանս (Ժող. Է. 26)։ — Զբրպարտութիւն ծփեցուցանէ զիմաստունս (Անդ)։ — Բազում ծուփս ծփին ամենայն մարմինք անզգամաց (Առակ. ԻԶ. 9)։ Եւ

ԾՈՊՔ, ձերջաւորք որ ծփան։

Եւ 'ի ժողովոյ

ԺՈՂՈՎՈՒՐԴ։ Իսկ (Գործ. Զ. 9). «Ոմանք 'ի ժողովրդենէն որ կոչէր Լիպերդինոսաց». Յն. λιβερτίνων, որ նշանակէ՝ ազատոյ, ազատացելոց, եւ է բուն Լատին բառ։ Եւ այսպէս կոչէին Հրեայք գերի․վարեալք 'ի Հռովմայեցւոց, եւ ապա միւսանգամ արձակեալք անդրէն։ Սոքա էին իբրեւ ուրոյն ժողովուրդ Հրեայ, եւ ունէին ժողովրդանոց առանձին։ Արդ 'ի միրում թարգմանութեան, որպէս թուի, բառն λιβερτίνων ընթերցեալ է իբրեւ λιβίων, թերեւս ըստ օրինակին զոր ունէր թարգմանիչն առաջի։

ԺՈՂՈՎՐԴԱՆՈՑ, այս բառը միայն երկու անգամ կայ 'ի Նոր Կտակարանի, Ղուկ. Է. եւ ԺԳ. 10։

* * *

ԹԷՄ, Յն. δῆμος, կողմն, մարզ, վիճակ, թեմ։

Տարմէ 'ի հակառակէն

ԴԷՄ, ԸՆԴԴԷՄ, եւ

ԴԻՄԵՄ, ՅԱՆԴԻՄԱՆ, ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ, բաղդ. դէպ եւ հանդէպ։

Իսկ

ԴԷՄՔ, Պրս. տէյմ, նոյն նշանակութեամբ, Յն. δέμας, հասակ, ձեւ, մարմին։

Տարմէ 'ի հակառակէն

ԴԻՄԱԿ, պէրտէ տէմի։ Բաղդ. ապար եւ չպար։

— Զճենացն եւ զայլ եւս վաստթարաց դիմակս՝ առնէին պատկերս Աստուծոյ (Ոսկ.)։

ԴԻՄԱԿԱՒՈՐ։

* * *

ՊԱՏՈՒԱՍ, ՊԱՏՈՒԱՍՏԵՄ, — Դու որ ձիթենիդ վայրենի էիր, պատուաստեցար 'ի բարի ձիթենւոյն (Հռ. ԺԱ. 17)։

Պրս. բէյվէնտ, նշ. կապ, կցորդութիւն, միաւորութիւն։ Առաջին վանկ Պարսիկ անուանդ՝ բէյ, փոխեալ է 'ի մեզ պատ, ըստ անսայթաք հնչման նախնի Պարսկային բարբառոյ, որպէս եւ 'ի պատնէշ, պատգամ, պատանդ, պատէր, պատուանդան, եւայլն։

* * *

ՊԱՐՍ, ՊԱՐՍԱՏԻԿ, ՊԱՐՍԱՒՈՐ, — Պարսաւորք ձգէին քարինս, եւ 'ի մարէ ոչ վրիպէին (Դատ. Ի. 16)։

ՊԱՐՍԱՔԱՐ, իբր թարգմ. Պրսկ. պարսէնկ։

ՊԱՐՍԱՔԱՐԵՄ, — Պարսաքարեաց եւ եհար զճակատ այլազգւոյն (Ա. Թագ. ԺԷ. 49)։

Այս Պարսիկ բառը կը պատասխանէ Տճ. տէնկ թաշը՝ ըսուածին, կամ աշխ. ֆարէ տէրէմ, կամ ծանրութիւն մը հակակշռելու համար՝ կշռոյն հակառակ կողմը դրուած քար, վերջապէս կը նշանակէ՝ բեկոր քարի։

Տարմէ (պարս)

ՊԱՐՍԵՄ, դուրաքալըքել, ձգել քարբինս պարատակաւ։

Յորմէ 'ի նախատակէն

ՎԱՐՍԵՄ, Տճ. օքլամաք։ — Վարսեաց ցից ընդ ծամկլիս նորա եւ ստատակեաց (Դատ. Դ. 20)։

Այլ է վարսք։

*
* *

ՎԻԶ, Յն. βῆσσα, նշ. հովիտ, կիրճ, նեղ անցք, պարանոց, լեռնանցամէջք։ — Զօրեաց զվիզ 'ի վեր ամբառնալ (Փիլ.)։ — (Լուծն Քրիստոսի) չհարկանէ զվիզ (Ոսկ. Մատթ.)։

ԸՆԴՎԶԻՄ, — Առաջի Տեառն ամենակալի ընդվզեցաւ (Յոբ. ԺԵ. 25)։

Յորմէ

ՎԷՍ, իբր' խստապարանոց, անհամբոյր։

*
* *

ՄԵԹԵՄ (*), — Անսայրն իսկ ոչ, եւ այլ ընդ այլոց մեթելոց էին (Ոսկ. Մատթ. Բ. 16)։ Յն. μιθέομαι, μιθίζομαι, նշ. պատմել, ասել։

*
* *

ՓԱՅԼ, ՓԱՅԼԱԾՈՒ, ՓԱՅԼԱԿՆ, ՓԱՅԼԵՄ, Յն. φαλός, նշ. պայծառ, փայլուն, Տճ. ճարլագ։ Յորմէ

ՊԱՂՊԱՂԱԿ, (բիւրեղ, փայլուն)։

Կազմութիւնը համեմատէ Բուլ եւ Բուլուր։

Պաղպաղակ նկատի իբր խիստ եւ գիմահար մարմին։

Յորմէ 'ի նախատակէն

ՊՂՊՋԱԿ, եւ

ՊԱՂՊԱՋ, իբր փայլուն։

ՊԱՂՊԱՋՈՒՆ, ՊԱՂՊԱՋԵՄ։

Յորմէ համառօտեալ

ՓԱՂՓՈՒՆ, ՓԱՂՓԻՒՆ, ՓԱՂՓԻՄ, ՓԱՂՓՈՒՆ, — Կանացի դէմք փաղփուն (Փիլ.)։

ՓԱՂՓԱՂԻՄ, — Փաղփաղէր մարմինն զոր օրինակ ձիւն սպիտակութեամբ (Բուզ.)։

ՓՈՂՓՈՂԻՄ, անս եւ պարլամաք, ճըլտամաք, ճըլճըլամ։

*
* *

ՔԱՀԱՆԱՅ, ըստ բուն Եբրայականին' քօհէն, զոր առ գիտութեամբ ընթերցան' քահանայ, տարբեր կէտադրութեամբ։ (Ըստ Եբր.), իսկ Յայտն. Դ. 3. «Քահանայք շուրջ զաթոռովն նման տեսլեան զմրխտի», թարգմանիչն զբառդ ἶρις, (ծիածան) որպէս ունի այժմու Յոյնն, թուի թէ ընթերցեալ է ըստ իւրոյ օրինակին ἱερεῖς, (երիցունք, քահանայք),

*
* *

ՈՒՏԵՄ, Յն. ἔδω, նոյն նշանակութեամբ։ Բայ պակասաւոր (ըստ Քերականն.), որոյ անց. կատ. է

ԿԵՐԱՅ, որ ծագի 'ի Յն. κείρω, (ծախել, սպառել), κερῶ (ապառ.)։

Յորմէ

ԿԵՐԱԿՈՒՐ, բարդեալ կրկնութեամբ, ըստ օրին. խառնիխուռն, հայհոյել, խուժադուժ, խաժամուժ, աղջամուղջ, սպառսպուռ, ժամատուտ։

ՈՒՏԻՃ, իբր' ուտող, թարգմ. Յն. βρῶτις. βρώτης, նոյն նշ., ծագեալ անուանէս βρῶμα, (կերակուր)։

ԽԱՌՆԻՃ, Յն. βρόχος, 'ի բայէս βρέχω, սպառել, ծախել, ուտել, Պրս. խօրէնտէ (ուտող)։

*
* *

ԿԼԱՆԵՄ, Լտ. glutio, նոյն նշ. եւ glutus, gula, gulo, glusus, նշ. կոկորդ, որկրամոլ։

ԿԼՆՈՒՄ, եւ

(*) Ն. Հյկ. Բռ. այս բառը աղաւաղութիւն մը կամ սխալ գրչութիւն մը կը կարծէ «մեկնել» բային. բանզի կ'ըսէ, «ՄԵԹԵլ փոխանակ գրելոյ ՄԵԿՆԵԼ»։

ԸՆԿԼՆՈՒՄ, *Մի՛ ընկլցին զիս պըտոյտք ջուրց* (*Սաղմ. ԿԸ.* 16). *իբր՝* ընդկլնուլ.

ԸՆԿԼՈՒԶԱՆԵՄ, *յորմէ*

ԸՆԿՂՄԵՄ, *յորմէ*,

ԸՆԴՂԱՑՔ, ծովային ճիւաղք առասպելեալք.

Ցորմէ (*ընկղմիմ*) *'ի հակառակէն*

ԱՆԿՈՂԻՆ, *Յն.* ἀνακλίνω, *Նչ. անկողին մանել, պառկիլ, կռնակի վրայ պառկիլ*, (*ըն-կողմ-անիլ*), *իբրեւ երեւելի տեղ մը.*

Այս բառը կրնայ նաեւ մասծուիլ ծագած անկանիմ կամ ընկողմանիմ բայէն.

Արդ «Նկուղէն» *իբրեւ բարձրութիւն մը կը նկատուի, ինչպէս նաեւ* Մահճք, *ուստի* Ելանել *բայով կը վարուի եթէ բայ ունենայ.*

— *Զեւ յանկողին ելեալ, եւ զամենայն երկրաւորս յաղթեցեմք* (*Ոսկ. Մատթ.*). — *Ելեր յանկողինս հօր քո, յայնժամ պղծեցեր զանկողինս յոր ելեր* (*Ծննդ. ԽԹ.* 4). — *Թէ մտից 'ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց* (*Սաղմ. ՃԼԱ.* 3). *Տպ.* Ելց ու մտից.

Ցորմէ 'ի հակառակէն

ՆԿՈՒՂ, *իբր* ստորերկրեայ տեղի, քեղնադոր փայրք.

(*ա*) *Ն կ ո ղ* (*ին*)

— *Եղիցին զՆինուէ յապականութիւն, ոզնիք 'ի յարկս նորա բնակեսցեն եւ գազանք դոչեսցեն 'ի նկուղս նորա* (*Սոփոն. Բ.* 14).

Բաղդ. դար եւ դարան, ախոռ եւ տաւթուր, կարապ եւ կապար, ցուցանեմ եւ սուզանեմ, խորան եւ խոնարհ.

Ցորմէ (*անկողին*)

ՆՔՈՂԻՄ, (*ա*) *Ն կ ո ղ* (*ի ն*)

— *Եւ արդ աւասիկ նքողեալ են անձինք մեր* (*Եւ. ԺԱ.* 6).

Յն. κατάξηρος, (*ցամաքեալ յոյժ*).

Բաղդ. հիւանդ եւ նաւթի (*նօթի*),

(*հ' ի ւ ա ն դ* = *ն ա ւ թ ի*
5 3 2 1 4 — 4 3 2 5 1

Իսկ (Նորագիւտին *պատասխանող Յունական բառին նշանակութիւնն՝* հիւանդ *բառին ծագում տուող Յունարէն բառին նշանակութեանը հետ բաղդատէ'*).

ՆՔԹԵՄ, ՆՔԹԻՄ, *Պրս.* նաշթա, *Նչ. նօթի*, *եւ* նաշթայէ, *քաղց, նօթութիւն*, *Յն.* νηστεύω, *զրկումն 'ի պարենից, պահք, նքթեալ*, νηστείας ὄξειν, *բերանոյ չարահոտութիւն ունենալ, անօթութենէ կամ ծոմապահութենէ պատճառեալ*, ծոմ հոտել, ծոմաբերան հոտել.

— *Բերանք մեր հոտեալ են 'ի պահոց, եւ լեզուք մեր ընդարմացեալ 'ի սաղմոսերգութենէ* (Եղիշէ).

Եւ νηστεύω, *չուտել, ծոմ պահել.*

Նքթիմ, (νηστεύω), *այսպէս կազմակերպեալ է, փախչելու համար 'ի բայէս* Նաշեմ, *եւ ասոր անուանէն՝* Նեաշ. *Յն.* νῆστις, (*նօթի, նքողեալ, նքթեալ*). — Ἐὰν ἀπολύσω αὐτοὺς νήστεις (*Մարկ. Ը.* 2). — *Եթէ արձակեմ զդոսա* Նօթիս. — *Արձակել զդոսա նօթիս չկամիմ, գուցէ* Նքթիցեն *զճանապարհայն* (*Մատթ. ԺԵ.* 32). *Իսկ*

ՄԱՀԻՃՔ (*), *Յն.* κοίτη, *թուի ծագեալ յԱրաբականէս՝* Մէհճ, Մահճ, *որ Նչ. վիրաբոյժ կամ երակահատ, բժիշկ.*

(*հ ա ճ ի մ*) = Մահճ.
3 2 5 4 1

Այս բառը գործածուած է խիստ շատ անգամ, երբոր խօսքը հիւանդի նկատմամբ է, եւ որով կը մեկնուի թէ ինչ առումով այս Արաբացի բառէն ծագումն առած է.

— *Տէր օգնական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց* (*Սաղմ.*). — *Բացեալ զառաստաղն իջուցին զմա-*

(*) Մահիճք. որպէս Թէ մահու անկողին. (Ն. Հյկ. Բռ.).

հիճան յորում կայր անդամալոյծն (Մարկ. Բ. 4)։

Եւ որովհետեւ մահիճն ալ իբր բարձրութիւն կը նկատուի՝ ինչպէս անկողին, անոր համար գրեթէ միշտ ելանել բայի վրայ գրուցուած է։

— Ի մահիճսդ յոր ելեր, ոչ իջցես այտի, այլ 'ի գմին մահու մեռցիս (Դ. Թգ. Ա. 4—6—16)։ —Ուրումն 'ի մօր եղեալ դողանալ զայլոյ ամուսնութիւն, եւ ելեալ անօրէնութեամբ յօտար մահիճս (Եղիշէ)։ — Իրիկունն երբ 'ի մահիճս ելանես, համարեա՛ թէ 'ի գերեզման ես իջեալ (Աբրահ. Մէնդ.)։

Կազմութիւնը բաղդ. ըմայ, շուրէատ։

* * *

ՆՈՒԱԶ, Պրս. նէյազ՝ նշ. չքաւորութիւն, կարօտութիւն։

ՆՈՒԱԶԵՄ, (ակարանալ)։

ՆՈՒԱԶԵՑՈՒՑԱՆԵՄ, — Նուազեցուցանեն զազգս մեղք (Առակ. ԺԴ, 34)։ Յորմէ 'ի հակառակէն

ՆՈՒԱՃԵՄ, (ճնշել, ընկճել, ընդ ձեռք արկանել, ընդ իշխանամբ առնել),

— Նուաճիցէ՛ս զնա ծառայ յաւիտենական (Յոբ.)։ — Զամենայն մարմինս նոցա նուաճեմք (Յոբէ)։

Բաղդ. հեծանել եւ հեծել։ Իսկ

ՆՈՒԱՃՈՒՄՆ, իբր՝ մերձեցումն, Յն. προσαγωγή։

Յն. προσαγωγὴν ἔχειν, նշ. մերձենալ ընդունելի։

* * *

ԳԵՐԴԱՍՏԱՆ, — Ո՛վ իցէ հաւատարիմ տնտես եւ իմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ 'ի ժամու զկերակուրս (Ղուկ. ԺԲ. 42)։ Նոյն բան է նաեւ 'ի Մատթ. ԻԴ. 45. «Ո՛վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն զոր կացոյց տէր իւր 'ի վերայ ծառայից իւրոց» ըսելն։ Իսկ Յունարէնը երկուքին մէջ ալ նոյն է, ἐπὶ τῆς θεραπείας αὐτοῦ, որով կարծեցընել կուտայ թէ՝ գերդաստան՝ կը նշանակէ բազմութիւն ծառայից, գործաւորաց, եւ ծայրի ստան մասնիկը կը հաստատէ թէ այսպէս է. իսկ գերդ՝ կը թուի թէ Պարսիկ բառ մըն է, քէրտէն (առնել, գործել) բայէն ծագած. ուստի «կացոյց 'ի վերայ ծառայից իւրոց» եւ «'ի վերայ գերդաստանի իւրոյ», տարբեր բառերով գրուցուած խօսքերը մի եւ նոյն նշանակութիւնն ունին։

* * *

ԳՄԲԵԹ, Պրսկ. կիւմպէտ, նոյն նշանակութեամբ։

ԳՄԲԵԹԵԱՑ, — Զե՞ղ միայն իցէ ժամանակ բնակել 'ի տունս գմբեթեայս (Անգ. Ա. 4)։ Յորմէ

ԳՄԲԵԹԱՐԴ, — Զգեաց զերկինս իբրեւ զկամս գմբեթարդ (Վեցօր.)։

* * *

ԿԱՆԹԵՂ (*), բառ Լատին candela, Թրք. ղանտիլ։

ԿԱՐԿԻՆ, — Մի՛ ըստ արտաքին փիլիսոփայից առասպելացն պատրեցիմք որք··· կարկինի, սկտեղ եւ լկանի եւ այլ ինչ այսպիսեաց նմանեցուցանեն զերկիր (Ոսկ. Ես.)։

Եւ

ԿԱՐԱԿՆ, Յն. καρκίς, նշ. կկոց. խեցգետնի մկրատի ձեւով ոտքեր, եւ լայնաբար ամէն գործիք որ կը բացուին կը գոցուին, ինչպէս՝ մըկրատ, աքծան (քէլպէթէն), կարկին (փէրկէլ), ունելի (մաշա, ըսքաճ), եւ καρκίνος ընդհանուր անուն է խեցեմորթ կենդանեաց, որ մկրատաձեւ ոտքեր ունին, նշանակէ նաեւ աքծան, մկրատ, ունելիք, նաեւ կարկին։

(*) Ուղղագրութիւնը բաղդ. Թանաք։

ԿՐԿԷՍ, Լտ. circus, Յն. κίρκος։

Ուստի 'ի մեզ

ԿՐԿՆԵՄ, կը նշանակէ՝ մէկ (չի-տակ) բանը ծռել, եւ ծալել։

— Ճամփուր երկաթի ջեռուցեալ՝ կրկնեաց՝ բոլորեալ որպէս պսակ (Խոր. Գ.)։ — Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի (Փիլիպ. Բ. 10)։ — Ոչ կրկնեցին ծունր Բահաղու։

(Տե՛ս եւ ծունր, ուր ըստ կարի խօսուած է)։ Տճ. [illegible], եւ իբր կրաւոր. [illegible], ծռիլ, խոնարհել, գիջանել։

(Տե՛ս եւ [illegible])։ Յորմէ

ԿՐԿԻՆ (*), ԿՐԿՆՈՑ, Թարգմ. Յն. διπλοῦς, յորմէ՝ կրկ-ին, կար-կին, եւ բայս՝ կարկիմ, եւ

ԿԷՍ, յորմէ՝ սկիւռ, իբր՝ [illegible]։

ԿԱՐԿԱՆԴԱԿ, 'ի բառէս կարակն (կրկնեալ), կ ա ր կ ա ն դ ա կ։
1 2 3 5 4 6

Իբր՝ կրկնումն խմորոյ, ըստ մը-տաց Թրքը. [illegible], պղակունդ կազմեալ 'ի խառ 'ի խառ նուրբ թերթից խմորոյ զանգելոյ իւղով, Պրս. [illegible], որ նշ. կանկանդակ, եւ թարգմանի խառ 'ի խառ։

Կազմութիւնը բաղդ. դաժան — դժն-դակ, օճան — օժան-դակ, այսպէս՝ կարակն — կարկան-դակ։

ԾԱՂԱՐԱՐ, ԾԱԼԱՐԱՐ, 'ի մեզ կոչի, որ գործէ զկարկանդակ, իբր՝ որ գործէ պղակունդս ծալածոյս։

—Ի սեղանոյօրինացն եւ 'ի պղակունդագործացն եւ ծաղարարաց (Ոսկ.)։

(Տե՛ս եւ՝ [illegible])։

Եւ

ԿԱՐԿԱՄԻՄ, —Եւ էր (կինն) [illegible], եւ ոչ կարէր ամենեւին 'ի վեր հայել (Ղուկ. ԺԳ. 11)։ Յն. συγκύπτουσα, (κύπτω), մերս է իբր թարգմանութիւն Յն. καρκινόω, նոյն նշանակութեամբ։ Իսկ

ԿԱՐԱԿՆԱԿԵՐՏ, (վերջաւորութիւնք կերտ, Պարսիկ է, [illegible], որ նշանակէ՝ [illegible])։

* * *

ԱՊԱՐԱՆՋԱՆՔ, Պրս. [illegible], Թրք. [illegible]։

Յորմէ համառօտեալ

ՊՋՐԱՆՔ, որ ինչ հայի 'ի զարդ կանացի։ Ոչ մեծութեան ինչ նշանակ է՝ այնչափ զարդ յանձին կապել, այլ ընդոտնելոյ եւ պչրանաց (Ոսկ. Ա. Տիմ.)։ Իսկ

ՄԱՆԵԱԿ, Յն. μανιάκης, նշ. ապարանջանք։ — Մանեակ ոսկի 'ի պարանոցի քում (Առակ.)։

Յորմէ

ՕՂԱՄԱՆԵԱԿ,

* * *

ՈՒԽՏ, ՈՒԽՏԵՄ, Արաբ. [illegible], [illegible], նոյն նշանակութեամբ։ — Ուխտից պարապել (Ա. Կորնթ. Է. 5)։ Յն. προσευχή, (աղօթք)։ — Եւ ես ուխտեմ ձեզ որպէս եւ հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն։

Յորմէ 'ի հակառակէն

ԺԽՏԵՄ, եւ

ԽՈՏԵՄ, բաղդ. ընդդրկեմ եւ ընկրկեմ, մերձենամ եւ մերժեմ։

ԽՈՏԱՆ, յորմէ (ուխտ)

ՈՒՂՏ, ըստ նմանաձայնութեան բառիցս [illegible] եւ [illegible]։

Բաղդ. թուղթ եւ տուղտ։ Եւ

ԱՂՕԹՔ, կամ Յն. ἀγαθὸς (բարի), զի եւ Յն. εὐχή, εὐλογία, (աղօթք, բարեբանութիւն), կազմեալք են 'ի ձայնէս՝ εὖ, որ նշ. բարի։

Յորմէ եւ

ՄԱՂԹԱՆՔ, որ նոյն է ասել՝ [illegible]։

ՄԱՂԹԵՄ, [illegible]։

Յորմէ (աղօթք)

ԱՂԱՉԵՄ, որպէս եւ՝ [illegible], յոր-

(*) Կրկին, իբր երկկին, շրջեալ 'ի կրկին։ (Քերական. Զարգ. 1496)։

մէ՛ ամալէմ, եւ ճանօբ, ('ի ճան արմատոյ), յորմէ ճանալէմ։

Ցորմէ (աղօթք) 'ի հակառակէն

ԱՂԷՏՔ, (չարիք), կամ Յն. ἀλγός, նոյն նշանակութեամբ։

* * *

ԱՐՏԱԽՈՒՐԵՄ, Թարգմ. Յն. ἐκστέφω։

ԱՊԱԽՈՒՐԵՄ։

* * *

ՓԵՂԿ, Յն. φύλλον, նոյն նշանակութեամբ։

* * *

ՈՒՐԱՆԱՄ, Յն. ἀρνέομαι, ἀρνοῦμαι, նոյն նշանակութեամբ։

* * *

ՎՃԻՏ, Պրս. վէյժէ, վէյժ, նոյն նշանակութեամբ։

* * *

ՌԱՀ, Պրս. րահ, նոյն նշանակութեամբ։

* * *

ԽՄՈՐ, Արաբ. խամիր՝ Թրք. խամուր։

* * *

ՓԵԳԵՆԱՑ, — Տասանորդէք զանանուխ եւ զփեգենայ։

ՓԵԳԱՆԱՑ, Յն. πήγανον, Պրս. բէյղէն, բէյղէն, Թրք. բէլէն։

* * *

ՍԱՄԻ, ՍԱՄԵՏԷՔ, (Յոբ. Մէրատ. Երեմ. Սեբեր. Ոսկ. Եւ. եւ Ա. Տիմ. եւ Փիլիպ. եւայլն). Պրս. սէմ, Արաբ. սէյմ. Թրք. սէմիզ էթէ։

* * *

ԱՍՊԱՐԷԶ, ԱՍՊԱՐԷՍ, Պրս. ասբէրէյս. էսբրէս։

ԱՍՊԱՆԴԱԿ, Պրս. էսբէնտէկ։

ԱՍՊԱՍՏԱՆ, (ախոռ ձիոյ), զի Պրս. էսպ, նշանակէ՝ ձի։

Տե՛ս եւ ասպէն։

ՊՌՈՑԳ, (օժիտ), Յն. προίξ, նոյն նշանակութեամբ։

ՊՌՈՒԳԵՄ, Յն. ἐκπρουκίζω։

* * *

ՊԱՆԻՐ, Պրս. բէնիր։

* * *

ՃԻՏ աշխ., նշանակէ՝ պարանոց, Արաբ. ճիտ, նոյն նշանակութեամբ։

* * *

ՍՈՒԻՆ, — Զուլեսցեն զսանսրս խերանց 'ի խոփս, եւ զսուինս խերանց 'ի մանգաղս (Եւ. Բ. 4)։ Յն. σιβύνη, նոյն նշանակութեամբ։

* * *

ՎԱՀԱՆ, Պրս. ֆէհանէ, նշ. սողնակ կամ նիգ, եւ յայնպար՝ ամենայն փայտ եղեալ 'ի ներքնակողմն դրան՝ յամրութիւն, յապահովութիւն։ Յորմէ եւ

ՊԱՀԱՆԳ, նաեւ

ՎԱՀԱԳՆ, (ամենայն վերապահութեամբ)։

* * *

ՈՐՈՆԵՄ, Յն. ἐρευνάω, նոյն նշանակութեամբ։

* * *

ԿՆԴՐՈՒԿ, Պրս. քէնտէրէ, նոյն նշանակութեամբ։

* * *

ՎԶՐՈՒԿ, — Միհրներսէհ վզրուկ (Եղիշէ)։

Այս կարծեցեալ յատուկ անունը՝ Պարսկերէն է՝ վէզուրք՝ որ նշանակէ՝ մեծ։

Եւ այս Պարսիկ բառէն (ներհակ

նշանակութեամբ) ունինք
ՏԶՐՈՒԿ, (սեռ.) տզրկի․ իբր չըն-չին եւ աննշան զեռուն մը, Տճ. սիւլիւք։

Յորմէ 'ի հակառակէն

ՏԻԵԶԵՐՔ, տ(իե)զ(ե)րք․ Բաղդ. մեծ եւ մեց, ցեծ եւ ցեց, կէտ (ձուկ) եւ կէտ (.), տխեղն եւ թի-թեղն։ Կազմութիւնը բաղդ. Գուր-գէն եւ Գարեգին։

* * *

ՓԻՍԻԿ (ռմկ.), Պրս. փուշէք, նշ. կատու։

* * *

ՁԵՂՁԵՄ, Յն. ἐπυσκιάζω. πυσκιάζω, իբր ոչ 'ի մէջ բերել ողջ, կամ ոչ յօժ յայտնի ցուցանել, ոչ ցուցանել ամենայն հանգամանօք, այլ ընդ աղօտ ինն, եւ հարեւանցի տե-սութեամբ։ Եւ թուի ձեւացեալ 'ի բա-ռէս՝ ողջ, ամբողջ։

Կազմութիւնը բաղդ. տօբլանմաք, ննջէմ։ — Աստուած զգիրսն եզ ա-ռաջի, եւ զմիտս պատգամացն զեղ-չեաց ... զոր օրինակ զըմութիւնն եզ առաջի Աստուած, եւ զարուեստն թաքոյց (Սեբէր. Է.)։ — Զի թէ Հո-գին Սուրբ չհամարեցաւ ամօթ զայն-պիսի պատմութիւն կարգել մի ըստ միոջէ, ապա ո՛րչափ եւս առաւել եւ ոչ մեզ պարտ իցէ զեղչել (Ոսկ. Մատթ.)։

Յորմէ 'ի հակառակէն

ՇԵՂՋ, ՇԵՂՋԱԿՈՑՏ, ՇԵՂՋԵՄ, ՋՐՇԻՂՋ, բաղդ. գանձեմ եւ քան-ցեմ։

* * *

ԲՆԻՈՆ, — Մինչեւ հասուցանի-ցես զյետին բնիոնն։

Թուի լինել Յն. πένης, նշ. աղ-քատ, եւ πενία, աղքատութիւն։

Բաղդ. ըօմբայ, տես եւ նօքարակէր։

* * *

ԿԱՂ, Յն. χωλός, նոյն նշանա-կութեամբ։

ԿԱՂ Ի ԿԱՂ, կամ կաղ 'ի կաղս։ — Իսկ Յուդաս կաղ 'ի կաղ, ընդ քիմսն կխարերան, ծանօթական խղճիւն առնէր պատասխանի, մի-թէ ե՞ս իցեմ (Սեբէր)։

ԽԵՂ, Յն. κολοβός։
ԿԱՂԱՄ,
ԽԵՂԱԹԻՒՐ, Իսկ
ԿՈՂՈՎ, գրեալ եւ
ԿՈՂՈՔ, Յն. κάλαθος, (խոտորնակ ձեւ), բաղդ. ստամոքս եւ ստոման։

Իսկ

ՍԽԱԼ, Յն. σόλοικος. σολοικισμός, եւ σφάλμα, Արաբ. ղալաթ։

ՍԽԱԼԵՄ, ՍԽԱԼԱԿ, — Որդիք օ-տարոտիք ... սխալեցին (կամ սը-խալեցին) 'ի պաշարմանց իւրեանց (Բ. Թագ. ԻԲ. 46)։ ա՛յլ թարգմա-նութիւն, չօլադան։ — Իբրեւ զար-բեալն եւ զսխալակ (Եսայ. ԻԴ. 20)։ — Արջառ նոցա ոչ սխալեաց 'ի ծննդենէ։

* * *

ՔԷՆ, ՔԻՆԱՄ, Պրս. քինէ, քէ-նոս, նոյն նշանակութեամբ։

* * *

ՄԻՄՈՍ, Յն. μῖμος։

* * *

ԿԱՄԱՐ, Յն. καμάρα, Չէնա՛ քա-մար, Պրս. քէմէր։ Յորմէ

ԿԱՄՈՒՐՋ, իբր՝ կամար անցանե-լոյ ընդ ջուր, կամ իբր Պրս. քէ-մէրչէ։

* * *

ՊԻԾԱԿ, — Առաքեցից առաջի քո զպիծակ (Ել. ԻԳ. 28)։

Պրս. պէշէ, նշ. մեղու։

* * *

ՈՒՂՓ, յորմէ ուղփեան, ուղ-

փաճեմ ։ Իբր համառօտութիւն բառին՝ Ողիւմպոս, (ὄλυμπος), եւ կամի ասել, երկինք, բարձրութիւն, բարձր, երկնային ։

* * *

ԲՈՍՈՐ, անդւոյ անուն. 'ի մեզ աւանդեալ է իբրեւ կարմիր, Եսայեայ սա խօսքէն, «Իսկ այս ո՞վ է որ գիմեալ գայ յԵդովմայ, կարմրութիւն ձորձոց իւրոց 'ի Բոսորայ, գեղեցիկ պատմուճանաւ... վասն էր կարմիր են ձորձք քո (Եսայ. ԿԳ. 1) ։ Յորմէ ունինք ձեւացած՝ բոսորագեղ, բոսորատիպ, բոսորաբուղխ, բոսորային ։

Բաղդ. գեղգեղ ։

* * *

ՊԱՐԵԽ, Թուի Յն. παράχωμα ։

* * *

ԲԵՂՄՆԱԻՈՐ, գրի եւ

ԲԵՂՆԱԻՈՐ, յորմէ բարդեալք

ԲԱԶՄԱԲԵՂՈՒՆ, բաղդ. արգանդ եւ արգաւանդ ։

ԲԻԻՐԱԲԵՂՈՒՆ, Թուի Յն. φαλλός, Լա. phallus, խորհրդական նշանակ (emblème) բեղմնաւորութեան, յորմէ τὰ φαλλαγώγια, (տօնի Բաքոսի եւ Պրիապու) կամ այն Թափօրը, ուր հանդիսիւ կը տանէին φαλλός ը ։ (Տե՛ս յընդարձակ բառագիրս առասպելաց) ։

* * *

ՇՈՄԻՆ, կամ չումին, Տճ. [illegible], Պրս. [illegible], նոյն նշանակութեամբ ։ Իսկ

ՍՊԱՆԱԽ, Պրս. [illegible], Տճ. [illegible] ։

ՇՈՂԳԱՄ, կամ շաղգամ, Պրսկ. [illegible] ։

Բաղդ. պրաս, ճակնդեղ, ռապն, կաղամբ, սոխ, սեխ, ձմերուկ, խաղող, ազոխ, սամձ, խնձոր, դեղձ, ծիրան, գարի, ցորեան, հաց, ջուր, կաղին, ընկոյզ, սերկեւիլ, նուռն, վարունգ, ոխսեռն, բակլայ, հաճար, բանջար, սահաղղին ։

* * *

ԶԱՆԳԱԿ, Պրս. զէնկ, զէնկէ-լէ, զէնկէլէ, նոյն նշանակութեամբ, Թրք. չանկ ։ — Արարցես զանգակս ոսկիս 'ի մէջ նոցա շուրջանակի (Ել. ԻԸ. 33) ։

Յորմէ նաեւ

ԶԱՆԳԱՊԱՆ, Յն. περικνημίς, իբր՝ սռնապան ։

ԶԱՆԿԱՊԱՆ, ըստ մերձաւորութեան Պրս. ձայնիցս՝ զէնկէլէ, (զանգակ) եւ էնկէ-լէ, (ճարմանդ, կամ ինչ որ կը վերաբերի հագնելիք լաթի) ։ — Կապեցան վարտեօք, արտախուրակօք եւ զանկապանօք իւրեանց (Դան. Գ. 21) ։

Յորմէ հետեւեալ բառերը

ԳԱՆԳԻՒՆ, ԳԱՆՉԻՒՆ, ԳԱՆՉԵՑՈՒՑԱՆԵՄ, եւ

ԱՐՁԱԳԱՆԳ, եւ

ԿԱՆՉԻՒՆ, ԿԱՆՉԵՄ, յորմէ

ԱԿԱՆՋՔ, եւ

ԳՈՉԵՄ,

ԿՕՇԵՄ, կամ

ՓՕՇԵՄ, — Գոչեաց առիւծ եւ կորիւն առիւծու յորս՝ յոր հասանիցէ. կոչեսցէ 'ի վերայ, եւ լցցէ զլերինս բարբառով իւրով (Եսայ. ԼԱ. 4) · Յն. κράζω ։

ԳՈՉԵՑՈՒՑԱՆԵՄ, — Խռովեմ զծով, եւ գոչեցուցանեմ զալիս նորա (Եսայ. ԾԱ. 15) ։

Յորմէ 'ի հակառակէն

ԿՈՉԵՄ, բաղդ. մանչեմ եւ մնջեմ, հեծեծեմ եւ հծծեմ, գուսան եւ քուս, չանթեմ եւ չնթեմ, ճիչ եւ ճիկ, չունչ եւ չչունչ ։

(Տես եւ գոդեմ) ։ Եւ

ԽԱՆՉԻՒՆ, ԽԱՆՉԵՄ, — Մինթէ տարապարտո՞ւց խանչիցէ ցիռ (Յոբ.) ։

ՂՕՂԱՆՋԻՒՆ, ՂՕՂԱՆՋԵՄ, — Եղէ ես իբրեւ զծնծղայս որք ղօղանջեն (Ա. Կորնթ. ԺԳ. 1) ։ Եւ

ԽԽՆՋԻԿՆ, ԽԽՆՋԵՄ, (ձայն արձակել ձիոյ)։

Յորմէ 'ի հակառակէն

ԽՆՋԵՄ, Թրք. խէմխէրմէք։

Բաղդ. ճիչ եւ ճիկ, գուսան եւ քուռ, չանթել եւ չնթել, չնչել եւ շշնջել, շունչ եւ շշունջ։

ԽՂՈՒՆՋՆ, իբր Թեկադրեալ 'ի ձայնէս՝ խըմըխըմ, եւ խըմըխընկէօղ. զի խըմըխ, նչ. տողուկ։

Իսկ իբր 'ի հակառակէն Պարսկերէն ձայնիս՝ չընկիլ, (զանգակ) որ ցուցաւ 'ի վերոյ, ունիմք՝

ՋԱՆԽՈՒԼ (*), իբր՝ լոփկ, լոփլիկայն, փաղանի։

ՏԱՐԳԱԼ, գրեալ եւ տրգալ, դրրգալ, (աշխ.) դէօղ, Յն. ἡ κοτύλη, եւ Նոր Յն. κουτάλη։

— Տարգալ ունել ամի եւ պատառաքաղ (Խոր.)։

ՍԵՐԿԵԱՆ, — Ի սերկեան աւուրս (յետին), իբր՝ ցերէկէն։

ԹԱՆԹՐՈՒԵՆԻ, Տճ. մօրճէր. մօրճէր աղաճը. մօրճէր չիչէյի։

(*) Թէպէտ գործածուած կայ, «եԹէ արջ ի դառագգացն գերծանիցի, զատանց դրունս փակեսցէ, և ընդ անխուլ անցիս ի ներքս անձապարեսցի (Ոսկ. ՄատԹ.)։ —Ջանխուլ և զանճոզ կեանս խնդրեսցէ (Ոսկ. Եփես.)—Վիճակն յանգէտս և յանխուլս եղանէ (Անդ)։ Սակայն այս երեւոյԹն ալ այսպէս կը մեկնուի. սկզբնագիր Ջն որ նախդիր չէ, կրնայ զեղչուած ըլլալ, բառին ճնշումը չզգուշացընելու համար Թերևս, որով խուլ բառին մերձեցում մը երեւան եկած ըլլայ։ Իսկ գալով ճամբամ և ճամձառ բառից տառադարձուԹեանը, (ճամգամ և ճամսառ կամ ճամձառ) ընդօրինակուԹիւն մըն է 'ի Ն. Հյկ. Բառարանէն. անգամ = այն գամ, անսառ։ (իբր Համսարր կամ Համձառ)։ (Տե՛ս անդ 'ի բառն՝ ճամձառ). Նաև շատ խախուտ է և ցուրտ

— Տղաներին Թիթաձեւ եւ ձիւնակերպ Թանթրուենին, եւ երիցուկն՝ իւ 'ի հմայս մանկանն հայկազն զբօսանի, 'ի խիլ տերեւոցն երկայնաւուրս հեռագօտեալ (Բաղրատունի, Փ. 37—38—39)։

Բառս մը հեղինակէն ձուլուած։

Յայտնի է որ մօրճէրէն ծաղիկը երբ կը Թափի, մորենիի դունով մանր պնտաձեւ հատիկներ կուտայ, եւ այդ հատիկները կարմիր հեղուկ մը կը պարունակեն, որ ընդհանրապէս Պոլսոյ շէքէրճիները կը գործածեն՝ չաքարեղէնները կարմիր ներկելու համար. ուստի այդ ներկին անունը Տճ. կ'ըսուի շէքէրճի պօյասը։ Արդ ըստ մեզ կը Թուի Թէ այս բառը Լատինական փոխառուԹիւն մըն է բարեյիշատակ բազմարդիւն հեղինակին ձեռամբ նորագործեալ 'ի Լտ. բառէս tinctura, (թինկթուրա), որ նշ. ներկ. ուստի Թանթրուենի, կը նշանակէ ծառը, որ այն ներկը կուտայ, մօրճէրէ ծառ։

ՔԱՆԱՍԱՐԻԿ(*), — Հրամայէ 'ի չանց եւ 'ի խոզից զգուշանալ, եւ 'ի միւսոյ եւս քանասարիկ ազգէն գայլոց (Ոսկ. Մտթ.)։ Յն. πονηρότερος (չարագոյն)։

«Յոյն բնագիրն, կ'ըսէ Հ. Տէրվիչեան, (Տե՛ս Մասիս 1882 Յուլիս 24), այս բառին դիմաց՝ յոռեգոյն, չարագոյն ածականը կը դնէ, բայց մեր կարծեաց համեմատ բուն չնագլուխ կը նշանակէ՝ քանասարիկ, (սար, գլուխ), եւ յետոյ կարելի է երկրորդական նշանակուԹիւն մըն ալ տուած ըլլայ։ Գայլք առուգիւ չնագլուխ են»։

(*) ՄարԹի համեմատել այլ և այլ բառից Յն. և Եբր. բայց տարյգն է անյայտ։ Մակդիր արտաքսյի գայլոյ. որպէս անյաղ բերանաբաց, երագաոռն և յափշտակիչ շար 'ի յոյժ (Ն. Հյկ. Բռ.)։

Այս ստուգաբանութիւնը մեզի կ'երեւայ թէ կամայական է. եթէ «գայլք ստուգիւ շնագլուխ են», ուրեմն ի՞նչ հարկ կար ճոթըլըխ ածական մը բարդել վրան, եւ որ աւելին է, եթէ քննադատին՝ ըսել ըլլայ՝ շնագլուխ, ուրեմն canis *շուն ըսել է՝ գիտէին նախնիք, եւ Լատին բառը Պարսիկ բառի մը հետ իբր պատուաստելով՝ իշխեցին ստեղծել քանասարճէն բառը։*

Մենք ալ մեր կարծիքը մէջ բերենք, դատաստանը՝ աւելի հմտագոյնից առնելին յանձնելով։

Արդ քանասարճէն բարդ բառ մըն է, առաջին մասը քան, Լատին է, (canis. *նշանակէ՝ շուն). իսկ երկրորդ մասը սար, կամ սարճէն, կնճռոտ է եւ մթին, ուստի ջանանք պարզել ամենայն վերապահութեամբ։*

Թէպէտ գիտենք թէ՝ սար (Պարսիկ բառ մը՝ սէր) կը նշանակէ գլուխ, բայց 'ի մեզ՝ մանաւոր սամամբ եւ եւեթ, այսինքն՝ ոչ իսկապէս գլուխ մարդոյ կամ կենդանեաց, այլ իբր ծայր, վերին ծայր, ծայր բարձրութեան, եւ իբր գիմաբաժանեալ սարոյ։ Յն. λοφίαι *Զոր օրինակ՝ «Եղեն նոցա սահմանք 'ի հարաւոյ մինչեւ յեզր ծովուն Աղւոյ, 'ի սարոյն որ իջանէ 'ի հարաւակողմն ... եւ սահմանք նոցա ընդ հիւսիսի 'ի սարոյ ծովուն եւ յեզերէ Յորդանանու» եւայլն Յես. ԺԵ. 2. 5), «Եղիցին եւք սահմանայն 'ի սար ծովուն Աղւոյ» (Թուոց ԺԲ. 19)։ «Ընդ լերինս եւ ընդ սարս հասանիցէ անցանել» (Ոսկ. Մտթ.)։ «Ընդ լերանց սարս անցանել (Նոյն)։*

Մեր բառը քանասարճէն, թէպէտ ոսկեդարեան մատենագրութեան մէջ միայն մէկ տեղ մը տեսնուած է մինչեւ հիմայ, եւ այն է որ ցուցաւ 'ի վերոյ, սակայն այս ոճով ձեւացած ունինք նաեւ՝

ԿԱԽԱՐԴԱՍԱՐ, *որ այս ալ միայն մէկ տեղ մը գործածուած է։*

— Բազումք 'ի կախարդասարացն բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն (Գործ. ԺԹ. 19)։ Յն. ἱκανοὶ δὲ τῶν τὰ περίεργα πραξάντων

Այս տեղ կը յիշեցընենք Պարսկերէն բառ մը՝ դէյվուր, որ նշ. խէթ, կորնոր, ճոճ, եւ թարգմանի՝ դէ-ոքոչ, արդ մեզ կը թուի թէ մեր երկու բառն ալ՝ քանասարճէն եւ կախարդասար, այս Պարսիկ բառէն թելադրուած են։

Լատինն ալ մաս մը ունի մէջը, caniformis, *(շնակերպ, շնաբարոյ, կամեցեալ ասել, լիրբ, ժպիրհ երեսօք, կատաղի անագորոյն)։*

* * *

ԿԵՌԱՍԵՆԻ, *Յն.* κέρατος ։

ԿԵՌԱՍ, *Յն.* κερατέα, κερατία, *իսկ* κεράσιον *նշ.* ։

Բաղդ. ուրիշ պտղոց անուններուն հետ։

* * *

ՀՍԿԵՄ, *գրեալ եւ*

ՍԿԵՄ,

ՀՍԿՈՒՆ, *արթուն։*

ՀՍԿՈՒՄՆ, ՍԿՈՒՄՆ, *բառ Յունական,* σκευωρέω, *նոյն նշանակութեամբ։*

Մի՛ շփոթեր ընդ՝ հսկայ, սկայ։

* * *

ԻԱՐՊԱՍ, *Պրս. դէրվիշ, նշ. մեծ գաւառն, գաւառն ապարանից՝ քաղաքի, արքունիք։*

* * *

ՄԵՂՐԱՊՈՊ, *— Զոհին եւ ըղձեղրապող, եւ զպրաւն (Թուոց ԺԱ. 5)։ Ըստ մեզ բարդեալ՝ մեղր եւ պող։ Իսկ Յուն.* μηλοπέπων. *որ թէպէտ բարդ է, բայց ոչ թէ* μέλι *(մեղր) բառով, այլ* μῆλον, *որ նշ. խնձոր*

բոլորակ իբրեւ գլխնձոր եւ πέπων սեխ ։ Ուստի μηλοπέπων, նշ. ապգ ինչ բոլորակ սեխի, ապգ ինչ սեխի ։ Եւկ'երեւայ թէ ձայնից միաձայնութենէն (μῆλον եւ μέλι) մէկը միւսին տեղ առնուած է 'ի մեզ (*) ։

Բաղդ. Քաւըռտաղան ։

*
* *

ԴԴՄԵՆԻ, Յն. κολοκύνθη ։

Յիշատակուած է (Յոբ. Դ. 6—7—9—10). — Հրաման ետ Աստուած դդմենւոյն, եւ ել 'ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի ։ — Ուրախ եղեւ Յովնան 'ի վերայ դդմենւոյն ։ — Եհար (որդն) զդդմենին, եւ ցամաքեցաւ ։ — Արդարեւ յոյժ տրտմեա՞լ իցես 'ի վերայ դդմենւոյն ։ — Դու խնայեցեր 'ի դդմենին յոր ոչ եղեր ինչ աշխատ, որ գիշերի ել եւ 'ի միւս գիշերի կորեաւ ։

ԴԴՈՒՄ, այս բոյսը տիրապէս ճանչցուած չէ թէ ինչ տեսակ բոյս է, հաստատկօրէն կը կարծուի թէ այս երկրին յատուկ՝ թանձր եւ խոշոր տերեւներ ունեցող բոյս մըն է ։ Թէպէտ Յունարէն բառը հիմակուան գործածութեան համեմատ կընշանակէ Տճ. գապագ, գապագ ֆէտանը, մենք ալ աս նոր նշանակութեամբ կը վարուինք, դդում գապագ, եւ դդմենի, գապագ ֆէտանը ։

Արդ քանի որ մեր երկրին յատուկ բոյս մը չէր դդմենին եւ դդումը, հարկ էր որ օտարէն փոխառութիւն մը ընէինք ։ ուստի Պարսկերէնէն կը թուի թէ առնուած է՝ Բէ-Բէ-ն, որ բոյս մըն է, որ 'ի մեզ կ'ըսուի տըտըր, եւ ըստ Ն. Հյկ. Բառարանին, «Թուփ եւ պտուղ նորա ողկուզաձեւ, կարմրահատ, թթու եւ զովացուցիչ ։ Տճ. ուճ-ք կամ սամ-ք ։

Բաղդ. Տըր-խըտ, տեըրէ-, բառից առումներուն հետ ։

*
* *

ՃԽԱՂ, Յն. ἴνδαλμα, երեւոյթ, առաջօք տեսիլ, պատիր երեւոյթ, ուրուական, խօլական տեսիլ ։

— Վասն այսորիկ ճիւաղք բնակեսցեն 'ի կղզիսն (Երեմ. Ծ. 39) ։

Թրք. ճէյլէյ ։ կայ նաեւ իբր աշխ. ճէ-էղէլ = ճ է ղէ լէ լ ։

*
* *

ՃՄԵՐՈՒԿ, մի՛ չփոթեր ընդ ձըմերուկ ։ Արաբ. -էմէր, -էմէրէ, նշ. պտուղ, արգիւնք, եւ քանզի մերձաւոր է Թրք. ղարփուզ (ձմերուկ), Յունական ձայնիս καρπός, որ նշ. պտուղ, այսու տեսութեամբ առեալ է 'ի մեզ Արաբական ձայնս իբրեւ ձմերուկ ։

*
* *

ՊԷՋԱՍՊԻԿ, — Թագաւորն պըրծեալ մաղապուր՝ պէչասպիկ մի ստրհանգակ առաջի՝ եկանէր փախստական (Բուզ.) ։

Բառ բարդեալ՝ Պրս. պէչէ՝ (ձագ) եւ էսպ = ասպ, (ձի) եւ նշ. երիվարիկ, կամ հեծեալն 'ի նմա ։

*
* *

ՓԱՂԱՆԳ, Յն. φάλαγξ, գունդ հետեւակ զօրաց, մանաւանդ առ Մակեդոնացիս, գունդ զօրաց, լէգէոն զօրաց ։

— Զփաղանգս հերձուածողացն, գջոլիրս սատանայի առհասարակ կործանեմք (Ոսկ. Փիլիպ.) ։

*
* *

(*) Յունարէն μῆλον նշ. խնձոր, սակայն զանազան երկիրներու անուանց հետ գալով, տարբեր պտուղներ կը նշ., ուստի μηδικὸν μῆλον (մարական խնձոր) նշ. լեմոն, μῆλον κυδώνιον (κύδωνι քաղաք 'ի Կրետէ) նշանակէ սերկեւիլ, μῆλον περσικόν (խնձոր պարսկային), նշանակէ՝ դեղձ, և μῆλον ἀρμενιακὸν նշանակէ ծիրան ։

ՓԱՂԱՂԵՄ, (ուտել, ծախել, սպառել), Յն. καταφάγω, նոյն նշանակութեամբ։
Յն. φάγω, ուտել, եւ մերս թուի իբր կրկնութեամբ Յունականին φάγω, եւ իբր թարգմ. καταφάγω, (ութել խաշաշ, աշարել)։

*
* *

ԲԱՆԱՔԱՂ, բարդեալ՝ բան—քաղ, = քաղել, ժողովել։
— Ո՛վ բանաքաղ Մարկիոն, որ զմին լոէ եւ զմիւսն սատանգանէ (Եզնիկ)։ այսպէս եւ 'ի Յն. παραλέγω (ճամարտակել), յաճախ վարի իբր ժողովել, հաւաքել, քաղել։
Կամակար, Պրս. քէամքէար, (որ առնէ ըստ կամս)։

*
* *

ՔԱՂԲԱՆ, Յն. χαλβάνη։
— Ա՛ռ դու քեզ խունկս անուշունս, ստաշխն եւ եղունգն, եւ զքաղբանն զանոյշ, եւ զկնդրուկ զերեւելի (Ել. Լ. 34)։
ՆԻԶԱԿ, Պրս. նէյզէք, հին Պրս. նէյզաք, նոյն նշանակութեամբ։
Յորմէ ձեւացեալ
ՆԵՏ, ըստ օրին. զուարակ եւ տաւար, սակառ եւ տակառ, սակաւ եւ տակաւ։
Ս եւ Տ, լծորդք ըստ Արար. եւ Յն.
ՆԵՏՈՂ, կամ նոյն ընդ՝ նէյէ նոյն նշանակութեամբ։

*
* *

ՏՆԱՋ (աշխ.), իբր ծաղր, կատակ, Պրս. թանզ, նոյն նշանակութեամբ։

*
* *

ԱԹՈՒԹԱՅ, բառ Ասորի, որ նշ. ֆէր։

*
* *

ԲԱԲԷ, (միջրկ.), զարմացման, ուրախութեան եւ ցաւոց։
Յն. βάβαι. παπαῖ, նոյն նշանակութեամբ, վարի ընդ սեռականի որպէս եւ 'ի մեզ, βαβαὶ τοῦ λόγου, բարէ բանիցն։

*
* *

ՆԱՆԻՐ, Լտ. inanis։
ՆԱՆՐՈՒԹԻՒՆ, Լտ. inanitas։
ՆԱՆՐԱՆԱՄ,
Ի ՆԱՆԻՐ (մկ.), Լտ. inaniter։
— Ոչ նստայց ես յաթոռս նանրաց (Սաղմ. ԻԵ. 24)։ Յն. նանրութեան։ — Մարդ նանրութեան նմանեցաւ (Սաղմ. ՃԽԳ.)։ — Նանրացան 'ի խորհուրդս իւրեանց (Հռ. Ա. 21)։ — Ի նանիր վաստակեն շինողք նորա։
Տե՛ս եւ՝ ունայն։

*
* *

ԲՈՄԲԻՒՆ, Յն. βόμβος։
— Սրհաւիրք եւ բոմբիւնք գիշերականք (Յոբ. Դ. 13)։

*
* *

ԱՆԳԱՄ, Պրս. հէնկեամ, էնկեամ, նշ. ժամանակ։ Յորմէ
ՀԱՄԱՆԳԱՄԱՅՆ, եւ
ՀԱՆԳԱՆԱԿ, Պրս. հէնկեամէ, էնկեամէ, էնճէմէն, նշ. ժողով, հաւաքումն, խորհրդակցութիւն, Յն. συμβούλιον։
Եւ գիտելի է զի Պարսիկ բառը նոյն է ընդ συμβούλιον բառին, սակայն որովհետեւ այս ձայն մերձաւոր է ձայնիւ σύμβολον բառին, որ նշանակէ հանգանակ, (եւ բոլորովին տարբեր բառ է առաջինէն, քանզի առաջնոյն արմատ է συμ βούλομαι, իսկ երկրորդին συμ-βάλλω), այս վերջնոյն նշանակութիւնն առած է մեր բառը։
ՀԱՆԳԱՆԱԿ, ՀԱՆԳԱՆԱԿԵՄ, ՀԱՆԳԱՆԱԿԻՄ, ՀԱՆԳԱՆԱԿՈՂ, իսկ
ՀԱՆԳԱՄԱՆՔ, հ—անգամ—անք, (կերպ, տարազ, եղանակ), Պրսկ.

հէնկեամ, է մերս անգամ, (ժամանակ), յորմէ ձեւացեալ է բառս ։

Բաղդ. եղանակ, նուագ, երբեմն երբեմն ։

* * *

ԱՀԱ՛, (մկ.), — Ահա առաջի․ Թուրքերէն եւս սահ, [illegible] ։

Յորմէ

ԱՀԱԻԱՆԻԿ, կազմուած է՝ ահա — անիկ․ Բառիս վերջին մասը [illegible], Պարսիկ է, [illegible], որ կը նշանակէ՝ [illegible] ։

Ի մեզ՝ մերձաւորին ու մերձաւորագոյնը ցուցնելու համար՝ - եւ ⁊ կը փոխանակուին՝ Պրս. [illegible] (անիկ) ին Ն ին տեղը, որով կըԱյ

ԱՀԱԻԱՍԻԿ, եւ

ԱՀԱԻԱԴԻԿ, որոց համառօտութիւնն է՝

ԱԻԱՍԻԿ, եւ

ԱԻԱԴԻԿ ։ Հարկ չկայ ըսել թէ - ը յաւելուած մըն է իբրեւ կցորդութեան կապ, 'ի մեզ սովորական ։

Ահա՛ մակբային հետաւոր կամ մերձաւոր ցուցընելու նշանակութիւն առանալը Պարսկերէնին հետեւողութեամբ է, զի Պրս. [illegible], նշ. ահաւասիկ, եւ [illegible], նշ. ահաւանիկ, իսկ երկրորդ դէմքի համար՝ միայն Հայերէնի յատուկ է ։

* * *

ՀԱԴԱՂԱԿ, — Ջհաղաղակն զինուոյ եւ զօրուակ բեղոյ (Յ[illegible]. Ժ. 5)։ Տճ. [illegible], [illegible] ։

* * *

ՌՈՒՄԲ,

ՌՄԲԱՔԱՐ, որ նոյն է ընդ

ԲՈՆԱՔԱՐ, — Համարի զամբաքար խառ (Յ[illegible].)։

Պրս. [illegible], յորմէ Տճ. [illegible], [illegible] ։

(ռ ո ւ մ բ — բ ո ւ ռ ն)
4 2 3 5 1   5 2 3 1 4

* * *

ՃԱՐՄԱՆԴ, գրեալ եւ

ՃԱՐԱՄԱՆԴ, Պրսկ. [illegible], նշ. ուժեղ, հաստատուն, տոկուն, պինդ, ամուր, այս առումը բաղդ. որմ, վահան բառից հետ ։

Ի մեզ առեալ է իբր՝ [illegible], որ նկատի պինդ կամ պնդիչ մարմին ։

— Յիսուն ճարմանդ արարցես միոյ փեղկի, եւ խառնեսցես զօղն ընդ ճարմանդսն (Ել. ԻԶ. 5)։

Յորմէ 'ի հակառակէն

ՄԱՐՄԱՆԴ, — Ամրոցն յառաջագոյն խմանալոյ զձմերուհս կարեւորս, եւ 'ի վաղ 'ի մարմանդ տեղիս փութալոյ (Ե[illegible])։

Բաղդ. եղջիւր եւ եղտիւր, թըրծել եւ թրջել, կուշտ եւ կոշտ, քծուար եւ քածուարտ, ծնօտ եւ ծղօտ, ծաղիկ եւ ծղիք, մետաղ եւ մատաղ, գոյլ եւ թոյլ ։

* * *

ՇԱՌԱԻՆ, ([illegible])։

— Պարսիկք եւ [illegible] նըկարեն եւ պաճուճեն (Ո[illegible]. Փ[illegible].)։ Յն. κάμηλος, (ուղտ)։

Կայ Յունարէն բառ մը մեր բառին մօտ, σάραπος, σαράπους, որ կը նշանակէ՝ [illegible] եւ [illegible], եւ իբր Տճ. [illegible], (մակդիր ուղտու)։

* * *

ԱՆԴԱՍՏԱԿ (*), Յն. προπύλαιον, πρόθυρον, (արտաքին գաւիթ, նախադուռն տան)։

— Ե՞րբ ժամանեսցես զէթ զառաջին անդաստակս պատուիրանացն կոխել (Ոսկ. Մ[illegible].)։ — Այժմ դեռ առաջի գրացն կաս՝ մօտ յանդաստակն (Ա[illegible])։

Թուի բառ Լատին intestinus, (ներքին), ([illegible]), Յունականին իմաստովը առնուած ։

(*) Ն. Հյկ. Բռ. առնմանէ զբառդ «Դուռն իբր 'ի չափ անդոյ միոյ» ։

ՄԱՀԻԿ, Պրս. մահչէ, մահչէ, (փոքր կամ նմանութեամբ)։

— (Լուսին) յորժամ յարեւելից սկսանիցի մաշել, յարեւմուտս կոյս ցուցանէ զմահիկ եղջիւրան (Վէյշր)։ — Զպսակակալս եւ զմահիկս, եւ զզարդ երեսաց նոցա (Ես. Գ. 20)։

* * *

ԴՐՈՒԱՏԵՄ, Պրսկ. դէրբաթէն, նոյն նշանակութեամբ։

Իսկ դէրբատ, որ անունն է վերնոյն, իբրեւ միջարկութիւն կը գործածուի, եւ կը նշանակէ իբր՝ ողջո՜յն, խաղաղութեամբ, որպէս եւ իբրեւ միջարկութիւն գործածուած կայ 'ի մեզ եւս։

ԴՐՈՒԱ՜Տ, Թէպէտ տարբեր առմամբ, եւ իբր Պրս. դըֆէրէ՜յն։

* * *

ՎԻՇԱՊ(*), Յն. δράκων, Պրսկ. էժդէր։

Վէսուպ լեառն հրաբորան 'ի Նէապոլիս Իտալացւոց։

Յատուկ անունէ առնուած բառերու հետ բաղդ. բուիզ, դանգաղ, նեան, մարգարէ, ժմերա, արտօսր։

— Վեսուբ լեառն 'ի գլխոյ պատառեալ, եւ այնչափ հուր չնչեաց, մինչեւ շուրջ զգեղօն եւ զքաղաքսն այրեաց (Ե—. Թր. Բ.)։

Վեսուբի բաժակին խորութիւնն է 115 մէթր (Քոր ֆէրաղ)։

Ետնայի բարձրութիւնը 3300 մէթր է, եւ Ետնայի բաժակին շրջապտոյտը չորս հազար մէթր է։

— Ա՛յլ ինչ ոչ են վիշապք, բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք ծովականք։ — Զօձ յաղթանդամ կամ զգաղան ինչ ծովածին կոչեն գիրք վիշապ (Եզեկ)։ — Եւ հրամայեցաւ 'ի Տեառնէ վիշապ ձկանն, եւ եթուք զնա 'ի ցամաք (Յովն. Բ. 11)։ Յն. κῆτος։ — Ընկէց զգաւազանն... եւ եղեւ վիշապ (Ել. Է. 9, 10, 12)։

Վիշապ, Յն. δράκων, առասպելեալ կենդանի մը, որ կը նշ. նաեւ տեսակ մը ձուկ, որպէս եւ 'ի մեզ վիշապ ձուկն, (տես 'ի վերոյ)։

Դարձեալ՝ Յունարէն λάμια, եւ նշանակէ անդունդ, վիրապ, նշանակէ նաեւ վիշապ, (առասպելեալ հրէշ որ կլանէ զմարդիկ, մանաւանդ զմանկունս), նշանակէ նաեւ ձուկն ինչ պատառիչ, շանաձուկն, Գաղղ. requin., որպէս եւ 'ի մեզ գոյ՝ վիշապ ձուկն։

Յն. αἰθιαῖος, իբր Եթովպական, այսինքն, մեծ իբրեւ գլխոյն Ետնա, մթխարի, անարի, անհեղեղ, նշ. նաեւ ազգ ինչ ձկան։ Եւ

ՎԻՐԱՊ(*), դարձեալ վիրը ցուցուած յատուկ անունէն ծագումն առած։

Յանդրանիկանէ անտի Փարաւոնի, որ նստէր յաթոռ նորա, մինչեւ յանդրանիկ գերւոյն որ կայր 'ի վիրապի (Ել. ԺԲ. 20)։ Յն λάκκος։

Վիրապ բառէն կը թուի համառօտեալ

ՎԻՐՀ, — Վիրհ մեծ է. ասէ, ընդ մեզ եւ ընդ ձեզ, զի մի՛ կարծիցէ թէ վասն զի, եւայլն (Ոսկ. Մեկն. Եսայ.)։

Աւել. հ, բաղդ. ժայրհ, ադահ, նիրհ, խանարհ, խորհ։

Եւ եւս համառօտեալ

ՎԻՀ, Յն. χάσμα, Գաղղ. abîme։

Արդարեւ հրաշունչ վիշապ մըն է

(*) Վիշապ. որպէս թէ իժ ապ. օձ ջրոյ (Ն. Հյկ. Բռ.)։

(*) Դիտելու ենք որ Յունարէն Ագաթանգեղոսի մէջ փոխանակ վիրապի λάκκος (գուբ) կը գրուի. իսկ ծննդոց Խ 15 մէջ՝ գուբը փոխանակ բանտի գործածուած է, յառելն Յովսէփայ. «Արկին զիս 'ի տուն գբոյս այսորիկ»։ (Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը. Գլ. Է. էջ. 54.)

Վիսուվ (*) երբ կը բորբոքի, եւ 'ի հանդարտութեան վիրապ մը անհնարին խորութեամբ, այսինքն, 115 մէթր։

Հիմայ տեսնենք թէ վիրապ ինչ կը նշանակէ տիրապէս։

Սուրբ Գրոց մէջ այս բառը միայն մէկ տեղ մը կայ յիշուած Յունական λάκκος բառին դէմ, այն է Ելից ԺԲ. 24. «Յանդրանկանէ Փարաւոնի որ կայր յաթոռ թագաւորութեանն մինչեւ յանդրանիկ գերւոյն որ կայր 'ի վիրապի։

Ասկէ զատ՝ Սուրբ Գրոց ուրիշ ամէն տեղ Յունական այս բառին դէմ 'ի մեզ գրուած է գուբ, (տես Ծննդ. ԼԷ. 20, 22, 24, 28, 29. եւ Խ. 15։ Սաղմ. ԶԷ. 5, 7։ Երեմ. ԼԸ. 6, 7, 10, 11, 12, 13. եւ Դան. Զ. 12, 16, 19, եւայլն, եւայլն)։ սակայն ոչ Յունաց λάκκος ը եւ ոչ մեր գուբը չեն նշանակեր բանտ, այլ փորածոյ տեղ մը, փոս մը, հոր, իբր Պրս. [illegible], եւ Թրք. [illegible]։ — Ի գուբս ծակոտկէնս ժողովէր։ Հետեւեալ խօսքերէն կը հասկընանք թէ ինչ է անիկայ։

— Մտին 'ի տուն տան միոյ, եւ նորա էր գուբ մի 'ի տան, եւ մտին անդր, եւ կին (տանն) կափոյց ըզխուփն 'ի վերայ գբին... եւ ոչ ել բանն 'ի վեր։ Եւ եկին ծառայքն Աբիսողոմայ առ կինն 'ի տուն անդր, եւ ասեն. ո՞ւր են (արքն). եւ ասէ ցնոսա կինն. անցին յանկոյս ջրոյդ։ Եւ նոքա խնդրեցին զնոսա եւ ոչ գտին... եւ յետ գնալոյն նոցա ելին (արքն) 'ի գբոյն, եւ չոքան պատմեցին, եւայլն (Բ. Թագ. ԺԷ. 18—19–20—21)։ Կային նաեւ, ինչպէս հիմայ ալ Եւրոպական մայրաքաղաքներու մէջ շինուած կան, գետնափոր տեղուանք՝ հասարակաց պարտէզներու մէջ, ուր առիւծներ, վագրեր եւ արջեր կը պահուէին, հետաքրքիրներուն ցուցընելու կամ սոսկ զուարճութեան համար, եւ այս գազաններն այսպէս գուբերու մէջ կը բնակեցնէին՝ թէ՛ անոնց վտանգաւորութենէն ապահով մնալու, եւ թէ՛ անոնց փախուստն անկարելի ընելու համար, այսպիսի էր այն [illegible] [illegible], ուր զԴանիէլ ընկեցին (Տես Դան. Զ. 16)։

Վերջապէս կային այնպիսի գուբեր ալ, որ բանտերու մէջ փորուած էին՝ ծանր յանցանաց եւ ոճրագործութեանց համար սահմանուած, ուստի կ'ըսուէր տուն բանտի կամ տուն կապանաց, ու թէ որ իր մէջը գուբ կայ կ'ըսուէր տուն գբոյ, եւ այս տեսութեամբ ալ ուրիշ բան է բանտ, եւ φυλακή, ուրիշ բան է գուբ, λάκκος։

Երեմիային 'ի գուբ իջնալու պատմութենէն ալ յայտնի է,

«Զայրացան իշխանքն 'ի վերայ Երեմիայի, զան հարին, եւ եդուն զնա 'ի տուն բանտի. յապարանս Յովնաթանու դպրապետի, քանզի զնորա ապարանսն արարին բանտ։ Եկն Երեմիա 'ի տուն գբոյն... եւ նստաւ անդ Երեմիա աւուրս բազումս... եւ նստաւ Երեմիա 'ի սըրահի բանտին... եւ առին զԵրեմիա եւ ընկեցին զնա 'ի գուբն Մեղքեայ որդւոյ թագաւորին, որ էր 'ի սրահի բանտին, եւ իջուցին զԵրեմիա պարանօք 'ի գուբն. եւ 'ի գբի անդ ջուր ոչ էր, այլ լոկ տիղմ, եւ կայր Երեմիա 'ի տղմին։ Եւ լուաւ

(*) Անուանի է Քրիստոսի 79 Թուականին վեսուվին բորբոքումը, որ շատ տեղեր անապատ դարձուցեր, այրեր տոչորեր է. [illegible] քաղաքներ, Հերքուլանում, Պոմպէի ծածկեր է իր մոխիրներուն ներքեւ։ Կը պատմուի որ անոր հրախառն մոխիրները պինդ հեռաւոր երկիրներ, մինչեւ Եգիպտոս գացեր են՝ հողմոցբռնութեամբ։ Երէցն Պլինիոս հրաբուխը զննելու համար հոն եկած պահուն՝ անոր բոցերուն զոհ գնաց, ինչպէս անկէ յառաջ Եմպեդոկղ կորեաւ յԷտնա։

Արիմնլէք . . . Թէ արկին զԵրեմիա 'ի գուբն , խօսեցաւ ընդ Թագաւորին . . . եւ հրամայեաց Թագաւորն եւ ասէ . . . Հանէ՛ք զմարգարէն 'ի գբոյ անտի եւ մի՛ մեռցի . եւ ձգեցին զԵրեմիա պարանօք , եւ հանին զնա 'ի գբոյ անտի , եւ նստաւ Երեմիա 'ի սրահի բանտին . . . մինչեւ 'ի ժամանակն յորում առաւ Երուսաղէմ (Երեմ. Խ.) ։

Ուստի բանտը գուբի հետ շփոթել պէտք չէ , եւ ոչ գուբը վիրապի հետ , Թէպէտ Սուրբ Գրոց մէջ միանգամ եւեթ յիշուած ըլլայ , այս վերջինը ինչպէս ցուցաւ 'ի վերոյ ։

Գիտենք որ գրախտ եւ պարտէզ մի եւ նոյն բան է , սակայն Հայը ուրիշ բան կիմանայ երբոր գրախտ ըսէ , ուրիշ բան կիմանայ երբոր պարտէզ ըսէ , գիտնալով հանդերձ Թէ երկուքը մէկ է ։ Այսօր ընդ իս իցես 'ի գրախտին , — ոչ 'ի պարտիզին ։ — Եւ աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն կեդրոնի ուր էր պարտէզ . — ոչ գրախտ ։ — Էր 'ի տեղւոջն յորում խաչեցաւ , պարտէզ . եւ 'ի պարտիզի անդ գերեզման նոր . — ոչ գրախտ . — ոչ 'ի գրախտի անդ ։

Վիրապին նշանակութիւնը ըստ մեզ աւելի ծանր կը կշռէ , Թէպէտ եւ 'ի բնէ նոյնն եղած ըլլայ ։ Վիրապն առ մեզ , եւ 'ի մասնաւորի վիրապն Արտաշատու այնպէս ըմբռնուած է ինչպէս առ Աթենացիս βάραθρος, *(որ ձայնիւն ալ մեր վիրապին մօտենայ) , ուր Աթենացիք մահապարտները կը ձգէին ։*

Կը խոստովանինք որ բոլոր այս բացատրութիւններէն եւքը դարձեալ վիշապ եւ վիրապ բառերուն խորհրդական քօղը չենք կրցած վեր առնուլ , եւ ցուցընել խիկապէս ։

Եզնիկ անգամ երբ վիշապի համար խօսք կ'ընէ , վճռական բան մը չըսեր , եւ որոշ սահման մը չտար անոր , այլ ինչ ոչ են վիշապք կ'ըսէ , բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք , կամ ձկունք անարիք ծովականք . այլ երկբայանօք իմն երբոր կ'ըսէ ,

— Զօձ յաղԹանդամ կամ զգազան ինչ ծովածին կոչեն զիրք վիշապ , որպէս զմարդ յաղԹանդամ հսկայ անուանեն , նոյնպէս եւ զօձ ցամաքային անճոռնի , եւ զգազանն ծովական լեռնաձեւ , զկիտացն ասեմ եւ զդելփինաց , վիշապս անուանեն (Եզնիկ 103) ։

Ուստի պիտի ըսենք որ վիշապ եւ վիրապ բանաստեղծական բառեր են , եւ զանազան գոյներով կրնան երեւալ , ինչպէս նաեւ Եբրայեցւոյն ըէ-ֆ-ը-նը ։

(Տե՛ս ռն-ը-ֆ) ։

*

* *

ԵՐԱՆԳ , *Պրս.* ռընէնկ , *նոյն նշանակութեամբ ։*

(ե ր ա ն գ — ա ր է ն կ)
3 2 1 4 5

ՆԵՐԿ (*) , *Թրք* րէնկ , *նոյն նշանակութեամբ ։*

(ն ե ր կ — ր է ն կ)
3 2 1 4

Երանգ կամ ներկ կը նկատէին իբր արտաքինք . վասն զի ներկանել , ինչպէս նաեւ օծանել , բռել , ծեփել , շպարել , մարմնոյ մը արտաքին կողման վրայ կը կատարէին , այսպէս փոխանակ ըսելու՝ կեղծաւոր , ըսուած է , Նման էք գերեզմանաց բռելոց , որ արտաքոյ երեւին գեղեցիկք , եւ 'ի ներքոյ լի են ոսկերօք եւ ամենայն պղծութեամբ . նոյնպէս եւ դուք արտաքոյ երեւիք արդարք ։

Յն. χρόα , *նշ. գոյն , գոյն դիմաց ,*

(*) «Նէրքէլ բային արմատը Ն-էրք=Նէ-արքէ. ուստի և Նէ նախդրով ճիւղուած» (Հնդեւր. նախ. Ծան. 39) ։

մանկերնւոյթ, Գրա. [illegible]՝ նշ. նաև՝ նենգութիւն, խարդախութիւն։

Ցորմէ (ներկ) 'ի հակառակէն

ՆԵՐԿ, (քիչ անգամ գործածուած)։

— Ներքս անուանէ որ ինչ կայ 'ի ներքս։ Ցորմէ

ՆԵՐՔԻՆ, որպէս խուար-ին, արտաք-ին, վեր-ին։

Ի ՆԵՐՔՍ, ՆԵՐՔՈՅ, բաղդ. ալիք և աղիք, մկան և մկանունք։

Ուրիշ է

ՆԿԱՐ, Գրա. [illegible]։

ՆԿԱՐԵՄ։ Իսկ

ՆԿԱՏԵՄ, Գրա. [illegible], նշ. գիտել, տեսանել, հայել։

Ուրիշ է նաև

ՆԻՀԱՐ, Գրա. [illegible], նոյն նշանակութեամբ։

* * *

ԲՐԴԵՄ, Գրա. [illegible], (հատանել, կտրել)։

Ըստ մեզ՝ մասնաւոր առմամբ, այսինքն միայն հացի նկատմամբ։

— Ամբակում մարգարէ... եփեաց թան, և բրդեաց հաց 'ի կուր... տանել մշակաց իւրոց (Դան. ԺԴ. 32)։ — Տղայք հաց խնդրեցին, և ոչ ոք էր որ բրդէր նոցա (Ողբ. Դ. 4)։ — Բրդեա՛ քաղցելոց զհաց քո (Եսայ.)։ — Բրդեսցես (զպատարագն) զայն պատառս պատառս, և արկցես 'ի վերայ նոցա իւղ (Ղեւտ. Բ. 6)։

Ցորմէ 'ի հակառակէն

ԲԱՐԴԵՄ, [illegible]։

Բաղդ. գանձեմ և քանդեմ։

ԲԱՐԴ, [illegible]։

Ի բարդից մինչև ցկանգնուածն (Դատ. ԺԵ. 5). այսինքն՝ [illegible] (Հաւկերը)։

Ցորմէ՝ (բրդել)

ԲՈՒՐԴ, իբր՝ [illegible] (ասրի վրայ խօսելով)։

— Դի՛ր զբուրդդ ընդ անթովք ձեռաց քոց (Եզեկ. ԼԲ. 12)։ — Ջրով և բրդով կարմրով և զոպայիւ (Եբր. Թ. 19)։

Բաղդ. կարել զխաշինս, կատուրք խաշանց։

Բուրդ նկատի իբր կակուղ ինչ և փափուկ։

Ցորմէ 'ի հակառակէն

ԲԵՐԴ, [illegible]։

Բաղդ. կուշտ և կոշտ, քծուար և քածուարատ, կարկուտ և կըրկուտ, օղ և յօղ։ Եւ

ԲԻՐՏ, [illegible]։ —(Կոչ. Ընծ.)։

ԲՐՏԱԳՈՅՆ, — (Ոսկ. Մատթ.)։

ԲՐՏՈՒԹԻՒՆ, [illegible]։ Եւ

ԲՐՈՒՏ, իբր՝ [illegible]։ — Բրտի լինել գլխկուղ կաւն զնէ 'ի վերայ դրգան (Առակ.)։ — Բրուտ որ չըջիցէ ասիւք իւրովք զգուրդն (Սիրաք. ԼԲ. 32)։

Բաղդ. թրծել և թրջել։

Այսպէս Յն. ὄστρακον, նշ. անօթ խեցեղէն, անօթ բրտի, խեցի, յորմէ ὀστρακόω, նշ. պնդանալ որպէս խեցի թրծեալ։

ԲՐՏԱՆԱՄ, [illegible]։ — (Եզեկ. Ոսկ. Կոչ. Ընծ.)։

Իսկ կրաւորականն

ԲՐԴԻՄ, որպէս և՝ հատանիմ, մօտ է աշխարհաբարին և Տաճկերէնին, [illegible]։

— Ի տրտմութիւն բրդեցաւ (Ա. Մկ. Բ. 24, և Բ. Մկ. ԺԴ. 27)։ — Ի նախանձ բարկութեան բրդեցաւ։ (Տե՛ս և Հոգանէմ)։

* * *

ԲԼՇԱԿ, Գրա. [illegible](*), նշանակէ թիակ հրկաթի։

(*) Է շամփուր ինչ երկաթի, որոյ գլուխն տափարակ է, և այնու խառնեն զկրակ 'ի

— Սա արար զամենայն կահ սեղանոյն, զխարխափսն եւ զբլչակն, (այլ. զբլչակն) եւ զաւաշաւն եւ ըղսահանն (Ել. ԼԸ. 3)։

* * *

ՎԱՐԵՄ, Պրս. [illegible], նոյն նշանակութեամբ, Տճ. [illegible]։

— Մէգք վարեալք 'ի մրրկէ (Բ. Պետր. Բ. 18)։

Ցորմէ աշխարհաբար

ՎՈՆՏԵԼ, Իսկ

ՎԱՐԵԼ ՋԵՐԿԻՐ, կամ սակ' վարել։

— Որպէս ոք երկրագործ յարբեցութենէ կամ 'ի խելայեղութենէ զարեան 'ի լիճս եւ յախս փոխանակ զաչափց վարիցէ (Փիլ.)։ — Վարեցին արտս, եւ անկեցին այգիս (Սղմ. ՃԶ. 37)։ Յն. ἔσπειραν։ — Ոյք վարէին արտասուօք, ցնծութեամբ հնձեսցեն (Անդ)։ Յն. οἱ σπείροντες։ — Թշնամին որ վարեաց զայն' սատանայ է (Մատթ. ԺԳ. 39)։ Յն. ὁ δὲ ἐχθρὸς ὁ σπείρας αὐτά ἐστιν ὁ διάβολος ըստ մասց Թրք. [illegible]։

Ուստի

ՎԱՐ, Նշ. վարելն զերկիր, աշխ. [illegible]։

— Այս երկրորդ ամ է սովոյս...

եւ այլ եւս հինգ ամ, յորս ոչ լինիցին վար եւ ոչ հունձք (Ծննդ. ԽԵ. 6)։ Յն. ἀροτρίασις։ — Ոչ վարս հարաք, եւ ոչ հերկս հերկեցաք (Ոսկ. Մատթ.)։ — Խաղաղութեամբ եւ համդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր (Ա. Տիմ. Բ. 3)։

Իսկ Թրք. [illegible], եւ այս մտօք կայ

ԿԵՆՑԱՂԱՎԱՐԵԼ, ԿԱՌԱՎԱՐԵԼ, ԿԱՌԱՎԱՐ, ՆԱՒԱՎԱՐԵԼ, ՆԱՒԱՎԱՐ, ՔԱՂԱՔԱՎԱՐԵԼ։

Ուրիշ է' [illegible]։

(Տե՛ս զբառդ)։

— Եւտես զնոսա հողմակոծեալս 'ի վարելն (զնաւն) (Մարկ. Զ. 48)։

Ցորմէ

ՎԱՐՔ, Թրք. [illegible]։

— Զարաչար բարկութեամբ վարեցաւ ընդ իս։ Է իբր Տճ. [illegible]։

Եւ

ԲԱՐՔ, որպէս եւ Թրք. [illegible] եւ [illegible] (վարք եւ բարք), յորմէ եւ [illegible]։

— Ապականեն զբարս քաղցունս բանք չարք (Ա. Կորնթ. ԺԳ. 33)։ — Բարք անարծաթսէրք լինիցին (Եբր. ԺԳ. 5)։

ՉԱՐԱԲԱՐՈՒԹԻՒՆ. — (Հռովմ. Ա. 29)։ Յն. κακοήθεια։

Ցորմէ (վարեմ)

ՎԱՐԱՏԵՄ, Ի [illegible]։

ՎԱՐԱՏՈՒՄՆ, — Թողից ապրեալս 'ի վարատման ձերում 'ի մէջ աշխարհաց (Եզեկ. Զ. 8)։ Յն. διασκορπισμοῖς։ Եւ

ՎՏԱՐԵՄ, ՎՏԱՐԱՆԴԵՄ, ՎՏԱՐԱՆԴԻ, ՎՏԱՐԱՆԴՈՒԹԻՒՆ, եւ

ՎՏԱՐԱՆՋԵՄ,

Եւ 'ի հակառակէն

ՎԱՐԱՆԵՄ, — Վարանեցին զքեզ (Աբդ. 7)։ իբր' ըմբռնեցին 'ի վարմս։

Ցորմէ եւ

ՊԱՐԱՆ, ՊԱՐԱՆԻՄ։

Ցորմէ 'ի հակառակէն

Ծանրի, եւ զմասունս ծայրից որ 'ի Ծանրին կասեալ են' նովին կորզեալ մաքրեն, եւ սըրբեն, եւ մերթ խորով կախեն զնմանէ 'ի վերայ Ծանրոյն. [illegible] (Բռ. Պրս. Գէորգ Դպիր)։

—Բառ անյայտ, որպէս Յն. ψέλλα. Ծէրեւս [illegible] իւիք, որպէս [illegible], եւ այլ ինչ նման նմին, եւ կամ փոխան այլոց բառից ըստ այլ եւ այլ ընթերցուածոց... Ստեփ. Լեհ. մեկնէ forceps, որ է աքցան կամ ունելիք, [illegible], [illegible]. Ծերեւս մարթ է խմանալ եւ որպէս Լտ velum, (Լծ. ընդ Հյ. Բիզ.) եւ զբլչակն' իբրու բլչակնիւ, որպիսի է ծածկոյթ կամ խուփ, եւ յանձամ համեմատի Յունական բառիս κάλυμμα, որ եւ ՆՈՒԱՐՏԱՆ, ծածկոց. [illegible]։
(Ն. Հյկ. Բռ.)։

ՊԱՐԱՆՈՑ, բաղդ. փուշ եւ չփեմ, եւ ափ, գաստակ եւ տաստակ, քարբ եւ գարշապար, փետուր եւ փետեմ, ձեռ եւ ցանեմ։

Թրք. պօղա՛ղ (պարանոց) եւ պօղմաք (խեղդել)։ Բառս մեր պատատանէ նաեւ Յունականին ἰσθμός, որ նշ. թէ՛ զկիրճ ծովու, եւ թէ՛ ըղպարանոց։ Նոյնպէս եւ Թրք. պօղազ. եւ Յն. βύσσα, (որ նշ. հովիտ. լեռանցամէջք, կիրճ), յորմէ 'ի մեզ՝ վիզ (պարանոց)։

— Լուծն Քրիստոսի քաղցր է. չհարկանէ զվիզդ։ Յորմէ

ՎԱՐՄ, իրր՝ գործի ըմբռնելոյ։

Բաղդ. վանեմ եւ վանդեմ, յորմէ՝ վանդակ։ Եւ

ՎԱՐԱԿԵՄ, — Վարակեցին առատմբք անանկութեան (Յոբ. ԼԶ. 8)։ Եւ

ՎԱՐԱՆԻՄ, բաղդ. տանիմ եւ տատանիմ, թեւեմ եւ դեգեւեմ։

Յորմէ 'ի հակառակէն՝

ՎԱՌԵՄ, արծարծանել, բորբոքել իրօք կամ նմանութեամբ, խրախուսել, քաջալերել։

Իսկ 'ի Հոռոմէն

ՕՏԱՐԱՆԱՄ, ՕՏԱՐՈՒԹԻՒՆ, ՕՏԱՐ, Յորմէ

ՏԱՐ, ('ի բարդութեան)

ՏԱՐԱՇԽԱՐՀ, ՏԱՐԱԳԻՐ, եւայլն, Յն. ἄτερος ἕτερος, նշանակէ՝ այլ, այլ ոք, միւս։

* * *

ԼԵՆՋԱԿ, բառ Լատին linteum, Յն. λέντιον։ Յորմէ

ԼԱՆՋՔ, բաղդ. պարան եւ պարանոց, գաստակ եւ տաստակ, փուշ եւ չփեմ, կուշտ եւ կոշտ, քծուար եւ քածուարտ, քարբ եւ գարշապար, ('ի Պրս. ձայնէս՝ քէրթէլ)։

* * *

ԵՓԵՄ, Յն. ἕψω, նոյն նշանակութեամբ։

— Մի՛ եփեսցես ուլն 'ի կաթն մօր իւրոյ։ Եբր. գուլ։ — Ձուլ (*) 'ի մօր կաթին չհրամայէ եփել (Եզնիկ)։

ԵՓՈՑ, ԵՓՈՑ, Յն. ἕψημα։

— Եփեաց խոհակերին զաղցըն (Ա. Թագ. Թ. 24)։ Յն. ἥψη εν (եփեաց)։ Այլ Յունական օրին. ἕψωσε (եբարձ), որպէս եւ Եբրայականն։

* * *

ԱՍՊԱՐ, Պրս. իսփէր, սիփէր, սփար, նոյն նշանակութեամբ, Յն. ἀσπίς, նշ. վահան բոլորչի, թող զի 'ի վաղ ժամանակս ասպարք բոլորչիք էին առհասարակ։ Յորմէ

ՃՊԱՐ, ծածկոյթ 'ի վերայ բնական գլխոց։

Ճպար իբրեւ անուն չկայ մատենագրութեանց մէջ, հետեւաբար եւ 'ի բառագիրս նշանակուած չէ իբրեւ բառ, ինչպէս նաեւ՝ ճամարտակ եւ ժմերտ, թէպէտ եւ այս յետինը՝ գործածուած է միայն տեղ մը, (Ոսկ. Եփես.), — Այլ չար է, անեն, ազգն, ժմերտ, լիրբ եւ անամօթ։

ՃՊԱՐԵՄ, ծեփել զգէմս գեղովք, ածել զերեսօք օտար ինչ։

— Ի ծարիր եւ 'ի ննգոյր ճպարէիր (Եզեկ. ԻԳ. 40)։ — Կին որ 'ի ննգոյր եւ 'ի ծարիր ճպարեցի (Ոսկ. Մատթ.)։ Յորմէ

ՃՊԻՐՀ, իրր՝ ձեռք երես, ամբերես, անպատկառ։ (Ի կիր արկեալ առէպ՝ ընդ բառիս՝ երես)։

ՃՊՐՀՈՒԹԻՒՆ, — Յարիցէ թագաւոր ժպիրհ երեսօք (Դան. Ը. 23)։

(*) Եզնիկ մեր սովորական օրինակէն կոչում չընէր, այլ միշտ Եբրայականէն, — Գնէ զձիւն իբրեւ զասր, եւ մէգն իբրեւ փոշի ցանեաց (Ի մեզ տարբերութիւն նաեւ Նոր Կտակարանին մէջ։ Ջմէգ, որպէս եւ 'ի Յն.)։ — Ամենայն որ 'ի Մակեղոնի վաճառի։ ('ի մեզ 'ի ապանդանոցի)։

— Որ ժպիրհն է երեսօք խրովք, առնլի լիցի։ — Ազգ ժպիրհ երեսօք։ Ժպիրհ երեսօք ըսելու տեղ ըսուած է՝ եղջերիկ, (իբր եղջիւրի պէս ամուր դէմք ունեցող)։ —Որդիք եղջերիկք եւ խստասիրտք են առ որս առաքեմն զքեզ (Եզեկ. Բ. 2)։ Յն. σκληροπρόσωπος։ Եւ

ԺՊԻՏ, դարձեալ դէմքի վրայ երեւցած բան։

ԺՊՏԻՄ, մի՛ չփոթեր ընդ ժմտէմ, (տես զբաղ)։ Եւ

ԾՊՏԻՄ, օտար կերպարանք մըտնել՝ (անծանօթ մնալու համար)։

ԾՊՆԻՄ, եւ

ՀՏՊԻՏ, ՀՏՊՏԻՄ, ՀՊՏԻՄ, ՀՊՏԱՆՔ, Եւ

ԱՌԱՍՊԵԼ, վանկի յետեւառաջութեամբ. (ա ռ ա ս պ ե լ, ապար)։
4 5 1 2 3

Եւ մանիկ է որ կըլլայ երբեմն նաեւ եղ, իղ, իւղ, — երկեղ, երկիղ, երկիւղ. անարգ-իլ, երեւ-իլ, պատառակ-ալ։

Յն. πρόβλημα, Նչ. վահան, ծածկոյթ եւ առասպել (պէլտէհէ)։ Պրս. ֆէրէտէ, ծածկոյթ, վարագոյր եւ ֆէրէտէ+, առասպել պէլտէհէ։

— Արկ մեզ զառասպելն քո եւ լուիցուք (Դատ. ԺԴ. 12)։ Յն. πρόβλημα(*)։ —Որպէս ասէ հին առասպելն (Ա. Թագ. ԻԴ. 14)։ Յն. παραβολή։ Եւ

ՊԱՐԻՍՊ, (տես.) պարապ-ի։ Կազմութիւնը բաղդ. անդունդ, թակարդ, վրդով։ Եւ

ՊԱՏՍՊԱՐԵՄ, Յն. ὑπερασπίζω, իբր ծածկել ընդ ասպարաւ, վերակացու լինել, պաշտպանել (Ծն. ԺԵ. 2)։

ՊԱՏՍՊԱՐԱՆ, Յն. ὑπερασπιστήρ։

Տես եւ սփածանել, սփածանիմ։

ԱՊՍՊԱՐԵՄ, Պրս. սէբարէտէն, (Տճ. սէբարըլ էյլէմէք), սէբէրէսթէն, սէ-

(*) Πρόβλημα եւ παραβολή մի եւ նոյն արմատը ունին, παραβάλλω։

բէ-րտէն, (որոց արմատք են՝ սէբար, սէբէր, Նչ. ապար)։ Նշանակեն՝ ապարարել, պատուիրել։

ՍՊԱՌՆԱՄ, բաղդ. պատել եւ պատմել եւ պատուիրել։

ՍՊԱՌՆԱԼԻՔ, բաղդ. ազդեմ, սաստեմ եւ սաստ։

Իսկ (Գործ. Թ. 1)։ «Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք եւ սպանմամբ աշակերտացն Տեառն»։ Յոյնն ունի, «Շնչեալ սպառնալիս եւ սպանումն յաշակերտան Տեառն»։ Եւ թուի մերձաւորութիւն ձայնիցս ἐμπνέων (շնչեալ), եւ ἐμπλέων (լցեալ), պատճառ շփոթութեան։ Եւ

ՍՊԱՌԵՄ, Պրս. սէբէրէնտէն՝ Նչ. կատարել, ամբողջանալ, աւարտել։

ՍՊԱՌՈՒԱԾ, Պրս. սէբէրէ, էսբէրէ, (վախճան, կատարած), մերձաւորք են ձայնիցս՝ սէբէր, էսբէր (ապար, վահան)։ Բաղդ. զրահ եւ զրաւ։

ՍՊԱՌ,

ԻՍՊԱՌ կամ Ի ՍՊԱՌ։

ՍՊԱՌ ՍՊՈՒՌ, կազմ. բաղդ. կեկա-կուլ, խուժա-դուժ, հայհոյել, բարձրա-բերձ, աղխամաղխ, (կըրկնումն ՚ի նմին արմատոյ)։

ՍՊԱՐԱՊԵՏ, որ եւ ասպարապետ. (քանզի Յն. ἀσπίς Նչ. նաեւ զինուորութիւն, բանակ)։

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆ, Յն. πανοπλία։

—Զսպառազինութիւնն հանէ յոր յուսացեալ էր։ Եւ

ՊԱՇԱՐԵՄ, իբր տաւարէլ, բոլորել, պատել շուրջանակի, շուրջ պատել։ (պ ա շ ա ր)
3 4 2 1 5

Եւ

ՊԱՐ, (գյ.)։

ՊԱՐԵՄ, ՊԱՐ, (յետին), περί։

ՓԱՐԻՄ, ՓԱՐԵԼԻ։

Ուրիշ է

ՊԱՇԱՐ, որ կը թուի թէ նոյն է ընդ ձայնիս՝

ՎԱՃԱՌ, յորմէ

ՎԱՃԱՌԱԿԱՆ, Պրս. վաճառկեան,

դուշէրչէան ։ Պրս. փուշտ ասի և դու-շար ։

— Երթա՛յք 'ի վաճառականսն , և գնեսջիք ձեզ (Մատթ. ԻԴ. 9) ։ — Վաճառականք նորա փառաւորք Քանանացւոց , Եւ տուճճարլարը էշրաֆ էրտի (Եսայ. ԻԳ. 8)։ այս խօսքին վերջին մասը չունի Յունարէնը . բայց մերը համաձայն է Եբրայականին ։ Եւ

ՊԱՃԱՌԱՆՔ , ՊԱՃԱՌԵՄ , — Եսես Յակոբ եթէ զոյ վաճառ յերկրին Եգիպտացւոց , ասէ ... ցորդիս իւր ... ահա լուեալ եթէ զոյ ցորեան յԵգիպտոս , իջէք անդր և գնեցէք մեզ անտի մի կերակուր ... տարայք զվաճառ ցորենոյդ ձերոյ ... և տալ նոցա պաշար 'ի ճանապարհ ... զվաճառս ցորենոյդ ... տանիցիք ... յերկրի աստ առնիցէք վաճառ ... և ետ նոցա պաշար 'ի ճանապարհ (Ծննդ. ԽԲ. ԽԳ. ԽԴ.) Յն. ἐπισιτισμόν ։ Ուրիշ է

ՊԱՃԱՌ , պահանէ , Պրս. չարբա , նշանակէ՝ չորքոտանի , չար (չորք) բա (ոտն) ։ Կազմ. բաղդ. պաշարեմ , վիթխարի , անասնագեմ ։

ՃԱԽԵՄ , գրի և ջաղխեմ ։

Պրս. չաք , նշ. պատառուած , յորմէ՝ չաքէյճ , գործի պատառելոյ , ճեղքելոյ ։ — Զբռնաւորին ջախեցեր զգլուխ ։

ՃԱԽՃԱԽ , Պրս. չաքչաք , նշ. պատառատուն , բրդգեալ , խորտակեալ , քճքճեալ ։

— Յուսացեալ իցես 'ի ցուպն եղեգնեայ 'ի ջախջախ (Եսայ.) ։

ՃԱԽՃԱԽԱՆՔ , — Ձայն իւր (ձիոց) 'ի սպառազուռ ջախջախմանս (Դատ. Ե. 23) ։

ՃԱԽՃԱԽԵՄ , ՃԱՂԽՃԱԽԵՄ , և զըր-զել , ծուատել , պարչա պարչա ընել ։

Յորմէ (ջաղջախեմ) 'ի հակառակէն

ՔՃՔՃԵՄ , — Զիւր զգետինն քճքճեալ պատառատուն 'ի զուր բերէր (Աֆոբ.) ։

ՈՂՋ , Իբր՝ ամբողջ , բովանդակ , որպէս և Թրք. սաղ ։

— Հայց մի ողջ ։ — Ժամ մի ողջ ։ — Զողջ չաբաթն այնու չատատնայր ։ — Ողջ տուն մի Սաղմոս ։ — Ողջ ողջ կլանել ։ Յորմէ

ՈՂՋՈՅՆ , (նոյն մտքով) ։

— Զօրն ողջոյն ։ — Զգիշերն ողջոյն ։ — Ողջոյն զերիս ամս ։

Թրք. սաղ , նշանակէ նաև կէն-դանի , որպէս և 'ի մեզ

ՈՂՋԱՆԴԱՄ , Թարգմ. Յն. ὁλομελής ։

ՈՂՋԱՄԲ , Թրք. սաղլըղըլա ։

ՈՂՋ ԼԻՆԵԼ , սաղ օլմագ , և իբրև ողջոյն կամ մաղթանք՝ ասի , Ողջ եր , ողջ է ։ Այս վերջին մտքով

ՈՂՋՈՅՆ , — Ողջոյն տուք մի-մեանց ։ — Ի ճանապարհին ումեք ողջոյն մի՛ տայցէք ։ — Ողջո՞յն իցէ մանկանն իմոյ Աբեսողոմայ (Բ. Թգ. ԺԸ. 32) ։

ՈՂՋՈՅՆ ՏԱՄ , իբր Թարգմ. Թրք. սէլամ վէրմէք , յորմէ սէլամէթ ։

Թրք. սաղ , նշ. նաև ոչ հիւանդ առողջ , նոյն և 'ի մեզ

— Ոչ է պիտոյ բժիշկ ողջոց , այլ հիւանդաց ։ — Զգեա զձեռն քո , և նա ձգեաց , և եղև ողջ իբրև ըզ-միւսն ։ Յորմէ և

ԱՌՈՂՋ , (տես և գեղջեմ) ։

Նաև այս արմատէն կը թուի

ԱՋ , Ըստ Թեյագրութեան Թրք. զի սաղ՝ նշ. և՛ւ ողջ , և՛ւ աջ , և միապէս ասի՝ սաղ տարաֆ , և սաղ էլ , (ողջ մարդ և աջ ձեռն) ։

— Եթէ դու յահեակ , ես յաջ , և եթէ դու յաջ , ես յահեակ (Ծն. ԺԳ. 9) ։ Յորմէ

ԱՋՈՂ , գրեալ և

ՅԱՋՈՂ , որպէս և

ԱՋՈՂԱԿ , և ՅԱՋՈՂԱԿ ,

ԱՋՈՂԵՄ , ՅԱՋՈՂԵՄ , ԱՋՈՂԻՄ և ՅԱՋՈՂԻՄ ։

Պրս. րաստ , նշ. ուղիղ , աջ , յա-

ջող, որպէս եւ 'ի մեզ աջող եւ ուղիղ, աջողել եւ ուղղել, մերձաւոր են նշանակութեամբ։

— Ասէք թէ ոչ է աջող ճանապարհ Տեառն . . . միթէ իմ ճանապարհ չիցէ աջող, ո՞չ ապաքէն ձեր ճանապարհք չեն աջող (Եզեկ. ԺԸ. 25)։ Յն. οὐ κατευθύνει ἡ ὁδὸς κυρίου... μὴ ἡ ὁδός μου οὐ κατευθύνει; οὐχί ἡ ὁδὸς ὑμῶν οὐ κατευθύνει;։ — Ասեն, ոչ է ուղիղ ճանապարհ Տեառն, միթէ իմ ճանապարհ չիցէ ուղիղ, ո՞չ ապաքէն ձեր ճանապարհք չեն ուղիղ (Անդ 29). Յն. . . . οὐ κατορθοῖ ἡ ὁδὸς κυρίου μὴ ἡ ὁδός μου οὐ κατορθοῖ; οὐχὶ ἡ ὁδὸς ὑμῶν οὐ κατορθοῖ;

— Տուչութիւն յաջողուածոյ ունել. (յարմարութիւն կամ դիւրութիւն ունենալ 'ի բանէ)։ — Յայտնի Դաւթի նուագի, եւ զարքայութիւն նորա յաջողեաց։ Անոր [illegible]։ — Յաջողեցաւ արքայութիւնն Դաւթի 'ի ձեռն Սողոմոնի։ — «Ասացէք, հաւկ, հաւկ, (Երբ. [illegible]) եւ ոչ յաջողեցան խօսել այնպէս». այսինքն՝ ատացին՝ [illegible], ոչ մարթացեալ ուղիղ ածել զն։ Նաեւ

ՅԱՋՈՐԴ, ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆ, ՅԱՋՈՐԴԵՄ, — Զօրոյ իշխանութիւնն յաջորդեաց նորին որդի (Եւս.)։ — Զաթոռ եպիսկոպոսապետութեանն յաջորդեաց Յովսէփ (Խոր.)։

Դարձեալ այս արմատէն է

ԱՌԱՋ, — Առաջ նորա հուր ծախիչ, եւ զկնի նորա բոց բորբոքեալ (Յովէլ. Բ. 3)։

Կազմուած է՝ առ աջ։ Կազմութիւնը բաղդ. առ ողջ։ Յորմէ

ԱՌԱՋԻ, առ-աջ-ի. Յն. ἐνώπιον, որ բարդեալ է ἐν ὤψις, (ակն, աչք). ուստի՝ «Առն յանդիման նեղչաց իմոց», նոյն է ըսել՝ «Առաջի նեղչաց իմոց»։

ՅԱՌԱՋ, այս բառը կը նշանակէ՝ [illegible], իբր 'ի հակառակէն,

— Եւ նոցա գնաւոր մինչեւ 'ի Սամուէլ մարգարէ, եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր (Գործ. ԺԳ. 21)։ — Ամբաստանէ զանհնազանդութենէ նոցա յեգիպտոսէ եւ յառաջ (Նխ. Եզեկ. ԺԶ.)։ — Համառօտէ զամենայն բարիսն Աստուծոյ յեգիպտոսէ եւ յառաջ (Նխ. Օրէն. ՂԹ.)։ — Յուշ օրէն եւ յառաջ ապա նուիրել զծնունդս արջառոց եւ ոչխարաց (Նխ. Ղեւտ. ԾԻԱ.)։ — Դի՛ք 'ի սիրտ ձեր յօրէ յայսմանէ եւ յառաջ (Անգէ. Բ. 16)։ Իսկ

ՁԱԽ, այս բառը կը թուի նոյն ընդ թուրանականին՝ [illegible]։

Տե՛ս եւ ահեակ։

Աստի

ՁԱԽՈՂ, ՁԱԽՈՂԵՄ, ՁԱԽՈՂԱԿ, որպէս յԱջոյ, աջող, աջողեմ, աջողակ։ Եւ

ՁԱԽՈՐԴ, ՁԱԽՈՐԴՈՒԹԻՒՆ, որպէս՝ յաջ-որդ, յաջ-որդութիւն։

* * *

ԼԻՑՔ, Պրս. [illegible], նոյն նշանակութեամբ, Թրք. [illegible], [illegible], Արաբ. [illegible]։ — Իբրեւ զմանկտւոյ խաղ համարին, եւ իբրեւ զանիւս եւ իբրեւ զլիցս եւ զգունդս (Ոսկ. Մատթ.)։ — Կէսք 'ի ձէնջ 'ի լիցս ընթանան, եւ կէսք 'ի տապեղուլունս (Վեցօր.)։

* * *

ԱԿՆ ՎԱՆԻ,

ՎԱՆԻ, ՎԱՆԵԱՑ, ՎԱՆԱԿՆ, Պրս. [illegible], նոյն նշանակութեամբ, կամ շիշ 'ի նմին նիւթոյ, (Թրք. [illegible]), Յն. κρύσταλλος։

— Կանգնեցից զաշտարակս քո յասպիս, եւ զդրունս քո յականց վանեայց (Եսայ. ԾԴ. 12)։

* * *

ԿԱԹՍԱՑ, (տես եւ [illegible])։

ԿԱՏՍԱՑ, Յն. ἡ γάστρα, նշ. աման

գոգաւոր, ֆորը մէջ ամաճ։

— Եաւցուցանէ զանդունդս իբրեւ զկաթսայ (Յոբ.)։ — Սա է կաթսայ եւ մեք միս (Եզէկ. ԺԱ. 2)։ — Նստէաք առ կաթսայս մսոյն, եւ ուտէաք հաց յագ (Ել. ԺԶ. 3)։ — Կաթսայ յեռանդան տեսանեմ ես (Երեմ. Ա. 16)։

* * *

ՃԱԿԱՏ, Պրս. չէյհէռա, ճէհրէռա, նշ. գագաթն մարդոյ, եւ լերին։

Յորմէ եւ

ԳԱԳԱԹՆ, Յունական գաւառաբարբառ՝ կօփուքէ, նոյն նշանակութեամբ։ Իսկ

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, ՃԱԿԱՏ ՏԱՄ, Ի ՃԱԿԱՏ ԵԼԱՆԵՄ, Յն. μέτωπον, նշ. ճակատ, եւս եւ ճակատ պատերազմի, եւ Արաբ. ճէհատ, նշ. պատերազմ։

Իսկ

ՃԱԿԱՏԱԳԻՐ, է թարգմանութիւն Տճ. ալնըն եազըսը. Պրս. սէր նէվիշթ, (գիր ճակատու, գիր գլխոյ)։

Այս բացատրութիւն զուտ արեւելեան է։ Յն. ἡ εἱμαρμένη։

* * *

ՄՈՎՊԵՏ, Պրս. մօպէտ, մէպէտ, նշ. պաշտօնեայ Արուշանի։

* * *

ՊԱՏԱՐԵՄ, մի՛ չփոթեր ընդ՝ պատառեմ։

ՊԱՏԱՐՈՒՆ,

ԼԻԱՊԱՏԱՐ, Պրս. պէտր, նշ. ամբողջ, լի, կատարեալ, եւ աստ՝ չէպ պէտր՝ (լի գիշեր), այսինքն՝ չորեքտասաներորդ գիշեր լուսնի, լուսին լրացեալ։

* * *

ԲԻԺ, Պրս. պէճ, բէժ, նոյն նշանակութեամբ։

— Ջաղան եւ բիժն 'ի բաց պարզել (Եզնիկ)։ Յորմէ եւ

ԲԻԾ, ԲԾԵՄ, յորմէ

ԽԾԲԾԵՄ, ԽԾԲԻԾ, ԱՄԲԻԾ, ԲԾԿԱՆ, իբր՝ ոչ ամբիծ, ոչ անարատ։

Իսկ (Բ. Պետր. Բ. 13). «Բծկանք, արատաւորք»։ (Տպ. բծկանք արատաւորք), Յն. σπίλοι καὶ μῶμοι, (բիծք եւ արատք)։ Նաեւ եւ

ՓԻԾ, պիղծ, անմաքուր։

— Գիտասցէ զինքն զի փիծ է եւ անմաքուր (Փէշ)։ — Կարէ վաստթար եւ փիծ գոլ վարուց (Նոյն)։

Պրս. ֆէս կոչի ախտ կամ հիւանդութիւն ինչ մորթոյ, մանաւանդ 'ի գլխոյ, է որ սպիտակ, եւ է որ մոխրագոյն։

ՓԾԱՆՔ, — Հեշտ ցանկութեամբք զքաղաքս լցին, որոց սկզբունքն են փծանք (Փէշ)։

ՓԾՈՒԹԻՒՆ, — Իբր զհաստատեալ փծութիւն 'ի բաց հալածելով (Անոն)։

ՓԾՈՒՆ, — Փծուն եւ անճոռնի տեսանելք (Խոր.)։

Բաղդ. բաղ եւ փաղ, բակ եւ փակ։

* * *

ԱՔԼՈՐ, (գաւառական բառ), եւ թուի համառօտութիւն Յունական ձայնիս ἀλέκτωρ, (աքաղաղ),

(ἀ λ ε κ τωρ)
1 3 2 4 5

* * *

ՃԱՐԱԿ, Պրս. ճէրա, նոյն նշանակութեամբ, Տճ. Նաֆաքա, ճէյրէճէհ, (ոչխարաց նկատմամբ)։

— Մտցէ եւ ելցէ, եւ ճարակ գտցէ (Յովհ. Ժ. 9)։ Յն. νομή, Գաղղ. paturage։

* * *

ՍԵՊՈՒՀ, Պրս. շահզատէ, նշ. որդի արքայի, Տճ. շահզատէ։

Պարսիկ ձայնդ շեհզատէ՝ է նաեւ յատուկ անուն մարդոյ, եւ 'ի մեզ ծանօթ

ՇԱՊՈՒՀ, յորջորջմամբ։

Իսկ

ՍԱՓՈՐ, նոյնպէս բառ Պարսիկ, սեպօ, նոյն նշանակութեամբ։

Դիտէ՛ վերջաւորութեանց փոխանակութիւնը։ Բաղդ. ստամոքս եւ ստամոն, յունուար եւ ժանուար։

ՊԻԾԱԿ, — Եւ. Իգ. 28)։

Պրս. պէչ՝ նշ. մեղու։

*

* *

ՄԱՀՏԵՍԻ, որ կ'ըսուի նաեւ

ՄՂՍԻ, այս բառը ըստ մեզ կը նշանակէ՝ Երուսաղէմ՝ ուխտի գացող. իսկ Արաբերէն հաճըճըլը, կը նշ. Երուսաղեմացի։

*

* *

ԽՈՒԹ (*), ԽԻԹ, (սեռ.) խթի, մայր ցցուեալ 'ի ծովու՝ հաւասար մակերեւութի ջրոյն, բազում ուրեք ցածագոյն եւս քան զմակերեւոյթն, ոչ նշմարելի 'ի բացուստ, որով եւ վտանգաւոր նաւաց։

— (Ի կենցաղին ծովու) բազում խութք պատահեն նաւապաց, եւ բազում անգամ բախին նաւք եւ ընկղմին (Ոսկ. Եբր.)։ Եւ

ԽԻԹՔ ՈՐՈՎԱՅՆԻ, — Ցաւք մաղձոյուղի, եւ խիթք որովայնի (Սէբէոս. ԼԴ. 23)։ (Ներքին ցաւք որովայնի), Տճ. գուլունճու. իսկ քիթ՝ պուրուն։

Այսպէս ռունգ՝ (քիթ)։ Տես զբառդ։

Յորոց 'ի հակառակէն

ՔԻԹ, (սեռ.), քթ-ի, (ուշադրութիւն ըրէ խութ բառին սեռականին հետ մերձաւորութեանը), մասն (դիմաց) ցցուեալ 'ի դուրս։

— Արկից կարթ 'ի քիթս քո, եւ դանդանաւանդ 'ի կզակս քո (Դ. Թագ. ԺԹ. 28)։ Եթէ կապիցես անուր 'ի քիթս նորա, եւ դանդանաւանդ 'ի կզակս նորա (Յոբ. Խ. 21)։

Թրք. բառս պուրուն, նշ. քիթ, նշ. նաեւ հրուանդան, այսինքն՝ այն ցամաքը որ ծովու մակերեւոյթէն բարձր է, եւ երեւելի 'ի բացուստ, եւ քիթի կամ լեզուի պէս դէպ 'ի ծովը կարկառուած է. զոր օրինակ՝ Պօզ պուրուն, Պապա պուրնու, Մանտա կամ Մօտա պուրնու, Սարայ պուրնու, Գալաթա պուրնու։

Ինչ որ ըսուած է քիթին համար, նոյնն է նաեւ ռունգին համար։

— Ոչ աչաց պիտանութիւն էր 'ի տեսանել եւ ոչ ունչք առ 'ի ձգելոյ զօդ (Իմ. ԺԵ. 15)։

Յորմէ 'ի հակառակէն

ՈՒՆՉ, ծովու խորք, եւ լայնաբար՝ ծառի արմատ, որ հողին մէջ ծածկուած է, եւ չերեւար։ Իսկ

ՈՒՆՉՍ ԱՌՆԵՄ, (ծաղր առնել, արհամարհել), հետեւողութիւն Յունականին, զի μυκτήρ, նշ. քիթ, ունչ, յորմէ μυκτηρίζω, ծաղր առնել, այպանել։

*

* *

ՏԱՊԱԼԵՄ, Թրք. տէպէլէնմէք։

— Բախեաց զկիցն ընդ ծամելիս նորա, եւ վարսեաց ընդ գետինն, եւ նա տապալեցաւ 'ի մէջ ոտից նորա, եւ եհան զոգի (Դատ. Դ. 21)։

Նոյն է եւ

ԹԱՒԱԼԵՄ, Թրք. տէվիրմէք, տէվրիլմէք։

ԹԱՒԱԼԵՑՈՒՑԱՆԵՄ, — Թաւալեցոյց կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ։ — Ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմն։ Յն. κύλισμα, նշ. դարձ, դարձումն, շրջումն, թաւալումն, տապալումն։

*

* *

ՊԱՏԳԱՄ, Պրս. փէյղամ, գրի եւ՝ փէյամ, փէյէմ։ Յն. ῥῆμα. λόγος. φάτις. φάτις.։ — Գրեալ է 'ի գիրս պատ-

(*) Մեր անքոյթ բառին, տացեալ զնաւանգատէ, այս է արմատը իբր խիթոց բախում չունեցող՝ ապահով տեղ կամ ծոց։

գամաց Եսայեայ մարգարէի (Ղկ. Դ. 4)։ — Որընկալաւ զպատգամս կենդանիս Յն. λόγια ζῶντα։ Զի միապէս ասի բէյղամպէր, եւ բէյամպէր, բէյէմպէր, (պատգամաւոր, պատգամաբեր, զրուցաբեր, բանբեր)։

Ի մեզ՝ նաեւ գեսպան, հրեշտակ, մարգարէ։ Ըստ նախնի Պրս. հրեշտամն՝ բէյղամ, եւ բէյամ, բէյէմ։

Յորմէ

ՊԱՏՄԵՄ, ԱՆՊԱՏՈՒՄ, Պրս. բէյէմ, (պատումն), Յն. διηγέομαι, ἐξηγέομαι, ἀναγγέλω, ἀπαγγέλω։

— Գուշեա զորութեամբ եւ մի՛ խնայեսցես, բարձրացո իբրեւ զփողոյ զբարբառ քո, պատմեա ժողովրդեան իմում զմեղս նոցա (Եսյ.)։ — ԶԱստուած ոչ ոք ետես երբեք. բայց Միածին Որդին որ է 'ի ծոց հօր, նա պատմեաց (Յովհ. Ա.)։ — Պատմեմ քեզ այսօր զի կորստեամբ կորնչիցիք (Օր. Լ. 18)։ Յն. ἀναγγέλω։

Եւ

ՊԱՏՈՒԻՐԵՄ, յորմէ

ՊԱՏՈՒԷՐ, ամէն անսակ հրաման։

ՊԱՏՈՒԻՐԱՆ, միայն աստուածային օրէնք կամ հրաման։

— Մի՛ հայեսցին 'ի Հրէական առասպելս, եւ 'ի պատուէրս մարդկան (Տիտ. Ա. 14)։ — Ո՞ր պատուիրան է առաջին։ — Զպատուիրանս գիտես, մի՛ շնար, մի՛ սպանաներ, եւայլն։

ՊԱՏՈՒԷՐ ՏԱՄ, Թրք. էմիր վէրմէք, Պրս. ֆէրման դադէն։ Յորմէ

ՊԱՏԵԼ, (շրջապատել)։

— Շրջեցարուք զՍիոնիւ, պաշարեցէք զնա, եւ պատեցէք զաշտարակս նորա (Սաղմ.)։ — Յաւուրն եօթներորդի պատեսջիք զքաղաքն եօթն անգամ... եւ պատեցին զքաղաքն յաւուրն երկրորդի եւայլն... պատեսջիք զքաղաքն եօթն օր (Յես. Զ. 4, 14, 15)։ Յորմէ

ՊԱՏ (աշխ.), Թրք. դուվար։

ՊԱՏՆԷՇ, — Մի՛ փակեսցէ զնա վահանօք, եւ մի՛ պաշարեսցէ զնա պատնիշօք (Ես. Լէ. 35)։

Բաղդ. ապար, պարիսպ, ապաստան եւ ապաւարեմ, ապարեմ եւ պատապարեմ. Պրս. ֆէզէր (ապար) եւ ֆէզէրէլ, (ապաւարել)։

ՊԱՏԱՏԵՄ, ՊԱՏԱՏ, — Եղ ընդ ուղտու պատատաւ (Ծննդ.)։

Թրք. սարմագ (պատել), եւ սարըլը, սարըգ (պատատ)։ Եւ

ՓԱԹՈՑԹ, Թրք. սարըգ։

ՓԱԹՈՒԹԵՄ, եւ

ՊՏՈՅՏ, — Մի՛ ընկլցին զիս դուդուէ ջուրց (Սաղմ. ԿԸ. 16)։ Յն. καταιγίς, որ ուրիշ բառով կ'ըսուի՝ շրջան։ «Շրջանք ընկղմեցին զիս» (Յովն. 3)։ Յաւնարէնը մի եւ նոյն բառն է, այսինքն՝ καταιγίς, Պրս. սափ՝ չէրդապ, եւ բարդ է. չէրխ՝ ոչ. պտոյտ, շրջան, բոլորումն, եւ ապ, ոչ. ջուր։

Յորմէ (պատեմ) 'ի հակառակէն

ՊԱՏԱՌ, ՊԱՏԱՌԵՄ, — Այն է որում ես թացից զպատառն եւ տաց, եւ թացեալ զպատառն տայ Յուդայի Իսկարիովտացւոյ, եւ յետ պատառոյն ապա եմուտ 'ի նա սատանայ, եւ նորա առեալ զպատառն ել արտաքս (Յովհ.)։ Բաղդ. բրդեմ եւ բուրդ, կատարել եւ կտուրք, խուշոր եւ նշխար։ Եւ

ՊԱՐՊԱՏԻՄ, եւ

ՊԱՏՈՒԱՐ, — Պատուարս դնել շուրջ զամենօք (Նէ. Օր. Կ.)։

Բաղդ. ապար եւ պատապարեմ, եւ պատուէր։ Եւ

ՊԱՏԱՆՔ, — Յօրն պատանաց իմոց պահեսցի այդ։

ՊԱՏԵԱՆ. Իսկ

ՊԱՏԱՆԻ, ա ալ դարձեալ ջըվան բայէն ծագումն առած է, թէեւ նշանակութեամբ բոլորովին օտարացած։ — Քիչ մը ուշադրութիւն՝ բաւական է։

Հին ատենի Յոյները երբ իրենց տղայքը չափահաս կ'ըլլային, կը տանէին 'ի Դեղփիս, եւ հոն առա-

ջին անգամ անոնց մազերը կը կտրէին, եւ մեհեաններին մէջ կը կախէին 'ի նուէր գիցն։ Այս արարողութիւնը կը կատարէին Ապատուրական տօնին (ἀπατούρια) երրորդ օրը, որ կը կոչուէր՝ ἡ κουρεῶτις ἡμέρα (օր գերծման), եւ յայնմ օրէ աղան կ'անուանուէր κοῦρος (պատանի), եւ քաղաքացւոյ կարգ եւ իրաւունք կը ստանար։

Արդ այս Յունական κοῦρος բառը կը ծագի 'ի բայէս κείρω, որ նչ. գերծուլ, ածիլել, նոյնպէս եւ κειρία (պատանք) նոյն բայէն կը ծագի, եւ այս տեսութեամբ մեր պատանք բառն ալ կը ծագի 'ի բառէս՝ պատանք։ Այս Հելլէն բառը κείρω, կուտայ մեզի

ԳԵՐԾՈՒՄ, կամ

ԳԵՐԾՈՒՄ, — Զգաւազանն զոր քերծայր... եքերծ զգալարն 'ի գաւազանաց անտի (Ծննդ. Լ. 27—28)։

Յարմէ

ՋԵՐԾՈՒՄ, — Զզգեստ մերկոց գերծեր։

ՏԵՍԱՋԵՐԾ ԱՌՆԵՄ։

Յարմէ 'ի հակառակէն

ՋԵՐԾԱՆԻՄ, Ջերծիր 'ի չևտան, զուցէ պատահիցէ քեզ չար։

Բաղդ. փակեմ եւ փախչիմ, մըխեմ եւ մղեմ, ընդգրկեմ եւ ընկըրկեմ, պրկեմ եւ փրկեմ, պնդեմ եւ պնդիմ, դուեմ եւ թափեմ։

Յարմէ (քերծում)

ՔԱՐՁ, գրեալ եւ

ՔԱՐՑ, եւ

ԿԱՐԾ, ԿԱՐԾԵՄ, ԿԱՐԾԱՏԵՄ, — Տիւն կարճատեաց, եւ համին... ստուերք երեկորւոյ (Եբեմ. Զ. 4)։

Յարմէ

ԿՐԾԱՏԵՄ, ԿՐԾԱՏՈՒԹԻՒՆ, —Զգոյշ եղերուք 'ի կրճատութենէ անտի (Փիլիպ Գ. 2)։

Յարմէ (կարճ, կարճեմ) 'ի հակառակէն

ԿԱՐԳ, ԿԱՐԳԵՄ, դասաւորութիւն, շարք, երկարութիւն։

Յարմէ (կարճ)

ԿԻՐԾ, յարմէ

ԿՈՐԾ,

Յարմէ (կարճ)

ԿԱՐԻԾ, (սեռ.) կարճ-ի. իսկ կարճ, (սեռ.) կարճ-ոյ։

Առ Վիրգիլեայ, (Մշակ. Գիրք. Ա.) կարիճը (կենդանակերպ) իր թեւերը կամ ճիրաններն ամփոփելով, եւ քաշելով, կարճըցաւ, որ կչիռին (կենդանակերպ) տեղ բանայ։

«Եթէ նոր արգեօք նըշան 'ի յամր ամիսըս յաւելցիս

«Ի խորանն երկնից ընդ կոյսն եւ ընդ յաջորդ կարճին ճիրանս,

«Որ 'ի ճեպ փայլակնընթաց ըղ-բաղուկս իւր յինքն ամփոփեալ,

«Քան զարդար բաժինն երկայն թողու յերկինս քեզ ապարէզ»։

Եւ 'ի բառէս՝ պարէտն, (տե՛ս 'ի վերոյ) 'ի հակառակէն՝

ԱՏԵԱՆ, իրր՝ հրապարակական տեղի, ուր ամենայն ինչ մերկապարանոց յայտնի լինի դատաստանի։

Յարմէ

ՄԱՏԵԱՆ, իբր գիրք ատենական, գիրք օրինաց, դատաստանագիրք, = գիրք։ — Յատեան նստաւ՝ եւ դպրութիւնք բացան։ Իսկ

ՄԵՀԵԱՆ, (սեռ.) մեհեն-ի։

Թուի թէ իցէ 'ի մե՛յ բառէն, որ նչ. գինի։ Մէյխանէ (տուն գինւոյ)։

Բաղդ. բագին։

— Ոչ է տունն Աստուծոյ ձեզ տեղի ուտելոյ եւ ըմպելոյ (Ա. Կորնթ. Ժ. 19)։ — Եթէ ոք տեսանիցէ ըզ-քեզ... բազմեալ 'ի մեհենի (Անդ. Ը. 10)։ — Զոհեալն իցէ՞ ինչ. կամ թէ կուռքն իսկ իցե՞ն ինչ, այլ զոր զոհենն հեթանոսք, դիւաց եւ ոչ Աստուծոյ զոհեն, քանզի ոչ կարէք զբաժակն Տեառն ըմպել եւ զբաժակն դիւաց (Անդ ԺԱ. 22)։

* * *

ԵՐԱՆԻ, վերջը տրակ. խընդրով,

բառ Տճ. — Երանի ազգաստեղ հոգւով . . . երանի ազատորաց . . , երանի հեզոց, Տճ. մուբարեք ֆըգարաներ, *եւայլն. Յն. Երանելիք են աղքատք, երանեալ ազատորք, եւայլն. Թրք.* էրէն, *նշ. արդոյ, մեծարոյ, պատուական.*

. . .

ՎԵՀ, *նոյն է ընդ Յն.* εὖ, *ծագեալ 'ի բառէս* εὖς, *որ նշ. բարի, գեղեցիկ, վայելուչ, ազնիւ, ազնուական.*
Տես եւ վսեմ.

. . .

ԿԱՅՄ, *Տճ.* կէօք, *նշ. նաւ.*

. . .

ՄԵԿՈՆ, *Յն.* μήκων, *նոյն նշանակութեամբ.*

. . .

ՀՈՒՂԿԱՀԱՐ, *Յն.* ὀδουρός, *Թրք.* եօլ կեսիճի.

. . .

ՔԱՔԱՐ, *Պրս.* կեաք, կէկ, *նշանակէ՝* պատախտար, աըրտոըդա հայ. *Յն.* λάγανον.

. . .

ՇՕՓ, *Յն.* λάγανον, *Պրս.* նաշ, *նշ. պաշար, պարէն.*
Տես եւ թոշակ.

. . .

ԱՊՈՒՇՆԱՑ, (*կապիկ*), *Պրս.* եպաղնէ, բաղչինէ.

. . .

ՆՄԱՆ, *Պրս.* մանէնտ, *Յն.* ὅμοιος.
ՆՄԱՆԵՑՈՒՑԱՆԵՄ, *Պրս.* մանանտէն.
ՆՄԱՆԵՄ, *Պրսկ.* մանէսթէն, *Յն.* ὁμοιάζω.
ՆՄԱՆՈՒԹԻՒՆ, *Յն.* ὁμοίωμα.

. . .

ԲԱՐՈՒՆԱԿ (*), *բառ մեզ կը նշ. նոր ճիւղ մը, որ հին արմատին քովէն կը բողբոջի, որով հինը կը նորոգի եւ մշանջենաւորի, նաեւ այն ուռը որ հնցած որթէն կը կտրեն ու կը տնկեն.*
Մեր այս բառը կը թուի թէ Պրագերնոս բառն է, որ կը նշ. նորահաս, երիտասարդ, կամ իբր Յն. νεόφυτος, (*նորատունկ, մատղատունկ*).

. . .

ՈՐՈՎԱՅՆ, *բաղդ. արգանդ եւ արգահատեմ. Յորմէ*
ԳՈՐՈՎ, ԳՈՐՈՎԻՄ.
Յորմէ 'ի հակառակէն
ԿՈՐՈՎ, *Լտ.* vigor, *նոյն նշանակութեամբ. Յորմէ*
ԿՈՐՈՎԻ, *Թերագրութիւն Սրբոյ. գի Սրբոյ. բառս նշ. թէ՛ արգանդ եւ թէ՛ արգահատանք, կամ՝ թէ՛ ողորմելն եւ թէ՛ գորով.*

. . .

ՍԱՏԵՐ, *Յն.* στατήρ, *չափ ինչ ծանրութեան Յունական ոսկի դրամոյ, իբր 19 ֆրանք. — Գտանիցես ստատեր (Մատթ. ԺԷ. 27).*

. . .

ԳԻՒՂ, *Պրս.* գեօլ, *նոյն նշանակութեամբ. Թրք.* կեօյ.

. . .

ԴՐԱՄ, *Պրս.* տիրհէմ, *նշ. արծաթ դրոշմեալ, արժանեալ, Տճ.* աքչէ ճէնկիզ կեօմիւշ.

. . .

ԴՐՈՒԱՏԵՄ, *Պրսկ.* տիւրուտէն, *նոյն նշանակութեամբ.*
ԴՐՈՒԱՏԻՔ, *Պրս.* տիւրուտ.
Ուրիշ է

(*) *Ն. Հյկ. Բռ. ստուգաբանէ որպէս բարւոյ ունակ կամ բերունակ.*

ԴՐՈՒԱԳԵՄ, — Դրուագեալ 'ի նկարս ամեն կողմանցօք մայրիւք (Գ. Թագ. Զ. 15)։

ԴՐՈՒԱԳ, — Զատեան մեծ դրուագեալ մայր փայտիւք (Բ. Մնաց. Գ. 5)։ Յն. ξυλόω։

Մերս թուի 'ի Պոլիս. տէրէպօշէր, տէրէպօտկէր, (հիւսն), յորմէ Թրք. տէրէկէր։

* * *

ԱՆԱԼՈՒԹ, Յն. καμηλοπάρδαλος, ընձուղտ։

Սակայն մեր բառը կը թուի թէ Եբրայեցերէն է, լեւիաթան (léviathan), որ կերպ կերպ մեկնուած է, բոլորն ալ անստոյգ։

Եբրայեցերէն լեւիթանը Աստուածաշունչի մեր Հայերէն թարգմանութեան մէջ՝ վիշապ գրուած է, ինչպէս նաեւ Յունարէնին մէջ՝ δράκων։ Տե՛ս՝ Յոբ. Խ. 20։ Սաղմ. ՀԳ. 14, եւ ՃԳ. 26։ Եսայ. ԻԷ։

Ըսել չենք ուզեր թէ անալութն հիմայ այն նշանակութիւնն ունի բառս, ինչ որ ունի Եբրայեցւոյն մէջ լեւիաթանը, հապա անոր Յունական καμηλοπάρδαλις (ընձուղտ) բառին նշանակութիւնը տրուած է, եւ ըստ այնմ գործածուած։ Բաղդ. հաւալուսն, կարապ, համբարու, երաժիշտ, յուշկապարիկ, քաղաք, մխիթարիչ, պատարագ։ Որ իրենց բուն նշանակութեամբ գործածուած չեն, հապա տարբեր մտքով եւ տարբեր նշանակութեամբ անուններ՝ այլ ընդ այլոյ առնուած. կինճ, արեւ, բանջար, սայն։

(ա ն ա լ ո ւ թ = լեւիաթան)

* * *

ԽԱՐԲՈՒԶ, Թուի բարդեալ 'ի պարսից խար, (էշ) եւ բուզ. (այսինքն) բուզինէ (կապիկ), իբր՝ իշակապիկ, ինչպէս կայ իշացուլ, կենդանի առեղծական 'ի մասց խառն յիշոյ եւ 'ի ցլոյ, Յն. ὀνοκένταυρος. կամ 'ի Թրք. պուզաղը, (որթ, զուարակ), եւ յայնժամ նոյնանայ ընդ իշացուլ։

* * *

ՏՐՈՒՊ, — Ես իսկ եմ տրուպն առաքելոց։ Յն. ἐλαχιστότερος, ἐλάχιστος, յետին, ստորին, Արաբ. տէնը, (յետին)։

* * *

ԲԱԺԱՆԵՄ, — բաժ-անեմ — հատ-անեմ։ Յորմէ

ԲԱԺԻՆ, յորմէ

ԲԱԺԱԿ, — բաժ-ակ, — ճաշ-ակ, (իբր՝ մի մասն 'ի բաժնէ)։

-- Տէր բաժին... բաժակի իմոյ։

—Այս մրրիկ բաժին բաժակի նոցա։

Այս բառ եւ Թրք. պաշխը մէկ են ծագմամբ, եւ մէկը միւսին երկրորդական ձեւն է. (բաժ-անեմ եւ բաշխեմ)։ Ուրիշ է

ԲԱԺ, Պրս. պաժ։ (Տե՛ս բաշխեմ)։

* * *

ԿՈՏԱԿ, — Թագաւորեաց Յովրամ կոտակ՝ Թոռն Յովրամու (Բաղ.)։

Բառ Պարսիկ գէօտէկ, որ նշ. մանուկ, տղայ, Թրք. գէօչէկ։

* * *

ԱԶԵՂ, ԱԶԱԳԵՂ։ Տճ. կէօզէլ, (գեղեցիկ) կրնայ նախատիպ մը սեպուիլ մեր բառին, քանզի այդ Թրք. բառին բուն հնչումն է՝ կէօզէլ, (աչեղ), եւ գեղեցկութիւնը ուրիշ բոլոր անդամներէն աւելի աչքերէն կախում ունի, ինչպէս յայտնի է, զի ամենայն կոյր, կամ միականի, կամ գիջական, կամ շիլ, ոչ երբեք կրնան ըսուիլ գեղեցիկ։ Իսկ

ԶԳՆԱՂ, Թուի իբր համառօտութիւն կամ խառնուրդ իմն երկուց բառից, աչք եւ աղաւնի, ազդեալ 'ի բանէն Երգ երգոցին, «Աչք քո աղաւնիք»։ (Երգ. Ա. 14, եւ Դ. 1)։ «Աչք նորա իբրեւ զաղաւնիս»։

(Առ. Ե. 12) եւ ձուլեալ 'ի մի,
ա) չ ք (ա) դ ա (ւ) ն (ի)
3 2 1

* * *

ԶԳԱՄ(*). այս բային երեք դէմքն ալ կ'ըլլան առանձին բառեր։

Առաջին դէմքէն կ'ըլլայ՝
ԱՆԶԳԱՄ։
Բ. դէմք, զգաս, յորմէ
ԶԳԱՍՏ։
Եւ Գ. դէմք, զգայ, յորմէ
ԶԳԱՅՈՒՆ, որ նոյն է ընդ
ԶԳԱԻՆ, — զգայուն, այսպէս գնայ-ուն, չարժ-ուն, թաք-ուն։

ԶԳՕՆ, — Բազում անգամ զբաղում անզգամս տեսանեմք զգօնացեալս, եւ զզգօնսն անզգամեալս (Եղիկ)։

ԱՆԶԳԱՑ, եւ
ԶԳԱՑՈՒՑԱՆԵՄ, — Զգացուցին ինձ քահանայապետքն (Գործ. ԻԵ. 15)։ — Մի՛ ումեք խօսել թէ զայս զգացուցեր ինձ (Առ. ԻԳ. 22)։ — Զգացուցին նմա քահանայապետքն (Առ. ԻԵ. 2)։

Արդ յայտնապէս կ'երեւայ թէ այս բային արմատն է ՀԷ, որ առանձին ոչ գործածութիւն ունի եւ ոչ նշանակութիւն. այս արմատէն ձեւացած է նաեւ

ԶԳԵՆՈՒՄ, զգ-ենում. Կազմութիւնը բաղդ. ընկ-ենում բային հետ, որ ձեւացած է անկ-անիմ էն։

ԶԳԵՑՈՒՑԱՆԵՄ, յորմէ
ԶԳԵՍՏ, զգ-եստ։ [Բաղդ. զգ-աստ։
Երկուքը (զգեստ եւ զգաստ) մէկ տեղ գործածուած՝ իբր մէկ արմատէ բխած բառեր.

— Տեսանեն զդիւահարն զգեցեալ եւ զգաստացեալ (Մարկ. Ե. 15)։

Այսպէս եւ Յունական ձայնքդ նոյնք են, ἔσθησις, (զգեստ), եւ αἴσθησις, (զգայութիւն, զգացումն), ուղղագրութեամբ եւեթ զանազանեալ։

Չէուփ եւ չէֆէուփ՝ սա տեսութեամբ կը միանան որ մարդիկ զգենուն երբ զգաստ, այսինքն՝ արթուն են. քանզի զգենուլը՝ արթուն մարդու գործ է, զգենու մարդ ընդ առաւօտն ընդ յառնելն 'ի քնոյ, եւ յերեկոյն՝ չեւ եղեալ յանկողին՝ մերկանայ զզգեստսն, ուստի եւ ժամն է

ԱՆԱԳԱՆ, իբր՝ արտաքոյ ժամու ագանելոյ, այսինքն՝ զգենլոյ, ժամանակ ննջելոյ։

Թրք. կէճ, նշանակէ՝ անագան, եւ կէճէ՝ գիշեր։

Լաէ այս գիշերային խօսակցութիւնը, — Բա՛ց ինձ, քոյր իմ... զի գլուխ իմ լցաւ ցօղով, եւ վարսք իմ 'ի շաղից գիշերոյ։ — Մերկացայ զպատմուճան իմ, զիա՞րդ ագանիցիմ զնա, լուացի զոտս իմ, զիա՞րդ աղտեղացուցից զնա (Երգ. Ե. 2—3)։

Հիմայ կը մնայ գիտնալ թէ ինչ է ՀԷ, որ վերը ցուցինք իբրեւ արմատ զգ-ամ, զգ-ացուցանեմ բային, որք ինչպէս յայտնի է՝ երկու բաղաձայն գիրեր են, եւ արմատ ըլլալու յարմարութիւն չունին, ուստի կ'երեւայ որ

ԶԵԿՈՒՑԱՆԵՄ բային սկզբան երեք գիրերն են բուն արմատ (զեկ), եւ նշանակութեան մասին գրեթէ նոյնք են [illegible], [illegible]։

— Փեստոս զեկոյց արքային ըզՊաւղոսէ (Գործ. ԻԵ. 14)։

Դիտելի է որ գործոց նոյն գլխոյն մէջ զգացուցանեմ բայը գործածուած է չորս անգամ, իբրեւ համազօր [illegible]։ (Տես 'ի վերոյ զգացուցանեմ)։

Իսկ այս բուն արմատ ցուցուածը՝ ԶԵԿ, Պարսկերէն բառ մըն է, [illegible], որ կը նշանակէ աստեղաբաշխական ադիւսակ, (աստեղաբաշխութիւն, աստեղագիտութիւն, գուշակու-

(*) Զ բառին բնական գիրն է, եւ ոչ ԶԷ նախդիր։

թիւն 'ի ձեռն սաստկեալ)։ Արդ. չէ՞։ Զեկուցանեմ, յորմէ զեկուցումն, այնպէս չէ՝ ինչպէս կեամ, կեցուցանեմ, կորանամ, կորացուցանեմ, բարբառիմ, բարբառեցուցանեմ, յագենամ, յագեցուցանեմ։

Այս բայը չէ՛ արմատին վրայ առած է [illegible]ը։

Բարդութեամբ կ'ըլլայ

ԽՐԱԶԵԼ ԼԻՆԵԼ, ինչպէս նաեւ ըզգացուցանեմէն

ԽՐԱԶԳԱԾ ԼԻՆԵԼ, բաղդ. ազգեմ բային ծագմանը եւ կազմութեան հետ, աղէկ ըմբռնելու համար այս բայը, եւ իւր նշակութեան ոյժը։

Նորէն դառնանք [illegible] արմատին՝ որ տեսանք [illegible] բային վրայ։

Զգամ, յորմէ զգացուցանեմ, ինչպէս յայտնի է՝ պարզ բայ մըն է, որուն արմատը [illegible]՝ [illegible] (միտք) բառին հետ բարդուելով

ԶԳՈՒՇԱՑՈՒՑԱՆԵՄ բայը կը ձեւացընէ, որ կը նշանակէ իրր՝ զգացուցանել (աւելի սաստկութեամբ, կամ խրատելով կամ սպառնալեօք)։

զ ե կ ուցանեմ

զ գ ացուցանեմ

զ գ ուշ ացուցանեմ

Յունարէնին կարգը այսպէս է, զայր զգոյշ եւ չոյտ 'ի գործս իւր։ Իսկ Հյկ. Բռ. Հայերէնին դասաւորութենէն սխալած է, եւ կարծեր է թէ՝ [illegible] բառին դէմ Յոյնը դրած ըլլայ՝ [illegible] կամ [illegible]։

(Տես 'ի բառն՝ [illegible])։

— Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, լուիցես յինէն պատգամս, եւ սպառնասցիս նոցա իբրեւ յինէն, յորժամ ասիցեմ ցանօրէնն թէ մահու մեռանիցիս, եւ դու ոչ զգ(ուշ)ացուցանիցես նմա . . . դառնալ 'ի ճանապարհաց իւրոց չարաց եւ կեալ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից։ Իսկ եթէ դու ըզգ(ուշ)ացուցանես անօրինին, եւ նա ոչ դարձցի յանօրէնութենէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ դու զանձն քո ապրեցուսցես։ Եւ յորժամ դարձցի արդարն յարդարութեանց իւրոց եւ արասցէ յանցանս . . . քանզի դու ոչ զգ(ուշ)ացուցեր նմա, զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից։ Ապա եթէ դու զգ(ուշ)ացուցանիցես զարդարն, զի մի՛ մեղիցէ, արդարն կելով կեցցէ, զի դու զգ(ուշ)ացուցեր նմա, եւ դու զանձն քո ապրեցուսցես (Եզեկ. Գ. 17—21)։

ԶԳՈՒՇԱՆԱՄ, ԶԳՈՅՇ ԼԻՆԻՄ, եւ

ԶԳՈՅՇ, — Զայր չոյտ (Յն. ὀξύς), եւ զգոյշ (ὁρατικός) Առակ. ԻԲ. 29։ — Զգոյշ լինիջիք պատանեկին Աբեսողոմայ (Բ. Թագ. ԺԸ. 12)։ — Զգուշացարուք մանկան իմում Աբեսողոմայ (Անդ)։ — Զգոյշ լերուք 'ի շանց անտի, զգոյշ լերուք 'ի չար մշակաց անտի, զգոյշ լերուք 'ի կրճատութենէ անտի (Փիլիպ. Գ. 2)։ Յն. βλέπετε τοὺς κύνας, βλέπετε τοὺς κακοὺς ἐργάτας, βλέπετε τὴν κατατομήν. զոր առ Ոսկեբերանի 'ընթեռնումք, «Տեսէք զշունսն, տեսէք զչար մշակսն, տեսէք որք 'ի հատմանէն են»։ Իսկ

ԶԳԱԾԻՄ, զ գ ('ի բայէս զգ+ենում) [illegible], (իրօք կամ նմանութեամբ)։

ԶԳԱԾՆՈՒՄ, ԶԳԱԾՈՒՄՆ, ԶԳԱԾՈՒՑԱՆԵՄ։

*
* *

ԹՈՆ, ձուկն ինչ ծովու, Պրս. [illegible], (ազգ ձկան)։

*
* *

ԽԱԼԿԻՆ, (գաւառական), (Տճ. [illegible], պղնձի անօթ մեծ, կաթսայ), Յն. χαλκός, Նչ. պղինձ, եւ χαλκεῖον, կաթսայ պղնձի։

*
* *

ԱՂԻՍ, Պրս. տէկիւշ. նոյն նշանակութեամբ։ Աղիւս նկատի իբրու պինդ, կարծր։

— Եկայք արկցուք աղիւս, եւ թրծեսցուք զայն հրով (Ծննդ. ԺԱ. 3)։ Յորմէ

ԱՂԻՍԱԿ, ըստ Յունականին, զի Յն. πλίνθος, (աղիւս) եւ πληνθίον, աղիւսակ, իբր՝ փոքր աղիւս, այսինքն՝ ցուցակ՝ տախտակ երկրաչափական, աստեղաբաշխական։

Յորմէ (աղիւս) 'ի հակառակէն

ԱԿՕՍ, հետք արօրոյ բացեալ խոփով, Յն. αὖλαξ, յորմէ Տճ. էվլէք։

ԱԿՕՍ ՊԱՏԱՌԵԼ, — Ոչ զգեղջկին որ ետես ակօս պատառեալ։

Բաղդ. խցանել եւ խոցել, պատել եւ պատառել, խփել եւ խոփ։

Իսկ (Դ. Թագ. Ի. 10). «Եթէ բաւեսցէ հող Սամարիայ աղիւսակք հանդերձ ամենայն զօրականի հետեւակաց իմոց»։ Մթութիւն կայ 'ի բանիդ, Եբրայեցերէնն ունի, «Եթէ Սամարիոյ հողը բաւէ իմ առջեւէս եկող բոլոր զօրաց ափերուն» Յոյնը ունի, Ալոպէքաս. տակայն դարձեալ իմաստ մը չտար։

* * *

ԳՈՌԵԽ, Թուի լինել ձայն Պարսիկ խօրէք, որ նշ. ջորեակ, (տես գրառդ). տակայն 'ի մեզ առեալ իբր՝

ՉԻԱՍՏԱՑ, որ է իբր թարգմ. Թրք. աթ ասըլը կամ ինէյի։

* * *

ՍԵՐԵԿԵԱԼ, — Ամենայն աման բաց, որ ոչ իցէ խփեալ կամ սերեկեալ, պիղծ լիցի (Թուոց. ԺԹ. 15)։ Յն. πᾶν σκεῦος ἀνεῳγμένον ὅσα οὐχὶ δεσμὸν καταδέδεται ἐπ' αὐτῷ։ Թուի լինել Թրք. սըրղը։

* * *

ՆՇԱՆԱԿ, Յն. σημεῖον, Պրս. նիշանէ։ — Եւ այս նշանակ ձեզ, գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս։ — Արա՛ դու քեզ օձ, եւ դիցես զնա 'ի վերայ նշանակի… եւ արար (Մովսէս) օձ պղնձի, եւ կանգնեաց զնա 'ի վերայ նշանակին (Թուոց. ԻԱ. 8 -9)։

ՆՇԱՆԱԿԵԼ, — Որ նշանակելոյ եղիցի ձեզ։

Յորմէ 'ի հակառակէն

ՆՇԱԽԱԿԵԼ, ('ի յառի մերոյ, այլք. խաչէ ընէլ)։ Բաղդ. տատկել, (տակաւոր խօսք ընել, իբր՝ ճաճկրընել, եւ տառը յայտնել, որ նոյն է ընդ՝ խայտառակել։

* * *

ԿԱԹՈՂԻԿԷ, ԿԱԹՈՂԻԿԵԱՑ, Յունարէն ածական մըն է, իգական, որ կը նշ. ընդհանրական, եւ միայն քանի մը բառի վրայ կրնայ դրուիլ, կաթողիկէ թուղթք առաքելոց, կաթողիկէ եկեղեցի եւ կաթողիկէ հաւատք կամ վարդապետութիւն, որովհետեւ թուղթ (ἐπιστολή), եկեղեցի (ἐκκλησία), հաւատք (πίστις) կամ վարդապետութիւն, (διδαχή. διδασκαλία), իգական անուններ են (ըստ Յունաց), եւ պէտք են որ համաձայնած ըլլան իրենց գոյականներուն, բայց ազգի մը կամ ժողովուրդի մը համար չըսուիր՝ կաթողիկէ ազգ՝ կաթողիկէ ժողովուրդ կամ կաթողիկէ Հայ, եւ ոչ անոր դէմ չկաթողիկէ Հայ, որ ոչ միայն տրամաբանական չէ, այլ եւ ծաղրական է, եւ բառգին պատիւ չը բերեր։ Տրամաբանական չէ, վասն զի այդ գիրը բառի մը վրայ դրուելով, կը նշանակէ՝ մի եւ նոյն տեսակէն ըլլալ բանին գէշը, զոր օրինակ, երբոր ըսենք չքահանայ, ըսել կուզենք այնպիսի քահանայ մը, որ իր կոչմանը հակառակը կ'ընթանայ, եւ անարժան է քահանայ կոչուելու. տակայն պէտք է գիտնալ որ աչ-

խարհականի մը չի տրուիր այս անունը՝ իր պէշութեանը պատճառաւ։ Զքրիստոնեայ կրնանք ըսել՝ քրիստոնէութեան անարժան վարուց մէջ գտնուողի մը, սակայն Հրէի մը կամ հեթանոսի մը չըսուիր՝ չքրիստոնեայ։

Այս կաթողիկէ բառը մեր մէջ ուրիշ նշանակութիւն մ'ալ ստացեր է. եւ եղեր է իբրեւ գոյական անուն մը։ Կաթողիկէ ըսելով կ'իմանանք գմբէթ, այսինքն՝ գմբէթաւոր եկեղեցի, կամ մայր եկեղեցի, եւ ըսուած է՝ Երէցն կաթողիկէին Անւոյ. ուստի եւ կաթողիկեցի. կաթողիկէն Վաղարշապատու (Վաղարշապատի մայր եկեղեցին)։

Կաթողիկէ՝ այս վերջին նշանակութեամբը ուրիշ արմատ ունի՝ Յն. κοτ[illegible], որ կը նշանակէ՝ գմբէթաձեւ, կամ որ եւ իցէ գոգաւոր, մէջը փորուած բան, (գաւաթ, թաս եւայլն), եւ այս Յունականին նշանակութիւնը քիչ մը լայնաբար՝ եղած է 'ի մեզ

ԿՈԹՈՂ, իբր կանգուն կեցած՝ բարձրացած բան մը՝ ինչպէս կը բարձրանայ գմբէթ մը

ԿՈԹՈՂԵՄ, — Կաթողս կոթողէիր յամենայն հրապարակս (Եզեկ. ԺԶ. 31)։ — Զի՞նչ է կոթողն այն զոր ես տեսանեմ (Դ. Թագ. ԻԳ. 17)։ — Շինեցեր զկոթողս քո, եւ մեհկանս 'ի քէն զհանդերձս քո (Եզեկ. ԺԶ. 31)։

Թերեւս մեր աշխարհաբար ԿՈԹ, տակէ եղած ըլլայ։ Բարբառութեան մէջ հնուց ունինք՝ ՍՈՒԻՆԱԿՈԹ։

* * *

ԱՊԱԽՏ, (ուխտադրուց, ուխտադրուժ), եւ իբր՝ ոչ ընդունելի, զործ՝ արտաքոյ ուխտի, խոտան, արհամարհ։

Այսպէս կազմուած է՝ փախչելու համար 'ի ձայնէս՝ [illegible]։ Դարձեալ Յն. [illegible], անօրէն, պիղծ։

ԱՊԱԽՏ ԱՌՆԵՄ, (զանգատութիւն ընել, արհամարհել)։

ԱՊԱԽՏ ԼԻՆԻՄ, ('ի մոռացօնս անկանել)։

— Մի՛ լիցի ընդունելի (զոհն այն), քանզի ապախտ է, պղծութիւն է (Ղեւտ. Է. 18)։ — Եթէ ուխտիցէ ուխտ Տեառն, մի՛ ապախտ արասցէ զբան իւր։ — Եթէ այն չիցէ, բազում կարգք եկեղեցւոյ ապախտ լինին (Ոսկ. Ա. Տիմ.)։ — Թէ ուսուցիչ չէ, ամենայն ինչ ապախտ լինի (Անդ)։

* * *

ԽԱՐՏՈՅ, թուի 'ի Պրս. [illegible], որ նշ. խարտեաշ, մանրեալ (իր), Տճ. [illegible]։

ԽԱՐՏԵՄ։

* * *

ԹԻՆ, ըստ մեզ կորիզ խաղողոյ, (խաղողի կուտ)։

— Ի չամչոյ մինչեւ ցթինն մի՛ կերիցէ (Թւ. Զ. 4)։

Արաբ. ԹԻՆ նշ. թուզ։ Բաղդ. ճիռ։

Պաղոյ անուններ այլ ընդ այլոյ առնուած ունինք. ինչպէս նաեւ կենդանեաց անուններ։

* * *

ՔԱՂԴԵԱՑ, ՔԱԻԴԵԱՑ. եւ ՔԱՂԴԷՈՒԹԻՒՆ, ՔԱԻԴԷՈՒԹԻՒՆ, երկու բառ ունինք, — 'ի հարկէ եւ երկուք ալ արմատ, առաջնոյն արմատն է՝ Քաղդէացի, որովհետեւ Քաղդէացիք անուանի էին աստեղագիտութեան եւայլն մէջ, ուստի իրենց ազգին կամ երկրին անունը աստեղագիտութեան եւայլն հետ նոյնանշան եղաւ, եւ Քաղդէացի կամ քաղդեայ ըսելով՝ կ'իմանանք աստեղագէտ, մոգ, կախարդ, գուշակ։

Իսկ երկրորդ բառը քուզնայ. Թէպէտ կը նշանակէ՝ ատաղձագէտ, մոգ, նոյն, բայց երբեմն քաղդեայ կամ Քաղդէացի (իբր Քաղդէացւոց երկրէն ըլլալ) չի նշանակեր, այլ պարզապէս ատաղձագէտ, մոգ, կախարդ, եւ կը մօտենայ Յն. ձայնիս՝ κίβδηλος, որ կը նշ. խարդախ, խաբեբայ, կախարդ, եւ կը թուի թէ ձեւացած է κίβδος, (քուեայ) բառէն, որ կը նշ. նաեւ բախտ կամ նշանակ բախտի, եւ գուշակութիւն իսկ 'ի ձեռն քուէից։

— Ի քուեայս հարցանէին, եւ գաւազանօք պատմէին նմա (Ովս. Դ. 12)։ — Իջանէր 'ի հմայս քաղդէութեան, գքուէս հարցանէր (Բուզ.)։ — Ճանաչել կարասցուք զգիւթ քուէիցն, զկախարդն (Նոյն)։ — Դիւթութեամբ եւ հմայիւք եւ քուդէութեամբ վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ (Եզնիկ)։

(Տես եւ քուեայ)։

⁂

ՏՈՊՐԱԿ, Պրսկ. [illegible], Թրք. [illegible]։

⁂

ՏՈՐՏ, (մրուր), Պրս. [illegible], Թրք. [illegible]։

⁂

ԸՆԿՈՂՄԱՆԻՄ, (յորմէ թերեւս՝ անկողին), արմատ՝ կող, կողմն։

(Տես զբառդ)։

Յորմէ 'ի հակառակէն

ՅՈՂՆ ԿԱՄ, եւ

ՈՒՂՆ, (սեռ.) ուղան։ (Մի՛ շփոթեր ընդ՝ ուղ)։ — Խորտակէ ոսկր զուղն մարդահաճոյից (Սաղմ.)։ — Դուք զուղամբ իմն երթայք։ — Ձին զուղամբ երթեալ տատանէր։

Ա՛յլ է

ՈՒՂՈՒՆՔ, — Ողնունք Շամիրամայ 'ի ծով (Խոր.)։

Արաբ. [illegible]՝ նշ. մարգարիտ։

⁂

ՈՐՈՄՆ, — Սերմն բարի նոքա որ որդիքն արքայութեան են, իսկ [illegible] որդիք չարին են ... տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակի քում, արդ ուստի՞ ունիցի [illegible] ... այր թշնամի արար զայն ...։ Թշնամին որ վարեաց զայն (զորոմն) սատանայ է։

Յիշենք այս տեղ Զրադաշտական դենին երկարմատեան վարդապետութիւնը, երկու սկզբանց, բարւոյ եւ չարի, անձնաւորեալ բարին՝ Որմիզդ, եւ անձնաւորեալ չարը՝ Արհմն։ Այս անձնաւորութեանց Պարսկային հնչմամբ անուններն են [illegible] եւ [illegible] կամ [illegible]։

Հիմայ տեսնենք թէ որչափ կը մօտենայ յիշեալ երկրորդ անձնաւորութիւնը [illegible], մեր [illegible] բարին սերմանին հետ՝ [illegible]։ Նորէն կարդա՝ վերի խօսքը Աւետարանին, եւ կը տեսնես յայտնապէս՝ թաքուցեալ ճշմարտութիւնը։

⁂

ՔՍԱԿ, Պրս. [illegible], նոյն նշանակութեամբ. — Քսակ հասարակաց արասցուք. — Առանց քսակի եւ կօշկաց։

⁂

ՊԱՑՏԱՌ (աշխ.), Արաբ. [illegible], Թրք. եւ Պրս. [illegible], [illegible]։

⁂

ԱՆԳՂ, Արաբ. [illegible], արմատ թռչուն, փիւնիկ։

⁂

ՔՍԱՆ, Յն. εἴκοσι, (քս-ան, — εικος)։

⁂

ԹԵՂՕՃ(*), Թրք. փայէ կաշէ, կաշէ։

Մեր բառը ո՛րչափ կը նմանի ձայնիւ Դեղոս, եւ չի՞ յիշեցըներ Դեղոսի այն նուիրական անտառն ու այն կաղնին, ուսկի պատգամ կուտար աստուածարեալ քրմուհին՝ տերեւներուն սօսափիւնէն։

*
* *

ԵՊԵՐԵՄ, — Այնու յոյժ եպերելի է (եշէկ)։

Յն. ἐπίῤῥησις, եպերանք, պարսաւ, ստգտանք։

*
* *

ԽԼԻՆՔ, Պրս. խէլմ, նոյն նշանակութեամբ։

*
* *

ՆԱԽԱՏՕՐՄ, եւ

ՆԱԽԱՏՕՐՄԻԴ, նաեւ

ՏՕՐՄԻԴ ՆԱԽԱՑ, բարդեալ՝ նախ-տորմ, (տորմ, Լտ. turma, նշանակէ բազմութիւն), կամ թերեւս կազմեալ ըստ օրինակի Յուն. ἱππόδρομος, (ձիարձակարան, տեղին ուր առնի ձիարշաւ եւ կառարշաւ), ձիընթացք. կառընթացք։

*
* *

ԲԱՆԱՍՏԵՂԾ, Թարգմ. Պրս. սուխան-ֆէրէն, սուխան (բան), ֆէրէ-տէն (ստեղծանել)։

*
* *

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, (Հայ դպրութեան պարծանք անձնուրութիւն մը)։ Անունը կենդանւոյ մը անուն է, ինչպէս ունինք նաեւ Ընձակ եւայլն։

Գալով Կողբացի յորջորջման, Կողբ անուն գիւղէն ըլլալուն համար այնպէս բառած է ըստ վկայութեան Խորենացւոյն։

«Աղա եկեալ եւ առեալ Մեսրոպայ եւ Մեծին Սահակայ... զՅովսէփ եւ միւս ընկեր նմին 'ի Կողբ գեղջէ որում անուն Եզնիկ կոչէր, առաքեն 'ի Միջագետս»։

Սակայն (զարմանալի զուգադիպութիւն), Յունարէն բառ մը կայ κόλος, որ նշ. -նէզլէ-, որ Եզնիկին (փոքրիկ եղին) վրայ գալով, ո՛րչափ գեղեցիկ իմաստ մը կուտայ. նաեւ κολοβός.

*
* *

ԱՃԿԱՐԱՑ, (յայանի) Պրս. աչէ-քէարէ։

*
* *

ԼՈՒՍԻՆԵԱԿ, (աշխ.) նշանակէ սոխակ, Լտ. luscinius, նոյն նշանակութեամբ։

*
* *

ԱՆՁՆԱՄԱՏՆ, Յն. αὐτόμολος, իբր աշխ. Էնէգնէք ծախող։

— Աղճկորդի (կամ աղջկորդի) անձնամատն, (այսինքն՝ անձնամատն աղջկան որդի)։

*
* *

ԱՅԾ, ԱՅԾԻՔ, (էգն նոխազի)։ Յն. ἡ αἴξ, (սեռ.) αἰγός, նոյն նշանակութեամբ։ Յարմէ եւ

ԷԳ, գիմորաժանեալն արուի։

ԱՅԳ, սկիզբն լուսոյ, սկիզբն տուընջեան։ Արար. այգ է անուն կաթոյէ առաւօտեան։ Թրք. այըգ, է արթուն, եւ աք, է սթափեալ։

ՀԱՅԿ. Եթէ չունիք սխալիր, այս անուն ունի մերձաւորութիւն ընդ

(*) Այն արտադրութիւնը որ տեսնուած է հոյկ. ծիածան, բառից վրայ. հոս ալ նոյն արտադրութիւնը կը տեսնուի, քանզի այդ նուիրական անտառն ու կաղնին՝ ոչ թէ Դեղոսի մէջ էր, այլ 'ի Դոդոնէ. եւ այլ ընդ այլոյ առնուած են, Թերեւս իբրեւ բառախաղի մտքով, կամ թէ խորա անհետ ընելու համար ծագումը, կամ թէ ուրիշ՝ մեզի անծանօթ պատճառով մը։

տայ—ֆ անուան, որ, ինչպէս գիտենք, է Արաբ. անուն կամփայէ համառօտեղութեան, Թէպէտ Թարգմանիչք մեր այս անուանը կոչած են Օրէնք համառօտելութեան (Եզ. ԺԳ. 10։ Յոբ. ԺԸ. 31)։ Օրինն, բառ յոյն աստուածային, էր հնոց սրբոյ աղեղնաւոր. այս մասօք Թերեւս տայ—ֆ (Հայկ) կոչուած է քոյն հոխոյն, բառ ուանդութեան իրիք, կենտխուղ Բնոյ, միանգամայն եւ նախահայր, ակիզբն ազգին, ինչպէս այդ է ակիզբն աւրինչեան։

Ի հակառակէն (այգ)

ԱԳԻ, (պոչ), իրր վերջին ծայր, ինչպէս Պրս. տէ—մ, նշանակէ ագի, միանգամայն ծայր կամ վերջ իրաց, Յունարէն եւս οὐρά, նշ. ագի, եւ ծայր որ եւ իցէ իրի։ Բաղդ. ծազ (վերին ծայր) եւ ձագ (իրր վերջին ծայր, բաղդ. եւ առաջ առաջ եւ աւարտ, ծեր եւ ծայր, հու եւ յաւ, անյաւ)։

Պրս. տէ—մէ—րէ, նշ. արշալոյս, բայց Թարգմանի գայլոյ ձեռ, որպէս եւ Յն. λυκαυγές, կը նշ. արշալոյս կամ վերջալոյս, բայց Թարգմանի իրր գայլոյ ագի։

Այս անուանց կարգէն կը Թուի ԱՅԳԻ, իբրեւ ակիզբն անկոյ յիշատակեալ 'ի Սուրբ Գիրս, — Եւ սկսաւ Նոյ, այր հողագործ, տնկել գործել, եւ անկեաց այգի (Ծն. Թ. 20)։

ԳԱՅԼ, 'ի նմանաձայնութենէ բառիցս λύκη (այգ), եւ λύκος (գայլ)։

(գ ա յ լ — ա յ գ)
3 1 2   2 3 1

(Տես եւ արշալոյս)։ Իսկ

ԳԱՅԼ, երկաթի կապանք ոտից, Պրս. [illegible], Թրք. [illegible]։ Յն. λύκος, որ նշ. գայլ, նշ. նաեւ գանգատուանց։ — Սափորին գայլ 'ի բերան ուտել խողկոյն (Մկ.)։

Մի' չփոխեր ընդ՝ [illegible]։ Իսկ

ԳԵՂ, (գեղեցկութիւն), Յն. κάλλος, նոյն նշանակութեամբ, Պրս. գէլ, նշ. վայելչութիւն, գեղ, եւ Արաբ. գէլ, նշ. գոյլ։ Յորմէ

ԳԵՂԵՑԻԿ, որպէս — երգեցիկ, — գինեցիկ։

* * *

ԳԵՐԱԳՈՅՆ, պարզ բառ մը գեր եւ գոյն։ Գիտենք որ գեր բերեմանիկ մը բառի սկիզբը կը դրուի իրր յոյժ առաւելութիւն մը նշանակելու համար, գերարուն, գերապայծառ, գերազանց, նոյնպէս գոյն՝ մասնիկ մըն է, որ բառի մը վերջը կը դրուի, պաշտօնը նոյն է գրեթէ առաջնոյն հետ։ Այս մասնիկները անշուշտ բառի մը վրայ կը դրուին, սակայն գերագոյն, գեր եւ գոյն, երկու մասնիկ, բառը ո՞ւր է, որու՞ վրայ դրուած են....։

Այսպէս է նաեւ Յունարէն ὑπέρτατος — ὑπερ τατος.

* * *

ԿՂՊԵԼ, աչխ.

ԿՂՊԱՆՔ, Արաբ. [illegible], (բանալի, փականք)։

* * *

(ՄՈՎՍԷՍ) ԽՈՐԵՆԱՑԻ, Արաբ. խօ—րէ, խօ—րէն, որ նշ. ընթերցող, քերթող, գիտուն, (կրօնական ատեսութեան)։ Տճ. [illegible], որ կրօնական առանձին միայն կը գործածի, [illegible], ընթերցումն, եւ [illegible], ընթերցուած։

Մովսէս Խորենացի, որ միապէս կ'ըսուի նաեւ՝ Մովսէս քերթող։

